75

Printed in Turkey

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՈՍԿԵՐՆԵՐՈՒՆ

№ 20
P 476

Հ-81 46/ 944-42

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԱՆԵՐԵՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑԵՑԻ

ՑԱԽԵՑԱՐԱՆԱԳԻՐՔ ՄԱՏԹԷՈՍ

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ ԹԵՐԻ

ԵՒ Ի ԹՈՒՂԹՍՆ ՊԱՒՂՈՍԻ

ՀԱՏՈՒԱԾՔ

1250
9318-57



Ի ՎԱՆՆԱՅԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՒ 1826 ՌՄՀԶ

2004

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Printed in Turkey

Ո՛չ հատակոտորս երբորդ գրոց Պատմից մեկնութեանն որպէս ի յառաջաբանին խոստացաք, այս ժողովեմք այսր. որպէս զի մի և նախարք հրաշալեաց մատենին կորիցեն: Այլ զի գրչագիրքը ընտիրք չեն մեզ, զի գեթ անեղծ զնչխարան ունեաք. այլ ո՛ դիտէ, տացէ ժամանակն և հայրենասէրք խուզարկուացք փայթ և զսոցայս հատատուն օրինակ, և զթերութեան լրումն:

Ո՛չ հետ երբորդ գրոցս յաւելումք և զհատուածս մեկնութեանց սորին սրբոյ ի թուղթն Պաւղոսի, յերից օրինակաց գրեցի զայս ամենայն ժողովեալ. ի կրկին Ձառընտրաց՝ որ Հնդուաստանեմ քաղաքի և ի կողմանս Արևելեայ գրեալ են, և ի ճատրգիր օրինակն՝ որ կայ ի մատենադարանն արքունի ի Փարիզ, ծաղկաքաղ յորդորակաց յամենայն մեկնութեանցն: Այս է ընտրեալագոյն ի սոսա փարիզեանն, թէպէտ և անզգոյծ ի բազմավրէպ գրչին սխալանաց, այլ և ոչ սա առաջնում ընտիր օրինակիս հաւասարի՝ երկուց

պրոց մատթէոսեան մեկնութեանն . և ոչ ձառըն-
տիրքն, որք և ուրեք ուրեք քաղուածոյ ունին զձառան,
և կամաւոր գրչացն փոփոխմունք ՚ի նոսա գուշա-
կին . նմին իրի և ոչ նովին երկիւղածութեամբ ձշդե-
ցաք՝ յորս լինէ յայտնի վրիպակ թուէր մեզ ։

Է.Է.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿԻՑ ՏՊԱԳՐԻՆ.	ՈՒՂՂԵԱԼ
31	21	'ի Թողութեան	'ի դողութեան
55	32	զաղվաղվաթիւն	շաղվաղվաթիւն
156	30	զբուն	զաուն
160	25	ասիմք	ասեմք
198	4	յորդաբիցիմք	յարդաբիցիմք
200	8	որդւոյն	որդւոցն
205	37	զօրինակս	զօրինակն
210	11	հակառակութենէ	'ի հակառակութէ
236	36	պիտոյ զայնմ	պիտոյ է զայնմ
238	24	բանականս	բնականս
255	26	հոգ անձին	հոգ յանձին
272	10	զբամբասանս	զբամբասանս
303	28	բաղասամոխին	բաղսամոխին
307	7	Տիմոթէոս	ՂՏիմոթէոս
315	21	զվերին	զվերինն
320	12	գործ	գործք
323	32	անփոյթ	անքոյթ
330	12	սպանել	սպանանել
356	3	Աւյլք և	Աւյլք և 'ի
431	36	ՂՂազարն անդ անառս	ՂՂազարն անառս

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵՐԻՐԱՆԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆ ԱԳԻՐՆ

ՄԱՏԹԷՈՍ

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ

ԹԵՐԻ

ՑԱՑՑՆՈՒԹԻՒՆ ԴԼԽՈՑ ՅԱՒԵՏԱՐԱՆՉՆ
ՄԱՏԹԷՈՍ ԿԵՍԱՐԱՑՒՈՑ ԳՐՈՑՑ

ՃԱՒ Ա. ՝Ի Բոլորմէր ճառընթրէ ոսոփէ։
Գ. Յերուսաղէմայ անուանեալ ճառընթրէն։ Յորդորակն. Յաղագս վաշխից։ ՝Ի խրիմեան օրինէն։
Դ. Յորդ. յաղագս պահոց և ազօթից, և բարեկիրթութեան և աբեղայութեան։ ՝Ի խրիմեան օրինէն։
Ե. Յորդ. յաղագս հպարտոյն։ ՝Ի խրիմեան օրինէն։
Զ. Յորդ. յաղագս յաճախս երախտեացն Աստուծոյ, և մեր յաճախս մեղացն։ ՝Ի խոր. օրէն։
Թ. Յորդ. յաղագս կուսութեան օրինակաւ նեղբիւռնեաց։ ՝Ի խրիմեան օրինէն։
ԺԱ. Յորդ. յաղագս առաւել քան տասանորդաց տալ աղքատաց։ ՝Ի խրիմեան օրինէն։
ԺԲ. Յերուսաղէմայ ճառընթրէն։
ԺԳ. ՝Ի ճառընթրէն Կիւրիղեայ Լուսցեալ։
ԺԴ. Յերուսաղէմայ ճառընթրէն։ Յորդ. յաղագս ոչ լինելոյ անոյշ ի փրկութենէ նեղ պռունկ լցեալ և նեղ այլ մեզաւոր։ ՝Ի խրիմեան օրինէն։
ԺԶ. Յորդ. յաղագս սրբոց միայնակեացն։ ՝Ի խրիմեան օրինէն։
ԺԷ. Յորդ. յաղագս սրբոցն միայնակեացց։ ՝Ի խրիմեան օրինէն։
ԻԳ. ՝Ի Կիւրիղեայ ճառընթրէն։
ԻԵ. ՝Ի Կիւրիղեայ ճառընթրէն։
ԻԶ. ՝Ի Կիւրիղեայ ճառընթրէն։
ԻԷ. ՝Ի Կիւրիղեայ և յԵրուսաղէմայ ճառընթրոցն։
ԻԸ. ՝Ի Կիւրիղեայ ճառընթրէն։
ԻԹ. Յերուսաղէմայ ճառընթրէն։
Լ. ՝Ի Կիւրիղեայ ճառընթրէն։
ԼԱ. Յերուսաղէմայ ճառընթրէն։

ԼԲ. Յերուսաղէմայ ճառընթրէն:
ԼԳ. Յօրդ. յաղագս ոչ համարել փորը պանդանս. այլ և փոքունցն զդուշանալ: Ի ֆար. օրէն:
ԼԴ. Յօրդ. յաղագս ոչ բարկանալոյ: Ի ֆար. օրէն:
ԼԵ. Ի կիւիւեայ ճառընթրէն:
ԼԶ. Ի կիւիւեայ և յերուսաղէմայ ճառընթրացն:
ԼԷ. Յերուսաղէմայ ճառընթրէն:

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՈՍԿԵՐԻՐՆԻ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՕԼՍՈՒ ՆԳԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՔ

ՄԱՏԹԷՈՍ։

ԳԻՐՔ ԵՐԿՈՒԻՆ

ՅԱՒԱՋՆՄԲ ՃԱՌԻՆ

«Այլ եղեալ Յի՛ի կողմանս փիլիպպեայ Կեսարեացւոյ, հարցանէր ցաշակերտսն, և ասէր. Զո՞ ոք ասեն զիս նախանդիմիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Պատասխանեալ եառն և ասեն. ոմն զՅովհաննէս մկրտիչ, ևիսք զԱղիա, այլք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա Յի՛. դուք զո՞ ոք ասէք զիս նախանդիմիկն՝ թէ իցեմ։»

Բնդ՝որ զչինիչ քաղաքին յիշէ. քանզի էր և այլ Կեսարիա ստատուեան. և մեկուսի տարեալ ի հրեից՝ հարցանէր. զի յորժամ յապահով իցէն ի կասկածանացն, համարձակ լիցին ասել զամենայն ինչ՝ որ ի միտս կացցէն։ Այլ ընդէր ոչ նախ զնոցա մտացն կարծիս հարցանէր, այլ զբազմացն։ Զի յաւելացուցն զնոցայն ասիցէն, և ապա զիւրեանցն ի միջ բերիցէն. որով ի բարձրագոյնն էլանէին խ-

1 ի Ճառընտիրս մակագրին հատուածքս ի միում Յովհաննու Ոսկեբերանի ի կեսարաց-ւոցն. և յայլում՝ ի փարիսեցւոց գրոց։

մաստս ։ Վկանգի վասն այսորիկ և ոչ ի սկզբան քա-
րոզութեանն Հարցանէր . այլ յորժամ յոլով նշանս
արար , և բազում բարձրագոյն կրօնս խօսեցաւ , և
առ Հայր զմիաբանութիւնն յոլով վկայութիւք ծա-
նոյց ։ Այս ոչ ասաց , թէ զի ոք ասէն զինէն գալիքն
և փարիսեցիքն , այլ թէ ասիկքն . որ թէպէտ կա-
րի խոնարհագոյն քան զարժանն կարծէին , բայց ի
չարեաց ազատք էին ։

Այս վասն զի կարի լիմն կասի զտեսչութիւնն յայտ
առնել , զորդի մարդոյ ասէ . բայց բանքն զյաճուռ-
թենէ են , զոր որդի մարդոյ կոչէ , որպէս ի բազում
տեղիս ։ « Ով որ եղ , ասէ , յերկինս , եթէ ոչ որ էջն
յերկնից որդի մարդոյ , որ էն յերկինս ,, . և դար-
ձեալ « Տեսանիցէք զորդի մարդոյ , զի ելանիցէ՝ ուր
էր զառաջինն ,, ։

« Լսակ դուք զի ասէք զինէն՝ թէ լցեմ ,, ։ Ոտքն
ասէ , նշանակիչ է , զի երկրորդ Հարցուածոյն կեր-
պարանօք միտս մեծամեծս ստացին . և մի ի նմին
խոնարհութեան կացցեն , որպէս բազումքն ։ Ոտք ,
ասէ , որ յայնքան նշանս վայելեցէք , և զօրութեամ
բազումս ինձ արարէք ։ Պետրոս մատուցեալ յա-
ռաջ՝ ձեռներեց լինէր ի պատասխանին . « Ոտս էս
Վէ որդի այ կենդանւոյ ,, ։

«Լ՛ամէն ասեմ ձեզ, եթէ էն ոմանք ի սոցանէ՝ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զորդի մարդոյ՝ եկեալ արքայութեամբ և փառօք Հօր»։

Վ՚ԱՆՁԻ բազում ինչ Ճառեաց զվշտաց և զըզմահուանէ և զյարբսարանաց իւրոց, և զաշակերտացն կոտորածոյն, և զաստիկն ևեթ ետ հրաման. արդ այն ամ՛ յաշխարհի մծտ առ կուբծս կայր, և բարեթիւնքն յուսով ևեթ ակն ունելով։ Լ՚յսպիսի ինչ փրկել զոգիս այնոցիկ՝ որք կորուսչին, և գալ նորա փառօք Հօր իւրոյ. քանզի Հատուցանել ասաց՝ ի բաքանչիւր ըստ գործս, կամեցաւ և նոցա իսկ աւօք ստուգել, և ցուցանել՝ թէ որպիսի ինչ էն փառքն, որով Հանդերձեալն իցէ գալ, որպէս և մարթ էր նոցա տեսանել աստէն յաշխարհիս, յայտնէր և ցուցանէր։ Օ՛ի այնուհետև մի ընդ իւրեանց՝ և մի ընդ ՚ն մնչն տրամեսցին, և մանաւանդ Պետրոս՝ որ կարի ինն ի խոր խոցեալ էր։ Լ՚ւ արդ տես, ընչ զորձէ. զի յայժամ վասն գեՀենոյն, և վասն արքայութեանն Ճառեաց. «Որ գտանէ զանձն իւր՝ կորուսանէ զնա»։ Եւ ասելովն՝ թէ հատուցանէ իւրաքանչիւր զգործս իւր, զերկոցունցն իսկ յայտ արար. զարքայութենն եցոյց նոյ։

«Լ՚ւ յետ վեց աւուր առնու Յ՚ի ընդ իւր՝ զՊետրոս և զՅակոբոս և զՅովՀաննէս»։ Ոչ՚իսս աւետաբանիչն՝ յետ ուրեմն ասէ, ոչ իբրև Հակառակ ինչ նմա, այլ կարի իսկ քաջ միաբան. զի մինն զայն օրն՝ յորում զբանն ասաց, և յորում եՀան զնոսա ի լեառն՝ Թաւէ. և միւսն զվեց օրն՝ որ ի միջի երկուց աւուրցն էին՝ միայն ասաց։ Լ՚ւ դու այժմ ևեթ միտ դիր, զիարդ Ոչ՚ատեհաս Ճարտարամտիկ առ խնամբ ՀուԹեանն, և չԹաքուցանէ գայնոսիկ՝ որք քան զնա նախասահմածքը էն։ Օ՛սոյն և Յ՚ովՀաննէս յայտ առբարեալ ընդ բազում տեղիս՝ զառաւելագոյնն գովէ զՊետրոսի և յարգէ, և բազում Ճշմարտութեամբ

զարդարն գրէ. զի այնպէս իսկ ՚ի նախանձուէ և
յանձնգովութենէ և ՚ի մնապարծիկն փառաց ազատ
էր գունդն սրբոց։

Եւ արդ առեալ զգլխաւորսն «Հանէ՚ի լեառն մի
բարձր առանձինն, և յայլակերպս եղև առաջի նո-
ցա. և փայլեցին երեսք նորա իբրև զարեգակն, և
հանդերձք նորա եղեն որպէս զլոյս։ Եւ երևեցան
նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսեին ընդ նմա»։ Ընդ-
երբ զնոսա առնուցու. քանզի նոքա քան զայլսն առա-
ւելագոյնք էին. Պետրոս ՚ի կարի սիրոյն յայտ առ-
նէ զառաւելութիւնն. և Յովհաննէս այնու՝ զի ՚ի
նմանէ կարի սիրէր. և Յակոբոս ՚ի պատասխանւոյն՝
զոր արար եղբարբն հանդերձ, թէ կարեմք ըմպել
զբաժակն. և ոչ միայն ՚ի պատասխանւոյն, այլ և այ-
լովք ևս գործովք, որով կատարեցաւ իսկ՝ որպէս
յառաջագոյն կալաւ յանձին. զի այնպէս ծանր թը-
ւեր հրէիցն, մինչ զի երգումամբ իսկ հաւանեցուցա-
նէին զԵրեմիէս շնորհել զնա նոցա ՚ի մահ։

Եւ ընդէր վաղվաղակի ոչ հանէ զնոսա ՚ի լեառնն։
Օ՛ի մի մարդկօրէն ինչ ախտանայցեն այլ ևս աշա-
կերտքն. վասն այնորիկ ոչ ևս յանուանէ յայտնէ
զայնոսիկ՝ որ ելանելոց էին ՚ի լեառնն. քանզի կարի
իսկ ցանկայինն և այլքն երթալ զՀետ՝ տեսանել զօ-
րինակ այնպիսի փառացն որ երևելոց էին նոցա, և
դժկամակ ևս լինէին որպէս քամահելք. զի թէ-
պէտ և մարմնական թուէր, այլ կարի ցանկալի էին
իրքն։ Եւ ընդէր իսկ յառաջագոյն ասիցէ։ Օ՛ի տես-
ցէ՞կագոյնք և կիրթք տեսցեանն լինիցին այնու զի
կանուխ ասիցէ. և թուով ևս աւուրցն յաձախա-
գոյնս կարօտանայցեն, և արթունք լինիցին, ունե-
լով ՚ի մտի զՀոգի իրացն՝ որ տեսանելոց իցեն։

Եւ ընդէր զՄովսէս և զԵղիա ածիցէ ՚ի մէջ։
Բազում պատճառք կան ՚ի միջի ասելոյ. և նախ՝
այն իսկ, զի ոմանք ՚ի նոցանէ ասէին ՚ի ժողովրդոցն՝
թէ Եղիա է, ոմանք՝ թէ Երեմիա, և ոմանք՝ թէ
մի ոք ՚ի մարգարէիցն, զգլխաւորսն հանէ ՚ի լեառնն,
զի անդ տեսանիցեն՝ ոչ ևս ինչ ՚ի մէջ է ընդ ծա-
ռայսն և ընդ ՚ուրն. և թէ՝ յիրաւի գովեցեալ Պե-
տրոս, զի խոստովանեցաւ զնա որդի ՚ոյ։ Զետ այնր

և այլ պատճառ է ասել· քանզի բամբասէին զնա՝ թէ զօրինօք անցանէ, և հայհոյիչ կոչէին· որ չէ նմա անկ, ասէին, յանձն խորհիլ և շուք աւելի դնիցէ· և ասէին, թէ չէ դա յայ, զի զշաբաթս ոչ պահէ· Այլ գարձեալ՝ վասն բարեաց գործոց մեք զբեզ քարկոծ ոչ առնեմք, այլ վասն հայհոյութեան· զի դու մարդ ես, և զանձն ած առնես· Օ՛ի ցոյցէ, թէ առ նախանձու էին երկոքին բամբասանքն, և ինքն զատ յերկոցունցն· զի ո՛չ զօրինօքն էին յանցանէլոյ իրքն որ գործեցան, և ո՛չ փառս էին՝ որ չիցէ նման անկ՝ խորհելոյ, այնու զի հաւասար առնէը զանձն Տեր· զնոսա՝ որ երկու կարևորօք պայծառագոյն էին՝ ի հնուանն, ած՝ ի մէջ· Օ՛ի զօրէնսն՝ Աւրհնեա իսկ էա· և մարթ էր իմանալ հրէիցն, եթէ ոչ առ յանձն Աւրհնեալ զարհամարհանս օրինացն, որպէս ինքեանք կարծէին, և զայր մի զօրինազանց և զհակառակ հարցն կրօնիցն՝ որ յայ տուան նոցա՝ այնպէս եկեալ ողբէին, թէ ոչ ստոյգ գիտէին, թէ արդարև որդի այ է· Այա և Ելիսա՝ որ այնպէս նախանձ ունէը վասն այ փառացն, եթէ հակառակ որ ինչ էը այ, որ և զիւր անձն աստուած կոչէը, և հաւասար Տեր համարէը զինքն, որ ոչ ինչ էը նման անկ, ոչ եկեալ կայր առ նման այնպիսի նախանձախնդիրն՝ և հնազանդ լինէը, եթէ ոչ ստոյգ գիտէը, թէ արդարև որդի այ է·

Այս հանդերձ այսորիւք որ ասացանս և միւս ևս պատճառ է ասել· զի ուսանիցիս՝ թէ մահու և կենաց տէր է, և զվերինն և զներքինս՝ առ հասարակ ունի ընդ իշխանութեամբ· վասն այսորիկ զմինն վախճանեալ՝ և զմիւսն չև ևս այնպիսի ինչ չարչարեալ՝ ածէ՝ ի մէջ· Այս գհինգերորդ պատճառան՝ աւետարանիչն իսկ յայտ առնէ՝ զիւրոյին զիշատաւորութիւնն, զի մխիթարեսցէ [1] զԳէորգոս, և զայլսն՝ որք՝ ի չարչարանացն զանդիտէին· և զարհամարհել զմիտս նոցա· Այս եկեալքն [2] չկային լուռ, այլ խօսէին ըզփառացն՝ զոր կատարէլոյն էը Յ[ի]ուսաղէմ, այսինքն զաշխարհանան, և զիշէն, զոր միշտ փառս կոչէ·

Այս ոչ այնու միայն կրթէը զնոսա· այլ և առաքիւ-

1 Ցօրինակին խոսուրէ։ 2 Ցօրինակին եկեալ դեպրեսեան։

նուիրեսցէ ինչ ՚ի նոցանէ իբրև յարանց պահանջիչք. որպէս Յովսէս և Դաղիա աստիան ցուցին։ Վասնզի ասաց՝ Թէ որ կամի գալ ՚ի հետ, առցէ զխաչ իւր և եկեսցէ ՚ի հետ իմ, զնոսա՝ որ բիւրապատիկ մեռան վասն ոյ չհաւատացին, որոց ժողովուրդն հաւատացին, ածէ ՚ի մէջ։ Վասնզի նոքա իւրաքանչիւր զանձինս կորուսին և գտին. և առաջի բռնաւոր իշխանաց համարձակեցան. մինն առ Եգիպտացին, և միւսն առ Քաբայաբ. և ՚ի վերայ ապախտաւոր և անհաւան մարդկան. և յայնցանէ՝ որ նուաւ իսկ ապրեալ էին յայնպիսի վշտաց, որ կարի իսկ մեծ ՚ի վախչան նոցա էին. և երկոքին իսկ ՚ի կռապաշտութենէ ապրեցուցանել կամէին զժողովուրդն, և իւրաքանչիւր տգէտ երկոքեանն. զի մինն՝ նրբալեզու և ծանրաձայն, և միւսն շինականագոյն քան զբազումս. և ինքս յանձն հոտս չառնուցու՝ երկոցունցն կարի փոյթ յանձին կայր. զի և Յովսէս առանց ընչից եր, և Դիա՝ աւելի ինչ քան զմարկեանն՝ ոչ ունէր։ Քս այն՝ զի ՚ի հնուէն ևս էին, և ընորհս այնպիսի ինչ ոչ ունէին զնշանաց. զի թէպէտ և զծովն եհերձ Յովսէս, այլ Պետրոս ՚ի վերայ խոնաւական միանգնոյն գնաց, և զլերինս փոխել բաւական եր, և զանստս մարդոյ բժշկել ազգի ազգի, և զդևս հալածել զդազանաժիտս։ Քա և ստուեր ևս մարմնոյն մեծամեծ նշանաց գործոյ հետնոցն ցուցանէր. և զտեղերս ամենայն ՚ի կրծոյ ՚ի կրծոս փոխէր։ Մնէպէտ և Դիա մեռաւ յարոյց, այլ սոքա բեւրս բիւրուց. և այն ինչ չեաղ ժամի լեալ սրբոյ հոգւոյն։

Քա և վասն այնորիկ ածէ զնոսա ՚ի մէջ, զի և զբուհեան նոցա զսոսա կամէր առնել նախանձաւորս, և ժուժկալութեանն. հեղս իբրև զՅովսէս, և նախանձաւորս իբրև զԴիա. և սաստիկս՝ և խնամակալս։ Օ ՚ի մինն սուլ ածէ ՚ի վերայ ազգին հրեից. և միւսն ասէր, "Դիթ Թողուս դոցա՝ Թող. ապա Թէ ոչ՝ և դիս ընկեաւ ՚ի գպրութենէն յոր գրեցեր,,։ Օ այս ամենայն յիշեցուցանէր նոցա՝ ցուցանելով զանեսիլն. նաև փառաւոր իսկ եղոյց նոցա զնոսա, զի ցուցցէ, Թէ ոչ միշտ ՚ի վիշտս ևԹէ կայցեն, այլև անցանեն պատերազմունքն։

Յորժամ ասացին աշակերտքն, «Ո՞վ եմք, ասեն, զի ինչպէ՞ս կերկնից». և զայն յիշեցին՝ զոր Տ֊ղնէս էր արարեալ, ասէ, «Ես գիտեմ որոյ հոգւոյ եմ». զի յանօրհնակալութիւն կրթեսցէ զնոսա՝ վասն այլազգութեանն ընդհայն և կերպարանացն։ Ո՞վ մի ոք ըզմիմեանս կարծիցէ՝ եթէ պարսաւիցեմք զՏ֊ղնէս. քանզի կարի իսկ կատարեալ էր, այլ յիւրում ժամանակի՝ միմիայն տղայք էին մարդիկ մեռք՝ այնպիսի դասս տիարակութեան պէտք էին։ Տ֊ղան Աստուածն էր։ Ոչ ասէ ըզնոսա աւելի քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մեռանիմք յաքայուէին երկինից». Օ՛ ոչ Տ֊ղիպտոս միայն մեռին, այլ յամենայնս միեւցան՝ որ ևս չար յախտի կային քան զեգիպտացիսն. զի ոչ ընդ վաթսունի միայն վիճեին, այլ ընդ սատանայի ոգոյնէին, ուստի և բըռնութեան սատակութիւն եմուտ յաշխարհս և մարտ ընդ այն էր, զի և զնա կապեսցեն, և զյարկս նորա աւար հարկանիցեն։ Ո՞ւ զայսպիսի գործ՛ ի ձեռն առեալ՝ ոչ զծով պատառէին, այլ զնորս ամբարշտութեանն՝ որ կարի սաստիկ յածէր ալեօք, գաւազանեաւն՝ որ բղխեաց Տ֊ղոսեայ, անցանէին։ Այլ սա կայն՝ առ ոչինչ հաւանեցոյց հասանել. և իբրև ընդ ցամաք ամենայն զգուշութիւք անցանել։ Ո՞ւ զի այսմ՝ ամենայնիւ կրթելոց էր զնոսա, յայն սակս եցոյց զնոսա ցնոսա։

Ո՞ւր զինչ ասէ Պետրոս ջերմաջերմին. «Հարուածք է մեզ ասա լինել». քանզի լուաւ, եթէ պարտ է նմա Տ֊ղրուսաղէմ երթալ, և չարչարել, դեռ և կասկածն՝ի մտի կայր, զի հոգայը և երկնչէր վասն նորա. և յետ սատակելոյն՝ ցիշեաց մատչել. և զնոյն անկարկէ պլտվք բանիւք։ Վասզի եաես զքեառն կարի՝ի բացեալ, և բազումն իմն զգուշութիւն՝ի տեղւոջէն համարէր. և ոչ միայն՝ի տեղւոջէն, այլ զի բնաւ չերթայցէն Տ֊ղրուսաղէմ։ Կամէր՝ զի և անդ լեռի լինիցին հանապազ. քանզի և զատաւատաբայն իսկ յիշէ. զի թէ այս լինիցի, ասէ, ապա երթամք իսկ ոչ Տ֊ղրուսաղէմ. և յայնմի իսկ չիշխեր ասել, բայց այնպէս իմն կամէր չայթայթել զի Աստ֊

սէս մօտ է ասէ, և Յղիա առ մեզ հուպ. և չհամառայ ոք եթէ աստ իցէք ի հակառակողացն։

Տեսեր զքերմն սիրելին Ա՛նի։ Ա՛ի զայն խնդրեցես, թէ ոչ յարդարէին կերպարանքն աղաչանաց, այլ թէ զիա՛րդ ջերմ էր, և կամ թէ զիա՛րդ խորհուվեր վասն Ա՛նի. զի այնպէս ոչ անձին ինչ սպաս ունէր, այլ ի վերայ վարդապետին գողայր. քանզի յայտնի խակ վճիռ էտ, խրթացեալ ընդ միտս՝ կարծէր, թէ գուցէ դարձեալ պատուհասակոծ լինիցի, զպատճառն արկանէ. Թէ "Ցամխ, ասէ, արաւ ցուք երիս տաղաւարս, մի քեզ, և մի Մովսիսի, և մի Յղիայի"։ Օ՛ինչ խօսիս, Պետրէ. ոչ յառաջ քան զայս զատեր մեկնեցեր զդա ի ծառայից. արդ զիա՛րդ միւսանգամ ընդ ծառայս համարիս։ Տեսեր, զիա՛րդ անկատար էին յառաջ քան զհասչն. զի թէպէտ և յայտնեաց նմա Հայր, այլ ոչ միշտ առ իւր ունէր զայայտնութիւն. քանզի ի տեսլենէն զոր եառեւ Աբրհամ և Գ ուխաս ասեն, չգիտեր զի՛նչ խօսէր, զի յայս առնիցէն Թէ կարի յոյժ Թմբրեալ էր։ Կա և այլքն, ասէ, ծանրացեալք էին քնով. և իբրև զարԹեան՝ տեսին զփառս նորա. քուն, զծանրութիւնն որ ի տեսլենէն եղև նոցա, կոչէ։ Օ՛որ օրինակ այգ ի բազում լուսոց այլայլէն, նոյնպիսի ինչ և նոքա անդ կրէին. զի ոչ եթէ զիշեր էր, այլ տիւ. և լուսոյն առաւելութիւն ծանրացեալ նուաղեցուցանէր զաչց տեսութիւն։

Յր ինչն ոչ խօսէր, և ոչ Մովսէս, և ոչ Յղիա։ Խակ մեծ քան զամենեսեան և արժանի հաւատարմութիւն, հայր բարբառ արձակէր յանկոյն։ Յր ընդէր արդեւք յամոյին. քանզի այնպէս միշտ երևի ՚ած. ըստ այմ, եթէ "Ի՛մ և մեզ շուրջ են գնովաւ"։ և այլ ուր՝ Թէ "Կատի ի վերայ ամպոց"։ և Թէ "Որ եդ յամպս զգնացս իւր"։ և այլ ուր՝ Թէ "Տեսանէի իբրև որդի մարդոյ՝ զի գայր ի վերայ ամպոց"։ զի հաւատացեն Թէ յայ գայր բարբառն։ Ա՛ն այնորիկ և ամպն էր լուսաւոր։

"Ա՛ինչ դեռ նա խօսէր, ասէ, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա, ձայն եղև յամպոյն և ասէ. դա է որդի իմ սիրելի"։ Յորժամ սպառնա-

լես ինչ բարբառի , խաւարային ամպ երևի . որպէս և 'ի լերինն Սինեայ . " Այժուտ , ասէ , յամպն և 'ի մէգն Տ֊ովսէս . և իբրև զմրրիկ այնպէս պատեր ծուխն ,, . և մարգարէն յորժամ վասն սպառնալեացն ՝այ Ձառէր , ,, Խաւարային , ասէ , ջուրք յամպս օդոց ,, Եակ ասա՝ քանզի ոչ երկեղուցանել կամեցաւ , այլ ուսուցանել , ամպ լուսաւոր երևեցաւ։ Պետրոս ասէր , ,, Ընտրութիւք երիս տաղաւարս ,, , և նա զանձեռնադործ խորանն էցոյց . վասն այնորիկ անդ մրրիկ և ծուխ հնոցի , և աստ լոյս սաստիկ և բարբառ հայբական ։ Օ ի յայտ լիցի , Թէ ոչ վասն միոյ ուրուք 'ի նոցանէ եկն բարբառն , այլ վասն Որդւոյ միայն , իբրև եկն բարբառն , նոքա անհետ լինէին . վասն զի եԹէ վասն միոյ ուրուք 'ի նոցանէ ասէր , ոչ ինքն միայն ՝ՈՒայր՝ 'ի զատանել երկուցն 'ի նմանէ ։

Այս զինչ ասիցէ բարբառն , ,, Այա է , ասէ , որդի իմ սիրելի ,, ։ ԱյԹէ սիրելի իցէ , զի զանգիտես Պետրէ . քանզի ոչ ոք զոր սիրէ , նպաստս վաշխի տայցէ ։ Այրդ՝ մի ինչ խոտվեսցիս . զի Թէպէտ և բիւրապատիկ սիրեսցես , ոչ որչափ ծնօղն սիրիցէ ։ ,, Ինդ որ Հաձեցայդ ,, ասէ . ոչ միայն զի ծնօղն է՝ սիրէ , այլ զի հաւասար նորին է՝ ամենևին յամի , և Համագոյ և Համապատիւ , և կայ մշտնջենաւոր մի որդի ընդ իւրում ծնողին ։ " Այամի , ասէ , լուսարուք ,, որպէս զի Թէ և 'ի խաչ կամիցի ելանել , մի ինչ ընդդէմ դառնայցէք ։

" Այս իբրև լուան , ասէ , աշակերտքն , անկան 'ի վերայ երեսաց իւրեանց , և երկեան յոյժ ,, ։ Օ իսկ իբրև լուան զբարբառն՝ զարհուրեցան . զի աՀաւասիկ յառաջագոյն եկեալ էր այսպիսի բարբառ 'ի վերայ Յորդանան գետոյ , և ժողովուրդն մնա էր , և ոչ այնպէս Թմբրեցան . և յետոյ դարձեալ մինչ ասէին՝ Թէ որոտումն լինի , ոչ յայնժամ այնպէս ոք լսկեցաւ . և զիարդ նոքա 'ի լերինն անկան յահէն ։ ՈՒանգի յանապատին էին , և 'ի բարձու , և յանխուսափ տեղւոջ , և յայլակերպս լինելոյ արհաւիրքն պատէին , և լոյսն սեաւն իմն և անխառն էր , և ամպն 'ի վերայ տարածեալ՝ որ ամենևին իսկ զնոն յաշխարհէր , և յամենայն կողմանց արհաւիրքն պատէին ,

անկանելին իսկ միանգամայն և երկիր պագանելին։ Այլ
զի մի կարի ահն պաղեցուցանէ, և զյիշատակ իրացն
՚ի մտաց մերժիցէն, վասն այսորիկ վայելաղակի փա-
րատէ զերկիւղն, և երևի ինքն միայն։

«Այլ պատուէր տայ՝ մի ումեք ասել, մինչև ՚ի մե-
ռելոց յարիցէ»։ Օ ի՛ որչափ ինչ օր մեծամեծ պատ-
մէր զնմանէ, այնչափ և առաւել գժուարըննակալ լի-
նէր բազմաց, և գայթակղութիւն խաչին և քան զևս
յոլովեր անտի. վասն այսորիկ լռել հրամայէ և ոչ
հանապազ, այլ թէ մինչև ՚ի մեռելոց յարիցէ. զի
յետ այնորիկ և հոգւոյն արժանի եղեն, և զնշանսն
ունէին ընդ իւրեանս՝ ջատագով և խօսելի. և զայդ
ինչ զոր ասէին այսուհետև՝ ընդունելի էր։

Այսպա ուրեմն չէր օր երանելի քան զառաքեալսն,
և մանաւանդ քան զերկուսն՝ որ էին ընդ ամենայնի, և
յարկակիցք լինել արժանի եղեն նոցա։ Այլ թէ կա-
միմք, և մեք տեսանեմք զՔ՚ն, ոչ որպէս նոքա յայնժամ՝ ՚ի լերինն, այլ և առաւելագոյն. քանզի ոչ եթէ
այնպէս գայցէ ՚ի վախճանի, յորժամ յաշակերտսն
զընդացեալ՝ թերաբամ և կիսաբաց ևեթ արար
զլուսաւորութիւնն, որչափ ինչ նոքա հանդարտել կա-
րէին։ Իսայց յետ այսորիկ փառօք հօր գայցէ, ոչ
միայն Մովսէսիւ և Եղիայիւ, այլ անեղը զօրութիւն
հրեշտակաց անհամար գնդիւք։ Այլ եթէ ասիցէ
նա՝ ի վերայ գլխոյն ունիցի, այլ երկինք և յինքեանս
ամփոփեացին. որում լիցի և մեզ հանդիսել ՚ի Ք՚ն
Յ՚ի տէր մեր. որում փառք այժմ և միշտ և յա-
ւիտեանս։

ՑՈՐԴՈՐԱԿ

Վ՚ԱՆՁՒ դժնդակ է, սիրելի, և կարի իսկ դժնդակ. և բազում բժշկութեան կարօտ ախտն եմուտ
յեկեղեցի. զի և որք յարդարութեէ վաստակոց չա-
ռին հրաման զանձել, այլ զիւրեանցն և բանալ կա-
րօտելոց, զայլոց աղքատութեէ շահ վաճառաց հասա-
րին, և բարիոք կերպարանս զյափշտակութեէն, և
գեղեցիկ պատճառս զագահութեէն հնարին։ Այլ

մի՛ ինձ ինչ զարտաքին օրինացն ասիցես. քանզի և մաքսաւորն զարտաքնոցն օրէնս կատարէ, սակայն տանջելոց է. և մեք գնոյն կրիցեմք, եթէ ոչ կացցուք ի բաց զաղքատսն ի լսելոյ. որք և պիտոյիւք և կարևոր պատճառանօք յուիժդ և ի ժժգին վաճառականութենին հատեալ եմք։ Ա՛ սոն այնորիկ ունիս ինչ, զի աղքատութենն դիւրութե՛ առնիցես, ոչ զի վաճառաշահ զաղքատութենէն համարիցիս. դու սհա ւադիկ պատճառանօք մխիթարութե՛ն՝ մեծամեծ աղէտս գործես և վաճառես զմարդասիրութիւնն ընդ կարասոյ. գնեա, չարգելում, այլ զարքայութե՛ն երկնից. մի սակաւ գինս առնուցուս, քանզի այն են ուղղութեան քո տոկոսիք հարիւրորդք, զանմահական կեանսն գնեա։

Ա՛նդէր աղքատ կայցես, ընդէր անսնակ, հիմ՛ չըղջիմ. ուր սակաւու զմեծամեծս մարթի գնել, ընդ կորստականի ընչից զարքայութիւնն՝ որ կայ և միայ մշանջենաւորն։ Օ մէ գնած Թողուս, և մարդկօրէն շահս շահիցիս. վասն էր ի մեծացուցչէն վերիսկսել և զչքաւորն Թախանձես. զՀատուցիչն խրխրես, և զարևիշուշան հատուցանող հաշուիս։ Ա՛յս ցանկայ հատուցանել, և սա դժկամակ ընդ հատուցումին լե՛նի. սա ընդ հարիւրոյ մի հազիւ հատուցանէ, և նա հարիւրապատիկ ընդ միոյ և զկեանսն յաւիտենական. սա Թշնամանօք և բամբասանօք, և նա գոհութե՛ և գրուատեօք. սա ընդ քեզ ի նախանձ գրգռի, և նա պատկ բոլորէ. սա աստ հազիւ Թէ, և նա աստ և անդ։

Ա՛յլ արդ չիցէ վերջին անմտութե՛ն չգիտեն շահս. քանի՛ են և որք զգլուխն կորուսին վասն տոկոսեաց. ո՛րչափ և իցեն՝ որք և զայլս և զանձինս յանհնարին աղքատութենս իջուցին վասն անյագ ագահութեանն. քանի՛ են որք ի վտանգս մտին վասն տոկոսեաց։ Ա՛յլ զսյն ինչ մի՛ ասիցես, Թէ որ առնուն՝ ինդայ, և ընորհ ունիցի քեզ՝ որ փոխ տաս. քանզի այն վասն քոյոյ անապրուստութեան լինիցի։ Ա՛յս և Ա՛բրահամ զկինն ետ խուժդուժ բարբարոսացն. հնարէր գնենգութե՛ն դիւրել, բայց ոչ եթէ կատաղիչ, այլ առ աչին վաբաւորի. նմանպէս և աղքատն, քանզի և ո՛չ այնմ

արժանի համարիս զնա, հարկաւ անագորոյն մտացդ ունի ՀՈՐՀ. և Թուի ինձ, Թէ և 'ի վշտացդ ինչ և ա՛ս ապրեցուցանիցէ, և ընդ այնր և զիւրումն Թէ վարձս պահանջիցէ 'ի նմանէ։ ( )ՆՆ անդր, ասէ, քաւ լիցի· զինչ խօսիս· մեծամեծացն ապրեցուցանելոյ չկամիս ինչ պահանջել, և 'ի փոքունն այնչափ ցուցանել տրտմարդութիւն· չտեսանե՞ս, որչափ պատիժք ընդ այնպիսի իրաց կան· չլսիցես, զի և 'ի հնումն և՛ս արգելեալ էր զայն։

ՎԱՀ տես, զինչ ասեն բազումք· առնուա՛ զտուկսն, ասէ, և աղքատաց տա՛։ Ուղիղ· մի՛ անուղայս խօսիր, ո՛վ այր դու· չկամի՞ Ած զայնպիսի պատարագս· մի՛ աւելի քան զօրինսն Ա՛արտարեր· լաւ է բնաւ իսկ չտալ աղքատաց, քան անտի տալ։ Ինդէր որ ինչ յարդարութեան վաստակոցն ժողովիցի արծաթեն, առնիցես զայն անիրաւութեա՛ շահ՝ չար ծնունդ՝ զքո օրինակ եՀԷ զարգանդ որ բարւոք՝ բռնադատիցէ կաթիս ծնանել։ Ա՛յս զինչ ասացիս զա՛յ օրինացն· ո՛չ ապաքէն և դուք իսկ աղտ կոչէք զայն· եՀԷ զոր շահիքդ՝ այնպիսի վՀու տայք, 'ի միտ առ՝ Թէ որպիսի ինչ վՀուս զձեզ ընդ այնր տա՛ց ա՛ծ։ Ա՛Թէ կամիս և զարտաքին և զօրինադիրսն հարցանել լսել, զի և նոցա վերջին անմտութեան իրքն օրինակ համարիս· զի որք զպատիւսն ունիցին, և մեծաց խորհրդոցն խորհրդակիցք էն, որք սիւնակղնիտոսք կոչին, չէ նոցա օրէնս այնպիսի ինչ շահիւք ամՀԹ յանձն առնուլ· այլ օրինք ինչ կան 'ի վերայ, որ զայնպիսի շահս խափանեն[1]։ Ա՛յս արդ զինքդ չէ՛ց արժանի դողութե՛ Թէ այնչափ պատիւ չառնիցես երկնից արքայութե՛ն, որչափ խորհրդականութե՛ հռոմոց օրէնսդիրքն· այլ փոքր քան զերկիրն համարիս զերկինս, և յիրացն չափ չտանես։

Օ՛ինչ քան զայն անհանգարտ կայցէ այլ այնպիսի ինչ, յորժամ առանց երկրի և անձրևոյ և արօրոյ բռնադատեսցէ որ սերմն հանել· վասն այնորիկ զորումն Տնձեն՝ զՀրոյ Ա՛արակ, որ զայնպիսի չար միտս կութե՛ իմացան։ ԻնԹէ չիցեն արդարութե՛ն վաստակք· և կարի իսկ բազում, արտաւարաց, Հօտից,

[1] Յօրինակին չկա՛ս սաս։

օդւոց, խաշանցն, ձեռագիտուքենն, զորս արդարու-
քեն ունիցին խնամակալուքենէ։ Կամ արդ ընդեր
շամչիցիս՝ զուր ջանալ, փուշ մնուցանել։ Կամ քեզ-
եա ինասակարուքեն ինչ և վըխտակը յերկրին պտուղս
կայցեն, կամ կարկուտ կամ ըրձուր կամ ստէպ
անշարժական անձրեւք. այլ ոչ այնքան՝ որչափ ի վաշխ-
սեն և ի տոկոսին։ Որչափ ինչ ինաս արմտեացն
լինիցի, թէպէտ և տոհմական ոչ, սակայն զգլուխն
տայ, և անդ ինայ ի տեղւոջ. իսկ անդ բազում ան-
գամ բազումք ի գլուխս իսկ նաւակոծուքենս կրե-
ցեն ի հանապազորդ տրտմուքենն։

Կամ չվայելէ երբեք յինչսն փոխատուն, և չառնի
ուրախ. այլ յորժամ տոկոսիքն գայցեն, չինդայ՝ և
թէ հաս ինչ եկն նմա, այլ տրտմի՝ եթէ ընդեր ոչ
գլուխն վաղ եկն քան զվաշխն, և բունն քան զտոկո-
սին։ Զաթ ծնունդ են տոկոսիք, և այլ գլուխս սոխ-
պէն ծնանել, անժամն և կոյս իբրև զծնունդս իժից,
և չար քան զայնպիսի չարաճճիս. զի նոքա մայրա-
կերք են, և սոքա զորդիս թշուառականացն ուտեն։
Կայն իակ է հանգոյց անիրաւուքենն, և հնձիւն բըռ-
նութեց վաճառաց. տամ, ասէ, ոչ զի առնուցուս,
այլ զի առաւել տայցես։ Օ ի ձճ և ոչ զառւեաղն
հրամայէ առնուլ. "Տուք, ասէ, փոխ, ուստի ոչ ակն
ունիցիք առնուլ"։ դու ահաւադիկ և զառւեաղն
պահանջես, և զոր ինչ ետուր՝ իբրև զպարտս սոխ-
պես հանել յառողջն. և համարիս թէ այնու մեծու-
թի ինչ յաճախիցես, և չգիտիցես՝ եթէ հուր անշէջ
բորբոքես յարարն անդր։

Օ ի մի այն լինիցի, կտրեսցուք զչարաբար դանկ
տոկոսեացն, և շինուսցուք զանօգնն երկունսն. և ցա-
մաքեցուսցուք զապականիչ որովայնն. և զարդարու-
թենն և զմեծամեծ չահիցն և եթէ զնէտ երթիցուք։ Կամ
եթէ զինչ իցէ, լուր Պաւղոսի. "Ունեմ շահ, ասէ,
ամպարտուքենէն և՝ բաւականուքէ հանդերձ"։ Կարդ
այնու մեծուքեն մեծասցուք, զի և աստ համարձա-
կուքեն վայելեսցուք, և հանդերձելոց բարուքեցն
հասցուք, շնորհօք և մարդասիրուքէ նոյն մերոյ Յի-
սուսի. որում փառք իշխանուքի և պատիւ, այժմ
և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՁՈՐՐՈՐԴ ՃԱՌԻՆ

"Այս ազգ, ասէ, ոչ ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք"։

ՕԱՍՏՆԱՑՆ իսկ զդաստուց դիւացն ասէ, և ոչ միայն զլուսնկացն. և տէս զիարդ անդէնն վազվազակի զպահոցն Ձառս ի մէջ բերէ. և մի ինչ զաւօսրիչն՝ ասիցես, եթէ ոմանք և առանց պահոց դևս հանին՝ սաստելով միայն։ Այի որ կամ երբք հանիցեն. այլ որ դամ մի յայնպիսի չարչարանս մատնեալ իցէ, չէ հնար եթէ ի փափկութեան իցէ, և յայնպիսի մոլորութեան ազատել կարիցէ։

Այլ եթէ հաւատոյն պէտք իցեն, ասեն, զինչ պէտ տոյ իցեն պահք։ Օի ընդ հաւատոյն և այն ևս ոչ սակաւ նպաստ լինի զօրութեան. քանզի և բազում ցաւ ծուխն գանձէ, և հրեշտակ ի մարդոյ յարդարէ, և ընդ անմարմնական զօրութեանն պատերազմի։ Այլ ոչ միայն պահքն առանձինն, այլ պարտ է հանդերձ աղօթիւք. և առաւել նախ աղօթք պիտոյ են։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այի արդ տէս, որպիսի ինչ բարութիւնք յերկուցունց կատարին. զի որ յաղօթման կայցի՝ որպէս պարտ իցէ կալ, և պահիցէ, ոչ բազում խիղճ կարօտանայ. և որ չկարօտանայցէ բազում խիղճ, չէ հնար եթէ ընչասէր լինիցի. և որ ընչասէրն չլինիցի, նա և ի տուրսն առատագոյնն լինիցի։ Այլ որ պահիցէն՝ թէ թև իմն և թռուցեալ լինիցի, և զդաստուերն կայ յաղօթս, զչար ցանկութիւնսն շինուցանէ, և զնաճ հաշտեցուցանէ, և զիտոս ամբարտաւանս խոնարհեցուցանէ. վասն այնորիկ առաքեալքն զբեթէ հանապազ պահէին։ Այլ որ յաղօթս կայցէ հանդերձ պահօք, կրկին թևս ունի, և վերագոյնս քան զՀոգմոյ. և ոչ որպէս յօրանչիցէն և ձկտիցի և ընդարմանայցէ յաղօթման, զոր կրեն բազումք. այլ նա քան զՀուր

և սաստիկ է, և քան զերկիր վեհագոյն. զի և դիւաց իսկ առաւել թշնամի է և պատերազմող. և չէր որ սերտիւ զօրագոյն քան զաղօթականն. Օ՛ի թէ կին մի այլոք զոմն անագորոյն իշխան՝ որ ոչ յայ երկնչէր և ոչ՛ի մարդկանէ ամաչէր՝ կարաց յինքն խոնարհեցուցանել՝ որչափ և առաւել զնոճ յինքն ձգիցէ, որ սատիպ պատկառ աղօթից կայցէ. և որովայնին չաղթէ, և զփափկութիւնս խոտէ։

Օ՛ի թէ տկար ինչ իցէ մարմնով առ՛ի ցանկ պահելոյ, այլ չէ տկար առ՛ի չաղօթս կալոյ, և ոչ անտես առնելոյ զորովայնէ. զի թէ պահել չկարեցես, ապա և ոչ բարեկեցիկ լինել կարօղ ես։ Օ՛ի չ՛ և այն սակաւ ծանրութիւն, ոչ կարի ինչ ընդհատ՛ի պահոցն, այլ բաւական է կորզել՛ի չանձնէ զմոլութիւն սատանայի։ Այս և չէր իսկ ինչ ախորժելի դիւաց իբրև զբաբեկեցութիւնն և զարբեցութիւնն. քանզի աղբիւր և մայր ամ չարեաց՝ Այն և գլխաբայելացին երբեմն ձգեաց՛ի կռապաշտութիւն, և զսոդոմայեցին չանօրէն ցանկութիւն. «Այս է անօրէնութիւն սոդոմացւոցն, զի յամբարտաւանութենէ և յբղփութենէ հացի և՛ բարեկեցութենէ փափկանային»։ Այովին բեւրս՛ի բիւրուց զայլս կորոյս և՛ զեհէնն մատնեաց։

Օ՛ինչ ինչ ոչ չարութիւն զործիցէ փափկութիւն. խոզս՛ի մարդկանէ առնէ. նա՝ և վատթար քան զխոզս. զի խոզն՛ի տղմի թաւալի, և աղբով բուծանի. իսկ այնպիսին և գարշելի սեղանով կերակրի, զխաչեալն անարժանս իմանայ, և անօրէն ցանկութիւն։ Օ՛ինչ ընդհատ այնպիսին՛ի դիւահարաց, քանզի նոյնպէս յանդգնի և մոլեգնի. դիւահարին զեղ ո՛ղորմիք, և յայնպիսւոյն զերեսս դարձուցանեմք և առեմք։ Այնդէր. զի ինչնակամ կորզէ յինքն զմոլութիւնն, և զբերանն և զաչս և զամ անդամսն առհասարակ առուս աղբանոցաց գործէ։ Այլա թէ՛ի ներքս և՛ի հայիցես, տեսանես զոգին իբրև՛ի ձմերանի՛ի պարզոյ բրտացեալ և ընդարմացեալ՝ որ չկարէ ցի ինչ նաւուն օգնել՛ի ձմերայնոյ սաստկութենէ։

Այմանէ ասել, որչափ ինչ չարչարանս՛ի փափկութեանն կրեն արք և կանայք. նոյն իսկ խեղճի մնաց

Թողից, որ և՝ Ձարտարապետն քան զիս գիտէ։ Օ՛ինչ
ագեղագոյն քան զկին արբեցեալ կայցէ, կամ՝ որ
վայրապար այսր անդր յածիցէ. որչափ տկարագոյն
է ամանն, նմանապէս սաստիկ նաւակոծութիւնն. եթէ
աղատ իցէ և եթէ աղախին. ազատն ի մէջ Թատերոց
գաղափնեաց ծանակին և աղախինն դարձեալ նմանապէս և ի մէջ գերդաստանակցացն։ Այս
յայսպիսի հայհոյութիւն գան այդ պարգևքն յամմոնացն.
և ի բազմաց իսկ լսեմ յորժամ այնպիսի ինչ փաստա
նան կրեն, թէ բնաւ մի գայլ գինի։ Ահ մնորուա
թիւն, ո՛հ յիմարութիւն. այլք յանցանեն և զայդ պարգևսն բամբասեն. և յորպիսի ինչ յանմտութիւն գոր
ծիցէ։ Ահի գինին արար զչարիսն ով այր դու. ոչ եթէ գինին, այլ անառակութիւն վայելելեացն՝ որք ի
չարիսն վայելեցին։ Այս արդ ասա՝ եթէ մի գայլ ար
բեցութիւն, մի գայլ գեղխութիւն. ապա եթէ ասիցես,
եթէ մի գայլ գինի, առ սակաւ սակաւ յառաջ մա
տուցեալ ասես, մի գայլ երկաթ՝ վասն սպանողաց,
և մի լեցի գիշեր՝ վասն գողոյ, մի լեցի լոյս՝ վասն
ղպտարտչաց, և մի կին՝ վասն չնութեան. և այսուհե
տև զամ իսկ առ Հասարակ ի միջոյ բառնասս։

Այլ մի ինչ այսպէս ասիցես. քանզի սատանայա
կան միտք են այն. մի բամբասեր զգինին, այլ զարբ
եցութեին. և յորժամ գտանիցես զայնպիսին լուրջ,
կարգեսջիր դիջիր առաջի զամ ծանակառութեին, և
ասասջիր. գինին տուաւ՝ զի ուրախ լիցուք, ոչ զի
ծանակիցիմք. այլ զի բերկրեսցուք, ոչ զի ծաղր կայ
ցեմք. զի առողջասցուք, ոչ զի յախտ անկանիցիմք.
զի զցաւս մարմնոյն բժշկեսցուք, ոչ զի զղօրութիւնս
ոգւոց արկցուք. պատուեաց զբեզ ած պարգևատն,
ընդէր Թշնամանես զանձն անիկարգութեամբն։ Ա ուր
զինչ ասէ Պաւղոս. "Ապակաւիկ մի, ասէ, և գինեակ
խառնեսջիր վասն ստամբսիդ և պեսպէս հիւանդու
թեցդ,, Եթէ այն սուբբ՝ որ և ի ցաւս և ի
ստէպ հիւանդութիւնս, չձաշակէր գինի՝ մինչև վար
դապետան հրամայն եւ, մեք որպիսի ինչ ներելոյ աբ
ժանի լինիցիմք, որք յառողջութեէ արբնամբ։ Չնա
ասեր թէ սակաւիկ մի գինի խառնեսցես վասն ստա
մբսիդ. և ցիւրաքանչիւր որ յարբեցողաց ասէ, թէ

սակաւ գինով վարժեալքիր վասն պոռնկութեանցն և պէսպէս պղծութեցն, և վասն այլոց չարաց ցանկութեցն, զորս աւրեցուցեալն սովոր է ծնանել. և եթէ վասն այնց չկամիցիմք մեկնել, գոնեա վասն տրամութեց և դժամակութեց՝ որ անտի ծնանի, մեկնեսջիր· քանզի գինի յուրախութեն տուաւ· «Գինի, ասէ, ուրախ առնէ զսիրտս մարդոյ»· զոր աւագիկ և զաբրահամ նորա եղծանէք· զինչ ուրախութիւն լցէ՛ի միտս չլինել, և՛ի բազում ցաւս անկանել, և մեծագործ լինել, և քան զչէրմուտն և զարեգակն հարկանել, որք իւղալի խարակեն զգլուխս։

Այլ զայս ոչ եթէ առ ամենեսին ասեմ· մանաւանդ թէ առ ամենեսին խակ· եթէ ամենեքին աւրենայցէք· քաւ լիցի· այլ քանզի աւրելոյն, որք չաւրեն՝ նայբդ՝ չլինիք խնամակալ, վասն այնորիկ և՛ի ձեզ ձգեմ զբանդ՝ որ առողջքդ է. նա և բժիշկն թագաւոր զՀիւանդատեան խօսի։ Այլ արդ առ ձեզ ձգեմ զբանս· մի երբեք ըմբռնել յայսպիսի անտս, նա և զըմբռնեալսն և՛ն հանել՛ի ծանծաղ· զի մի քան զանասունն և վատթարագոյն եւ բևեռցին· զի անասունքն ոչ ինչ աւելի քան զպէտն խնդրեն· և նորա և անասնագոյնք քան զանասունս եղեն, զի անցանեն անկարգութեցն զսահմանաւք։ Աղէ՛ չափ լաւ է քան գնոսա էշ, քանզի ինչ աւելի քան գնոսա շուն· քանզի իւրաքանչիւր յայնց անասնոց՝ նա և յայլոց ամենեցունց, եթէ յաւետել կամ յըմբռել յօժարեսցէ, զբաւականութեն գիտէ սահման, և անդր քան զպէտն չանցանէ· Թէպէտ և բազումք տիպիցին, չառնու յանձն եղանել յանչափութեն։ Եթէ այսպէս իցէ, այսու և քան զանասունս և վատթարագոյնք եք, զի քան գշունս և գէշս և անասգորոյնս համարեցայք զանձինս· և զանասունն չատ պես աւելի քան զչափն ագահել՛ի կերակուր, թէպէտ և յօժարիցէ· ընդեր· զի կասկածեսՙ Թէ գուցէ միասին լինչ· և անձինդ այնչափ լինչ խնամ չառնիս, զի այնչափ քան գնոսա զքեզ առ վատթարսն ունիս· ցանկ ծուլածուփ, և անփոյթ առնես զանձինդ։

Օ՛ն ոչ միայն յորում աւուր աւրենան, կրես զինոյս աւրեցուցեալն, այլ յետ այնր աւուր· և որ-

9348-57

պէս ՚ի սարսուռ ՚ի ջերմանէն մեռցեալ տենդն ապա-
կանիչ է, նոյնպէս և յարբեցութէն մեռցեալ թմրիր
արբեցութեանն ուտէ զոգիս և զմարմինս. և ՀԳ և
Թշուառական մարմինն անկեալ դնի լուծեալ իբրև
զնաւակիկ ինչ յալեաց ծփանաց· իսկ որ և քան
զնա հիքագոյն՝ հոգին, ՚ի նորա լուծանելէն անկանէն՝
զմրրիկն գրգռէ, և զցանկութէն բորբոքէ. և յոր-
ժամ համարի զդաստանալ, յայնժամ առաւել մոլի
և կողի, զինի և կարասս և թակոյս ըղձանայ. և
զօրօրինակ ՚ի ցածնալ մրրկացն՝ ինայ ինաս մրրկին,
նոյնպէս և աստ. և զօր օրինակ անդ ընկեցիկ զբե-
ռինսն առնեն, նոյնպէս և աստ գրեթէ ամ բարու-
թեցն վանտութէն լինիցի. եթէ ցածուիցուն իցէ, և
եթէ խմաստասէր, և եթէ հեզասէր և եթէ խոնար-
հութէն, զամ վարատ ընկենուլ յանօրէնութէն ծուին
արբեցութէնն: Այլ որ ինչ առ յատպայն լինելոց իցէ,
չէ ինչ այսմ նման. զի անդ յետ ընկեցիկ զբեռինսն
առնելոյ թեթևանայ նաւն. և աստ ևս քան զևս
ծանրանայ. զի փոխանակ ունծուութեանն ընդունի զա-
ւազ և զջուր աղի, և բնաւ իսկ զսիկ արբեցութէն.
միանգամայն ընկղմի զամ որ ՚ի նաւին իցեն, և զնա-
ւորդսն, և զնաւապետսն, և զնաւն:

Այլ արդ զի մի և մեք զնոյնն կրիցեմք, զերծուս-
ցուք և մեք զանձինս ՚ի մրրկի ձմերայնոյն. քանզի չէ
հնար արբեցութիք հանդերձ զարքայութիւնն երկնից
ունայնել. “ Ո՛վ խաբիք, ասէ, ոչ արբեցողք և ոչ
բամբասողք զարքայութիւնն ոչ ոչ ժառանգեն ”: Այլ
զինչ ասեմ զարքայութէնն. նա և դաստէն իսկ չտեսա-
նեն. քանզի զսիւն գիշերս գործէ արբեցութէնն, և
զլոյս՝ խաւար, և աչօք բացօք անդէն առ ոտն չտեսա-
նեն արբեցողքն: Այլ ոչ այնչափ միայն չարիք են, այլ
և այլ և այլ դժնդակագոյն տանջանս կրեն, տրտմութիւն
անհանգարս, մոլորութիւն, ծաղր կալ նախատ լինել:
Այլ արդ որո՞ւմ ներելոյ արժանի լինիցին՝ որ ընդ այն-
պիսի չարեաց արկանեն զանձինս. չիք և ոչ մի ինչ: Վա՛ս
խիցուք այսուհետև յախտէն. զի աստ ապրեսցուք,
և հանդերձելոց բարեացն հասցուք, ընդ որոց և մար-
դասիրութիք ՚ձեր մերոյ Յիսի Քրիստի, որում փառք, իշ-
խանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՐԴՈՐԱԿ

Վ[ա]ՆԶԻ իբրև զծառայ մի չար և զդերի մի և զամայի առեալ տանի զնա սատանայ, ապտակալից ձաղակած առնէ, և պէսպէս թշնամանս կրէ, և յայնչափ մորոսումբիւն գրաւէ, մինչև առ կին հպարտասնալ, և առ իւր նախնիս. և զայլս և հարց ազնուականութիւնք ամբարտաւանեալ կորզէ։ Այս զինչ քան զայն այլ ինչ անմոռելի կայցէ, յորժամ անուղեայս հպարտանայցեն. զի կէսքն վասն զի անկած հարս և հաս ունին, և չունէին առ նախնիս, և այլք՝ վասն զի ազնուականք և լաւս ունէին, հպարտանային։ Այս արդ զիարդ ոք զերկոցունց կողմանցն ցածուցանիցէ զամբարհաւաճումբին։ Այլ յորժամ ցնոսա ասիցէ, եթէ նայեաց Աս 'ի վեր յառաջին հաւսն քո, և 'ի հաւուց հաւս, և զազգսն 'ի նոցանէ գտանիցես խոհակերս, և իշավարս, և աշխարաւանդիկս. և ցայնչափ[1] ասիցէ, որք առ անկածումբէն հարցն հպարտանայցէն, թէ և դու հայեաց 'ի վեր 'ի նախնիս հարցն, և զբտանիցես զազգսն ազնուագոյնս քան զքեզ։

Այս զի այսպէս են բնութեամբն ընթացք, ծն առ այսր՝ և 'ի գրոց իսկ ցուցից։ Այողմանիքն՝ թագաւորի որդի էր, և քաջի և փառաւոր թագաւորի. այլ նորա հայրն յանկածից և յանհնաւորաց էր. և մերն հաւ նոյնպէս լաւ. քանզի ոչ եթէ դոցին ումեք զինուորի տայր զդուստրն կինն։ Այս եթէ 'ի վեր մատչիցիս, դարձեալ յանկածիցն ազնուագոյն և թագաւորացն զազգն տեսանիցես. նոյնպէս և 'ի Այաւուդ նոյնպէս և զայլսն բազումս գտանիցէ ոք նոյնպիսի ինչ 'ի դէպս։ Այս արդ մի այնու ինչ հպարտասցուք. զինչ իսկ իցէ ազգն, ազէ՛ ևկ ասա զու ցիս. և ոչ ինչ, բայց միայն անուն թափուր յարդեանցն. և զայս յաւուրն իսկ 'ի միտ առնուցուք։ Այս քանզի չև ևս մծատ է այն, ծն

1 Յօբինակին ցայն։

ամ 'ի մեռաւորացս հաւանեցուսցուք, եթէ ոչ մի ինչ առաւելութեի է անտի, քանզի եթէ պատերազմ 'ի վերայ հասանիցէ, կամ սով, կամ այլ ինչ զինչ և իցէ, ամ իսկ աղնուականութենն հպարտութենն յանդիմանի, և եթէ ցաւք հասանիցեն, և եթէ սով, չգիտեն ձանաչել զմեծատունն և զաղքատն, ոչ զփառաւորն և ոչ զանփառն, ոչ զաղնուականն և ոչ զանտոհմն, ոչ մահ և ոչ այլ ինչ իրաց փոփոխմանէք, այլ հասարակ 'ի վերայ ամենեցուն յառնեն։ Եւ քան զԹագաւորս և Թագաւորազն նա է, որ 'ի կարեաց ազատ է։

Օ այս ամ խնացեալ զհետ երթիցուք ձշմարիտ ազատութենն, և 'ի չար ծառայութենն ազատեսցուք զանձինս. մի զիչխանութենէ մեծութենի, և մի զընչաւէտ տութենէ հարստութենի, և մի զայլ ինչ երևելիս համառեսցուք, այլ միայն զառաքինութենն. զի այնպէս և աստէն աներկիւղ վայելեսցուք, և հանդերձելոց բարութենէն հասցուք, ընդհօք և մարդասիրութէք տեառն մերոյ Յիսուսի. որում փառք, իշխանութենի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

ՑՈՐԴՈՐԱԿ

Ասին՝ նմանօդք լինուք և մեք, և մի դանդաղեսցուք յիրաց լինել՝ որ խոնարհագոյն և աշխատութիւն կարծիցին, որ վասն եղբարց հասանիցէ կրել յանձին. այլ թէպէտ և սպասաւոր հասանիցէ լինել, և կամ փոքր և կրտսեր, և վասն որոյ իրքն լինիցին, թէպէտ և աշխատութիւն ինչ իցէ, և ընդ լերինս և ընդ սարս հասանիցէ անցանել, զամ ինչ դիւրին հաճարեսցուք վասն եղբարց փրկութեան. զի այնպէս կատարեաւ են ոգիք ամ, մինչև յիւր որդին ոչ խնայեաց։

Վասն այնորիկ աղաչեմ՝ ի բանալ դրացն առաւօտու, յորժամ՝ ի տանէ արտաքս ելանիցեմք, զայն ևեթ դիցուք՝ ի մտի, և առնեցուն դուռ և պատուէր՝ լինել, գնեղեալս ապրեցուցանել՝ ի նեղութենէ։ Այս ոչ գայանի վշտացն միայն ասեմ, զի և այն չէն իսկ վիշտք, այլ զայնմանէ՝ որ ոգւոյքն՝ ի սատանայէ և՝ ի մարդկանէ վշտացեալ է։ Այս և վաճառականն, զի յաճախիցէ զվաճառութիւնն, ընդ ծով ճանապարհ դնէ. և ձեռագէտն, զի լինիցի յաւելուած, ապգի ապգի հնարս հնարի։ Այս մեք այսուհետև մի զմեր փրկութենէն միայն բաւական համարեսցուք. ապա եթէ ոչ՝ և զայն ևս ապականեմք. քանզի՝ ի ճակատն և՝ ի պատերազմունսն գինուորն, որ անձինն ևեթ ուշ ունիցի ապրեցուցանելոյ, և զայլսն ընդ իւր կոտուանիցէ. իսկ առաքինին, յորժամ՝ ի վերայ այլոցն զանձն ևս դնիցէ, հանդերձ այլովքն և ինքն ապրի։

Այս քանզի մեծ պատերազմ առաջի կայ, և ևս սաստիկ քան զայմ պատերազմունս և ճակատս և կռիւս, որպէս և Թագաւորն մեր ետ հրամանն՝ այնպէս ճակատեսցուք՝ ի պատերազմի. կոտորածս և խլանութիւնս և արիւնս գործեսցուք. ուշ եդեալ

Հայեսցուք յամենեցունց փրկութեն · որք կայցեն՝ նո֊ ցա խրախոյս [1] տալ, և անկելոյն՝ ձեռնտու լինցուք և յարուսցուք ։ Վանդի և բազումք յեղբարց ի մե֊ ծում պատերազմիս վիրաւորեալ, և յարեան համա֊ կեալք, և չիք որ որ բժշկեսցէ, ոչ՝ի ժողովրդենդ որ, և ոչ քահանայ, և ոչ այլ որ · ոչ պաշտպան, ոչ բարեկամ, ոչ եղբայր · այլ զանձանց ևեթ դիտեմք իւրաքանչիւր որ · վասն այնորիկ և ոչ զանձանց, քան զի կարի իսկ կարձեցաւ համարձակութենն և քաջու֊ թենն, մինչև զի և զանձանց ևս չեմք բաւական խընդրել՝ Նմ յայն սակս իսկ տկարացաք, և մատնեցաք ի պարտութենի՝ և ի մարդկանէ և ի սատանայէ · զի զսորին հակառակին խնդրեմք · չպաշտպանեմք մե֊ մեանց, և չամբացաք սիրոյն · այլ զայլ ինն սիրոյ պատճառս խնդրեմք անձանց · ոմանք զազգականու֊ թենն, և ոմանք զընդելութենն, և այլք զոլորութենն, և ոմանք զդրացեացն · մինչ զի ամ ուսոեք եմք մի֊ մեանց բարեկամք, և ոչ յուծպաշտութենէն՝ ուստի պարտ էր խառնել [2] զբարեկամութենն · և արդ աւա֊ սիկ նորին հակառակին լինի · ընդ հրեայս և ընդ հե֊ թանոսս խառնեմք զբարեկամութենն, և ոչ ընդ եկե֊ ղեցւոյ մանկունս ։

Ա֊յո՛, ասէ · զի մին ժանդ է, և միւսն պիտանի և հեզ ։ Ո՞ւնչ խօսիս, ժանդ կոչես զեղբայրն, զոր և ոսկեայ չաւեր հրամայեն կոչել · և չամաչես և չակնա֊ ծես ձաղել զեղբայրն, զանդամն քո, զնորին ծնող֊ դեանն հաղորդակից, զնորին սեղանոյ սեղանակից ։ Ա֊յլ թէ մաքսաւորը եղբայր ունիւր, և քեզ չարիս գործէր, փութայիր խաղաղել և ծածկել, զի և ըզ֊ քեզ նմին ամենայ ամօթակից համարիւր · և զՏ֊ գևաւոր եղբայրն, զոր պարտ էր ազատել՝ի բամբասա֊ նաց, դու աւադիկ ընդ աղչի աղչի ամբաստանու֊ թիք արկանես ։

Վասն է, ասես, և ստահակ ։ Եթէ այդպէս իցէ, նմին իրի լեր բարեկամ, զի ցածուցանիցես զամպի֊ սին, զի դարձուցանիցես և անդրէն յառաքինութենի ածիցես ։ Ա֊յլ չար անձն է, ասէ, և չանսայ խրա֊

[1] Յօրինակին Խ֊ոս֊ ։ [2] Յօրինակին խառնել ։

տու ։ Այլ զայն ուսոյ գիտիցես. խրատեցեր, և ձեռն ի գործ արարեր ուղղելոյ ։ Խրատեցի բազում անգամ ։ Վասնիցս անգամ է բազում անգամն. մի անգամ կամ երկիցս ։ Ասէ, այն բազում անգամ է. զի Թէ հանապազ զնմ աւուրս կենաց զայս առնելիք, աշխատութենէն ինչ պարտ կիր համարել և անյոյս առնել ։ Ասեսանիցես, զի ցանկ ածէ խրատել զմեզ մարգարէիւք և առաքելովք և աւետարանչօք ։ Իսկ արդ՝ զնմ ուղղութենն արարածք արդեւք, ամի հաւանեցաք, և ոչ ուրեք ։ Վի Թէ դադարեաց ի խրատելոյ, մի Թէ լռեաց, և չյորդորիցէ զօրհնաւպազ. « Ձկարեք այ ծառայել և մատնանչի » ։ Այլ ցանկ ածէ առ բազում ընչիցն բռնութենէ ։

Վ՚ն հանապազ բողոքէ. « Ամողջք ասէ, և Թողցէ ձեզ » . և մեք զգաստանամիտ բարս ունիմք յանձինս ։ Վ՚ն հանապազ խրատէ՝ յաղթել ցանկութենէց, և ի վերոյ քան զբարեաց սէր լինել. և բազումք ևս քան զխոցս չար Թաւալին ընդ մեզն. բայց սակայն չդադարէ ի պատուիրելոյ ։

Ընդէր ոչ խորհիցիմք, և ասիցեմք, Թէ և ընդ մեզ խօսի ած, և չկայ ի բաց ի դարմանելոյ, Թէպէտ և մեք ստունգանիցեմք ։ Ասմն իրի իսկ ասէ ցէն, եԹէ « Վակաւ իցեն՝ որ ապրիցեն » ։ Օի Թէ չէր բաւական մեր միայն փրկուԹէ, Թէ ոչ և զայլս ունիցիմք ընդ մեզ՝ յորժամ անգր երԹիցեմք, յորժամ ոչ զանձինս և ոչ զայլս ապրեցուցանիցեմք, զինչ կրեսցուք, զոր յոյս փրկուԹէ ունիցիմք ։ Վ՚ն զայս իսկ ասիցեմ. յորժամ զընտանեաց անգամ չառնիցեմք փոյԹ, զկնոջէ և զորդւոց և զծառայից, այլ այլ ինն ընդ այլոց հոգայցեմք իրրև զարբեալս, զի բազում ծառայք լինիցին, և կայցեն մեզ ի սպաս. և որդիքն ստուար ժառանգութիւնս առնուցուն ի մէնջ. և կինն ոսկի զարդս ունիցի և հանդերձս ազգի ազգիս. և չհոգայցեմք ինչ ընդ նոցա, այլ ընդ նոցայնոցն. չտանիցիմք խնամ կնոջն և ոչ որդւոցն, այլ ժառանգութեէ որդւոցն ։

Վ՚խպիսի ինչ առնեմք, որպէս զի Թէ զաւուն որ առանիցէ խախտեալ, և զորին Թիւրեալս և Թողեալս ունել զաւուն, և շուրջ զնովաւ արտաքոյ փողոց

մեծամեծս կազմեցէք. և կամ թէ մարգոյ ախտացելոյ դարմանս ոչ տանիցի, և հանդերձս ոսկեհուռս կազմիցէ նմա. կամ թէ յորժամ տանտիկինն յախտի կայցէ, և նա խնամ ոչ տանիցի, և նաժիշտս և ոստայնի գործի և այլ ինչ կամ՝ ի տունն առնիցէ, և զնա անտես արարեալ յախտին ծիւրեալ, նոյնպէս ինն և այժմ լինիցի. ոգիք յախտի կան՝ թշուառացեալ, հարեալ ցաւմամբ և բամբասանօք և անպատեհ ցանկութիւք և մնապարծութիւք, աղմկեալ և ընդ գետին քարշեալ, և յայնչափ գազանացս գէշ գէշ պատառեալ, զնա թողեալ գերծուցանել ի չարեացն, և մեք տանց և ծառայից հոգամք։

Այլ եթէ գազան ի գառագղացն գերծանիցի, ըզտանդ դրունս փակեմք, և ընդ անխուլ տեղիս ի ներքս աճապարեմք, զի մի ի բուռն գազանին անկանիցիմք. և արդ ահաւադիկ ոչ միայն գազան, այլ բազում խորհուրդք այնպիսիք զոգիսն գէշ գէշ պատառէն, և չզգամք։ Այլ քաղաքի այնչափ զգուշութիւն գործեմք, ի թափուր տեղոջ և ի գառագիղ արգելուլ զգազանսն. ոչ ի խորհրդականաց քաղաքին տունս մտա, և ոչ յատենից տեղիս հոսպ, և ոչ յարքունիսն մերձ, այլ ի բացե ուրեք և ի հեռի կապեալս պահեմք։ Ցես զի և յարքունիսն և յատենից տեղիսն արձակեմք զչար գազանսն, ի միտն իսկ և չուրջ զարքունական աթոռոյնն գոչել և աղմկել։ Այն այսորիկ ամ ինչ վերն ի վայր հարեալ կործանեցաւ, և ամենևին լի խառնութիւն ի ներքոյ և արտաքոյ. չէ ընդհատ իւրաքանչիւր ոք ի մէնջ ի քաղաքէ՝ որ չարշաւանաց հինի խառնիլի. և այնպէս ի ինչ լինիցի, զոր օրինակ օձ ի բոյն հաւուց ձագուց դիմեցէ, և ձնձղուկքն կաքաղ զբունիւք ձիւ առեալ խառնեալ չածիցին, և չգտանիցեն ինչ՝ որ բով զտադնապն փարատիցեն։

Այն որոյ աղաւէտ զօձն սպանանել, զգազանն արգելուլ ի գառագիւղն, հեղձուցանել և սպանանել զչար խորհուրդն՝ սրոյ հոգւոյն մահանել, զի մի և մեզ սպառնայցէ մարգարէն, որպէս Ամբակումի, եթէ "Ընդ ոգնիկք և յուշկապարիկք բնակեսցեն, զոր չոյնն իշացուլ ասիցէ, և գիք կաքաւեսցեն"։

Ա՛յլ արդարև իշացուլք իսկ են ոմանք ի մարդկանէ, որք իբրև յանապատի կեան, և սընդեն, և կոխեն, և եղ ջիւր ածիցեն։ Ա՛յլ մեր մանկութեանն ժամանակն մերձ է յայն, զի յայնժամ ինն կարի ունի զվայրենի ցանկութինն, և վազեն և կցայեն. քանզի արձակեբասանակ շրջին՝ այնմ ևեթ պարապեալք, և չուենին փոյթ յանձին զլաւութեցին։ Ա՛յլ այնմ պատճառաւք՝ հարքն են, որք զյաւանական վարժեն և մինչ ինա֊մանկալութիւ, իբրեանց անձանց երիւարս զարդարեն, և չտան Թոյլ բազում ժամանակս յաւանակին անմուղ անվարժ շրջել, այլ վարժելիս և Թամբս ի նուան դնեն անդրէն մատաղ տիոցն, և զիւրեանց որդիսն ընդ վայր հարեալ արձակերասանակ շրջել՝ լոկ և Թափուր ի ցածութիւ. ոչ ընդ հրահանգս հանել, այլ ընդվայրասունս զբոզիւք գալ, և ընդ տապեզլուխս զբօսանիլ, և յանօրէն տեսիլս Թատերցն. դեգերիլ ամենայնից, Օ որ պարտ էր յառաջ քան զպոռնկութիւն ի կին յարել, ի ցածուն և իմասունն կին. որ և յանարժան դեգերանացն մերժիցէ զայրն, և ի վարժելեաց տեղիս լինիցի յաւանակին. զի ոչ այլ ուստեք են ընուիչքն և պոռնկութիչքն, այլ յընդվայրասուն լինելոյ մատաղ մանկտւոյ. իսկ եթէ կին ունիցի, և տան խնամ տանիցի, և շքոյ և մեծարանաց միտ դնիցէ։

Ա՛յլ կարի վաղ է ասել։ Պիտեմ և ես. զի եթէ յատկակ քառամնամեան էր՝ յորժամ զկինն ածին նմա, և ի կուսութիւ անցոյց զայնպէս ժամանակս, որ չափ էս առաւել ի ընդհացս ժամանակիս պարտ էր երիտասարդաց պահել զցածութիւն։ Ա՛յլ արդ զինչ գործեցից՝ չգիտեմ. զի չանսայք խնամակալ լինել ցածութիւ նոցա, այլ ամենայնիցս տեսանիք՝ և անտես առնիք, և պղծեալս և ժանտացեալս։ Ա՛ն չգիտիցէք, զի ամուսնութիւն շահ՝ որ պահել զմարմինն է. և եթէ այն չիցէ, չէ ինչ օգուտ յամուսնութիւն. դուք զնորին հակառակն առնիք. յորժամ բազում յոռութիւ ընուցուն, յայնժամ ածիք զնոսա յամուսնութիւ, ի զուր և ընդ վայր։

Պարտ է, ասեն, տևել բաւել՝ զի լաւագոյն լինիցին, զի քաղաքային իրաց հմուտ լինին։ Ա՛յլ զոգւոյն

չառնիցէք ինչ փոյթ, այլ ընդ վայր հարեալ ընկեցիկ իմն համարիք։ Ալ ասն այնորիկ ամ խանգարը անտի ծնանին, անկարգութիւնք և խռովութիւնք. զի ընդ վայր իմն հաշուիք զնա. զի կարևորքն յանփոյթութեան են, և չպիտոյքն ի բազում խնամակալութիւնք։ Ագիտիցէս, եթէ չիք ինչ՝ որ այնպէս հնարչարից առնիցէ զմանուկն, որպէս ի պոռնկութեան չարեացն անարատ պահել, և ի բազմութենէ պղծութենէն զբ և մաքուր. քանզի չիք ինչ զդոյ ոգւոյն. « Ո՛ ինչ, ասէ, օգտեսցի մարդ, թէ զամ աշխարհս շահիցի, և ոգւոյն իւրում վնասիցէ »։

Ալ զամն ընտիցն ցանկութենէն կործանեաց ընկէց, և զայ Հնմարիտ երկիւղն ի բաց մերժեաց. իբրև զբռնաւորս զբ՝ որ զամուր քաղաք առնուցու, այնպէս զոգիս մարդկան գրաւեաց. վասն որոյ և զորդւոց և զմերմէ փրկութենէ անտես առնեմք. և այնմ եթէ ուշ ունիմք, թէ զիարդ ընչաւէտք լինցուք, և այլոց թողուցումբ զմեծութիւնն. և նորա դարձեալ այլոց. և նոցա յետինք՝ իւրեանց յետնոց. իբրև յուղարկիչք ընտիցն մերոց և ստացուածոցն մերոց եմք, և ոչ տեարք. և անտի քան զնաւայնս և անարգագոյնք են ազատքն. քանզի ծառայիցն՝ թէպէտ և ոչ վասն նոցա, այլ վասն մեր ստատեմք. իսկ ազատքն և յայնմ և խնամակալութենէ չվայելեն, այլ քան զնոսա և ևս վատթարագոյնք են։ Ալ զինչ ասեմ՝ թէ քան զծառայսն, նա և քան զնաւարաւ կաւորսն անարգագոյնք են որդիքն։ Ալոց և ձիոց առաւել խնամ ունիմք՝ քան որդւոցն. և եթէ ջորի ուրեք իցէ, այնմ աւելի դաբանն տանիցի. որպէս զիշաւարն սիրտանացու խնդրեմք դառնել և ոչ զտաւհակ ոք և գող և արբեցող և տխմար արուեստին. թէ ի մանկան յոգւոյ աղագս ոտիկան պարտ է կացուցանել, զդոյզն ոք և զվայրապար հաձիմք դաստիարակ կացուցանել, թէպէտ և քան զայն արուեստ մեծ չկայցէ։

Վանզի չէ ինչ այնմ հաւասնատ, թէ ոք զոգի մարդկան վարժիցէ, և զմիտսն վերստին ստեղծանիցէ։ Վան զայմ նկարիչ և քան բնաւ անդրիանտագործ պատկերակուռ, որ զայն արուեստ ունիցի՝ զայսպիս

սին պարտ է հաստատուԹիք ընտրել. Ա.ՀՐ մեք չառնեմք ինչ զայնմանէ փոյԹ. այլ ի մին և ևԹէ հայիմք, զի լեզուն սրբիցի, բերանն յղկիցի. և զայն դարձեալ վասն ընչից. ոչ զի խօսել կարիցէ, այլ զի ինչս մարԹիցէ ժողովել. և եԹէ առանց այնր մարԹ էր ՄԾծանալ, և այնմ և ս ոչ ինչ ունիցիմք փոյԹ յանձին։ Տեսանէ՞ս՝ արչաւ ինչ է ընչից բռնաւորուԹի, զիարդ զնամ ինչ գրաւեաց. և իբրև զգերդաստան և զխաշինս չարեաց, և ձգէ տանի յո՛ և կամի։

Ա.ՀՐ զինչ շահ յայսչափ մեզադրուԹեց մեզ գործիցի. զի մեք զնա բանիւք ընկենումք, և նա զմեզ արդեամբք ունի։ Այլ սակայն և ոչ այնպէս դաւարեսցուք, այլ բանիւք բերանոյ կործանեսցուք զնա։ ԵԹէ լինիցի ինչ լաւուԹէ, շահեսցուք և մեք և դուք. և եԹէ տակաւին ի նոյնս կայցէք, ի մէնջ կուսէ՝ ամ ինչ ի գլուխ եղ։ Այլ ՚ած և զձեզ ապրեցուսցէ յայնպիսի ախտէ, և մեզ ձեւք պարծել պատրաստէ. զի նորա են փառք և իշխանուԹիք յաւիտեանս. ամէն։

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

ՅՈՐԴՈՐԱԿ

Լ՚Ի արդ ասացից, և եդից զմեղսն առ միմեանս, զոր առ ՚ած մեղանչեցեալք՝ և զոր առ մարդիկ. ա՛չ պատանձինն ինչ ուրուք, այլ զհասարակացն. զի զառանձինն իւրաքանչիւր ոք մնատուցանիցէ յիւրոյն խեղճին մտաց. և եդից նախ առաջի զերախտիսն ՚այ: Լ՚Ուր զմեզ յոչնչէ ՚ած, և զա՛մ զերևելիսս վասն մեր հաստատեաց, զերկինս, զծով, զցամաք, զօդս, և զա՛մ ինչ որ ՚ի նոսա իցէն, զանասունս, զոտնկոս, և զսերմանիս: Պա՛րտ է կարճոտիւք ասել՝ վասն անբաւ ծովուցն արարածոց: Շ՚ունչ կենդանի այսպիսի փչեաց ՚ի մեզ միայն՝ որ եմք՝ յերկրի. զդրախտն տնկեաց, զօգնականն եա՛տ, ՚ի վերայ ա՛մ անասնոց տէր կացոյց, փառօք և պատուով պսակեաց. և յետ այսր ա՛մի թէպէտ ապաւխատաւորք գտաք առ երախտաւորն, դարձեալ և մեծամեծ պարգեւաց արժանի արար:

Ա՛յլ ընդ այն և եթէ հայիցիս՝ զի ՚ի դրախտէն եհան, այլ և շահիցն՝ որ անտի եղեն՝ մի՛ա դնիջիր. զի յետ ելանելոյն ՚ի դրախտէն, և բազում երախտիս ցուցանելոյ, և այնչափ խնամս և դարմանս կատարելոյ, ապա և զորդին իւր առաքեաց՝ վասն այնպիսեացն, որք յերախտիսն վայելէին, և զնա ատէին. և զերկինս եբաց, և ՚ի դրախտն Ճանապարհ հորդեաց, և որդիս և՛ս արար զՔրիստիոնեայս և զապաւխատաւորսն:

Վ՚ասն որոյ և ՚ի դէպ ժամանակի է ասել Թէ "Ո՛վ խորք մեծութե՛ և իմաստութե՛ և գիտութե՛ ա՛յ": Շ՚նորհեաց մեզ և մկրտութե՛ ՚ի Քրոջութե՛ մեղայ՝ և ՚ի պատժոյ ազատութե՛, և զարքայութե՛ ՚ի ժառանգութե՛. և բազմապատիկ բարութիւնս խոստացաւ, ձեռն կարկառ և յարոյց. զոգին հեղ սիրեաց ՚ի սիրոս մեր:

1 Յօբինակին ՚ի՛ն-ն:

Այլ արդ զինչ ինչ յետ այնչափ և այնպիսի բարուքեցն պարտ էր մեզ լինել. եթէ հանապազ և մեռանեաք վասն նորա, որ այնչափ սիրեացն զմեզ, մի թէ չէր պարտ, նա և չէր իսկ այնմ արժանի. Թող թէ և ոչ սակաւ ինչ մասն հատուցանեմք սիրոյն, մանաւանդ թէ քնաւ իսկ ոչ. և այն զի և ի մեր շահ ունիցի: Այլ արդ զիսկդ իցեմք ընդ նմա, որոց այնպէս պարտ էր լինել, ցանկ ընդ օրէնս նորա բնեռել. և մեք աւասիկ հանապազ ենթանմանեմք զօրէնսն, Այլ մի ինչ զայրանայք՝ թէ արձակիցեմ զլեզու առ մեղս. քանզի ոչ ձեզ միայն մեղադիր լինիմ, այլ և անձին: Այլ արդ ուստի կամիցիք՝ զի արարից սկիզբն. ի ծառայից, թէ յաղատաց. ի զի. Նուաղաց, թէ յաւակաց. յիշխանաց, թէ յիշխանաւորաց. յարանց, թէ ի կանանց. ի ծերոց, թէ յերիտասարդաց. յորոց տիոց, յորմէ ազգէ, յորմէ պատուոյ, յորմէ արուեստէ:

Կամիք՝ զի ի զինուորականացն արարիչ սկիզբն, Այլ արդ զինչ ոչ յանցանիցեն նոքա. ոչ հանապազ ենթանմանեն և բամբասեն և մոլին. զայլոց վիշտս՝ այլոց շահավաճառ առնեն, գայլոց նմանեալք, որք և ոչ երբեք ծր են յանցանաց: Արթի ծոլու առանց ալեաց լինել, և ոչ նոցա առանց մեղաց: Որ ախտք ընեխիցէ զնոսա. որ ցաւք չպաշարիցեն զոգիս նոցա. ընդ իւրեանց ընկերս ցանկ նախանձ բերեն, և մնասպարծին, սրանան միմեանց. առ կրտսերս ագահագոյնք. և որք ի դատ երթեալ՝ իբրև ի նաւահանգիստ ի նոսա դիմեացեն, նոցա ենթանմանք և պատեբազմողք: Որ ըստ չափաւորութիւնք ի միջի նոցա. քանի՞ ագահութիւնք և զրպարտութիւնք, և սպառնալիք, և սուտակասպասութիւնք՝ ծառայից և ստրկաց բարք:

Այլ արդ ես առ ի միջ, ըստ այնմ իւրաքանչիւր զԱյնի օրէնսն պատշաճեսցուք. " Որ ասիցէ, ասէ, ցեղեալս իւր մարոս, պարտաւոր լիցի ի գեհենի հրդրոյն. որ հայի ի կին ի պատճառս ցանկութեան, անդէն չնացաւ ընդ նմա. և որ ոչ խոնարհեցուցանէ զանձն իւր իբրև զմանուկ մի, ոչ մտցէ յարքայութիւնն երկնից ": Այդքա յանձանէն ևս ի հալարտութեան առ

իւրեանց հնազանդեալսն, իբրև գործ իմն և արուեստ գայն արարեալ, առ մանեալսն նոցա՝ որք դողան և երկնչէին ի նոցանէ, քան զգազանս և վայրենամիտս։ Ա՛ն վնաս և ոչ ինչ առնեն, այլ զիա՛ վասն որոշանի, վասն ընչից, վասն մնասպարծութե՛ան. միթէ հնար ինչ իցէ բանիւք Թուել [1] զարդեանցն յատցանս։ Իսկ գնաբեւութիւնն նոցա և զանժամ ծաղրն և զպղծաբան խառնիսուածիսն ո՞ կարիցէ պատմել. և զագահութե՛ան բնաւ և ձառել չէ հնար։ Իբրև ըզվանահասն՝ որ ի լերինս իցէ, թէ զինչ բնաւ աւգահութիւն իցէ՝ չգիտեն, նոյնպես և ոչ սոքա. այլ հակառակ իմն նոցա. զի նոքա վասն ի բացէ յատեն լինելոյ՝ չգիտեն զգաւն. և սոքա վասն յոյժ նուրբն արբեցութե՛ան՝ չագան թէ ո՛րչափ ինչ չարն իցէ. զի այնպէս մերժեաց զառաքինութե՛ան ի բաց այն չարութե՛ն և խրոխտի [2] զմեղադրութե՛ան և սոյնպիսի մեղեսմանց ծաղր չհամարել։

Ա՛յլ թէ կամիք, զնոսա ի բաց թողցուք, և յայլսն՝ որ քան զնոսա հեզագոյնքն իցեն՝ եկեսցուք։ ( )ն առ և զմշակացն եւս դասս, և ձեռագիտացն ջոկս քննեսցուք. զի նոքա իմն աւելի թուին՝ թէ յարդարութե՛ն վաստակոյն և յիւրեանց քրտանցն կեցեն։ Ա՛յլ և նոքա յորժամ ոչ սպասաւորեսցեն ինքեանց, բազում ինչ անտի չարիս կուտիցեն անձանց. զոր և ի վաճառելոյն և ի գնելոյն՝ անիրաւութե՛ն ընդ արդարութե՛ն վաստակն խառնեն, և երդմունս և սուտ խօսել և սուտ վկայել յաւելուն յադահութե՛ին, և աշխարհի իրաց են, և ընդ երկիր բևեռեալք. և եթէ զիարդ ինչ ժողովեսցեն՝ զայն ևեթ հնարին, և կարօտելոց տալոյ չունին ինչ փոյթ յանձին. քանզի ցանկ զոր ունին՝ անձեռուցանել կամին։ Իսկ զբամբասանացն զինչ ոք ասել կարիցէ, որ վասն այնպիսի իրաց լինիցի, զձշմարտանացն, զխոխոյն, և զտոկոսեացն, և զտուրևառ փոխոյն՝ որ բազում ժամգին վաճառականութե՛ն կրպակաց նմանէ, և շահքն անիրաւութե՛ն հանդոյն աշխարհաւանդից։

Ա՛յլ կամիք՝ զի և զմա՛ թողցուք, և առ այլս՝ որ թուին

1 Յօրինակին պակասէր Խ··Լ։ 2 Յօրինակին Խ·Խ։

արդարադոյնք քան զնոսա՝ ելեսցուք՝, որ զգեօղսն ու-
նիցեն, և յանդիպեսցեն մեծաւթիւ շահիցեն։ Եւ զինչ քան
զայն անիրաւագոյն կայցէ, եթէ քննեսցէ ոք՝ զինչ
անցս ընդ Թշուառականս և հէք մլակսն անցուցա-
նեն, և քան զհեքսն եւս անարգագոյնս տեսանէ. զորս
ի սովոյն սպանանեն, և ցանկ զամ աւուրս կենաց ի
վատահան մաշեն, և ծանը հարկս և անհնարին սակս
ի վերայ դնեն, և աչխատութիւնս և պահպանութիւնս պա-
հանջեն, և իբրև գերս և զջորիս վարեն, մանաւանդ
թէ իբրև ի քարինս իսկ չխնայեն ի մարմինս, և
սակաւ մի հոգի առնուլ և հանդչել չտան։ Եւ եթէ
տայցեն անդք տահմականս, և եթէ չտայցեն, նոքա
զնոյն սակս պահանջեն, և չառնեն և ոչ զմի ինչ թո-
ղուլեն։ Եւ զինչ քան զայն ողորմելի կայցէ. յոր-
ժամ զամ ձմեռն և ամառն տառապիցեն, և ցօղա-
հար և ցրտաբեկ և խոբշակառ լինիցին, և աչքն ի
տքնութենէն բրտանան, և ունայն ձեռաք մեկնիցին։
Եւ ի քաղց և ի տառապանս և ի գաւառապե-
տայն աստիկանութիւնս յաւելուն և զհասն և զկա-
շառան և զաւելորդ գհկս, և զանհնարին սպասս ոա-
տիկանացն, յորոց ցանկ չահի և ի թողութիւն կան,
և ի հոգս մաշին։ ||՝ կարիցէ պատմել զշահն՝ որ ի
նոցանէն շահիցին, և զուիժգ վաճառականութիւնն՝
զոր նոքօք ածեն յաճախութիւք. ի նոցա վաստակոց
և ի քրտանց զհնձանս և զգուբս լնուն, և նոցա ի
տունս և ոչ մի չափանաւ հրամայեն տանել, այլ զամ
պտուղս վիրեանց զանօրինութիւնն լնուն զկարասս.
և սակաւիկ ինչ ընդ այնր արծաթ ընկենլով առնեն
ի նոսա՝ Եւ՝ որ իւն շահ յանգս և ի մուտս արգեանցն
իմանան, զոր և ոչ հեթանոսաց օրէնք յիշեսցեն. և
փոխոց մուրհակս կնքեն՝ որ ամենևին լի են անիծիւք.
ոչ ի տանէ մի, այլ զկես իսկ ամի ի հարկէ պահան-
ջեն։ Եւ յորմէ պահանջեն, թերևս և կին եւս ու-
նիցի, և որդեակս մուրացանիցի. զամ արարսն առեալ
ի կալոց, և հնձանէ [2], վիրեանց շտեմարանս լնուն,
և զայլ ինչ չածեն զմտաւ։ Ալ ասն որոյ ի դէպ ժա-
մանակի է ասել մարգարէին, եթէ " Հայացարուք

1 Յօրինակին պակասէր էնչոյսք։ 2 Յօրինակին չընձոյէ։

երկինք, և զարհուրեսցի երկիր»· յորպիսի գազա-
նամտութեի զրգռեցաւ ազգ մարդկան։

Օ այս ասելով ոչ զարուեստն ինչ և զհնակութենն,
և ոչ զինուորութեիս, և ոչ զգեօղս և զագարակս խո-
տեմ, այլ զմեզ։ Այս և Պաւղոս խորանակար, և ընդ քարոզու-
էր, և Պաւղոս խորանակար, և ընդ քարոզութենն
զայն գործէր. և Պաւղոս Թագաւոր, և Յովհ՝ի
գիւղից հարկս առնոյր. և չեղև ինչ նոցա այն արգել
յառաքինութենէ Ճանապարհին։ Այլ արդ զայս ամ
իմացեալ, և զբեւր տաղանդն զմտաւ ածեալ, Թո-
ղութենս ինչ առնել ընկերացն. և քանքս վասն այնր
պատուիրանացն էն, զոր հաւատացան մեզ. Թէպէտ և
ոչ զամ կարիցեմք առնել։ Ա՝ ամն այնորիկ եցոյց մեզ
ած գիւրին Ճանապարհ, որ զամ յարդարել կարիցէ
՝ի կեանսն յաւիտենից՝ի Յ՝ի տեր մեր, որում
փառք յաւիտեանս. ամէն։

Այլ քանզի վասն կուսութեանն ճառել ծանր թուէր, ի քննութեէ այսր օրինաց՝ ի ցանկութեէ այսր յորդորէ զնոսա. և զի ցուցցէ՝ եթէ գոյ հնար պահել զկուսութեան, ասէ. „Այն ներբինիք՝ որ յորովայնէ մերէ իւրեանց եղեն այնպէս, և են ոմանք՝ որ ի մարդկանէ են ներբինիք, և ոմանք՝ որ զանձինս իւրեանց արարին ներբինիս վասն արքայութեանն երկնից„։ Այսպիսի բանիւք մեղմով խին յորդորէ յիրացն ցանկութեէ, և հնարս առաքինութեան կազմէ։ Այլ գրեթէ այնպէս իսկ ասէ. եթէ զմտաւ ածՙ կամ եթէ ի բնէ այնպիսի ինչ էիր, կամ յայլոց բռնութեէ այնպիսի ինչ կրեիր, զի գործեիր. զի ի վայելելոց ցանկութեանն զրկեալ գտանէիր, և վարձս ինչ ընդ այն ոչ առնուիր։ Այեթէ այնպէս իցէ, ապա գոհանալ պարտիս զԱՅեթէ և ձգնիցիս ինչ, սակայն վարձք և պարգեւք և պսակք պահին քեզ. զի նոցայն առանց պսակաց է, և ծանր և տաղտուկ։ Օ՛ի յայս առաջի կայ. և մանաւանդ թէ ոչ այն միայն, այլ և թերեւս զդոյն, խնդութեէ, ուղղութեէ մտաց։ Այս ոչ այնպիսի ինչ ալիք ցանկութեանն լկկեն, որոց գամ մի զմիտան հասատաւել իցէ ի յայս պսակացն և փառացն. զի ոչ այնպէս կարել անգամանցն՝ որպէս և մտացն սանձՙ գիտեն ցածուցանել զալիս ցանկութեէն, և յապահովս առնել. մանաւանդ թէ խորհուրդքն միայն զայն գործեն։ Այ ասն այսորիկ զնոսա օրինակ ի մէջ բերէ, զի զոսա յառաքինութեիս կրթիցէ։

Այս եթէ ոչ այսպիսի ինչ հնարս հնարէր, զի ալիտոյ էր բերել զճառս այլոց ներբինեացն։ Օ՛ի ասէ, եթէ „Օ՛ անձինս ներբինիս արարին„. և եթէ զանդամոց ինչ կտրել ասէ. քաւ լիցի. այլ զխորհուրդս չարս բառնալ միայն. զի որ զանդամն կտրիցէ, և զատապարտ և գտանիցի, որպէս և Պաւղոս ասէ. “Այաւ էր՝ թէ մեռ կտրէին, որք խռովեցուցանէինն զձեզ„. և կարի իսկ ի յիրաւի. զի սպանողաց գործ մտաբերէր այնպիսի յանդգնութեէն, և զԱՅ արար

չուլթին խոտելոյ տայ պատճառս, և զմնալիքեցւոց քերթուս բանսն, և զկռապաշտիցն ծայրաքաղուլթիան անօրինին։ Օ ի զանգամն կարել՝ գիւաց գործ և սատանայի նենգուլթի է ի սկզբանէ · զի զ[1]Յ զգործն խոտիցէն, զի զայսպիսի զկենդանի ապականիցէն, և ոչ կամացն՝ այլ բնութեանն համարեսցին զնմ։ [2]Եւ այսպէս աներկիւղ մեղանչն բազումք ի նոցանէն և ի չշնաստակարս. և կրկին մեղանչն՝ կենդանւոյն զանգամն խափանելով, և զկամացն ցանկուլթի ի բարեացն արգելլով։

Օ այսպիսի օրէնս սատանայ եղ։ Յասացեալս և այլ ինչ չար կրօն մուծանէ, և [1]մարմնի՝ որ է բաստ. և աստի հրդէ Ճանապարհ, և ամ ուրեք զտուեալ [2]Յ զազատութիէն ապականեաց. և հատ նեցուցանէ՝ եթէ բնական ինչ չարիքն իցեն, և բազում և այլ ինչ չարին կարծիք. և բազում և այլ ինչ աստի սերմանէ կրօնս չարս. և ոչ յայտնի ինչ, քանզի այնպէս են նենգուլթիք սատանայի։ Վասն այնորիկ աղաչեմ փախչել յայմ անօրէնուլթենէ։ Ճանգերձ ասացելովքս և ցանկուլթի չլինիցի այնու մեղմ ինչ [3], այլ կարի իսկ սաստիկ. քանզի այլուստ ունիցի զաղբերս սերմանն՝ որ ի մեզ է. այլուստ յառնեն ալիքն։ Վամանք ասեն՝ եթէ յուղիղսն, և այլք ի միջոյն ասեն բուսանել քուսոյ ցանկուլթեն. իսկ ես ոչ այլ ուստեք ասեմ, բայց միայն ի լկսի մտացն և ի ծայլ խորհրդոյն. և եթէ նա ցածնուցու, ի բնական չարժմանցն և ոչ ինչ ինաս չառնի։

Իրրև ասաց զներքինեացն, որ ի զուր և ընդ վայր ներքինիքն են՝ եթէ մնօքն չցածնուցուն, ապա և զնոցանէն՝ որ վասն երկնիցն կուսանան, դարձեալ և ի նոյն յարէ „ Վր կարէ, ասէ, հանդուրտել՝ հանդուրտեաց „։ Յօժարագոյնս գործէ ցուցանելովն, եթէ մեծ է ուղղուլթիւնն. և չտայ թոյլ ընդ հարկաւ օրինացն իրացն մնանել, վասն իւրոյ անբաւ հեզուլթեն։ Եւ զայս ասաց, և եցոյց՝ եթէ կարի իսկ հնար գոյ զի բազում չօժարուլթի կամացն գործիցի։

1 Յօրինակին ի մարդն. յոյնն սխալ թղթոյ ինչ։ 2 Յօրինակին այնմ ձեռ ինչ։

Լ›ԹԷ կամացն էցէ, ասէն, զիաթդ յորժամ սկիզբն արասցէ, ԼԹԷ „ Լէ ամենեքեան բաւական են, այլ որոց տուեալն էցէ „ ։ Օ՛ւ ուսանիցես, ԹԷ մեծ պատերազմն էցէ, և ոչ վիճակ ինչ՝ ի հարկէ կարծիցես. զի տուեալ այնոցիկ է, ասէ, որք կամիցինն ։ Օ՛ այս ասաց, զի ցուցցէ՝ ԹԷ բազում վերինն օգնականուԹԷն պատերազմ։ ...

Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ զինչ ասիցեմ զընաւ իսկ զառաքինութենին. նա և զսակաւ ինչ մանել անփոյթ առնել՝ մեծամեծ չարիս ածէ ի վերայ. այս ինքն զողորմութենէն անփոյթ առնել՝ և ի գեհէնն տանիցի զյետնեալսն[1]. Թէպէտ և չէ իսկ այն բաւական առաքինութենէ, այլ մանն նորին. բայց սակայն և կուսանքն՝ վասն զի զայն չունէին, տանջեցան. և մեծատունն յաղագս նորին տաղնապէր. և որ զքաղցեալսն չկերակրեցին՝ անտի ընդ սատանայի դատապարտին։ Վարձեալ չքամբասեն՝ մանն ինչ սակաւ նորին է, սակայն և այն հանէ արտաքս զայնոսիկ՝ որ չարաբանին ողորմութենէն. որ ասիցէ ցեղբայր իւր մերոս, պարտաւոր լիցի ի գեհէն հրոյն։ Վարձեալ և զգաստութենէն մանն մի է նորին, սակայն առանց այնր ոչ ոք կարէ զնոր տեսանել. « Օ խաղաղութե՛ն, ասէ, զկնի երթայք, և զսրբութեան. առանց որոյ ոչ ոք տեսանէ զնր »։ Այս խոնարհութենէն նոյնպես մանն ինչ է առաքինութեանն. բայց սակայն թէ զայլ լաւութենէն ոք կատարիցէ, և զնա ոչ, պիղծ է առաջի նր. և յայտ ի փարիսեցւոյն է, որ բազում բարութեամբք ծաղկեալ էր, և անտի կորոյս զնոսա։

Այլ այլ ևս և այլ իմն աւելի քան զայս ունիմ ասել. եթէ միայն մի ինչ յայսցանէ անտես լինեալ է, փակէ մեզ զդրունս երկնից. այլ Թէպէտ և լինիցի՝ և ոչ պատշաճ հաւատաեալ և առաւելութեամբ, զնոյն միւսանգամ գործէ, « Այնի ոչ, ասէ, առաւելուցու արդարութենէն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոյ, ոչ մտանէք յարքայութենէն երկնից »։ Արպէս զի Թէ ողորմութիւն[2] առնիցես, և ոչ աւելի քան զնոցայն, չմտանիցես։ Վասն ինչ տային նոքա զողորմութիւնն՝ զայնս կամիմ ասել այժմ, զի որք չտայցեն՝ յորդորեսցուք ի տալ, և որք տայցենն՝ մի ինչ մեծ համարեսցին և հպարտայցեն, այլ և յաւե-

[1] Յօրինակին գ-յ-ե-ա-լ-ն։ [2] Յօրինակին թ-ո-ւ-թ-ի-ւն։

լուած ևս գործիցէն նմին ։ Օ ինչ իցէ՝ զոր նոքայն տային ։ Յամենայն ընչից իւրեանց տասանորդս ։ և դարձեալ այլ տասանորդս ։ և յետ այնը երրորդ տասանորդս ։ որպէս զի վերրորդ մասն ընչիցն իսկ տայլն ։ զի երեք տասանորդքն յորժամ ՚ի միմեանց վերայ դնիցեն՝ այնպէս կշռիցեն ։ և յետ այնը պատուոյ, և զանգրանիկս , և այլ ինչ ևս բազումս ։ զվասն մերձաւոր և ՚սրբութեանց , զոտնիցն , գյովքեղիկից , ըզպարտուցն խոստովանութիւնս , և զծառայիցն Թողութիւնս ։ Օ ի Թէ որ վերրորդ մասն ընչիցն տայցէ , մանաւանդ Թէ և զկէս իսկ , զի յորժամ զայս յայնը վերայ դնիցես՝ հասարակաց կէս լինիցի , Թէ որ զկէս տայցէ՝ չգործիցէ ինչ աւելի , որ ոչ և զտասանորդս տայցէ՝ իմ արժանի լինիցի ։ յիրաւի իսկ ասաց , Թէ սակաւք իցեն՝ որ ապրիցեն ։

Ի՚ արհամարհեսցուք դարման տանելոյ վարուցն ։ զի եԹէ մասն մի արհամարհեալ ՚ի նմանէ՝ այնչափ կորուստ բերէ , յորժամ ամ կողմանց պարտապան եմք վճիռ տալոյ՝ որ գտատպարտէ , զինքրդ վերծցուք ՚ի տանջանացն , զոր վրէժս չհատուցանիցեմք ։

Այ զինչ յոյս, ասեն , փրկութեան կայցէ մեզ , եԹէ ընդ որոյ համարեցարն՝ ընդ ամենայնի գեՀենն սպառնայցէ ։ Այս զգոյն ասեմ ։ բայց եԹէ զգուշանայցեմք , գոյ Հնար այրելոյ ։ յորժամ զգեղն ողորմածութեան կազմիցեմք , և վիրացն դարմանս տանիցեմք ։ զի ոչ այսպէս իւղ զմարմնս առողջացուցանէ , որպէս մարդասիրութիւնն զոգիս ։ քանզի և առողջացուցանէ , և ամենր յամ ՚ինասուց գործէ , և անըմբռնելի ՚ի սատանայէ ։ զի զորմ՚ վայրէ բուռն Հարկանիցէ՝ ոսոխիցէ այնուհետև , և չայցէ գամանգիտ լինել իւղն այն ՚ի մկանունս մեր ուՀելեացն նոքա ։ Այսուհետև այնու իւղով սատպ օծցուք զանձինս ։ քանզի առողջութիւն Հնարք են , և լուսոյ առաջնորդութիւն , և բազում պայծառութիւն պատճառք ։

Այլ այս անուն, ասեն , այսչափ ինչ և այսչափ տալանդ ոսկւոյ ունիցի , և չայցէ ինչ ուժիք ։ Այս զի՞ առ քեզ նա և այնու ևս իսկ աբանչելագոյն գտանիցիս գու , յորժամ յաղթաւթեան իցես՝ և առաւտամիա քան զնա լինիցիս ։ այսպէս և ընդ մակեդո-

նացուցին զարմացեալ էր Պաւղոս. ոչ զի տայինն, այլ զի յաղքատութենէն էին՝ և տային։ Եւ արդ մի՛ ընդ նոսա ինչ նայիցիս, այլ ընդ հաստատակաց վարդապետն, որոյ չգոյր տեղի՝ ուր զգլուխն դնիցէ։

Եւ ընդէր, ասիցեն, այս անուն և այս անուանդ զայս չառնիցեն։ Վասն զայլ ոք դատիր, այլ զքո անձնդ ապրեցո՛ յամբաստանութենէն։ Ապա եթէ ոչ, սասպիկ իսկ այն տանջանքն են՝ յորժամ զայլս պարսաւիցես, և դու չառնիցես. յորժամ զայլս դատիցես, և դու նմին դատապարտի պատժապարտ իցես. եթէ բարեգործաց չէ համարձակ զայլս դատել, որչափ և առաւել յանցաւորաց։ Վասն այսուհետև դատեսցուք զայլս, և մի՛ ընդ ընկերին և եթ ծայլս հայիցիմք, այլ և ընդ ինքս, այլ և անտի և եթ օրինակս բերցուք։ Վասն եթէ և ես ինչ եղէ քեզ երախտաւոր, միթէ ես փրկեցի զքեզ, զի ընդ իս հայիցիս. այլ է՝ որ զայն ամ՛ ընծրհեաց քեզ. ընդէր զնորն Թողուցուս՝ և ընդ ծառայակիցիս հայիցիս. չուռայր նմին իսկ՝ որ ասէ, թէ „Ասարուք լինիցէ, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ„. և դարձեալ՝ թէ „Որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր սպասաւոր„. և դարձեալ՝ թէ “Որպէս որդի մարդոյ ոչ եկն պատուել, այլ պատուել„։ Եւ լեա՛ս այնորիկ դարձեալ՝ զի մի՛ յանցուցեալ ընդ ծայլս ծառայակցացն՝ անդէն ի նմին վհատութենէն կայցես, ձգե՛ զքեզ ի նոցանէ առ Քրիստոս՝ ասելովին, եթէ “Որինակ ձեզ ետուս, զի որպէս եմն արարի, նոյնպէս և դուք առնիցէք„։

Յորժամ ոք վարդապետ առաքինութեանն ի մարդկանէն, որ ընդ քեզ կեցեն. և չիցէ ոք՝ որ ըզքեզ յայն յորդորիցէ։ Եթէ այնպէս իցէ, և ա՛ռաւել յարգանք են և մեծամեծ դրուատիք, զի առանց վարդապետաց շահաւետաց եղեր զարմանալի, Ոչ հնար այմ՛, և կարի իսկ դիւրին՝ թէ կամիցիմք, և յայտ առաքինքն առնեն, որ զայնպիսիսն ուղղութենէն ցուցին. որպէս Նոյ և Աբրահամ և Իսահակ, և Յովբ, և այլքն ամենեքին այնպիսիք, ընդ որս յոյժ կարևոր է հանապազ հայել, և ոչ ընդ սոսա՝ որք ոչ երբեք դադարեն ի նախանձուէ և

1 Յօրինակին յոչ առաքինութենէ։

աստէն ընդ մեր համարս աճելոյ ։ Վասնզի ամ ուրեք
ոչ այլ ինչ լսեմ , բայց զայս ևեթ բանս , եթէ այս
անուն այսչափ անգս և երկիր ստացաւ . և այս անուն
մեծանայ . և այս անուն չինուածս չինէ ։

Օ՛ի կարօտիս արտաքնոցն ոմ մարդ , ընդէր ընդ
այլս Հայիս . եթէ կամիս զայլս տեսանել , ընդ բարե-
գործն նայեաց , ընդ հաձոյն՝ որք զամ օրէնսն կա-
տարեցին , և ամ ընդ դիմադարձն և ընդ անարգս .
զի թէ ընդ նոսա հայիցիս , բազում ինչ չարիս ժողո-
վես անտի , և անկանիս ի ծուլութիւն , և ի հպար-
տութիւն , և զընկերս դատապարտել . իսկ եթէ ըզ-
բարեգործն հաշուիցիս , ի խոնարհութիւն , ի փոյթ ,
և ի զղջումն , և ի բազում բարութիւնս ածիցես
զանձն ։ Լաւ զինչ կրեաց փարիսեցին , որ զբարե-
գործսն թողեալ և ընդ յանցաւորսն նայեր . լաւ և
երկիր ։ Ցնս զիարդ զարմանալի եղև Պաւէթ , որ
ընդ նախնիսն ևեթ ընդ առաքինիսն հայեր ։ " Պանդ-
ուխտ եմ ես , ասէ , և նժդեհ որպէս ամ հարքն
իմ ,, ։ Վանզի նա , և ամենեքին՝ որ հանդոյն նմին
էին , թողին զյանցաւորսն , և զհաձոյսն ևեթ զմնաւ
ածին ։ Օ՛նոյն և դու արա . ամ դատաւոր այլոյ յան-
ցանաց նստել , և ամ զընկերացն մեղսն քննել ։ Օ՛ անձն
քո դատել ՝ և ոչ զայլս՝ առաք· հրամայն . " Եթէ
զանձինս դատեաք , ասէ , ապա ոչ դատապարտեաք .
բայց դատեալ ի Տեառնէ՝ խրատիմք ,, ։ Պաւ աւադիկ
զկարգն եղծեր . զանձին ոչ զմեծամեծաց և ոչ զփո-
քունց պահանջեաս համարս , և զայլոցն հաւաստեաւ
քննեաս ։

Վայ զի ամ զնոյն առնիցեմք , այլ ի բաց թողեալ
զայնպիսի անկարգութիւն , ի մեզ կանդնեացուք ա-
տեան մերոց մեղացն . մեղքն դատաւորք և դատա-
խազք և դահիձք լինցուք յանցանաց մերոց ։ Եւ եթէ
զայլոցն ևս կամիցիս քննել , զուղղութիւնն քննեա , և
ամ զմեզն . զի և յիշատակաւ անձանց յանցանաց , և
նախանձու ընկերացն ուղղութիւն՝ ի խոնարհութիւն
և ի փոյթ զանձինս ածցուք , և հանդերձելոց բարու-
թեանցն հասանիցեմք , շնորհօք և մարդասիրութ՛ն
մերոյ Յի Վի , որում փառք յաւիտեանս . ամէն ։

1 Յօրինակին պահասեր ջ-ին ։ ջ-ջ-ն ։

«Եւ մինչ դեռ ելանէր Յիսուս Երուսաղէմ, առ մերձ Երիքով զերկոտասանեսին զաշակերտսն, և ՚ի ճանապարհին ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք Երուսաղէմ, և որդին մարդոյ մատնի ՚ի ձեռս քահանայից և դպրաց, և դատապարտեսցեն զնա ՚ի մահ. և մատնեսցեն ՚ի ձեռս հեթանոսաց՝ այպանել և ջարկարել, և խաչել աւուր յարիցէ»։

Ոչ վաղվաղակի ելանէ Երուսաղէմ ՚ի Գալիլէէ եկեալ. այլ նախ նշանս առնէ, և յանդիմանէ զփարիսեցին՝ վասն ինչս ստանալոյ. «Եթէ կամիս, ասէ, կատարեալ լինել՝ վաճառեա զինչս քո զամէն», և վասն կուսութեան, եթէ «Որ կարօղն է տանել՝ տարցի». և վասն խոնարհութեան, «Եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկտի, ոչ կարիք մտանել յարքայութիւն երկնից». և վասն աստէն հատուցմանց, «Որ թողու զտուն և զեղբարս և զքոյրս, հարիւրապատիկ առցէ յաշխարհիս յայսմիկ». և անդ՝ «Ի զիջ կեանսն յաւիտենականսն ժառանգեսցէն». Եւ յետ այսր ամենայնի մնաց էր տակաւին ՚ի քաղաքն. և իբրև հուսկ լինելոր մտանել, ՚ճառէ զարձեալ զառաքեալսն նոցա։ Ոմն այնորիկ ստէպ յիշեցուցանէ, և կրեմ զմիտս նոցա. և կարի իսկ ՚ի դէպ էր՝ զի առանձինն իսկ խօսէր, զի և ՚ի նոցանէ զտրտմութիւնն փարատիցէ, և ընդ բազումս մի ածիցէ զբանն, և մի յայտնի ուրուք ճառիցէ, քանզի ոչ ինչ օգուտ գործիցէ. զի եթէ աշակերտքն խռովեին՝ յորժամ լսէին, որչափ եւս բազում ոամիկքն։

Իսկ յասացն արդեւք բազմաց։ Ո՞ւր ասաց և բազմաց, այլ ոչ այնպիսի ինչ յայտնի. «Վաւակեցէք, ասէ, զտաճարս, և յերիս աւուրս կանդնեցից զդա». և «Ջնջեն խնդրէ ազգս այս, և նշան մի տացի նմա, բայց միայն նշանն Յովնանու». և դարձեալ՝ եթէ «Փոքր մի ժամանակս ընդ ձեզ եմ, և խնդրիցէք զիս, և ոչ գտանիցէք»։ Իսկ ցաշակերտսն ոչ զայսպիսի

ինչ, այլ իբրև զայլն յայտնի իրս ասաց, նոյնպէս և զայս։ Ընդէր եթէ չառնուն ի միտ բազումք զբանսն՝ որով խօսէր։ Օ ի ուսանիցին յետ այնորիկ, եթէ չառաջագոյն գիտելով և կամաւ և ոչ ակամայ անգիտութեամբ եկն ի չարչարանս։ Իսկ աշակերտացն ոչ միայն վասն այնորիկ ասաց չառաջագոյն, այլ որպէս ասացի՝ զի կրթեսցին ակն ունելով, և ոչ ինչ խռովեսցին ընդ չարչարանսն. զի մի յորժամ անպատրաստ գայցէ՝ կարի իսկ զարհուրեսցին։

Վասն այնորիկ չառաջինն՝ զմահն միայն ասաց, և յորժամ կրթեցաւն և ընկալան, ապա և զայլն յաւելոյ՝ եթէ մատնեսցեն հեթանոսաց, և այսպէս առնիցեն, և տանջիցեն. զի յորժամ աստի ի տրտմութիւնն ելանիցեն, և խնամայցեն թէ այնքան ստոյգ եղև, և ապա յարութեան հաւաստեաւ ակն ունիցին. վասն այնորիկ ոչ թաքուցանէ զայնս՝ որ զնոսացն տրտմեցուցանելին և նախատանաց իրք կարծելին, զի այնու և հեշտակնքն հաւատարիմք լինիցին.

Այս միտ դիր, ցնծագ և ի ժամանակին հասատեսցէ զիրսն։ Վ՛ չառաջնումն ասաց, զի մի կարի վաղվաղակի խռովեցուցանիցէ. և ոչ մեռան ի ժամանակին. այլ յորժամ կարի իսկ զիտօշ զօրութեամբ նորա առնէին, յորժամ զմեծամեծ զաւետիսն ետ վասն կենացն յաւիտենից, ապա բերէ զայսպիսի ձառս ի մէջ միտգամ և երկիցս և բազում անգամ, և յաբէ ի սքանչելիսն և ընդ վարդապետութիւնն։ Իսկ միւս աւետարանիչն ասէ՝ զմարգարէին և ածէ վկայս. և միւսն՝ թէ "Այս նորա ոչ իմացան, այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ և զարմացեալք զհետ երթային։"

Այս եթէ այդպէս իցէ, ասեն, ապա չէր ինչ օգուտ ի կանխասացութենէն, զի չառնուին ի միտ զոր ինչ լսէին, և ակն ունել իմիք չկային, ապա և ոչ կրթէին յառաջ։ Ասացի ես այլ իմն քան զսոյն տարակուսական գոյն ասեմ. զի թէ չգիտէին, զիարդ տրտմէին. և զիարդ Պետրոս ասէր, թէ "Վ՛աւ լինի քեզ այդ"։ Այս արդ զինչ իցէ առ այս ասել։ Օ ի մեռանելոց էր զսոյն գիտէին. թէպէտ տեսչութեան խորհրդոյն չէին քաջ տեղեակ, և ոչ յարութեանն յայտնի ինչ այնպէս, և ոչ վասն ուղղութեան զոր յարդարելոյն

էր. և այն իսկ ծածկեալ էր ի նոցանէն, և վասն նո-
ցին էին իսկ ի տրտմելն. Օ այլս ի նմանէ յա-
րուցեալս տեսանէին, և զնա չգիտէին՝ թէ անձամբ
զանձն յարուցանէ այնպիսի ինչ յարուցիչն, զի և
այլ ևս ոչ մեռանիցի, և զի ոչ երբեք տեսին։ Այս
էր՝ զոր բազում անգամ ասէր, և նոքա ոչ իմանայ-
ին. և ոչ զմահն՝ թէ որպիսի ինչ իցէ, կամ սրպէս
լուծանիցի, գիտէին հաւաստեաւ. վասն որոյ զար-
մացեալ երթային ընդ նմա։ Եւ ոչ այս միայն, այլ թուի
ինձ և զարմացուցանել զնոսա վասն չարչարանացն
խօսելոյ։

Այլ ոչ ինչ յայտնեալ խոռվեցուցանէր զնոսա, քան
զի առեպ գյարուցեալն լսէին. բայց հանդերձ մա-
հուամբն և այն ևս կարի խռովեցուցանէր զնոսա,
լսել՝ թէ կատակեսցեն զնա, և տանջեսցեն, և զայլ
նոյնպիսիսն։ Յորժամ զմտաւածէին զնչանս դիւա-
հարացն՝ զորս աղատեացն, և զմեռելոցն՝ զոր յա-
րոյցն, և զայլ ամ սքանչելիսն, յորժամ իմացան և
զչարչարանացն՝ ասէին, եթէ զիարդ, որ այնչափ մե-
ծամեծս գործէն՝ այնպիսի չարչարանս կրիցէ։ Եւ
վասն այնորիկ ի վարանս մտանէին. և մերթ հաւա-
տային, և մերթ չհաւատային։ Եւ այնչափ չիմանայ-
ին զյայտնի զբանսն, մինչև որդւոցն Օ երեքեայ
մատչել և խնդրել զդահերից զչխաւորութիւնն և
զփառսն։ "Կամիմք ասէն, զի մինս ընդ աջմէ քում-
մէ, և միւս ընդ ահեկէ քումմէ նստիցիմք"։

Իսկ զիարդ աւետարանիչն ասէ, թէ և մայրն ընդ
նոսա մատեաւ աղաչել։ Ի դէպ է, թէ և երկրորդին
իսկ եղեն. զմայրն ընդ իւրեանս ունելով մեծ ինն
պատուարանս խնդրուածոցն հնարէին, և եթէ նո-
ւաւ ինչ աւելագոյն կարիցեն ի հաւան ածել զԻն։
Եւ զի ձշմարիտ է այս՝ զոր ասայ, քանզի ինքեանք
եղեն ի մոի խնդրել, և ի վեր ամաչէին հանել,
վասն այնորիկ զմայրն դրդեցին, տես զիարդ ձգէ զը-
բանն առ նոսա Յն։ Եւ նախ ուսանիցիմք, եթէ
զինչ է զոր խնդրէին. և յորպիսի մտաց, և ուստի
եկին յայն։ Ցեսանէին զանձինս պատուականս քան
զայլսն, և կարծէին աստէն իսկ առնուլ զոր խնդրե-
ին. լուր միւս աւետարանչին՝ որ առաւել զայս յայտ

առնէ . « Արբև մերձ եղեն Հրեայքն , և ակն ունէին թէ արբայութիւն նորա անդէն իսկ յայտնելոց էր ,, , խնդրէին զայդ : Ոչ զայս այսպէս Թուէր՝ թէ անդէն իսկ առ դուրս կայցէ արքայութիւնն , և առ ժամայն վայելեսցեն ի խնդութեան զոր խնդրէին , և չկեն ինչ վշտանալոց ի տրտմակառացն . և ոչ զայս միայն խնդրէին , այլ զի ի վշտացն ղերծանիցին , Այսն որով և ինքն նախ յայսպիսի խորհրդոց մերժէ զնոսա , և հրամայն տալ մահու և վշտաց և անհնարին չարչարանաց ակն ունել . « Արէք , ասէ , ընդել զաժառիկն՝ զոր ես ընդելոց եմ ,, :

Այլ մի ոք խուվեսցի ընդ Թերակատար միտս առաքելոցն . քանզի չէ ես էին օրէնք ի խաչին կատարեալ : Իսկ եթէ կամիս ուսանել զառաքինութեն նոցա , զի առ յապայ իմանայցես , թէ որպիսի ոք էղեն ի հնորհացն : Ոչ զի արդ ինչ ոչ հոգևոր խընդրէին , և զվերին արքայութենէն ածէին զմտաւ , անդստին իսկ յիրացն յայտ է : Այլ տեսցուք զի արդ մատեան , և զինչ խնդրէին : « Կամիմք , զի զոր ինչ խնդրեացուք՝ արասցես մեզ ,, : Այս Ոչ , « Ո՞ ինչ կամիք ,, : Այլ եթէ ոչ դիտեր , այլ զի նոցին իսկ անձամբ տացե յայտնել զախտս մտացն , և ապա դիցե զգեղն : Իսկ նոցա առ այն ակն ածեալ , քանզի մարդկօրէն իմն ախտանային , մեհլսի առեալ յայլոց աշակերտացն , զի մի յորժամ ի վերայ գայցեն , և ապա մռռասցին զոր ինչ կամեցան : Զնձ այսպէս Թուի , քանզի լուան եթէ յերկոտասան աթոռս նստջիք՝ զդահապետս աթոռոյն կամէին ունել , զի քան զայլսն ինքեանք առաւել ունիցին զպատիւ , զանգիտէին , և ի Պետրոսէ կասկածէին , և ստիպէին , « Այսր զի մի ընդ աջմէ և մի յահեկէ քումմէ նստցուք ,, : Ոչ նա իսկ յայտ առնէ , եթէ ոչ խնդրէին իրս ինչ հոգևորս , և եթէ ոչ դիտէին իսկ եթէ զինչ խնդրեացեն . և զի այնչափ իշխէին ժառէ , և նա ասէ . « Ոչ դիտէք զինչ խնդրէք ,, , և թէ զիարդ մեծ իցէ և զարմանալի , և առաւել ևս զանցանէ զվերին զօրութեամբն : Այլ ասէ անդէն , « Կարէք , ասէ , զաժառիկն՝ զոր ես ընդելոց եմ՝ ընդել , և զմկրտութեամբն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտել ,, : Ցեսեր զիարդ

մերժեաց զնոսա ի հայրապետութենէ կարծեաց, և ի հակառակացն առնէ զպատասխանին։ Այո՛ւբ, ասէ, պատիւ և պսակս խնդրէք, այլ ես զպատերազմունս և զբրտութիւնս եդից առաջի. չէ այժմ պարգևաց ժամանակ, և ոչ աստէն յայտնելոց են փառք իմ, այլ մահուց և պատերազմաց և չարչարանաց դեռ աստիքս են։ Տեսէք՝ զի Տէրոջ օրինակաւ յօժարութեամբ տայ և առ ինքն ձգէ։ Ղասաց եթէ կարէք մեռանել, և զարիւն անձանց հեղուլ, այլ ասէ. «Կարէք ըմպել զբաժակն», Ութբև սակաւ մի յորդորեաց, ասէ «Օ որ ես ըմպելոց եմ», զի և ես յօժարադոյն արասցէ՝ իւր հաղորդելովն, և զի ցուցցէ եթէ ոչ պատի և առաւել սրբութիւն լինելոց է ի չարչարանաց նորա ամ աշխարհի։

«Ոչ նոքա ասեն. այո՛, կարեմք», Ոչ յօժարութիւնն վաղվաղակի յանձն առին. և չև ևս իմանային զոր ինչ ասացն, այլ ակն ունէին լսել զոր ինչ խնդրեին։ Ուակ նա զինչ ասէ, «Օ բաժակն ըմպիցէք և զմկրտութիւնն մկրտիցէք», Ա՛ևծամեծս մարգարէացաւ նոցա, թէ արդարև վկայութիւն արժանի լինիք, և զնոյն կրիցէք՝ զոր ես կրելոց եմ, և բրնութեամբ մահու վճարելոց էք զկեանս ձեր, և լինիցիք հնձ հաղորդ չարչարանաց։

«Ուայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ է ի հօրէ իմմէ», Իբրև վերացոյց զմիտս նոցա, և արար բարձրադոյնս և անմբռնելի ի տրտմութէն, ապա յարդարեաց և զխնդրուածսն։ Ոչ զինչ իցէ զոր այժմ ասիցէ. քանզի երկու ինչ իբր խնդրին ի բաժմայ։ Ա՛ի թէ արդարև արդեւք պատրաստեալ իսկ իցէ ուրեք նստել ընդ աջմէ նորա. և միւս ևս՝ թէ ամենեցունն ձեր իցէ, նոցա՝ որոց պատրաստեալ իցէ, զիարդ չիցէ ձեր տալ. և զինչ իցէ զոր ասիցէն. զի եթէ զաւաջինն լուծցուք, ապա և երկրորդն յայտնի լինի խնդրողացն։ Ա՛ղ ոք ընդ աջմէ և ընդ ահեկէ նորա նստիցի. քանզի ամենր և անկոխ է ամենեցունն աթոռն այն, ոչ ի մարդկանէ միայն, և ի սրբոց առաքելոցն, այլ ի հրեշտակաց և յամենայն զօրութենէ վերնոցն։ Ա՛րդ զնոյն լիմ միաճնին միայն սեփական

եդեալ յայտ արարեալ առաքելոյն՝ ասէը, Թէ «Ջո՞
երբէք ասաց ՚ի հրեշտակաց՝ նիստ ընդ աջմէ իմմէ.
այլ առ հրեշտակսն ասէ, Թէ ո՞ արար զհրեշտակս
իւր հոգիս. բայց ցորդինն ասէ, աթոռ քո ՚ած յաւի-
տեանս յաւիտենից ,, ։

Նոյնպէս զլուրդ ասիցէ, Թէ "Նստուցանեսցէ ընդ աջմէ
իմմէ և ընդ ահեկէ ոչ է իմ տալ , . և յայտ առնէ՝
Թէ են ոմանք՝ որ նստիցեն։ ()ն անդր, ՚ի բաց տար.
այլ ըստ կարծեաց հարցողացն ետ պատասխանիս՝
զիջանելով ըստ մտաց նոցա. քանզի ոչ գիտէին իսկ
զպատիւ բարձրագոյն աթոռոյն և զնստեալսն ընդ աջ-
մէ հօր. ուր առաւել խնամարհագոյս քան զայն հա-
նապազ հնչեալ յականջս նոցա՝ չառնուին ՚ի միտ.
այլ զայս միայն խնդրէին՝ զի գահերեց լինիցին, և
քան զայլսն առաջինք և մեծակայք նորա. քանզի
լուան զերկրոտասան աթոռոյն, և առ չգիտէլ Թէ
զինչ իցէ բանն, զգահերեց գլխաւորուն խնդրէին։

Այլ զոր ՚Ի՞ կամի ասել, այս ինչ է. սպանանիք
ոչիք, ասէ, վասն իմ, և մեռանիցիք վասն քարոզու-
Թեան իմոյ, և հաղորդ լինիջիք չարչարանաց իմոց.
և չիցէ այն միայն բաւական ՚ի գահերեց գլխաւորու-
Թիւնն վայելելոյ, և զառաջինն աշտիճանն առնլոյ,
այլ գտանիցի ոք՝ որ հանդերձ վկայութիւք և զալ
և յամ առաքինութիւնս իցէ կատարեալ և առաւել
քան զձերդ, ոչ վասն զի այժմ սիրեմ զձեզ՝ զձեզ ինձ
նախամեծարս համարիցիմ, և զայսպիսին խոստիցեմ՝
որ արգեամբք յայտ իսկ առնիցէն զնահատակութիւն ։
Այլ այնպիսի ինչ չասէ, զի մի տրտմեցուցանիցէ ըզ-
նոսա. բայց առակաւ զայն ակնարկէ. "Ո բաժակն
իմ ըմպիցէք, և զմկրտութիւնն իմ մկրտիցիք, այլ
նստուցանելն ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ չէ իմ
տալ զայդ ձեզ, այլ որոց պատրաստեալ իցէ ", Այս
ոչ իմ իցէ պատրաստեալ. որոց ՚ի գործոց առաւել
պայծառագոյնք կարիցեն գտանել քան զնոսա ։ Այդ
այսորիկ ոչ ասաց, Թէ չէ իմ զայս տալ, այլ հօր ի-
մոյ, զի մի զանձն անկար երևեցուցանիցէ՝ որպէս
Թէ չիցէ բաւական տալ զհատուցումն. այլ չիցէ իմ,
ասէ, տալ զայս, այլ նոցա՝ որոց պատրաստեալ իցէ։

Այս զի և ես լուսաւորագոյն լինիցի զոր ասեմն, օրի-

նակաւ ինչ կրթեսցուք և հաւատարեսցուք. Լ՝ԹԷ յար-
դարիչ ոք իցէ մարտից, մարտակիցս և նահատակ
բազում յառաջ կացուցչ, մատուցեալ երկուք ի
նոցանէ՝ որ կարի զանձինս ընտիրս համարիցին՝ առ-
այն՝ որ զմարտս մարտիցն յարդարիցէն, և ասիցեն՝
ԹԷ պսակէ զմեզ, և հրամայեաւ քարող կարդալ ա-
ւաջի քո. քանզի վստահ իցեն ի բարեկամութիւն և
յընտանութիւն զոր ունին ընդ նմա: Լ՝ու նա ասիցէ.
չէ իմ զայս տալ ձեզ, այլ որոց պատրաստեալ իցէ
ի Հգանց և ի քրտանց: Լ՝ԹԷ զտկարութիւն նորա
պարսաւեմք. ծն անդր, և ոչ երբեք. այլ ցուցանի-
ցեմք՝ եԹԷ արդարութիւն ստատեաց, և ոչ ակնա-
ռութեամբ: Օ՝ որ օրինակ գնմանէ չասեմք՝ եԹԷ առ-
ակարութիւն չկարաց տալ զպսակն, այլ զի չկամեցաւ
եղծանել զօրէն մարտիցն, և ոչ խանգարել զկարգ
և զարժան պատերազմացն. նոյնպէս և ըստ Լ՝ԹԷ իմա-
նայցեմք զայս ասացեալ՝ եԹԷ ընդ ամենայն կողմանց
պիտոյ էր, ԹԷպէտ և շնորհ ունիցին ընդ, այլ յան-
ձանց ինչ ուղղութիւնս ապաստան լինիցին՝ և յայսմ
փրկութեան և ի հաձոյ լինելն ՚ՈՅ. վասն այսորիկ
ասէ՝ ԹԷ որոց պատրաստեալն իցէ: Լ՝ԹԷ այլ զբ ա-
սէ լուսաւորագոյնք երևեսցին, և մեծամեծ գործս
ցուցանիցեն, ոչ զի աշակերտք եղերուք դուք ինձ
այժմ՝ վասն այնորիկ ի գլխաւոր պատիւն նստիցիք,
եԹԷ ոչ ըստ ընտրութեցդ և դուք արժանի ինչ լի-
նիցիք:

Լ՝ՍՐ զի ինքն ՚ՈՐ է ամենայնի, յայնմանէ յայտ է՝
զի զամենեցուն դատաստան ի ձեռին ունի. քանզի
և ՅՊՀատրոս ասաց, «Լ՝ՀՀ տաց զփականս արքայու-
թեանն երկնից». և ՊաւղոսԻ զսոյն յայտ արարեալ՝
ասէր, եԹԷ «Լ՝յսուհետև կայ ինձ պսակ արդարու-
թեան պսակն՝ զոր հատուսցէ ինձ ՚ՈՐ արդար դատա-
ւորն, ոչ միայն ինձ՝ այլ և ամենեցուն որք սիրեն զը-
յայտնութիւնն նորա». և յայտնութիւնն Լ՝ՀՀ եղև.
և զի քան զՊաւղոս ի վերոյ ոչ ոք գտանի, ամենե-
ցուն իսկ յայտնի է:

Լ՝ԹԷ չասաց զայն յայտնի, ընդ այն ինչ մի զար-
մանայս. ցածուցանէ զնոսա տնտեսաբար, զի մի ընդ-
վայր վասն գահերէց լինելոյ զնա Թախանձեսցին.

քանզի մարդկային ինն ախտացեալ գային յայն։ Եւ
վասն զի ոչ կամէր տրտմեցուցանել զնոսա, վասն այ-
նորիկ անյայտ խօսի, զի երկոքեւքիւք ածցէ զնոսա
յուղղութիւն։

" Յայնժամ բարկացան, ասէ, տասունքն՝ ի վերայ
երկուցն ,, ։ Յայնժամ. երբ։ Յորժամ սաստեաց ՚ի
նոսա։ Ինչ ՚ի վէրն վէնուն ՚ի վերայ կայր՝ ոչ ինչ
ցանուսին. այլ տեսանէին՝ զի նախամեծար լինէին,
և լսէին. քանզի ահն ածէին ՚ի վարդապետէն և պա-
տուէին նմա. Թէպէտ և ընդ միտս նեղէին, չկարէին
ինչ ՚ի վեր հանել. և վասն Պետրոսի յորժամ ըզ-
մարդկեղէն ախտն ախտացան, հարցանէին Թէ ով՚ ի
նոցանէն մեծ իցէ. բայց քանզի աշակերտացն էր իրըն-
դիրն, ցանուսին ։ Եւ ոչ աստ վաղվաղակի ցանուն՝
յորժամ խնդրեցինն, այլ յորժամ ՚Ի՞ սաստեաց ՚ի
նոսա, և ասէ, Թէ չվայելիցէք ՚ի գահերիցութիւնն՝
եԹէ չառնիցէք զանձինս ձեր արժանիս ։ Տեսանէք,
զիարդ ամենեքեան Թերակատարք էին. սոքա Ձոխա-
նան քան զտասունսն, և նոքա նախանձին ընդ եր-
կուսն. այլ որպէս ասացի իսկ՝ եԹէ Թերակատարք
էին, յետոյ ցուցից քեզ, և տեսանիցես զնոսա յայս-
պիսի իրաց ազատեալս ։

Եւ արդ լուր, յորժամ սոյն իսկ Յովհաննէս, որ
այժմ մատուցեալ զգլխաւորութիւնն խնդրէ, զՊետ-
րոս մատուցանէ յառաջ ընդ ժողովուրդսն խօսե-
լով և նշանս առնել, ՚ի գործս առաքելոցն, և չԹա-
քուցանէ զամենայառաջադիմութիւնն նորա ։ Եւ Յա-
կովբոս ոչ բազում ժամանակս եկաց, այլ այնպէս
բորբոքեցաւ զառաջինն, մինչև ամենևին զերկրա-
ւոր պետս ՚ի բաց ընկենուլ, և յայնչափ բարձրու-
Թիս վերանալ, զի անդէն իսկ վաղվաղակի ՚ի սպա-
նումն մատնէր. և սոքա որ յետոյ այնչափ կատա-
րեալք եղեն, զայրանային և զչարեին ընդ միմեանս։

Եւ առ այն զինչ ՚Ի՞ա ։ " Կոչեաց զնոսա առ ինքն
և ասէ. իշխանք հեԹանոսաց տիրեն նոցա ,, ։ Վասն
զի խռովեցան և ամբոխեցան, չառաջ քան բանիւք՝
կոչելովն ցածուցանէ, քան զի երկուքն ՚ի գնդէ տա-
սանցն Ձեղքեցան, և մեծ երԹեալ կային վասն իրըն-
դրոյն, նա և զմայրն և ընդ իւրեանս առնուլ, մեծ

և սպատսպարան խնդրոյն համարէին. Թէ նովաւ ա-
ւելի և կարիցեն ի հաւան ածել զՔ՚ս. քանզի ին-
քեանք իսկ եդին ի մտի խնդրել, և ի վեր ամալէին
հանել, վասն այնորիկ զայլսն ի մօտ կոչէ, և զբանս
նոցա այպանեալ ձաղէ, և յայտնէ, զի զայլսն միթ-
Թարեսցէ, և զսոյն զնոցա տրտմութիւն փարատեցու-
ցանէ ի մտաց. և ոչ որպէս առաջինն, սոյնպէս և
այժմ ցածուցանէ. զի նախ մանկտի ած կացոյց ա-
ռաջի, և անմեղութեամբ նոցա և խոնարհութեամբ հրա-
մայեաց լինել նմանօղ. այլ աստ սաստիկ պատկառե-
ցուցանէ ասելով, "Իշխանք հեթանոսաց տիրեն նո-
ցա, և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այնպէս և ի ձե-
ռում միջի լինիցի, այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել,
եղիցի ամենեցուն սպասաւոր",

Ցուցանէ եթէ հեթանոսական է գահերիցութիւն
ցանկալ, և կարի անշնարհին ախտ. և զմեծամեծս
և յառաջագոյն գիտէ լկտել. վասն այնորիկ և սաս-
տիկ պատժոց պէտք էին. քանզի և ինքն իսկ կարի
կսկծեցուցանէր զնոսա այնու. Ո՛չ հեթանոսաց նմա-
նեցուցանէ զուռուցեալ միտս նոցա. և պատկառե-
ցուցանէ առ ի ցածուցանել զկիսոցն զնախանձ, և
զկիսոցն զՏպարտութիւն. Այս գրեթէ այնպէս իսկ ա-
սէ, Թէ մի ցանցուք ընդ Թշնամանս ձեր. անձամբ
մեռաս և ամենի առնեն, և ինքեանք կան ի վտանգի,
որք զգահերէցսն խնդրեն. քանզի չէ ինչ այնպէս առ
մեզ, որպէս որ առ արտաքինսն տիրեն. և առ իս
որ կրտսերն է՝ նա է երէց. և ոչ վայրապար ինչ ա-
սեմ զայս, արդեամբքն իսկ զոր առնիցեմ և չարչա-
րիցիմ, առնուցուք օրինակ ըստ բանիդ. զի ես և
մեծամեծս արարի. զի Թագաւոր եմ վերին զօրու-
Թեանն, և յանձն առի լինել մարդ, և արհամարհել.
և չհամարեցայ զայն միայն բաւական, այլ և ի մահ
և եկի. վասն որոյ և ասեմ իսկ, եթէ "Որդի մարդ
դոյ ոչ եկն պաշտօն առնուլ յոմանէ, այլ պաշտել
և տալ զանձն փրկանս ընդ բազումս",

Այս ընդ որպիսեսն արդեաք. ընդ Թշնամեաց և ընդ
ատելեաց. Այու եթէ խոնարհիս, վասն քո խոնարհիս.
իսկ ես, ոչ վասն իմ ինչ, այլ վասն քո: Այս արդ մի
կարծիցես եթէ զպատիւն բառնայցես վասն խոնար-

հուԹԵՒն · զի որչափ և խոնարհիցիս , ոչ կարես այն-
չափ զիջանել , որչափ ինչ քո ՝ներն ելջ : Այլ սակայն
նորա իջանելն , ամենեցուն ելանել եղև . և փառաց
նորա և առաւել յայտնուԹի , զի մինչ չև մարդ լի-
եալ , ՚ի հրեշտակաց ևԹե Ճանաչիւր . իսկ յորժամ
մարդ եղև և ՚ի խաչ եղ , ոչ միայն յայնց փառաց
չնուազեաց , այլ միւս ևս ՚ի վերայ նորին առ՝ առ ՚ի
յաչխարհէ Ճանաչելոյ : Այս արդ մի ինչ կարծիցես
Թէ ՚ի պատուոյ անկանիցիս , զի այնու առաւել յա-
Ճախիցեն փառքն : Այսոլին առաւել ևս մեծանան .
քանզի նա իսկ է դուռն արքայուԹեան . մի ընդ նորին
հակառակն մտցուք . եԹէ կամիցիմք մեծ երևել , մի
կալցուք զանձինս առ աւազս , այլ քան զամենևեան
անարգագոյն : Տեսեր՝ զի ՚ամ իրաք ՚ի հակառակացն
յորդորէ զնոսա , և չտայ նոցա՝ զոր ասէին ցանկան :
Այա եԹէ այդպէս իցէ , զվերջինն աշխատանն ըն-
տրեա , և ասա վայելչիցես ՚ի գահերիցուԹէ : Իսկ
եԹէ կամիցիս մեծ լինել , մի խնդրիցես մեծուԹի , և
ապա լինիցիս մեծ . տես՝ զիարդ մերժէ զնոսա յաչ-
տէն , զի ՚ի հպարտուԹէն փախչիցին , և զխոնարհու-
ԹԵ զՀետ երԹիցեն : Այս զՀետնոսայ վասն այնո-
րիկ յուշ արար նոցա , զի այնու ևս նախատանսայ և
գարշելի զնոսն ցուցանիցէ . զի հպարտացելոցն պարտ
է խոնարհել , և նմին հակառակ խոնարհուԹեն բար-
ձրանալ . քանզի այն իսկ է Ճշմարիտ և սերտ բար-
ձրուԹի վասն որոյ և սուրբքն զարմանալիք եղեն . զի
խոնարհեցուցին զանձինս , և մինչև ցայսօր ժամանա-
կի բարձրացեալ կացին միացին :

Այղիցուք այսուհետև խոնարհ , զի լինիցիմք բարձ-
բացեալք . քանզի բազում իսկ յաՃախուԹի խոնար-
հեցուցանէ հպարտուԹեն . այն իսկ Թշուառացեալ
զՓարաւոն , չՃանաչեմ ասէ զՔՏն . և գորոյ , և
ԹրԹրոյ , և շանաՃանՃի եղև Ճարակ , և յետոյ զն-
նուք և երիվարօք լնկղմէք ՚ի ծովն . և նորին հակա-
ռակաւն բարձրացաւ Աբրահամ . հող և մոխիր եմ
ասէր , և բազում այլազգեաց յաղԹէր . և ՚ի մէջ
նոցին իսկ եգիպտացւոյն անկեալ , և պայծառա-
գոյն քան զառաջինն կանգնեաց զնոսան յաղԹուԹէ ,
և զայնմ առաքինուԹէ բուռն Տարեալ , Հանապազ

լինեը բարձրագոյն. վասն այնորիկ հնչէն վարք զնմանե. յայն սակս պատկի և մեծաբարբառ քարոզի. Ո՛չ փարաւոն հող և մախիր է, և եթէ այլ ինչ նուաստագոյն կայցէ քան զայս. Գաղտնի ինչ յուսեքէ ած՝ որպէս յամբարտաւանութենէն. Վասն այնորիկ մինչև ցայժմ զնմ հնարս հնարի, զի զայն ախտ բառնայցէ ի միջոյ. նմին իրի եղեաք մահկանացու, և ի ցաւս, և ի տրտմութիս, յաշխատութիս, և ի քիրտն, և ի գործս հանապազորդ, և ի տառապանս մատնեցաք. Վասն զի և առաջին մարդն առ հպարտութեէ յանցեաւ, ի հաւատակ ածութենէն ցանկանալոյ. վասն այնորիկ և զոր ունէրն չկալաւ, այլ և յայնմանէ անկաւ. քանզի այնպիսի է հպարտութիւն. զի ոչ միայն չյաւելու յուղղութենէ կարգացն, այլ և զորս ունիցին ապականէ և կործանէ. որպէս և խոնարհութենէն, ոչ միայն յորոց ունիմքն չհատանէ, այլ և զոր չունիմքն յաւելու. Ո՛յսմ այսուհետև նախանձաւորք լիցուք, և զնորին զհետ ստէպ երթիցուք, զի և ասէն ի պատիւս վայելեսցուք, և ի մշտնջենաւոր փառս հասցուք, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և սուրբ հոգւոյն, փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

" Այլ իբրև մերձ եղեն Յորուսաղէմ, և եկին ի Բեթփագէ և ի Բեթանիա, մօտ ի Լեառն Ձիթենեաց, առաքէ Յի երկուս յաշակերտացն իւրոց և ասէ ցնոսա, երթայք ի գեօղդ որ առաջի ձեր է. յոր իբրև մտանիջք, գտանիջք էշ կապեալ և յաւազնակ ընդ նմին, լուծէք և ածէք ինձ. և եթէ ասիցէ ինչ ոք ձեզ, ասասջիք եթէ Տեն իւրում պիտոյ է, և վաղվաղակի առաքէ զնոսա "։

Ա՛ՆՊԵՏՍ և բազում անգամ էլ Յորուսաղէմ, այլ ոչ այսպիսի սպասուք. քանզի գեռ սկիզբն էր տնտեսութեն, և չէր ինչ ուժք ինքն այնպիսի յայտնի, և ոչ ժամանակ չարչարանացն մերձ էր, վասն այնորիկ խոտն ի խուռն խառնէր ի նոսա. նաև ծածկէր իսկ զանձն, Օ ի թէ այնպիսի ինչ զարմանալի լինէալ էր, և առաւել ի բարկութիւն գրգռէր զնոսա։ Իսկ յորժամ զիւրոյ զօրութեն զգաղում հանդէս եղոյց, և խաչն և եկեալ հասեալ էր ի դուրս, ապա այնուհետև առաւել ցուցանէր պայծառութիւն։ Այս կարի և յայտնագոյն զնմ ցուցանէ, որպ կարի իսկ այրելոյց և կսկծելոյց էին։

Այարձ էր սմին և յառաջնումն իսկ գործել, այլ չէր ինչ յօգուտ։ Այս միտ դիր՝ որչափ սքանչելիք լինէին, որպիսի մարգարէութիք լնուին. " Ցտանիցէք ասէ էշ մի ". և յառաջագոյն ասաց եթէ ոչ որ արգելուցու, այլ թէ յորժամ լսիցեն՝ լուիցեն. նա և այս ոչ սակաւ դատապարտութեն էր հրեիցն. զի եթէ զնոսա՝ որք զնա երբէք ոչ Ճանաչէին՝ հաւանեցոյց տալ յանխնայ զիւրեանց կարասին, և ոչ ինչ դիմագարձ լինել, և այն զի զաչակերտսն ևս յղեաց, և նոքա առ նմա իսկ կային՝ յորժամ զնշանն գործեր, և չհաւատային Այս մի փոքր համարիցիս զիարն որ գործեցան։ Ա՛ հաւանեցոյց զնոսա, զի զիւրեանց անանխիկն առնուին ի նոցանէ. և Թերևս զի աղքատք և հողագործք էին, և լսէին ինչ. Թերևս և

հարցին իսկ ոչ. և կամ Թէ հարցին և չիխեցին Ձիկ հանել, այլ լուռ կացին և Թոյլ եառուն, և երկոքին աքանչելիք էին։ Կամ Թէ չասացին ինչ յորժամ լուծին և առին գնացին. և կամ Թէ ասացին ինչ, և իբրև լուան Թէ նոն իւրեանց պիտոյ են, լուռ կացին և չդարձան ընդդէմ. և այն զի զնա ոչ տեսին, այլ զաշակերտսն։ Նոյնպէս այսու խրատէ զաշակերտսն, Թէ և զհրեայսն կարէր ակամայ արդելուլ և պապանձեցուցանել ամենևին, զի մի կարասցին ամենևին մերձենալ ի նա, այլ ոչ կամեցաւ։

Հանդերձ այսու և այլ իմն ուսուցանէ աշակերտացն Թէ զոր ինչ և խնդրեսցէ ոք, տացին. Թէ բնաւ և զոդիսն իսկ հրամայեացին տալ՝ տացին, և ոչինչ դիմադարձ լինիցին, զի Թէ որք չդիտէին զնա՝ այսպէս Թոզին վաղվաղակի, ոչափ ևս առաւել նոցա պարտ իցէ ամենևին յամ իմաք ԹօԹափել։ Նոյնպէս և մարգարէուէ կատարէր կրկին անգամ; և արդեամբք և բանիւք. արդեամբք՝ նստեալն ի վերայ իշոյ. բանիւք՝ որ ի մարգարէէն Օ աքաքիայ ասացեալ՝ Թէ նստցի Թագաւորն ի վերայ իշոյ, և նստաւ և կատարեաց զմարգարէուԹիւն։ Նոյնպէս և մարգարէուԹէ սկիզբն առնոյր յառաջագոյն նկատեալ որ ինչ յապայ լինելոց էր. և Թէ ոչխարք, և որովք կերպարանօք և զպղծոց հեԹանոսաց կոչումն յառաջագոյն նկատէր, Թէ ի նոսա հանգչելոց էր, և եկեսցեն և տեսցեն. և մարգարէուԹէ ի մարգարէուԹէ առնոյր։

Նայ ինձ այսպէս Թուի, Թէ ոչ զայն միայն նկատիցէ յիշէն նաեէլն, այլ և խոնարհուԹիւն օրինակ ետ մեզ այնու, զի ոչ միայն զմարգարէուԹիւն կատարէր, այլ և կրօնս ՁնշմարտուԹիւն և վարս ցածանաս ուսուցանէր այսպիսի իրօք. և կանոնս և սահմանս դնէ, զի կարևոր և եԹ պիտոյիւքն վարեսցուք, առ ուղղել ամենայնիս զկեանս մեր. վասն այնորիկ իսկ և յորժամ էին ի ծնունդ, ոչ ապարանս գեղեցիկս ընտրեաց, և ոչ մայր մեծատուն և երևելի, այլ աղքատ մի՝ խօսեալ առն հիւսան, և ի խղի միջ ծնանէր. և աշակերտս ընտրէր, ոչ Ձարտարախօսս և իմաստունս, և ոչ բանիբուններ, և ոչ մեծատուններ, և ոչ ազ

նուաքանս, այլ աղքատս յաղքատաց. և ամենայն ուրբք զանիւրան ինչ ինդրեր. զի և զեղանս ինչ, մերթ ի գարեդէն նախանձաց կապմէր, և մերթ առ ժամայն ի հրապարակի դնել հրամայեր աշակերտացն, և բազմականս խոտեղէնս. և հանդերձս գեղեցս առանէր, ոչ ինչ անհատ ի բաղմաց. և տուն բնաւ իսկ չունէր. և ուր ի տեղիս հասանէր երթալ, հետիոտ և առանց իրիք կազմածոյ։ |՝Ս յորժամ վաստակէրն, ուր և հասանէր՝ նստէր. ոչ աթոռոյ պէտք էին, և ոչ բարձի. այլ խառն ի գետնի, երբեմն ի լերինն, և երբեմն առ աղբեւրն, և միայն և ս ընդ հնոջ չամրտացոյ խօսէր։ |՝Ս դարձեալ զոգոյ և զտրտմութենէն չափ ուսուցանիցէ, երբեմն և ընդ միտան արտասուեաց. և ամենայն ուրբք որպէս և յառաջագոյն ասացի կանոնս և սահմանս հաստատէր՝ թէ ցոր վայր պարտ է երթալ, և ըստ այնմ յառաջ չանցանել։ |՝Ս քանզի այժմ բազմաց առ ակարութե՝ զրաստուռ պէտք լինին, և այնմ և ս չափ եցոյց. թէ չէ պարտ ձիս զարդարել, և ջորիս ի կառս լծել և յօրանալ, այլ յիշման և եթ նստել. և ընդ այն առ լի ինչ սիգանս ոչ ինդրել. և ամենայն ուրբք ըստ չափ պիտոյիցն չելանել ըստ կանոնելոյս։

Տեսցուք և զմարգարէութենն որ արդեամբք լցեր, և զմիւսն որ բանիւք։ "|՝Ես թագաւոր քո գայ, հեզ և հեծեալ ի՝ի նոր մարկի։" |՝Ս կառաք ինչ յօ բացեալ որպէս այլ թագաւորք, ոչ հարկապահանջ է, ոչ վարոյաւորք առաջի, և ոչ տիգաւորք շուրջանակի, այլ կարի հեզութե և մեղմական խոնարհութե։ |՝Ս արդ հարցանիցիր ցհրեայսն, թէ որ թագաւոր եմուտ յ|՝ուսաղէմ իշով. այլ գիտեմք եթէ չունին ինչ ասել, բայց թէ զնմանէ ասիցեն։ |՝Ս զայն վասն այնորիկ առնէր որպէս յառաջագոյն ասացի, զի նոր մարկաւն զեկեղեցի գուշակէր. զի որպէս մերում նոր էր և ի պղծոյ անասնոյ, նոյնպէս և ժողովուրդս այս նոր՝ պիղծ և ի պղծոյ. և յետ հանդչելոյ ետն ի վերայ նորա էղե աբ։ |՝Ս տես ա մինևիւն ողջ զօրինակն. աշակերտքն լուծին զէշն և պյատանային. քանզի առաքելովքն իսկ նոքա և մեք կոչեցաք, առաքելովքն և մերձեցաք. և քանզի մեր

ընտրուԹ֊ին արկ նախանձուկս նոցա , վասն այնորիկ և անդ էջն զՀետ գայր մարկին· զի չետ Հանգչելոյն Ա֊ծոյ ի վերայ Հեթանոսաց, ապա եկեսցեն և նոքա նախանձաբեկք· և զայս Պաւղոսի չայտ արարեալ ասէ , " Մինչ կուրուԹի փոքր ի շատէ եղև իսրայելի· մինչև լրումն Հեթանոսաց մտցէ , և ապա ամ֊ բայել կեցցէ ,, ։ Այս զի մարգարէուԹի էր, ի բանիցն իսկ չայտ է· քանզի ոչ այնչափ ինչ փոյԹ էր մար֊ գարկին և զտիս և այս իշոյն ասել , եԹէ ոչ այսպիսի ինչ գործք գործելոց էին· և ոչ զայն միայն գուշա֊ կեր բանիւքն , այլ Թէ դիւրաւ և ածիցեն զՀեթա֊ նոսս առաքեալքն ։

Օ֊ի զոր օրինակ անդ չդարձան ընդդէմ և արգե֊ լին , սոյնպէս և զՀեթանոսս ոչ ոք կարէ արգելուլ չայցանել՝ որք չառաչ ուՆին զնոսա ։ Այս ոչ ի կրմը֊ ղից վերայ նստեր մարկին , այլ ի վերայ Հանդերձից առաքելոցն· և քանզի առին զմորուՀն , ապա և զայմ չնորՀեին· որպէս և Պաւղոս ասէ , եԹէ " Այս ա֊ ւետԹելով ծախեցից և ծախեցայց ի վերայ ան֊ ձանց ձերոց ,, ։ Այնչափ դիր և զգօնուԹէ մարկին , զի կրմուղ էր և սրմուղ , և խամր իսկ ի սանձաց , և չքաչքնէր ինչ և ոչ անգուչէր , այլ մեղմ և Հան֊ դարտագոյս գնայր· որ և այն իսկ մարգարէուԹէ էր Հանդերձելոց ինչ իրաց , Թէ զիարդ Հանդարտե֊ լոց էին Հեթանոսք , և չանկարծակի չարգարելոց· և զայմ ինչ այն բան առնէր՝ զոր ասացն , Թէ " Լու֊ ծէք և ածէք ինձ ,, ։ Այանզի այսուՀետև ատաՀկէն նուաձՀէին , և պիղծքն չբք լինէին ։ Այս տես զվատ֊ ԹարուԹէն Հրէիցն՝ զի այնչափ նշանք գործէին , և եր֊ բէք այնպէս ինչ ոչ զարմանային ։ Այս իբրև տեսին եԹէ ժողովուրդք բազումք ընԹանային ասսի և ան֊ սի , չայնժամ զարմանային ։ " Ո՞ արժեցաւ , ասէ , քա֊ զաքն այս և ասէ , ոմն իցի սա· Ա և ժողովուրդքն ա֊ սէն , սա է մարգարէն Ա֊ծո՝ որ ի Ա֊ազարեԹէ գալի֊ լեացւոց ,, ։

"Այլ իբրև այգ եղև, ասէ, մինչդեռ անդէն ի քաղաքն ելանէր՝ քաղցեաւ,"

ՕՐԻՐԴ՝ այգուցն քաղցնոյր։ Յորժամ Թոյլ տայր մարմնոյն, յայնժամ զգայր իւրոյ կարեացն։ "Այտես Թզենի մի առ ձանապարհաւն, և եկն ի նա և ոչ ինչ եգիտ բայց միայն տերև," · իսկ միւս աւետարանչին ասէ, Թէ "Ուեր իսկ ժամանակ," · և միւս աւետարանչին ասէ, Թէ "Այհն, զի Թերևս գտանիցէ ի նմա պտուղ,"։ Աստի և յայտ իսկ է, Թէ ըստ աշակերտացն կարծեաց էին իբրև. քանզի դեռ ևս Թէ բակատարք էին։ Ի զկարծիս աշակերտացն ընդ քաղցումն տեղիս գրեցին աւետարանիչքն։ զոր օրինակ ըստ կարծեաց նոցա էր նոյնպէս և կարծէին, եԹէ վասն այնորիկ անէծ՝ զի ոչ եգիտ ի նմա պտուղ։ Այլ արդ՝ վասն էր անիծանէ. սակս աշակերտացն, վասն զի քաջալերեսցին։ Այանգի ամ ուրեք բարեբարուԹիա ևԷի եցոյց, և ոչ զոր պատժեաց, պարտ և պատշաճ էր և զպատժական զօրուԹէ իւրոյ ցուցանել զՀնդիա. զի ուսանիցին աշակերտքն և ՀրեշտակքնեԹէ կարող Է սատակել զհաչահանունսն. բայց զի կամաւ գայր յայն, ներէ, և ոչ ցամաքեցուցանէ. և ոչ կամէր զայնպիսի ինչ ի մարդիկ ցուցանել, այլ ի տունկս, կամ ի տեղիս ուրեք, և երբեմն յանապատսնս։ Այս արդ՝ մի զայն ձգիս փոքր համարիցիս, Թէ ընդէր վայրապար ցամաքեցաւ Թզենին՝ զի չէր ժամանակ պտղոյ. քանզի զայնպիսի ինչ խորհէ՝ կամ ի իսկ զաղփաղփուԹէ է. այլ ի սքանչելիսն նայեաց, և փառաւորեսւ զաբանչելագործն։ Այանգի և վասն խոպիցն՝ որք ընկղմեցան, բազումք այնպիսի ինչ առցոփուԹէ խօսեցան, որպէս իրաւացի ինչ բանս պահանջելոյն։ Այլ չէ օրէն այնպիսեացն միտ դնել. զի և նորա անասունն անիսօսք էին, որպէս տունկն՝ անշունչ։ Այս անիծիցն կերպարանք, ասեն, ընդէր կացեն առ ընԹեր։ Այրպէս և վերագոյնն ասացի՝ Թէ

այն ըստ աշակերտացն կարծեաց։ Այլ զի չէր ժամանակ, ոմանք վասն օրինացն կարծեցին։ Այլ օրինացն գոյր պատուական հատատքն. և ժամ իսկ էր պաղոյն անտրիկ, և հասեալ իսկ էր պատուճն, ըստ այնմ՝ Թէ արտոյքն անդէն սպիտակացեալ են, և՛ի հունձս հասեալ. և ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաստակեցէք։

Այլ զայն ինչ ակնարկեաց այսու, այլ զպատժաւորսն բանսն զօրուԹիւն յայտ առնէ, որպէս վերագոյնն ասացի։ Այլ զայն՝ յասելոյն, Թէ չև ևս էր ժամանակ, յայտ առնէ, Թէ ոչ վասն քաղցի ինչ եկն անդ, այլ կարի վասն աշակերտացն զարմանալոյ. Թէպէտ և բազում ինչ նշանս՛ի վաղուց հետէ լեալ էին մեծամեծք, այլ այն իմն նոր էր՝ զի յայնժամ եցոյց զպատժաւորս զօրուԹիւն. վասն որոյ և ոչ յայլ ինչ առնէ, այլ որ քան զնմա ինչ դալարագոյն է՝ եցոյց զաքանչելին. զի այնու իսկ առաւել յայտնի լիցի զօրուԹիւն, և ուսանիցին՝ Թէ վասն նոցա եղև այն, զի զնոսա՛ի քաջալերուԹիւն կրԹեսցէ։ Այլ զի այս այսպէս իցէ, լուր յայնոցդացն. և դուք, ասէ, մեծամեծ գործիցէք, եԹէ կամիջիք հաւատալ, և աղօԹիւք խոհալեալ։ Տեսանես՝ զի վասն նոցա եղև այն ամ, առ՛ի չզանգիտել և չերկնչել՛ի հնազանԹից։ Վասն որոյ և կրկին անգամ իսկ զնոսն ասէ, առ՛ի յորդորել և՛ի պնդել յաղօԹս և՛ի հաւատս, եԹէ ոչ միայն զայս առնիցէք, այլ և զլերինս ևս փոխել իցէք. այլ և մեծամեծս գործիցէք՝ հաւատովք և աղօԹիւք քաջալերեալ։

Այլ ուսուցեալ հրեայք ընդ մէջ կտրել կամիջին զվարդապետուԹիւն. մատուցեալ Յարցանէին, "Որո՞վ իշխանուԹիւն գործես դու զայդ". քանզի զնշանսն պարտաւել ոչ կարէին, զվաստականացն մերժելոց՛ի տաճարէն զիրսն՛ի մէջ բերելին։ Այլ յայսիսի ինչ ասէին. մի Թէ զվարդապետուԹեանն աճուռն առեր, կամ քահանայուԹեան ինչ պատիւ ունիցիս, զի այդչափ իշխանուԹիւն ցուցեր. Թէպէտ և ոչ ինչ կարի ձնհատուԹիւ, այլ հանդարտուԹիւ առնէր սպաս տաճարին։ Այլ սակայն՝ քանզի այլ ինչ չկարէին ասել, այնու իմն բիծս կարկատէին. և մինչ դեռ հանէր,

չիշխէին ինչ ասել՝ վասն պէսպէս նշանացն. իբրև միաւորեցաւ երեւեցաւ անդ՝ յայնժամ սկսան սասանել։ Յովսեփոսի ինչ և ի Յովհաննու աւետարանին Տարցանէին. Թէպէտ և ոչ սովին բանիւք՝ այլ սովին մտօք. զինչ ինչ նշան ցուցանես մեզ՝ զի զայդ գործեցեր։ Այլ անդ զայն պատասխանի առնէ, «Լաւ կեցէք զառաջս զայս, և ես յերից աւուրս յարուցից զսա»։ Այս ասաց ի տարակոյս ինն արիանէ զնոսա. ուստի և յայտ իսկ է, Թէ անդ դեռ սկիզբն էր, և առաջին էր սքանչելեացն, և ասա վերնման։

Այդ զինչ գործիցէ. ոչ ինչ ուղղութիւն պատասխանի առնէ. զի ցուցցէ, Թէ կամին կարող են տեսանել զխանութեն նորա. այլ անդէն ընդդէմ Տարցանէ. «Կրտաւթեն Յովհաննու, ասէ, ուստի էր. յերկնից, Թէ ի մարդկանէ»։ Օ՛ի այս ինչ ի դէպ իցէ առ այն՝ որ Տարցինն։ Այս կարի իսկ քաշ ի դէպ. զի Թէ ասիցեն, Թէ յերկնից, ասէ ցնոսա, իսկ դուք ընդէր ոչ հաւատացէք նմա. զի Թէ հաւատացեալ էր՝ ասա չՏարցանէին զայս. քանզի նա վասն նորա ասաց, Թէ «Ոչեմ բաւական լուծանել զկօշս կաց նորա»։ և Թէ «Հաւասիկ գառնն, որ բառնայ զմեղս աշխարհի»։ և Թէ «Այս է որդի Այ»։ և Թէ «Որ ի վերուստ եկեալ է, ի վերոյ է քան զամէն. որոյ հեծանոցն ի ձեռին իւրում է. և սրբեսցէ զկալ իւր»։ Արդարև զի եթէ հաւատացեալ էր նմա, էր ինչ արգել ի միջի տեսանել, Թէ որովհետև խանութեն առնէր զայս։

ՑՈՐԴՈՐԱԿ

Յաճախեալ առաւել ևս յաձախին չարիք, և այժմ զամենս տեսանեմ այնպիսի ինչ կրեալ յայնպիսի անհանձարութենէ։ Այլ մի որ լինի այնպիսի. այլ եթէ յանհնարին չարիս անկանիցի, մի անյոյս լինիցի և ի լաւութեն դառնալոյ. քանզի դիւրին է ի խորխորատից չարեաց ելանել միաւորեալ ի ծառ ծաղ։ Ընտիցեք. զիարդ պատնէին՝ որ զամենեքումբք

անցուցանէր աղտեղութիւն, զամենեսեան ծածկեաց եւ կիւղածութիւն. ոչ զայնմանէ՝ որ յաւետարանին՝ ասեմ, այլ զայնմանէ՝ որ առ մերով դարուս ի փիւնիկեացոց ի կարի անօրէն քաղաքին էր։ Վանզի նոյն պոռնիկ ի մերում քաղաքիս երբեմն՝ պոռնկաց կայր առաջինն, և ընդ բազում տեղիս անուն կայր, ոչ ի մերում քաղաքիս միայն, այլ և ի կիլիկեցւոց աշխարհին և ի գամիաց. և բազում ինչս զրաղմանց ծախեաց, և բազում որքս պատրեաց։ Այս ոմանք ի կախարդութիւն ևս բամբասեն զնա. որպէս զի ոչ մարմնով միայն գեղով, այլ և բժժանօք իմն մանկունս զայնպիսի լարս։ պատրեաց երբեմն բոզն այն և ըզբամբշանն իսկ զեղբայրն. զի այնպէս սաստիկ իմն էր դժոգակութիւն։

Այլ թէ զիա՞րդ վաղվաղակի, զայն ոչ գիտեմ, մանաւանդ եթէ գիտիցեմ իսկ Ճարտար, քանզի կամեցաւ և դարձաւ, և զայ չնորհն յիւրն ամիսոփեալ՝ արհամարհեաց զայն ամ, ի բաց ընկեց զնմ չար մեքենայք սատանայի, և յերկինս դիմեաց։ Վնէպէտ և չէր ոք այնպիսի նշաւակ՝ մինչ ի բոզանոցն էր, բայց սակայն յետոյ զգաղում կանամբք անց ժուժկալութեն առաւելութիւք. քրձազգած և մոխրատարած խշտեաւ զնմ աւուրս կենաց իւրոց կրօնաւորբէր։ Ոմանն նորա և հազարապետն ի պատուհաս եմուտ, և զօրականքն վառեցան, և չկարացին անդրէն միւսանգամ ի բոզանոց ածել. և ոչ ի կուսիցն կուսանոցաց՝ ուր ընկալան զնա, բռնադատել հանել։ Այս և անձառ խորհրդոյն իսկ արժանի եղև, և ըստ չնորհացն արժանի փոյթ ցուցանելոյ. և այնպէս եհան ի գլուխ զնմ աւուրս կենաց իւրոց՝ լուացեալ և սրբեալ չնորհօքն, և յետ միրտութեն ցուցեալ բազում զգաստութեք, և ոչ բնաւ ակամբ տեսանելոյ առնէր արժանի զառաջինն հոմանիսն. որ ոչ յայն գային, այլ վասն ցածութեն զարմանալ. այլ արդելեալ զանձն բազում ամն իբրև ի բանտի ուրեք՝ հանէր ի գլուխ։ "Այս այսպէս եղեցին յետինք առաջինք, և առաջինք յետինք։" Այս այսպէս

1 Յորինակին ի՛ն նմանէ տպագիր ու։

ջերմագոյն ոգւոց [1] ամ ուրեք պէտք են մեզ, և չիցէ
ինչ արգել՝ լինելոյ մեծ և աքանչելի։

Եւ այսուհետեւ մի որ ի չարէն է՝ անյոյս լինիցի,
և որ յառաքինութենէն իցէ՝ ներհուեցեալ, և յայն ինչ
ապաստան լինիցի. զի բազում անգամ թերեւս պոռ-
նիկն անցանիցէ զնովաւ։ Ի զանգիտիցես. քանզի
մարթի և նմա զառաջնովքն անցանել. լուր զինչ ա-
սէ ած յերուսաղէմ. "Լացայ, ասէ, յետ այնչափ
պոռնկութեանն նորա, թէ դարձ առ իս, և ոչ դարձաւ ",
Եթէ ի սէրտ սէրն այ միւսանգամ դառնայցեմք,
չտիշէ զառաջինն. քանզի չէ իբրեւ զմարդ որ ած,
և ոչ նախատէ առաջնովքն, և ոչ ասէ՝ թէ ընդէր
այսչափ ժամանակս յամեցեր, եթէ ապաշարիցեմք.
այլ սիրէ, թէ միայն մերձենայցեմք՝ որպէս պարտ է
մերձենալ։ Ի ատիցուք և սաստիկ մածցուք ընդ
նմա, և բեւեռեսցուք զմարմինս մեր ընդ երկիւղս
նորա։

Լսեսիսի ինչ՝ ոչ ի նորումն միայն գործեցան,
այլ և ի հնումն. ո՞ որ չար էր քան զԻ՝անասէ, այլ
կարաց հաշտեցուցանել զած. և ո՞վ որ երանելի քան
զՈզովմնի, այլ նիրհեալ անկաւ [2]։ Լա և զերկոսին
իսկ ի միում գործեալ կարեմք ցուցանել, ի հայրն [3]
սորին՝ որ մերթ բարի և մերթ չար եղեւ։ Ի՞ որ ե-
րանելի քան զՅուդա կայր, այլ եղեւ մատնիչ. ո՞ որ
եղուկ քան զԻաւղոս, այլ եղեւ առաքեալ. և ո՞ չար
քան զԻ՝ատէոս, այլ եղեւ աւետարանիչ։ Լաւ ծր-
չասի և այլ ևս այսպիսի փոփոխմանս ի տեսանել՝
թէ կամիցիս, և վաղուց գործեալս, և այժմ իսկ
լինին զօրհնապաղ։ Ի ասն այսորիկ ասեմ, եթէ մի
որ ի բոզանոցին իցէ՝ անյոյս լինիցի, և մի որ յեկե-
ղեցւոջն՝ յայն ինչ ապաստան. քանզի և ցսա ասէ,
թէ "Ի՞ուրմ թուիւն եթէ կայցէ, զդայլ լինիցի՝ գու-
ցէ անկանիցի ". և ցնա, "Ի՞ եթէ որ անկանիցի,
չյառնիցէ ". և դարձեալ թէ "Օ՞ ձեռս լքեալս և
զծունկս կիմուցեալս հաստատեցէք "։ Լաւ դարձեալ
ցսոսա ասէ "Ի՞ղթեան կացէք ". և ցնոսա, "Ի՞ղի որ
ննջեսջ, և կանգնեսա ի մեռելոց "։

1 Յօրինակին պակասէր ոգւոյ՝ ներհուեալ անկաւ։
2 Յօրինակին պակասէր սկ 3 Յօրինակին ի հաւ։

Սոքա զգուշանալ պարտին այնմ՝ զոր ունիցինն. և նոքա՝ լինել՝ ինչ չիցեն. սոքա՝ պահել զառաջնու-թիւն, և նոքա՝ ապաքինել յախտէն, քանզի՝ ի ցաւս կան. այլ բաղումք և՝ ի հիւանդաց ողջանան, և յաղ-ջոյն՝ ծուլացեալք անկանին՝ ի հիւանդութիւն։ Ոչնո-սա ասէ, "Ի՛հաւատիկ ողջացար՝ մի՛ և մեզանչեսս, զի մի՛ և չար ինչ լինիցի քեզ,,. և յոսոա "Լո՛ կա-միս ողջ լինել, այլ ա՛ռ զմահիճն քո, և գնա՛ ի տունն քո։ Չար խակ և կարի չար անդամալուծութիւն էին մեղք. մանաւանդ թէ ոչ միայն անդամալուծութիւն, այլ և չար քան զայն. զի ո՛չ միայն՝ ի գատարկութիւն՝ ի բարութենէն է պրպտիսին, այլ և՝ ի գործ չարեացն։ Կայր սակայն թէպէտ և այնպէս չարեաւ զգածեալ իցես, և կամիցիս սակաւ մի կազդուրել, ամենևին խակ՝ ի բաց մերժեսցին կարկին։ Լո՛ւպէտ և զերե-ռուն առ յախտին կայեալ իցես, և փութասցես լի-նել ողջ, չիցէ ինչ որ արգել լինիցի. մծատ է և այժմ ՚Ի՛ա. ասէ և արդ "Ի՛ա զմահիճն քո, և գնա՛,. միայն թէ կամիցիս յառնել, զանգիտիցես։ Զգու-ցէ պահակ, այլ ունիս զնա՛. չիցէ ոք որ յաւազան իջուցանէ, այլ կայ այն՝ որ չառնի կարօտ յաւազան իջուցանելոյ. չիցէ ոք՝ որ զքեզ անդրկեն ընկենուցու-ս. այլ ունիցիս զայն՝ որ հրամայ տայցէ, ա՛ռ զմահիճն քո, և գնա՛։ Ահա՛ ասէ՝ թէ մինչ ես դանդաղիմ, այլ և վաղագոյն իջանել։ Ի՛թէ կամիցիս իջանել յաղբերն, չէ ոք որ արգելուցու. չծախին չնուա-ղին ջուրքն. քանզի իբրև զաղբերն ինչ ցանկ զղեխ, և՝ ի լրութիւն նոքա ամենեքին բժշկիմք հոգւովք և մարմնով։

Ա՛տաւիցուք այսուհետև և մեք այժմ. քանզի Ա՛ա-խաբ պատնիկ էր՝ և ապրեցաւ. և աւազակն՝ մար-գասպան, այլ դրախտին քաղաքացիք եղև։ Ա՛ր ընդ-վարգապետին էր կոչեաւ, և որ՝ ի խաչին կայր՝ ա-շակերտ եղև. քանզի այնպէս են հրաշակերտք [1] այ. այնպէս և մոգքն հաձոյ եղեն. նոյնպէս և մաքսաւորն աւետարանիչ եղև, և հայհոյիչն առաքեալ։ Ա՛ր ընդ-այն հայեաց, և մի՛ երբեք անյոյս լինիցիս. այլ քա-

1 Յորինակին հրշ-ով։

ջաւերեաց և զուարճացո զանձն, միայն ի ձանձրացմանէ անկիր, և վազվազակի երթայցես յառաջ. մի զգուշն փակիցես, և մի զմուտն ինուցուս. կարճ է ժամանակ աշխարհի, և սակաւ ինչ աշխատութեամբ։ Այս եթէ բազում ինչ էր, սակայն և այնպէս չէր պարտ զանգիտել։ Վասն զի և չաշխատիցես զբարւոք աշխատութեամբ զապաշխարութեամբ և զառաքինութեամբ, սակայն այլազգ հասանիցէ աշխատել և տառապել յաշխարհիս. իսկ եթէ աստի և անտի աշխատութեամբ իցէ, ընդ երկայն զայն չահորժիցեմք՝ յորժամ բազում շահք իցեն, և մեծամեծ փոխարինիք։

Այս և չէ այս և այն աշխատութիւնս միապէս. զի յերկրաւորսս սաստիկ վտանգք և յաձախ վիշապք, և յոյս անյայտ, և բազում ծառայական սպասք [1], և ընկից և մարմնոյ և ոգւոց ծախք. և ապա տոհմականացն հատուցումն կարի քան զյոյսն նուազագոյն դայցէ. քանզի ոչ ՚ամ ուրեք բերէն պտուղ երկրաւոր իրաց քրտունք։ Այլոյ սակայն ՚ի կէսպէս և ՚ի վերինսկից՝ այլ յոյժ բերէ զտոհմականսն, սակաւ ինչ ժամանակս պահի. զի յորժամ ծերանայցես, և չկարիցես այնուհետև զքաջ վայելելոցն համ առնուլ, յայնժամ բերիցէ քեզ փոխարէնս. ժամանակին աշխատութեամբ յաստիս [2] մարմնոյ. պտուղն և վայելք ՚ի ծերութեան՝ և յանցեալ ժամանակի, յորժամ զնոսին առնուլ՝ իսկ եղծանիցէ ժամանակն. եթէ չեղծանիցէ և, սակաւ վախճանին կասկած չտայցէ ՚ի հանգստեան վայելել։

Ոչ այսպէս ինչ, այլ աշխատութեանն յապականութեան, և ՚ի վախճանել մարմնոյն. և պտուղն յանծերակատս և յանմահս և յանսպառս։ Այս աշխատութեան՝ և կանուխ և անագան. իսկ հատուցումն յետոյ և անսպառական, զի հանգստեամբ վայելեցես այնուհետև։ Ընտիրս ինչ անդ ումեք չահորոժականի [3]. քանզի չէ այնուհետև ՚ի փոխանմանց և ՚ի վերիսկից կասկածել։ Զինչ իսկ այս բարութիւնք իցեն. չյուսալիք և ժամանակեանք և կաւեղինք, որ միանչեւ երևեալ՝ ապականի. և բազում աշխատու-

1 Յօբինակին պատուէ։ 3 Յօբինակին անորոշութեան։
2 Յօբինակին յոյս պէս.

թէ հասանէ ստանալ։ Օ՛րինչ հանգոյն անչարժ և անեղծական բարութեանցն իցէ. ուր չիցեն աշխատու-թիւնք, և ոչ ժամանակաց պատերազմունք քեզ զպատ-կէն մատուցանիցեն։ [1]՝ որ զինչսն արհամարհիցէ, և աստէն իսկ վարձս առնու՛ի հոգւոց ազատել, ՛ի խան-դուլթէ և ՛ի զզալարտութէ, ՛ի նեղութէ և ՛ի նա-խանձուէ։ Որ զդաստանայն և պարկեշտութիւն կեց-ցէ, նախ քան զաստի անդր երթալ՝ պակիցի, և ՛ի բարութեան վայելէ. զի ՛ի խայտառակութէ և ՛ի ծաղր կալոյ, և ՛ի վշտաց և յամբարտաւանութէ, և յայլն ևս յիմ՛ չարեաց յապահով է. և զայլ ևս նոյնպէս զառաքինութեն տայ մեզ զաստէն փոխարէնս։ [1]Յոս-հետև փախուցեալք ՛ի չարեաց՝ բուռն հարցուք զա-ռաքինութէ [1]. զի և աստէն և հանդերձելոց բարու-թեցն հասանիցեմք, շնորհօք և մարդասիրութիւն տեն մերոյ Յիսի Քրիստոսի, որում փառք և իշխանութէ յա-ւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին Աստուածաբան ի և ասէն։

Ի ՎԵՇՏԱՍՏԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԵՆ

ԳՈՐԴՈՐԱԿ

Լ ՈՒՐՈՒՆԻ զայս որք 'ի խորհուրդն վայելէք [1], և աղտեղի հանդերձիւք յայսպիսի հարսանիս գայցէք, զգեցուցեալ զոգիս աղտեղի գործովք։ Ցեսէք, ուր՝ տի կուգայուք. 'ի Հանապարհակցաց. և այն պի կաղք ևս հաշմ եիք հոգւովք, որ ևս չար քան մարմնով խեղուեցիս է։ Կին ածիցէք 'ի մարդասիրութէ այնորիկ որ կուգաց, և մի ոք 'ի նոյն աղտեղի հանդերձս կայցէք հանապազ. այլ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ քննեսցէ զպատմուհան ոգւոյն։ Ուարմանք կանայք, լուարմանք արք. ոչ ոսկեհուռ հանդերձիցն պէտք էն մեզ, այլ ներքին պատմուհանաց. մինչ զայս ունիցիմք, այնու զարդարել զժուարին է. չէ հնար միանգամայն զոգիս և զմարմինս զարդարել. չէ հնար միանգամայն մանինայի ծառայել, և Քրիստի հնազանդել՝ որպէս պարտ է. ընկեսցուք 'ի բաց զդժնդակ բռնութիւնն։ Կայ և ոչ թէ և զտուն ոք զարդարէր, և ոսկեհուռ սրահակ ձգէր, և քեզ կարկատուն կապերտօք տայր մերկ և ծանակ 'ի ներքս նստել, ախորժելով յանձն առնոյիր. և ահաւասիկ դու քեզէն իսկ անձամբ ընդ քո ոգիդ զնոյն գործ գործես. զմարմինդ իբրև զտուն բաղում սրահակօք զարդարես, և ոգւոյդ կարկատուն կապերտօք տաս 'ի ներքս նստել խայտառակ։

Ձգիտիցեն թէ Թագաւորի՝ քան քաղաքին վայել է առաւել զարդարել. նմին իրի իսկ քաղաքին սրահակք 'ի կտաւոյ գործին, և Թագաւորին պատմուհան 'ի ծիրանեաց, և Թագն յոսկւոյ և մարգարտոյ և յականց պատուականաց. նոյնպէս և դու զմարմինդ չափ հանդերձիւք զգեցիր, և մնացդ զծիրանի պատմուհանին, և զոսկեհն ականակալ դիր 'ի գլուխ, և նստիր 'ի կառս բարձու և յամենապայծառս. դա

[1] Յօրինակին հղձեալ էր 'ի խուխուրդն վայելէք։

աւադիկնմին հակառակ՝ անուղղայ իմն գործս գործեաս, և զբաղաքդ պէսպէս զարգուք զարդարեաս, և զԹագաւորն Թողեալ և ընդվայր իմն ընդ երկիր քարշեալ և խեղդեալ, զհետ անհանգար կարեացդ ձգեալ երթեալ պակչոտեալ։ Ողանունս ՚ի միտ, զի ՚ի հարսանիս կուեցար, և յայ հարսանիս. չածխցես զմտաս, Թէ զիարդ յայսպիսի առաջատ պարտ իցէ ոգւոյն մտանել. յոսկեհուռ, ասէ, քզնցաւորս զարդարեալ և պատուհասեալ։

Այսմիս զի ցուցից քեզ զայնոսիկ՝ որ այնու զարդու զարդարեալ իցեն, որ զհարանեաց զհանդերձն ունիցին. յիշեա զքեզն՝ զոր յառաջագոյն խօսեի. որ զայծեաց զհանդերձն ունիցին, և յանապատն բնակեալ իցեն, նոքա առաւել ունիցին զհանդերձս հարսանեացն։ Այս յայտ անտի է, զի օրշափ ծիրանիս տայցեն նոցա՝ չունին յանձին առնուլ, այլ զոր օրինակ եթէ Թագաւորի՝ զաղքատի ոք ցնցոտիս հրապայիցէ ոք ագանել, և նա յայնմանէ զարշիցի, նոյնպէս և նոքա ՚ի նորին ծիրանեացն։ Այս ոչ այլ ուսուտեք չախորժելիս զայն՝ այլ զի զիւրեանց պատմուճանն գեղեցիկ քան զայն համարին. վասն այնորիկ զծիրանի քղամիդն անդոհանիցին, և իբրև սարդիոստայն կնատաճորձ հաշուին, և զայն՝ նոցա քուրձն ուսոյց. քան զԹագաւոր իսկ երկրաւոր՝ բարձրագոյնք են, և առաւել պայծառագոյնք։ ԱյԹէ կարասցես զդրունս տաճարին բանալ, և ընդ ոտիսն նոցա ոձով մանը հայիլ, և ընդ նեբրին զարդն ՚ամ, Թէպէտ և բերանս հարկանիցիս, չկարիցես ՀառաջայԹից գեղեղկուԹեցն նոցա ժուժալ, և ոչ հանդերձից մեծապայծառ լուսաւորուԹեց, և ոչ ՀառագայԹից պզոյն ՚ի խղճէ մտացն նոցա։

Ունեաք և զչին արանց աւադաց և զարմանալեաց ասել, այլ քան զի զԹանձրամիտսն երևելի ինչ օրինակք առաւել յորդորին, վասն այնորիկ զձեզ ՚ի խորանս պզոյն առաքեմ, ուր ոչն գոյ աներևոյթ տրտմական ինչ, այլ քան զի յերկինս Հաստատեցին զտապաւարս, ՚ի բացէ աստի յաչխատուԹէ կենացս Հաբրին զխորանս, և զօրաժողով գումարեալ են ընդդէմ սատանայի, և բակ առեալ Հակառեալ մարտնչին

ընդ նմա. վասն այնորիկ զնուազն չինեցին, զի ի քա-
ղաքաց և ի տանց և ի հրապարակաց փախչիցին.
քանզի պատերազմողին չմարթիցի ի տան նստել,
այլ պարտ է վարկպարագի ինչ գլխոյ դադար շինել,
զի իբրև յաւուրս և յայթիւ և ի Թափչս կայցէ ի
բնակութենն։ Նմանիսիք են նոքա ամենեքին առ
մեզ. զի մեք ոչ եթէ իբրև ի բանակի ուրեք բանա-
կեալք, հիմունս հաստատունս արկանեմք և տպա-
րանս բարձրաբերձս շինեմք, զի յետ սակաւ մի ժա-
մանակի Թողուլ հասանիցէ։ Զի՞ոք ոք անդ այնպիսի,
այլ Թէպէտ և մնաբերիցէ ոք՝ իբրև զմահիճ և
զբիլ և զտարագիր արտաքս ելանել։

Ո՞ր ի բանակս զօրականացն անդս երկրի գնեալ
ցէ, կամ նիւթս վաճառականաց աղխաղնիցէ,
չէր ոք չէր ուրեք։ Նա կարի իսկ յիրաւի և նման
նագոյնս։ Ի պատերազմ եկիր, ասէ, և ոչ վա-
ճառս ինչ վաճառել, զի այդչափ ոգորիցիս վասն
տեղւոյդ, զոր յետ սակաւ մի ժամանակի Թողուլ
հասանիցէ. յորժամ յաչխարհ երթայցէք, զայդ
անդ արասջիր։ Օ՜նոյն և այժմ ասեմ ցքեզ. եթէ
յորժամ ի մեք քաղաքն հասանիցէ երթալ, յայն-
ժամ զայդ անդ կազմեսջիր. մանաւանդ Թէ չհա-
սանիցէ ինչ քեզ այնուհետև աչխատ լինել, զի Թա-
գաւոր ինքնին զնմա կազմիցէ։ Վասն գոս ինչ
սակաւ շուրջ հատանել բաւական է, և ձորիս կանգ-
նել, ի վերայ գլխոյդ սակաւ մի գՀովանոցական գոր-
ծել. այլ շինուածոց և ոչ մի ինչ պէտք են։ Ցնա,
գիարդ վաչիքն և սայլիքն սկիւնաթացուց աչխարհին
կեանքն վճարին. գիարդ ըստ Ճարակացն ևեթ փո-
փոխեն. այսպիսի կեանս պարտ է կեալ քրիստոնէից.
ընդ աչխարհս շրջել, և ընդ սատանայի պատերազմ
տալ. զգերեալսն ի նմանէ արձակել, զվատաբանիսն
ի դիւրութենէ հատուցանել, և յամէ երկրաւորացս
ազատել։ Օ՜ի շինեցեալս տպարանս, ով այր դու, զի
առաւել զանձն կապիցես։ Ինդէր փորես զերկիր,
և դնես գանձս, զի Հակառակ անձինդ պատերազմ
կոչիցես։ Ինդէր ածիցես պարիսպ, և կազմիցես ան-
ձամբ անձին բանդ։

Նա եթէ դժուարին ինչ Թուիցի քեզ այս, եկ

երթիցուք յայն տաղաւարս. զի և արդեամբք իսկ ուսանիցիս զդիւրութիւնն, [1]զոր ևեթ չինեցին. և եթէ չուել հասանիցէ, այնպէս թողուն և չուին, որպէս զօրականքն ի խաղաղութեան զանակին Թուրքացուն և գնայցեն. քանզի այնպէս բանակեալ են. մանաւանդ թէ և աւելի ցանկալի տեսիլ տեսանել լիցէ. քանզի և ցանկալի իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականօք, վարկպարագի խուրանօք խիտ առ խիտ [2]եւ ի [2]եւ հարեալ ձիովն ի ձիոն զապարմանցն [3]եւս խառնեալ, քան զզօրականացն բանակի. ուր սրահակք ձգիցին, և ըզտէգս և զգեղարդունս կանգնեսցեն, և զբնիցն գեղարգեանցն զաղեղնակապարձս կախիցեն, պղնձապատ զդլուխն առնիցեն, և մեծապայծառ լինի կրմբեայ վահանացն փայլիցեն, և կողինաւորք և զրահապատք շողայցեն. [4]թագաւորին սպաս առնիցեն ի դաշտի ուրեք, ի հարթ և յողորկ վայրի, և ձաշք զձաշս մղիցեն, և ընթրիք զընթրեօք անցանիցեն, գուսանք երգիցեն, փողարք զձայն փողոցն նուագիցեն. [5]Սակայն և այնպէս չիցէ գեղեցիկ տեսիլն քան զայն զորմէ այժմ ես պատմեմ.

[1]Եթէ երթիցուք յանապատն, և տեսանեմք զ[1]ոչ զօրականացն զխորանսն, ոչ սրահակս ձգեալս տեսանեմք անդ, և ոչ շողոշմս գեղարգանց, և ոչ խոբանս ոսկեզօծս աբբունեաս. այլ այնպիսի ինչ, եթէ ոք յերկրի և առաւել և այնչափ երկայնագոյն այլ երկիր գործեր, և ի վերայ բազում երկինս ձգեր, ոչ ապաքէն նոր ինն և չքնաղ տեսիլ ցուցաներ. նոյնպես և անդ է տեսանել. [2]Ով ինչ ընդհատ յերկնից բնակութիւնն նոցա. քանզի և առ նոսա հրեշտակք իջանեն, հրեշտակապետացն տէրն. զի [3]եթէ առ [1]քրահամ եկն, որ կին ունէր՝ և որդիս մնուցանէր, քանզի եռես եթէ հիւրասէր է. յորժամ և առաւել առաքինութեի ուրեք գտանիցէ, զմարդն ազատեալ յերկրէ, և ի մարմնի զմարմինն արհամարհել, ոչնչափ և առաւել և անդ բնակեսցէ. և պար առեալ շրջիցին ի միջի նոցա գունդք հրեշտակաց. քանզի և նոքա այնպէս կազմեցին զանձինս՝ որպէս և նոքա հաձոյ էր,

Այս և սեղանք նոցա պէս են ի բաղում ագահու-
թէ, և լի ամենայն գգաստութեբ. ոչ արիւն նոխա-
զաց հեղու առ նոսա, և ոչ միս պատրաստակաց յօշի և
բաշի. ոչ ծուխք և ձննձերք չախոժելիք, ոչ այր
և անդր ընթանալ, և խռովմունք և աղմկք և ա-
զաղակ տարաժամ. այլ հաց միայն, և ջուր կամ ի
խաղից ինչ և յստակ աղբերց, և կամ ի ձեռաց
ինչ յարդարութեբ վաստակոց գՋրնեղնն փորել։ Այս
եթէ յօրվագոյնս ինչ կամիցին ուտել, զվայրենի
մրգիկս առնեն զբօսանս. և անդ առաւել ուրախու-
թիք կայցեն քան ի սեղանս թագաւորացն. զի չիք
անդ երկիւղ և ոչ կասկած, և ոչ իշխան եկակոչ
առնէ, և ոչ կին զայրացուցանէ և որդիք թախանձ
ձեն, ոչ թոռունք տրտմեցուցանեն, և ոչ ծաղր լկտի
մեղկէ, և ոչ բազմութի սուտակասպասաց հոլարտա-
ցուցանիցէ։ Այլ հրեշտակաց է սեղանն, յիմ
յաչսիսեակաց ազատ. և բազմականք նոցա ըստ աչիմ
նմանութեբ են, որպէս Աբ յորժամ յանապատին
տայր ձաշ ժողովրդեանն, հրամայեաց խառն ի խո-
տոց վերայ նստել ի գետնի։ Առաջիմք ի նոցանէ և
ընդ յարկաւ չմտանեն, այլ փոխանակ ընդ յարկի
գերկինս ունին, և գլուխն փոխանակ լուսոյ ձրա-
գի, որ չէ ինչ կարօտ իւղոյ և սպասաւորաց, և նո-
ցա միայն արժանաւորութբ ի վերուստ ծագէ։

Ընդ այն սեղան և հրեշտակք յերկինս հայեցեալ
զուարճանան և բերկրին. զի եթէ ի վերայ մեղա-
ւորի՝ որ ապաշխարիցէ՝ ուրախ լինիցին, ընդ այնչափ
արդարոց՝ որ նոցա նման եղեն՝ զինչ գործիցեն։
Ոչիք անդ տէր և ծառայ, ամենեքին ծառայք են և
ամենեքին ազատք։ Աչս մի համարիցիս, եթէ առաս-
պելք ինչ բանքս իցեն. այլ արդարև իսկ և ծառայք
միմեանց են և տէրքն իւրեանց։ Ոչիք անդ՝ եթէ
յորժամ երեկոյ լինիցի՝ ի տրտմութի ոք մնանիցէ,
զոր բազումք ի մարդկանէ կրեն, զի զգերեկութենն
չարեացն հոգս զցայգս ածեն զմտաւ։ Ոչիք անդ յետ
ընթրեացն կասկած ի գողոց, և զգուլս փակել, և
զնիգս արկանել. և ոչ այլ ինչ խեթ զոր բազումք
խրճան, որ զձրագն զգուշութբ իմն ի մայր դաշ-
նուցանեն, թէ գուցէ կայծ ինչ ինացեալ զտունն

այրեացէք ։ Այս և խօսք նոցա լի էին ամ՛ հանդարտու-
թիւ. քանզի ոչ եթէ զայսպիսի ընչից ձառէն՝ զորոց
մեքս խօսիմք, և չյարընչի մեզ՝ եթէ այս անուն
գործակալ ինչ եղև, և այս անուն յիշխանութիւն էլ,
այս անուն մեռաւ, և միւսն զժառանգութիւնն առ,
կամ այլ ինչ սոյնպիսիս. այլ յաղագս հանդերձե-
լոցն միայն խօսին, վասն նորին զգաստանան։

ԳՈՐԴՈՐԱԿ

Տեսցուք զրչաւք կոտորուածք ի բարեկեցու-
թեանն տեղեանացն գործին. զրչաւք յամառբերացն
և խոհակերացն և ի սեղանայօրիացն, ի պղակունս
տրագործացն և ծաղրարարացն: Լմնեմ զամ պատ-
մել. բայց սակայն ասացից զՀաւսն և զփասեանան, և
զդուշակ Թաման, և զարգանակ, զազգի ազգի համե-
մանան ընդ միմեանս խառնեալս, զգալար և զջոր
խորտկացն համադամս[1], և զօրէնս որ վասն այնր
ամենայնի կարգեալ իցէն. գոգ իբրև քաղաքի ինչ
դարման տանիցին, և որպէս թէ զօրաց հրաման տայ-
ցեն, եթէ այս ինչ և այս յառաջ և այս ինչ և այս
յետոյ, այսպէս իմն օրէնս դնեն և կարգս յօրինեն:
Եւ կէսք զառաջի հաւն կայծակամբք խորովեալ
լցեալ մանր ձկամբք նախ հրամայեն բերել, և այլք
այլ իմն սկիզբն օրինացն այնպիսի ընթերեաց առնեն.
և տապաստակս և բարձս բազում նմին պատրաստ
կանս, և սպաս իմն և կարգս, և յաձախ զառաջա-
ւորս և առաւտուելեանս անդ ցուցանեն: Ընդ որ կո-
րանալն պարտ էր՝ զայն խրախուելիս համարին. ո-
մանք զկէս աւուրն ընդ այն հանեն, և այլք զողջոյն
իսկ զօրն. և ոմանք զդիշերն ևս ի նոյն յաւելուն:
Տես, թշուառական, զաւր որովայնիդ, և ամաչեա,
և նահանջեաց յայդպիսի փութոյդ:

Այլ առ այն հրեշտակք չգտանի ինչ այսպիսի,
այլ և ցանկութիւնք այնպիսեաց մեռեալ են. քանզի
ոչ յագուրդ և փափկութիւն, այլ ի պետս ևթէ ե՛ն նո-
ցա կերակրին. ոչ հաւորաք անդ, և ոչ ձկնահանք,
այլ հացիկ և ջրիկ միայն: Եւ այնպիսի ինչ խռովու-
թեան և ամբոխի և աղմկի բնաւ և հետք չերևին.
յայնպիսի բնութեանէ և պարկեշտ մարմնոց, և աներևոյթ
բազում հանդարտութիւն, և նաւահանգիստ խաղաղ-

1 Յօրինակին համադամս։

զուԹեան · և ՚ի սոցա միջի բազում մերիկք ։ Այլ հէրձ իսկ և բանիւք զայնպիսեաց չուայտացելոց զոՀ րովչինն · և տեսանիցես բազում գայլ և ագռեղի վտակս կոյանոցաց , որ ՚ի վերոյ իբրև զդերեզմանս բռեալս երևին · և զայլն ևս ամաչեմ ասել , զչարաչար գայռուԹիւնս , զառ ՚ի վեր փսխածն , զառ ՚ի վայր խաղխողմանն · նա և զայլ ևս ցանկուԹիւնն տեսանիցես անդ , որ առ նոսա կենդանի և սաստկացեալ էն , զաիբրոդիսեան ցանկուԹիւնն ասեմ՝ այսինքն զՀաղկանն · քանզի և ՚ի նմանէ զերաժիշտս պոռնկուԹեան հաւաբրն · և զայն ամենայն անդ տեսանես կոտորեալ և տապաստ արկեալ հանդերձ նոցին կապարձակօքն · քանզի կապարձակիր և զէն և երկար յոռուԹեան գործոյն՝ բանք պղծալիցք էն ։

Ա.յլ անդ տեսանիցես միանգամայն զմիմեանսիք անկեալ ՚ի միմեանս խռնեալ , և կոտորեալ զՀծծելս և զերիվարս , և զէն և զարդ ցանկուԹեցն իսկ ամենին հակառակ · և ոգիս ևս կոտորեալ անկեալ տապաստ ։ Ա՚յլ սեղանովքն միայն է առաբինի յաղԹուԹէ սրբոյն այնոցիկ , այլ և յայլ ժամանակս՝ յայլ ինչ իրս , և ՚ի փառս և ՚ի չարաչուԹէն և յամենայն ախտս ։ Իսկ չԹուիցի ՚ի զրդեալ քեզ այս զօրական զօրագոյն քան զայն , և այս սեղան լաւ ևս քան զայն ։ Ա՚վ իցէ՝ որ ընդդէմ դառնայցէ կամ քեզ և կամ նոցա · և ո՛չ ոք , Թէպէտ և կարի մոլեկան իցէ ։ Ա՚յս սեղանս յերկինս առաքէ՚, և այն ՚ի գԷՀեն ձգէ · զայն սատանայ կարգէ , և զայս Ա՚ստ · զայն բարեկեցուՀիւնն և զեղխուԹէ յարդարէ , և զայս զգաստուՀիւն և ցածուԹիւն · յայս Ա՚ստ գայ , և յայն սատանայ · ուր արբեցուԹէ է , անդ է բանսարկուԹիւնն , անդ խօսք պղծուԹէ , և անառակ յագեցուԹիւն · և զԼեք իսկ կաբաւեսցեն ։ Ա՚յսպիսի սեղան էր մեծատանն , վասն այնորիկ և ոչ կաԹի միով ջրոյ իշխան եղև ։

Այլ և ո՛չ նորա այսպիսի ինչ , այլ անդէն իսկ զՀրեշտակաց որոՃումն որոՃեն · քանզի ո՛չ կանայս առնեն , և ո՛չ արանց լինին , և յանհոգս են · և ո՛չ բարեկեցիկք լինին , այլ սակաւիկ ինչ պիտոյ , և անմարմինք իսկ լինին ։ Այդ ո՞վ իցէ՝ որ այսպէս դիւ-

բաւ յաղթիցէ Թշնամանդն, որ ի Հաչն և նշան յաղ-
թութեանէ կանգնիցէ. Նմին իբրև իսկ մարգարէն ասէ
«Պատրաստ արարեր առաջի իմ սեղան ակն յանդիմ-
ման նեղչաց իմոց». և չմեզանչիցէ որ, թէ և յայս
սեղան ձգիցէ զգանձն, «Հանգի չէք ինչ որ նեղիցէք իբ-
րև զանսպատեհ ցանկութեանն և զաբեւկեցութեանն և
զայլ չարիսն՝ որ ի նոցանէ ծնանին. և զայս նոքա
քաջ գիտեն՝ որոց զփորձ իսկ առեալ իցէ։ Հրեէ
կամիս ուսանել, ուստի այս սեղան յարդարի, կամ
ուստի՞ այն, յայնժամ տեսանիցես բարիոք զերկո-
ցունցն այլակերպութեանէ. զի այն ի բաղում արտա-
սուաց և յայրեաց զրկելոց և յորբոց յափշտակելոց,
և այս յարդարութեան վաստակոց. և նման է այս
հնոջ գեղեցկի և բարենշանի, որ չիցէ արտաքոյ ինչ
իրաց կարօտ, այլ բնական ընդաբոյս ունիցի զդեղեց-
կութիւնն. և այն՝ պոռնկի միոջ տգեղոյ և չարատես-
սի, որ բազում ինչ յայտան և յաչսն ծեփիցէ, և
չկարիցէ զգեղոյնն ծածկել. այլ որչափ մեծ եր-
թիցես, և աս քան զևս յանդիմանիցէ. քանզի և այն
որչափ ինչ մեծ լինիցիս՝ և աս քան զևս ցուցանիցէ
զգեղոյնութիւնն։

Հայց մի միայն յաղթի ազգի խորտիկն հայիցիս,
այլ յորժամ՝ ի ներքս մտանիցես, ապա տեսանիցես
զգեղոյնութիւնն այնը սեղանոյ. սա քանզի ազատ է՝
չտայ նոցա որ շուրջն նստիցին զգեղոյնութէ բանս խո-
սել, և նա քանզի բաղ և քամահեալ է, զնմ խօսս
պղծութէ. սա զայն խնդրէ՝ որ ինչ օգուտն իցէ սե-
զանողացն, և նա՝ որ ինչ ճեաս իցէ. սա չտայ դի-
մադարձ լինել՝ ոյ, և նա չթողացուցանէ չլինել դի-
մադարձ։ Հրեթիցուք այսուհետև առ նոսա, և ան-
տի խնայցուք, եթէ որչափ կապանօք վարակեալ
եմք. անտի ուսցուք յարդարել սեղան՝ որ լի իցէ քա-
զմամ բարութիք, զախորժականն և զառանց ծա-
խոյն. որ ի հոգոյ չայահովի իցէ, և ի նախանձուէ
և ի չարահնութենէ, և յամ ախտից ազատ, և լի
քաղցրալից յուսով. որ բազում նշանակս յաղթու-
թեան կանգնեալ ունիցի։ Հանգի ոչ խռովութիւն

1 Յօրինակին պակասէր այս։

ոգւոց է անդ, և ոչ աշխատուԹենէ և ոչ բարկուԹենէ, այլ ամենևին հանդարտուԹիւն և համբերուԹիւն խաղաղուԹիւն։

Այս մի՛ ինչ զլուԹենէ սպասաւորացն ասիցես՝ ի մեծատանցն տունս. այլ և զաղմուկն ձաշագործացն տես. ոչ զայն՝ զի ընդ միմեանս ժխորիցին՝ ասեմ՝ քանզի այն ծաղու և կատականաց է, այլ և զներքին գայեն՝ որ զմոռքն կայցէ, և բաղում դերուԹիւն՝ ի վերայ ածիցէ, զխռովուԹենէ սրտիցն և զմրմրիկն, ըզմուԹ և զձմռեանն. որ ամենայն ինչ չիոԹեաւ [1] և խառնակեալ է, և յայգակուիւ [2] մարտուցն իմն նման է. բայց ոչ այնպիսի ինչ և ի խուցս վանականացն, այլ բաղում խաղաղուԹենէ և ամենևին հանդարտուԹենէ, ի Քէ՛ ի նոր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Յօրինակին չիոյԹեաւ։ 2 Յօրինակին յանդիսու։

“Լ՚ըԹուն լերուք զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամ„։

Ոչ ասաց ԹԷ ոչ գիտեմ, այլ ԹԷ ոչ գիտէք. քանզի կասկածագոյնս կամի լինել նոցա ցանգ, յայտ առնել՝ ԹԷ նմին իրի չասաց նոցա զայն։ “Ո՞յայ գիտասջիք եԹԷ գիտեր տանուտէրն յորում պահու գողգայ, սկէր և չտայր ական հատանել տան իւրոյ„։ Զայն սակս չասէ զօրն և զժամ, զի արԹունք լինիցիլիք. յորժամ չունիցի, ասէ, ական, յայնժամ եկեսցէ. և զոր ասէն՝ այսպիսի լինէ է. ԹԷ գիտէին քաղուածք՝ ԹԷ երբ մեռանիցին, ընդ այն ժամանակս ևԹԷ պնդէին. վասն որոյ և զիւրաքանչիւր վախճան կենաց անյայտ արար. և ՊԱուլ ինձ ԹԷ զծոյլն պատկառեցուցանէ, ԹԷ որչափ որ ընդիցն փոյթ յանձին ունիցին՝ կասկածք են ի գողոց, և այնչափ ևս անգամ չտանին զարմանս ոգւոց իւրեանց. նոքա յորժամ կասկածիցեն՝ սկէն, և չտան ինչ ի ներքուստ գողոցն հանել։ Այլ զուք ԹԷպէտ և գիտէք զի գալոց է, և արգարև իսկ գալոց է, և չկայք արԹունք, և չլինիք պատրաստականք, այլ անպատրաստ գտնալ աստի։ Վ՚ասն այնորիկ ի սատակումն քնէածիցն գալոց է օրն այն. զոր օրինակ և նա ԹԷ գիտէր՝ փախչէր, նոյնպէս և զուք ԹԷ էիք պատրաստք՝ ապրէիք։

Այլ քանզի զդատաստանէն յուշ արար, այնուհետև առ վարդապետս շրջէ զլուծն, և զտանջանաց և զպատուոց խօսի։ “Ո՞վ իցէ, ասէ, Հաւատարիմ ծառայ և խմաստուն, զոր կացուսցէ տէր ի վերայ տան իւրոյ„։ Այս զայս ոչ միայն վասն ընդիցին ասիցէ, այլ և վասն բանին, և վասն զօրուԹեան, և վասն այմ տեսուԹեանէ որում իւրաքանչիւր ինչ ումէք յանձն լինիցի։ Այս և քաղաքային իշխանաց դէպ է առակս. զի իւրաքանչիւր ոք զինչ և ունիցի, ի հասարակաց օգուտ պարտի ի կիր արկանել. եԹէ խմաստուԹէ ունիցի, և եԹէ իշխանուԹիւն, և եԹէ մեծուԹէ,

և եթէ զինչ և իցէ, մի՛ ի միսս ծառայակցացն, և մի՛ յանձին կորուսա, նմին իրի իսկ զերկոսին պահանջէ՛ ի նմանէ։ Հաւատարիմ կուէ զնա, զի չխորհաց ինչ, և ոչ ընդ վայր զտերունին ծախեաց. և իմաստուն, զի գիտաց յօգուտ մատակարարել։

„Այլ ասեմ ձեզ, ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա„։ Օ՜ինչ այնմ պատուոյ զուգական կայցէ. որ բան զայս մեծարանսն յանդիմանել կարիցէ, զերանուելինն, զարուեստինն, յորժամ երկնից թագաւորն որ զամենայն ինչ ի ձեռին ունի, զմարդ ի վերայ ընչից իւրոց կացուցանիցէ. վասն որոյ և իմաստուն իսկ կոչէ զնա, զի բարւոք միտք ի փոքունց մեծամեծաց արժանի առնել համարեաւ։ Օ գաստատցա՛ր ասա, երկնից արքայութեանն արժանի լինելոց ես։

„Այլ թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում՝ յամ տէր իմ ի գալ„։ Եթէ ասիցէ ոք, տեսէր, որպիսի խորհուրդք մտին վասն յայտ առնելոյ. քանզի ասէր տէր իմ յամէ. ասացուք առ այն, թէ ոչ վասն յայտնի լինելոյ առնուն, այլ վասն չարութեան ծառային. ապա թէ ոչ յիմաստուն և ի հաւատարիմն ընդդէմ ոչ մտին այսպիսի միտք։ Այս եթէ յամէ տէրն ի գալ. ա՛ հեգդ և թշուառականդ, ապաքէն ուշիցիս ակն գալոյ, ընդդէմ ոչ հոգայցես. և այսու ուսանիցիմք՝ եթէ յամէ իսկ ոչ. և այս ոչ եթէ ինն, այլ չար ծառային մտաց է վձիռս, վասն այնու բիկ իսկ պատուհասի։ „Այս սկսանիցի հարկանել զծառայակիցսն„։ Գիտուի ինձ թէ զայս զթշնամանողացն և զապաշխիցն ասիցէ ակնարկելով. և բազում ամբաստանութեի ցուցանէ, յորժամ զոր կերակրելն առեր հրամայ, փոխանակ կերակրելոյն գան հարկանես։ Գիտուի ինձ թէ զբարեկեցայնն ակնարկէ աստ. քանզի և ընդ բարեկեցութեանն մեծամեծ տանջանք կան. „Աւուիցեն և ըմպիցեն ընդ արբեցողս„. զորհորստութենէնն գուշակէ. ոչ վասն այնորիկ առեր զի ի բարեկեցութե՛ վատնիցես, այլ զի յաղորմածութե՛ ծախիցես. զի թէ զքո ինչ ուշիցիս, թէպէտ և յարդար վաստակոց իցէ, կամ ի հայրենի ժառանգութենէն ստացար, վասն ազքատացն հաւատացաւ քեզ այն. յանօթ եւ քեզ զայն, զի այնու առաքինանայ

ցես, արդ տուր զնորայն նորա։ Ա՝ ասն որոյ զցասուցին յայտ արարեալ, կտրել զնա ընդ միջն հրամայեաց. նմին իրի և զսէրն ծանուցիչ իւրոց աշակերտացն առբար. քանզի ամենևին հարկ է այնմ որ սիրէն զայն մանկ զոր սիրիցէն հոգալ։ Լաւ արդ զայն Ճանապարհ կալցուք, քանզի այն իսկ է որ յերկինս տանիկ, և Քրիստոս նմանողս առնէ, և այ ըստ կարի մերում։

"Յայնժամ նմանեալ լիցի արքայութիւնն երկնից տասն կուսանաց . որոց առեալ զյատերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային և հարսին . հինգն ի նոցա՝ նէ յիմարք էին և հինգն խնաստունք . յիմարքն ձեռք ընդ լապտերսն ոչ բարձին , իսկ խնաստունքն առին ձեռք ընդ ամանս իւրեանց ։ Ի յամել փեսային նիրհեցին և ի քուն մտին . ի հասարակ գիշերին բարբառ եղև , եթէ փեսայ գայ արիք ընդ առաջ նորա . յայնժամ յարեան ամ կուսանքն , և կազմեցին զլապտերս իւրեանց ։ Ասեն յիմարքն ցխնաստունսն . տուք մեզ յիւղոյդ ձերմէ , զի ահա շիջանին լապտերքս մեր . և նոքա չկամեցան , ասեն . գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական , գնացէք առ այնոսիկ որ գնոցն տան , և գնեցէք ։ Իւ եղև նոցա գնալ , իսկ և իսկ եկն փեսայն , կէաքն մտին , և կէաքն յետոյ ասեն , բաց մեզ . և նա ասէ , ոչ գիտեմ զձեզ ։ Արթնուն կացէք այսուհետև . զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն ։

Այս առակ առաջնոյն նման է , Հաւատարիմ ծառային , և ստահակին՝ որ յանարժանս զտէրունական ծախսէր . և չորեքին իսկ առակքս վասն սորին իրաց այլ և այլ կերպարանօք խրատեն զմեզ , զողորմածութենէն փութոյ ասեմ , և ամենևին՝ որով կարիցեմք ընկերին օգուտ գործել , որպէս զի չէ մարթ այլազգ ապրել , եթէ ոչ այնպէս ։ Ասայց աստ վասն ամ իսկ բովանդակ օգտին ասէ , զոր պարտ է յընկերէն ցուցանել . և կուսանացն առակաւ զողորմութենէ միայն առանձին յընչիցն առնելոյ ասէ . և կարի ևս աստ կազդոյն քան զառաջինն առակին . զի անդ , զայն որ գանն հարկանէր և արբենայր , և զտէրունական ընդ վայր վատներ և կորուսանէր , պատժէ . և աստ , զայն որ ոչ առնիցէ ինչ ումեք օգուտ , և առատութեամբ զիւր ինչսն չբաշխիցէ կարօտելոց , քան զի ունել ուշնեին եւղ , այլ ոչ բաւական , վասն որոյ և պատժին իսկ ։

Այս արդ էր վասն ի կուսանաց դեմս հանիւել զա-
ռակս. ոչ վայրապար ինչ Ճառէ, այլ վասն մեծա-
մեծ իրաց. զի յորժամ զկուսութենէն խօսեցաւ, ա-
սաց. "Այն ներբընիք՝ որ կամաւ արարին զանձինս
իւրեանց ներբընիս վասն արքայութեան երկնից. որ
կարողն է տանել, տարցի". քանզի գիտէր իսկ զաս-
զուսն ի մարդկանէ, թէ մեծ փառս անտի ունին։
Այս արդարև մեծ են իրքն. և յայտ անտի է, զի ոչ
ի հնուանն ի նահինեաց արանց պահանջեցաւ այս ուղ-
ղուէ, և ոչ ի նորուսն եմուտ ընդ հարկաւ օրինաց.
քանզի ոչ եթէ հրաման ինչ ետ վասն այնորիկ, այլ
ի կամն լսողին ապաստան արար. նմին իրի իսկ և
Պաւղոս ասէ, եթէ "Ունի կուսանաց հրաման ի տնէ
ոչ ունիմ". գովել գովեմ որ զուղղութենին զայն յան-
ձին ցուցանիցէ, բայց սահմանեմ ոչ զայն՝ որ ոչն կա-
միցին։

Այս քանզի մեծ էին իրքն, և բաղում փառք
Թուէին անտի բազմաց, և զի մի որ զայն ուղղիցէ
զամենայն ուղղեալ Համարիցէ, և զայլոցն ևս ան-
փոյթ առնիցէ, դնէ զայս առակ ի միջի, որ բաւա-
կան է Հաւանեցուցանել. զի եթէ զայն ՅԱՀ ունիցէ
կուսութենին, և յողորմածութենէ եւզոյն սոսկ իցէ,
ընդ պռոնիկս արտաքս ելանիցէ, և ընդ տմարդիս և
ընդ անողորմս կայցէ. և յիրաւի իսկ. զի միս մարմնոյ
ցանկութեամբն պարտեցաւ, և միւսն ընչիցն. և չէ
զոյգ մարմնոյ ցանկութիւն և ընչից. այլ մարմնոյն
առաւել ևս սաստկագոյն և բռնագոյն է. զի որչափ
տկարագոյն ընդդիմակաց ախոյեանն իցէ, նոյնչափ
անմերձելիք՝ որ ի նմանէ յաղթիցին. նմին իրի իսկ յի-
մար կոչեաց զնոսա. զի որ զմեծամեծ վաստակն կրե-
ցին յանձինս, ի փոքունսն յոռւսյան և մանրիլք ե-
ղեն։ Ալատեր ասա զկուսութեան Հնորհն կոչէ,
զսրբութենէն յատակութիւն. եւզ, զմարգասիրութենէն
և զողորմածութենէն, և զկարօտելոցն օգնականու-
թենէ։

"Ի յամել փեսային ննջեցին և նիրհեցին"։ Նու-
ցանէ եթէ ոչ սակաւ ժամանակք անցին ի վերայ, և
այսու դարձեալ զաշակերտսն մերժէ առ ի չունելոց
անն իսկ և իսկ արքայութեան նորա. դարձեալ այ-
սու և զայս ևս յայտ առնէ՝ եթէ քուն է մահ, քան

զի ննջեցին ասէ, Ի հասարակ գիշերի բարբառ եղև. կամ Թէ առակին այս պատշաճէր, վասն այնորիկ Ի սմին յարէ, և կամ դադարեալ ցուցանէ, Եթէ Ի գիշերի լինելոց է յարուցիմ. ըստ բարբառոյն Պաւղոսի յայտ արարեալ ասէ, Թէ "Հրամանաւ և Ի փող յետին ինձանէ յերկինից". Այլ զի՞նչ յայտ փողքն առնիցեն, կամ զինչ աղաղակն, Եթէ փեսայ գայ։

"Այս իբրև կազմեցին զլապտերս իւրեանց, ասեն յիմարքն ցիմաստունսն տուք մեզ յիւղոյդ ձերմէ", Վարձեալ զնոսա յիմարս կոչէ, յայտ արարեալ և Թէ չիք յիմարագոյն քան զայնոսիկ՝ որ յինչսն յաւէլուցուն, և անդ մերկ իցեն որ մարդասիրութիւնն պէտք են և բազում իւղոց. և ոչ այսու միայն յիմարք էին, այլ զի և անդ ակն ունէին առնուլ յընկերացն, և յանժամ ժամանակի խնդրէին. և քան զայն կուսանսն չէր որ առաւել մարդասէր, որք այնու առաքինացան. և սոքա ոչ զամ խնդրէին։

"Տուք մեզ, ասեն, յիւղոյդ ձերմէ"։ Ո կարևոր պիտոյիցն յայտ առնէ. "չիմանին, ասէ, լապտերքս մեր"։ սակայն և այնպէս վերկացան. զի ոչ նոցա մարդասիրութիւն, յորոց ակն ունէին, և ոչ սոցա ժառանգիւնն որք խնդրէին, և ոչ պէտքն, և ոչ կարիքն արարին հասանել նոցա այնմ։ Այս արդ զի՞նչ ուսանիմք աստի. Եթէ ոչ որք մեզ անդ Եթէ գործոցն մատնիչք լինիցիմք, կարիցեն օգնական լինել։ Ա՛ն զի չկամիցին, այլ զի չիցեն ձեռնհաս, քան զի և նոքա յանհնարին իրս ապաստան եղեն. զայս և երանելին Աբրահամ յայտ արար, Թէ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. Թէպէտ և կամիցի որ՝ չկարիցէ՝ աստի առ ձեզ անցանել։

"Երթայք, ասէ, որ գնոցն տան, և գնեցէք"։ Այս ոմն որք իցեն՝ որ գնոցն տան. աղքատքն. և ուր իցեն. աստ. աստէն պարտ է խնդրել, և ոչ յայնմ ժամանակի։ Ցեսանեմ, ծրչափ շահ վաճառաց լինին մեզ անտի. և Եթէ զայն բառնայցես, զբազումս յոյս փըրկութեան մերոյ բարձեր Ի միջոյ։ Ա՛տքն պարտ է իւղ ժողովել, և անդ լինիցի պիտանացու՝ յորժամ ժամանակն կոչիցէ զմեզ. քան զի չէ այն ժամանակ ժողովելոյ. այլ այս։ Այս արդ ծախեսցես մի զինչս

'ի բարեկեցութիւնս և 'ի մսատարծութիւնս . քանզի բա-
զում իւղոց պէտք են մեզ անդ ։

"Այլ իբրև լուան զայն կուսանքն , գնացին ,, այլ
ոչ ինչ օգտեցան ։ Ո՞այս ասէ , կամ առակ իսկ է ,
զի՞ զայս յօդիցէ , կամ ցուցանէ զի թէպէտ մարդա-
սէրք յետ անգր երթալոյն լինիցիմք , չշահիցիմք ինչ
'ի զերծանելոյ 'ի պատժոյն ։ Այնմ պատկառ իցէ , և
ոչ այն ինչ բաւական եղև յօժարութեանն վճարե-
լոյ . քանզի ասէն ոչ չոգան առ այնասիկ՝ որ գնոյն
տան , այլ անդ ։ Այս և մեծատունն որ այնչափ մար-
դասէրն եղև , մինչև վանս իւրոց հարազատացն հո-
գալ , չվճարեաց ինչ . որ զառ 'ի դուրսն լնկենգելոյն
զանց առնէր , և զնոսա զոր ոչն տեսանէր՝ զերծուցա-
նել 'ի գհչենէն և 'ի տապէն փութայր . աղաչէր ա-
ռաքել զոք , երթալ պատմել զամենայն ասկայն և
ոչ նա անտի օգուտ ինչ եգիտ , որպէս և ոչ սոքա ։

"Այ իբրև լուան զայն՝ գնացին . եկն փեսայն և ալա-
տրաստքն մտին ընդ նմա . և այլքն արտաքոյ մնա-
ցին ,, ։ Յետ այնչափ վաստակոց , յետ այնչափ աշ-
խատութեանցն , և անշնարին պատերազմին , և յաղ-
թութեանն նշանակ ընդդէմ մոլեգնին բնութեանն կանգնե-
լոյ , ամօթալից մնացին , և շիջելովք լապտերօք գնա-
ցին , կորացեալք , գլխաթափեալք , զի չէք ինչ վճռագոյն
քան զկուսութիւն որ առանց իւղոյ էր . և այսպէս
իսկ զանողոքմանն սովորին կոչել ։

Այս արդ զինչ օգուտ 'ի կուսութենէն էր , յոր-
ժամ գլխեսայն ոչ տեսին . և 'ի բախել զդուրսն չվճա-
րեցին ինչ , այլ գահագին բարբառն լուան , եթէ եր-
թայք 'ի բաց , չգիտեմ զձեզ ։ Յորժամ նա զայս ա-
սիցէ , չէք ինչ այլ չար գհչէն քան զայն , և ոչ ան-
հնարին տանջանք . մանաւանդ թէ և գժնդակ քան
զգհչենին գհչէն իցէ բանն . քան զի և որոց գոր-
ծէին զանօրէնութի՛ն գնոյն ասաց ։

"Արթունս լերուք զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն ,, ։
Ցեսանե՞ զիարդ ստէպ զայս ասէ . կարի իմն յօժու-
ցանէ զանգիտութենէն ելանելոյ մեր ասէ ։ Ա՛ր է-
ցեն որ հանապազ չյա՛ր 'ի կեանս ծոյլք իցեն . յոր-
ժամ մեզ զիտիր լնկենգիմք , ասեն՝ 'ի վախճանի կենաց
մերոց Թողցուք կարօտելոց . լուիցեն բանիցս և ե-

կեսցեն յուղղութիւն. քանզի բազումք յայնմ ժամանակի վշխտեցին՝ վասն յանկարծակին յափշտակելոյ, և ոչ հրամանս ժամանեցին տալ ընտանեացն, որպես զիարդ ինչ կամէին։

Յուսանացն առակ յընչից ողորմութիւն առնելոյ վասն ասացեալ է, իսկ այս՝ որ նորին զհետ, առ այնոսիկ որ ոչ ընչիւք և ոչ բանիւ վերակացութիւն և ոչ այլ իւիք կամիցին օգուտ առնել ընկերացն, այլ զաչ մնայն թաքուցանիցեն։ Յե՞ր է վասն յայս առակ թագաւոր ընծայեցուցանէ զինքն, և անդ փեսայ։ Ո՞ւ ուսանիցիս՝ թէ զիարդ ընտանութիւն է Աստ ընդ այնպիսի կուսանան, որ զինչս ի բաց մերկանայցեն. Նա և կուսութիւն այն իսկ է։ Ա՝ ասն որոյ և Պաւղոս զնոյն սահմանն եդ նոցա, եթէ "Ոչ ոչ ամուսնանայ հոգայ զտեառն" և առ ի պարկեշտութիւն և բնաւ հպատակութիւն տեառն առանց զբաղանայ. և մեք զայն խրատ տամք ասէ։ Իսկ եթէ ո՞ւկաս այլազգ կայ տաղանդացն առակ. առ այն զայս պարտ է ասել, եթէ այլ այս է և այլ այն. զի անդ ի միոջէ գլխոյ պէսպէս ճնորհք գործեցան. ի միոջէն, ասէ, ոմն տաճն և ոմն հինդ մատոյց. վասն որոյ և ոչ նոցունց հասին երկոքեան կողմանքն. և աստ նմին հակառակ. վասն որոյ պատկն զոյգ է երկոցունց։ Ո՞ւ որ զերկուսն առ՝ երկուս ետ. և անդ ի նմին իւրաց ոմն բազում և ոմն սակաւ շահեցոյց. յիրաւի և ի պարգևսն միապէս ոչ վայելէին։ Յե՞ւ տէս զիարդ ամենայն ուրեք չպահանջէ վաղվաղակի. նա և յայդմէնէ առակի "Յատ ցիշկն, ասէ, և զնաց" զի ուսանիցիս զերկայնմտութիւն նորա։ Ա՞ւելի ինձ՝ թէ զպարտութէն ակնարկիցէ զայս ասելով. այլ աստ ոչ միակք և ոչ այգի, այլ ամենևին գործաւորք. քանզի ոչ առ իշխանս միայն և ոչ ընդ հրեայսն և եթէ, այլ ընդ ամենեսեան առ հասարակ խօսի, և որք մատուցանեն, յայսմանէ առնեն մտադիւրութիւն և զիւրեանցն և զտէրունին։

Ասի՝ թէ հինգ տաղանդ ետուր ցիս, և ոմն՝ թէ երկուս. ցուցանեն եթէ ի նմանէ առնի և զպատճառս չհաւատոլութէն. և կարի իսկ չնորհ ունին, և զամենայն նորա համարին։ Յե՞ւ առ այն զինչ ասիցէ տէրն. "Ա՞ղջ ծառայ և բարեգործ" և այն իսկ է

բարեգործն, զընկերին կարիսն՝ իւր համարել. « Հա
ւատարիմ, ասէ, որովհետև ի սակաւուդ հաւատա
րիմ եղեր ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մտ՛ա
յուրախութիւն տէն քո »· զիմ երանութիւն այսու բա
նիւ յայտ առնէ. բայց միւսն ոչ այսպէս. այլ ՚ոպէս.
« Վիտէի, ասէ, զի այր խիստ ես. հնձես՝ զոր ոչ սեր
մանեցեր, և ժողովես՝ զոր ոչ սփռեցեր. երկեայ և
Թաքուցի զտալանդդ քո. և արդ քոդ ցքեզ »· և ա
պա զինչ ասէ տէրն. « Պարտ էր քեզ, ասէ, տալ
զարծաթիդ իմ ցառապիզետան »· այսինքն խօսել պարտ
էր, խրատել, Թէզադիր լինել. չանապին, ասէ. և
քո զինչ միտս էր յայնմանէ՝ Ո՞ինչ այլ հեզուԹիւն
կայցէ ։

Ո՞վ մարդիկ չառնեն այնպէս, այլ զիսխատուն
կացուցանեն պարտապանս պահանջելոյն՝ Ոակ նա ոչ
այնպէս. այլ քեզ, ասէ, տալ. և զպահանջելն յիս ա
պաստան առնել. « Ա՛ւ ես եկեալ, ասէ, տոկոսեօք
պահանջելի զնի »· զուսնկնդրուԹիւն գործոց հանդէս.
քեզ զդիւրագոյնն պարտ էր առնել, և ինձ զդժուա
րագոյնն Թողուլ. որովհետև զայն չարաբեր, « Ա՛ւելք
՚ի դմանէ, ասէ, զտալանդդ և տո՛ւք այնմ՝որ ունիցի
զտասնն. զի որ ունիցի տացի նմա և յաւելցի, և յայն
մանէ՝ որ ոչն ունիցի, և զոր ունիցին բարձցի »։

Ո՞ինչ էցէ այս։ Որ զչնորհս բանին վարդապետու
Թէ՛ յօգուտ ունիցի և չարկանիցէ ՚ի կիր, և զչնորհս
և՛ս կորուսանէ. և որ փոյթ յանձին ունի մատակա
բարել, և՛ս առաւել ամիսփսիկ յինքն զպարգևսն. զոր
օրինակ միւսն՝ որ առ և չարկ ՚ի կիր՝ կորուսանէ։
Ոայց ոչ միայն ցայն և՛ս Թէ միտս, այլ և անչնարին
տանջանս կրիցէ, և հանդերձ տանջանաւքն և բազում
վՀիս լի ամբաստանուԹ՛ը։ « Ո՞ անպիտան ծառայդ,
ասէ, հանէք ՚ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ
և կրՀել ատամանց »։ Ցեսանե՞ս զի ոչ միայն չափըշ
տակողն և ագահն և չարագործն, այլ և որ զբաբիսն
չգործեաց՝ տանջելոց է յանչնարին տանջանսն։

Ուրիցի՛ւք այսուՀետև բանիցս միոչ դեռ ժամա
նակս ՚ի ձեռս է, և պաշտպանեսցուք փրկուԹե՛ն մե
րում, առցուք եւզ ՚ի լապտերս և արկցուք ՚ի գործ
զտաղանդն. իսկ եԹէ դանդաղեցիմք և ՚ի վՀատու

Թէ հատանիցիմք աստ, չողբումեսցի որ մեզ այնուհետև անդ. Թէպէտ և բիւրապատիկ ողբովք ողբայցեմք։ Իստ ուտելոյն զանձն և որ զաղտեղի հանդերձն ուներ և չօգտեցաւ ինչ. ետ և զառանդն՝ զոր հաւատացաւ նմա, որ զմի տաղանդն առ, սակայն և այնպէս դատապարտեցաւ։ Իզաւեցին և կուսանքն և մնացեալ բախեցին, և ամ ինչ՝ի զուր և ընդ վայր եղև։ Իսկ արդ զայս իմացեալ և ինչս և փոյթ և վերակացուԹէն զամ ինչ նպաստ լիցուք յընկերացն օգուտ. զի տաղանդ աստ իւրաքանչիւր կարն է, և ԵԹէ վերակացուԹիւն իցէ, եԹէ ինչք, եԹէ վարդապետուԹիւն, եԹէ այլ ինչ կերպարանք օգտի։ Իսկ արդ մի ոք ասասցէ՝ եԹէ մի տաղանդ միայն ունիմ, և չկարեմ ինչ առնել։ Իարող ես և միոմն առաքինանալ. քանզի չես աղքատագոյն քան զայրին, և ոչ չինականացն քան զՊետրոս և զՅովհաննէս, որք չինականք և առանց դպրուԹեան էին. բայց սակայն քանզի յօժարուԹիւն ցուցին և՝ի հասարակաց օգուտ առնելին զամ, երկնից հասին։ Ընդ ինչ այնպէս հաձոյ այ որպէս՝ի հասարակաց օգուտ կալ. վասն այսորիկ ետ մեզ ամ խօսս և ձեռս և ոտս և մտրիճոյ զօրուԹիւն և միտս և խնամուԹիւն, զի՝ի մեր փրկուԹիւն և յընկերացս օգուտ արկցուք զայն՝ի կիր. քանզի ոչ եԹէ յօրհնուԹիս միայն և՝ի գովուԹիսն պիտանացու է մեզ բան, այլ և՝ի վարդապետուԹիւն և՝ի խրատ շահաւոր. և եԹէ զայն՝ի կիր արկանիցեմք, ամն նմաղաղ լինիմք. և՝ի նոցին հակառակն՝ սատանայի։ Իայ և Պետրոս յորժամ զանհաց զՔ՝ եԹէ որդի այ է՝ի հօրէ յայտնուԹէ, երանեցաւ. և յորժամ զանգաղեր՝ի խաչէն վհուէ և սաստէր, յոյժ մեղադրեր՝ որպէս եԹէ ըստ սատանայի մտաց ինչ խորհիցի. և եԹէ ուր անգիտուԹիւն բանն էր, այնչափ մեղադրուԹիւն է, յորժամ կամաք բազում ինչ մեղանչեմք, որպիսի ինչ հերեաւ ԹողուԹիւն կայցէ մեզ։

« Յորժամ գայցէ որդի մարդոյ , և ՚ամ հրեշտակք ընդ նմա , յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց , և ժեղեսցէ զօգիս յայծեաց . և զիւեան ընդունիցի , զի տեսին զնա քաղցեալ և ծարաւի , և արբուցին , և այլն : Լ՚ւ զնացին հակառակն պատուհասեալ առաքեսցէ ՚ի հուրն յաւիտենից՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա » :

Վ՚ԱՂՁՐ Ճառիս՝ նոր ստէպ ստէպ ոչ դանդաղիմք յեղյեղուել , լուիցուք մեծաւ փութով և ՚ամ սարջանօք , յոր յետոյ եկին դադարեաց բանս . և յիրաւի իսկ , քանզի բազում վասն մարդասիրութեանն և ողորմութեանն բանք էին նորա : Ա՚ւ ասն որոյ և յառաջինսն ազգի ազգի կերպարանօք վասն սորին խօսեցաւ , և այսուհետև աստ յայսմի և սաստկագոյն իմն . նա և ոչ երկուս երեսս , կամ երիս , և ոչ հինգ և հինգ եւ դեալ , այլ զնոսա տիեզերաց : Լ՚ա և առաջինքն ոչ երկուս երեսս յայտ առնէին , այլ երկուս կողմանս . մին զստուգագոյնն , և մին զունկնդրացն . բայց աստ և ահագին իմն զբանն ՚ի կիր արկանէ , և յայտնագոյնս և լուսաւորագոյնս . նմին իրի չասէ՝ թէ « Լ՚այ նեցաւ արքայութիւն երկնից » , այլ յայտ յանդիմանն ցուցանէ զանձն . « Յորժամ եկեսցէ , ասէ , որդի մարդոյ փառաւք հօր իւրոյ » . քանզի այժմ անարգաւ նաւք եկն և թշնամանաւք , բայց յայնժամ յաթոռ փառաց նստցի :

Լ՚ւ ստէպ զփառաց յիշեցուցանէ . քանզի խաչն մեծ էր , իրք լինէ՝ որ նախատանաց թուէր , վասն այսորիկ յորդորէ զլսողսն , և ՚ի դէմն իսկ զատեանն բերէ , և զնմ տիեզերս շուրջ ածեալ կացուցանէ : Լ՚ւ ոչ այսու միայն ահագին առնէ զբանն , այլ և ցուցանելով զերկինս թափուր մնացեալ , քանզի ասէ . « Լ՚ւ ամենայն հրեշտակք ընդ նմա » . և նոքա լեցին վկայք՝ եթէ ոչ յաւէտ սպասաւորութիւն հարկն , յորժամ առաքէին ՚ի տեառնէ առ ՚ի փըր-

կութիւն մարդկան, և ամենայն ուսմունք աշակերտին օրն լինիցի։

" Աղաղակեցէք, ասէ, զայր ազգս. այսինքն, զայր քնութիւն մարդկան. և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս հովիւ զոչիս յայծեաց ։ Աղաղակ այժմ չէն մեկնեալ, այլ խառն ամենեքեան. յայնժամ լինիցին քակք ամ հաւատաւոր։ Այս այժմիկ 'ի կալոյն առաջի մեկնէ զնոսա, և յայտնի առնէ. ապա և յաւ նասանէ ցուցանէ. զոմանս ուրախ կոչէ, և զոմանս օդիս, զի զանպատուութիւն նոցա ցուցանիցէ. քանզի չառնի ինչ պատուդ յուրուց. և յօդից բաղումք պէտք, ասր և կիթ և ծնունդ, և ուրն յամէ ելափուր է։ Այսոյ անասնոյն քնութիւք է անպատուութիւն, և նոցայն 'ի կամց ։ Ալ ան այնորիկ նոքա պատժին, և ոչքա պասկին։ Այ ոչ նախ տանջէ, մինչև գատ դնիցէ ընդ նոսա. վասն որոյ 'ի միջի կացուցեալ, և զմեզագրութիւնն ևս ասէ. և նոքա հեզութիք և աղերսիւ տան պատասխանի, այլ ոչ ինչ օգտիցեն այնուհետև. և կարի խակ յիրաւի, զի զկարևոր իրս անտես առնէին, զոր և օրէնքն վեր 'ի վայր ասէին, թէ " Ո ողորմութիւն կամիմ և ոչ զպատարագ ։ և օրէնսդիրն առնևին 'ի նոյն յորդորեր բանիւք և արդեամբք. նա և քնութիւն խակ զնոյն խրատէ ։

Այ միտ դիր, զի ոչ 'ի միոյն միայն կամ յերկուցն, այլ յամէն խակ լոկ էին ։ Ո՛ի ոչ միայն քաղցեալ տեսին և չկերակրեցին զնա, և ոչ մերկ տեսեալ՝ զգեցուցին, այլ և ոչ զթերևագոյնն. զի և 'ի հիւանդութիւնն չերթային 'ի տես ։ Այ տես՝ զիարդ զթերևան պատուիրէ. չասաց եթէ 'ի բանտի էի և չհանէք զիս, այլ 'ի հիւանդութեան՝ չտեսէք, և չեկիք առ իս 'ի բանտն ։ Այա և 'ի քաղցին ոչ ծանր ինչ հրամայէ. քանզի ոչ բազմապատիկ սեղան, այլ զպէտսն միայն, և զկարևոր կերակրիկն ։ Այ խնդրէ տառապելոյ կերպարանօք, որպէս զի ամենևին բաւական իցէ անպատժել զնոսա դիւրութիք տրոցն, հայիկ ողորմել և տալ մուրոցին, քանզի աղքատ է. վշտակից լեր քնութիւնն, քանզի մարդ է. և այս ցանկալի խոստմանն է, քանզի զարքայութիւնն երկնից խոստացաւ. և զարքայութիւնն տանջանացն առաջի դնէ, և զպատիւս առ-

նելեացն. քանզի ՚ած էր որ աղքատաբն առնոյր. այլ յայնմանէ արծաթախրուելիւնն կուրացոյց զըմիըտ նեալսն. և այն, զի այսչափ սպառնալիք ՚ի վերայ կային. նա և վերագոյնն ասէ չընդունելեացն, թէ և այս չարաչար տանջանս քան զսոդովմայեցւոյն կրեսցեն, և՝ աստ ասէ. թէ " Ոչ զօրէհաւ ոչ արարիք միւմ ՚ի փոքրկանցս յայսցանէ, և ոչ ինձ արարիք "։

Ո՛ինչ ասես, եղբա՛ըք քո են. այո՛ ասէ. և զիա՛րդ փոքրկունս կոչես. վասն այնորիկ են եղբարք, զի տա. ռապետա՛ըք էին, զի աղքատք էին. զայնպիսին և ա. ռաւել կոչէ յեղբայրութիւն, զանձանօթն, զարհա. մարհեալն. և ոչ զվանականացն միայն ասէ զայս, և ոչ զայնոցիկ՝ որ ՚ի լերինս երթեալ դադարեալ լինէն, այլ զիւրաքանչիւր ումեք ՚ի հաւատացելոց. եթէ աշ խարհական իցէ և քաղցեալ և սովալլուկ և օտար, կամիմ զի յամ խնամեն յայնոսիկ վայելիցէ. քանզի եղբայր միւրուելիւն առնէ և խորհրդոյն Տաղօրդու. թիւնն։

Եւ զի միւսոյնն և տեսանիցես զիրաւունս վճռին տալոյ, նախ զբարեգործմն յարգէ։ " Եկայք օրհ. նեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի, զի քաղցեայ և եատ ինձ ուտել "։ և այլն։ Եւ զի մի ասիցեն թէ չունէաք ինչ, անդստին ՚ի ծառայակցացն դատապար. տէ զնոսա, որպէս զկուսանան ՚ի կուսանացն, և զար. բեցողն և զկերոջն ՚ի հաւատարիմ ծառայէն, և որ զտաղանդն Թաքոյց, յերկուցն՝ որ շահիւքն մատու. ցին, և զնմ յանցաւորս ՚ի բարեգործացն. և համե. մատութիւն մերթ ՚ի զուգականաց լինի, որպէս աստ և ՚ի կուսանացն առակի, և մերթ ՚ի յաձախագոյն ինչ իրաց, որպէս յորժամ ասիցէ, թէ " Եղբ նիւ. նուէացիք յարիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ, և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարե. ցին ՚ի քարոզութեանն Յովնանու, և ահա մեծ քան զՅովնան է աստ "։

Պարձեալ և ՚ի յաձախագոյն ինչ իրաց. " Ոչ գի. տէք՝ թէ գՀրեշտակս դատիմք, թող թէ զերկրա. ւորս "։ Ասյց աստ ՚ի հասարակ իրաց, քանզի զմե. ծատունս մեծատանց, և զաղքատս աղքատաց հա.

մեմատեւ. և ոչ միայն այսու ցուցանէ արդարութիւն զվճիռն տուեալ ծառայակցացն ուղղութիւն, զի ի նոյնս էին և ցուցին ուղղութիւն, այլ զի և այնու չէ լինել ունկնդիր, որով և աղքատութիւնն չիցէ ինչ արգել. որպէս զբուրն տալ ծարաւելոյ, և զկալանաւորն տեսանել, և հիւանդին ի տես երթալ, գովեաց բա րեգործն. և ցուցանէ թէ որչափ անդուստ ի վերուստ ունի ընդ նոսա խնամ: «Լկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»: «Որչափ բարութեաց գինք իցեն անուանն. օրհնեալս կոչէ, և ի հօրէ օրհնեալս: Լոյ ուստի՞ այսչափ պատուոյ արժանի եղեն. և զինչ իցեն այնը պատճառք. «Վասղեայ, ասէ, և ետուք ինձ ուտել,». և այլն ամ: «Որչափ պատուոյ. որչափ երանութեաց արժանի են բանքն. և չասաց՝ եթէ առէք, այլ եթէ ժառանգեցէք. իբրև զսեպհականն, իբրև զհայրենիս, իբրև զձեր, որ ինչ ձեզ անդուստ ի վերուստ պատրաստեալ եր: Լոյ մինչ և ձեր լեալ էր, ասէ, այս ձեզ պատրաստեալ և հանդերձեալ էր. քանզի գիտեմ զձեզ թէ այդպիսիք լինելոց էք:

Լոյ փոխանակ էր առնուցուն զայսչափ բարութիւնս ընդ յարկի, ընդ հանդերձի, ընդ հացի, ընդ ջրոյ հովոյ, ընդ հիւանդի ի տես երթալոյ, և զկալանաւորսն յանձանձելոյ. քանզի ամի այնմ պէտք են, և ի ուրեք՝ զի և պէտքն չիցեն: Օ ի ոչ, որպէս ասացի իսկ, հիւանդն և կալանաւորն զայն միայն խնդրեն, այլ ոմն զարձակիչն, և ոմն զապաքինեցն յախտէն: Լայց նա՝ քան զի հեզ է՝ ըստ կարին պահանջէ, մանաւանդ թէ և նուազագոյն քան զկարն, և ի բազմին առատանալ ի մեզ ապաստան առնէ:

Լոյ ցնոսա ասիցէ «Երթայք յինէն անիծեալք». և ոչ ևս ի հօրէ, քանզի ոչ եթէ նա զնոսա անէծ, այլ գործք իւրեանց. «Ի հուրն յաւիտենից՝ որ պատրաստեալ է, ոչ ձեզ՝ այլ սատանայի և հրեշտակաց նորա»: Որժամ զարքայութիւնն ասաց՝ եկայք ժառանգեցէք զարքայութիւնն, և յարեաց ի նոյն, որ պատրաստեալ է ձեզ ի սկզբանէ աշխարհի. իսկ զհրոյն ոչ ձեզ. այլ որ պատրաստեալ էր սատանայի:

Լոս ձեզ, ասէ, զարքայութիւնն պատրաստեցի. քայց գՀուրն ոչ ձեզ, այլ սատանայի և հրեշտակաց նորա. և քանզի անձամբ զանձինս ածէք ՚ի կրակ, անձանց մեզադիր լինիջիք։

Լոչ ոչ այսու միայն, այլ և յաջորդօքն. զի իբրև իրաւունս տալով դնէ զպատճառան ՚ի միջի, "Վաղ ցեայ, ասէ, և ոչ եռուք ինձ ուտել,, ։ Ահ և Թշնաա մի ոք իցէ և մեբանայցէ, մի Թէ չիցէն բաւական կարիքն՝ և զանողորմն ածել յողորմութիւն, և զանա գորոյնն խոնարհեցուցանել, Վաղցն, և ցուրան, և մերկութիւնն, և ընդ վայր Թափառեչն. այն և զԹշնաամութիւնն բաւական է լուծանել, այլ դուք և ոչ սիբելոյն զայն արարէք՝ որ սիրելին և երախտաւոր և տէր իսկ էրն։ Լոչ զշուն քաղցեալ տեսանիցեմք, ոչ ղօրմիմք. և գազան ինչ սովեալ, դԹամբ. և զտէրն քաղցեալ տեսանիցես, և ոչ դԹաս. և ուր կայցէ իբաւունս ինչ տալ և պատասխանի, Ահ այն միայն էր, չէր բաւական ՚ի հատուցումն, Ղասեմ զայն բարբառ՝ զոր ամենեցուն հասանէ լսել յայսմանէ՝ որ նստին յաԹոռ Հօրն, և արքայութիւնն հասանել. այլ գործն իսկ որ գործիցի, չիցէ բաւական ՚ի հատուցումն, Լձող Թէ ուր ամ տիեզերք ՚ի մի վայր իցեն, և անձառ փառացն յայտնեալ, և զբեզ յանձանձիցէ և պահիցէ, և իւր դայեակ և վառատու խոստովանեսցի. քանզի չՀամարի ամօԹ զայն ասել, զի քեզ պայծառապոյն զպատկն գործիցէ։ Ալ ամն այնորիկ և սոքա յիրաւի տանջին, և նոքա չնորՀօք պսակին. Թէպէտ և բիւրապատիկ զայն արարեալ իցէ, չնորՀաց է առատութիւնն. փոխանակ փոքունց և նուազից, զերկինս և զարքայութի՛ն, և զայնպիսի պատիւ տալ նոցա։

"Ցայնժամ ժողովեցան քահանայապետքն և գրիպիրք և ծերք ժողովրդեանն ՚ի սրահ քահանայապետին, որում անուն էր Կայիափա. և արարին խորհուրդ՝ զի նենգութիւր կալցեն զՅի՛ս և սպանցեն։ Բայց ասէին՝ Թէ մի ՚ի տօնի աստ, զի մի խռովութի՛ լինիցի ժողովրդեանն,, ։

Տեսանէս զանչափ ապականութի՛ եղծելոյ իրացն հրեից, յանօրէն իրս մտաբերեալք, և ՚ի սրահ քա-

հանապատեան ժողովեին, և անտի կամէին առնուլ իշխանութեի, ուստի պարտ էր նոցա արգելուլ։ Այլ քանի՞ քահանայապետք էին. զի օրէնքն մի միայն առնէին, այլ յայնժամ բազումք էին. ուստի յայտ իսկ է թէ հրեական օրինացն սկիզբն էր քակտել. զի Այ՝ովսէս, որպէս ասացի, մի միայն հրամայեաց, և յետ նորա վախճանեալոյն՝ ապա այլ՝ի տեղին կացուցանել. և արդ զիարդ յետոյ բազում քահանայապետք տարեւորք կային։ Այլ զայս յայտ արար աւետարանին՝ յորժամ զՕ աքարիայն խօսէր՝ի դատաւորսն Այրիայ։ Օնոսա առ աստ քահանայապետս զեղեալն՝ի քահանայապետութէ։ Այլ զինչ խորհէին. զի կալցեն գաղտ և սպանցեն. զայս երկուս խորհէին՝ զի սպանցեն, և զի գաղտ սպանցեն. և զի երկնչէին՝ի ժողովրդենէն, վասն այնորիկ ոտնին անէ ցանելոյ մնային. քանզի ասէին եթէ մի՝ի տօնի աստ, Ամանայ՝ զի մի յայտնի զաւրաբանն կացուցանիցէ՝ չկամէր՝ի տօնին. և նոքա՝ զի մի խռովութէ լինիցի։

Այլ միտ դիր՝ զիարդ երկնչէին՝ ո՛չ յայ ինչ իրաց, զի մի առաւել պղծութէի՝ինչ լինիցի, այլ ամ՝ուրեք զմարդկայինսն խորհէին. բայց սակայն քանզի այբէին ցասմամբ յանդգնեալք, դարձեալ շրջէին՝ Ասա ասէին՝ եթէ մի՝ի տօնիս. և իբրև զմտանիչն գտին՝ չանսացին ժամանակին, այլ անդէն՝ի տօնին սպանին։

Ինդէր յայնժամ կալան զնա. և այնչափ այրեցեալ՝ի ցասմանէն, որպէս ասացի իսկ, և յայնժամ սպասէին գտանել զնա. և զամ ինչ իբրև զշշացեալս գործէին. թէպետ և նա զնոցա չարութէն՝ի պէտս իւրոյ տեսութէն՝ի կիր արկանէր, և ոչ եթէ այնու ինչ չիցեն պատժապարտ, այլ բնութապատիկ ամենայնից արժանիք՝ զի մեռաբերեցին յայն. յայնժամ պարտ էր ամենեցուն նոցա կորնչել, և ընդ պատժոք էին. յայն եկն կեցուցանել զնոսա, և նոքա զարդարն և զանարատն սպանին, որ բազմապատիկ երախտիս արար նոցա, և զՀեթանոսս ևս յայնժամ անտես արար վասն նոցա։

Այլ՝ո՛վ մարդասիրութէն՝ որ զայնպիսի ժանդս և զլի ամ՝չարեօք դարձեալ փրկել կամիցաս. առա-

քեաց վասն նոցա առաքեալը, զի կոտորեցին ի նոցա նէ՝ որք աղաղակէին թէ վասն Քրիստի պատգամաւորիմք ։ Լ՚ւ արդ զի այսչափ օրինակս ունիմք, չասեմ թէ մեռցուք ի վերայ Թշնամեացն. նա և զայն և պարտ էր առնել. բայց քանզի տկարագոյնք եմք, առ այժմ զայս ասացից՝ եթէ մի խանդասցուք ընդ բարեկամս, և մի նախանձեսցուք ընդ երախտաւորս։ Ցասեմ առ այժմ՝ եթէ չարաբարացն բարի արասցուք. ցանկալ և այնմ ցանկամ, այլ քանզի Թանձրամիտք եմք, գոնեայ վրէժ մի առցուք ի նոցանէ. մի՛թէ ստուերք էնք մեր կարգաս, և կեղծիք և կերպարանք. չգրեցաւ ինչ ընդ վայր որ ինչ գրեցաւն, այլ ի խրատ և յօգուտ մեր ասացան։

" Իբրև եկին ՅՈՎ ի Լեթանիա ի տուն Սիմոնի բո-
րոտի , մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ խուղ
ծանրագնի , և թափեաց ի գլուխ նորա ի բազմա-
կանին " ։

Կինս այս Թուի Թէ մի և նոյն իցէ ՀՈՄ աւետա-
բանն , բայց ոչ է մի . այլ յերիս աւետարանին մի
և նոյն Թուի լինել , բայց ի ՅովհաննէՍ ոչ նոյն՝ այլ
այլ ոմն զարմանալի , քոյրն Ղ ազարու ։ Եւ ոչ վայ-
բասպար զբորոտութիւն Սիմոնի յուշ առնել աւետա-
բանիչն , այլ զի ցուցցէ Թէ ուստի առ Համարձակու-
Թիւն մերձենալ առ նա կինն ։ Ուանզի բորոտու-
Թիւնն կարի լինն գարշելի և պիղծ Թուէր . ետես
զՅՈՎ բազմեալ ի տան նորա . քանզի չառնոյր յանձն
Համարձակել , եԹէ ոչ էր ի վերայ հասեալ՝ եԹէ որ
Եմուտ առ բորոտն և բազմեցաւ ընդ նմա , Թէ ոչ և
զնորա ոգւոյն պղծուԹիւն մաքրիցէ վաղվաղակի . նա և
ոչ վայրապար զանուն քաղաքին յիշեաց՝ Թէ ի Լե-
Թանիա , այլ զի ուսանիցիս եԹէ կամաւ գայ ի չարչ
չարանս . զի որ յառաջ քան զայս ժամանակս փախս-
չէր ի նոցանէ , յորժամ առաւել բորբոքեցաւ նա
խանձ նոցա , յայնժամ հուպ գայ իբրև հնազետասան
վտաւանաւ ։ Եւ դու տես զհաւատս կնոջն . զի ոչ
իբրև ի մարդ լոկ ժերձենայր , այլ իբրև ի մեծ ոմն
քան զմարդիկ . վասն այսորիկ և զանդամն՝ որ քան
զՅՈՄ մարմինն պատուականագոյն է , զգլխոյն ասեմ ,
մատոյց առ ոտն ՅՈՎ ։

" Իբրև տեսին աշակերտքն նորա , զայրացան և ա-
սեն . ընդէր այսպէս կորուստ եղև . մարԹ էր զայդ
Եւղ վաճառել և տալ աղքատաց " ։ Եւ ուստի ու-
նէին այնպիսի միտս , եԹէ ոչ ի վարդապետէն էին
լուեալ՝ որ ասէր . " Օ ողորմուԹիւն կամիմ և ոչ զպա-
տարագ " . և հրեիցն մեղադիր լինէր՝ եԹէ " Ողորմ-
զծանր ծանր օրինացն զդատաստան և զողորմուԹիւն
և զՀաւատս " . նա և ի լերինն բազում ինչ խօսեցաւ

վասն ողորմութեանէ. և անտի զմտաւ ածէին, զի եթէ զողջակէզս ոչ ընդունի, և ոչ զկինն պաշտօնն, որչափ և առաւել զիւղոյն պէտս։

Այսպէս այսպէս խմանային, բայց նա ընդ միտս նորա հայեցեալ Թեյլ տայր. քանզի բազում երկիղածութեէր և բազում փութոյ, վասն այնորիկ զիջանէ և Թեյլ տայ և ի գլուխն եւս Թափել զեւղն. զի եթէ մնայդ լքեալ և ընդ յղութէ մնանել և կաթամբ մնանել չկրաժարեաց, ընդ այն զի զարմանայցես՝ եթէ զայն ոչ մերժէ. զի որպէս հայր նորա զձենձերն և զծուխն յանձն առնոյր, նոյնպէս և նա պոռնկին մերձենալոյ անասյր. որպէս ասացի իսկ, Թէ ընդ միտն հայեցեալ ընդունէր. այլ աշակերտքն նորա, քանզի զմիտն չգիտէին, վայրապար մեզ դնէին. և որովք մեղադիր լինէին, նոքօք առաւել ցուցանէին զկնոջն զառատութիւն. քանզի ասէին, մարթ էր երեքհարիւր դահեկանի վաճառել. յայտ արարին Թէ ոչրչափ ինչ յեւղն ծախեաց, և որպիսի լրջմտութէ յանձին կալաւ։

Այնմ իրի սատէնոցա և ասէ, "Ո՛ի աշխատ առնէք զկինդ,, և միտս ինչ յաւելու, քանզի կամի դարձեալ զարբարանացն յիշեցուցանել "Ո՛ւր ի Թաղելոյ զնա արար,, ասէ. և այլ միւս եւս միտս տայ. "Ո աղքատս յամ ժամ ընդ ձեզ ունիք, զնա ոչ յամ ժամ ընդ ձեզ ունիք։ Որ ուրեք քարոզեսցի աւետարանս, պատմեսցի և զոր արար դա,, Չեսանեն դարձեալ զնարդ ի հեթանոսս զեւս քարոզութէն յառաջագոյն գուշակեաց, և այսու միանգամ գնոսա վասն մահուանն. զի եթէ յայն չափ յետ խաչին ծագելոց է զօրութէն նորա, մինչև ընդ ամ երկիր տարածանել քարոզութէն, ո՞ որ այնչափ Թշուառական իցէ՝ որ զայնչափ աշխարհութէն ժխտիցէ. զի ահաւասիկ զոր ինչ ասացն եղեն, և ուր և երեթայցես ընդ ամ տիեզերս, գինոջն պատմեն. քանզի ոչ երեսք ինչ երևեալ լինէին, և ոչ վկայս բազումս ունէր, այլ ի տան. և ի տան բորոտի միոջ՝ ուր աշակերտքն միայն էին։

Այս արդ նա զինչ արար. Հնչեաց և տարածեաց զիւր զօրութէն, վասն այնորիկ որ ասացն։ Ո՛ի ահա Թագաւորաց բազմաց, և զօրականաց քաջաց յիշատակք քարոզութէ լուեցին՝ որ քաղաքս կանգնեցին,

և պարսպօք և պատուարօք ամրացուցին, և պատեցաւցնոյ յաղթեցին, և նշան յաղթութեանն կանգնեցին, և ոչ հետք անուանց երևին. և կին մի պոռնիկ եւղ միայն թափեաց ի տան բորոտի միոջ, և ի մէջ սակաւ արանց, և զայն հազիւ հարեալ պատմին ընդ ամէն տիեզերս. և այնչափ ժամանակաւք անցին, և յիշատակ իրացն ոչ եղծաւ. այլ և պարսիկք և հնդիկք, և սկիւթացիք, և թրակացիք, և սաւրոմատք, և որ ի բիւրիատացւոց կղզւոյն բնակեալ են, որ ինչ ի հրէաստան գործեցաւ գաղտ ի հնոյն միոյն պոռնկէ՝ տանին և ածեն,

ԱՒ մեծի մարդասիրութեան նոյն, զի և հինոյ միոյ պոռնկի թոյլ տայր զոտն համբուրել, և իւղով թաղել, և հերովն մաքրել. և տաստեր աշակերտացն որ մեղադիրն լինէին. քանզի չէր պարտ ի վերայ այնպիսի գործոյ անփոյթ առնել զկինն, զի զմեզ խրատիցէ՝ թէ զոր ինչ բարի և լինիցի, յաւժմէ և լինիցի, թէպէտ և չիցէ յոյժ սերտիւ, պարտ է ընդունել և յանձանձել, և յառաւելութեն ածել, և մի անդէն ի սկզբանն հաւաստիս պահանջել. Ա՛ւ դու այսուհետև եթէ տեսանիցես զոք՝ որ սպաս ինչ իրաց եկեղեցւոյ կազմիցէ, և բերել մատուցանիցէ, և կամ այլ ինչ զարդս յորմն, կամ յատակս եկեղեցւոյ, մի տար հրաման վաճառել կամ եղծանել զաբաքանէն, զի մի այսու կասեցուցանիցես զյօժարութեն նորա. ապա եթէ յառաջ քան զառնէն հարցաս նիցէ, հրամայեա աղքատաց բաշխել զայն. Ա՛յս ուրեմն և նա առ ի չկասեցուցանելոյ զյօժարութեն նորա արար զայն. և այլ զոր ինչ ասէր այնուհետև՝ ի միութեան նմա ասէր. Ա՛ւ քանզի ասէր եթէ առ ի թաղելոյ զնա արար, զի մի ի վճռութեն ինչ հինոյն կարծիցի զայնպիսի իրս յուշ առնելոյ, զթաղելոյն և զմահուն, տես զիարդ յաջորդօքն քրքրէ զմիաս նորա.

"Յա՛մ աշխարհ, ասէ, պատմեսցի զոր արար դա,, Ա՛յս և աշակերտացն միութեան էր. և նորա սփոփանք և գովութեն. Ա՛մէնէքին, ասէ, խօսեսցին զնմանէ առ յապա ժամանակս. Ա՛յլ այն յառաջագոյն. իսկ այժմ աստ զբարբարանացն ինչ դուշա-

կեաց, ի թաղելութիւն զեււդն նշանակելոյ։ Եւ արդ մի ոք նմա սաստեսցէ. զի ես այնչափ հեռի եմ ի դատապարտելոյ զսա, զի և ծածկել յուսամ Թոյլ լուցից, այլ և աշխարհ գիտասցէ՝ որ ինչ գաղտ ի տան գործեսցաւ. քանզի երկիղածութիւնն մնաց էր գործոյն և ջերմաջերմ հաւատոյ և Թախծեալ սրտի։ Եւ ընդէր հոգևոր ինչ չխոստացաւ կնոջն, այլ զցանկ կորդ յիշատակ։ Եւ.յսու և այնմ ևս համարձակութիւն կազմեաց, զի եթէ գործ բարի գործեաց, յայտ է Թէ և վարձս արժանի է առնուլ։

« Յայնժամ չոգաւ մի ոմն յերկոտասանիցն՝ Յուդա իսկարիովտացի՝ առ քահանայապետսն, և ասէ. զինչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ »։ Յայնժամ. երբ։ Յորժամ զայս ասաց, յորժամ զԹաղելոյն Հառեաց. և այնու ևս ոչ տարՀացաւ. և ոչ զի լուաւ, եթէ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ երկիր, երկեաւ ինչ. քանզի անբաւ զօրութիւնն էր բանն. այլ յորժամ կանայքն այնչափ պատիւ յուցին, և այն զի պոռնիկ կանայքն, նա յայնժամ սատայի գործ գործեաց։

Եւ ընդէր ասիցեն զնշաւակութիւնն. քանզի էր և այլ Յուդա։ Եւ չերաժարեն ինչ ասել՝ եթէ յերկոտասանիցն էր. քանզի և այնպէս չԹաքուցանեն զիրս ինչ՝ որ նախատանաց Թուիցի. Թէպէտ և մարԹ էր ասել Թաւն՝իխուն՝ եթէ յաշակերտաց նորա. քանզի էին և այլք, Թող զերկոտասանսն։ Ա՛յս աւաղ նիւ և զայն ևս յաւելու՝ եթէ յերկոտասանիցն. որ պէս զի ասիցէ՝ եթէ յաւաչին գնդէն, յաշնուաքանացն, յընտրելոցն, ի պետրոսեանցն և ի յովհաննեանցն. միայն ուշ եդեալ՝ զՀնմարիան ասել, և չԹաքուցանել ինչ յիւրացն։ Ո՛ան այնորիկ զինուաՀնացն բազում իրօք զանց առնեն. և որ նախատաՀնացն կարծին՝ անտի ինչ ոչ Թաքուցանեն. այլ եթէ բանք ինչ իցեն, և եթէ արդիւնք, և եթէ այլ ինչ այսպիսի, Համարձակ քարոզեն։ Եւ ոչ սոքա միայն, այլ և որ զբարձրագոյնս բարբառեցաւ Յովհաննէս՝ նա ինն առաւել զԹշնամանացն և զնախատանացն պատմէ։

Եւ տես՝ որչափ չարիք էին Յուդայի, յորժամ

ինքնին երթայցէ, և արծաթոյ վասն առնելոյ է, և այսպիսի արծաթոյ։ Այսոկ Պ ուկաս ասէ՝ եթէ ընդ իշխանան միաբանեաց։ Վասնզի մարմնէնին ընդ միմեանս հրեայքն, առ ի զգուշանալ ստահակութեան նոցա առնելոյ՝ կացուցին ի վերայ նոցա հոգաւոք զնուրս. քանզի անկեալ էր այնուհետև իշխանութիւն նոցա ըստ մարգարէութեան։ Ա՛ր նոսա մատուցեալ ասէր. « Օ՛ր՝նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ։ Ա՛ր նոքա խոստացան տալ նմա երեսուն արծաթի։ Ա՛ր յայնմ հետէ խնդրէր պարապ, զի մատնեսցէ զնա նոցա „։ Ա՛ր կասկածէր յամբոխէն, և միայն կամէր ըմբռնել։

Ո՛չ անմտութեանն, զիարդ միանգամայն շլացոյց զնա արծաթսիրութիւն. զի որ բազում անգամ տեսանէր զնա՝ զի ընդ մէջ նոցա անցանէր, և ոչ անկանէր ի բռնս, զիւրոյ ՚ածութեն զհանդէս ցուցանէր, կասկածէր եթէ ունել կարասցէ։ Ա՛ր այն զի առ նա այնչափ ահագինս բարբառէր, և բազում մեղմադոյս, զի զչարութեն մտաց նորա լուծանիցէ. նա և յընթերին անգամ չդադարէր յայնպիսի խնամակալել, այլ միշտ ցյետին օրն վասն նորին իրաց խօսէր ընդ նմա. և նա ինչ ոչ օգտեցաւ։ Ա՛յց սակայն և ոչ տէրն դադարէր առ ի զայն խօսելոյ, առ ի զնոյնս առնելոյ։

Օ՛նգն և մեր ի միտ առեալ, մի դադարեսցուք զնմա՛ հնարս հնարել առ ի զանցաւորն և զծոյլն խրատելոյ. ուսուցանել, խրատել, թելադիր լինել, թեպետ և չառնիցեմք ինչ օգուտ։ Վ՛ասնզի և Վ՛ճառաբանդն գիտէր զանուղղայ միտս մատնչին, բայց սակայն ոչ դադարեաց զնոսա լինելոյ. խրատէր, սպառնայր, եղուկ կոչէր, բայց ոչ յայտնատեսաւ ինչ, այլ՚ի ծածուկ. և՚ի մատնելոյն ժամանակի՛ և համբուրել ևս յանձն առ։ Ա՛յսակայն նա ոչ օգտեցաւ. քանզի այնչափ չարիք են արծաթսիրութեն. նոյն և տաճարակողոպուտ, և մատնիչ արար զնա։

Ա՛ուարուք ՚ամ արծաթասէրք, որ զ՚ՅՈւդայի ախտն ախտանայեք. լուարուք և զգուշացարուք ՚ի ցաւոցն. զի թէ որ ընդ Վ՛ՅՈւդն էր, և նշանս արար,

և յայնչափ արգարուԹԻՒ վայելեաց, և ի չերծաւ յախտէն, յայնպիսի խորխորատ սողեցաւ և էջ, ուր չափ և առաւել և դուք, որ ոչ կամիք գրոց լսել, և հանապազ ընդ աստէն իրս բևեռեալ էք, դիւրաւ ըմբռնիք յայնպիսի ախտս, եԹէ ոչ ստէպ վայելիցէք ի դարմանս։ Այս հանապազ էր ընդ նմա, որ այն երբէք գոյր գնել զգլուխ, և ցանգ խրատէր բանիւք և արգեամբք, "Ի ոսկի և արծաԹ, և մի երկուս պարեգօտս ունել", և սակայն չզգաստացաւ ինչ։ և դու զիա՞րդ ակնունիցիս ապրել յախտէն, որ ոչ ի դարմանս վայելեսցես, և զազուժ փոյԹ ի կերս արկանես։

Ցաւ, և անհնարին չար է գազանն. բայց սակայն եԹէ կամեսցիս՝ դիւրաւ յաղԹես. քանզի չէ բնաւորս ցանկուԹեան, և յայտ ի զերծելոյն ի նմանէ է. զի բնուԹիւն ամենեցուն հասարակաց է. և սա ի ծուլուԹէ միայն լինի, անտի բուսանի, անտի աճէ. և յարԹլոյն ի նմա, յորժամ կալցի, արտաքոյ բնուԹեան տայ կեալ։ Յորժամ չհանապիցին զհամազունսն, զսիրելիսն և զեղբարսն և զազգականսն ամ՝ և հանդերձ նոքօք և զանձինս, այն իսկ է արտաքոյ բնուԹեան կեալ. ուստի և յայտ իսկ է՝ ԹԷ չարիքն արտաքոյ բնուԹեան են, և արծաԹասիրուԹեանն ախտ՝ յոր և Յուդան անկաւ, և մանկիչ եղև։

Այլ զիա՞րդ, ասէն, այնպիսի եղև՝ որ ի Վերջին կոչեցաւ։ Ո՛չ էէ ի հարկէ՝ այ կոչումն. և չըհնազանդէ զկամս Յամենեցայն՝ ախորժել զառաքինուԹեան. այլ խրատէ և յորդորէ, և զամ հնարս հնարէ առ ի հաւանեցուցանելոյ՝ լինել պիտանիս. չանսայեէ, և ոչ բռնադատէ։ Այլ եԹէ կամիս ուսանել՝ ուստի եղև այնպիսի, գտանիցես յարծաԹասիրուԹէն զնա կորուսեալ։ Այլ զիա՞րդ, ասէն, ըմբռնեցաւ յախտն։ Այսն զի ծուլացաւ. քանզի անտի իսկ են այնպիսի փոփոխմունք։ Որչափ բռնաւորք իցեն՝ որք եղեն զգօնագոյնք քան զոչխարս. որք յանդգնեալք ի ցանկուԹիս՝ կային յետոյ ի զգօնուԹէ. որչափ՝ որ երբեմն ագահք էին, և այժմ զերբեանցն և ի բաց ընկեցին։ Այլ նոցին հակառակքն զարձեալ ի ծուլուԹէ սկզբան. զի և ՎաՀեզի ընդ առն ծեր կայր, և

եղև ժանտ և նա ի նմին ախտէ. զի քան զնմ ախտս՝ այն ախտ չար է. և անտի գերեզմանակրկիտք, անտի սպանողք, անտի պատերազմունք և կռիւք. զոր և ասիցես չարիք՝ անտի էն։ Քու նմ ուրեք անպիտան է այնպիսին. եթէ զօրավար իցէ, և եթէ ռամկավար. մանաւանդ եթէ ոչ ի հասարակացն միայն անպիտան է, այլ և յիւրմնն։

“Յառաջնում առուր բաղարջակերացն, մատեան աշակերտքն առ Յի և ասեն, ուր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն „։

ՈՒԱՋԻՆ օր բաղարջակերաց՝ յառաջ քան զբաղարջակերաց օրէն ասէ. քանզի սովոր էին յերեկոյ թեպ թուել, և զայն յիշել՝ զի յերեկորեայ զենլոց էր գառն զատկին։ Ի հինգշաբաթուջ զատկին մատեան. և զայս ոմն յառաջ քան զբաղարջակերսն յիշէ, ջժամանակն յայտ արարեալ՝ յորում մատեան. և ոմն այսպէս իսկ ասէ, թէ “Յկին եհաս ծօն բաղարջակերացն՝ յորում պարտ էր զզատիկն զենուլ „։ Յկինն զայն յայտ առնէ՝ թէ մերձեալ էր և ի դուրս հասեալ. և յայտ է՝ թէ զերեկորէն զայնմանէ յիշէ, քանզի յերեկոյին սկիզբն առնին վասն որոյ և յիւրաքանչիւրսն յաւելուն, թէ յորժամ զենոյր զբարբարանացն. և ասէին. “Ուր կամիս, և պատրաստեսցուք քեզ զբարբարանացն „. որպէս զի և այսու իսկ յայտ է, եթէ չգոյր նորա իջամանք։ Յայց թուի ինձ, թէ և ոչ նոցա չգոյր. ապա թէ ոչ, անդ աղաչէին զնա երթալ։ Յայց չգոյր և ոչ նոցա. քանզի հրաժարեալ էին այնուհետև։

Յս էր վասն զբարբարանացն կատարիր. ամենևին յայտ արարեալ մինչև ցվերջին օրն, թէ չէ հակառակ օրինացն։ Յս ընդէր առ անճանօթ այրն յղէ. զի և այսու ևս յայտ արասցէ՝ թէ կարող էր չարչարել. զի որ զմիտս առնն հաւանեցոյց լինել նմա ասպնջական, և զայն բանիւք և եթ, զինչ ինչ ոչ գործեր ընդ խաչահանուն, եթէ չէր կամք ցեալ չարչարել. և զոր ինչ առ իշուին արար, զնոյն և ասաց։

“Ա արդապետ ասէ, առ քեզ առնեմ զբարբարանացն „։ Յայց ես ոչ միայն ընդ այն զարմանամ՝ զի ընկալաւ որ ոչն Հանապէր, այլ զի և անկ ունէր այնչափ թշնամութեն յանձն առնուլ և անհաշտ պատեբազմին, իսկ նա արհամարհեաց զթշնամութեն և զպա-

տերազնի ։ Այլ զի չէին տեղեակ առնն , նշան տայր նոցա՝ որպէս մարգարէն Աւետեայ . « Վտանիցես , ասէ , զնոսին՝ զի ելանիցէ և տիկ ունիցի ըստ անձին » . և աստ , եթէ « Ապիոր յաւս ունիցի » ։

Այլ տէս դարձեալ զՀանդէս զօրութեն նորա . չասաց միայն եթէ զաբրտարանացն առնեմ, այլ և զվիւսն ևս յաւելու՝ թէ ժամանակ իմ մերձեալ է ։ Օ այս առնէ, զի միանգամայն աշակերտացն ստեպ յիշեցուցանիցէ զաբրտարանացն. որպէս զի յաձախութենէ կանխասացութեն կրթեալք, ստեպ զմտաւ ածիցեն զլրտն՝ որ գործելոց էին . և միանգամայն և նոյն իսկ առնիցականին և ամ հրեիցն ցուցանէ , եթէ ոչ ակամայ ինչ գայ ի չարչարանս ։ Յաւելու՝ թէ « Ընակեր-տօքս Հանդերձ » , առ բաւականութենէ պատրաստութեն լինելոյ , և նմա մի ինչ Համարել՝ եթէ գաղտ գայցէ ։

« Իբրև երեկոյ եղև , կայր բազմեալ աշակերտօքն Հանդերձ » ։ Ամբէ անմտութենն Յուդայի . քանզի և նա անդ էր , և ոչ՝ զի և խորհրդոյն ևս Հաղորդեսցի , և անդէն ի սեղանն յանդիմանի . որ թէ և գաղտն ինչ էր , զգօնանալ պարտ էր . նմին իբր իսկ աւետարանիչն նշանակէ , թէ մինչ դեռ ուտէին նոքա , խօսի Ինչ վասն մատնութենն . զի ի ժամանակին և ի սեղանոյն ցուցցէ զաբրութենէ մատնչին ։ Ամէն իբրև արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Ինչ , « Իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ երկոտասանիւքն Հանդերձ ։ Այլ մինչ դեռ ուտէին , ասէ . ամէն ասեմ ձեզ , զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս » ։

Այսքան զընթերին , և զտուն ևս լուաց զնոցա ։ Այլ տէս՝ զիարդ զընդայ ի մատնչին . զի ոչ ասաց թէ այս անուն մատնելոց է զիս , այլ թէ ոմն ի ձէնջ ։ Օ՛ի դարձեալ տացէ նմա իշխանութիւն ապաշխարութենէ , առ ի մեռանալ զչար արուեստն . և կամի երկեցուցանել զամենեսեան վասն զնա ապրեցուցանելոյ . ի ձէնջ, ասէ, յերկոտասանիցդ, որ յայժմ ժամ ընդ իս էք , զորոց և զտուտ լուացի , որոց այնչափ բարութիւնս խոստացայ ։ Այս ուրեմն անհնարին սուգ զնդաւն հեղաւ ։ Ամէն Յովհաննէս ասէ՝

թէ հիացեալ էին և ընդ միմեանս հայէին, և իւրա-
քանչիւր ոք ի նոցանէ հարցանէին, քանզի կաս-
կածէին զանձանց. Թէպէտ և չկայր խիղճ ուրուք
ի մէն՝ բայց ի միոյն։ Իսկ սա ասէ՝ եթէ տրտմեալք
յոյժ՝ սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք. " Միթէ
ես իցեմ տէր։ Նա պատասխանի ետ և ասէ, որում
ես թացից զպատառն և տաց "։

Տեսս, զիարդ յայտնեաց յորժամ զայլն ապրե-
ցուցանել կամեցաւ ի խռովութէն. քանզի մեռան
իսկ յահէն, նմին իրի ստէպ իսկ հարցանէին։ Նա ոչ
զնոսա միայն կամեցաւ բուժել յերկիղէն, այլ և ըզ-
մտամիչն յանդիմանել քանզի բազում անգամ խռով
ի խուռն լուաւ և չորտեցաւ ինչ, կամեցաւ կսկծե-
ցուցանել զնա, բառնայ զպատրուակն յերեսաց նո-
ցա. քանզի տրտմեալք սկսան ասել ցնա, " Միթէ
ես իցեմ Պատասխանի ետ և ասէ, որ միեաց ընդ ինս
ի սկաւառակս, նա է որ մատնելոց է զիս. և որդի
մարդոյ երթայ որպէս և գրեալ է վասն նորա, բայց
վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն որդին մարդոյ մատ-
նեսցի. լաւ էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն "։
Իսկ ոմանք ասէին, թէ այնչափ յանդուգն էր, մինչև
զվարդապետն չպատուել, այլ ընդ նմա Թանալ ըզ-
պատառն։ Այլ ինձ Թուի՝ թէ և զայն արար Յի-
սուս, զի գեթ այնու պատկառեցուցանէ և ի գութ ա-
ծիցէ։

Այլ Թերևս ասիցէ ոք՝ եթէ գրեալ էր նորա ըզ-
չարչարանսն չարչարել, իսկ Յուդա ընդէր պատժի-
ցի՝ որ զգրեալսն արար։ Այլ եթէ չայն միտս, այլ
առ չարութէ. զի եթէ ոչ զմիտան քննեսցես, ապա
և զատամնոյ ազատ ի պատժոյ արասցես. այլ չէ
այնպէս և չէ իսկ. զի բիւրապատիկ պատժոյ ար-
ժանի էն և սա և նա, Թէպէտ և տիեզերք փրկեցան։
Այլ եթէ Յուդայի մատնութէնն փրկութէն գործեաց,
այլ Աստի բարերարութէն, և նորին հնարաւոր Ձար-
տարութէն հնարէ, որ զայլոց չարութէ առ ի մեր
շահ արկ ի կիր։

Իսկ արդ զիարդ, ասեն. եթէ Յուդայի չէր մատ-
նեալ, այլ ոք չմատնէր. և այդ զինչ իցէ ի խնդիր։
Օ՛ եթէ ի խաչ ելանել պարտ էր Աստի, յոյր և ի

ձեռն՝ պարտ էր. և եթէ յոյր ձեռն պարտ էր, յայտ է՝ թէ ՚ի մարդոյ. և եթէ ամենեքեան բարիք գտեալ էին, ապա խափանեալ լինէր անտեսութիւնն՝ որ վասն մեր: Վասն լիցի. զի ինքն իսկ ամենիմաստն գիտէր՝ որպէս պարտ է զմեր փրկուի վճարել. քանզի ընդ հաւետ և անբաւ է իմաստութիւն նորա. նմին իրի իսկ, զի մի ոք կարծիցէ եթէ անտեսութիւն սպասաւոր ինչ եղև Հայդա, եղուկ կոչէ զմարդն: Այլ թերևս դաթձեալ ասիցէ ոք. Թէ լաւ էր նմա չծնանել, ընդէր ետ նմա թոյլ գալ ՚ի մէջ, և այլոց նոյնպիսեաց չարաց: Պարտ էր քեզ չարացն մեղադիր լինել, զի իշխանութիւն ունէին չլինել այնպիսիք՝ և եղէն չարք. զի՞ քո զայն Թողեալ, զայն քննել ՚ի խոյզ և ՚ի խնդիր արկանես. և այն զի գիտես իսկ՝ եթէ չիք ոք չար ՚ի հարկէ. և բարեացն միայն, ասես, պարտ էր լինել, և չլինել պէտք գՀնին, և ոչ տանջանացն պատժոց, և չլինելին ուրեք Հետք չարեաց, ՚ի չարացն չլինելին. և եթէ լինելին և՛ս, վաղվաղակի երթալ:

Այսխ արժան է ըստ առաքելոյ բանին տալ քեզ պատասխանի, Թէ "Իսկ արդ դու ո՞ ես մարդ՝ որ ընդդէմ պատասխանի տաս ՚ի. մի՛թէ ասիցէ ստեղծուածն ընդ ստեղծիչն՝ Թէ ընդէր այդպէս արարբեր զիս"»: Այս եթէ ՚ի մտաց ինչ պահանջեսցես, և զայն ասացից, Թէ յայնժամ զարմանալի էն բարիքն, յորժամ ՚ի մէջ չարացն իցեն. քանզի չխակալութիւնն, և բազում իմաստութիւնն նոցա, յայնժամ երևեսցի: Այլ դու զպատճառս մարտից և պատերազմաց ՚ի միջոյ բառնալոյ ասես զայդ: Իսկ արդ զիարդ, ասեն. որքան այլք լաւք երևեսցին, նոքա՞ տանջեսցին. քաւ լիցի. այլ վասն իւրեանց չարութեանն. քանզի ոչ վասն զի ՚ի մէջն եկին՝ եղէն չարք, այլ յիւրեանց ծուլութենէ. նմին իրի իսկ և տանջելոյ են:

Այս զիարդ չիցեն տանջանաց արժանի, որ այնչափ վարդապետաց առաքինութիւնք ունէին, և չհատանէին ինչ անտի. զոր օրինակ լաւքն և բարիքն կրկին պատուոյ արժանիք են, զի և պիտանիքն եղեն, և ՚ի չարացն չվնասեցան ինչ, նոյնպէս և յոռիքն կրկին

պատժոց արժանի էն, զի չարք եղէն, և այլոց միա-
սակարք, որք կարողքն էին լաւք լինել· և այսո-
'ի նոցանէ էր որք եղէն լաւք, և ոչ ինչ 'ի չարացն
միասեցան։

Այլ տեսցուք զինչ ասէ Յուսաւակնն, յետ
յանդիմանելոյն 'ի վարդապետէն. «Ի՞նձէ ես իցեմ
տէր»։ Այս ընդէր 'ի սկզբանն չհարց զայս. կար-
ծէր թէ Յաքչել կարիցէ, վասն ասելոյն թէ մի ոմն
'ի ձէնջ. և յորժամ յայտ ած զնա, ապա ժամեցաւ
հարցանել. 'ի հեզուձէն վարդապետին ապաստանէր,
որպէս թէ ոչ յանդիմանեսցէ զնա. նմին իրի եւկ և
ռաբբի կոչեաց։

Իսկ զիաւրդ է զի Մատթէոս ասէ և այլքն՝ թէ
յորժամ խօսեցաւ վասն մատնութեանն, յայնժամ
ըմբռնեաց զնա սատանայ. և Ղուկաննէս ասէ, թէ
«Ձեզ պատառոյն ապա եմուտ 'ի նա սատանայ»։
Նա և սա իսկ զնոյն զիտէ. վերագոյնն ասէ, թէ
«'Ի լինել ընթերեացն՝ սատանայի իսկ արկեալ էր
'ի սիրտ, զի մատնեսցէ զնա»։ և զարձեալ զիաւրդ
ասէ, թէ «Ետդ պատառոյն եմուտ 'ի նա սատա-
նայ»· զի ոչ յանկարծակի մտանէ և ոչ միանգա-
մայն, այլ նախ բազում ընտրութեամբ գործէ, որպէս
և անդ իսկ եղև։ Ոչ նախ կարեմ եհար նմա, և
սկսաւ մեղմով զչափ առնուլ. մինչ ետես եթէ պի-
տանի աստիճանաւորութեան է, այնուհետեւ ամենևին
չնչեաց 'ի նա և յաղթեաց նմա։

Եւ զիաւրդ իցէ. եթէ զչարչարանացն զտիկին ու-
տէին, արտաքոյ օրինաց ուտէին. քանզի չէր օրէն
բազմել և ուտել. և առ այն զինչ իցէ ասել։ Զմե
յետ ուտելոյն ապա բազմեցան այլ ինչ ուտել։ Իսկ
միւս աւետարանիչն ասէ, թէ յերեկոյն յայնմիկ ոչ
միայն զչարչարանացն եկեր, այլ ասէ. «Չանկանա-
լով ցանկացայ զայս զտիկ ուտել ընդ ձեզ»· այս
ինքն թէ յայսմ տարւոջ։ Եւ վասն էր արդեւք։
Օ՛ի յայնմ տարւոջ լինելոց էր փրկութեն աշխար-
հի, և աւանդելոց վեսրհրդին, և տրտմականին
լուծանելոյ մահու. զի այսպէս ըստ իւրոց կամացն
էր խաչն։

Այլ ոչ ինչ զանհամբոյր գազանն կակղացոյց. և

քանզի ոչ իւիք պատկառեաց, եղուկ կոչէ զնա. „Ա՛յ, ասէ, մարդոյն այնմիկ „. դարձեալ և երկեցոյց. “Լաւ էր, ասէ, թէ չէր ծնեալ մարդն այն „. և պատկառեցոյց, թէ “Արուա՛ր ես թացիկ զպատառն և տաց „. և ոչ ի՛ ինչ յայսցանէ նահանջեաց զնա. զի իբրև ի՛ մեղրուքէ խմբեալ ըմբռնեցաւ յարծաթասիրուքէն. մանաւանդ թէ չարագոյն քան զայն է ախտն։

« Ա՛յնչ դեռ ուսեալն նոքա՝ առ Յն հայց, գոհացաւ, եբեկ, և ետ աշակերտացն, և ասէ ցնոսա՝ առէք կեբայք, այս է մարմին իմ։ Եւ առ զբաժակին, գոհացաւ, ետ նոցա, և ասէ. արբէք ի դմանէ ամենեքեան, այդ է արիւն իմ նորոց կտակարանաց՝ ի վերբայ բազմաց հեղեալ ի թողութիւն մեղաց »։

Ա՛ՆՐԵ, քանի՛ կուրութիւն եր մատնչին. և խորհրդոյն հաղորդեալ՝ ի նմին և՝ ի նոյն եկաց. և յաւգային սեղանոյն վայելեալ, ո՛չ փոխեցաւ։ Եւ զայն Ա ուկաս յայտ առնէ. « Յետ այնորիկ, ասէ, եւնուտ ի՛նձ սատանայ »։ ո՛չ եթէ զմարմինն տերունական արհամարհելով՝ այլ զանամօթութենէն մատնչին այնուհետեւ ծաղր առնէ. քանզի և յերկոցունց կողմանց մեղքըն յաճախէին. զի այնպիսի մտօք՝ ի խորհուրդն մերձենայր, և զի մերձեցեալ չգայր յաղղութիւն. ո՛չ յերկիղէ, և ո՛չ յերախտեացն, և ո՛չ՝ ի պատուոյն պատակառեաց ինչ Աւազ Ա՛ձ չարգելչը զնա, թէպետ և զնմա՛ գիտէր. զի ուսանիցիս՝ եթէ չառնէ ինչ պակաս՝ ի պատշաճիցն, որ յաղղութիւն ածէ. յեն։ Ա՛ն այնորիկ և յառաջ քան զայն և յետոյ սեպ յիշեցոյց, և խորատեաց արդեամբք և բանիւք և երկիւղիւ և ողբանօք և սպառնալեօք և անաքանօք, այլ ո՛չ ինչ հեռացոյց զնա՝ ի չար ախտէն։ Ա՛ն որոյ այսուհետեւ զնա թողեալ, աշակերտացն աշագին խորհրդոյն յուշ առնէ զարձեալ զսպանմանէն, և առ սեղանն իսկ զնաչէն ձառէ, զի յաճախութ կանխասացութեանն դիւրընկալ արասցէ զչարչարանն. զի եթէ այնչափ յառաջ գործք գործեցան, և բանք ասացան. և տակաւին խռովէին, եթէ չեր ինչ յայսցանէ լուեալ զինչ արդեօք ո՛չ կրկնին։

« Ա՛յնչ դեռ ուսեալն, ասէ, առ Հայց, գոհացաւ, եբեկ »։ Եւ ընդէր արդեօք յայնժամ ըստ ժամանակի զատկին զխորհուրդն կատարէր։ Ո՛չ ուսանիք

ցիս ամմ ուստեք, թէ և հնոյն ինքն է օրէնսդիրը. և ամմ որ ինչ՝ի նմա կայր, վասն սորին կանխասա ստուեր բազբեցաւ. յայն սակս ուր օրինակն էր, անդէն և զչմարտութիւնն գնէ։ Լերեկոյն, լըման ժամա նակացն նշանակ էր, և այնուհետեւ գալոց վախճանն իւր իբացն։ Լե գոհանայ առ զմեզ ուսուցանելոց, եթէ զիարդ պարտ իցէ զխորհուրդն կատարել. և ցուցանէ՝ եթէ ոչ ակամայ ինչ գայ՝ի չարչարանս. և իբրատ զմեզ՝ եթէ զոր ինչ չարչարանս և կրիցեմք, գոհութիւք պարտիմք տանել. և հեշտակաց յոյս գնէ այնուհետեւ առաջի. զի թէ օրինակն այնչափ ծառայութեամն՝ եղև ազատութիւն, որչափ եւս առաւել՝ չչմարտութիւնն զամենայն տիեզերս ազատեսցէ, և յերախտաւորութեի մերոյ բնութեամ մատնեսցէ։

Լ՝ինն իբրի իսկ չաւանդեաց յառաջ քան զայն ըզխորհուրդն, այլ յորժամ այնուհետեւ գադարեալոց էին օրինակքն. և զգլխաւորն իսկ ուսանիցս նոցա լուծանէ, և յայլ ինն ահագին սեղան փոխէ։ « Լ՝առէք, ասէ, կերայք. այդ է մարմին իմ փոխանակ բազմաց փրկեալ »։ Լե զիարդ ոչ խոռվեցան իբրև լուան զայն. քանզի բազում ինչ և մեծամեծ վասն սորին իբաց խօսեցաւ յառաջագոյն ընդ նոսա. վասն որոյ այնուհետեւ այլ ինչ ոչ յարդարէ, քանզի բաւական նուէք իսկ լուեալ էր. բայց միայն զպատճառս չարչարանացն ասէ, զմեղացն բառնալ։ Լե արիւն նոր բոյ կտակի կոչէ. այս է խոստման առեւեցաց նոր օրէնց. քանզի զայս խոստացաւ և՝ի հնումն, զարձեալ և զնոյն ինն յաձախէ և՝ի նորումն։ Լե որպէս՝ի հնումն արջառ և ոչխարք էին, նոյնպէս և՝ի նորումն արիւնն տէրունական. զի այսու ևս ցուցցէ եթէ վախճանելոց է, վասն որոյ և զկտակէ յուշ առնէ. յիշեցուցանէ և զառաջինն, քանզի և այն արեամբ նորոգեցաւ. զարձեալ ասէ և զպատճառս մահուն, թէ « փոխանակ բազմաց հեղաւ՝ի թողութիւն մեղաց. զայս արարէք յիմ յիշատակ »։ Տեսաք նմա՝ զիարդ մերժէ և հանէ՝ի հրեական օրինացն. զի որպէս զայն առնելիք, ասէ, յիշատակ սքանչելեացն՝ որ Լ՝ղիւպտոս գործեցան, նոյնպէս և զայս յիմ

յիշատակ. այն հեղաւ ի փրկութիւն անդրանկացն, և այս ի թողութիւն մեղաց ամ աշխարհի։

“Այս է, ասէ, արիւն իմ հեղեալ ի թողութիւն մեղաց,,։ Ո այս ասաց, զի և այսու յայտ արասցէ միանգամայն՝ եթէ խորհուրդ է չարչարանքն և խաչն. և այսու ևս միւթաբէ զաշակերտսն։ Արդեպ և Նովաէ սէմն, ասէ, զայն յիշատակ յաւիտենից եմոզ, ցոյն պէս և ես զայս յիմ յիշատակ՝ մինչև եկից։ Ա ամն այնորիկ և “Ցանկանալով, ասէ, ցանկացայ զայս զա տիկ ուտել ընդ ձեզ,,. այս ինքն աւանդել ձեզ նոր իրս, և զաստիկ առնել ըստ այմ՝ զի հոգևոր առնէ լոց եմ զձեզ։ Այս ինքն արբ անտի, զի մի յորժամ լսիցեն զայն՝ ասիցեն, իսկ արդ զիա՞րդ. արիւն ըմպիցեմք և մարմին ուտիցեմք, և խառնվեսցին որպէս և յայնժամ. քանզի և այժմ, յորժամ վանն սորին ի բաց Ձառեաց, բազումք գայթագղեցին ի բանիյն։ Արդ զի մի և աստ խառնվեսցին՝ նախ ինքն արբ, զի առանց խառնուածոյ ածիցէ զնոսա ի հաղորդութիւն խորհրդոյն. նմին իրի իսկ յիւրմէ արենէն ինքն արբ, իսկ արդ և զկինն պարտ ինչ իցէ առնել, ասեն. և ոչ երբէք. վանն այնորիկ ասաց՝ եթէ զայս արարէք, զի անտի մերժեսցէ. զի եթէ այս թողութիւն մեղաց առնիցէ, որ զի առնէ իսկ, ապա այն աւելորդ է։

Այսուհետև որպէս առ հրեայսն՝ նոյնպէս և աստ ընդ երախտիսն կապեաց զյիշատակ խորհրդոյն, զի այսու կարկեսցէ զբերանս չերձուածողացն. յորժամ ասիցեն, ուստի՞ յայտ է՝ եթէ զնոսա Քրիստոս, հանդերձ այլովքն և խորհրդոյնն ըմբռնեսցուք զնոսա։ Ո՞ւ եթէ չմեռաւ Քրիստոս, վասն էր այսչափ օրինակք կատարեցան։ Ջեսանեն թէ ոչխարի փոխան գործեցան առ ի յիշատակ լինելոյ՝ եթէ մեռաւ Քրիստոս վասն մեր։ Այս քանզի յառնելոյ էին ընդդէմ այսոցիկ մարկիոնացիքն, և վաղենտիանոսքն, և մանիքեցիք, ուրանալով զմտաեսութիւնն, վասն այնորիկ ստէպ յուշ առնէ զյարութեանցն՝ և առաւել խորհրդոյն, զի մի ոք իշխեսցէ արհամարհել. միանգամայն երկեցուցանէ և խրատէ սուրբ և նուիրական սեղանոյն այնուիկ. քանզի գլուխ ամենայն բարութեանց այս է, վասն որոյ և Պաւղոս զսոյն վեր ի վայր յեղեղոյս։

Ասէ իբրև աւանդեաց զաւորհուրդն ասէ . « Ոչ արբից ի ծննդենէ որթոյս այսորիկ , մինչև յօրն յայն՝ յորում արբից զդա նոր ընդ ձեզ յարքայութեան հօր իմոյ ,, : Այնպէս վասն չարչարանացն և խաչի խոսեցաւ ընդ նոսա , ապա և զչարութենէն բանս մուծանէ , զարքայութենէնն ի մէջ բերեալ յիշեցուցանէ . քանզի և զչարուէնն իւր այնպէս կոչէ : Այս ևր վասն յորժամ չարեաւն արբ : Ի մի Թանձրամիտքն առաչօք ինչ զչարութիւնն կարծիցեն . քանզի ի չարութենէն զայն նշան տային բազումք . վասն որոյ և առաքեալքն , յորժամ զնոսա վասն չարութենէն հաւատ նեցուցանէին , զայս ասէին Թէ « Արբ էրբեալ և արբաք ընդ նմա յետ չարութենէն ,, : Այս արդ չայտ իսկ առնէ՝ եԹէ զնա տեսանիցեն չարուցեալ լուսաւորագոյն , և առ նոսա գայցէ միւսանգամ , և ինքեանք վկայք լինցին գործոյն , և երեսօք և իրօք : « Մինչև արբից զդա , ասէ , նոր ընդ ձեզ ,, : Գուք , ասէ , վկայիցէք՝ զի ձեզէն իսկ տեսանիցէք զնս չարուցեալ : Ո՛ինչ իցէ նորն : Արն՝ ընաշխարհիկ լինի է . զի ոչ մարմին չարչարելի ունէր այնուհետև , այլ անեղծ և անմահական և ոչնկարօտ կերակրոց . զի ոչ վասն պիտոյից ինչ եկեր և արբ յետ յարութենն . քանզի ոչ ևս այնուհետև պիտոյ էր այն մարմնոյն , այլ վասն չարութենէն հաստատութենէ : Այս ընդեր ոչ ջուր արբ յորժամ չարեաւն , այլ գինի . զի և զմիս չար հերձուածն արմատաբի խլեսցէ . զի էն ոմանք որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն , ցուցանէ՝ Թէ յորժամ զաւորհուրդն աւանդեաց , գինով աւանդեաց . և յորժամ չարեաւն՝ առանց խորհրդոյ ի լոկ սեղանն զգիներն ի կիր արկ . ի ծննդենէ որթոյ ասէ , և որթեն գինի և ոչ ջուր ծնանի :

« Երբև օրհնեցին , ասէ , ելին ի լեառն Ձիթենեաց » : Ուրեմն որք երբև զնոցա վայրապար ուսանէն , և առ ոմն հարկանէն զսեղանն երևելի , և չառնեն արբեցութիք հանդերձ , որոց պարտ էր գոհանալ և օրհնութեամբ զրաւ առնել : Ուարձք և որք վախճանի աղօթիցն ոչ մնայք յետ խորհրդոյն , զի այն այսմ օրինակ էր : Գոհացաւ նախ քան զաւանդել զնորհուրդն ի ձեռն աշակերտացն , զի և

մեք զոհասցուք։ Վոհացաւ և օրհնեաց և յետ ուտելոյն, զի և մեք զնոյն առնիցեմք։ Այս ընդեր արդեաք՝ ի լեառնն երթայցէ. յայտնի առնէ զանձն յաւաղ քան զուներլն, զի մի կարծիցի թաքչել։ Վասն Թացաւ գալ՝ ի տեղին, զոր և Յուդաս Ճարտար գիտէր։

ՑՈՐԴՈՐԱԿ

Վ ԱՍՆ որոյ ազաչեմ, մի զնամ ինչ յաճ ապաստան արարեալ՝ ի քուն լինիցիմք. և մի յորժամ փութայցեմք, անձանց իսկ վաստակոց զուղղութիւս հաստատեսցուք։ Ոչ ծոյլ կամի լինել զմեզ Աճ, վասն այնորիկ ոչ զնամ ինչ ինքն գործել. և ոչ հպարտս, և յայն սակս ոչ զնամ ինչ՝ ի մեզ ապաստան արար. այլ և գերկոցունց վնասակարսն խլէ, և զօգտակարսն տնկէ։ Այնմ իրի, և գլխաւորին Թոյլ ետ անկանել, զի ցածուն յարդարեսցէ զնա, և յառաւել սէր կրքեսցէ։ Որում բազում, ասէ, Թողաւ, շատ սիրէ։

Ընասացուք այսուհետև ամ ուրեք ՚ի, և մի լինցուք բանբերդիմ, Թէպէտ և հակառակ ինչ մերոց մտացս բանն կարծիցի. եղիցի քան զմիտս մեր և զերեսս՝ բան նորա հաստատուն։ Ի՚նչպէս և ՚ի խորհուրդն առնեմք, զի ոչ յայն որ առաջի կայ միայն նայիմք, այլ զբան նորա ունիմք ՚ի մտի. զի նորա բանն առանց խաբէութեան է, և մեր տեսիլս դիւրապատիր. նա ոչ երբեք վրիպէ, և սա բազում ինչ սխալէ։ Այս քանզի բանն ասէ, "Այս է մարմին իմ,,, հաւանիմք և հաւատամք, զի իմանալի աչօք տեսանիմք զայն։ Վասն զի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Աստ, այլ տեսանելի իրօք զիմանալիսս ամ։ Այնպէս և ՚ի միրուռն Թէն՝ ՚ի տեսանելի ջուրն գործէ պարգևն. և իմանալիք են՝ որ կատարին, ծնունդն և նորոգութիւն. զի Թէ անմարմին էիր, Թերևս և մերկ իսկ զիմանալիսն պարգևեալ էր. բայց քանզի մարմնով պատեալ են ոգիքն, տեսանելեօք զիմանալիսն աւանդեաց քեզ։

Վասնիք իցէն, որ ասիցեն այժմ՝ Թէ կամիմ զնբեսս նորա տեսանել, զկերպարանսն, զՀանդերձն զո-

տիցն օդ. ահաւասիկ զնա խնդ տեսանես, ի նա մեր ձեռաս, և ուտես և. դու զՀանդերձան ցանկաս տե- սանել, և նա զանձն իսկ տայ քեզ՝ ոչ միայն տեսա- նել, այլ և շօշափել, և ուտել, և ի ներքս առնուլ: Ոչ արդ մի ոք նոզկասցի մերձենալ, մի ոք մեղ- կասիցէ. ամենեքեան հրով վառեալք, ամենեքեան ճառագեալք, արիացուք և յարուցեալք: Օ՜ի եթէ հը- բեայքն յոտն կային զկոշիկ զգեցեալ, և զցուպ՝ի ձեռս ունէին, և փութանակի ուտէին, որչափ և առա- ւել մեզ պարտ իցէ արիանալ լինել: Ոչքա՜ ի պաղեա տինացուց աշխարհն ելանելոց էին, վասն որոյ և ըզ- Ձանապարհորդաց կերպարանս ունէին. և դու յեր- կինս երթալոց ես:

Վասն որոյ ամենևին արիանալ պարտիս լինել. քան զի և ոչ սակաւ տանջանք պահիցին այնոցիկ՝ որք ան- արժանասիրիցէն հաղորդիցին: Օ մտաւ ած՝ որպիսի ցաստուն մատնչին և խաչահանուացն եղև. զգոյշ լեր այժմ, գուցէ և դու պարտական մարիանոյ և ա- րեանն գտանիցիս: Ոչքա զմարմինն սպանին, և դու յաղտեղեալ հոգիդ ընդունիս յետ այնչափ երախ- տեացն:

Վասն զի չշատացաւ մարդ լինել և ապրտակել և ժեռանել, այլ և տակաւին զանձն իւր խառնէ ընդ մեզ. ոչ միայն հաւատովք, այլ և արդեամբք իսկ մարմին իւր յօրինէ զմեզ. քան զինչ չէ պարտ սրբ- բազոյն լինել այնմ, որ յայնմ զենման վայելիցէ. քան զորպիսի՞ ճառագայթս պայծառագոյն՝ ձեռնին, որ զայն մարմին հատանիցէ. և բերանոյն՝ որ հո- գևոր հրոյն լնուցու. և լեզուին՝ որ հանակ՝ի կար- միրս յահագին յարկնէն ներկանիցի: Օ մտաւ ած, որպիսի պատուով պատուեցար, կամ յորմէ սեղանոյ վայելես. զոր հրեշտակք տեսանեն և զարհուրին, և շիշխեն համարձակ ընդդէմ հայել՝ի փայլատականացն որ անտի հատանիցին, և մեք նովաւ կերակրիմք, և նովաւ զանկանիմք, և լինիմք մի մարմին և մի հոգի: " Ո՞ պատմեսցէ զզօրութիս նորա ,, : Ո՞ր հովիւ յիւր անդամոցն կէ- բակրէ զիւր ոչխարան. և զինչ և սասցիկ հովիւ. այլ և մարք և իցեն բազում անգամ, որ յետ եր-

կանց և ծննդոց՝ գայեկաց տան զօրգիս ։ Իսկ սա ոչ ժուժեաց զայս առնել, այլ ինքնին կերակրէ զմեզ իւրով արեամբն, և ամենայնիւ ընդ իւր գրկախառն առնէ զմեզ ։

Այլ միտ դիր, ծնաւ՛ի մերմէ բնութենէ ։ Այլ այն չէ ինչ, ասեն, առ ամենեսեան. մանաւանդ թէ առ ամենեսեան իսկ իցէ. զի թէ՛ի բնութենէս մեր էին, յայտ է թէ առ ամենեսեան էին. և եթէ առ ամենեսեան, ապա և առ իւրաքանչիւր ոք ։ Այլ ընդէր, ասեն, ամենեքեան չշահեցան անտի շահս ։ Այն ոչ եթէ՛ի նմանէ է՝ որ ընդ ամենեցուն կամեցաւ, այլ՝ի նոցանէ՝ որք չախորժեցեալն. և ընդ իւրաքանչիւր ումէք՛ի հաւատացելոց խառնէ զանձն խորհրդիւն. և զոր ծնաւն՝ իւրովի մնուցանէ, և չտայ յայլ ոք, զի այնու և առ հաւանեցուսցէ զքեզ՝ եթէ զքո մարմնոյդ առ ։

Այլ արդ մի ծուլանայցեմք՝ որ այսչափ արժանի եղեաք սիրոյ և պատուոյ ։ չտեսանիցեմք զմանկունս մատաղս՝ որպիսի յօժարութեամբ բուռն զատեանցն մարցն հարկանիցեն, որպիսի յօժարութիւ մածուցաւ նեն զչրթունսն ընդ մարցն չրթունս. այսպիսի յօժարութիւ մատիցուք յայն սեղան և՛ի մկրտենի հոգևոր բաժակն, մանաւանդ թէ ևս յոլովագոյն քան զմանկանցն ձգեսցուք մեք զչնորհս հոգւոյն ։ Այլ զմին միայն տրտմութիւ համարեսցուք, չվայելելն յայսպիսի կերակուր. քանզի չէ մարդկեղէն զօրութե՛ որ առաջի կայ. զոր յայնժամ յընթերեցոյն ժամն ա բար, և այժմ գնոյն գործէ. մեք զսպասաւորաց աշխատանսն ունիմք, և սրբէ և վերստին կազմէ նա ։

Արդ ո՛ր այսուհետև Յուդաս եկեալ կայցէ, ո՛վ ոք արծաթասէր. թէ չիցէ աշակերտ՝ի բաց մեկնեսցի. քանզի չընդունի զայսպիսին սեղանս. " Աշակերտօքս հանդերձ, ասէ, առնեմ զպատիկս ,, ։ Այն սեղան է, և չունի ինչ նուազագոյն քան զայն. ոչ եթէ զայն Աստուած, և զայս մարդ գործիցէ. այլ և զայն և զայս՝ նոյն. և այս նոյն վերնատունն է, յորում յայնժամ էին, և անտի՛ի լեառն ձիթենեաց ելին ։ Այցուք և մեք՛ի ձեռն աղքատաց, քանզի այն տեղի իսկ է լեառն ձիթենեաց. և ձիթենիք անկեալք՛ի տան այ՝ աղքատայն գունդք. և եւղ՝ որ անդ պիտոյ է մեզ, զոր

հինգ կուսանքն ունէին. և այլքն, քանզի չունէին, անգամին կորեան. զայն առեալ երթայեմք, զի լու- սաւոր լապտերօք հանդիպեսցուք փեսային, զայն ա- ռեալ ելցուք աստ. մի՛ ոք տմարդի մերձեսցի, մի՛ ոք անագորոյն, մի՛ ոք անողորմ, մի՛ ոք ամենևին պիղծ։ Օ այս առ ձեզ ասեմ՝ որք հաղորդիք խոր հրոյն, և առ ձեզ՝ որք մատակարարք նորին իցէք. զի կա- րևոր իսկ և հարկ է և առ ձեզ խօսել, զի բազում զգուշութիւն բառնիցէք զպարգևն. քանզի չիցեն սա- կաւ պատիժք և ձեզ, եթէ գիտիցէք զարիս ուրուք, և համարձակիցէք վայելել յայմ սեղանոյ. արիւն նորա՛ի ձեռաց ձեր խնդրեսցին։ Եթէ սպարապետ ոմն իցէ, եթէ հաղարապետ, եթէ զթագն իսկ՛ի գլուխ ունիցի՝ և անարժանութիւն մատչիցի, արգել՝ զի մեծ քան զնորայն դու ունիս իշխանութիւն։ Դու եթէ աղեւէր յատակ ջուրց յանձն առնուիր պահել խաշանց, և տեսանիցիր զոչխարի միոյ շաղախեալ աղ- բով զաւերան, չտայիր Թոյլ խմարհել և պղտորել զյատակ աղեւէրն։ Իսկ դու աւագիկ ոչ զԹոյլ, այլ զարեան աղեւէրն յանձն առեալ, և տեսանես չարա- չար տղմով շաղախեալ, և գալ մերձենալ կամի, և չտաստես, և չարգելուս, և զոր ներել Թողուն ունի- ցիս։ Վ ան այսորիկ այսպիսի պատուով պատուեաց զձեզ՝ ած, զի զոչնսպիսին քննիցէք. այն է ձեր պա- տիւ, և նոյն զգուշութիւն, նոյն և պակ համարէն. և ոչ սպիտակ պարեգօտիւնքդ, զոր կոկեալ ողորկեալ ընդ անձն արկեալ փերևերտեալ չըմիջ։

Այլ ես ուստի՞ ձանաչիցեմ, ասէ, զայս անուն կամ զայն անուն։ Վ՛չ զանձանօթիցն ասեմ, այլ զձանօ- թիցն։ Այսոյիկ և ահագին ինչ. զի ոչ այնչափ այսա- հարացն պատիժք են՝ որ՛ի ներքս կայցեն, որպէս զա- րոց Պաւղոս ասիցէ, զորդիին՝ այլ առ ոտն հարկանել, և զարիւն նորոյ ուրախին խառնակ համարել, և զՀո- գին շնորհաց Թշնամանել. քան զդիւահարսն և աւ չար իցէ՝ որ մեղանչիցէ, և խառն յօրէնսն մերձենայցէ. զի նոքա վասն դիւացն չմնանեն՛ի տանդանսն, և ա- քա վասն անարժանին մերձենալոյ յանմահ պատիժս մատնիցին։ Վ՛չ զնոսա միայն հալածիցեմք, այլ զա- մենեսեան զորս տեսանիցեմք՝ եթէ անարժանութե՛ի

սրբուԹ՚ենն մերձենայցեն ։ Այլ ոք հաղորդեսցի, ոք չիցէ աշակերտ. մի ոք Յուդաս, և ժխտեսցի առնուլ, զի մի Յուդայի անցք ընդ նա անցանիցեն ։

Ասացին ԱՀել ես և ասէ իսկ բազմուԹիւն ։ Օ գոյշ լեր՝ որ սպասաւոր ամէն խորհրդոյ իցես, զուցէ բաւական ցուցանիցես զնոսին, որ ոչ սրբեցեր զմարմինն. զուցէ սուբ՝ փոխանակ կերակրոյ տացես ։ Այլ եԹէ յանգէտս գայցէ ումն հաղորդել, և զուա արգել, և մի երկնչիցիս. յայ երկիր, և մի ՚ի մարդկանէ. եԹէ ՚ի մարդկանէ երկնչիցիս, և ՚ի նմանէ իսկ ծայր կայցես. և եԹէ յայ, և ՚ի մարդկանէ մեծարոյ լինիցիս։ Ուր եԹէ զուա ոչ իշխես՝ առ իս աճ, ինձ ազգ արա՝ և չտամ Թոյլ զայն յանդգնուԹ յանդգնել։ Յանձնէս լաւ իցէ անկանել, և մի զմարմինն տերունական անարժանից բաշխել. և զիմ արիւնս տալ նախ ՚ի հեզուԹիւն, և մի զահագին արիւնն յանարժանս ։ Այսպա եԹէ չկարիցէ ոք ՚ի վերայ չարացն հասանել՝ ԹէպԹա և բազում անգամ քննիցէ, ընդ այնը չէք պատիժ, զայս զյայտնեացն ասեմ. եԹէ զնոսա ուղղիցեմք, և զանյայտն վաղվաղակի ածէ յայտ Աստ. ապա եԹէ զսոսա Թողումք, զնոսա վասն էր առնիցէ մեզ յայտ ։

Օ այս ասեմ՝ ոչ զի արգելուցումք, և ոչ զի հանիցեմք միայն և ՚ի բաց ընկենուցումք, այլ զի յուզուԹիւն ածիցեմք, և դարման տանիցեմք. այսպէս և զնոսա հաշտեցուսցուք, և զբազումն գտանեմք արժանաւորուԹիւն հաղորդեալս, և ընդ անձանց փուԹոյ և ընդ այլոց խնամակալուԹիւն բազում վարձս առնուցումք, և հանդերձելոց բարեացն հասցուք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել հնարհաքն և մարդասիրուԹեամբ նոն մերոյ Յիսուսի, ընդ որում հօր փառք, հանդերձ սուրբ հոգւովն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

«Յայնժամ գայ ընդ նոսա Յն՚ի գեօղ մի՝ որում անուն է Գեթսեմանի, և ասէ ցաշակերտսն իւր. Նստարուք աստ մինչև երթայց կացից յաղօթս. և առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն Օձ բեդեայ, սկսաւ հոգալ և տրտմել. և ասէ ցնոսա, կացէ՛ք այսր՝ մինչև երթայց կացից յաղօթս»։

Օ՚ի սովոր էր ուրոյն՚ի նոցանէ կալ յաղօթս, առնուլ զերեխին մեկուսի, և ասէ ցնոսա. «Ցտուրմ է ոգի իմ մինչև՚ի մահ»։ Լաւ ընդէր ոչ զամենեսեան առնուլ ընդ իւր. զի մի վտանգեսցին. այլ զնա՝ որ փառացն իւրոց տեսողք եղիցին։ Լայց սա կայն և զնոսա ևս թողու։ «Լաւ սակաւ մի մատուցեալ յառաջ, կայր յաղօթս և ասէր. Հայր, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»։ Լաւ գայ առ նոսա և գտանէ զնոսա՚ի քուն, և ասէ ցՊետրոս, այդպէս ոչ կարացեր հսկել և ժամ մի արթնուն կալ ընդ իս»։ Ո՚չ ինչ վայրապար առ Պետրոս զբանն միտ, թէպէտ և այլքն ննջէին, այլ և կսկծեցուցանիցէ զնա։ Վանդի և այլքն զնոյն ասէին, իբրև ասաց թէ գայթակղելոց էք յինէն, ասէ Պետրոս. «Եթէ պարտ իցէ ընդ քեզ մեռանել, սա կայն զքեզ ոչ ուրացայց. նոյնպէս և ամենայն աշակերտքն ասէին»։ ապա ընդ ամենեսեան խօսի, զի որք մեռանել ընդ նմա խոստանային, և ոչ տրտմա կիցք նորա տրտմութեանն կարացին լինել արթնուել թէ, այլ կալաւ զնոսա քուն. և նա սաստիկ կայր յաղօթս, զի մի կեղծիք ինչ իրքն կարծիցին. և քրտունք վիժուին։

Վարձեալ վասն նորին պատճառանաց, զի մի և զայն ասիցեն հերձուածողքն, եթէ պատճառեալ գերկիւղն, վասն այսորիկ և քիրտն ոլոռն ոլոռն՝ իջանէր. և հրեշտակ զօրացուցանել զնա երևեցաւ, և աղքի աղքի նշանք երկիւղ գործեցան, զի մի ոք ասիցէ ե-

թէ՝ ի մտաց ինչ իցէն կարկատեալք։ Ա՛ման այսո-
ւիկ և աղօթքն լինէին ասելով, "Լ՛թէ՝ հնար իցէ
անցանել յինէն բաժակիս,, զմարդկէղէնն եցոյց. և
միւսոյն, թէ "Ա՛ւ որպէս ես կամիմ՝ այլ որպէս
դու,, ։ յայտ արարեալ զառաքինուին, և զգաստու-
թին, առ՝ի խրատել՝ թէ և՝ ի հակառակել մարմնոյ
բնութեն՝ ածուելին ոչ ինչ ձեռաս, թէպէտ և՝ նմին
է։ Լ՛ւ չէր բաւական զերեսս միայն ցուցանելով հա-
ւանեցուցանել զանմիտսն։ Պ՛արձեալ եթէ բանքն
և եթ չիցեն բաւական, այլ և իրաց պէտք են. և զայն
և՛ս յարէ ընդ բանսն. զի և որ յոյժ հակառակորդքն
իցեն, հաւատասցեն՝ եթէ մարդ եղև և մեռաւ։ Օ՛ի
եթէ այս ամ՛ եղև և տակաւին չհաւատան բազումք,
ո՛րչափ և՛ս առաւել եթէ այն չէր լինեալ։ Ջ՛ի՝ ո՛ր-
չափ իրօք ցուցանէ զմտաւորութեն ձշմարտուն, որով
խօսէր, և որովք չարչարէին։

"Ի՛սպա եկն և ասէ ցՊետրոս, այդպէս ո՛չ կարա-
ցեր ժամ մի հսկել ընդ իս,,։ Ի՛մնէքեան ննջելին,
և Պետրոսի միայն սաստէր ակնարկեալ զոր ինչ խօ-
սեցաւն. նա և ընդ իսն ո՛չ վայրապար ինչ կայ. որ-
պէս զի ասիցէ՝ թէ արձանն լինել ընդ իս ո՛չ կարա-
ցեր, և վասն իմ զանձնդ դիցես։ "Պ՛արձեալ եկաց
յաղօթս և զնոյն բանս ասաց,,։ Լ՛ւ այսու յայտ առ-
նէ՝ թէ կարի միաբան է ընդ ՚այ, և զի ամ՛ ուրեք
զայնր զՀետ պարտ է երթալ և զնոյն խնդրել։

"Լ՛ւ եկն եգիտ զնոսա՝ զի ննջելին,, զի տարաժա-
մեալ էր ժամ գիշերւոյն։ Լ՛ւ երիցս չոգաւ և զնոյն
խօսեցաւ, առ՝ի հաստատել՝ թէ արդարև մարդ
եղև. զի երկիցս և երիցս՝ կարի ինն ձշմարտու-
թեան նշանակ են՝ի գիս։ Լ՛սկ էր վասն եկն երիցս
անգամ. վասն զնոսա յանդիմանելոյ, զի այնպէս
ընկղմեցան՝ի տրտմութենէն, մինչև զգալոստ նո-
ցա չզգալ. բայց ո՛չ յանդիմանեաց, այլ դադարեաց
փոքր մի, առ՝ի յայտ առնելոյ զանբաւ տրտմու-
թիւն նոցա։

"Լ՛ւ չոգաւ միւսանգամ եկաց յաղօթս, եկն և
ասէ ցնոսա. ննջեցէ՛ք այսուհետև և հանգերձ՛ք,,։
Պ՛ետքէ և յայնժամ առաւել պարտ էր արձանն
լինել, այլ ցուցանէ՝ թէ և ո՛չ զերեսս վերացոյց ժու-

ժայեն տեսանել. և եթէ չէն ինչ պէտք նոցա օգ-
նականութեան, և զի պարտ իսկ է նմա մնանել,
«Ընկեցէք այսուհետև և հանգերուք, զի ահաւա-
սիկ մերձեցաւ ժամն, և որդի մարդոյ մատնի՛ի ձեռս
մեղաւորաց»։ Յուզանէ դարձեալ՝ եթէ տնտեսու-
թե՞ է գործն. ոչ այսու միայն, այլ և ասելովն՝ թէ
՛ի ձեռս մեղաւորաց՝ քրքրէ զմիտս նոցա, յայտ արա-
րեալ՝ եթէ նոցա չարութեն է գործ, և ոչ նորա պատ-
ժապարտ ինչ լինելոյ։

«Արիք, ասէ, գնասցուք աստի, զի եհաս որ մատ-
նելոց է զիս»։ Ամենայնիւ խրատէ զնոսա, թէ չէն
ինչ հարկ իրքն, և ոչ տկարութեան. այլ անձնա-
իւն տնտեսութեան. քանզի յառաջագոյն գիտէր՝
եթէ գալոց էն, և ոչ միայն չփախեաւ, այլ և զտե-
ղի կալաւ։ «Արդ մինչ դեռ խօսէր (Յի, ահա Յու-
դա՝ մի յերկոտասանից՝ եկն, և ընդ նմա ամբոխ
սուսերաւորաց և բրաւորաց՝ ի քահանայապետից
և ի ծերոց ժողովրդեանն»։ Ամանագոյն իսկ է ըստ
նոցա չարութեն. զի ոչ՝ որ սպասուք, այլ ջահիւք և
լապտերօք գային ի վերայ։ «Արդ Յուդաս ընդ նո-
սա՝ մի յերկոտասանից անտի»։ Ասաբանել յերկոտա-
սանիցն կոչէ զնա, և չհամարի ամենի։ «Ատ նոցա նշան
մատնիչն, զոր ես համբուրեցից՝ նա է, կալարուք
զնա»։ Ահաբ, քանի կուրութեամբ լցաւ սիրտ մատ-
նչին. որ այօք կարէր հայիլ ընդ վարդապետն,
կամ որով բերանով համբուրել. ահ պիղծ մտացն.
զո՞ր խորհուրդ խորհեցաւ, կամ զո՞ր յանդգնութե՞ն
յանդգնեցաւ։ Օ՛ ինչ նշան մատնութե՞ն էտ։ «Ընդ
որում ես համբուրեցից»։ Վստահ էր ի հեղուեալն
վարդապետին, որ քան զամ ինչ բաւական էր պատ-
կառեցուցանել զնա և մերժել յամ չարեաց, զի
զայսպիսի հեղն մատանէր։

Ասէ ընդէր զայն այնպէս ասիցէ։ Օ՛ի բազում
անգամ ըմբռնեցաւ ի նոցանէ, և ել գնաց, և նո-
քա ոչ գիտէին։ Ասայ և յայնժամ նոյն լինէր, ե-
թէ իւր չէր կամեցեալ. քանզի և աստ պատրուա-
կեաց զաչս նոցա. և ինքն հարցանէր, թէ զո՞ իրն-
դրէք, և չձանաչէին, թէպետ և փայլուք լապտերօք
եկեալ էին և ջահիւք, և զՅուդաս ընդ իւրեանս

ուն էին։ Երբև ասեն՝ եթէ «Օ՜ֆ, ասէ. ես եմ, զոր խնդրէք»։ Նոյնպէս ապա դարձեալ՝ եթէ «Ինկեր, վասն որոյ եկիր զ»։ զի յետ ցուցանելոյ զչօրեքեան ինքն իւր, ապա ետ Թոյլ նոցա։ Նոյնպէս քանզի ոչ իւրք պատկառեաց ի մատնելոյ զյանապիսի զՀեզն, որ յանձն առ համբուրել, և ետ զինքն ի ձեռս կամաց, «Նոքա արկին ի նա ձեռս, և կալան» ի նմին գիշերի՝ յորում զչատիկն կերան. զի այնպէս չայրագնեալ էին, բայց ոչ էին ձեռնհաս՝ եթէ չէր Թողացուցեալ։

" Լ՚ես ահաւասիկ մի ոմն յայնցանէ՝ որ ընդ Յեհ էին՝ ձգեաց զձեռն իւր, և եհան զսուր իւր, և եհար զծառայ քահանայապետին, և ի բաց եհան զունկն նորա։ Յայնժամ ասէ ցնա Յս, դարձո՛ զսուրդ ՚ի տեղի իւր. զի ամենեքեան որ սուր առնուցուն սրով կորիցեն։ Եթէ համարիցիս թէ չեմ կարօղ աղաչել զՀայր իմ, և ածցէ կացուսցէ առ իս այժմ աւելի քան զերկոտասան գունդս հրեշտակաց։ Լ՚Այլ զիա՞րդ լցուցուն գիրք՝ թէ այսպէս պարտ է լինել։"

Ո՛վ իցէ մի ոմն՝ որ զունկն եհատ։ Յովհաննէս ասէ՝ թէ Պետրոս էր. քանզի նորա ջերմեռանդն էին իրքն։ Լայց զայն արժան է խնդրել՝ թէ վասն էր սուր ունէին ընդ իւրեանս. և զի ունէին՝ ո՛չ աստի միայն յայտ է, այլ և անտի՝ զի Հարցանէին, և ասէն՝ են աստ երկու սուրք։ Լ՚ես վասն էր հրամայեաց նոցա Յս առնուլ զսուրն. քանզի և զայս ասէ Պ ուկաս՝ թէ ասաց ցնոսա, թէ " Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և պայուսակի և կօշկաց՝ մի թէ պակասեաց ինչ ձեզ „. և իբրև ասացին՝ եթէ ո՛չ ինչ, ասէ ցնոսա, " Լ՚ԱյլԱյժմ որ ունիցի քսակ՝ առցէ և պայուսակ. և որ չէն ունիցի՝ վաճառեսցէ զհանդերձս իւր, և գնեսցէ իւր սուր „. և քանզի ասացին՝ եթէ են աստ երկու սուրք, ասէ ցնոսա, շատ են. և զայս զի հաւատացուսցէ նոցա թէ մատնելոց է. ո՛չ զի վաճառեսցին, օն անգր, այլ զի այնու զմտանուէիսն գուշակեսցէ։ Լ՚ես էր վասն զպայուսակն ասիցէ. խրատ տէ զնոսա այնուհետև արթուն և զուարթունս լինել, և բազում զիւրեանց փոյթ ՚ի կիր արկանել. քանզի զառաջինն իրքև զխմոր կամի իմն արծաթել և յանձանձել իւրով զօրութէն, և այնուհետև իրքև զձագս նորափետուրս ՚ի բունոյ հանեալ հրամանն տայ իւրոյ թևաքն թևակոխել։

Լսակ սուրքն ուստի՞ էին արդեաք։ Լ՚ոյն ինչ յրնթրեացն էլեալ էին և ՚ի սեղանոյն, և ՚ի դէպ է՝ թէ

անդ և դանակը էին վանն գառինն . և լուան՝ եթէ ոմանք գան ի վերայ նորա , առին զսուրն յօդնա- կանուքն՝ կռուել ի վերայ վարդապետին : Ա՛ն որոյ և սատակած լինի Պետրոս՝ որ զայն ի կիր արկ , և կարի իսկ յոյժ սպառնալեօք . քանզի և վրէժ առ ի ծառայէն , որ եկեալ էր ընդ նոսա , ջերմա- ջերմ . ոչ եթէ վանն անձին , այլ վանն վարդապետին առնէր զայն . բայց չետ ինչ միսա առնել Ա՛ՀՒ , զի բժշկեաց զնա , և մեծ աքանչելիս եցոյց :

Ա՛ՀՒ այլ իմն միտս յաւելոյր . " Ա՛ծ համարիջիք , ասէ , եթէ ոչ եմ կարօղ աղաչել զՀայր , և ածցէ կա- ցուսցէ առ իս երկոտասան գունդս հրեշտակաց , այլ զիարդ լնուցուն գիրք " : Ա՛յսպիսի բանիւք ցածոյց զցասումն նոցա , յայտ արարեալ՝ եթէ գրոց այս կամք էն . նմին իրի իսկ և անդ յաղօթս եկաց , զի հեզու- թիւն տանիցին իրացն՝ որ պատահիցէ , ուսեալք եթէ դարձեալ ըստ այ կամացն լինի : Ա՛ՀՒ երկու իրօք միւկ- Թարեաց զնոսա . պատժովք միաժամակարաց , եթէ " Ա՛ինոքեան որ սուր առնուցուն՝ սրով կորիցեն " . և ոչ ակամայ զայսոսիկ կրելով . " Ա՛յթէ Հայրիջիք՝ եթէ չեմ կարօղ աղաչել զՀայր իմ " : Ա՛յս և զայն խոնարհութիւն սպառնայ . " Ա՛ծցէ կացուսցէ առ իս երկոտասան գունդս հրեշտակաց " . զի եթէ մին հրեշ- տակ հարիւր և ութսուն և հինգ հազար վաւելոյ կոտորեաց , զի՞նչ գործ երկոտասան գնդից հրեշտա- կացն կայր առ հազար մի այր . այլ ըստ երկիւղի նո- ցա և ըստ տարութեան կերպարանի զանձն . քանզի պահուցեալք էին յահէն , վանն այնորիկ և գրովք պարսպէ զնոսա , եթէ " Ո՛չ իարդ լնուցուն գիրք " :

Ա՛ՀՒ առ աշակերտան զայս խօսեցաւ . բայց ասէ ընդ նոսա . " Ի՛րբև ի վերայ աւազակի ելէք ի վե- րայ իմ սուսերօք և բրօք . հանապազ ի տաճարին նստէի և ուսուցանէի , և չկալայք զիս " : Տ՛ես , որ- չափ ինչ գործս գործէ , որ կարօղն էին ընդոստուցա- նել զնոսա . չետս արարեալ զարիկայ զնոսա յորսայս , զունդն ծառային բժշկեաց , սպանումն սպառնացաւ . " Ա՛րօլ սատակեսցին , ասէ , որ սուր Հանիցեն " . յունկանէն բժշկուելէ և զայն ևս Հաւատացոյց . ա- մենայն ուսուկք ի մտաւորսյ և ի հանդերձելոյն ե-

ցոյց գիւր գօրութիւն, յայտ արարեալ՝ թէ ոչ նոցա
ինչ գօրութեն գործ եղև ունէին. վասն որոյ և զնո-
վիմբ ածէ՝ թէ, "Հանապազ ընդ ձեզ նստէի և ու-
սուցանէի, և ոչ կալայք զիս"։ Այս այսու յայտ առ-
նէ եթէ ըստ իւրում մտոյն եղև ունէին։
Ո՛չ աքանչելիսն Թողեալ՝ զվարդապետութենէն ասէ.
յորժամ ուսուցանէի՝ չկալայք զիս. և իբրև լռե-
ցիս, ի վերայ եկիք. ի տաճարին էի՝ և չեհար ոք
բուռն, և այժմ ի տարաժամու և ի հասարակ գի-
շերի եկեալ էք ի վերայ սուսերօք և բրօք. զինչ
պէտք զննութիւդ էին բերել յիմ վերայ, որ միշտ ընդ
ձեզ իակ էի։ Այս այսու ուսուցանէ, եթէ չէր կամք
զանձն ի ձեռս տուեալ, և յայնժամ չէին ձեռնհաս
մերձենալ ի նա. յայտ արարեալ՝ թէ կամաւ և ոչ
յակամայ չարչարի։ "Այս, ասէ, եղև՝ զի կատա-
րեացին գիրք մարգարէիցն"։ Այս ընդէր ի տաճա-
րին չկալան զնա։ Այն զի չիշխէին ի ժողովրդե-
նէն։ Այն այնորիկ էլ արտաքս՝ զի և ի տեղւոյն և
ի ժամէն տացէ նոցա համաբձակու[թ]իւն։

"Յայնժամ, ասէ, ամենայն աշակերտքն Թողին
զնա և փախեան"։ Ինչ կալանն զնա՝ կացին առ
նմա. և յորժամ զայս ամենայն խօսեցաւ ընդ ամբո-
խին, ապա փախեան։ Վանգի տեսին այնուհետև,
եթէ չէ հնար զերծանելոյ, զի կամաւ մատնեաց
զանձն, և ասէ՝ թէ ըստ գրոց լինի ամենայնին։ Այբ-
րև նոքա փախեան, ածին զնա առ Այիափա. բայց
Պետրոս երթայր մեղմով զկնի, և եմուտ ի ներքս
տեսանել զինչ վախճան լինիցի. քանզի յոյժ ջերմ
էր աշակերտն. մինչ ետես՝ եթէ այլքն փախեան,
ինքն չփախեաւ, այլ անդէն եկաց, և ընդ նմին է-
մուտ։

Այս ընդէր անդր տարան զնա՝ ուր ամենեքեան
ժողովեալն էին. զի ըստ խրատու քահանայապետին
առնիցեն զամենայնն. քանզի նա էր յայնժամ քա-
հանայապետ, և ամենեքեան նմա սպասէին. գիշե-
րապահք և արձանք էին վասն իրացն. քանզի և կե-
րան իսկ ոչ մինչև ցայն վայր զղջասիկն, այլ վասն նո-
րին իրաց սկէնն։

Այմին իրի իսկ ամենեքեան անդր ժողովեցան. և

խորհուրդ արարեալ Ժանդիկն՝ ցմիմեանս Հարցաքննէին, Թէ զինչ պարտ իցէ պատճառս ներկուել գտանել առաջի դատաւորին. «Ա՛յս չէին, ասէ, Հասարակ և միաբան վկայութիւնքն». քանզի այնպէս խաբէութիւն իին առեալն էր, և լի ամենայն խռովութիւք և ամբոխիւ։

«Ա՛տաեան, ասէ, սուտ վկայք՝ որ ասէին, Թէ սա ասէր, քակեմ զտաճարս զայս և վերիս աւուրս կանգնեմ»։ Օ՞յն ասաց իսկ՝ եթէ յերիս աւուր կանգնեցից զդա, բայց զայն ոչ ասաց՝ Թէ քակեցից, այլ Թէ քակեցէք. և ոչ ասաց զտաճարին, այլ զիւրոյ մարմնոյն։ Այս առ այն զինչ քահանայապետն. կամէր ածել զնա ի պատասխանատուութիւն, զի անդրստին ի նորին բանիցն ըմբռնեսցէ. «Ա՛յլ լսես, ասէ, զինչ սոքա զքէն վկայեն ամբաստանութի՛ւն. և նա լուռ կայր»։ քանզի չէր ինչ օգուտ պատասխանատուութեան. զի չէր աք որ լսէր, վասն որոյ և լուռ իսկ լինէր։

Այս նա ևս քան զևս ստիպէր զնա և ասէր. «Երդուիմ եղեցուցանեմ զքեզ յա՛ծ կենդանի, զի ասասցես մեզ, եթէ դու ես Քրիստոս որդին ա՛յ կենդանւոյ. և նա ասէ, դու ասացեր. բայց ասեմ ձեզ յայսմ հետէ տեսանիք զորդին մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն, և եկեալ ընդ ամպս։ Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր և ասէ, հայհոյեաց»։ Օ՞յս արար առ ի սաստիկ ամբաստանութիւն գործ ձեղջ, և մեծ զբանսն յիրացն առնելոյ. քանզի ահ արկ բանն լսողացն։ Վասն որոյ և չէր ինչ հայհոյութի՛ւն բանն. և յառաջագոյն իսկ՝ մինչ ի միոջ վայրի ժողովեալ էին՝ ասացեալ էր զնոսն, Թէ «Ոչ սակաւ տեր ցտեր իմ նիւստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քո»։ և զոր ասացն՝ մեկ նեաց, և չիշխեցին ինչ ասել, այլ լռեցին. և յայնմ հետէ ոչ ևս լինէին դիմագարձ։ Իսկ արդ զիարդ զբանն հայհոյութի՛ւն կոչեսցեն՝ չիտեմ։

Այս վասն էր իսկ Պետ ետ զոյն պատասխանի. զի զամենայն պատասխանատուութի՛ւն բառնայցէ ի նոցա նէն, մինչև ցյետին օրն ուսուցանելով՝ եթէ նա է Որդին, և զի ընդ աջմէ նստիցի Հօր. և դարձեալ գա-

լոց է դատել զմիեղբս. որ և քաղցմ իսկ միաբա-
նութեի ընդ նմա յայտ առնելոյ էր։

« Պատուհաց, ասէ, զհանդերձս իւր, և ասէ.
զինչ կամիք »։ Ոտայ յանձնէ զվճիռն, այլ ի նոցա
նէ կամի հաստատել իբրև ընդ յայտնի ինչ մեղայ և
ընդ երևելի հայհոյութեե. ինքն յանձնէ չդատապար-
տէ՝ այլ նոքօք. և յառաջագոյն գրաւէ զլսօղսն.
« Գնուք, ասէ, ձեզէն լուայք զհայհոյութենն ». գրե-
թէ բռնադատէ իսկ, և ստիպէ զնոսա տալ զվճիռն։
Իսկ նոքա առ այն զինչ. ասեն՝ » Ի՝ահապարտ է ».
քանզի խորհրդակիցք քահանայապետին էին, ասեն.
մահապարտ է։ Ինքեանք դատախազք, և ինքեանք
դատաւորք. ինքեանք վճիռ տային, և ինքեանք զինչ
կամէին՝ առնէին։

" Յայնժամ Թքին ընդ երեսս նորա , և կռփեցին զնա . և ոմանք ապտակեցին և ասեն , մարգարեաց , ո՞վ է որ եհար զքեզ " ։

Ընդէ՞ր առնէին զայն , ուր զի սպանանելոցն էին՝ զինչ պէտք ձաղումն էին էին . զի ուսանիցիս ամենևին զանառակ բարս նոցա . իբրու Թէ որս ինչ գտեալ՝ այնպէս իմն ցուցանէին զՔննամանողումն իւրեանց . և մոլորումն անզգայեալք՝ իբրև տօնս իմն համարէին զայն . ինդումն 'ի վերայ հասեալ՝ զսպանօղ բարս իւրեանց ցուցանէին ։

Այլ դու եկ զարմացիր ընդ աշակերտսայն իմոց տումն , որպիսի Ճշմարտուն պատմեն . ուստի և արդարասէր բարք նոցա յայտնի լինէին . զի որք նա խատանաց իրք Թուէին , ամ Ճշմարտուն գտեալ պատմէին . ոչ Թաքուցեալ և ոչ ամօթ համարեալ , այլ և մեծ իմն փառս Հաշուեալ . որպէս և էին իսկ փառք աշխարհաց՝ ՚ոն զայնպիսի չարչարանս յանձն առնուլ վասն մեր . զի այն և զնորս իմնամակալու Թիւնն ցուցանէ , և զնոցա զանեզրական չարուԹիւն . որք զայնպիսի յանդգնուԹիւ յանդգնէին յայնպիսի Հեզն և 'ի հանդարտն , որ այնպիսի ողոքանօք ողոքէր , որ և զառիւծ անգամ գառն բաւական էին առնել . քանզի ոչ նա ինչ նուաղեցոյց յիւրմէ ՀեզուԹէն , և ոչ նոքա 'ի Թշնամանաց և յապերաստուԹէն՝ և արդեամբք և բանիւք ։ Ուր զնմին իսկ մարգարէն Նասայի յառաջագոյն ասաց , և միով բանիւ զամ Թշնամանն յայտ արար . " Օ՜ որ օրինակ , ասէ , զարմացոյին բազումք 'ի վերայ քո՝ այնպէս արհամար Հեցի տեսիլ քո 'ի մարդկանէ , և փառք քո յորդւոց 'ի մարդկանէ " ։

Օ՜ ինչ զղջ այնր Թշնամանաց կայցէ , զի ընդ ե բեան՝ զոր ծոլին եառես և փախեաւ , և արեգակն 'ի խաչին տեսանելով զձառագայԹան ամփոփեաց , Թը-

1 Յօրինակին փ-ւ-ւ-ւ ։

քանեկին, և ապտակէին, և զգլուխն եղեգամբ ծե-
ծէին. զի յազեցուսցեն առաւօտուբն զնա մոլորու-
թիւն խրեանց. և զհարուածսն, որ քան զնա թշնա-
մանն արհամարհանաց էին, ածին 'ի վերայ. կրա-
փէին, ապտակէին, և յայնր հարուածոց վերայ թըշ-
նամանս ընդ երեսս թքանելոց յաւելուին, և բանս
բազումս հանդերձ ձաղանօք խօսէին. "Ո՛արգարեաց
մեզ Քրիստ' ո՞վ է որ եհարն զքեզ". քանզի բազումք
մարգարէ կոչէին զնա: Ո՛իւս աւետարանիչն ասէ՝
թէ ծածկէին զերեսս նորա հանդերձիւ, և այնպէս
զայս ամ առնէին, զի իբրև զարհամարհ մի և զքա-
մահանաց և զերեքդանգեան 'ի մէջ արկեալ՝ կրտ-
տէին. և ոչ միայն ազատք, այլ և ծառայք զնոյն ան-
արգանս անարգէին:

Օ այս ընթերցուած հանապազ, զսոյն յաճախես-
ցուք, որպէս պարտ իցէ լսել. զայս գրեսցուք 'ի միտս
մեր: Քանզի այս իսկ են պարծանք, և զսոյն բար-
գաւաճանս համարիմ. ոչ միայն զի բազում մեռեալս
յարոյց, այլ զի յաճախ չարչարանօք չարչարեցաւ:
Օ այս ամ վեր 'ի վայր յեղյեղու Պաւղոս. զխաչն,
զմահն, զչարչարանսն, զբանմբասանսն, զընչամահսն,
զձաղուսն. մերթ ասէ, "Ո՛չգոյք առ նա արտաքոյ
բանակին, կրեսցուք զնախատինս նորա". և մերթ,
եթէ "Քահանակ ուրախութեան՝ որ կայր նմա առա-
ջի, համբեր խաչին, արհամարհեաց ամօթ":

"Ո՛չ Պետրոս նստեր արտաքոյ 'ի սրահին. մա-
տեաւ առ նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յի-
սուսիս գալիլեացւոյ էիր: Ո՛չ նա ուրացաւ առաջի ամենե-
ցուն, և ասէ, եթէ ոչ գիտեմ զինչ խօսիգ: Ո՛չ իբ-
րև եկ անտի 'ի դուռնն, էտես զնա միւս ևս աղջիկ,
և ասէ. և սա ընդ Յեսի նազովրեցւոյ էր. և դարձեալ
ուրացաւ երդմամբ. և յետ սակաւ միոյ մատեան որ
անդր կային, և ասեն ցՊետրոս. արդարև դու 'ի
նոցանէ ես, քանզի խօսք քո յայտնի առնեն զքեզ:
Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ թէ ոչ գիտեմ
զայրն. և վաղվաղակի հաւ խօսեցաւ: Ո՛չ յիշեաց
Պետրոս զբանն Յեսի՝ զոր ասաց, եթէ մինչ չև հաւ
ւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտ-
ասաքս՝ եղաց դառնապէս":

Այր և սքանչելի իրք. մինչ միայն կալեալ եմես զվարդապետն, և այնպէս եաայր՝ մինչև սուր մերկանալ և հատանել զնենին ծառային. և յորժամ զայրանայն պարտ էր՝ վառել և բորբոքել, զի զայնչափ բարբասանս լսեր, յայնժամ ամենևին ուրաչ նայր։ Օ՛որ ոչ բորբոքէին մոլորութեանք գործքն՝ որ յայնժամ գործէին. բայց սակայն աշակերտն ի յաՀէն պահեալ՝ ոչ միայն ոչ զայրանայր և զրգռեր, այլ և ուրանայր, և աղէկան միոյ տառապելոյ և վատԹարի սպառնալեաց չտանէր. և ոչ մի անգամ միայն, այլ երկիցս և երիցս ուրանայր. և ոչ դատաւորաց առաջի, քանզի արտաքս էր, և յորժամ ելեալ կայր առ դրանն, Հարցանէն ցնա. և ոչ զգայր վաղվաղակի զյանցանան։ Վասզի և զայս Պ ուկաս ասէ, եԹէ "Հայեցաւ՝ի նա Տէր. յայտ առնէ՝ Թէ ոչ միայն ուրացաւ, այլ և ոչ իւրովի յիշեաց. և այն զի Հաւն ևս խօսեցաւ. այլ կարօտացաւ միւսանգամ վարդապետին յուշարարութեն, և նայեէն միայն եղև նմա փոխանակ բարբառոյ։ Այս և ոչ յորժամ տեսն յուշ արար նմա զյանցանան՝ իսկոյն յայտնի լալ. քանզի յամբաստանութիւն գալոց էր վասն արատաւոցն. այլ "Ելէ արտաքս և ելաց դառնապէս "։

"Իբրև այգ եղև, ածին զՅ'ի Կայիափայ առ Պիղատոս "։ Վասզի խորհուրդ արարին սպանանել զնա. և ինքեանք ոչ կարէին վասն ծանչին, ածին զնա առ դատաւորն։ Այոյց արդ դու միտ դիր, զնայրդ դիպեցան իրքն, զի ի ծանչին իսկ լինիցի. զի ի սկզբանէ այսպէս իսկ նկատեալ էր։ "Յայնժամ տեսեալ Յուդայի՝ Թէ դատապարտեցաւ Վա, զղջացաւ, և դարձոյց զերեսուն արծաԹն "։ Այս այն՝ ի նորա իսկ և ի նոցա ամբաստանութեն. ի նորա, ոչ զի զղջացաւ, այլ զի յամր և անագան, և ինքնին անձամբ պարտաւորեցաւ, և զի մատնեաց՝ ինքնին իսկ խոստովան եղև։ Այս նոցա, զի իշխեին զղջանալ, և ոչ զղջացան։

Ի՞տ դիր երբ զղջանայրն. յորժամ կատարեցան. և ի գլուխ ելին մեղքն։ Այսպէսի իսկ է սատանայ. չտայ տեսանել այնոցիկ՝ որ չիցեն արԹուն՝ յառաջագոյն զարիսն, զի մի ապաշխարեսցեն։ Այնպէս ինչ

խօսեցաւ Յն, և չկակղացաւ մտանիկս. և յորժամ յանցանքն կատարեցան, յայնժամ եմուտ ի նա ա-պաշխարութիւնն. նա և ոչ յայնժամ պիտանութիւնէ. զի զղջանալն, և ընկենուլն զարծաթեն, և չզանգիտելն ի հրեական ամբոխէն՝ առնելիք ընդունելի էր. բայց խեղդ անձինն առնել՝ առանց թողութեան, և չար գիւրի գործ. զի յառաջագոյն մերժեաց զնա յայպաշխարութենէն՝ առ ի չշահելոյ ինչ անտի նմա օգուտ. և ձազանաց և նշաւակութեամբ մահու՝ որ ամենեցուն իսկ յայտնի լինիցի՝ գրգռեաց զնա կոմնչել։

Ցեսցուք զբանս իսկ՝ զոր ասէ. «Արդ դարձոյց զարծաթեն առ քահանայապետսն, մեղայ, ասէ, զի մատնեցի զարիւն արդար. և նոքա ասեն, չէ փոյթ մեզ՝ դու գիտես. և ընկեց զարծաթեն ի տաճարն և գնաց, և գնաց խեղդ արկ և մեռաւ»։ Արդեաւք չէ՞ր տանել խղճի մտացն՝ որ տանջէր զնա։

Յուարմունք արծաթասէրք, և ի միտ առեալք՝ զինչ անցք ընդ նա անցին. զիարդ և յընչից անկաւ, և զմեղսն գործեաց, և յարծաթասիրութենէն ոչ վայելեաց, և զոգին իւր կորոյս. զի այնպիսի իսկ է արծաթասիրութեան բռնաւորութի. ոչ զարծաթեն ըմբռնեաց, և ոչ ի կեանս աշխարհիս վայելեաց, և ոչ հանդերձելոց ինչ յուսոյն ակն կալաւ, այլ յամէն միանգամայն վրիպեցաւ. վասն որոյ և ի խեղդ իսկ մտաբերեաց. այլ որպէս ասացի իսկ, յետ գործելոյն զչարիսն՝ յայնժամ բազումք հային ի չարխն։

ԳՈՐԴՈՐԱԿ

Ալ ասն որոյ աղաչեմ, ամենայն հնարիւք հնարել պարսպել զանձինս, և չտալ մուտ. և մի այնպիսի ինչ սուտ միխիթարութիւնս անձանց մատուցանելով ա- մենևին զաւրիան ի ներքս ամփոփեսցուք, ասել՝ Թէ զի՞ այս առնէ, կամ զի՞ այն։ Վասզի բեւր չարիք անտի անկանին. զի պիղծն սատանայ խորամանգէ, և բազում ջանալով վաւի առ կորուստ մարդկան. քանզի և փոքրումքըն գրգռէ։

Այլ միտ դիր. երբ կամեցաւ զԱւուղ ի մատա- նակ որովայնակոչին արկանել, չգրգեաց յառաջ- նումն, զի չեր ինչ անսալոց նմա, որ ինքն իսկ հալա- ծեաց զնոսա։ Ալ ասն այնորիկ առ սակաւ սակաւ մեղմով մանծանէ հնարիւք. քանզի անսաստեաց Ա- մուելի, և կազմեաց՝ միևչ չև ծորա եկեալ էր՝ մատու- ցանել զոչնակեզսն. և իբրև պատուհասեցաւ, ասէր Թէ պատերազմողացն Հարկ արար զայն. որում պարտ էր աշխարել իբրև Թէ չարար ինչ յանցանս՝ յանհոգս էր։ Վարձեալ հրաման ետ Ի՛ւ վասն ա- մաղեկացւոցն, նա և անդ անց զՀրամանաքն, և ան- տի ի Վաւելի կռիւս եկն. և այնպէս մեղմով առ սակաւ սակաւ ոտն առեալ՝ չկաց յակաստանի, մինչև ի կորստեան իսկ խորխորատ մղեաց ընկեց զանձն։

Վոյնպէս և զԱյնին ոչ իսկ և իսկ յանդգնեցոյց սպանանել զեղբայրն. Թէ ոչ՝ և հաւանեցուցանէր իսկ ոչ։ Ի՛.յլ նախ կազմեաց՝ զյոտիսն մատուցանել. և ասէ, չէն ինչ այդ մեղք. ապա զնախանձն և ըզ- խանգարութիւնն բորբոքեաց, և անտի չէ ինչ ինաս, ասէ. ապա և ի սպանանելն իսկ յօժարեցոյց և ու- բանալ զպղծալից սպանուելնին. և ոչ հեռացաւ, ե- Թէ ոչ՝ զկապիճն չարեաց ելից։ Ալ ասն որոյ պարտ

էր զառաջինն իսկ ՚ի բաց մերժել. մանաւանդ թէ և առաջին մեղքն ՚ի նմին չափու կային, և ոչ այնպէս պարտ էր զառաջին յանցանօքն արհամարհել. նա աւանիկ և յաձախեն՝ եթէ անփոյթ միտքն առնիցեն։ Ա ասն այսորիկ զամենայն ինչ պարտ էր առնել, մինչ զսկիզբն նոցա իսկ ՚ի միջոյ բառնալ։

Ա՚ի ինչ ՚ի բնութէն մեղացն նայիցես՝ թէ փոքր իցէ, այլ յայն՝ զի արմատն հաստատեալ յանփոյթ առնելոյ։ Ա՚ռ պարտ իցէ և զարմանալի ինչ ասել, ոչ ըզնոյն փոյթ՝ որ ՚ առ մեծամեծ մեղսն իցէ, պիտոյ է և առ փոքրունսն։ Ձայնմ մեղաց՝ բնութէն իսկ մեղացն յորդորէ խորշել. և սակաւն ՚ի ծուլանէ ածէ. զի չտայ թոյլ սաստիկս ընդոսոստուլ, այլ ՚ի միջոյ բառնալ զնոսա. վասն որոյ վաղվաղակի և մանուանքն լինին մեծամեծք՝ առ մերձաւորքնթէ. զնոյն և ՚ի մարմինս դիպեալ տեսանիցէ ոք ՝Ոյնպէս և Ձուդայի ՚ի փոքուն մեծամեծ չարիք ծնան. զի թէ զգուշանալ ընդիցոյ աղքատաց չէր փոքր համարեալ, ա պա և ոչ ՚ի մատնութէն իսկ գայր։ Ա՚ռ չէր փոքր հրէիցն զանկանելն ՚ի մտապարծութէն համարեալ, չոտնաձիւն արդեւք լինել տիրասպանութ։ Ա՚չ զնմ անտի իսկ է տեսանել. զի և ոչ ոք վաղվաղակի և յանկարծակի ՚ի չարիսն դիմէ ։ Ա՚նաղն կայ և կայ պատկառութէն ինչ անկեալ յոգիսն, և ակնածութէն մէտ ՚ի բարիսն, և չյանդգնի վաղվաղակի՝ թէ միանգամայն իսկ զնմ ձգիցէ. այլ մեղմով և առ սակաւ սակաւ կորնչին՝ յորժամ անփոյթ առնիցէ։

Ա՚յնպէս և կռապաշտութէնն եմուտ ՚ի մարդիկ վասն անչափ պատուոյն և առ կենդանի ոք, և յորժամ մեռան նախնիքն. և այնպէս մարին իսկ յերկրպագուի պատկերքն. նոյնպէս կալաւ պոռնկութէնն, և այլ չարիքն ։ Ա՚յնտ դիր. ծիծաղեցաւ ոք վայրապար. սաստեաց ընկերն. միւսն եկն և փարատեաց զերկիւղն. չէ ինչ այդ ասէ, զինչ միասս ծիծաղեին իցէ, և կամ զինչ ինչ անտի գործիցի ։ Ա՚չ յայնմանէ ծնանի խեղկատակութէնն, և անտի խառնիսուլթիք, և գործք յոռուլթեց։ Ա՚արձեալ սաստիկ

2 Ցօբենակին պակասէ ոչ։

ոք ումեք, թէ ընդէր չարախօսիս զընկերէն և բամբասես և քսես. և միւսն արհամարհեաց զայն, թէ վինչ ինաս իցէ ի բամբասանացն. և անտի ծնանի ատելութիւն, և յատելութենէն անհաշտ թշնամութիւն, և ի թշնամանութենէն կռիւ, և ի կռուոյն սպանութիւն։

Այլ ի փոքունցն մեծամեծ մաճանէ չար դևն. և ի մեծամեծացն զանյուսութիւն. և այլ իմն հնարս չարութենէն գտանէ, որ ևս չար քան զառաջինն իցէ. զի ոչ այնպէս մեղանչէն՝ որպէս զանյոյս լինել կորուսանէ. զի որ զլքանայ՝ վաղվաղակի սթափի[1] և առնէ ուղղութիւն գործոցն։ Իսկ որ անյոյս լինիցի և չապաշաւորիցէ, վասն այնորիկ վերկպ յուղղութենէն, զի չդնէ ի վերայ վիրէն զդեղն ապաշխարութեան։

Այլ ևս ինչ երրորդ դժնդակութիւն դարանակալութեան, յորժամ երկիւղածութենէ կերպարանօք զմեզն ծածկեսցէ։ Այլ ո՞ւր այնչափ կարող եղև սատանայ, միանգամ այնպիսեացն խաբել։ Այո՛, և զդիշեր ի խորամանկութենէ։ Հրաման ետ Վիշտ Պատրոսի՝ չմեկնել կնոջ յառնէ. և մի զրկել զմիմեանս, բայց թէ ի հասարակաց ինչ միաբանութենէ. և ոմանք որպէս թէ վասն ժուժկալութենէն ինչ ցանկութենէն՝ մեկնեցին յարանց. զերկիւղածութէ կերպարանս զգեցեալ, մեզ ընկեցին զանձինս և զամուսնսն ի հնութ։ Այ միտ առ օրէսփ ինչ չարիք են, զի այնչափ վաստակս յանձն առեալ՝ իբրև զմեծամեղս պատիժս կրեսցեն, և ի խորխորատ կորստեան զանձինս և զիւրեանց ամուսինս արկանիցեն։

Այլ այլք պահոց պատճառանօք մեկնեալք ի կենդանոց, առ սակաւ սակաւ յառաջ մատեան՝ և ըզկերակուրսն ևս սկիզբ համարեալ. և այն ևս մեծամեծ տանջանս ածիցեն ի վերայ։ Այս այսպէս անտի լինելոյ՝ զի զիւրեանց կանխակալ սովորութենէն առաւել քան զգրոց կամ հաստատուն համարեցան։ Այ առ կորնթացիսն՝ կատարումն իմն յամենայնի անխտիր Ճաշակել թուէր. և յայնցանէ ևս զորս այն արգելեալ էր։ Նայց էէր այն կատարումն, այլ յետին անմտութենէ. վասն այնորիկ ևս սաստիկս իմն պատու-

1 Յօրինակին Խ՚։

հասէ զնոսա Պաւղոս, և եթէ յետին վրիժուցն պատ-
ժապարտք են։ Իսկ այլք երկիւղածութէ իւն զՀերմն
ժողովել համարին. և այն անտի է՝ զորս արգելեալն
է, և բազում ամօթով լի։

Վարձեալ այլք զանչափ տրտմելն վասն մեղաց
կարևոր իսն կարծեն. այլ և այն սատանայական հնարք
են. և յայտ Յուդաս արար, զի անտի իսկ ի խեղդն
մտաբերեաց։ Ալ ան այնորիկ և Պաւղոս կասկածեր
վասն պռնկացելոյն, եթէ գուցէ այնպիսի կրիցէ.
խրատ տայ կորնթացւոցն՝ վաղվաղակի յափշտակել
զնա. «Վուցէ, ասէ, առաւել տրտմութէն ընկղմեա-
ցի այնպիսին»։ Ւ՞ր զի ցուցցէ, եթէ այնպիսի ինչ
իրք՝ նորա դարմանակալութէն են, ասէ. «Ւ՞ր զրկի-
ցիմք ինչ ի սատանայէ. քանզի չենք ինչ անտեղեակ
խորհրդոց նորա»։ և զի նենգութէք բազում անգամ
գրգռի, վասն այնորիկ ասէ զայս։ Ւ՞թէ յայտնի պա-
տերազմէր, չէր ինչ գժուարլին մարտն, և դիւրաւ
լինէր յաղթութէին. մանաւանդ թէ և այժմ իսկ
դիւրաւ է, եթէ արթունք լինիցիմք. քանզի և ըստ
ասմ աղագաց և մերից նորա վառեաց զմեզ ասծ, և
հաւանեցուցանէ և զփոքունսն չարհամարհել։

Տես, զնարդ լինի թելադիր. «Ալր ասէ ցեղբայր
իւր մերոս, պարտաւոր լեցի ի գեհենի». և որ յա-
րատ աչօք հայեսցի, չնացող կատարեալ է. և զայ-
նոսիկ որ ծիծաղեսցին՝ եղուկս կոչէ. և ամենայն ու-
րեք զսիկիզնն և զսերմին չարեաց ի միջոյ բառնայ.
և ընդ դատարկ բանից, ասէ, համարս տայցեն։
Ալ ան այնորիկ և Յովք վասն մեացորդացն պատա-
րագ մատուցաներ. գուցէ և յանցանիցեն ինչ ասէ։
«Ալ՝ԹԷ որ գլորիցին, ասէ, չյառնիցէ». և դարձեալ՝
«Ալ՝ԹԷ կամելով ինչ կամիցիմ զմահ մեղաւորին՝
որպէս զդառնալ նորա և զկեալ». և «Ի՝յսօր եթէ
ձայնի նորա լուիցէք». և բազում ինչ և այլ այս-
պիսի բանք և օրինակք կան ի գիրս։ Ւ՞ր ի կերպա-
րանօք երկիւղածունն չկորնչել, լսեր և Պաւղոսի.
«Վուցէ ասէ, առաւել տրտմութէն ընկղմեցի այն-
պիսին»։ Օ այս ամենայն իմացեալ՝ ամրացուցանէք
զձեմ ձանապարհս, որք վերիսեցուցանեն զծոյլսն,
գրոց իմաստութէք։

Ա՛ն ասիցես, թէ զինչ ինաս իցէ թէ հայիցիմ յուլանալով ընդ կին գեղեցիկ· զի եթէ ՚ի սրտիդ չնուաճի գործիցես, ապա և մանրմնով վաղվաղակի ՚ի նոյն մտաբերես։ Ա՛ն ասիցես թէ զինչ ինաս իցէ՝ եթէ զայնու աղքատով զանց առնիցեմ· թէ զնովաւ զանց առնիցես, ապա և զմիւսոյն· և եթէ զնովաւ, ապա և զայլոյն։ Ա՛յց դարձեալ մի՛ ասիցես· եթէ զինչ ինաս իցէ ցանկանալ ընչից ընկերին· զի այն և նոյն իսկ արար զկորուստ Ա՛քայաբու· թէպէտ և գինս տայր, սակայն դժկամակէր՝ յորմէ ինդրէրն· ոչ եթէ բռնի ինչ հանէր, այլ ՚ի հաւան կամէր ածել։ Ա՛յլ եթէ որ զգինան բովանդակ տայր, ՚ի պատիժս մտաւ նելոց էր, քանզի ակամայ իսկ առնոյր, իսկ որ և զգինան չտայցէ, և ակամայ յափշտակէ, և այն զի ՚ի ընդհաց ժամանակիս զինուորեալ իցէ, և բազում տանջանս ածիցէ ՚ի վերայ ինքեան։ Ա՛յդ այսուհետև չա՛մ բռնութէ և յափշտակութէ պահպանեսցուք զանձինս· և մեղաց հանդերձ և ՚ի սկզբանցն մեղացն զգուշասցուք· բազում փութով բուռն հարցուք զաւաքինութէ, զի և յաւիտենից բարութեցն հասանիցեմք ընդհօք և մարգասիրութէ՛ն մերոյ Յի՛սի Ի՛սի· որում փառք և իշխանութէի յաւիտեանս յաւիտենից· ամէն։

ՅԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀՈՐՈՐԴ ՃԱՌԻՆ

ՅՈՐԴՈՐԱԿ

ՈՐ ոչ զարմանայիցէ ընդ այն, որ ՀեզուԹիւն համբերիցէ զԹշնամանսն հայհոյացն. որպէս զի ԹԷ ըստ արժանեացն ինչ չարիս կրեացէ, և ՀեզուԹիւն տանիցէ, կարծի ՚ի բազմաց՝ ԹԷ ՚ի զուր լկեցաւ. նոյնպէս ԹԷ ՚ի զուր ինչ վշտանայցէ և քաջալերիցէ, զի իբրեւ չարչարանաց առնուցու կարծիս, և ծաղր կայցէ, և իբրև զդերի մի բռնադատեալ ՚ի ցասմանէն՝ կորուսանէ [1] զանձինն ազնուականուԹիւն. զայնպիսին և ոչ ազատ պարտ է կոչել, ԹէպԷտ և բեւր ծառայս ունիցի։

Ա.ՍԼ ասեն, կարի զայրացոյց այս անուն։ Այս զի առնիցէ. չայնժամ առաւել պարտ իցէ ցուցանել հանդարտուԹիւն. քանզի յորժամ չիցէ ոք՝ որ զրգռիցէ, և զգաստս զգօնացեալս տեսանիցէ. քանզի և ոչ նոքա ցանկ գազանեն, այլ յորժամ զրգռիցէ ոք. և մեք ԹԷ չայնժամ հանդարտ իցեմք, յորժամ ոչ ոք իցէ՝ որ զայրացուցանիցէ, զինչ ինչ աւելի առնիցեմք. զի նոքա Թերեւս բազում անգամ և իբրեւ իսկ զայրանան, և բազում ինչ պատճառք կան ՚ի միջի. քանզի և հարԹուցանիկս և խոցին և զրգռին. և առանց այսր՝ զի և ՚ի մտաց ևս զրկեալ են, և բնուԹիւն ունին զգազանուԹիւն։ Իսկ դու ուսմի, աղէ՝ ասա, եԹէ գազանիցես և զայրանայցես՝ կալ բիցես հասանել ներելոյ։

Օ ինչ ինչ չարիս կրեցեր. չափշտակեցար արդեւք. նմին իբրեւ իսկ պարտիս ժուժկալ լինել՝ զի մեծամեծ շահս շահիցիս։ Ա.ՍԼ ՚ի փառաց ինչ զրկիցիս. և այն զինչ իցէ. քանզի չհատանէ ինչ այնու ՚ի քէն, ԹէԷ զգաստասէր միտս ունիցիս. և եԹէ չկրես չարիս, ընդէր բարկանայցես. զի ոչ չարուԹիւս, այլ և օգուտ ևս գործիցէ։ Օ ի որք պատուիչեն, ևս առաւ

1 Յօրինակին ----ցանէ։

ւել մեղկագոյն գործեն. և որք թշնամանիցեն առ համարհիցեն, զայնոսիկ՝ որ անձանց պատկառ կայցեն՝ և առաւել ժուժկալագոյնս առնեն. զի ծոյլքն պատեալք՝ չար ինասին քան զթշնամանեալսն։ Այս նոքին իսկ, եթէ արթունք իցեն, լինին պատճառք զգաստութեանն մերոյ. և նոքին զկպատութեանն ամբարտաւանութեան մերոյ ցածուցանեն. նախանձուն և մնապարծութիւնք կակղեն զմիտս մեր։

Այս վկայեն հարք. զի միւրեանց որդիսն ոչ այնչափ ողբեն, որչափ թշնամանեն. կասկածեն՝ թէ միաս գուցէ ինչ մտանիցէ անտի. և վարդապետք գնոյն դեղ ի կիր արկանիցեն նոցա։ Որպէս զի թէ խորշել ինչ պարտ իցէ, յողորչացն մանաւանդ՝ և ոչ ի թշնամանչացն պարտ է խորշել. քանզի մեծ ա պականութիւն քան ի զթշնամանաց բերել այնոցիկ, որք ծածուկ դէղոց մահուն չգգուշանայցեն։ Այս գործ առաքելն է այսմ ախտի տանել քան այսմ. և վարձք բազումք ընդ այնր կան, և զարմանք յանձախագոյնք. քանզի առաւել զարմանալի է տեսանել զմարդ թշնամանեալ և չցասուցեալ, քան զմարդ՝ որ ըմբիկէ գան, և չգլօրիցի։

Օ իարդ մարթի, ասեն, չցասնուլ։ Ի թշնամանեանց աք. դիր զնշան խաչին ի վերայ լանջացդ, յիշեա զայն ամ գործեան՝ որ գործեցան, և ամենևին միանդամայն ցասումն շիջանի։ Ի միայն զթշնամանն ա ծիկես զմտաս, այլ և զայն՝ թէ երբեմն բարի ինչ եղև քեզ, և վաղվաղակի գայցես ի հեզութիւն։ Անաւանդ յառաջ քան զամենայն ինչ զայ երկիւղն ածի զմտաս, և վաղվաղակի լինիցիս հեզ և խոնարհ։

Անդէրձ այսոքիւք և ի ծառայից [1] քոց առնուցուս յիրացն խրատ. զի յորժամ տեսանես՝ թէ դու թշնամանես, և նա լուռ կայցէ, ի միտ առ՝ թէ գոյ հնար զգաստանալոյ, և պարսաւել զանձն վասն խրատանալոյ։ Ի ժամանակի թշնամանաց խրատիցիս չթշնամանել. և այնպէս թէ և թշնամիցիս՝ ոչ տրտմիս։ Օ մեռաւ ածքիր, թէ և՝ ի մտացն անկաւ, և

1 Յօրինակին պակասէր ի։ 2 Յօրինակին և ծառայից։

մոլի և Թշնամանի, և չցասուցուս ընդ Թշնամանսն։ Ա՛յս և դիւահարք Թշնամանեն զմեզ. և ո՛չ միայն չցասնումք, այլ և ողորմիմք և ս. զնոյն և դուն արա, և ողորմեա՛ց Թշնամանողին, զի ՚ի չար գազանի ՚ի ձեռս անկեալ է ՚ի ցասմանն, և անգգամ դիւի մատնեալ բարիութենե. բուժիչ զնա՝ որ ՚ի չար դիւէն վրիցէ, և սակաւ ժամանակաւ եղծանիցի. զի այնպէս է ախտն, և ո՛չ ժամանակի կարօտանայ ՚ի կոչուստ ըմբռնելեացն։ Այսն որոյ և ոմն ասէր, եթէ “Այ՛դ ցասմանն նորա՝ կործանումն նմին է„։ Ա՛յնու ցուցանէ զբռնութենն, զի ՚ի սակաւ ժամուն մեծամեծ չարիս գործէ. չկարօտանայ բազում պատրաստե՛ն. ապա ուրեմն թէ մեռելոյի և զօրանայցէ, և դժուարըն իսկ առ պարտութե՛ն լինիցի։

Կամի՛ ցուցանել, եթէ զի՞նչ Թշնամանօդն իցէ, և զի՞նչ համբերօդն. և եթէ ախորժիք, մերկանդամ իսկ զերկուցունց ոգիսն ՚ի մէջ ածցուք. և տեսանիցես զինն ծովու խռովելոյ նմանեալ, և զըմիւսն նաւահանգստի՝ որ յապահով ՚ի մերկե իցէ. քանզի չխռովի յայնպիսի սաստիկ հողմոց, այլ բեկանէ զնոսա վաղվաղակի։ Օ՛ Թշնամանօդքն ամենքեան այնպէս ջանան՝ զի ցաւեցուսցեն. յորժամ յայնմ յուսոյ վրիպեացեն, և ինքեանք այնուհետև ցածնուն, և եկեալ յուղղութիւն գնայցեն։ Ա՛յնք հնար մտրդոյ բարկացողի՝ եթէ ո՛չ յոյժ զանձն ըստգտանիցէ, որպէս զի չէ մարթի այնմ որ ո՛չ բարկանայցէ՝ ըստգտանել զանձն։ Ա՛յեթէ հաշիւ ինչ ՚ի մէջ բերեալ իցէ, մարթէ և առանց ցասման առնել զայն գիւրաւ և խմաստութի՛ւ, և չկրեն ինչ զըժընդակութե՛ն։

Ա՛յեթէ կամիմք, առ մեզ իսկ են բարիք, և բաւական լինիցիմք այ՛ նորհօքն զգուշանալ և պատուել գնոսա։ Օ՛ խնդրեացես դու յընկերէն փառս. դու քեզ՛ն պատուեա զանձդ, և չիցէ ոք՝ որ թերացնամանել կարիցէ. ապա եթէ անձամբ զանձն անարգեացես, թէպէտ և ամենքեան պատուիցեն՝ չապատուիս։ Այլպէս զի թէ անձամբ անձանց չառնիցեմք չար, չիցէ ոք՝ որ մեզ չար առնիցէ. նոյնպէս թէ չթշնամանեմք զանձինս, չիցէ ոք՝ որ զմեզ յամեն

առնիցէ ։ Վրեսջիր եթէ որ իցէ այր զարմանալի և սիրանի, և ամենեքեան զնա շուն և գող և գերեզմանակրկիտ և սպանօղ և աւազակ կոչեցեն, և նա ոչ ցասնուցու, և ոչ բարկանայցէ, և ոչ խիղճ ինչ այնպիսի զանձին գիտիցէ · զոր Հշմանսնս կրկիցէ · և ոչ զմի ինչ ։

Յակ արդ, ասեն, եթէ բազումք այնպիսի կարծիս առնիցեն զնմանէ, չիցեն նմա այն Հշմանսնք։ Հշմանսնի և ոչ այնպէս · այլ նոքա զանձինս յամօթ առնեն՝ որք զայնպիսին Համարին Հշմանսնել ։ Նայց աղէ՝ եկ ասա գու ցիս · եթէ որ զարեգակն խաւարայցէ Համարիցի, զլուսաւոր ամսոյն արգելոք խոտեաց, Թէ զանձն · յայտ իսկ է՝ Թէ զանձն · զի կուրի և մոլոր կարծիս արկ զանձամբ ։ Վայնպէս և որք զբարիս չարիս Համարիցին, և զչարիս բարիս, զանձինս յամօթ առնեն ։

Վ՚ան որոյ պարտ էր բազում փոյթ յանձին ունել, զի զխիղճ մտացն որբևցեմք, և չգտանիցին ՚ի մեզ կռուանաք, և մի կարծիք չարեաց ։ Վ՚թէ այլք կամիցին մոլել, և այնպէս ինչ ընդ մեզ չարաբարել · և մեք ոչ տատամսիցեմք և ոչ տրտմիցեմք ։ չէնա սիմք ինչ ։ Օ՚ի որ զանզգամի կարծիս առնուցու, և ինքն բարի իցէ, չէնասի ինչ անտի՝ առ ՚ի լինելոյ այնպիսի՝ որպէս զիարդ իցէն · և որ զոր և վայրապար կարծիցէ, ամենևին զապականութիւն յանձն կորզիցէ ։ Վրպէս և անզգամն յորժամ այլազգ ինչ կարծիցի, չօգտի ինչ անտի, այլ մեծ ևս դատաստան անձինն կուտիցէ, և ՚ի բազում ծուլութիւն գայցէ · զի որ այնպիսին իցէ, եթէ յայնի իցէ՝ Թերևս խոնարհիցի, և զղջանայցէ զիոր իւր · և յորժամ Թաքչիցի՝ յանկածութիւն անկանի · զի Թէ յորժամ ամենեքին ամբաստանիցեն, Հաղիւ զարթնուն յանցաւորքն ՚ի զղջալն, իսկ յորժամ ոչ միայն չբարասարիցեն՝ այլ և գովիցեն, ո՞ որ երբեք կարիցէ Հայել ՚ի նոսա, որք ՚ի չարիսն կայցեն ։ Ղւսես, զի և Պաւղոս մեզադիր լինիցէ · զի ոչ միայն չհաւնի Թոյլ զղջանալ զիւրք մեզն պռոնկացելոյն կորնթացիքն մեծարելոյն և պատուելոյն զնա, այլ և Համարձակեցեալ ևս այնու զնա ՚ի չարիս ։ Վ՚ան որոյ

աղաչեմ, զբազմացն կարծիս և զՀնամանս ի բաց Թողեալ, ի մին միայն փութասցուք, չգիտել ինչ խեղճ զանձանց. նա և անձամբ զանձինս Թշնամել. զի այսպէս և աստ և ի Հանդերձեալ աչխարհին վայելեսցուք ի փառս շնորհօք և մարդասիրութիւն նո մերոյ Ցեսի Քրիստի, որում փառք, իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

"Նա մատուցեալ Յովսեփայ խնդրեաց զմարմինն Յի։"

Ա՛ՅՍ Յովսէփ զառաջինն ծածուկ էր, բայց այժմ մեծապէս համարձակեցաւ զկնի մահուանն Յի։ Այլ եթէ աննշան ոք էր, կամ յանծանօթից, այլ՝ ի խորհրդականաց, և կարի իսկ նշանաւոր, ուստի և ընդ քաջութեաւ նորա պարտ է զարմանալ. զի՝ ի մահ մատնեաց զանձն, և զամենեցուն ընչեամբեւ չզանգիտեաց ունել յանձին վասն զԵյոյն Յի, և ժառեցաւ խնդրել զմարմինն Յի, և չեկաց՝ ի բաց մինչև առ. և ոչ միայն առնելոյն և մեծարանաւքն Թաղելոյին, այլ զի և յիւրում գերեզմանի եդ, յուցանել զնոյնա մեղն զօրութեաւ։ Այս և այն ոչ սակաւ ինչ մատակարարութեաւ գործ էր. այլ զի բնաւ ամենևին չվհեցեալն կարծիք՝ թէ այլ ընդ այլոյ չարեաւ։

Նա ընդէր բնաւ Նարիամ մագդաղենացի և միւս Նարիամն Յակոբայ գերեզմանին։ Ընդէր առեալ նոքա եւեթ կային. զի չև ևս մեծագոյնս և բարձրագոյնս իմանային զնամնէ. վասն այնորիկ և եւղ բերին, և առ գերեզմանին նստէին դեգերեալ, որպէս թէ ցածնուցու ինչ մելոթութեան հրէից, և երթիցեն արկանել զեւղն։ Տեսեր զառաքինութեաւ կանացն, տեսեր զգուշեն, զի մինչև՝ ի մահուն ժամն չթափիլն՝ ի նմանէ։

«Ի վաղիւ անդր՝ որ կէտ ուրբաթուն՝ ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Պիղատոս և ասեն. տէր՝ յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ կէտ երից աւուրց յառնեմ»։

Ա՛մենայն ուրեք մոլորութիւն ընդ անձին մտանէ, և ակամայ լինի ջատագով ձշմարտութեան։ Այս դու միտ դիր. պարտ էր հաւատարիմ լինել թէ մեռաւ և թաղեցաւ. և յարեաւ. և այս ամ՛ի թշնամեացն հաստատէր. և տէս զբանս նոցա, զիարդ ինքեանք վկայեն ամի։ «Յիշեցաք թէ մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ կէտ երից աւուրց յառնեմ». թէ այդպէս իցէ, ապա մեռաւ։ «Հրամայեա զգուշանալ գերեզմանին, գուցէ աշակերտքն գողացեալ գնացեն զնա». թէ այդպէս իցէ, ապա հնքեսցի գերեզմանն, և լինիցի չարագործութիւն և ոչ մի. և այնուհետև առանց հակառակութեան իսկ լինիցի հաստատութիւն յարութեան, այսուհիկ՝ զի գուք ձեղկեն զգուշացարուք և հնքեսէք զգերեզմանն։ Տեսանեմ, զի ակամայ իսկ ջանային հաստատուն լինել ձշմարտութեան։

Այլ դու միտ դիր աշակերտացն, զիարդ սիրեն միշտ զձշմարիտն ասել. որպէս զի ոչ թաքուցանեն ի բանիցն զոր թշնամիքն ասացին, թէպէտ և կարի նախատանաց իցեն. զի ահաւանիկ մոլորեցուցիչ կոչեն, նորա և զայն չթաքուցանեն։ Այլ և զնոցա զանագորոնութիւնն ցուցանեն, և զսոցա միամտութիւն, և զձշմարտասէր բարսն. զնոցա՝ զի և ոչ ի մահ հուն ցածուցին զբարկութիւնն. և զսոցա՝ զի ամ՛ ուրեք զտուգութիւնն սիրեն, և զարդարն ասեն։ Այլ արժան է և զայն ինդրել թէ ուր ասաց, թէ կէտ երից աւուրց յառնեմ՝, զի ոչ այնպէս յայտնի գտանեմք ուրեք ասացեալ. ապա ուրեմն Յովհաննու օրինակաւն գիտելն զբանն, և կամաւ գործելն ըզչարիսն։

Յե առ այն զինչ ասիցէ Պիղատոս «Ունիք զդասս զինուորացն, երթայք զգուշացարուք որպէս և գիտէք։ Ընդան և կնքեցին զվէմն հանդերձ դասու զինուորացն»։ Յե ո՛չ ետ դատաւորն Թոյլ զինուորացն միայն կնքել· քանզի հասեալ էր ի վերայ ամ իրաց նոցա, և չկամէր այնուհետև գործակից լինել կամաց նոցա. և վասն վերծանելոյ ի նոցանէ, և զայն եւս յանձն առնուլ. ասէ՝ դուք որպէս կամիք կնքեցէք, զի մի այլոց մեղադիր լինիցիք· զի եթէ զինուորացն միայն էր զգուշացեալ և կնքեալ, կարէին ասել ինչ. Թէպէտ և չէին հաւատալի և սուտ էին բանքն, բայց սակայն որպէս յայլոն անամբեծք էին, և յայն գոյր նոցա բանից մուտ՝ եթէ զինուորքն Թոյլ ետուն ա շակերտացն գողանալ զմարմինն Յիւ, վասն յարու Թե բանս կարկատելոյ. և քանզի կնքեանք զգուշացան, չկարէին այնպիսի բանս խօսել։

Տեսանե՞ս, զիարդ փութան ականայ վկայ լինել Հարուածելն. կնքեանք մատեան, կնքեանք խնդրեցին, կնքեանք կնքեցին հանդերձ դասու զինուորացն, որպ զի անձանց իսկ ամբաստանք և մատնիչք լինին։

«Յե յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ մադդաղենացի և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։ Յե ահաւասիկ շարժումն մեծ եղեալ, և հրեշտակ ած իջեալ, մատեաւ Թաւալեցոյց զվէմն ի դերեզմանէ անտի, և նստեր ի վերայ նորա. և էր տեսիլ նորա իբրև ըզփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն»։ Յետ յարուԹեն եկն հրեշտակն. և ընդէր եկն և եբարձ զվէմն։ Ա՝ ասն կանանցն. քանզի նոքա իսկ տեսին զնա յարեԹամ՝ ի դերեզմանին, զի հաւատասցեն եթէ յարեաւ, յորժամ տեսցեն զգերեզմանն ուշ նայն ի մարմնոյն. վասն այնորիկ եբարձ զվէմն, նմին իբր եղև շարժումն, զի քրքրեսցին և սթափեսցին. քանզի եկին եւս արկանել. և այս ցոյգ գործեցաւ. ի դէպ էր՝ եթէ ումանք ննջեցին իսկ։

Յե էր վասն և ընդէր ասիցէ հրեշտակն առ նոսա եթէ «Ի երկինքը դուք»։ Այսու զի զնոսա յաւպահովս առնիցէ յերկիւղէն. և ապա Հառէ զյարուԹենն։ Այա և դուքն ասել բազում պատուոյ նշա-

նակ է, և յայտ առնելոյ՝ եթէ անհնարին անյք ընդ յանդգնեալսն անցանիցէն, եթէ ոչ ապաշխարեսցեն. զի ոչ ձեզ է երկիւղն, այլ խաչահանուացն։ Լ՚ծէ զնովվիմքք. «Վ՚խտեմ, զի զՅիսուս գխաչելեալն խնդրէք» · և չհամարի ամօթ խաչեալ կոչել· «Ճա բեաւ» ասէ· և ուստի՞ յայտ իցէ· «Որպէս ասացն» ասէ· Թէ ոչ հաւատայք, զնորա բանն յիշեցէք, և ապա ինձ հաւատայք։ Վ՚արձեալ և այլ նշանակ· «Վ՚կայէք, ասէ, տեսէք զտեղին՝ ուր կայր»· և վասն այսորիկ առ զվէմն ՚ի բաց, զի այնու և առնուցուն հաստատութիւն։

«Լ՚սացէք, ասէ, ցաշակերտսն, Թէ տեսջիք զնա ՚ի Վ՚ալիլեա»· և այլոց և յարդարէ աւետիս տալ, և առաւել և առնէ հաւատալ նոցա։ Վ՚արբոք ա֊սաց, Թէ ՚ի Վ՚ալիլեա, զի յապահովս առնիցէ ՚ի տագնապին, առ ՚ի չվտռել զՀաւատսն երկիւղիւ։ «Վ՚յնէ ելին ՚ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ»։ Վ՚յնէ ընդեր արգելաք· զի զարմանային ընդ իրսն զոր տեսանէին, և աքանչանային ընդ գործսն· զի լոկ ինոց գերեզմանն, յորում տեսին զնա յառաջագոյն եդեալ· քանզի տարաւ իսկ եցոյց նոցա, զի երկոցունց իսկ վկայք լինիցին՝ գերեզմանին և յարու֊թեանն։ Վ՚յա և խորհէին իսկ, եթէ ոչ ոք իշխէ առնուլ զնա՝ որ այնչափ գինուորսն շուրջ նստեալ պահէին զնա, եթէ ոչ անձամբ զանձն յարոյց· վասն այնորիկ խնդային և զարմանային· և ընդ շատ յամենցն ա֊ռին զՀատուցումն· և զի ինքեանք նախ արժանի եղեն տալ զաւետիսն՝ ոչ միայն բանիւ, այլ և տեսլեանց։

Վ՚յնէ իբրև ելին ահիւ և խնդութեամբ բազմաւ, «Վ՚հաւասիկ պատահեաց նոցա Ցի՛ս, և ասէ, ուրախ լերուք· և նոքա բռնեն հարին զոտիս նորա»· և շո֊շափելովն ևս նշանակ և հաստատութիւն առին գյա֊րութենն· «Վ՚յնէ երկիր պագին նմա»· Վ՚յնա զինչ ասիցէ առ այն· «Վ՚նս եմ մի երկնչիք»· և այսպէս մերժէ զերկիւղն, զի յառաջագոյն Հանապարհ հա֊ւատոյ հոգդիցէ· «Լ՚ՍԼ երթայք ասացէք, ասէ, ցեղ բարոն իմ, զի երթիցեն ՚ի Վ՚ալիլեա և անդ տես֊ցեն զիս»· Տեսանեն, զի նա նոքօք տայ աւետիս ա֊շակերտացն, զի զբեկուսն կանանց ողջացուսցէ։

*" Այլ իբրև գնացին նոքա անտի , ահաւասիկ ի դա-
սուէ զինուորացն եկին ի քաղաքն, և պատմեցին քա-
հանայապետին և ծերոցն զամ զոր ինչ եղեն : Այլ
նոքա ժողովեալ ծերովքն հանգերձ խորհուրդ ա-
րարին , եւտուն արծաթ զինուորացն , և ասեն . գոգ-
ջիք , եթէ աշակերտքն նորա գողացան ի գիշերին ,
մինչ դեռ մեք ի քուն էաք. և եթէ լուր լիցի այդ առ
դատաւորն , մեք համձեսցուք զնա , և զձեզ անհոգս
արասցուք ,, :*

Այլ ոչն այսց զինուորացն եղև չարժուն, զի զար-
հուրիցին , և ի նոցանէն եղիցի վկայութիւն . որ եղև
իսկ : Վասզի առանց կարծեաց այնպէս լինէր պատ-
մութիւնն , յորժամ ի պահապանացն պատմիցի :
Վասզի նշանացն կէսն առ հասարակ ամ աշխարհի
բացերև էր , և կէսն առանձինն այնոցիկ որ մօտ կա-
ցին : Հասարակաց ամ աշխարհի խաւարն . և առան-
ձինն նոցա հրեշտակն երևեալ և շարժուն լեալ . քան-
զի եկին և պատմեցին , ձշմարտութիւնն յայտ յանդի-
մանն հակառակորդացն քարոզելոց . բայց սակայն ե-
տուն արծաթ , զի ասասցեն՝ եթէ աշակերտքն նորա
եկեալ գողացան զնա : Այլ զիարդ գողանայիցն . ոմ
անմիտք քան զամենեսեան : Ա ան պայծառ և երևե-
լի ձշմարտութիւնն լինելոց՝ և ոչ կկարենալ ինչ մարթելիցն .
քանզի կարի իսկ չհաւատալի բանք էին , և պատ-
ճառք անգամ ստութեանն չգտանելիցն :

Ո իարդ գողանայիցն, աղէ՝ ասա, արք տառապեալք
և ոգեմտք , որ յայտնել չիշխեցին զանձինս . մինչ
չկայր կնիք ի վերայ , մինչ ոչ նստեցին շուրջ պահու-
ցեալ պահապանքն և զինուորքն և հրեայքն . մինչ
չկային կարծիք կամ կասկած ի վերայ . նա և հրա-
կէին իսկ , և զայն ևեթ հոգային : Այլ և ընդէր
իսկ գողանային. մինչ կարկատեսցէն ինչ կրօնս յա-
րութեանն . և ուստի գոյր ի նոսա ինչ այնպիսի կոկը-
ցել : Այլ որ ըղձային գեթ գաղտ ուրեք զերծանել

և ապրել, զնաքդ կարէին զվէմն պնդեալ ի բաց թաւալեցուցանել. և զնաքդ կարէին զայնչափ բազմութեանն զմիտս հաձել, թէպէտև ի մահ ինչ զանձինս տային. զնաքդ կարէին յախուռն և վայրապար ժողել, ուր այնչափ պահապանք շուրջ պահէին։ Եւ զի վատասիրտք ևս էին՝ առաջին գործըն յայտ առնեն. յորժամ տեսին զնա կապեալ, Յողին ամենեքեան և փախեան. զի թէ յայնժամ մինչ կենդանին տեսանէին՝ և ոչ սակաւիկ մի կալ ժառեցին, զնաքդ յորժամ մեռանէր՝ ոչ երկնչէին ի մէջ այնչափ զօրացն մտանել։ Ի՞նչ թէ դժուն տապալեալ էր, և գայլտ մեռեալ։ Ա՛նն մեծ կայր ի վերայ, և բազում ձեռաց պէտք էին վերացուցանելոյ։

Յերուսաղէմ իսկ ասէին՝ թէ լինիցի յետինն մոլորութիւն և ամենեցուն չար քան զառաջինն. զանձանց ետուն զվէրս. զի յետ այնչափ մոլորութեանն պարտ էր զըզջանալ, նոքա ևս քան զևս ջանային յառաջին ծաղչալոյ գործոն յաւելուլ հայհոյանաց։ Ի՞նչ կէնդանին էր, զարիւնն գնեցին, և արկին զանձամբք. և իբրև խաչեցին, գարուսթեանն Հառս ընդ ի՛ւր կամէին գողանալ։ Ա՛յց դու միտ դիր, զնաքդ ամ ուրեք՝ զոր ինչ առնէին՝ նովին ըմբռնին. զի թէ չէին մատուցեալ և խնդրեալ ի Պիղատոսէ զդասս զինուորացն, յայնժամ առաւել մարթէին անամօթել յայնպիսի իրս. բայց նա ասանկի չէք ինչ հնար, քանզի իբրև թէ անձամբ ինչ զանձանց բերանս կարկիցեն, այսպէս զամենայն գործեցին։ Օ՛ի թէ հակել չկարէին ընդ նմա և նախատէին ի նմանէ վասն այնորիկ, զնաքդ յայնպիսի գործ մտաբերէին։ Ա՛յդը ոչ յառաջ գողանային, այլ յորժամ եկիք դուք պահել. զի թէ յայն ինչ մտաբերեալ էին, մինչ դեռ ոչ պահէր ոք զդիակալ տապանն, յայնժամ գային յառաջնում գիշերին՝ մինչ չէր կասկած ի վտանգէ. քանզի ի շաբաթու մատեան և խնդրէին ի Պիղատոսէ զդասս զինուորացն. յառաջնում գիշերին չէր ոք ի նոցանէ անդ։

Եւ զի՞նչ յայտ վարշամակըն ընդ զմուռսն առնիցին Թաթաւեալ. քանզի զայն ետես Պետրոս՝ զի կային. զի թէ գողանալ կամեցեալ էին, ապա ոչ

մերկ զմարմինն գողանային . ոչ միայն վասն թշնամանելոյ , այլ գուցէ մինչ մերկացուցանէին՝ յամիցն լինէ , և անկանիցին ի բառն նոցա . մանաւանդ ուր զմեռեալ մարմինն իցէ՝ կռուեալ և կարեալ ընդ հանդերձեան , չէր դիւրաւ վաղվաղակի ելանել հանդերձից ի մարմնոյ :

" Իսկ մեռատան աշակերտք , ասէ , զնացին ի Գաւլիլեա . ոմանք երկիր պագին նմա , և ոմանք երկմտեցին ի նմանէ ,, : Ցուսի լինէ , թէ այս վերջին տեսիլ իցէ ի Գալիլեա , յորժամ առաքեաց զնոսա միրըտել . և թէ երկմտեցին ոմանք , և այսու դարձեալ զարմացիր ընդ ձշմարտութիւն նոցա , զիարդ մինչև ցվերջին օրն չհաւատացանեն լինչ զԹերութիւնն իւրեանց . բայց և նոքա ևս որ և երկմտեցին՝ տեսլեամբն հաստատեցան : Իսկ յորժամ եառես զնոսա , զինչ ասիցէ . " Ցուաւ լինէ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի ,, : Դարձեալ զմարդկօրէնս իմն խոսի ընդ նոսա , քանզի չէ էր նոցա զԴոգին առեալ՝ որ կարող էր բարձրագոյնս առնել զնոսա և զմեծամեծս խնդրուցանել :

" Երթայք , ասէ , աշակերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնոսա յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ . ուսուցէք զնոսա որ լինչ միանգամ պատուիրեցի ձեզ ,, : Օ կէսն վասն կրօնից , և զկէսն վասն պատուիրանաց պատուիրէ . և զԴրեայս չիշէ լինչ , և ոչ զգործան՝ որ գործեցան՝ ի մէջ բերէ , և ոչ զՎերտոսի ուրացութիւնն նախատէ , և ոչ զայլոց Թողուչն և զիախչելն . այլ Հրամանն տայ ընդ տիեզերս սփռել . և զամ վարդապետութիւնս Հաստատ ի ձեռին դնէ մկրտուչն : Եւ քանզի մեծամեծ Հրամանս եառ նոցա , ապա և յորդորէ ևս զմիտս նոցա : " Ընդ ձեզ եմ , ասէ , զամ աւուրս մինչև ի վախճան ժամանակաց ,, : Ցեսանես զիարդ և առաքինեաւն զիջանելոյ վասն ըստ նոցա ասացեալ էն : Եւ ոչ ընդ նոսա միայն ասաց լինել , այլ և ընդ ամենեսին՝ որ յետ նոցա Հաւատալոյ . քանզի ոչ եթէ մինչ ցվախճան աշխարհիս կալոյ էին աշակերտքն , այլ իբրև ընդ միում մարմնի խոսի ընդ ամենայն Հաւատացեալս :

Ասէ , ասէ , զդժուարուչ լինչ իրացն ասիցէք . " Եւ

ընդ ձեզ եմ»՝ որ զնմա դիւբին առնեմ։ Ո այս և ցմարգարէսն ցանկ ասէր · ցԵրեմիաս՝ որ զմանկու-
թենն պատձառս առաջի դնէր · և Ա՛ովսեսի և Հզե-
կիելի՝ որ դանդաղէին՝ ասէր , ես ընդ ձեզ եմ · և
զսոյնս առ սոսա ասաց ։ Հայց տես և այսուիկ զսո-
ցա առաւելութենէ · զի նոքա բազում անգամ , յոր-
ժամ ի հեթանոս առաքէին , հրաժարէին · և սոքա
որ ընդ ամ տիեզերս երթալոց էին , չխօսեցան ինչ
այնպիսիս ։ Ցիշեցուցանէ նոցա և զխոձանէն՝ զի
և յոլովագոյս յինքն ձգեսցէ , և զի մի զանցաւորս
իբրև զընակաւորս համարեսցին , այլ և ի հանդեր-
ձեալ յանսպառ ուրախութենն հայեսցին ։ Ցրտմա-
կանքս , ասէ , զորս կրիցէք յանցաւոր աշխարհիս ,
լուծանիցին · քանզի և աշխարհն իսկ ի վախձան ե-
կեսցէ , և բարութենէն՝ յորս վայելելոց էք՝ անմահ
մնասցեն ։ Ասպէս բազում անգամ յառաջագոյն ա-
սացի , Թէ կրթեաց և յորդորեաց զմիտս նոցա , նոյն-
պէս և աստ յիշատակաւ առուբն կրթեաց և յորդո-
րեաց և առաքեաց · զի օրն այն՝ բարեգործացն ցան-
կալի լցէ , և մեզաւորաց ահագին՝ որպէս մնհատա-
տաց ։ Հայց մի միայն երկնչիցիմք և դողայցեմք , այլ
և դարձցուք՝ մինչ դեռ ժամանակս ի ձեռս է · և
հանցուք զանձինս ի չարեացն ի ծանծաղ · քանզի
կարօղ եմք՝ եթէ կամիմք ։ Ո լ թէ յառաջ քան ըզ-
հնորհն բազումք արարին զայն , որչափ և առաւել
յետ հնորհացն ։

Ո՛ինչ ծանր հրամանն առաք առնել · զսաթս հա-
տանել անցանել , Թէ ընդ օձս Թռչել , Թէ ընդ
բռնութենէ համառաած ծովուն ցամաքանալ սլա-
նալ · և ո՛չ երբէք · այլ այնպէս դիւբին է առաքի-
նութենն , մինչև այնպիսի գործոյ մի ինչ կարօտանալ ,
այլ միայն ոգւոյն և գթոյ ։ Ո՛ր գործի ունէին ա-
ռաքեալքն , որ զայնպիսի ուղղութենիս արարին · ո՛չ
միաձորձք և բոկք շրջէին · և ամենեցուն յաղթեցին ։
Ո՛ինչ դժուարին ի հրամանացն իցէ ։ Ա՛յի , ասէ ,
առներ զոք Թշնամի · մի առեար զոք · մի չար զումե-
քէ խօսիր ։ Ասոցին հակառակք են դժուարինք , և ոչ
սոքա ։

ՅՈՎՀԱՆՆԵՍ

ՈՍԿԵՐԻՐՆ

Ի ԹՈՒՂԹՍԻ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ՀԱՏՈՒԱԾՔ

ՃԱՒՈՒ Ա· Յաղագս թէ ոչ ՚ի հարկէ ինչ մեղք լինիցի, այլ ՚ի չար կամաց։

Բ· Յաղագս արժանաւորութիւն մերձենալ ՚ի նը խորհուրդն, և ոչ ժամանակաւ։

Գ· Յաղագս թէ մի ինչ յառաքինութեացն լուծանել բաւական է հանել յաբքայուէն, և վն տանջանացն այլ և այլ մեղաց որ շատ և որ սակաւս

Դ· Յաղագս առաջնոցն պնդութիւն յառաքինութեան. և մեր ծուլութիւն։

Ե· Յաղագս դառնալոյ ՚ի լարեաց՝ օրինակաւ Նինուէացւոցն։

Զ· Յաղագս սիրոյն Ա՛ստ։

Է· Յաղագս գուսանական խեղկատակութիւն։

Ը· Յաղագս ապահովութիւն՝ որ է կռապաշտութիւն։

Թ· Յաղագս առն և կնոջն սիրել զմիմեանս։

Ժ· Յաղագս ծնողաց զորդիս խրատու. ՚ին մնուցանել։

ԺԱ· Յաղագս արդարութիւն կեալ. և չարաչար տանջանաց դեհենին։

ԺԲ· Յաղագս ՚ի չափու ուտել զանձն։

ԺԳ· Յաղագս սիրոյ, և զընկերն չահելոյ։

ԺԴ· Յաղագս ոչ ողբալոյ զմեռեալս։

ԺԵ· Յաղագս ոչ մատնելոյ անձամբ զանձինս ՚ի փորձութիւն այլ միշտ ՚ի բարին կիրթ կալ։

ԺԶ· Յաղագս հանդերձեալ բարութեացն։

ԺԷ· Յաղագս ծերոց և մանկանց զգաստանալոյ։

ԺԸ· Յաղագս ստոյգ ապաշխարութեն։

ԺԹ· Յաղագս ողորմածութ. և ոչ քննելոյ զարժանն։

Ի· Յաղագս ընտրութեն աղքայութեանն, և յորդորելոյ ՚ի բարին։

ԻԱ· Յաղագս միշտ յիշել զնա։

ԻԲ· Յաղագս ագահից և անարգ ծնողաց։

ԻԳ· Յաղագս հանդերձեալ տանջանացն տուգութ. և ոչ խօսել չար զուսքէ, այլ զանձնէ։

ԻԴ· Ողբք յաղագս մեղուցելոցն և ոչ ապաշխարելոցն։

ԻԵ· Յաղագս ոչ սիրել զաշխարհս և որ ինչ յաշխարհս ՚ին է՝ օրինակաւ Ա՛ստ։

ԻԶ· Յաղագս աղօթելոյ։

ԻԷ· Յաղագս ՚ի չափու ուտել զանձն, և առ զարդասէր կանայս։

ԻԸ· Յաղագս ապաշխարութե։

ԻԹ· Յաղագս աւելորդ ցանկութեանցն։

Լ· Յաղագս սատանայի, և ահել խորհրդոցն ոչ արժանաւորութիւ հաղորդել։

ԼԱ. Յաղագս կանանց աւելորդ պաճուճանաց և պըղ-
ծանաց աշխարհականաց, և կուսանաց այս ինքն
հաւատաւորաց։

ԼԲ. Յաղագս զըրկիս և զդատերս խրատելոյ հարց և
մարց ըստ կամացն Աւ։

ԼԳ. Յաղագս անձամբ տալ աղքատին. և վասն միայ-
նակեացց սրբոց։

ԼԴ. Յաղագս հնազանդ լինել առաջնորդաց և ոչ բամ-
բասել։

ԼԵ. Յաղագս սակաւ դողութիւն և յափշտակութեան
ընդ բազմի համարեալ ի չար կամացն։

ԼԶ. Յաղագս ոչ հաւատալ հմայիցն և հաւընկեցաց,
և որ սոցին նման են, ղի ընդ կռապաշտութեան
համարեալ է։

ԼԷ. Յաղագս որք զանարժան որ յեպիսկոպոսութիւն
կոչին. և որք բամբասեն զառաջնորդն։

ԼԸ. Յաղագս չարհամարհելոյ զառաջնորդն։

ԼԹ. Յաղագս ոչ տանելոյ զմանուկ խօթացեալ ՚ի
բժշկութիւն բժժանաց ստոանայի։

Խ. Յաղագս Պաւղոսի արտաստացն. և ոչ մնանել ՚ի
հարանիս կաթուղիկոս և ստոանայական երդոց։

ԽԱ. Յաղագս անձամբ աղօթել և ոչ ՚ի նըցին միայն
յաղօթս ոտաստան լինել։

ԽԲ. Յաղագս որ յընդկեցն կորստեան ոչ երթան ՚ի հար-
ցուկս և ՚ի գէտս՝ ընդ մարտիրոսացն առնուն
վարձս։

ԽԳ. Յաղագս գեհենին տանջանաց, հաստատեալ օ-
րինակաւ ջրհեղեղին և Սոդոմեայ հրոյն, եղծա-
նելով որք ասեն թէ պատառելիք միայն իցեն։

ԽԴ. Յաղագս զգուշութիւն գնալ ընդ նեղ ճանապարհն
և մի ծուլանալ։

ԽԵ. Յաղագս մեռելոցն առնել աղօթս և տուրս տալ,
և վասն ախոցիկ՝ որ անկնուն գնացին։

ԽԶ. Յաղագս ոչ բարձրամտել խիբ, այլ խոնարհ լինելը

ԽԷ. Յաղագս ոչ բամբասելոյ զքահանայս։

ԽԸ. Յաղագս աւելորդ ծախսոց ասկոյ և հանդերձից.
և ասՀ զդայութիւն ծառայել նմ։

ԽԹ. Յաղագս նոյ մարդասիրութեան, և յորդորելով
յառաքինութիւն։

Ծ. Յաղագս եթէ չիք ինչ որ զառաքինութիւն վնա-
սիցէ, օրինակաւ սրբոցն։

ԾԱ. Յաղագս աշուոր դալստեանն Քրիստ։

ԾԲ. Յաղագս տուրս տալոյ առաջնորդաց նրց։ Յորդո-
րեալ պաշարեալ են թուաւորք և իշխանք, այլ երկ-
նից արքայութիւն կեանք և խնդութիւն։

ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՈՍԿԵՐԲԱՆԻ
ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ
Ի ԹՈՒՂԹՍՆ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ՃԱՌ ԱՌԱՋԻՆ

Ա՛ւ արդ ծն ամա՛ւ ի մէջ, զայն քննեսցուք, ի հարկէ՛ ինչ և՛ ի բռնուէ՛ մեղք գործիցին, եթէ՛ յօլոլեցէ՛ և՛ ծուլացէ՛։ "Ա՛ի սպանանիցես" ասէ. և արդ զինչ՞ հարկ՛ ի վերայ կայցէ սպաննանել. հարկ այն իսկ էր՝ չսպանանելն, և ո՛չ սպաննանելն։ Վասզի՞ ոք՛ ի ձեռն կամիցի Թանալ զսուր իւր՛ ի պարանոց ընկերին, և շաղախել զձեռս աբեամբ. և ո՛չ ոք։ Ջեսանես զի նորին հակառակն է հարկ, և մեզանչելն է բռնութիւն։ Ջնկեաց ած՛ ի քնութեես մերում խնամ առ՛ի զմիմեանս սիրելոյ. և ամ՛, ասէ, կենդանի սիրեսցէ զնմանի իւր։ Ջեսա՞ նես զի առ առաքինութեին ունիմք՛ ի բնութեն սերմն. և չարութեին արտաքոյ քան զբնութեին է. և եթէ որ ինչ արտաքոյ քան զբնութեին է՝ այն կարիս ունիցի, բազում ծուլութեէ մերոյ նշանակ է։

Իսկ՛ ի՞նչ ասես որ հարկ տանիցի։ Ա՛յո՛, ասեմն, ցանկութեին բռնութեին։ Ինդէր. չիցէ իշխանութիւն ընդ իւրում հնաջն վայելել, և ցանծացանել զբռնութեին։ Ա՛յլ միտք, ասէ, վարի իմն ցանկանալոյ հնոջ. և անաի իսկ յայտ է եթէ չկայ հարկ՛ ի վերայ. զի

ցանկութիւն ոչ եթէ ի հարկէ ինչ է. քանզի ոչ եթէ ի հարկէ՝ որ սիրէ, այլ կամաք և ախորժելով։ Օ՛ի խառնակելն Եւաս ի հարկէ ինչ էին է. իակ զմի սէր բել և զմի չսիրել, այն ոչ ի հարկէ է. նա և այնպէս սի ցանկութիւն ոչ ամաւնութիւն ինչ իրք են, այլ մնապարծութիւն և թշնամանաց, և աւելի քան զչափն փափկութիւն։ Այս արդ ասէ՝ ասա, որ ի դէպ իցէ, զյօրինեալն օրինօք ամաւնացեալ՝ զորդեծնութեանն հաղորդ՝ ունել, եթէ զանձանութիւն զօտարոտին։ Ով չիցէ տեղեակ զի սովորութիւք սէր ծնանին. որպէս զի ոչ բնութիւն ինչ իցէ. և մի պատճառս չնաւէն զսէր համարիր. քանզի վասն ամաւնութեան տուաւ, որ դեծնութիւն սակս ընդհեցաւ, ոչ վասն չնութեան և ապականութիւն աղագաւ։

Պիտեն և արտաքին օրէնքն ներել յանցանաց որ ի հարկէ լինիցին. մանաւանդ զի չիք ինչ յանցանք, որ ի հարկէ լինիցին, այլ ամ ինչ ի թշնամանաց. քանզի ոչ այնպէս արար ած զբնութիւն եթէ ի հարկէ մեզանիցէ. նա թէ այնպէս էր, ապա և տանջանք չզոյին. զի ի հարկէ և ի բնութիւն յանցանաց և ոչ մեք պահանջեմք համարս, թողութիւն ած՝ որ այնպէս մարդասէր և բարերար է։

Իակ զողանալն ինչ ի հարկէ իցէ։ Այո, ասէ, քանզի աղքատութիւն առնէ զայն։ Աղքատութիւն մանաւանդ ի գործ ստիպէ և ոչ ի գողանալ. աղքատութիւն զնորին հակառակն գործէ. քանզի գողանալն ի դատարկութիւն է. և աղքատութիւն ոչ զգողութիւն, այլ զխնդութիւն սովոր է ծնանել. որպէս զի յայտ լինիցի եթէ գողուն ծուլութիւն գործ է։ Այս զի այլ եւս ինչ ուսանիցիս, աղէ՝ ասա. զինչ գժուարին իցէ, որ գժնդակագոյն, զդիւցին ամ յածել չքնել, զանկիւնս փորել, և ընդ խաւար խարխափել, և զոգիսն ի բուին ունել, և ի սպանութիւն մտաբերել, գողալ, սրտաբախ սրտաճմնդ լինել, եթէ հանապազորդ վաստակոյն միտ դնել, և յանհոգ վայելել, և անկասկած կալ զգուշութիւն. յայտ է թէ այս դիւրագոյն է. և զի այս դիւրագոյն է՝ անտի երևի, զի բազումք զայս առնեն և ոչ զայն։ Ցեսանես զի ըստ բնութեան է առաքինութիւն, և արտաքոյ բնու-

թեան չարութիւնն. զոր օրինակ ցաւքն և առողջութիւն։

Իսկ արդ առնելն ինչ և սուտ երդնուլն ի հարկէ ինչ իցէ։ Այս ոչ միոյ ինչ հարկ կամ բռնութի՛ ի վերայ կայ անդ. այլ կամաւ և ոչ յակամայ գամք յայն, պահանջիմք, ասեն, և զի գործիցեմք։ Ա՛ն զի կամաք պահանջիմք. մարթ էր մեզ՝ի բարոյիցն հաւատալ եւ գտանել առաւել քան յերդմանէ։ Այս արդ աղէ՝ասա, ընդէր կիսոց՝ թէպէտ և երդնուն՝ չհաւատամք. և զայլս՝ թէպէտ և չերդնուն՝ հաւատարիմ համարիմք։ Չեւանեն զի չեն ինչ պէտք երդմանց. այս ասեն, ասէ, թէպէտ բանիւք ասէ առանց երդմանն՝ հաւատամք. և զոր թէպէտ երդնու՝ ոչ հաւատամ. ապա ուրեմն աւելորդ է երդումնն, և անհաւատութե՛ առաւել քան հաւատոյ նշանակ։ Ա՛նհնարն լինել առ երդումն՝ չտայ Թոյլ կարծիս լաւութե՛ ունել. որպէս զի որ յերդումն յառախիցէ՝ այնպիսի է՝ որ ոչ երբէք համարի կարևոր զպէտս երդմանն. և որ ոչն երբէք երդնուցու, նա է՝ որ՝ի նորուն պէտսն վայելիցէ։ Այրդման պէտք հաւատալոյ վասն են. և արդ տեսանեմ, զի որ չերդնուն՝ նոքա առաւել հաւատալիմ են։

Իսկ թէհնամանօքն ինչ լինել՝ի հարկէ է։ Այո՛, ասէ, քանզի յորդ ցասումնն, և բորբոքի, և չտայ Թոյլ մտմանել ոգոյն։ Ա՛յ՝ի ցասմանէ ինչ է Թշնամանել, ով մարդ, այլ՝ի կարձմտութե՛. զի եթէ՝ի ցասմանէ ինչ էր, ապա ամենեան որ ցասնուին՝ չգադարեին՝ի թէհնամանելոյ։ Ցասումն ունիմք ոչ զի զընկերս թէհնամանեսցուք, այլ զի զչարագործսն դարձուսցուք. զի յորդորիցիմք, ոչ զի՝ի պղերգութիւն հատանիցիմք. իբրև զիմն ինչ կայ՝ի մեզ՝ի ներքս ցասումն, զի ընդդէմ սատանայի առամնիւս կրճտիցեմք, զի նմա գազանանայցեմք, և ոչ զի միմեանց եղիւբ ածիցեմք։ Օ՛ն ունիցիմք՝ ոչ զի ընդ անձինս մարտնիցիմք, այլ զի ընդ թէհնամտոյն կռուիցեմք սպառազինութե՛ն։ Ցասկոտ իցես. մեղայն գազանեաջիր, զմիտս հարկանիցես, զախիղձ խորհրդոցդ տանջիցես. սաստիկ դատաւոր և դառն դահիճ լինիցիս քոց մեղացն. այն է շահ ցասմանն. նմին իրի իսկ անկեաց վնաս՝ի մեզ ՝ածն։

Իսկ յափշտակութեի՛ն հարկի՛ ինչ իցէ. և ո՛չ երբեք. զի՞նչ ինչ հարկ իցէ յափշտակելն, ազի՛ասաւ, որ բռնաւո՛ր ի՛ վերայ կայցէ։ Ի՛զբաստութիւն, ասէ, առնէզայն, կասկած կարևոր պիտոյիցն։ Ո՛չ վասն այնորիկ իսկ չէ պարտ յափշտակել. քանզի չէ զգուշալի այնպիսի մեծութեի՛ն. զոր գրեաւ թէ այնպիսի ինչ առնես՝ որպէս յորժամ ոք, յոր հարցանիցէ՝ թէ ընդէ՞ր ի՛ վերայ աւազոյ դնես զհիմունս տանդ, և նա ասասցէ՝ եթէ վասն հեղեղի և անձրևի. նա յայն սակս իսկ չէր պարտ ի՛ վերայ աւազոյ զհիմինն դնել, քանզի վաղվաղակի յանձրևիլ և ի՛ հեղեղել և ի՛ հողմոյ կործանի։ Որպէս թէ մեծութիւն կամիցիս, մի ապահիցես. և եթէ որդւոց կամիցիս ստանալ զմեծութի՛ն, արդարութեամբ ստասջիր. եթէ իցէ ոք այսպիսի, նա է որ հաստատուն կայցէ. և որ չիցէ այսպիսի, վաղվաղակի կործանի։

Ո՛չ՝ ասա՛, մեծանա՛լ կամիցիս և զայլոցդ յափշտակել. նա և այն իսկ չէ մեծութի՛, այլ զիւրն ունել. որ զայլոց ինչ ունիցի՝ այնպիսին չէ մեծատուն։ Ո՛յս է թէ այսպիսի ինչ է, և որք զկերպաս զհանդերձանս յայլոց առնուցուն և վաճառիցեն, մեծատունք և ընչաւէտք կոչիցին. թէպէտ և առ ժամանակն նոցա են հանդերձքն, այլ չկուեմք զնոսա մեծատունս. ընդէ՞ր, քանզի զայլոց ունին. զի թէպէտ և հանդերձքն նոցա իցեն, սակայն զինքն չեն նոցա. թէպէտ և զինքն նոցա ևս իցեն, այլ այն չէ մեծութի՛։ Ո՛չ եթէ տուրևառ ոմիկ փոփոխումն չգործեն մեծութե՛ի, վասն վաղվաղակի նոցա ի մէնջ մեկնելոյ, իսկ յափշտակութեա՛նն ինչ զմեծատունս առնիցեն։ Ո՛չ եթէ ցանկանալ ևս ցանկանայցես՝ որ չէր ինչ հարկ՝ մեծանալ, և կամիցիս մեծանալ երկայն ինչ կենօք բազում ժամանակ, նա և այնպիսիքն սակաւակեացք լինիցին, վաղվաղակի անցանեն. բազում անգամ վրէժս իսկ տան զյափշտակութենէն և զագահութի՛ն՝ մահս տարաժամ, և չվայելեն յարարսն. սակաւ ինչ կեան, և զդեհենն առնուն ի՛ ժառանգութիւն։ Ո՛ազում անգամ և ի՛ փափկութի՛ն և ի՛ վաստակոյ ցաւք ծնանին և սատակին։

Ա՛մէն ի՛ վերայ հասանել թէ էր վասն այնչափ

Ձեպին մեծանալ մարդիկ, թէպէտ և ՚ձծ վասն այսորիկ եդ չափ և սահման բնութեան. զի մի և մի ինչ հարկ ունիցիմք խնդրել մեծութ։ Հանդերձից վասն մի և երկու զգեստ բաւական են մարմնոյ. և աւելորդացն չէն ինչ պէտք. եր վասն բազում հանդերձս ժողովեալ ցեցակեր մեցամաս առնես։ Չափ սահմանեալ է որովայնի. որ ինչ աւելի է քան զայն, ապականիչ է ՚ամ կենդանւոյ. եր վասն այնչափ անդեայք և խաչինք և այնքան շաղիղ պատառեալ, ուր սակաւ ինչ պէտք են որովայնի։ Ի յարկ բաւական է ՚ի բնակութեն, ընդէր այնչափ փողոցք և սրահք և պէս պէս սենեակք. զի բուք և ագռաւք բնակեսցեն։ Ո՞ աղքատս մերկացուցանես, և պէսպէս սենեակս զարդարես. որպիսի՞ գեհենոյ չիցէ այն արժանի։ Ւյա և ՚ի տեղիս ինչ զոր բնաւ երբէք ոչ տեսանիցեն՝, սիւնս կՀեայս և քարինս ծանրագինս տաքքեն, և շինուածս զարգարուն կազմեն. և զինչ այլ ինչ ոչ հնարին. յորում ոչ ինքեանք վայելեն, և ոչ այլք. քանզի չտայ նոցա Թոյլ անդր երթալ անապատն. սակայն և այնպէս ոչ դադարեն ՚ի զուր աշխատութենէն։

Տեսանե՞ս զի ոչ վասն շահի ինչ կարաստոյ այնպէս լինի, այլ ՚ամի այսորիկ անմտութեն և մնապարծութեն է պատճառք։ Ւղաչեմ փախչել յայնպիսի ՚ի զուր աշխատութենէ. զի և յայլոց չարեացն փախչել կարիցեմք, և հասանել խոստացելոց բարութեցն որ ՚ի քս յս ՚ի տէր մեր, ընդ որում հօր, միանգամայն և հոգւոյն սրբ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին ը։ . . . ոչ պէս ցե։

ՕՐԱՁՈՒՄՍ տեսանէմ զի վայրաբար [1] և անխոհեմ և ըստ սովորութեան ինն հաղորդին մարմնոյն Քրիստոսի, և եկեսցէ, ասէ, ժամանակ քառասնորդացն և յայտնութեան, բարիոք է [2] հաղորդել խորհրդոյն, մերձենալ յօրէնսն։ Այլ թէպէտ ժամանակ մատչելոյ ունի [3] յայտնութիւն ինչ է և քառասնորդք, այլ ոչուց հաստատութեն և սրբութեն. այնու հանդերձ՝ հանապազ մերձեաց. և առանց այնր՝ և մի երբէք ոչ ժոխեցս։ «Քանիցս անգամ, ասէ, թէ առնիցէք զայն, զմահ նորա պատմեջիք». զերոյ փրկութեան և զիմոյ բարերարութեն։

Այս միա առ, որ ի զոհս հնոյն մերձենային, որպէս սի սրբութիւ պարկեշտանային, որչափ ակն ածէին, զինչ ոչ առնէին, զոր հնարս չհնարէին, զի համ իւիք սուրբք գտանէին. զու յայն զէնումն և ի պատարագ մերձենաս, յորմէ հրեշտակք դողան, հրեշտակապետք սարսեն, և ժամանակաւ շրջանակաց զիրսն սահմանեա. և զիարդ կարիցես յանդիման լինել բեմին Քրիստի, որ պիղծ ձեռօք և շրթամբ ժոխիս ի մարմինն։ Այս զթագաւոր ոք չիշխէիր համբուրել՝ եթէ հոտ ինչ չար ի բերանոդ գայր. և զերկնաւոր թագաւորն հոտեալ բերանով համբուրես. մեծի թշնամանաց իրք են։ Այզ ասա, անլուայ ձեռօք յօժարիցիս մերձենալ ի պատարագն. Թուի ինձ թէ լաւ համարէիր բնաւ չմերձենալ՝ քան թէ աղտեղի ձեռօք մերձիցիս։ Այ փոքուն այնքան երկիւղած ես, և աղտեղի ոգւովդ անխտիր ժոխս հաղորդել. Թէպէտ և ձեռաց աղտ առ ժամանակ մի է, և ոչոյն ամենևին ներկեալ։

Ասեսանիցես, զիարդ զսպամն սրբեմք, և ջինջ մաքուր առնեմք. առաւել քան զայն զոհիս մեր պարտիմք սրբել. և ևս յաձախ լուսաւորագոյնս և

1 Յօրինակին Ձբաղամ վայրաբար։
2 Յօրինակին Բարեբուխ։
3 Յօրինակին Ձամանակի մոգ. ենէ որ ունի։

պայճառագոյնս առնել։ Ա՝ասն է. զի այն վասն մեր սրբի, և այն չհաղորդի ընդ այնմ՝ որ ի ներքս ի մեզ մնանէ. քանզի ոչ եթէ զգայուն իցէ սպասն. իսկ մեք սրբոյն իսկ հաղորդեմք։ Այլ թէ սպասն աղտեղի է, չառնուիր յանձն նուաստ զորբուքեհնն մատուցաներ. և ոգւովք աղտեղաւ անխտիր մերձենաս։ Այլ կարի իմն անհարթ և անձահ և այլազգ դիրսն տեսանեմ. յայլ ժամանակ թէպէտ և սուրբք են՝ չմերձենան. և զատիկ թէպէտ և կարի ոք յանդգնեալ ի չարիս իցէ, անխտիր մատչի։ Ա՛՛չար՝ սովորութեամբ և կանխահալոյ անմտութեամբ։ Ի զուր ուրեմն հանապազորդ զենուն լինի, վայրապար ինչ կայցեմք առաջի սեղանոյ, չիք ոք որ հաղորդի, չէ ոք որ յօրինսն մերձենայցէ. և ոչ զայն ինչ ասեմ, եթէ անխտիր ոք մերձենայցէ, այլ զի արժանի զանձինս յօրինիցէ. չիցես արժանի պատարագին, և ոչ մերձենալոյ ի սրբութիւնն. եթէ այսպէս իցէ, և ոչ աղօթիցես։

Ղսիցես զինչ աղաղակէ քարոզն, եթէ ապաշխարեցողք յաղօթս կացէք. որ այն հաղորդին՝ ընդ ապաշխարողսն է. զի կայցես ի ներքս որ ընդ ապաշխարողսն իցես. քանզի որ չհաղորդին՝ ընդ ապաշխարողսն է։ Ինդէր ասիցէ, եթէ որ ոչ էք կարող՝ երթայք, և դուս ժողհեալ անցեալ կաս որպէս զսուրբ ոք։ Այլ չիցես յայնպիսեաց, այլ ի կարողացն. և ընդէր չփութայցես հաղորդել. ոչ ապաքէն՝ զի չհամարիցիս ինչ զիրսն։

Ի՛նչ դիր աղաւէսք, արքունական սեղան է, հրեշտակք սպասաւորեն սեղանոյն. ինքնին իսկ Քահանայրն հասեալ է ի սեղանն, և դու կաս և յօրանչես և ձկտիս, և աղտեղի հանդերձս ունիս. և չհամարիս ինչ ինձ։ Այլ սուրբ հանդերձս ունիցիս. եթէ այնպէս իցէ, բաղմեայ և վայելեա հանապազ։ Կայ շրջել զբազմականօք, և ընդ ամենեսեան միշտ խօսի, և ասէ ցխոշմականն, "Ինդէր՝ զինդրդ կաս աստ, որ ոչ ունիս հանդերձ"։ Չասաց թէ ընդէր բաղմեցար, այլ յառաջ քան զբազմելն և մտանելոյ և անդ

1 Յորինակին Ը.

արժան համարեցաւ . քանզի լսասց թէ ընդէր բաղմեցար , այլ եթէ ընդէր մնար ։

Ո՛նոյն և այժմ ընդ մեզ ամենեսեան ասիցէ . որք անամենեւին և յանդգնութիւն այսր մնանիցեմք . ամենայն որ ոչ հաղորդեսցի խորհրդոյն , անամենի և ժառանգութիւն կայ , ուր չիցէ նմա պարտ կալ ։ Այսոքիկ որ ի մեզն են յառաջագոյն որոշեմք ի բաց , և ապա զխորհուրդսն կատարեմք ։ Այս և ասէն իսկ յորժամ տեր այր ի հաց կամիցի լինել [1] , որ զք յանգցաւոր ծառայիցն իւրէ՝ մեկուսի դնայ . նոյնպէս և աստ , յորժամ պատարագն ելանիցէ ի սեղանն , և Աւե ի վերայ դնիցի գառն անարատ , յորժամ լսիցես եթէ ամենեքեան աղօթս արարէք , յորժամ տեսանիցէք զդրունս ի միմեանս ածեալ , ի միտ առնուցուք՝ եթէ երկինք ի վերուստ քանին և հրեշտակք իջանեն ։ Ո՛ որ օրինակ երախայի ունէք չէ պարտ ի ներքս կալ , նոյնպէս և ճրաբաւորացն աղտեղեաց ։

Ա՛ղէ՛ ասա , եթէ որ ի ձաշ կոչիցի , զձեռս լուա նայցէ և բազմիցի , և մատչել չկամիցի ի սեղանն և ձաշակել , չըշնամանիցէ [2] զկոչելսն . ոչ ասպաւէն լաւէր այնպիսոյն եթէ չէր եկեալ . նոյնպէս և դու մնար ի ներքս , զօրհնութիւնն ընդ ամենեսին օրհնեցար , յայտ արարեր և եթէ յարժանաւորաց ես , այնուզի ոչ ընդ անարժանսն արտաքս գնացեր . զմարդ սիացեր ի ներքս և չհաղորդեցիս սեղանոյն ։ Ողմ , ասէ , արժանի ։ Եթէ այնպէս իցէ , և ոչ աղօթիցն հաղորդութիւն . քանզի ոչ միայն ի պատարագն , այլ և յօրհնութիւնս իջանէ Հոգին ։

Ըստ եսանիցես որպէս սպիգովք զսեղանն լուանան , և զսուրն սրբեն , և զսկտեղսն և զաժակսն յօրինեն դնեն . և յաղօթիցն ժամն լինի , միւնդեւ քաղսն ազաղակէ , իբրև սպիգով շուրջ լուացցեն զեկեղեցին , զի ի սուրբն եկեղեցւոջ յօրինեսցի դնիցի ամ ինչ . մի ինչ իցէ անդ սպի կամ խորշ կամ ազտ . չեն արժանի և աչք անարժանիցն հայել յայնպիսի սրբութիւնն , և ոչ ականջք լսել զայնպիսի բարբառ ,

1 Յօրինակին լինիցի ։ և մտցել ի սեղանն ... լինիցի ։
2 Յօրինակին ի ձաշ կոչիցէ ... ոչ ։

թէ և գազան, ասէ, մերձեսցի, քարամբք քարկոծեսցի. և այսպիսի հպելոյ անգամ [1] ի լեառն չելիցի առ ժամն, թէպէտև յետոյ մատչելին տեսանիցէ ուր կայցէ ոճ. յետոյ համարձակ էր մեծել և տեսանել։ Այլ ինչ եկեալ հասեալ կացցէ՝ անտի ի բաց դնա. չէ քեզ իշխանութիւն անդ կալ առաւել քան երթալոյիցն. քանզի չէ հաստարակ բնաւ չհպել ի խորհուրդն, և հպել, և յետոյ յանցանել և արհամարհել, և անաթ ժան իրաց զանձն կացուցանել։

Այր և այլ ինչ բաղում ասել ահագինս, այլ զի մի ծանրաբեռնի առնիցեմք զմիտս ձեր, բաւական համարիմք այսչափ միայն ասել՝ զի որ սակաւուքս չզգաստանայցէ, և ոչ բաղմօքն խրատիցին. զի մի առաւել դատապարտութիւն գործիցեմք ձեզ։ Այլեւս զանձինն, միայն ի գալ փութացեք, այլ հանդերձ գալով և մերձենալովն արժանի զանձինս պատրաստեսջիք։ Այլ՝ ասաց, եթէ Թագաւոր ոք հրամանս տայր եթէ ոք զայս ինչ գործիցէ՝ յիմմէ սեղանոյս ի բաց կացցէ, ոչ ապաքէն զամ հնարս հնարիցեք, զի մի գոցիք վրիպեալք ի սեղանոյն. իսկ նա աւանիկ յերկինս կոչեաց զմեզ յարքայական սեղան, ի մեծն և ի սքանչելին, և մեք հեղգամք և յապաղեմք և չփութամք գուն ի վերայ գործելով. և զինչ յոյս փրկութեանէ կայցէ մեզ։ Ունիք պատճառս տկարութեանէ դնել, և ոչ զընութեանէ. ծուլութեանն միայն անարժանս կացուցանեմք զմեզ։

Այս ի մէնջ ասացաւ։ Այլ որ քանայ զսիրտս և տայ զՀոգին յորդորմանն, յորդորեսցէ զսիրտս ձեր, և տնկեսցէ ի խոր զերմանիսն. զի աշխատ նորա եղիցի յաղնալ և ծնանել զՀոգի փրկութեանէ. և գալ այսր համաձակութեանէ սրտիւ և աչալուրջ երեսօք, ըստ այմ՝ եթէ "Արդիք քո որպէս նորատունկ ձիթենեաց շուրջ զսեղանով քո"։ Մի աւելորդս ինչ և մի գազանագոյնս, մի խակ և տհաս. զի այսպիսի նորատունկքն պիտանացու են պտղաբերութեանէ [2] զարմանալի պտղովն, ձիթենեոյն ասեմ, և ընդ պտղաբերութեանն զի

1 Յօրինակին անգամ։
2 Յօրինակին պիտանացու անպտղաբերութեանէ։

և սերտք իցէք։ Ըսպէս զի ամենեցուն լիցի շուրջ զտուրբ սեղանոյն պատկէլ, և մի՛ ի զուր լինել և ընդ վայր ժողովել այսր. այլ ահիւ և երկեղիւ այնպէս ղՔ տեսանիցէք անդ համարձակութիւն. որոց լիցի մեզ արժանի լինել ամենեցուն ընտրհօք և մարդասիր բութեամբ. ՚ն մերոյ ՚Ի՚ն ՚Ի՚ն, ընդ որում հօր միանդամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այլ ամենեքումբք պարտ է՝ի գէպն վարել. նոյն-պէս և ՚ձեզ առաքինութիքը յարժանն պարտ է վայե-լել. Այնէ ցածուն որ իցէ և ողորմած չիցէ, և կամ նէ ողորմած որ իցէ և ագահիցէ, կամ նէ յայլ ինչ չժտիցէ և զնւբն ումեք չտայցէ, բնաւ ընդ վայրՙ ՚ձեզ ՚ի զուր է. չէ բաւական մի միայն առաքինութիքն համարձակութիքը յանդիմանն կացուցանել առաջի բե-մին ՚Քոյ. այլ բազում և պէսպէս և ազգի ազգի, և ամենայնի իսկ և բնաւին պէտք են։ Այս լաւ նմին իսկ որ ասէր ցաշակերտսն, եթէ "Այրթայք և աշա-կերտեցէք զձեզ զՏէրն Յեսուս, և ուսուցէք նոցա պա-հել զձեզ զոր ինչ պատուիրեցի ձեզ". և դարձեալ "Ով լուծցէ որ մի՚ի պատուիրանացս յայսցանէ փոքունց, կրտսեր կոչեսցի յարքայութեանն երկնից". այս ինքն յարութեանն՚. ոչ եթէ յարքայութիքն մտա-նիցէ, քանզի գիտէ և զժամանակ յարութեանն ար-քայութիքն կուէլ՝ Ո՞վ մի ինչ, ասէ, թէ լուծանիցէ, կրտսեր կոչեսցի, որպէս թէ ՚ձեզ իսկ պատուիրանաց պէտք են։

Այս տես զիարդ չէ հնար առանց ողորմութեան մտանել յարքայութիքն. այլ թէպէտ և նա միայն չի-ցէ, ՚ի հուր երթալոց եմք. "Այրթայք յիսէն անի-ծեալք ՚ի հուրն յաւիտենից որ պատրաստեալ է սա-տանայի և հրեշտակաց նորա". էր վասն և ընդէր. քանզի "Պաղեայ, ասէ, և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցի և ոչ ետուք ինձ ըմպել"։ Տեսեր զի ոչ այլ ինչ պատուհաս կրեցին, և այնու միայն կորեան. և կուանքն յայն սակս չմխին յաւտասան. թէ-պէտ և ցածուքիճ ունէին. զորմէ Պաւղոս ասէր թէ առանց սրբութեան ոչ ոք տեսանի զՏէր. ՚ի միտ առ այ-սու հետև, զի առանց ցածութեան ոչ ոք տեսանի զՏէր. բազում անգամ թերևս և այլ ինչ իցէ որ խափան լինիցի։ Պարձեալ ասէ թէ զՏէր իսկ ուղղութիւնս առնիցեմք, և ընկերին օգուտ ինչ ոչ գործիցեմք, սակայն և այնպէս՝ ոչ մտանեմք յարքայութիւնն. և

1 Յօրինակին յաւելուած։

ուստի՛ յայտ իցէ, ՚ի տաղանդացն որ Հատուցան ծա-
ռայիցն. անդ ընաւ իսկ առաքինութեանն ողջ բովան-
դակ էր, և չէր ինչ պակաս. բայց քանզի ՚ի գործն
արկանել և ՚ի շահ ածել վատեցաւ, յիրաւի խոտե-
ցաւ։ Այս և ՚ի բամբասանացն միայն երթալ է ՚ի
գեհէնն. «Որ ասիցէ ցեղբայր իւր մօրոս, պատժա-
պարտ լիցի ՚ի գեհէնն հրոյն». և եթէ զայս ուղղու-
թիւնս առնիցէ և Հշմամտող միայն իցէ. սակայն
չմտանէ։

Այլ մի՛ ոք անագորոյն մտաց պարսաւանս իւրեանց
զմտաւ ածել զայդ, թէ վասն դոյզն ինչ յանցանացդ
յարքայութենէն երկնից Հանիցէ։ Այնթէ առ մարդ-
կան զինչ և գործեսցէ ոք արտաքոյ քան զօրէնսն,
ելանէ յայդց Թագաւորէն, թէպէտ և զմիով իւիք
յօրինացն որ ՚ի վերայ կայցեն՝ յանցանիցէ. եթէ
զրպարտիցէ կամ բամբասիցէ, կորուսանէ զընաւ իշ-
խանութիւնն՝ եթէ յիշխանութենէն գտանիցի. կամ
յայլ ինչ յանարժան գործս, թէպէտ և բեւր ինչ
Հաձոյս արարեալ իցէ, զայմ միով յանցանաքն կո-
րոյս. և մանաւանդ եթէ սպանութիւն գործեալ ի-
ցէ, այն իսկ միայն բաւական է վնաս կորուսանել։
Այնթէ մարդկան օրէնք այսպէս ղգուշութիւ պահես-
ցէն, որչափ և առաւել այլքն։

Ա՛յլ ասէ, բարեբար է։ Այինչև ցերթ զմո-
րոս բանս բարբառիցեմք. մորոս ասիմք ոչ զի բարե-
բարս է, այլ զի զբարերարութիւն նորա այնմ իմն
պիտանացուս Համարիցիմք. թէպէտ և բազում ան-
գամ բազում ինչ վասն այնորիկ խօսեցայ, այլ լաւ
գրոյն որ ասէ, «Այ՚ի ասիցես թէ ողորմութիւն նորա
բազում է, և զբազմութենէ մեղաց իմոց քաւէ». չար
գէլոս զմեզ ասէ թէ ողորմութենէ նորա բազում է,
և ոչ այնպիսի ինչ խրատ տայ. այլ կամի թէ Հանա-
պազ իսկ զայն ասիցեմք, և նմին երթի իսկ զամենայն
յոյզ Պաւղոս. այլ վասն նոցին յաջորդացն, մի՛,
ասէ, ՚ի մեղանչելն ևեթ զարմանայցես ընդ մարդա-
սիրութենէն այ և ասիցես թէ զբազմութենէ մեղաց իմոց
քաւեսցէ. ոչ վասն այնորիկ Հառեմ այնպէս ինչ
վասն բարերարութենն, զի յայն ինչ ապաստան՝ զա-
մենայն ինչ անխտիր գործիցեմք. ապա թէ ոչ՝ բա-

թերարուեթիւն ապականիչ մերոյ փրկուեթիւն լինիցի. բայց զի մի անյոյսք լինիցիմք՝ յորժամ մեղանչիցեմք, այլ զի ապաշխարեսցուք և փրկուիմք հասցուք։ "Օ՛ի քաղցրուեթիւն, ասէ, ոյ զքեզ յապաշխարուեթիւն ածիցէ ,, և ոչ ՚ի բազում չարուեթիւս ։ Լ՚այս եթէ յոռուեթիւն լինչ վասն քաղցրուեթիւն ոյ հատանիցիս, դու առաւել բամբասիցես զնա քան զնա՛ մարդիկ. զի զազազաս իսկ տեսանիմ զի տհաճ ին ընդ ոյ երկայնմտուեթիւն. որպէս զի վրէժս իսկ պահանջիցիս, եթէ ոչ ՚ի լաւն արհանիցես զնա ՚ի կիր ։

Մարդասէր է ՚ած, այլ և արդար դատաւոր. թողու զմեզ, այլ և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր. զանց առնէ զանիրաւուեթիւք և բառնայ զանօրէնուեթիւն, այլ և քննուեթիւ գործէ։ Լ՚ս արդ զիա՞րդ, հակառակ միմեանց են սոքա. չեն հակառակ միմեանց, եթէ ժամանակօքն որոշեմք ՚ի միմեանց ։ Լառնայ զանօրէնուեթիս աստ աւազանաւն և ապաշխարուեթ, և քննուեթի առնէ գործելոցն՝ անդ հրով և տանջանօք ։

Լ՚եթէ բազում ինչ չարիս գործիցեմք՝ ասէ՝ թէ մի, անկանել ՚ի բարուեթեցն հասանիցէ և յարքայուեթենէ ելանել, ընդդէմ ոչ զնա՛ չարիսն գործիցեմք ։ Լ՚ևպէտ և չար ծառայի բանք են, սակայն արասցուք և այնմ լուծումն ։ Մի յաձախեր ՚ի չարիս, զի անձին օգուտ առնիցես. յարքայուեթենէ ամենեքին՝ որոց չարիս գործեալ իցեն՝ առ հասարակ անկանիցիմք, բայց ՚ի գեհենին ոչ ամենեքեան զնոյն վրէժս տայցեմք. այլ ոմն մեծամեծ և ոմն մեզմագոյն. քանզի դու արհամարհեցեր, և նա արհամարհեաց, այլ ոմն բազմաք և ոմն սակաւուք. յարքայուեթենէն նոյնպէս առ հասարակ անկանիցիմք. բայց զի ոչ նոյնպէս առ հասարակ, այլ ոմն մեծամեծաք և ոմն սակաւուք, ՚ի գեհենին ոչ միապէս զգայցեմք տանջանացն ։

Լ՚ընդէր, ասեն, սպառնայցէ այնոցիկ որ ողորմելի՛ ոչ առնեն՝ ՚ի հուրն երթալ, և ոչ ՚ի վայրապար ինչ, այլ յայն որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ։ Եր վասն և ընդէր ։ Լ՚ևանզի ոչ այնպէս բարկացուցանէ զնա՛, այլ քան զնա՛ չարիս ։ Օ՛այն նախ դնէ եթէ զթեհամիս պարտ է սիրել ։ Լ՚ևկ որ

բաբեկամացն եւս վնաս առնիցէ, և քան զՀեթանոսս
եւս չար լինիցի, որպիսի՛ ամենայնի չիցէ արժանի,
Եւ քանզի այսպէս մեծ էին մեղքս, ընդ սատանայի
կարգեալ այնպիսւոյն ի հուր երթալ։ "Ա՛յ, ասէ,
այնմ՝ որ ոչ առնէ ողորմութիւն". զի եթէ առ Հնոմին
այսպէս էր, որչափ եւս առաւել առ նորովս. եթէ
ուր համարձակին էր ինչս սատանայ և վայելել, որչափ
եւս առաւել աստ՝ ուր հրամանս առաք զնմա՛ ի բաց
ընկենուլ։ Օ՛ի՛ ոչ առնէին նոքա. տասանորդս տայ-
ին, և միւս եւս այլ տասանորդս որբոց և այրեաց և
եկաց. այլ թէ յանկարծ ոք ուրեք տասանորդս տայ-
ցէ, զարմանս առնեն, աքանչանս համարին. և որ-
պիսի՛ ամենայն չիցէ արժանի։ Եւ առ հրեիւբն չէր
զարմանալի, առ քրիստոնէիւք աքանչելի իմն թուի.
և եթէ յայնժամ պատիժք ի վերայ կային ամե՛ն՝
որ զտասանորդսն խափանէր, ի միա՛ առ՝ որպիսի՛ ինչ
պատիժք արդ ի վերայ կայցեն։

Եւ յայն մի՛ ինչ ոք ապաստան լինիցի, եթէ ընդ
բազումս չժառանգեսցէ զարքայութիւնն։ Ա՛յլ չէ
այդպէս, ասէ. և եթէ ես և նա՛ ի միում պատժի ի-
ցեմք, չէ սակաւ միխիթարութի՛ յորժամ ես և նա
՛ի մի պատիժ իցեմք։ Ա՛յս և չիցէք իսկ ի միում պա-
տիժս, այլ ոմն ի մեծամեծս և ոմն ի սակաւս՝ և այլ
ազգ եւս. և ոչ միխիթարութի՛ ինչ իցի հաղորդութի՛
չարչարանացն։ Միխիթարութի՛ յայնժամ է յորժամ
չափով ինչ պատիժք իցեն. իսկ ուր աւելի քան զը-
չափն է, և անհնարին տագնապ՝ ի վերայ հասանիցէ,
չտայ [2] այնուհետեւ զգալ ի միխիթարութի՛ն։ Ա՛յլ՝
ասա՛ ցայն որ տանջիցէ և քերիցէ, և զոր ի հուր ոք
արկանիցէ, եթէ այս անուն զքոյ պատիժս կրեաց,
այլ չզգայ ինչ միխիթարութի՛ն։ Ա՛յլ ամենեքեան առ
հասարակ սատակեցան իսրայէլացիքն, զոր միխիթա-
րութի՛ մատոյց նոցա այն զի՛ ի միասին կորեան. ոչ ա-
պաքէն առաւել այն իսկ տրտմեցուցանէր զնոսա.
վասն որոյ և ասէինն իսկ, եթէ կորեաք սատակեցաք
սպառեցաք. և ո՛ր միխիթարուի կայցէ յայսմ։ Օ՛ւր
սիրելիք զանձինս մեռոյն յուսով՝ մի միայն միխիթա-
րութի՛ է, չանկանել ի բուռն անչէջ հրոյն, և եթէ

1 Յօրինակին պակասէ ոչ։ 2 Յօրինակին գայ։

անկանիցի ոք ի բուռն, չիք այնուհետև միխիթարու-
թիւն. ուր լալ ալացն է և կրձել ատամանց, և հուբն
անշէջ և որդնն անվախձան։ Ուր նեղուիլն և անձ-
կուիլն է՝ բնաւ անձին ինչ զգալ կարիցէ, թէղ լեռ
և միխիթարուիլն յումեքէ առնուլ։

Այլ, ազաչեմ և փարեալ ասեմ, մի վայրապար խա-
բեսցուք զանձինս, և մի այսպիսի բանիւք քաջալերս
տացուք անձանց. այլ զայս ինչ գործեսցուք՝ որով
ապրել կարասցուք։ Վշտի աշխուատակից կայ քեզ առա-
ջի լինել, և դու այսպիսի բանից հայհոյանաս խրե-
դրես. թէ և այլ ինչ մեղք չեին, վասն այսպիսի
բանից չէաք բազում պատժոց արժանի, զի այնպէս
հեզք և ծոյլք և յոյլք եմք. ուր այնչափ պատիւ ա-
ռաջի կայ, և մեք զայսպիսի բանս խօսիմք։ Ձոր-
ժամ ի միտ առնուսցէ զպատիւ այնոցիկ, որ զպա-
տիւն ի գլուխ հանին, չմաշեցին առաւել. յորժամ
տեսանիցես զբազումն ի ծառայից և յանպատիւ[1]
մարդոց, որ սակաւ ինչ վաստակեցին աստ, և անդ
արքունական աշխուժն աշխուատկից լինին։ Ո՞չ քան
զառնջանան՝ այն չար լինիցի քեզ, զի տեսանիցես և
չար նայիցես[2]։ Լեմ այժմ յորժամ տեսանիցէ ոք
զառաքինիս ի պատիւ ելեալ, թէպէտ և չլինիցի ի
սէր, սակայն քան զնմա չար համարի, և ի սուգ և ի
տրտունջըն մնանել, զարտասուս հարկանի, և ազգի
ազգի մահանձինն ըղձանայ, զի նա յայնչափ պատուի
է, և սա յայնչափ յանարգանս. իսկ յայնժամ ոչ-
չափ չապաշխարիցէ։ Ալ՝ բնաւ չէր իսկ պէհին, չար-
քայութենէն միայն վրիպել չէ բաւական եղծանել
և կորուսանել։ Լե զի այս այսպէս էցէ, փորձ իսկ
իրացն ուսուցանէ։

Լե արդ մի ի զուր ինչ փարաւազս անձանց տա-
ցուք այսպիսի անօգուտ բանիւք. այլ միտ դիցուք և
հոգացուք վասն անձանց փրկուելոյ. ստացուք դար-
ման առաքինութենէն, և ի վաստակս գործոց բարեաց
զանձինս յորդորեսցուք. զի արժանի լիցուք այնպիսի
փառաց հասանել ի Քէն Ձեր ի տէր մեր, ըստ որում՝ ծոր
միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պա-
տիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Ձօրինակին յայն պատմ։ 2 Ձօրինակին յոր պիտ։

ՃԱՒՈՒ ԶՈՐՐՈՐԴ

Ի՛սկ այժմ չունիմք ինչ այսպիսի, և կամիմք ա-
մենեցուն տիրել. զի եթէ մին ի միւսոյն քակիցի,
երկոքինն անպիտան գտանին. զինչ օգուտ իցէ եթէ
ոք ի վիշտս յանխնայ տայցէ զանձն, և վարս անա-
րատ չունիցի: «Եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է,
խաւարն քանի՞ իցէ»: զինչ օգուտ իցէ եթէ վարք
անարատք իցեն, և յոյս և քնած իցէ: «Եթէ ոչ
ոք առնուցու զխաչ իւր և գայցէ զկնի իմ, չէ ինձ
արժանի»: և եթէ չգնիցէ ոք զանձն ի վերայ խա-
շանց, զինչ օգուտ իցէ. եթէ զերկոսեանն զայն ու-
նիցի, և խնամակալ չիցէ՝ գիտել թէ որպէս պարտ
է իւրաքանչիւր տալ պատասխանի: Եւ եթէ զամե-
նայն ուղղութիւն ոք առնիցէ, և նշանս ոչ առնիցէ,
չէ ինչ ինաս:

Եւ արդ տէս զՊաւղոսի այնչափ ուղղութիւնս,
յանձնէ նպաստ լինէր, և զայմ շնորհացն համարէր.
այն իսկ է բարերար ծառայի: Եւ ա՛ւ բնաւ չկարէաք
հմուտ լինել ուղղութեացն նորա, եթէ հարկ ինչ չէր
լինել նմա պատմել: Եւ արդ իցեմ արդեւք արժա-
նի յիշել զՊաւղոս. նա և զշնորհսն ունէր յօգնա-
կանութիւն և չհամարէր բաւական. այլ ազգի ազգի
նեղուձս նպաստ լինէր: Եւ մեք զրկեալք յայնպիսի
համարձակութենէ, աղէ՝ ասա՛, ուստի՞ ակն ունիցիմք
կամ զնոսա՝ որ յանձն եղեն մեզ՝ պահել, կամ զայլ-
սն՝ որ չիցեն մեզ՝ ժողովել: Վարդիկ որ ի փափկու-
թիւնս և ի հարեալ եմք, և ամ ուրեք զհանգիստն
ինդրեմք, և վշտաց՝ և ոչ յերազ կարեմք տանել,
մանաւանդ եթէ չկամիցիմք, և ի նորա խնամոտութե-
նէն հեռի եմք՝ որչափ երկինք յերկրէ: Վ ան այս-
քիկ մեր կարգս քան զնորայն վատթարագոյնք են.
քանզի այն ժամու աշակերտքն քան զայժմու վար-
դապետքս կարի առաւելագոյնք են:

Ի մէջ այնչափ հրապարակաց, ուր բռնաւորքն
զսպառնալիս յաձախեին, և զամենեսեան յամենայն
կողմանց թշնամի ունէին, և ոչ սակաւ ինչ թուլանայ-

ին կամ խոնարհեին, լուր գրէ առ փիլիպե-
ցիսն, եթէ "Ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի ոչ միայն
՝ի նա հաւատալ, այլ և վասն նորա չարչարանս կրել„·
և առ Թեսաղոնիկեացիսն գրէ, եթէ "Կ՚մանողք եղէ-
րուք եկեղեցւոյն Աստուծոյ որ են ՝ի Հրէաստանի„· և առ
Հեբրայեցիսն, եթէ "Ո՛չ յափշտակութեամբ ընկից ձերոց
խնդութեամբ ընկալարուք„· և զկողոսացւոց վկայէ,
եթէ "Ի՛ճառութիւն, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ
Քրիստոսի առ Աստուած„· և զսոցա իսկ զգաստութիւն վկայէ·
և առ գաղատացիսն գրէ, եթէ "Կ՚մտեսիք անցք ան-
ցին ընդ ձեզ զուր, եթէ իցէ զուր„· Այլ տեսանես
զնոսա առնեսեան յօժարեալ և յորդորեալ ՝ի բա-
րի գործս· վասն այնորիկ և շնորհքն յաջողէին, զի
յուղղութիւնն կէին· Ո՛ւրչ և առ կորնթեացիսն
գրէ լուր· որոց ՝ի բազում ինչ իրս մեղադիր լինի,
ոչ և զնոցանէ ինչ վկայէ, եթէ "Կ՚ալ զնախանձն
ձեր, այլ զգուշեն„· և դաձեալ վասն Տիտոսի ար-
ջասի ինչ յարգէ զնոսա· Կ՚ալ այժմ և ոչ առ վար-
դապետս գտանի, Թող թէ առ աշակերտս· Կ՚այս ու-
բեմն ասեմ ինչ զնաց և կորեաւ· և պատճառք ամե-
նայնի այն է, զի սերն յամաքեցաւ, և զի յանցաւորքն
չկրեն պատիժս·

Լ՚ուր և սմին իսկ՝ զինչ գրէ առ Տիմոթէոս· "Որ
յանցանեն, ասէ, առաջի ամենեցուն խրատեա՛, զի և
այլքն զահի հարցին„· Լ՚ս այս յիշխանացն ախտ
լինի· զի յորժամ գլուխն չիցէ ողջ, այլ ևս անդամքն
զիարդ լինիցին առողջք· Լ՚ս տես՝ որչափ ինչ ան-
հարթութիւք են· զի որք բարիսք վարս ունին և համ
արձակութիւնս առ Աստուած, նոքա ՝ի լերինս ամրացեալ
են, և չգտանին ուրեք ՝ի միջի՝ իբրև յօտարաց և ՝ի
հինէ փախուցեալք· և ոչ որպէս զիւրեանց մարմինս
պարտ էր տածել և դարմանել, այլ իբրև յօտարաց
՝ի բաց փախչին· և ապականիչք որ բեւր չարեօք լի
են, հաձելոյն լցին զեկեղեցիս· վաձառակուր եղեն
իշխանութիւնք, և անտի իսկ ազգի ազգի չարիք ծնա-
նին· չիք որ՝ որ ածէ յուղղութիւն, և ոչ որ սաստէ և
կացուցանէ ՝ի խրատու· այլ Աստուածարհ իմն և Աս-
պաղ եղև անկարգութիւնն· Յանցանէ՛ որ, և պատու-
հաս կրիցէ· ոչ անպարտ Քահայ զանձն երևեցուցա-

նել, այլ զի կարիցէ զովօղս իւրոյ պատուհասիցն գտանել. զինչ գործեցից, զի գեհենին սպառնայեալ է, Հաւատացէք, եթէ անդ չէր մեզ այ համբարեալ գտանիցանն, եւս չար անցք քան ընդ հրեայսն ընդ մեզ անցանէին. Հանապազ այուիք, պայթիք, երդ, արբեցուիք։

Բայց մի՛ ոք ցասիցէ, քանզի ոչ յականէ զումբք ասեմ։ Լուռ գայր ոք այժմ յեկեղեցի մտանէր, և զամենեսեան որ աստ էին ի հարց և ի փորձ արկանէր, և ոչ այժմ ինչ ասեմ, այլ և ի ընկեր իակ ի գատկի, զամենեսեան որ մատչէին և լուանային, և յետ մերձենալոյ իակ ի խորհուրդն, քննէր Հաւաստեաւ՝ այնպիսի ինչ Հոգի առեալ՝ գիտել զգործս ամենեցուն ստուգութեամբ, եւս չար ծանրագոյն զմեր չարիքս քան զՀրեիցն գտանէր։ Ի Հմայս և ի կախարդութիւնս և ի գիւթութիւնս և ի մաղաքախութիւնս և ի Հատահարցութիւնս և ի Թուխլութիւնս, և պռոնկեալս և շնացեալս, բամբասողս և ագահս և յափշտակողս՝ եւս չար քան զնոսայն գտանէր։

Օ ագահ [1] չկամիմ ասել, գուցէ ընդ ումանց որ աստ իակ կայցեն՝ ընդ անն խոցիկեմք. և եթէ աստ այսչափ, որչափ ընդ Հանուր և ընդ բնաւ սիեզերս մեղք գտանիցին. զի իշխանք, զկարաւեալ զաղելոյ, զիշխանութիւնս գնով գնեն. որչափ նախանձողք, որչափ չարակուռք, քանի մնապարծք, որչափ որովայնապարք, և ընչից տարուկք [2]. որ այսչափ ամբարշտութիւնս գործեն, որչափ ինչ չարեաց չիցէ պարտ անն ունել։ Ոչ զի ուսուցանիցիմք, եթէ որպիսի պատժոց պատժապարտ իցեն որք յայնպիսի մեղս ըմբռնիցին, նայեցարուք ընդ առաջինսն. այր մի զինուոր ի նուիրելոյ ընչիցն գողացաւ ինչ, և բաղուկք վասն այնր իրաց սատակեցան. և թերևս գիտէք ըզպատմութիւնն, զԱքաբայ [3] ասեմ, որ ի Նզովիցն գողացաւ։ Այ՛ն աստուածիկ և մարգարէն ասէ, Թէ "Ի ցաւ երկիր նոցա Հմայիւք իբրև զայլազգեաց". և այժմ բիւրապատիկ չարեօքս լի է աշխարհս և չզարհուրի ոք։

1 Յօրինակին պակասէր Ջ-գան։
2 Յօրինակին պռոնկ։
3 Յօրինակին Ղաբար։

Եբկիցուք այսուհետև. քանզի գիտէ՞ճ զարգաւս ընդ ամբարիշտս պատժել, որպէս գ[Ա]ռնիէլն և զԵբիս մանկունսն և զայլս իսկ զազգսն. որպէս և այժմ իսկ ՚ի պատերազմունսն պատահէ. զի նոքա զոր ինչ և ունիցին զծանրութիւն մեղացն՝ այնու թօթափեն. և այլք ո՛չ վասն այսորիկ, այլ Թերևս վ՚ս իւրեանց անարժան ինչ իրաց։ Ո՛չ գոյ կացցուք անձանց. չտեսանիցիք զպատերազմունս շարժեալս. չսկիցէք զբազում մեսս. չերատիցիք այնու ամենայնիւ՝ զի ազգք և քաղաքք ողջոյն իսկ ընկղմեցան և կոբեան. ո՛րչափ բիւրուց բեւրք անկան ՚ի հինի բուռն, և կան ՚ի ծառայութիւն։ Ա[Ա]յսպէս և գեհենին սպառնալեաքն չերատիցիմք, գոնեայ այնու ցածնուցուցմբ. միթէ և այն սպառնալիքն իցեն, և ո՛չ արդիւնք գործովք կատարեալք։

Ա՛ման այնորիկ և մեք նախ վայելեմք ՚ի պաղոյ նոցա, զի անմիտս և անխրատս և անհնազանդս և քնքուշս մատուցանեմք զորդիսն։ Ա՛ի զայն արասցուք, աղաչեմ, այլ հաւանեսցուք երանելոյն՝ որ խրատ տայ, թէ "Ա՛նուցանիջիք վեսա խրատու և իմաս տուէք ձեզ„. տացուք նոցա օրինակս ՚ի գրոց անտի յառաջին հասակին, անդ զօրանալ, ՚ի նմին թևակոխել։ Ա՛յ ինձ, եղէ՛ւկ եմ ես. քանի՞ցս վնասն ստէպ ասեմ, և թուիմ թէ առանցեալ ինչ խցեմ, և զբաղիւք գայցեմ. բայց սակայն չդադարեմ, զի միսն ա բարից և կատարեցից։ Ի՛նդեր չնմանիցէք, արք, ա ռաջնոցն. մանաւանդ, կանայք, զի՞ չնախանձիցիք ընդ առաջինն կանայս։ Ա՛յլև մանուկն. նմանեա Ա՛ստային. զմա՛ւռ ած՝ զինչ արար նա. եհան վայրագակի ՚ի տա Ձարն այ։ Ա՛ոք ՚ի ձէնջ չկամիցի ընդ որդւոյ իւրոյ իբրև զԱ՛ամուէլէն լինել քան թէ թագաւոր իսկ ամ աչխարհայ։

Ա՛չ գիարդ մարթիցի, ասէն, այնպէս լինել։ Ի՛նդ էր չմարթի. վասն զի դու չկամիցիս, և չտաս յայնպէ սի ոք՝ որ կարօղն են առնել նման նման։ Ա՛չ ով իցէ այնպիսի։ Ա՛թէ այլ ոք ոչ, ած իսկ. քանզի և նա նման յանձն արար. զի և ոչ Հեղի ՚ի կարևոր ինչ զօրաւորաց էր՝ առնել զնա այնպիսի. և արդարև իսկ ոչ. որ գիւր որդիսն չկարաց յարդարել զայլս գիարդ յարդարիցէ. այլ հաւատք գնոքին և յօժա րութիւն վճարեցին զամ. նախ ծնաւ, և չգիտէր իսկ թէ այլ մանկունս ծնանիցի. և չտաց՝ եթէ Թող ա Ձեսցի մանուկս և վայելեսցէ յիրս ինչ մարմնաւորս, և զարգասցի փոքր մի Ձիրմ և մատաղ հասակին. այլ զայն ամ ՚ի բաց մերժեաց. միւսմն և եթէ ուշ եղ, թէ գիարդ անդէն ՚ի մատաղ հասակէ զՀոգևորս պատ կէրն նուիրեսցէ այ։ Ա՛յսեցուք, արք, յայնչափ ի մատուցէն գնոքն. մատոյց գնա այ, և եթող ՚ի տա Ձարին։ Ա՛ման այնորիկ և ամուսնութէն սերտիւ եղև, զի նախ զՀոգևորսն խնդրեաց. և քանզի զառաջին

պատուէն ՚ի նուիրեաց, վասն այնորիկ եղև բերրի ՚ի ՄՂՋն. զնա յաշխարհի եառես առաքինի, և ինքն այլ որդիս ծնաւ եղբարս նմին։

Եթէ մարդիկ յորժամ պատուին՝ փոխանակ պատուէն, որչափ և առաւել ՚ած, որ առանց պատուելոյ իսկ զայն առնէ։ Ինչպէս յերբ իցեմք մարմնաւորք, մինչև յերբ կորացեալ՝ զգետինն նշմարեմք։ Ամ ինչ երկրորդ լինիցի մեզ առ որդւոյն խնամակալութիւն, և առ խրատուն և իմաստութիւն մնացանելոյ. եթէ անդէն ՚ի սկզբանն ՚ի զգաստութիւն կրթեսցի, բազում մեծութիւն ստանայցէ՝ առաւել քան զամ մեծութիւնս և զփառս զօրաւոր. ոչ այնպէս շահ իցէ նմա արուեստն՝ զոր ուսուցանիցես, և արտաքին իրացն՝ որով զկրօն շահիցէ։ Եթէ կամիս զնա մեծատուն առնել, այնպէս արասջիր. մեծատուն ոչ է այն՝ որ բազմօք կարօտ իցէ, և որում բազում հանդերձս պիտոյ իցէն. այլ այն՝ որ չիցէն իւրք կարօտ. յայն կրթեալ զորդին՝ զայն իրաւ տուր. այն մեծութիւն յաճախ է, նոյն շահաւոր։ Այ իմն դրեր Թէ զիարդ կարիցես զնա հմուտ առնել արտաքին ուսմանց, և փառաւոր և զարմանալի. այլ փոյթ յանձին կալջիր՝ Թէ զիարդ կարիցես ուսուցանել զնա արհամարհել զփառս աշխարհիս, ապա լինիցի առաւել փառաւոր և զարմանալի։ Եւ զայն աղքատին և մեծատանն մարթի առնել, ոչ վարդապետաւ և արուեստիւք, այլ յածեղէն պատգամաց։ Այ խնդրեր՝ Թէ զիարդ երկայնակեաց լինիցի, այլ Թէ զիարդ կարիցէ անրաւիս և անվախձանին արժանի լինել. զմեծամեծան չնորհեալջիր նմա, և մի զիտրունս, ունկնդիր լեալ Պաւղոսի, եթէ "Այնուցանիջիր զնոսա խրատու և իմաստութեան ՚ն։" մի բանիբուն ջանայցես առնել, այլ զգաստասէր իրատեսջիր. այն Թէ չիցէ, չէ ինչ ՚ւսաս. և եթէ առանց այսր իցէ, ոչ ինչ օգտի։

Ընդարձակի հնարքն պիտոյ են, ոչ բանից՝ այլ արդեանց, և ոչ ՚ձարտարախօսութեանց՝ այլ գործոց. այն է, որ աբքայութեան առիթ լինիցի և ստոյգ բանութեանն պարգևիչ։ Այ զնեղուն խրատիցես, այլ ըստ միտան սրեսջիր. ոչ եթէ խրատելոյ ինչ արգելուլ կա-

միգիմ զայս ասելով, այլ այնմ միայն պարապելոյ կամիմ լինել խափանիչ։ Այլ մի համարիցիս եթէ վանականացն միայն իցեն պէտք գրոց խրատուց· այլ մանաւանդ ամենեցունց իսկ որ յաշխարհիս վարս գալոց իցեն։ Օ՜ որ օրինակ նաւին կազմած, և նաւա- պետին արուեստ, և նաւավարացն հանդամանք, ո՛չ այնչափ սիրոյ են՝ որ ՚ի ցամաքի նստիցին, որպէս այնց՝ որ ցանկ ՚ի ծովուն նաւարկեալ չըջիցին· նոյն- պէս և աշխարհականին և վանականին· զի մին իբրև ՚ի ցամաքի յապահովս նստիցի յաւեաց կոծանաց, զանխռով կեանս կեայ յանբոյթ ՚ի յամբի ՚ի մրրկաց· և միւսն ծովածուփ ալեկոծ ՚ի համատարած ծովուն ընդ բազում հողմն և մրրիկս կուսի· Թէպէտ և ինքն ինչ կարօտ չիցէ, սակայն պատրաստ պարտի լի- նել, զի զայլոց լեզուս կարձիցէ· որպէս զի օրշափ և տեղեակ ոք իցէ իրաց աշխարհիս, նոյնչափ պէտք են նմա և այսմ խրատուս։

Այլ Թէ յարբունիս իցէ ոմն, անդ իսկ բազում հե- թանոսք և փիլիսոփայք են, և բազումք հպարտա- գեալք ՚ի փառս աշխարհի· իբրև զտիղմ ինչ մծրա- գեալ ուռուցեալ են արբունիքն· ամ հպարտք, ամ ուռուցեալք ամբարտաւանութիւն անդր ժողովին· դա և որ չիցէն այնպիսիք, փուճան նոյնպէս լինել· ՚Ի միտ առ՝ Թէ իցէ և խրատեալ իցէ որդին քո, և անդր հասանիցէ, իբրև բժիշկ ինչ հմուտ հանդերձ ազգի ազգի գործօք և դեղօք մտեալ զնոտուցանէ զբազմաց այտուցն, մատուցեալ մեղմիլ խօսեցի ընդ իւրաքանչիւր ոք, և ողջ առողջ զմարմինն ախտա- գեալ առնիցէ· Այլ յածեղէն գրոց դնիցէ, և ցանգ գայատգամն զգաստութիւն սրսկիցէ։

Իսկ վանականն ընդ ա՛մ խօսիցէ· միթէ ընդ պրիճն և ընդ ձեղունս, միթէ ընդ անապատն և ընդ ա- ռապաթս, կամ Թէ ընդ հաւս կամ ընդ ծառս· և չկայ ինչ նմա հարկ ՚ի վերայ՝ պարապել այն- պիսի ուսմանն։ Այլ սակայն ինչ գործ ՚ի վերայ կայ, գայս արա, գայս ինչ իրաց ուղղութիւն ցոյց· ո՛չ գայլս խրատիցէ, այլ զանձն։ Այլ արդ յայտ իսկ է Թէ բազում պէտք վարդապետութիւն այնոցիկ են՝ որ յաշխարհիս վարս ըստ աշխարհականս չըջիցին·

նա և 'ի մեզանէնէն այնպիսին անմիտ է քան զվանա-
կանն։

Այլ եթէ կամիս և այլ ինչ ուսանել, և աստէն իսկ յաշխարհի պիտանի և առաքինի քան զայլսն գտա-նիցի այնպիսին, զի ամենեքին ակն ածիցեն և խորշի-ցին 'ի բանիցն, յորժամ տեսանիցեն՝ եթէ չկայցէ 'ի հրայրս, չցանկանայցէ իշխանութեան, յայնժամ սմա իսկ տայցեն զիշխանութեին, յորժամ ոչ ինքն այնմ ցանկանայ. նա և Թագաւորին իսկ առաջի մեծարգի լինիցի. քանզի չէ իսկ մարթ Թագչել այնպիսւոյն. 'ի մէջ բազում ողջոց մին չերևի՝ եթէ ողջ իցէ. բայց 'ի մէջ բազում հիւանդաց՝ մի ողջ վաղվաղակի ձա-նաչէ. և յարքունի իսկ լսելին արագ արագ հա-ստանիցէ համբաւն. և 'ի վերայ բազում ազգաց հրա-մանատար կացուցանիցէ։ Օ՞յս ամ զմտաւ ածեալ մնուցանիցիք զորդիս իրատու և իմաստութեամբ ։

Լ՚Ի քանզի սրբութիւն արար զնա մեզաց մերոց , կացցուք մնասցուք՝որք . և մի ինչ կալցուք ապա յանձինս , այլ զգեղն և զվայելչութիւնն զոր զգեցոյց մեզ՝ պահեսցուք անարատ . զի ոչ ինչ գտանիցի ապա և խորշ , կամ թէ այլ ինչ այսպիսի : Ապա և խորշ սա կաւ ինչ մեղքն են , բամբասանք, Թշնամանք , ստութիւնք , մանաւանդ թէ և նոքա իսկ չիցեն փոքունք , այլ կարի իսկ մեծամեծք , զի և յարբայութիւն կարեն վերկպեցուցանել : Որպես և որոյ օրինակաւ : " Որ կոչէ զեղբայր իւր մերոս , պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն ". զի եթէ որ մերոն կոչէ , որ թեթև ինչ Թշնամանք Թուիցին և մանկտուց խօսք , իսկ որ չարաբարոյն և չարագործ և նախանձոտ կոչիցէ , և այլ բազում նախատանօք Թշնամանիցէ , որպիսի ինչ ահագին տանջանաց չգտանիցի պատժապարտ :

Լ՚Այլ անսացեալք փոքր մի բանիցս , աղաչեմ . զի թէ որ առնիցէ միւմ ի փոքրկանց , նման առնէ կամ չառնէ , զինքդ ոչ ի բարին խօսել և ի չարն զնոյնն առնէ . որ Թշնամանէ զեղբայրն՝ զնա Թշնամանէ , և որ պատուէ զեղբայրն՝ զնա պատուէ : Այսուհետև ցուք այսուհետև զբարին և եթէ խօսել . լեցո զլեզու քո ի չարութէ . ոչ վասն այնորիկ ետ զնա մեզ , զի չար խօսիցիմք և Թշնամանիցեմք և բամբասիցեմք զմիմեանս , այլ զի զնա օրհնեմք , և զայն ինչ խօսիցիմք՝ որ լսելեացն չնորհ տայցեն , որ ինչ ի շինուէն իցէ , որ ինչ յօգուտ : Խօսեցար չար զուանքի , զի՞նչ օգուեցար . քանզի անձին միսս արարեր , զի զչար բախօսի կարծիս առեր յանձն . քանզի չիք և չիք իսկ չար , որ այնմ և եթէ մեղանչիցէ՝ որում առնին , եթէ ոչ և զառնելին ընդ նմին գրաւիցէ : Որպիսի ինչ՝ նախանձոտին Թուի՝ Թէ այլում միսս առնիցէ , և զայն ոչ գիտէ եթէ նախ ինքն յագի ի մեզն , հաւել ճնկեալ և ամենեցուն յայտ եղեալ . նոյնպէս և ագահն և անձնասէրն և առաւելի բամբասի յայլոց :

Խայց կարի իսկ լաւ են փառք քան զինչս . զի զմին

ոչ ոք դիւրաւ գտանէ, և զմիւսն դիւրաւ ստանայ. Մանաւանդ զի մի՝ այնմ որ չունիցի՝ չլինիցի միասնական. և միւսն՝ զոր ոչն ունիցի, նախատ և ծաղր կացուցանիցէ, և ամենեցուն թշնամի և առելի առնէ. և ցասկոտն նախ զամն պատժէ, և ապա զոչն՝ որովհետև ցասկոտութիւն։ Այնպէս և չարախօսն նախ զանձն յամօթ առնիցէ, և ապա զոչն՝ զուարճ չարն խօսիցի. և թերևս ոչ հնարէսցի ինչ՝ ի չարախօսութենէն, այլ գնասցէ ամօթով. զժնտա և զաղտեղոյ և զարհամարհելոյ առեալ կարծիս. և զուարճ չարն խօսէրն՝ գնա և առաւել սիրելի առնէ։ Յորժամ լսիցէ ոք զչար բանսն, և լսդ այնր վրէժ ինչ չառնուցու, այլ գովիցէ և զարմանայցէ, ոչ գնա գովէ, այլ զանձն։

Եւ որպէս վաղագոյնն իսկ ասացի, թէ միշտ չարախօսութիւնք նախ չարախօսացն մեղանչիցեն. նոյնպէս և բարիք ինչ՝ զոր ընկերին կամիցի ոք առնել, նախ զգործելնն ուրախ առնէն. զի որ ծնանի ոք բարի ինչ կամ չար, իրաւունք են՝ զի նախ ինքն վայելիցէ. և զոր օրինակ ջուր աղի և անոյշ զամանս ջրաւորացս լնուն, և այն աղքերն ոչ պակասէ, նոյնպէս և բարիքն և չարիքն, ուստի ելանեն նախ գնասա ուրախ առնեն կամ տրտմեցուցանեն, և ապա զայնօսիկ՝ յորս արկանիցենն. և այն՝ ասա. այլ անդ՝ ո՞ կարիցէ պատմել, որպիսի բան, որպիսի միտք ըզբարեացն և զկարեացն. չիք ոք, չէ ոք ձեռնհաս։ Օ՜ի բարիքն և բան ամ միտ իսկ անցանեն, ոչ եթէ ըստ բանս միայն. և զկարեացն ասացեալ իսկ մերովք ամենահաս անուամբքս՝ հուր է, ասէ, անդ և խաւար և կապանք և որդն անվախճան. և ոչ այս միայն որ ասացեալս է՝ կարէ հաւաստեաւ յայտ առնել, այլ և անհնարինք են. և եթէ կամիցիս վաղվաղակի առնուլ զհանգամանս, միտ դիր. զի եթէ հուր է, զիարդ լցէ խաւար։ Յեսայեայ՝ զի այլ լիցի անհնարին. զի այս հուր լուսաւոր է, և այնմ չիք լոյս. և եթէ հուր լցէ, զիարդ հանապազ այրիցէ. սեսայեայ զիարդ չար դժոգոհ է քան զայս. վասն այսորիկ իսկ անշէջ կոչի։

Ի միտ առցուք, ոչ եթէ չարիք են հանապազ այ-

բել, որչափ չարիք են միշտ ի խաւարի ծնել, և ցանկ անդադար հեծել, և զատամունս կրճել, և չիք հնար այցելուս գտանել։ Այլ յորժամ ասա ոք յաշխատակա-նաց ի բանս մտանիցէ, և զչար հոտն լսել և ի խաւարի նստել, և ընդ մահաթարս կապեալ՝ քան զա-մենայն մահ չար համարի. ի միտ առ որպիսի՛ ինչ չար այն իցէ, յորժամ ընդ ամ աչխարհաց մահա-պարտն այրիցիմք. ոչ ոք տեսանիցեմք և ոչ ոք զմեզ տեսանիցէ. այլ յաղնչափ բազմութեամբ այնպէս համա-րիմք՝ եթէ միայն իցեմք. զի խաւարն և մաւրն չտայ-ցէ մեզ զընկերսն ճանաչել, այլ միայն ինքն և նա իցէ ի պատիժս. զի եթէ խաւարն միայն առանձինն կարէ նեղել զոգիս մեր, զի գործիցեմք յորժամ խաւարն և ցաւք միանգամայն ի վերայ հասանիցեն, և անչէք հրոյն աղախարշանքն։

Այսոր որոյ աղաչեմ զայս հանապազ զմտաւ ածել, և զբանիցս տրամաբանութեան յանձին ունել, զի մի ար-գեամբք իսկ պատիժքն ի վերայ հասանիցեն. քան-զի լինելոց է այս ամ։ Այլ զայնոսիկ որ այնպիսի ինչ տանջանաց արժանի գործիցեն, ոչ ոք կարէ ապրե-ցուցանել, ոչ հայր, ոչ մայր և ոչ մարդ փրկեսցէ. թէպետ և բազում համարձակութեամբ ունիցի առ ած և մեծ զօրութեամբ. զի ինքն իսկ է որ հատուցանէ ի-բաքանչիւր ըստ գործս իւր. և այժմ գոյ հնար ա-պրել՝ եթէ կամիմք, և ի տանջանս մտանել թէ հեզգայցեմք։

Այս արդ արասցուք մեզ բարեկամս ի մամոնայէ աստի անիրաւութեամբ, յորժամ տայցեմք ողորմութիւն և գործիցեմք զբարիս։ Ալօթափեսցուք զինաս յաղ-քատս, զի թօթափեսցուք ի մէնջ զՀուրն, և չիք-ցուք, և ունիցիմք անդ համարձակութիւն. զի անդ ոչ թէ նոքա իցեն՝ որ ընդունիցեն, այլ գործքն մեր։ Այս զի ոչ վայրապար այսպիսի բարեկամութիւն կարէ զմեզ ապրեցուցանել, միտ դիր յաւելուածոյն. ընդ-էր ոչ ասաց, եթէ արարիք բարեկամս՝ որ ընդունիք-ցին զձեզ յարկսն իւրեանց յաւիտենից, այլ և զօ-րենսկս ևս յաւել, եթէ ի մամոնայէ անտի անիր-աւութեան. յայտ արար՝ թէ չընչիցն պարտ է առ-նել այնպիսի բարեկամս. զի ցուցցէ՝ եթէ ոչ վայրա-

պար ինչ բարեկամուէ կարէ մեզ պաշտպան լինել, եթէ ոչ գործս բարիոք ցուցանիցեմք. եթէ զոր ան-իրաւութիւն ժողովեցաք, արդարութիւք ծախսափիցեմք։

Եւ զգանս ողորմածութեան ոչ միայն մեծատանց պատշաճ համարել, այլ և աղքատաց, և այնմիկ որ քնաւ իսկ ի մերոյն ևէն կայցէ. քանզի չիք այնպէս աղքատ, որ կարի իսկ աղքատ իցէ, եթէ երկուց դանկաց չիշխիցէ. քանզի մարթի և ի սակաւէն սակաւ տալ, և անցանել զայնոսիկ՝ որ բազում ինչոյ ունիցին և աւելագոյն տայցեն, որպէս և կիւնն այրի. զի ոչ եթէ ըստ չափոյ տրոցն է, այլ ըստ զօրութեանն և ըստ կամաց տուողացն համարի տրոցն մեծութիւն։

Եւ ուրեք կամացն պէտք են, և ուղիղ մտաց, և ոչ սիրոյն. և ընդ այն գինչ և գործիցեմք, եթէ շատ տայցեմք և եթէ սակաւ՝ չդարձուցանէ զերեսս Աստ, այլ ընդունի զմեծն, և զփոքրն իբրև զմեծն. քանզի ի կամն հայի, և ոչ եթէ ի տուրսն. և զմեծամեծս և զփոքունս ընդ մի համար առնիցէ. և յաւիտենից կեանացն արժանաւորս արասցէ զերկոսին կողմանն. ո-րոյ լիցի ամենեցուն մեզ հասանել հնարհաւ և մարդասիրութիւք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հաւր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

ՃԱՒՒ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այ արդ զայս ամ իմացեալ, մի ինչ ամենի համա-
բեսցուք. և մի ամբարտաւանս ինչ խորհեսցուք. զի
և եթէ նա որ ածն է և տէր և որդի այ, չդանդա-
ղեցաւ առնուլ զծառայի կերպարանս, ոչնչափ և
առաւել մեզ պարտ իցէ զամ ինչ վասն նորա առ-
նել, թէպէտ և խոնարհագոյնք իցեն։ Այս արդ ասէ՝
ասա, ով մարդ, թէ մեծամտիցես. աչխարհին ինչ ի-
րօք, այլ ամ միոչևս երևեալ անցանէ. իսկ հոգևո՛ր
ինչ իրօք, այլ մի ինչ ուղղութեի հոգևորացն իսկ է՝
չմեծամտել։ Այս արդ ընդէր մեծամտիցես. վասն զի
ուղղութիւնս ինչ արարեր. այլ լմբ Ջեի որ ա-
սէն. եթէ "Յորժամ գամ ինչ առնիցէք, ասասջիք՝ եթէ մեք ծառայք անպիտանք եմք, որ ինչ պարտ
էաք առնել՝ արարաք,, ։ Այլ առ մեծութեան ինչ
մեծամտիցես. չտեսանիցես ոչնափ մերկք և բոկք
երթան՝ի մեռեալս. ոչ ապաքէն մերկ մնաք յաշ-
խարհս, և դարձեալ մերկք դնալոց եմք։

Ով որ զայլոց ինչ ունիցի՝ և մեծամտիցէ. որք
յիւրեանց պէաս և եթէ ունիցն ծախել զինչս, անկա-
նին՝ի նոցանէ ակամայ բազում անգամ՝ և յառաջ
քան զվախճանն. այլ՝ի վախճանին հարկ իսկ է։
Այլ մեք, ասէն, կենդանեացն որպէս կամիմք վայե-
լեմք. մանաւանդ եթէ չիք իսկ զոք վաղվաղակի տե-
սանել, եթէ որպէս կամիցի՝ վայելիցէ. իսկ եթէ
վայելիցէ և՝ որպէս կամիցի, չէ ինչ այն մեծ. քան-
զի սակաւ ինչ են կեանք աչխարհիս առ այնչափ
անվախճան յաւիտեանան։

Մեծամտիցես, ով մարդ, վասն զի ընչաւէտ մե-
ծատուն իցես. զմի՞, էր վասն. զի այնպիսի ինչ իրք
և աւազակաց դիպեսցին և գողոց և սպանողաց և
իպացելոց և պոռնկաց և ամ չարագործաց։ Այս արդ
ընդէր մեծամտիցես. եթէ և՝ի բարի ինչ ծախեիր՝
չպարտէիր մեծամտել, զի մի զպատուիրանն խախ-
տիցես, ապա եթէ ոչ՝ի բարի ինչ. այնու իսկ չպար-
տիս մեծամտել. զի ծառայ եղեր ընչից և ստացուա-

ծոց, և իբրև ի թակարթի հարեալ կաս ի նոսա։ Այլ արդ աղէ՝ ասա, եթէ որ ջերմնկալ ջուր շատ ըմպիցէ, և սակաւ մի զատան ցածուցանիցէ, և չեւ տայ և ս չար բորբոքիցէ զբոյն, մեծամտիլ ինչ պարտիցի։ Որ ի բազում հոգս ընդ վայր հալիցի, մեծամտիլ ինչ պարտ իցէ։ Այսն զի բազում տեարս ունիցիս, և բազում հոգս, և բազում սուտակաս պաս. այլ և ծառայես և նոցա։

Օ՛ ուսանիցիս, միտ դիր հաւաստեաւ. այլ և կարիքն որ ի մէզ կան, է ուրեք զի օգուտ են. որպէս ցասումն իսկ բազում անգամ յօգուտ լինիցի. "Ցասումն, ասէ, տարապարտուց ոչ քաւեսցի"։ որպէս զի Թէ իցէ և յիրաւի ցասնուլ. և զարձեալ Թէ "Որ բարկանայ եղբօր իւրում, և ոչ լոկ ասէ, այլ եթէ վայրապար, պարտաւոր լինի ի դեհենն"։ Որպէս նախանձն և ցանկութիւն, զի մին վասն որդիս առնելոյ անկեալ է ի մէզ, և միւս՝ վասն բարեաց նախանձաւոր լինելոյ. որպէս և Պաւղոս ասէ, եթէ "Խարիսք է նախանձել ի բարիս յամէ ժամ"։ և զարձեալ եթէ "Նախանձաւորք լերուք ընդհանուր՝ որ լաւագոյնն իցէ"։ և երկոքին ի լաւ և յօգուտ են։ Այլ ամ ուրեք անպիտան և վնասակար։ Այլ եթէ այսպէս ինչ պարտ իցէ, աղքատութիւնն ի դէպ մեծամտել՝ քան մեծութիւն. զի որ սակաւն՝ կարիցէ կեալ՝ քան զայն որ ոչ բաւմանն՝ կարի մեծ և լաւ է։

Այլ արդ աղէ՝ ասա, եթէ յանկարծ կոչ լինիցի ի քաղաք ուրեք արքունի, որք ոչ գրաստու ինչ կարօտ լինիցին, ոչ պատանեաց, ոչ կօշկաց, և ոչ այլ ինչ կահի և կազմածոյ, այլ զՀայեկին միայն և զջուր յաղ բերացն բաւական համարիցին, և այլքն ասիցեն՝ եթէ ոչ կառս կազմիցէք, և ոչ կակուղ անկողինս պատրաստիցէք, չկարեմք երթալ, եթէ ոչ բազում սպասաւոր ունիցիմք, և սակս հանդիսել հասանիցէ, և նժոյգ ևս, և կարձուձեան վասս, և այլ ինչ բազում պէտս, չկարեմք երթալ. և ընդ այս[2] արժան է զարմանալ, ընդ նոսա Թէ ընդ սոսա. Այսպէս է Թէ

1 Յօրինակին ---։ 2 Յօրինակին ընդ ։

ընդ սոսա, որք ոչ ինչ իւիք ումեք բուռն լինին։ Այսպէս և յաշխարհիս Ճանապարհի ոմանց բազում պէտք են, և ոմանց չափ ինչ. որպէս զի աղքատու Թէն՝ եթէ պարտ ինչ էր՝ ի դէպ էր մեծամտել։

Այլ գրէ ինչ, ասեն, աղքատն։ Ից եթէ աղքատն քամահելի ինչ իցէ, այլ նոքա՝ որ քամահիցեն. և ես ընդէր չքամահիցեմ զայնոսիկ, որք ոչ դիտիցեն զարմանալ ընդ որ ինչ պարտ է զարմանալ. այլ Թէ և նկարիչ ոք իցէ, զամենեսին որ պարտաւիցեն՝ ծաղր առնիցէն, որ դեռ Թերուիքն իցեն. և չկասէ ինչ նոցա բանիւքն. քանզի բաւական Համարի զիւրոց մտացն վկայութիւն։ Այս մեք զառ ի բազմացն փառս յանձինս կորզիցեմք. վասն այնորիկ լինիմք արժանի քամահելոյ, յորժամ զքամահիչսն մեր՝ որ վասն աղքատուէ քամահիցեն, չքամահիցեմք. և ոչ զանձինս ինչ եղուկս վասն նոցա քամահանացն Համարիցիմք։

Այս արդ սկսայց Թուել ոչխափ մեղք ի մեծութիւնն ծնանին, և ոչխափ բարիք յաղքատութիւնն. մանաւանդ Թէ ոչ մեծուին իսկ և ոչ աղքատութիւնն առանձինն բարի ինչ իցեն կամ չար, այլ նոքօք՝ որ զնոսայն ի գործ արկանիցեն՝ լինին բարի կամ չար։ Օ ի քրիստոնեայն յաղքատութեն առաւել պայծառանայ քան ի մեծուե։ Ամէն գիտիցի [1] ամբարտաւան, այլ հեզ, պարկեշտ, հանդարտ, խնամատուն. իսկ որ ի մեծութեն է, բազում ինչ խափանիչս ունիցի այնպիսի իրաց։ Այս արդ տեսցուք, որպիսի ինչ իցեն զոր մեծատունն գործէ, մանաւանդ որ չարկանիցէ բարիսք ի կիր զմեծութեն. յորժամ յափշտակիցէ, ագահիցէ, բռնադատիցէ։ Ամէն զանպատեհ ցանկութեն և զանօրէն խառնակութեն, և զդիւթութեն և զկախարդութեն, և զայլս ևս շատ չարիս, ոչ ասաքէն ի մեծութեն գտանիցեմք ծնաներ։ Ջեսանեա զի յաղքատութեն քան ի մեծութեն դիւրին է զառաքինութիւնն կատարել. և մի վասն այնր ինչ՝ զի աստէն չտայցեն վըճիժս ինչ մեծատունք,

1 Յօրինակին ՔՒՒՒ։

համարիցիս թէ չմեռանիցին ինչ . զի եթէ աստէն մարթի էր տալ նոցա վրէժս , նոքօք գոհանիր լցեալ զնա՛մ բանից ։

Այլ այլովքն հանդերձ և զայն ևս չար ունի մեծութիւն , զի զչարիսն գործէ և պատիժս ինչ ոչ կրէ , և ապա ոչ դադարէ ի չար գործելոյ . այլ ընդունելոյ է վրէժս առանց բժշկութեա՛ . և չիցէ որ որ սանձս ի բերանս դնիցէ ։ Այլ եթէ կամիցի ոք , և ցանկութեա՛ գոհանէ պատճառս բազում՝ յաղքատութենէ . որպէս զի՛ ի հոգոց աղատէ և յատելութենէ , և ՛ի կռուոյ և հակառակութե՛ և ՛ի գրգռութե՛ և ՛ի բազում չարեաց ։

Այլ արդ մի՛ ինչ փութասցուք ՛ի մեծանալ , և մի՛ նախանձեսցուք միշտ ընդ ընչաւէտսն . այլ որք ունիցիմք [1] , ՛ի բարի պէտս ծախեսցուք . և որք չունիցիմք , մի՛ ինչ տրտմեսցուք , այլ գոհանիցի՛ տուր [2] վասն ամենայնի զայ , որ ընդ սակաւ վաստակոյ՝ մեծատանդ՝ և կամ՝ թէ և մեծամեծս՝ եթէ կամիցիք՝ պատրաստէ մեզ առնուլ վարձս , և ՛ի սակաւէն շահել . քանզի և որ զերկուս տաղանդսն մատոյց , զաբմանալի եղև , և պատուեցաւ այնմ հանգոյն՝ որ ըզհինգն մատոյց ։ Այլ ե՛ր վասն արդեւք . երկուցն միայն հաւատացաւ , այլ յիւրմէ կողմանէ չա՛մ իսկ կատարեաց . և որչափ ինչ հաւատացաւ նմա , երկապատիկ մատոյց ։

Այլ արդ զի՛ փութայցեմք զի բազում ինչ յանձին լինիցի մեզ , յորժամ հնար գտցէ և ՛ի սակաւսն զբազումն շահել . յորժամ աշխատութի՛ն սակաւ ինչ իցէ և վարձքն բազում . զի դիւրաւ աղքատն յիւրմէն մեկնեսցի , քան թէ մեծատունն յիւրոյն՝ որ բազում և շատ ինչս ունիցի ։ Այլ թէ չիցէ տեղեակ՝ զի որ բազում հանդերձս ապանիցի , և՛ս բազմաց ցանկասցի ։ Այլ արդ զի մի՛ այսպիսի ինչ կրիցեմք , մի՛ խնդրեսցուք մեծութիւն , և մի՛ դժկամակ ինչ ընդ աղքատութի՛ն լինիցիմք . մի՛ ինչ փութասցուք ՛ի մեծանալ . և եթէ ունիցիմք , այսպէս ծախեսցուք որ-

1 Յօրինակին խանգարեալ էր 2 Յօրինակին փ- [illegible] ։
այլ որք ունիցիմք ։

պէս և Պաւղոս հրամայեաց. եթէ "Որ ուսիցէն՝ որպէս թէ չուսիցէն. և որ վաթիցէնն զաշխարհս՝ որպէս թէ ոչ յաղթի ի ծախս ,, : Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել չնորհօք և մարգասիրութիւ տեառն մերոյ Ցիսուի Քրիստոսի, ընդ որում՝ հօր միանգամայն և հոգւոյն պատիւ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այ եթէ զսակաւդ չարհամարհիցես, ոչչափ ա-ռաւել զշան։ Վաթսնեակ և զայն ևս ցոյց, եթէ զսակաւն ի բարի ինչ խրատս ծախեցեր։ Ողնիցին զարտաքնոցն Հարտարախօսութիւնս, և ոչ զիմաստութեցն զառատութիւնս. սակայն զմիջինս գիտես, և զքազմամանկտի դրացիս ունիս, և զբարեկամն և զայգայինս և զծառայս. Թէպետ և յեկեղեցւոջ յայտ յանդիման վարիցես խօսել, զայնպիսին առանձինն կարիցես խրատել։ Ողն ինչ պէտք հաւատոյական բանից, և ոչ բանիբուն խմաստնոցն Հարտարութեց։

Այ արդ ցոյց այնու, զի եթէ և Հարտարախօս ևիր, չհեղգայիր և չառնիր անփոյթ. և եթէ ի փոքուն չիցես փոյթ [1], մեծին զիարդ հաւատացից. և զի այսմ ևմ ոք բաւական է, լուր զինչ ասէ Պաւղոս, զիարդ և աշխարհականացդ հրամայէ զմիմեանս խրատել. "Շ ինեսջիք, ասէ, այր զընկեր, որպէս և առնէքդ իսկ, և միսիթարեցէք զմիմեանս բանիւք այսոքիւք „։ Վանզի գիտէ ՀԱ ում զինչ արժան է տալ. միթէ դու լաւ ինչ իցես քան զՀովսէս՝ յորժամ խեռէլն կամէր. " Հիթէ ես, ասէ, բառնալ կարիցեմ զդոսա, զի ասես ցիս, Թէ բարձ զդոսա, որպէս զի բառնայցէ դայեակ զսան „։ Այ ապա ՀԱ առ յոգւոյ նորա, և բաշխեաց արկ յայլսն, զի ցուցցէ Թէ միոչ կրէրն զնոսա՝ ոչ նորա ինչ չնորհ էր, այլ Հոգւոյն։ Օ՞ի եթէ զչնորհս ունիր, Թերևս հայարտանայիր և ընդունիկիր ինչ, չգիտիցես դու զքեզ՝ քաջ քան զՀԱ։

Հի ասացուք եթէ այս ընդհէր կամ այն ընդհէր. յորժամ ՀԱ մատակարարիցէ, մի իշխեսցուք Համարս պահանջել. զի յեհին ամբարշտութեէ և անիրաւութեէ է. ծառայք եմք, և այնպիսի ծառայք, զի կարի իսկ ընդհատ ի առառնէն։ Այ ոչ որ ինչ առ ոտան

1 Յօրինակին պակասէր Ե եթէ ի ֆոյթ չիցես ֆոյթ։

կայցէ խմանալք, այլ զոլ ինչ եան, զայն հաստատուն պահեցուք, թէպէտ և փոքր ինչ և դոյզն իցէ. և այնպէս հաձոյ լինիցիմք. մանաւանդ թէ չիք իսկ ինչ փոքր ՚ի պարգեւացն։ Օ տէրիցկոս ինչ՝ զի չունիցիս վարդապետութեանն շնորհս։ Ա.զէ՝ ասաս, որ շնորհ մեծ Թուիցին քեզ, վարդապետութեա՞ն, թէ զհիւանդս բժշկելոյ. ոչ ապաքէն այն մեծ իցէ. և քան զհիւանդս բժշկելոյ չԹուիցի քեզ մեծ գկոյրս բանալ. և քան զկոյրս բանալ զմեռեալս յարուցանել. և քան զմեռեալս ազօթիւք յարուցանել՝ ստուերօք և վարշամակօք զնոյն գործ գործել. և արդ զոր մեծ հաւատոյիցիս, զվարդապետութեան շնորհս ունել, եթէ ստուերօք մեռեալս յարուցանել։ Լսակ եթէ ցուցիչ քեզ միւս ևս, որ կարի իսկ մեծ քան զայս շնորհ է, և քեզ մարթ է առնուլ՝ և չառնուս, ոչ ապաքէն յիր բաւի ես զրկեալ յայսմ ամենայնէ. և շնորհս զայն ոչ միւսմ ումեք կամ երկուց, այլ ամենեցուն իսկ իշխանութիւն է առնուլ։

Պիտեմ Թէ զարմանայք, և կարի իմն մտադիւր ուշ եդեալ կամիք լսել, եթէ իշխանութիւն է ձեզ զայսպիսի շնորհս առնուլ, որ և քան զմեռեալս յարուցանել մեծ իցէ, և քան զկոյրս բանալ, և քան զամ նշանսն զոր առաքեալքն արարին. և Թերևս անհաւատ ինչ իրք Թուիցին։ Ա.ւ զինչ իցէն շնորհք. սէր։ Ա.յլ հաւատացէք, զի ոչ է իմ բանս, այլ Քրիստոսի՝ որ Պաւղոսիւն խօսէր. “Ա.խտանաձաւր լերուք շնորհացն՝ որ լսեն իցեն. բայց ես առաւել Ձանապարհ ցուցանեմ ձեզ”. և զինչ իցէ առաւել Ձանապարհն։ Կորնթացիքն հպարտացեալ էին ՚ի շնորհսն, և որք զլեզուսն ունէին և կամ փոքր ինչ այլ շնորհ՝ հպարտանային առ այլսն՝ որ ոչ ինչն ունէին. և արդ ասէ, քնաւ կամիցիք իսկ շնորհս ինչ. ես ցուցանեմ ձեզ Ձանապարհ, որ ոչ սակաւ ինչ լաւագոյն, այլ կարի լաւագոյն. և արդ ասէ, “Ա.յթէ զլեզուս մարդկան խօսիցիմ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ. և եթէ ունիցիմ հաւատս մինչև զլերինս փոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ”։

Տեսեր զշնորհսն, նախանձաւոր լեր. զի քան զմեռեալս յարուցանել ևս մեծ է, և քան զայլսն ամե-

նեսին կարի առաւել. և զի այս այսպէս է, լուր քա-
նիցն՝ զոր Քրիստոս ընդ այլ աշակերտան ասէր. «Հայսմ
ծանիցեն զձեզ ամենեքին՝ եթէ իմ աշակերտք էք»,
ոչ զի նշանս ինչ առնիցէք, այլ զի սէր ընդ միմեանս
ունիցէք. և զարձեալ ցհայր ասէր և, «Հայսմ ծա-
նիցեն զի դու զիս առաքեցեր, եթէ լինիցին սոքա
մի»։ Քրիստոս ինքն իսկ ասէ ցաշակերտան, եթէ «Պա-
տուիրան նոր տամ զի սիրեսջիք զմիմեանս»։
Վասն որ զմեռեալսս յարուցանիցէն, այն պարտ-
կեշտագոյն և պայծառագոյն է. և յիրաւի իսկ. զի
այն ամենևին իսկ Քրիստոսի է, և աշակերտի Քրիստոսի,
որոյ զանձն ի խաչ հանեալ էցէ և չունիցի ինչ հա-
ղորդութիւն ընդ երկրի. զի առանց այսր ոչ մարտի-
րոսութիւն ինչ կարէ օգնել. և զի այս այսպէս էցէ,
ուսիր ի Պաւղոսէ երանելւոյ, որ զերկուս գլխաւորս
առաքինութեացն առ, մանաւանդ թէ երիս իսկ, թէ
որք զնչանսն առնիցեն, և զգիտութիւնն տայցեն, և
զվարսն յաջողեսցեն առանց սիրոյ, և ոչ ինչ օգտեն.
և եթէ զնո՞ւրդ էցէ, լուր. «Վասն ջամբեցից զինչս
իմ աղքատաց, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ իսկ եմ»։
Վասն զի մարթի ջամբել զինչս աղքատաց առանց սի-
րոյ, և վաստնել զնմա ինչ. և զայս ամ ասացեալ է
մեր անդէն իսկ ի սիրոյն տեղւոջ, և անդր առա-
քեմք զայնոսիկ՝ որք կամիցին հաւաստեաւ ի վերայ
հասանել։ Այլոյ այժմ որպէս ասացին՝ «Ձախան-
ձաւոր լերուք ընդ Հոգւոյն»։ զմիմեանս սիրեացուք և
չլինիցիմք կարօտ իւիք յառաքինութեն ուղղելոք,
այլ ամ ինչ դիւրաւ լինիցի մեզ առանց քրտանց,
և զնմա ինչ ուղղեսցուք մեծաւ փութով։

Այլ աշաւասիկ, ասեն, այժմ սիրեմք զմիմեանս.
ոմն ունի երկուս բարեկամս, և ոմն երիս։ Ո՞ւր սէր
վասն այ, այլ վասն սիրելի լինելոյ. զի որ վասն այն
սիրիցէ, ոչ այնպիսի ինչ սիրոյ ունիցի, այլ
զամենեսին իբրև զեղբարս. և այնպիսին զիւր հա-
ւատակիցն իբրև զեղբարս հարազատս սիրել. իսկ
զհերետիկոսս և զհեթանոսս և զհրեայս՝ ունել առ
եղբարս ըստ բնութեն, և առ բարեկամն անպիտանս.
ողորմել և տրտմել և արտասուս արկանել վասն նո-

ցա ։ Այնու լինիցիմք նմանօգք ՚ի , յորժամ զամենեսին սիրիցեմք , և զՔրիստոսին , քան Թէ նշանս առնիցեմք . զի և ընդ ՚ի՛ կարի ընդ այն զարմանամք՝ յորժամ աբանելիս ինչ առնիցէ , որպէս յորժամ զմարդասիրութիւն ցուցանիցէ , և զբարիս ինչ գործիցէ ։

Այլ արդ եթէ առ ՚ի՛ այն կարի զարմանալոյ արժանի իցէ , ո՞րչափ եւս առաւել առ մարդկան . յայտ է եթէ այն իսկ առաւել զարմանալիս առնէ զմեզ ։ Ամէն նախանձաւորք լիցուք , և քան զՊաւղոս և զՊետրոս և զայլս բազումս՝ որք զհեռեալս յարուցին , չգտանիցիմք նուազագոյնք , Թէպէտ և զբերմ անգամ չկարիցեմք յուսեալ հալածել . և առանց այսր Թէպէտ և քան զառաքեալսն մեծամեծ նշանս առնիցեմք , և Թէ բազում Ճգունս վասն Հաւատոցն յանձինս կրիցեմք , չօգտիցիմք ինչ . և զայս ո՛չ եթէ ես ասեմ , այլ նա իսկ , որ սիրոյն մնունդ էր , այսպէս պատուիրեր ։ Այդ նմանեսցուք . և այնպէս կարիցեմք Հասանել խոստացելոց բարութեացն , որոց լիցի ամենեցունն մեզ Հասանել Հնարհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յ֊Ի֊Ի֊Ն . ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք , իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Զի որ ի մահուանէ չերկնչի, արտաքոյ քան զբռնութիւն սատանայի է. զի եթէ մարթի ընդ մարթոյ իցէ, և զայր ինչ որ փոխանակ անձինն առնիցէ, յորժամ և զնա ևս ի մոռ դնիցէ արհամարհել, ասա որ լինիցի ծառայ։ Չերկնչել ինչ յումեքէ, չզանգիտել բնաւին. զի քան զանձնայն ինչ ի վեր է, և ազատ է յամենայնէ. և որ չիւր անձն չինայիցէ, և առաւել և ոչ յայլոց. և յորժամ զպչնախիսի անձն գտանիցէ սատանայ, չկարիցէ ինչ նմա գամագիւտ լինել։ Այլ արդ աղէ՛ ասա, իւ կարիցէ գամագիտ լինել. միայն ինչ սպառնայցէ, կամ անարգանս, կամ յաշխարհէ հանել։ Այլ այն կարի իսկ փոքր այնմ՝ որոյ և զանձն արհամարհեալ իցէ ըստ երանելոյն Պաւղոսի. Չեսանեն զի յորժամ զմահու բռնութիւն ի բաց արար, և զսատանայի զգօրութիւն ընդ նմա խափանեաց։ Որ որ վասն յարութեան բիւրապատիկ Ճարտարեալ և սգաստանալ գիտիցէ, վայրդ իցէ զի ի մահուանէ երկնչիցի կամ սարսիցէ։

Այլ արդ մի ինչ դժկամակ լինիցիք՝ թէ ընդէր զայս ինչ և զայն ինչ չարչարանս կրեցաք. քանզի այսպէս պայծառագոյն լինի յաղթութիւն. չէր այն պէս պայծառագոյն, թէ չէր մահուն զմահ լուծեալ։ Այն իսկ է զարմանք, զի որով զօրանայր՝ նոքիմբք պարտեաց, որով ամենայնին հնարս և մեքենայս կալբէր գտանել։ Այլ արդ մի տացուք դյաղթութեան պարգեւս ի ձեռն թշնամեաց. "Վանզի ոչ եթէ ընկալաք զհոգի վհատութիւն, այլ զհոգի զօրութեան և զսիրոյ և զզաստութիւն"։ պիտի կալցուք առաքինութիւն արհամարհել և ոչ ինչ համարել զմահ։

Այլ հեծնէն միւս միտք դառնապէս, եթէ յահեղան զմեզ Աստ, և յո՛ խլուցաք մեք զանձինս։ Յորժամ տեսանիցեմք զկոծողս ի հրապարակս և զձիս և զաշխարհանս ի վերայ մեռելոց. զիարդ խայտառակեն զանձինս ողբովք և կական բառնալով։ Ահ հաւատայք, ամենեքեան ի հեթանոսաց և ի հրեից և յայլ

աղանդոց, և յամենեցունց իսկ առ հասարակ· որ զայն տեսանէն՝ զմեզ ծաղր առնեն. և որչափ ասիցեմ այնուհետև, ընդ վայր ասեմ վասն յարուԹեան· և որչափ Ճարտարիցեմ ինչ, ոչ ընդ իմ բանսն հայիցն հեԹանոսք, այլ ընդ ձեր գործսն· Այս անդէն վաղ վաղակի ասիցեն, ոՀ որ ի սոցանէ կարիցէ զմահ արհամարհել, որ ոչ և զայլոց մահ կարիցէ տեսանել· Նարիւք են բանքն որ ի Պաւղոսէ ասացան, բարիւք և երկնից արժանի և այ մարդասիրուԹենն· " Իր ա պրեցուսցէ զայնոսիկ՝ որ Հանապազ մահուն երկիւղիւ կիԹին, և ի վտարանդի էին ի ծառայուԹե՜ն· այլ չտայք այնմ Հաւատարիմ լինել, դուք որ գործովքդ մարմնիք ընդ բանսն· ԹեպԷտ և բազում անգամ ՃԱծ արգել ի մարդկանէ, զի բառնայցէ ի միջոյ զայն պիսի չար սովորուԹիւնն·

Այս արդ աղէ՝ ասա, զինչ կայտ առնիցեն կանԹեղքն և մոմեղէնք լուցեալք· ոչ ապաքէն իբրև զնահատակս յուշարկեմք· զի՞նչ ինչ կայտ և օրհնուԹիւն առնիցեն· ոչ ապաքէն գնԾ փառաւորեմք և գոՀանամք՝ ԹԷ այսուհետև պատիեաց զգնացեալսն, և ազատեաց յաշխատուԹենց, և Հան յանյայտ աշխարհ, և առ իւր պահել զետեղ և անապատ· Իշ վասն այսորիկ են օրհնուԹիւնքն և սաղմոսիցն պէսպէս նուագսն· և այն ՃմՐ յուբախուՀ սրտիցն կայտ առնին· " Իւրախ ոք իցէ, ասէ, սաղմոս ասիցէ " ·

Այլ ոչ ընդ այն ինչ հայիցն հեԹանոսք· Այի, ասէ, զայնմանէ ասեր ինչ՝ որ արտաքոյ կարեաց Ճարտարիցէ և զցածուԹենէ խօսիցի· չէ ինչ այն մեծ և զարմանալի· այլ զայն ցոյց՝ որ ի կարիսն ոք ցածուցեալ՝ Ճարտարամտիցէ, և ապա Հաւատացիցէ յաւրուէն· Այս եԹէ աշխարհական կանայք զայն առնիցեն, չէ ինչ զարմանալի, ԹեպԷտ և նոցա զնոյն գործ գործել կարի յոռի է, քանզի և նոքա զնոյն գործ պահանջիցեն· որպէս և Պաւղոս ասէ, եԹէ " Այն ննջեցելոցն ոչ կամիմ՝ եԹէ տգէաք իցէք· զի մի իբրև զայլ հեԹանոս տրտմիցիք, որք ոչ ունիցին յոյս " · և ոչ եԹէ վանականաց գրեաց զայն, և ոչ Հանապազորդն կուսանաց, այլ աշխարհականաց և արանց· բայց սակայն ոչ այնպէս չար է· Յորժամ

կին ոք կամ այր ասիցէ զանձնէ ՚ի խաչ ելեալ ընդ
Ա՛նձն, և այրն զՀերն փետիցէ, և կամ կինն կակա-
ջուն լինիցի, զի՞նչ այլ քան զայն դատաստանաց և ան-
հեդեդ իրք կայցեն։

Հաւատացէք ինձ զոր ասեմս. եթէ ըստ իրաւանց
ինչ գործ գործէին, բազում ժամանակս պարտ էր
այսպիսեացն չկոխել զսեամն եկեղեցւոյ։ Ա՛նդր
արդարև ստոյգ այնպիսեացն արժանի են սգոյ, որք
տակաւին ՚ի մահուանէ երկնչին, և ՚ի յաւուրն
Թերահաւատք լինիցին։ Ասեմ, ասէ, Թերահաւատ
՚ի յաւուրն, այլ զսովորուն ՚ի կամիր կատարել։
Ա՛րդ աղէ՛ ասէ, ընդէ՞ր յորժամ Ճանապարհ եր-
թայցէ այրն, և մանաւանդ ՚ի տարաշխարհական ինչ
Ճանապարհ, ոչ ապաքէն զնոյն առնիցես։ Ա՛յլ և ՚ի
յայն ժամ, ասէ, լամ և աչխարեմ։ Չայնժամ ար-
դարև իսկ սովորութիւն զնոյն պահանջէ. իսկ յոր-
ժամ չկայցէ ինչ ակն այսրէն դառնալոյ, զի՞ այնչափ
կարի առնիցես։

Ո՞ւմ դիր զո՞ր սաղմոս ասես ՚ի ժամանակին յայն-
միկ. ոչ ապաքէն « Ա՛ճապձ անձն իմ ՚ի հանդիստ քո,
զի տէր բարի արար քեզ ». և « Ո՛չ երկեայց ՚ի չարէ
զի դու տէր ընդ իս ես ». և դարձեալ եթէ « Ա՛ռ
ես ապաւէն իմ ՚ի նեղուչս՝ որ շուրջ եղեն զինեա ».
միտ դիր զինչ յայտ առնեն սաղմոսքն։ Ա՛յլ չդնես
միտ, քանզի արբեալ ես սգով. գնե՛ր յորժամ յայ-
լոյ մեռելոյ վերայ ասիցեն զսաղմոն, դնիցես միտ
հաւաստեաւ, զի դնիցես զայն դեղ ցաւոցն քոց։
« Ա՛ճապձ ասէ, հոգի իմ՚ի հանդիստ քո, զի տէր բա-
րի արար քեզ ». ասես, և արտասուես։ Ա՛յն ինչ
պատրանաց բանք, և ոչ կեղծիք առաքի ասաց. զի ե-
թէ արդարև հաւատայիր բանիցն զոր ասէիր, ոչ
այնչափ ՚ի խոր խոցէիր։ Իսկ եթէ ասիցես և կեղ-
ծիս ինչ և առասպելս վարկանիս, ընդէ՞ր քնաս ա-
սես զսաղմոն, ընդէ՞ր քնաս կոչիցես զսաղմոսասացն,
և ոչ քնաս ՚ի բաց հալածես։ Ա՛յլ կատաղեաց գործ
է այն. որչափ և առաւել միտն։

Ա՛ռ այժմ խրատ տուր. բայց եթէ ժամանակ ինչ
այնպէս ՚ի գէպ լինիցի, և սաստկագոյն բարբառե-
ցայց. քանզի և կարի իսկ կասկածեմ, գուցէ այն-

պիսի կերպարանօք տիտ ինչ չար յեկեղեցի մտա-
նիցէ։ Ալ ասն կոծողացն յետոյ կարգեսցուք։ Ասայց
առ այժմ պատուիրեմ և վկայութիւն դնեմ մեծա-
տանց և աղքատաց, արանց և կանանց, եղիցի ձեզ
ամենեցուն առանց սպոյ ելանել յաշխարհէ, և կար-
գօք և օրինակօք՝ հարց ձերոց յորդւոց յուզարկել,
և մարց ի դաւերատ և ի Թոռանց և ի Թոռն Թո-
ռանց, ի լի և ի պարարտ ծերութեան, և մի ումեք
լիցի տարաժամ մեռանել. այնպէս լիցի. և զնոյն-
աղաչեմք և զվարդապետս ձեր և զձեզ զամենեսին՝
աղօթս առնել վասն միմեանց առ Ած, և հասարակ
գայն աղաչել, զի գառն ինչ մահ մի ումեք պատա-
հեսցէ։ Գառն ոչ եթէ բնութիւ ինչ ասիցեմ, զի
այսուհետև չէ գառն մահ, և ի քնոյ ոչ ինչ ընդ-
հատ. և գառն ըստ ձերոց կամացդ լիցի, եթէ իցէ ոք
և կոծօղս վարձուք ի կոծ կոչիցէ։

Չաւատացէք զոր ասեմն, զի չասեմ այլազգ ինչ,
այլ որպէս ի մէն կայ. որ կամիցի բարկանալ բար-
կասցի. բազում ժամանակս արգելում զայսպիսին
յեկեղեցւոյ իբրև զկռապարիշտ. զի եթէ զագաղն
կռապարիշտ կոչէ Պաւղոս, ոչ՛ւտի և առաւել
գայն որ ի հաւատացելոց վերայ զկռապաշտի գործ
գործէ։ Չէ արդ աղէ՝ ասաւ, էը վասն կոչիցես զե-
բիցոնն կամ զսաղմոսասացն. ոչ ապաքէն սիրտքեղց
վասն, ոչ ապաքէն մեծարելոյ վասն զդնացեալսն. արդ
ընդէը Թշնամանիցես զնոսա, զմէ խայտառակիցես,
էը ուր այսն առնիցես։ Իբրև ի դուսանաց մէջ
մտեալ խօսիցիմ վասն յարուԹեն. որք զամենեսին
իսկ կամիմք խրատել զայնոսիկ, որ չև ևս իցեն ի
կարիս նորա պատուոյն. զի եթէ այնպիսի ինչ դէպ
երբէք ասացէ, լինիցին ժուժկալք հանդերձեալք։
Պետ զայսպիսին ածես ի տուն, որ զմերսն քակէն,
որչափ ինչ ըստ նոցայն իցէ. և զինչ ինչ այլ չար
քան զայն ծաղր և արհամարհանս կայցէ. զինչ ինչ
ծաղր քան զայնպիսի անառակուԹիւն։

Ի՛ղաչեմ պատկառեցէք. ապա Թէ չկամիցիք, և մեք
չառնումք յանձն զայնպիսի ապականիչ սովորուԹիւն
մուծանել յեկեղեցի։ " Ամք յանցանիցեն, ասէ,
առաջի ամենեցուն յանդիմանէ ". և զՀոգեառ ականս

և զՀԷքս զեղարամարս զառաքինորդս կոծոյն՝ վասն ձեր արգելուս չմոռանել՝ ի լալիս հաւատացելոց, զի գուցէ զիւբեանց իսկ զլաւն՝ ի Տարկէ տայցէք նոցա ողբալ, և խրատիցեմք մի զայլոց, այլ զանձանց հիւքութիս աշխատել։

Վասնզի և Հայր ոք խնամակալ յորժամ որդի ստահակ ունիցի, ոչ նմա ևեթ խրատ տայ չմերձենալ ի չարս, այլ գնոսա և երկեցուցանէ. և արգ ձեզ՝ և նոցա ձեւք խրատ տամ, մի ձեզ կոչել զայն պիսին, և մի նոցա զալ։ Այլ արասցէ՞ ոմն զի բանս մեր գործ բարիս ինչ գործեսցէ, և սպառնալեացն յաղթիցէ. ապա թէ, որ մի իսկ լիցի, եթէ արհամարհիցեմք ինչ, Տարկ լինի և մեզ զսպառնալիսն՝ ի գործ ածել, և զձեզ եկեղեցւոյ օրինօք խրատել, և գնոսա՝ որպէս և նոցա պատշաճ իցէ։ Այլ թէ ոք առյանդգնել ինչ արհամարհիցէ, լուիցէ այժմ Այսի՝ զոր ասէրն. «Այլ թէ յանցանիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա, մինչ դեռ դու և նա միայն ընդ միայն իցէք. ապա եթէ ոչ անսայցէ, առ ընդ քեզ մի կամ երկուս. եթէ այնպէս ոչ անսայցէ, ա սասցիր եկեղեցւոջ. եթէ եկեղեցւոյն և ոչ լսիցէ, համարեալ լիցի քեզ իբրև զմաքսաւոր և իբրև զՀեթանոս։ Այլ եթէ զայն որ առ իսն յանցանիցէ և չանսայցէ, հրամայ հատանել և՝ ի բաց ընկենուլ, իսկ որ իւրն մեղանչիցէ և առ ՚ած, նմա զինչ ինչ պարտիցիմ՝ առնել՝ զայն գուք ընտրեցէք. զի գուք մեզ ինչ ոչ ըստգտանիցէք՝ եթէ այսպէս ինչ անառակս գնացաք առ ձեզ։

Այեթէ զմեր կալանս ոք արհամարհիցէ։ ՎՀա խրատեսցէ զայնպիսին՝ ասելովն, եթէ «Օ՞ր կալիցէք յերկիր, կապեալ եղիցի յերկինս. և զոր արձակիցէք յերկիր, արձակեալ եղիցի յերկինս»։ Օ՞ի թէպէտ և մեք տառապեալք և անպիտանք եմք և արհամարհելոյ արժանի, որպէս զի եմք իսկ արժանի, այլ ոչ եթէ զանձանց վրէժս խնդրեմք, և ոչ զցաւմանն քէն պահանջեմք, այլ ձերում փրկութեն տաճիչք լինիմք։ Պատկառեցէք աղաչեմ, և ահն ածիցէք։

1 Յորինակին խանգարեալ էր ընդ ինչ պատճիմ։

Օ՛ի թէ բարեկամ ոք վասն լաւի սատիկն ուներ, ընդ միտս պարտ է նայել. եթէ խնամոյ վասն իցէ սատան և ոչ ամբարհաւաճութիւն, անսալ պարտ է. որչափ և առաւել յորժամ վարդապետ սատիկէ։ Այլ վարդապետ՝ որ ոչ Ճոխութիւն ինչ խօսիցի, և ոչ զիշխանի թևին ածիցէ, այլ խնամակալի բարս ցուցանիցէ. քանզի ոչ եթէ զիշխանութիւն ինչ կամիմք ցուցանել. և զիաղդ արդեւք, որք աղօթս առնեմք զի մի արգեամբք այնպիսի ինչ ձեզ հասանիցէ, այլ վասն ձեր տառապիմք և կոծիմք։

Այլ արդ զանձինս մեծարիցէք, և մի ոք զկապանս եկեղեցւոյ արհամարհիցէ. զի ոչ եթէ մարդ է որ կապէն, այլ Աստ է՝ որ զիշխանութիւնս զայս ետ մեզ, և արար տեառս զմարդիկ այնպիսի պատուոյ։ Ի՛նչք յարձակել կամիմք ընդ գործ արկանել զիշխանութիւն. մանաւանդ թէ և զայնր իսկ զհարկն չկամիցիմք. քանզի և ոչ զոք ի ձէնջ կամիմք ընդ կապանօք արկանել. զի ոչ եթէ այնպէս հէքք և թշուառականք իցեմք, թէպէտ և կարի իսկ անպիտանք իցեմք։ Այս ի հարկէ ինչ այնպէս լինիցի, մի ինչ մեզաղիր լինիցիք. քանզի ոչ եթէ կամաւ և ախորժեբ լոլ ինչ, այլ քան՝ զձեզ՝ որ ընդ կապանօք մնանիցիք, մեզ և՛ս չար ցաւն կապանք։ Իսկ եթէ ոք արհամարհիցէ զկապանսն, հասցէ ի վերայ նորա ժամանակ դատաստանին, որ և ցուցանիցէ Տէր։ Օ՛ մնացեալսն ասեմ, և չկամիմ ասել, զի մի խոցեցիցէ զմիտս ձեր։

Այսց նախ աղօթս առնեմք, զի մի լինիցի մեզ հարկ յայն գալ. ապա եթէ գալ լինիցի, մեք զմերն կատարեմք, արկանեմք ընդ կապանօք։ Այլ եթէ ոք խզիցէ, սակայն ես զիմն արարից, և անդոգ լինիցիմ այնուհետեւ ի պատժոց. և ձեզ բանք ընդ այնմ լինիցին, որ ինձ կապելն հրամայեաց։ Այանզի և յորժամ այր Թագաւոր յորժամ յատեանի նստիցի, և հրամայիցէ զոք ի սպասաւորացն կապել, և նա ոչ միայն դահձին չհնազանդի, այլ և զչղթայսն ևս մանրիցէ, ոչ եթէ զդահիճն և զդատաւորն Թշնամանիցէ, այլ զՔագաւորն՝ որ հրամայեաց։ Օ՛ի եթէ որ

1 Յօրինակին պակասէր ԽՒ։

ինչ ՚ի հաւատացեալսն գործ գործելին՝ զայն իւր հաւ
մարի , յորժամ որ յայտուցանել՝ ոք կարգեալ իցէ՝
և թէնամանիցի , որչափ ևս առաւել իւր համարի
զթշնամանսն ։

Ա՛ւր մի լեցի ուժք յեկեղեցւոյ յայնպիսի հարկ
գալ։ Օ՛ր օրինակ չէ՛ զանձն առնուլ։ Այլգուժք
յանձին զպատուհասն , և փուլթասցուք չէ՛ զանձնել ։
ապա եթէ մեղանիցեմք , և սատկին տանիցիմք ։
Օ՛ր օրինակ չէ բարի վերս յանձն առնուլ։ և եթէ
այնպէս դէպ տայցէ , պարտ է դէղ դնել վերկն ,
նոյնպէս և աստ ։ Ա՛ւր մի լեցի ուժք այնպիսւոյ դէղոյ
կարօտանալ ։ զի " Հաստատեալ եմք վասն ձեր ՚ի լաւ
անդր , և որ լինի է փրկուքը ,, ։ զի թէպէտ և այսպէս
սատակագոյն խօսիցիմք , վասն բազում ձերոյ զգու
շութե՛ խօսիմք ։ Լաւ իցէ եթէ ես խիստ և անագո
րոյն և յանդուգն կարծեցայց ձեզ , քան թէ դուք
զմեզ կամին չառնիցէք ։

Հաւատամ յո՛ժ եթէ ոչ յանօգուտ ինչ լինիցի
ձեզ սատս այս , այլ այնպէս դառնայցէ , որպէս և
բանքդ ձեր ՚ի մեր գովութե՛ ծախին և յարգանս ։ զի
ամենեքին արժանի լեցուք հասանել բարուքեանցն ,
զոր խոստացաւ ՚ո՛ծ սիրելեաց իւրոց ՚ի Ա՛ՒՏ ՅԻՆ ՚ի
ո՛ր մեր , ընդ որում հօր միանգամայնն և հոգւոյն ո՛ր
փառք , պատիւ և իշխանութի՛ այժմ և միշտ և յա
ւիտեանս յաւիտենից ։ ամէն ։

1 Ցօրինակին յոտոյ է՛ւ ։

Այլ արդ ընդէր խռովիցիմք . մի ոք յորժամ տեսանիցէ զբարս ի բարուեթիւն , խռովիցի ինչ . չէ առ տէն հատուցումն ոչ չարեաց , և ոչ բարեաց : Այլ եթէ դուն ուրեք յանկարծակի ինչ լինիցի չարեաց կամ բարեաց հատուցումն , ոչ բաւ արժանին , այլ դոյզն ինչ ձաշակ է դատաստանին . զի որ ի յարուեթէն թերահաւատ լինիցին , գէթ աստէն ինչ խրատիցին : Այլ արդ յորժամ տեսանիցեմք զբարս ոք մեծացեալ մի ինչ ընդ այն կասկիցեմք . և յորժամ տեսանիցես զբարի ոք ի տառապանս , մի ինչ խռովեացուք . անդ են պսակք , անդ են տանջանք , անդ են պարգևք , անդ են պատիժք :

Նայց այլ և՛ս , չիք չար որ ամենևին չար իցէ , և չիք բարի որ ամենևին բարի իցէ , այլ ունի մասն ինչ ի մեղաց . և յորժամ աչողեսցի մեծուեթէ չարին , գլխոյն եղեռան է . զի վասն սակաւ բարուեթեցն զոր առ առնուցուն , անդ զկատարեալ տանջանսն ընդունիցին , վասն այսորիկ աստէն առնու : Իսկ երանելի է այն՝ որ աստէն լնկիցի , զի զամենայն մեղսն Քրիստոսի եթող , և ՚ոչ և անարատ և առանց պատժոց երթեցէ անդ : Այլ զայս Պաւղոս ուսուցանէ մեզ . « Ա՛ստն այսորիկ են ի ձեզ բազումք հիւանդք և ախտաժէտք , և շատ ննջեցեալք » . և դարձեալ Քէ « Ա՛ստանեցի զանպսխին ի սատակումն մարմնոյ » . և մարգարէն ասէ , Քէ « Ընկալաւ ի ձեռանէ տեառն զկրկին զհատուցումն մեղաց իւրոց » . և Պաւղոս , Քէ « Տէս զքնշնամիս իմ զի բազումք եղեն , և ատելութեամբ ի նանիր ատեցին զիս » . և « Ծանր զանձնայն զմեղս իմ ,, . և դարձեալ « Տէր , տուր ինձ զհատուցումն քո , քանզի զամենայն ինչ հատուցեր մեզ » . այլ այսու ամենայնիւ յայտ առնէ զբարեացն պատիժս , զոր վասն մեղաց աստէն կրեցին :

Իսկ ուր գտանիցեմք , եթէ չարք աստէն առին զբարեաց հատուցումն , և անդ զկատարեալ տանջանսն տանջիցին : Ո՛ւր Աբրահամու որ ասէր ցմեր-

ծատուհն, եթէ « Պատ ընկալաբ զբարիսն քո, և Ղազարոս զկարիսն ». զիր բարիս Ընկալաբ իսկ՝ յայմ վայրի զմի թէ չընկալաբն ասել յայտ առնէ. զի ցուցցէ եթէ երկոքինն ըստ պարտեաց ընկալան. նա զբարութիսն, և սա զկարիսն. և թէ եղև, վասն այսորիկ ասէ՝ եթէ « Այս աստ մխիթարի, և դու այդր տապակիս ». զի տեսանես զսա աստ մեջ ի մեզաց, և դու չկարես ինչ օգտել։

Եւ արդ մի ինչ տրտմեսցուք, յորժամ զմեզաւորս աստ ի բարիս տեսանիցեմք. այլ յորժամ վըշտանայցեմք ինչ մեք աստէն, ուրախ լիցուք, զի այն ի փոփոխումն լինիցի։ Այլ խնդասցուք ընդ դիւրութեն, քանզի նեղուն խոստացաւ իւրոց աշակերտացն ասել. և Պաւղոս ասէ, « Ընկնեքին որք կամիցին ածպաշտութեն կեալ ի Քրիստոս, ի հալածանս կեցցեն,» Այլ որ նահատակ առաքինի ի մարտի բաղանիս խնդրէ, և կամ սեղան ամենալից խորտկօք, և գինի և ուրախութեն. չէ այն արուեստ նահատակաց, այլ անձնադիւրաց. զի ըմբիշ նահատակն ընդ փոշին, ընդ եւղն, ընդ ձառագայթիցն ջերմութեն, ընդ քիրտն բաղում նեղուն ոգորի։

Համանման այս է նահատակելոյ. և եթէ այս այսպէս լցէ, ապա և վերս առնլոյ, և ընդ արիւն և ընդ ապաւառ գալոյ, և ձգտնս յանձին կրելոյ։ Այլ զինչ ասէ երանելիս Պաւղոս. « Ընդէպս նկրտիմ, ասէ, որպէս ոչ եթէ զկնոյն ինչ կոծիցեմ », Օ ամենայն աւուրս կենաց ի պատերազմի կալ չամանելոյ, և ոչ իբրև զամն տաղտապիցեմք ընդ նեղութեն։ Այս եթէ ոչ միշտ մրցիցես, յորժամ պատերազմ հասանիցէ՝ խամ գտանիցես։ Ընդ է հանգստեան ժամանակ. նեղութեն պարտ է մեզ կատարեալ լինել. թէպէտ չիցեն հալածանք և նեղութեն, այլ են այլ նեղութեն, որ հանապազորդն ի վերայ հասանեն. և եթէ այս նեղութեն չժուժայցեմք, հալիս այլոց նեղութեցն տանիցեմք։ « Փորձութեն ի վերայ ձեր չէք եկեալ, ասէ, բայց ի մարդկանէ։

Ընդ Թա արարէք առ ձեզ՝ մի մտանել ի փորձութեն. բայց եթէ մտանիցեմք, առաքինութեն տանիք

ցիւք։ Ձնգել իւրովին զանձինս ի նեղուԹիս, ցած-
նոց մարգոց է. իսկ յեկեալ հասեալ ի նեղուԹիսն
կալ հաստատուն և համբերել, առաքինեաց և նա-
հատակաց է։ Ալ ի անձամբ զանձինս ձգեսցուք ի նե-
ղուԹիս, զի այն յանդգնուԹիւ գործ է. և մի յոր-
ժամ այլք սքնարար տանիցին, և իբրեն կոչիցին,
Թողասցուք. զի վատուԹիւ գործ է այն։ Այլ եԹէ
քարոզուԹիւն կոչեսցէ, մի հրաժարեսցուք և զանգի-
տեսցուք. բայց վայրապար առանց իրիք պատճառա-
նոց յորժամ ոչ պէտք իցեն, և ոչ հարկ ի վերայ
կայցէ, և ոչ ՚ած պաշտուԹիւն կոչեսցէ, մի մեզէն ի
վերայ դիմիցեմք. զի այն ցոյց առնելոյ իրք են, և
մնոտի պարծանաց նշանակ. ապա եԹէ իցէ ինչ՝ որ ՚ած
պաշտուԹեն վնաս լինիցի, ԹէպԷտ և բազում մահ
հասանիցէ ՚ մեռանել, ընդ այսորիկ մի զանգիտես-
ցուք։

Ալ ի անձամբ ձայնատուր փորձուԹեցն լինիցիս,
յորժամ ոչ ըստ ՚ած պաշտուԹեն ինչ ի վերայ հա-
սանիցեն ձգունքն՝ որոց ցանկանայցեմն. զի կորզի-
ցես վայրապար ի քեզ զնեղուԹիսն, ուստի շահ ինչ
ոչ լինիցի։ Օ այս ասէմ, քանզի կամիմ զի պահի-
ցէք զօրէնս ՚Ի՛ն, որ հրաման ետ չմտանել ի փոր-
ձուԹի, և զմիւս հրամանն՝ առնուլ զնաչն և երԹալ
զՀետ նորա. և սոքա չեն հակառակ միմեանց, այլ
կարի իսկ միաբան։ Զոր որպէս զայր մի զինուոր
պատրաստ լինիցիս զինուք՝ հանապազ արԹուն և
զուարԹուն, ցանկ ակն ունել պատերազմի. բայց մի
ծնանիցիս պատերազմունս. զի այն ոչ զօրականաց
գործ է, այլ խաղամարտ մարդկան։ Ւսկ եԹէ ՚ած
պաշտուԹեն փոյն գոյիցէ, վաղվաղակի ելանիցես, և
զանձն ի մահ դնիցես. մանաւանդ բազում խրախու-
նօք ի պատերազմ. փլուզանիցիր զսահմանս ՀնամԷ
ւոյն [2]. կոծիցես զդէմս սատանայի, կանգնիցես վնը-
շանակ յաղԹուԹեն։

Ալ պա եԹէ ոչ ինչ ՚ած պաշտուԹիւն վնասիցի, և ոչ
կրօնքս մեր յաւարի վարիցին, զոգւոցն վտանգս ա-

1 Յօրինակին սահման էջն։ 2 Յօրինակին գահ ընդհատ։

սիցեմ, մի՛ ինչ հարկ լինիցի քեզ առնել զոր ինչ ՚ած
ո՛չ կամիցի. մի՛ վայրապար ինչ յանդգնեսցիս ։ Ի՞նդ
արիւն պարտ է գալ քրիստոնէին, ո՛չ ընդ այլոյ, այլ
զիւր արիւնն պատրաստական ունել հեղուլ. այնպէս
սի յօժարութի՛ւ հեղուցուք զիւրաքանչիւր արիւն,
յորժամ վասն Ա՛ստի պատերազմ ինչ ՚ի վերայ յառ-
նիցէ, զոր օրինակ ոք զջուր սատկի հեղուցու. քան-
զի ջուր իսկ է արիւն որ բղխէ ՚ի մարմնոյն ։ Այ այն
պէս դիւրաւ մերկասցուք զմարմինն, որպէս զհան-
դերձս ինչ ՚ի բաց մերկանալ յանձնէ ։

Այ այն յայնժամ լինիցի, յորժամ ո՛չ յինչս կա-
պիցիմք, և ո՛չ ՚ի տունս, և ո՛չ յայլ ինչ իրևսն. եթէ
ամենեքեան լինիցիմք կատարեալք. զի թէ որ զզօրա-
կանաց կեանս կեցին՝ զայմ ինչ ՚ի բաց թօթափեն,
և ուր պատերազմ կոչիցէ՝ վաղվաղակի անդ հասա-
նեն, և ամ ժուժկալութի՛ւ համբերեն վշտաց, որ-
չափ և առաւել մեզ, որ Ա՛ստի զօրականքս եմք,
պարտ իցէ պատրաստ գտանել՝ տալ Ճակատ ընդ
մարմնոյ կարիս ։ Ահիցեն այժմ հալածանք, և մի՛ իսկ
լինի երբեք. սակայն են այլ պատերազմունք ընչիցն
ցանկութեց ։ Օ այսպիսի պատերազմ Ճառեալ Պաւ-
ղոս ասէր, "Ո՞վ մեզ մարտ պատերազմի ընդ արեան
և ընդ մարմնոյ "։

Այ քանզի այսպիսի պատերազմ միտ ՚ի վերայ
յառնէ, վասն այնորիկ ցանկ կամի վառեալ և կալ
մեզ հաստատուն. զմիւսն վառեալ և կալ կամի. "Պնդե-
ցէ՛ք, ասէ, զմէջս ձեր "։ զի և այս իսկ Հանապա-
զորդ ժամանակի է. և յայտ արար Թէ ցանկ պարտ է
կազմ գտանել ։ Ա՛նգղի բազում պատերազմ է ընդ
լեզուի, բազում կռիւ է ընդ այս, և մեք սմին զգուշա-
նայցեմք. բազում պատերազմունք են և ցանկուեց,
վասն այնորիկ նախ անտի առնէ սկիզբն վառել զզօ-
րականն Ա՛ստի. "Պնդեցէ՛ք, ասէ, զմէջս ձեր Ճշմար-
տութի՛ւ "։ քանզի պատրանք և ստութի՛ւ է ցանկու-
թի՛ւն, և որպէս և մարգարէն ասէ, եթէ զի "Միրաք
իմ լցան պատրանաց "։ չէ ցանկուէ իրքն, այլ ստուեր
ցանկութի՛ւն ։ "Պնդեցէ՛ք, ասէ, զմէջս ձեր Ճշմար-
տութի՛ւ "։ Այս ինքն է, Ճշմարիտ ցանկութի՛ւն, զգաս-
տութի՛ւ, պարկեշտութի՛ւ։

Ալ ման այնորիկ տայ զայսպիսի խրատ, զի գիտէ զմեղայն զեղծուածն, և կամի զամենայն անդամս մեր պարսպել։ “Ցասումն, ասէ, տարապարտուց՝ ոչ արդարացի”։ Լաւ զրահ կամի ագուցանել մեզ, և վահան ընդդէմ ունել. քանզի կարի յանպատրաստից գիմէ ի վերայ ցասումն, և բաղում անջըրպետից և պարսպաց պէտք են առ ի գիմի հարկանել և յաղթել։ Ալ ման այնորիկ որպէս ի քարանց լինչ յոսկերացն կաղմեաց[1] ՚ած որ ի ցասմանն, զի մի դիւրաբար հատանիցէ և ելանիցէ ամենևին ապականել զընաւ կենդանին. քանզի հուր է և մրրիկ ծխալ. և չէր հնար այլուր անդամոյ այսպիսի բըռնաւորել հանդուրժել։ Վասզի և բժիշկք ասեն, թէ վասն այնորիկ թաւալանի ի ներքոյ և ի վերոյ տաբաճեալ է շուրջ զսրտիւն, զի ի մէջ կակղին կայցէ, որպէս ի սպունգ լինչ յեցեալ և հանգուցեալ սիրտըն. զի մի ի շարժելն ընդ իւիք ի խօսի բախիցի փափուկն, և ընաւսիցի ի խաղալոյ ցասմանն բարկութենէ։

Լաւ արդ կարի պէտք են մեզ կարծրագոյն զըրահիւ, զի հանապազ ի հանդարտութեան պահիցեմք զայնպիսի գազան։ Պիտոյ է և մեզ սաղաւարտ ի գլուխ, զի անդ բանն խօսին բնակել է, և անտի կամ կեալ հասանիցէ՝ եթէ զլաւ լինչ խօսիցիմք, և կամ կորնչել՝ եթէ զյոռի լինչ և զանպիտանս բարբառիցիմք. վասն այնորիկ ասէ, և “Վէրք զսաղաւարտն փրկութենէ”. քանզի և ուղիղն փափուկ է, վասն որոյ և նա որպէս ընդ ամպով լինչ ընդ գանդոլն ծածկեալ կայ ի վերոյ քան զամենայն անդամն, և ամենայն բարեաց և կարեաց պատճառք լինի մեզ, կամ զլաւն կամ ոչ զնայնպիսին ձանաչել։

Լաւ ոտից և ձեռաց մերոց պէտք են զինուք. ոչ այսց ոտից և ոչ այսց ձեռաց, այլ ոգւոյն. զի ձեռքն զբարիս գործեացեն, և ոտքն յօգուտ գնասցեն։ Ալ առեցուք այսուհետև զանձինս այսպէս, զի յաղթել

1 Ցօրինակին պակասէր նշանս։

կարասցուք պատերազմայ, և դիցուք զպսակն ի գլուխ. Քրիստոս տերամբ մերով, ընդ որում՝ ՀՕը միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այ արդարև այն իսկ է հանգիստ, ուր մերժեացին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։ Ուր ոչ հոգք ինչ իցեն, և ոչ աշխատութիւնք, և ոչ կասկած. և ոչ երկիւղ խախտիցէ և քայքայիցէ զմիտս, բայց միայն երկիւղն յայ՝ որ լինի է խնդութիւն։ Ընդ անդ քրտամբ երեսաց ուտել զհաց, և փուշ և տատասկ. չէք անդ ցաւոլք և տրտմութիւն որդիս ծնանել, և դարձեալ առ այր իւր դառնալ, եթէ նա միւսանգամ տիրեսցէ նմա. այլ ամենևևին խնդութիւն է, խաղաղութիւն և բերկրութիւն և բարութիւն և հեզութիւն։ Ընդ անդ նախանձ, և ոչ չարակրութիւն, և ոչ ցաւք, և ոչ մահ. և ոչ մահ մարմնոյ, և ոչ մահ հոգւոյ. չէք անդ խաւար և ոչ գիշեր, այլ ամենևևին տիւ, ամենևևին լոյս։ Ընդ անդ վաստակել, և ոչ յագել և զմայլանալ, այլ հանապազ ի ցանկութիւս բարութեանն հարեալք, միշտ վայելեցեմք, և ցանկ պիտիցի։

Կամիք զի օրինակ ևս ինչ տացց զանտի կենացն. Թէպէտ և չէ հնար, սակայն որչափ ինչ հնար է՝ քաղ նացայց տալ օրինակ ինչ։ Կայեցարուք ընդ երկինս, յորժամ սուրբ յամբոյիցէ, և ցուցանիցէ զմեծապայծառ ծառ պսակն, և զվայելուչ երեսացն գեղեցկութիւն. և յորժամ բազում ժամն պչնուցումբ, նայեցարուք դարձեալ և յատակն՝ որ ոչ այնպիսի ինչ իցէն, այլ ևս աւելի գեղեցիկ որչափ քան զկաւեղէն յարկք ոսկեղէն. և դարձեալ յետ նորա ի վերին ձեղունն. ապա ի հրեշտակս և ի հրեշտակապետս, և յանչափ գունդս անմարմնական զօրութեան. ապա և յայլ իսկ արքունիսն, ի հայրենի աթոռս։ Այլ կարճ, որպէս ասացին, բան յանդիման կացուցանել։ Փորձի պէտք են և փորձիւն գիտութիւն։ Որպիսի ինչ համարիցիք զի՞գամ ի դրախտին, կարի քան զայն առաւել է այն բնակութիւնն. որչափ լաւ են երկինք քան զերկիր։

Այլ և այլուստ խնդրեսցուք օրինակ ինչ։ Եթէ այնպէս ինչ ի դէպ լինէր Թագաւորիս՝ որ այժմ ու-

նախ զամենայն ինչ՝ զաշխարհս ունել, և ի պատե-
բազմաց և ի հոգոց ազատ լինել, բազում հարկս առ-
նուլ և չամ կողմանց ոսկի յաձախել, և հոյակապ
և անուանի լինել, զիաւրդ Թուխ ձեզ, որպիսի ինչ
միտք լինէին, որպիսի զուարճութիք զուարճանայը,
յորժամ պատերազմունք ի միջի չկային, և աշխարհ
ամենայն ի խաղաղութիէ և ի ծառայութեան կային
նմա. այնպիսի է հանգիստն այն. մանաւանդ Թէ
չէղև իսկ բաւական օրինակ ինչ ամմ ի միջ բերել.
այլ պարտ է և այլ ինչ օրինակ խնդրել։

Այժմ դիր, յորժամ մանուկ ոք արքայորդի մինչ
դեռ յորովայնի մօրն իւրմէ, չէ ինչ հմուտ Թագաւո-
րութեանն պատուոյ. իսկ յորժամ դէպ լինիցի ար-
տաքս ելանել, և անդէն յաԹոռ արքունական հա-
սանել, ոչ մեղմով ինչ, այլ վաղվաղակի միանգա-
մայն առ ինքն առնուլ. այնպիսի ինչ է հանգիստն
այն. և ոչ միայն այնպիսի, այլ ևս բիւրապատիկ ա-
ռաւել։ Այսմ Թէ ոք կալանաւոր, որոյ բազում վիշտս
ի բանտի կրեալ իցէ, և յաԹոռ Թագաւորուէ հա-
սանիցէ, նա և ոչ կարիցէ հաւաստեաւ ինչ օրինակ
այսմ հանգստեան նմանեցուցանել։ Օ ի աստ որում
ինչ ոք և հասանիցէ բարեաց, զառաջին օրն՝ Թէպէտ
և զԹագաւորութիէն իսկ ասիցեն, մի օր միայն կարի
պայծառացեալ ունի զցանկութիւն, կամ զերկուսն կամ
զերիս. և յորժամ բազում ժամանակս յառաջ խա-
դայցէ, կալ կայ յուրախութիէն, այլ ոչ այնչափ ինչ
ի հանգստեանն. քանզի զնջանէ օր ի սովորութիէն
որպիսի ինչ և իցէ. իսկ անդ ոչ միայն չկասէ, այլ ևս
քան զևս ածէ։

Այս արդ ի միտ առ՝ որպիսի ինչ իցեն ոգիքն որ
անդր երԹեալ իցեն, և չունիցեն ակն բարուԹեցն
վախճանի, և եղծումն և այլայլումն. այլ միշտ գալ
յառաւելուԹիէ և ունել կեանս անվախճանս, կեանս
ազատս յամենայն հոգոց և յամ տրտմութեանց, ի
ուրախութիէ, բազմապատիկ բարուԹիք։ Օ ի եԹէ
աստ յորժամ ի գաղտ ուրեք ելանիցեմք, ուր զրկք
արքունի բանակեալ իցեն, խորանս հարեալ տեսա-
նիցեմք, սրահակս ձգեալ, նիզակս կանգնեալ, գե-
ղարդունս շողացեալ, կմբեԹեայս վահանացն շըր-

ջանակեալս, նշանս արձակեալ, գրօշս գործեալ, կա-
րի իմն զարմանալոյ և սքանչանալոյ. և եթէ զծագա-
ւորն և՛ի միջի տեսանիցեմք, կամ թէ հետի ընթանայեմ ոսկեկուռ վահանօք, և կամ թէ ձի վարիցեմ ոսկովք զինուք և ականակոփ սաՀառօք երիւա-
րօք, Թուի մեզ՝ թէ քան զայն բարուրեալն այլ ինչ չկայցէ տեսանել. այլ թէ զամենեսեան տեսաք։

Օ՛ինչ համարիցիս, յորժամ զնորանս պերճն կանգնեալս տեսանիցես և զյարկն յաւիտենից։ »Ընկալցին, ասէ, զձեզ յարկն իւրեանց յաւիտենից»։ Յորժամ զիւրաքանչիւր ոք՛ի նոցանէն առա-
ւել քան զարեգական Ճառագայթեան տեսանիցես պայ-
ծառացեալս. ոչ՛ի պղնձոյ և յերկաթոյ, այլ՛ի փա-
ռաց, զորոյ զպայծառութիւնն [1] աչն մարդկեղէն չկարիցէ տեսանել, և այն զմարդկան. իսկ զՀազա-
րաց Հազարաց Հրեշտակապետաց և զբիւրուց բիւրուց Հրեշտակաց և զբրովբէից և զսերովբէից, զաՀռոց և զտէրութեանց և զպետութեանց և զիշխանութեանց, որոց գեղն անՀնարին է և ըստ ամ միտս անցանել, զի՞րդ կարիցեմք Ճառել։

Այլ ցէ՛րբ ոչ դադարեմք յընթանալոյ զՀետ անՀասին. ըստ այնմ «Օ՛որ աչն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՛ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր ինչ պատրաս-
տեաց Ճա՛ծ սիրելեաց իւրոց»։ Այս եթէ այս այսպէս իցէ, ապա չիք ոք կարի ողորմելի քան զայնոսիկ՝ որք անտի վրիպեսցին. և ոչ առաւել երանելի քան զայ-
նոսիկ՝ որք այնմ Հասանիցեն։ Այս արդ եղիցուք և մեք յերանելեացն, զի Հասանիցեմք յաւիտենից բարու-
թեանն՝ի Քրիստոս Յիսուս՝ի Տէր մեր, ընդ որում Հօր միան-
գամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պա-
տիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ա-
մէն։

1 Ցօրինակին պակասէր ղ-յ-ո-ն։

ՃԱՒՈՒ ԵՒ ԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Այս մեզ այսուհետեւ ժամանակ՝ի դէպ է ասել, մտութիւնք համարձակութիւն եւ խնդրեսցուք. միայն թէ զհաւատսն մատուցանիցեմք, և զնմա ինչ տայ։ Այժմ է ժամանակ պարգեւաց. մի՛ ոք զանձն անյոյս համարեսցի։ Այնժամ է ժամանակ անյոյս, յորժամ հարսանիքն փակիցին, յորժամ թագաւորն մտանիցէ և զբաղմականօքն շրջելոյ, յորժամ առնուցուն զդուռն նահապետին՝ որք այնմ արժանի լինիցին։ Այժմ չէ ևս է, քանզի դեռ թատրն առաջի կայ, դեռ ևս պատերազմ՝ի միջի կայ, դեռ ևս յաղթութիւնս յերկբայս է. փոյթ յանձին ունիցիմք, քանզի և Պաւղոս ասէ. «Այնպէս ընթանամ որպէս ոչ յաներեւոյթս ինչ»։ ընթացից պէտք են, և կարի իսկ սաստիկ ընթացից։

Որ ընթանայցէ՝ չտեսանէ զոք, և թէ պատահիցէ ոք նմա, և թէ ընդ մարգագետինս և ընդ առապար տեղիս անցանիցէ. որ ընթանայցէն, ոչ՝ի տեսօղսն նայի, այլ՝ի պարգեւիչն։ Ցմահ մեծատունք իցեն և թէ աղքատք, թէ պարսաւիցէ ոք և եթէ գան հարկանիցէ, թէ թշնամանիցէ ոք և քարինս զկետ ձգիցէ, եթէ զտուն ոք առնուցու և կամ զկին և զորդիս առնուցու, թէ զինչ և առնիցէ ոք, միւսոյն ևեթ ուշ ունիցի՝ ընթանալ և զպսակն առնուլ։ Որ ընթանայցէ, ոչ ուրեք դադարէ. ապա եթէ սակաւ ինչ հեղգայցէ, զամենայնն կորուսանէ։ Որ ընթանայցէ, ոչ միայն չկասէ նախ՝ի գլուխ ասպարիսին ելաս նելոյ, այլ և քաջ յաձախէ զընթացսն։

Ով այս ասեմ վասն այնոցիկ՝ որք ասիցէնն, թէ՝ի մանկութենէն վաստակեցաք, և՝ի մանկութենէն պահեցաք, արդ՝ի ծերութեէ հասաք, չեմք ատակ այնպիսի ինչ ձգուն յանձին ունելոյ։ Առաւել յայնժամ պարտ է յոլովել յառաքինութիւն՝ի զառաջինն ինչ ուղղուխն համարիցիս. այլ արդ մանկացիր և համարեա զանձնդ յազդոջ. զի որ զմարմնաւորն ընթացս ընթանայցէ, յերբաւի յորժամ՝ի ծերութէ հասանիս

ցԷ՝ չկարէ նոյնպէս ընթանալ, քանզի ՚ի մարմինն ա-
պաստան է ամ Ձդնուելին. իսկ դու ընդէր կաս-
ցուցանես զընթացսն. զի ոգւոյն գործ է, և ոգւոյն
արթնոց. զի ոգւոյն առաւել ՚ի ծերութենէն առողջա-
նան, յայնժամ առաւել յաղդող լինին, յայնժամ
կարի խիզախեն։ Օ՜որ օրինակ մարմինն յորժամ
ջերմամբ ծնկիցի, և այլովք ստէպ ստէպ ցաւօք,
թէպէտ և կարօղ է՝ վատն է. և յորժամ զերծա-
նիցի յայնպիսի վարանաց, ապա միւսանգամ ոգի
արկանէ. նոյնպէս զոգին ՚ի մանկութենէ և ջերմ ցան-
կութեանն լնկէ, և փառասիրութենին հալէ, մինա-
նդ ուր փափկութիւնք իցեն, և անառակ ցանկու-
թիք որ ախրոդիսեանն կոչին, այս ինքն աստղհեան։

Իսկ ծերութենին ընդ ամ լկութիս անցեալ՝ զինաւ
կարիսն ՚ի բաց թօթափէ, զկեանն առ յագ, և զկեան
առ ՚ի զառաքինութենէ սիրելոյ, զի զեռանդն մանկու-
թենէն կարձեալ ծերութենէն է. և չտայ բնաւ ամենևին
մնացն զհետ կամացն երթալ, այլ իբրև զաղդի աղ-
դի ինչ պատերազմելոն ցածուցանել, սրբեալ ՚ի խոռ-
վութենէ, և ՚ի բնականութենէն հաստատեալ կացուցանէ,
և բաղում համարձակութենէ և հանդարտութենէ գոր-
ծէ, և բաղում երկիւղ առնէ ՚ի միտսն։ Օ՜ի թէ և
այլ ոք ոչ, ասէն, սակայն ծերացեալք գիտեն եթէ
վախճանելոց են, եւեալ հասեալ է ՚ի դրունս մա-
հու։ Յորժամ երկրաւոր ցանկութիքն յուզեալ ՚ի
վերայ խաղայեն, ահ դատաստանին մտեալ՝ զայն ՚ի
բաց քերիցէ, և զխոհան կակուղ առնիցէ, ոչ ապա-
քէն և դիւրին լինիցի։

Ւ՚ն զիմդ իցէ, ասէն, զի ահաւասիկ տեսանեմք
քան զաւագսն մանկտի և յար զծերս գարգաշեալս։
Օ՜յահաւոր ծերութեն չարեացն ասեմ. քանզի և զկատա-
ղիս տեսանեմք, թէպէտ և ոչ ոք մեղիցէ, անձամբ
քարալեժ լինին։ Ւ՚րդ յորժամ տեսանիցես թէ ծերն
զմանկտոյ ախտ ախտանայցէ, չարեաց յահաւոր ծերութեն
է այն. քանզի և ոչ ընդ մանկութենէ մեղայն կարիցէ
աղերս մատուցանել թէ " Օ՜ մեղս մանկութեան և
զանգիտութենէ իմոյ մի յիշեր "։ Օ՜ի որ ՚ի ծերու-
թեանն այնպիսի կաղիցի, յայտ է թէ ՚ի մանկու-
թեանն և չար. քանզի ոչ եթէ առ տգիտութենէ ինչ

և ոչ առ խակութեան և ոչ վասն տխեղծ հասակի, այլ ի ծուլութէ։ Վասզի այնպիսին կարէ ասել, եթէ « Օ մեղս մանկութէ և զանգիտութէ իմոյ մի յիշեր », որ ի ծերութէ զպատշաճն գործիցէ, որ յաւելոյնն գառնայցէ. իսկ եթէ ի ծերութէն նոյնպէս անառակ իցէ, զիարդ արժանի լինիցի այնպիսին ծեր անուանել, որ ոչ ի հասակին և յալեացն ակն ածիցէ. իսկ որ ասիցէն եթէ « Օ մեղս մանկութեան իմոյ մի յիշեր », յայտ է թէ ի ծերութէն զարգարութենէ բուռն հարեալ իցէ, վասն այնորիկ զայն այնպէս ասիցէ։ Վասզի մի վասն ծերութէն յոռութէց և ի մանկուէ մեղաց զրկեալ գտանիցիս ի Թողութէ։

Այլ արդ զիա՞րդ լինիցէ անպատեհ և անդը քան զԹողութէն, յորժամ ծեր այլ ի կապեղանոցս և ի կրպակս մտանիցէ, և ի կառամարտիկ ասպարէսն դեգերեսցի, և ի թատերան ընդ մանկտի [1] ընթանայցէ, պատուականն ի մէջ լկտեաց բազմաց։ Այդ դարև ամենայն առականաց գործ է. ի վերոյ մեծարեալ ալեօքն ծաղկեալ և ի ներքոյ զմանկուայ միտս ունիցի. և եթէ ոք ի մանկտոյ Թշնամանիցէ զանպիսխն, նա վաղվաղակի զալիսն ի մէջ բերէ։ Ոչ նախ ակն ածիցես յալեացդ. զի եթէ դու ի քումմէ չակնածիցես՝ որ ծերդ իցես, զիա՞րդ զմանկտին ստիպես ի քոյոցդ ակն ածել, և քեզ մեծամբանս դնել։

Ակնածես յալեացդ, այլ յամենի առնես. ա՞ծ զքեզ պատուեաց սպիտակութէ՛ն հերոյդ, և ետ քեզ զառագուեա՛ն և զբարձերէդ տեղի. և դու զպատիւն քեզէն ի բաց մերժես։ Այդ արդ ակն ածիցէ ի քէն մանուկն, յորժամ դու ևս չար քան զնա յաղագս դարձիցիս։ Վասզի յայնժամ մեծարոյ էն, յորժամ ոք ըստ արժանեացն գործս գործիցէ. իսկ յորժամ լկտիցի լինիս, և չար քան զմանկտին ծաղր կայցէ։ Օ՛ խորդ կարիցէք մանկտոյդ խրատս տալ՝ յորժամ ծերքդ յանառակութէն հատանիցիք։ Ո՛չ ըստ ծերս դարոյ առնելոյ վասն ասեմ զայս, այլ զկտիս.

1 Յօրինակին ի խաչէն ընթանայ։

զի որ զայնպիսի ինչ գործս գործիցեն, թէպէտ և հա-
բիւրեւիւնք իցեն, ես զայնպիսին մանուկս լսեիս
համարիմ։ Ո՞ր օրինակ մանկունք թէպէտ և կա-
բի իսկ տղայք իցեն և զգաստանայցեն, լաւ իցեն
քան զծերս, և չէ իմ բանս՝ այլ գրոց, որ գիտէ զայս-
պիսի ընտրութիւն առնել. "Ծերութիւն պատուական
է, ասէ, ոչ որ երկայնակեացս է. և հասակ ծերուե-
վարք անարատք „։

Այս և զծերութիւնն իսկ ոչ յայն սակս պատուեմք,
եթէ սպիտակ հերքն քան զթուխն պատուական է,
այլ զի նշանակ է առաքինաւոր կենացն. և յորժամ
զալիսն [1] տեսանիցեմք, նովաւ առնումք զծանօթս
ներքինն ալեացն. իսկ եթէ անուղայ ինչ ալեացն գործ
գործիցէ, ծաղր և կատակ կայցէ նա ամենեցուն։ Այլ
վասն այնորիկ առաւել և պատուեմք զթագաւորն,
զի թագն և ծիրանիքն՝ արքայութենն նշանակ է. ա-
պա եթէ տեսանեմք զնա ծիրանաքն հանդերձ արհա-
մարհեալ՝ի սպասաւորացն, խեղդ ընդ անձն արկեալ
՝ի բանդ տանիցեն, մինչեւ անկ ածիցեմք՝ի ծիրանեացն
և՝ի թագէն. ոչ ապաքէն և զկերպարանն և սա լայ-
ցեմք, և եղուկ և ողորմելի համարիմք։

Այս արդ մի ինչ անձին չուք դնիցես ալեաքն պա-
տուեալ, յորժամ քեզէն ալեացն մեղանչիցես. քան-
զի ալիքն վրէժս պահանջիցեն՝ի քէն. զի զայնպիսի
զմեծարանացս և զպատուոյ կին պարանս յամենի առ-
նես։ Այս զայս ոչ եթէ զամենեցունց ինչ ասեմ, և
ոչ յախուռն ընդ ծերութիւն ինչ գոռայցեմք, այլ
ընդ լսոի մտացն, և որ զծերութիւնն յամենի առնեն.
ընդ այնպիսի ծերոց զլարեալ ասիցեմք ընդդէմ,
որք անառակութիւք զալիսն թշնամանիցեն։ Ո՛վ թա-
գաւոր է և ծերն եթէ կամիցի. որ առաւել ծիրա-
նիս քան զթագաւորութենն ունիցի. և սպասաւորաց
տեղի՝ հնազանդեալ ընդ իւրև ղցանկութիւնն։ Այս
եթէ՝ի գեհենին անկանիցի՝ի թագաւորութենն աթո-
ռոց, ընդից ցանկութիւն և պաճուճանաց և փափկու-
թեան և արբեցութեան և բարկութիւն և անառակ
ցանկութենցն լինիցի ծառայ, և՝ի զարդարանս հա-

1 Ցօրինակին զոյն։

տանիցի, և իւղովք օծանիցի, և զտիւն և զալիսն իւ-
ղովք կամովք թէնամանիցէ, և որպիսի՛ տանջանաց
չլինիցի արժանի այնպիսին։

Այլ և ձեզ ասեմ մանկտոյդ, մի այնպիսի ինչ ու-
մեք լինիցի. քանզի ոչ եթէ ձեզ ներիցէ ինչ ոք
գյանցանելն. այլ մարթի ի մանկութեանն զձերու-
թեան միտս ունել, որպէս ծերք ի ծերութէ խակք
իցեն և տկեղտ։ Օ՜ որ օրինակ անդ ոչ մանն սպի-
տակ օգուտ գործէ, նոյնպէս և ձեզ թուխն մազ
չկարէ ինչ խափան լինել. զի եթէ տգեղազոյն իցէ
ծերոյն զայն գործել՝ զոր ասացին, ոչափ ևս առա-
ւել մանկանն։ Այլ սակայն չէ ազատ ՚ի պատժոց
և մանուկն. զի մանուկն յայնժամ ևէթ ներելոյ
և թողութէ արժանի իցէ, յորժամ ՚ի գործ և ՚ի
վերակացուքիւն ինչ իրաց մեծամեծաց կոչեսցի, և
նա չիցէ ինչ հմուտ, և ժամանակաց և կրթութեան
կարօտ։

Իակ յորժամ զգաստութէ ինչ պարտ էր ցուցա-
նել, այնուհետև չլինիցի արժանի թողութէ։ Յոր-
ժամ ընչասիրութեան յաղթել պարտ իցէ, և ու-
րեք զի ևս քան զձերոյն քաջ պատիժս պահիցէ մա-
նուկն. զի նմա բազում դարմանոց պէտք են վասն
ծերութէ տկարութէն. իսկ սա կարող է՝ եթէ կա-
միցի՝ բաւական լինել առ ՚ի զանձն ուղղելոյ։ Այլ
որպիսի՛ ինչ թողութեան արժանի լինիցի, յորժամ
և յափշտակել ինչ կամիցի զձերոյն, յորժամ բա-
զում անպիտանս խօսեսցի, յորժամ թէնամանի-
ցէ, յորժամ բամբասիցէ, յորժամ արբենայցէ։
Վէպէտ մինչ ՚ի զգաստութէն իցէ՝ համարիցի թէ
չիցէ ընդ բամբասանօք անկանել. և տէս որչափ և
անդ իսկ բազում օգնականութէ ունի եթէ կամի-
ցի. զի թէպէտ և կարի սաստիկ լլկիցէ զնա ցանկու-
թէն, այլ բազում ինչ ի զոր աւելի քան զձերն կա-
րէ գործել և թովել զչար գաղանն։

Այլ զինչ իցէ։ Հազուագիւտ վաստակք, ընթեր-
ցուածք, արթնութիւնք, պահք։ Այլ զինչ պիտոյ
զայնմ ամենայնէ. մինէ վանականք իցեմք։ Այլ
զայդ ցիս զի՞ ասես. Պաւղոսի տուր պատասխանի,
յորժամ ասիցէ՝ "Ընթանալ լերուք յամենայն հա-

նապաղորդութիւն և ի խնդրուածս ». յորժամ աչ սիցէ՝ « Այսուհետև մի տանիք ի ցանկութիւն ա- մենևին ». զի ոչ առ վանականն միայն գրեաց զայն, այլ առ ամենեսին, որք ի քաղաքս և ի գեօղս և յայլ տեղիս իցեն։ Այնքան աշխարհականն աւելի՛ ևս պարտի ունել զայն վանականին, քանզի միայն ընդ հնոյն ամուսնութիւն. ընդ այնր գոյ նման ներել. ընդ այլոյ իրաց՝ ոչ այնուհետև. այլ զայլն ամենայն կրկին գտակաւ ընդ վանականն պարտի գոր- ծել, Այանզի և երանութիւնքն որ ի Քրիստոս տուան, ոչ վանականացն տուան. ապա թէ ոչ, ամենևին իսկ կորնչեին ամ տիեզերք, և անիրաւութիւն համարեալ լինէր յաճախոյս կողմանէ անտի։ Ո՛ ի եթէ երանու- թիւնքն միայն վանականացն տուեալ էին, և աշխար- հականն չկարէր անտի ուղղութիւնս կատարել, և զա- մուսնութիւն նորա է հրամայեալ ապա զամենեսին իսկ ինքն կորուսանէր։ Այթէ չէր հնար հանդերձ ամու- նութիւն զվանականաց գործ գործել, բնաւ ամենևին իսկ եղծեալ ապականեալ գտաներ առաքինութիւն յաժարութիւն։

Այս բնաւ զիարդ իսկ էին պատուական հարսա- նիքն, որ այնչափ բարութեաց խափանիչք մեզ լինէին։ Այս արդ զինչ իցէ։ Հնար և կարի իսկ հնար կին ունել, և զառաքինութիւն կատարել, եթէ կամիցիմք։ Որպէս՝ թէ ունիցիմք կանայս, որպէս թէ չունիցիմք, եթէ վարիցեմք զաշխարհս որպէս ոչ թէ յախտի ծախս։ Այպա եթէ ոմանք խափանեցան ինչ ի բարիս գործելոյ ամուսնութեան, գիտասցեն՝ եթէ ոչ ամու- նութիւն ինչ է խափան, այլ կամքն որ չարաչար վա- րեցին զամուսնութիւն. նա և ոչ գինին գործէ զարբե- ցութիւն, այլ կամք չարք որ զանչափս ինդրեցին։ Այսք եթէ ի չափս ունիմք համազ զամուսնութիւն, յարբայութեանն և առաջին գտանիցիմք, և յայմ բա- րութիւն վայելեսցես։ Որոց լիցի ամենեցուն մեզ հա- սանել հնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յի- սուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա- ւիտեանս յաւիտենից. ամէն։

Այ արդ աղէ՛ ասա, եթէ յարքունիսդ ուրեք մտա նէիր, և ՚ամի որ ինչ անդ էր՝ հաւատարիմ լինէիր, և ապա մատնիչ ՚ամի. մինթէ դարձեալ հաւատայիր որ ինչ քեզ։ Այ արդ, ասեն, զիարդ. չգուցէ ապաշխարուի։ Վոյ ապաշխարուն. այլ միրտուելն կրկին չէր. ապաշխարուի գոյ և բազում զօրուն ունի, և կարի իսկ ջրէ զմեղսն և զներկելոցն ՚ի չարիս՝ եթէ կամիցին, և փոփոխել ՚ի բեռանց մեղացն. և զտապնա պետլսն կացուցանել ՚ի զգուշութեն, թէպէտ և յատակս չարեացն երթեալ հասեալ իցեն։ Այ այս բազում ուսուէք յայտ է. «Մինթէ որ անկանիցին, ասէ, ոչ յառնիցէ. և կամ որոյ զերեսսն դարձուցեալ իցէ, չդառնայցէ»։ Վոյ հնար միւսանգամ նկարել ՚ի մեզ զՔ՚ս, եթէ կամիցիմք. և լուր սմին Պաւղոսի՝ որ ասէ իսկ. «Հրդեհակը, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի Քս ՚ի ձեզ»։ միայն բուռն հարցուք զապաշխարութէնն։

Այ արդ տես զայ մարգասիրութին. պարտ էր մեզ զառաջինն իսկ ՚ամ կերպարանօք ՚ի պատիժս մտա նել. քանզի և օրէնս ըստ սբյս՝ բանականս ընկալաք, և ՚ի բազում բարութեիս վայելեցաք, և ՚ի ՚ոնէ անճանօթք եղեաք, և վարս անՙբս յանձն առաք, և ոչ միայն չպատժեաց, այլ և բազում բարութեց արժանի արար. և այնպիսի բարութեցն՝ որպէս թէ մեծամեծ բարութեց երևութիւնս գործեալ էր մեր։ Հարձեալ անկաք յայնմանէ, դարձեալ սակայն և այնպէս ոչ պատժեաց, այլ ետ մեզ զապաշխարութին դեղ, որ բաւական է զամ մեղսն ջնջել և եղծանել, միայն եթէ գիտիցեմք որպիսի ինչ դեղ իցէ։

Այ արդ թէ որպիսի՞ ինչ իցէ դեղն ապաշխարութե՛ և կամ թէ զիարդ և ՚ի կազմեցի՞։ Այո՛ յըստ գտանելոյ զմեզս իւրոյ անձինն. «Ո մեզս իմ, ասէ, ոչ ծածկեցի ՚ի քէն». և «Ասացի թէ պատմեցից զի՛ն ՚ի քէն զանօրէնութիւնս իմ ՚ոն, և դու թողեր զամբարշտութիս մեղաց իմոց». և այլուր՝ թէ «Ասա դու

նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս ». և դարձեալ՝ թէ « Արդարն անձինն ամբաստանէ յառաջինն պատասխանատուին »։

Այրկրորդ անգամ՝ ի բաղում խոնարհուէ. քանզի իբրև զշար ոսկի է. զի եթէ զառաջնոյն բուռն հարկանիցես, ամն զկնի գայ. եթէ խոստովան լինիցիս զմեզն՝ որպէս պարտ իցէ խոստովան լինել, խոնարհի հոգին, քանզի խիղճն ձմլեցուցանէ զնա անդէն և ածէ ի ցածութիւն։ Այայց պարտ է և այլ ինչ յաւելուլ ի խոնարհութիւնն, եթէ այնպէս ինչ իցէ՝ որպէս և Դաւիթն երգէր, « Օ տիրոջ, ասէ, բէկեալ և զխոնարհ ածո ոչ արհամարհէ ». զի բեկեալն չյառնէ, և ոչ զոք զայրացուցանէ, այլ պաղատել և՝ եթէ ընդ ախտին պատրաստէ. չյառնէ երբէք, չընդոստնու, և չըմբոստանայ, թէպէտ և ինամանիցի, թէպէտ և չարչարիցի՝ կարկի, կայ, և չերթայ ուժմբ ընդդէմ՝ խնդրել զվրէժ անձին։

Ետ խոնարհութեանն՝ կարևոր աղօթից պէտք են, և բազում արտասուաց և ցայգութեանց և ցերեկութեանց, որպէս ասէ իսկ, եթէ « Լուացից զամ գիշեր զմահիճ իմ, և արտասուօվք իմովք զանկողինս իմ թացուցից։ Այ աստակեցայ ես ի հեծութենէ իմումն ». և դարձեալ՝ եթէ « Օ մոխիր որպէս զհաց կերայ, և զըմպելիս իմ արտասուօք խառնեցի ». Այս ետ կարեւոր աղօթից՝ և բազում ողորմածութենէ պէտք են. որ առաւել սատակագոյն կազմիցէ զդէղ ապաշխարութենէն։ Այս զոր օրինակ ի բժշկացն օգնականութիս բազում բանիցս առնուն և մի դեղ կազմեն, և ի բազմացն միոյ կարի է ազդել, նոյնպէս և յապաշխարութեանն այս բանիցս ազդոյ է քան զամ, և որ զամ ապաշխարութենէն կազմէ։

Այ ուր զինչ ասեն ածեղէնն զիրք, « Ցուր, ասէ, ո՞ զղջմանէթէ, և ամ ինչ քո ոք եղիցի ». և դարձեալ « Ողջմանէթէ և հաւատովք սրբեսն մեղք ». և դարձեալ՝ թէ « Օ Հուր բորբոքեալ ջուր շիջուցանէ, և զմեղս մեծամեծս ողջմանածութենէ ցածուցանէ ». Այս ապա չբարկանալ ումեք, և ոչ ոխս պահել. ամենեցուն Տեղոյն գյանցանս։ « Այարդ մարդոյ եթէ ոխս պահիցէ, յայ խնդրէ զբժշկութենէ ». և դարձեալ

« Խոզիքը զի Թողցի ձեզ » . և դարձուցանել զեղբայրս ի մելորութիւն : « Այրթ , ասէ , և դարձի զեղբայր քո , զի Թողուցուն մեզք քո » . և ընդ քահանայս ընտանութիւն ունել . « Այս եթէ մեզս ուրուք գոթ ծեալ իցէ՝ Թողցի նմա » . և վերակացու լինել զոհից , և չունել զյանցանս ի մտի , և ամի հեզութիւն տանել ,

Այս արդ յառաջ քան զառաքելն եթէ մարթի ապաշխարութիւն ջրել զմեզս , չկայիք ' ի տագնապի՝ եթէ չիք այլ մկրտութիւն . և չունիք ինչ յայս անձամբ . իսկ արդ ուսայք աւասիկ , եթէ արդարի իրօք ապաշխարութիւն և Թողութիւն յարդարի , և եթէ կարօղ եմք նովաւ յամ կարեաց փախստական լինել , և մարթի մեզ ' ի լաւութիւս վարել նովաւ , որպիսի՝ ներելոյ և Թողութիւն արժանի լինիցիմք՝ որոց և ոչ ' ի միտ անգամ անկանիցին մեզք : Օ ի եթէ այն մեզ կայր , ապա ամ ինչ գիւրաւ վճարէր : Օ որ օրինակ եթէ ոք ընդ դուռն մտանիցէ , ' ի տուն իսկ է . նոյնպէս և որ զբարին միշտ զմտաւ ածիցէ , և ' ի բժշկութիւն իսկ գայ : Այպա եթէ ոք ասիցէ՝ մեղաւոր եմ մեղաւոր եմ , և զմեղն զմտաւ ոչ ածիցէ՝ եթէ զայս ինչ և զայս մեղայ , այնպիսին ոչ երբէք գադարէ ' ի մեղանչելոյ . Հանապազ խոստովան լինի , և փոյթ յանձին ոչ ունիցի երբէք ածել զյանցանսն յուղղութիւն , Եթէ սկիզբն առնիցէք , ապա և այն ամենայն ըզնորին գիտի գայ , եթէ զմտաւն , եթէ զսկիզբն ցուցանիցէք : Այմենայն ուրեք սկիզբն և առաջքն դըժաւարինք են , և եթէ սկիզբն առնիցեմք հինն [2] արկանելոյ , ամ ինչ հարթ և դիւրին լինիցի ,

Այս արդ սկիզբն արասցուք աղաչեմ . ոմն յաղօթիցն յաձախութիւն , և ոմն ' ի ստեպ արտասուաց , և ոմն ' ի տրտմութիւն . քանզի և ոչ որ կարի փոքր՝ իցէ անօգուտ : « Տեսի , ասէ , զի տրտմեցաւ և գնաց տըխսւր , և բժշկեցի զձանապարհս նորա » : Այս ամ յաղօրմածութիւն , և ' ի Թողոյ զյանցս ընկերին . և ' ի չպահելոյ ոխս . և ' ի չխնդրելոյ զվրէժ անձին , խոնարհեցուք զանձինս մեր ,

1 Յօբինակին ՟ս՟։ 2 Յօբինակին պակասէ հինն։

Այն միշտ զմտաւ զմեղսն՝ զոր գործեցաք՝ ածեմք, չէք ինչ յարտաքին իրացն՝որ զմեզ հպարտացուցանել կարիցէ, ոչ մեծասէ և ոչ հարստութի, ոչ իշխանութէ և ոչ պատիւ. այլ թէ բնաւ իսկ յարքունեն կառս նստիցիմք, հեծելեսցուք դառնապէս։ Վանգի և երանեւ էին Դաւիթ Թագաւոր էր, և ասէր, "Ո՞ւրացից զմեզ զիշեր զմահիձս իմ„. և ոչ ինչ՝ի ծիրանեացս և՝ի Թագէն փնասեցաւ, և ոչ հպարտացաւ. քանզի գիտեր Թէ մարդ է. և քանզի բժշկեալ էր սիրան, զողջս Հարկանէր։ Այլ զինչ իսկ իցէն մարդկեղէն կիրք ամ, այլ հող և մոխիր և իբրև փոշի առաջի հողմոյ, ծուխ և ստուեր և տերև յօդոյ սրացեալ, և ծաղիկ և եթ բաղ և բանգն և առասպելք, հողմ, օդ լոյծ տաբած և հեղեալ, Թև Թռուցեալ և ոչ ուրեք գադաբեալ, վտակք սահեալք և ոչ ուրեք յանդուցեալք. և եթէ այլ ինչ քան զսոսա էնչենագոյնք կայցեն։

Այս արդ աղէ՝ ասա, զինչ ինչ մեծ Համարեսցիս, զոր պատիւ առաւել. զհիպատիցն. քանզի չիք ինչ այլ պատիւ ձոխագոյն քան զայն, և բազմաց իսկ այն առաւել մեծարոյ Թուիցի. և որ այնպէս՝ի ձոխսուն և՝ի պատիւ ելանիցէ՝ և բազմաց զարմանալի. և այլ որ որ ըստ նմանի յիշխանութէն ինչ իցէ, Թէպէտ և փոքր քան զնա իցէ, սակայն պատիւ ունին երկոքին. այլ այսպիսի պատուականք և յետ սակաւ ինչ ժամանակի չունին պատիւ ինչ։ Այս արդ աղէ՝ ասա, երբ եղև, քանի՞ ժամանակս կալաւ. մի ամ, երկուս ամ. սակայն և այն երկոցից պատիւ է։ Այս յերազի ոք առնուցու ինչ այսպիսի պատիւ։ Այլ այն, ասէն, երազ է։ Այս այն զինչ աւելի իցէ քան զերազն. և Թէ զերազն խոտիցես, ապա և զայն ընդէր չհամարիս ցիս երազ։ Օ որ օրինակ երազն՝ի գալ աուրնջեանն յանդիմանի, և չերևի ինչ ուրեք՝ի միջի, սոյնպէս և նա՝ի հասանել գիշերոյն յանդիմանի, և չգտանի ինչ այսպիսի՝ որպես և ցերեկն պերձանայր։ Վանզի հասարակ առնն զժամանակն տիւն և գիշերն, և զոյգ բաժանեցին զկեանս աշխարհիս. զոր օրինակ այժմ զցերեկ ոք զուարճանայ, գիշերին ոչ ինչ երեւէր, և ոչ ցայգուձեն՝ի տուէ ոք կարէ վայելել։

Այղեր հիւպատոս. եղէ և ես յերազի. այլ ես

զցայգ, և դու զցերեկ. և այն զինչ առնիցէ. քանզի և ոչ այնու աւելի ինչ իցես քան զիս, բայց միայն ա- նունն՝ եթէ այս անուն հիպատոս է. յանուանց անտի միայն ունել զառաւելուն։ Այլ զի յայտնի արարիցէ զոր աաւմս. թէ պաշտօն ինչ ուսիք առնիցեմ՝ եթէ այս անուն հիպատոս է, ոչ եթէ ի բանիցն լինիցի՝ և գնայցէ։ Այսպէս և արդեամբքն իսկ, թէպէտ և ա- նուանեսցի ոք զդեղիս, և կացցէ հիպատոս, առ ժա- մանակ մի երևի, և այլ ոչ երբէք ուրեք։ Այրեսցուք թէ գի տարի կայցէ հիպատոս կամ զերկուս կամ զերիս կամ զչորս. և ո՞ր իցէն որոց զտասն ամն կա- ւեալ իցէ հիպատոսութեի. չէր ոք, չէ ուրեք։

Այլ ոչ այնպիսի ոք և Պաւղոս էր, հանապազ կենդանի. և ոչ մի օր կամ երկուս կամ երիս կամ տասն կամ քսան կամ զերեսուն. այլ և վախճանե- ցաւ, և չորեքարիւր ամ՝ի վերայ անցեալ, և տակա- ւին կենդանի է. և ևս քաջ պայծառագոյն քան մինչ դեռ կենդանի էր. և այն յերկրի. իսկ զերկնից պայծառութեին օրսյն որպիսի՞ ինչ բան կարիցէ յան- դիման կացուցանել։ Այ ան որոյ, աղաչեմ, զայն լու- սաւորութեին խնդրեսցուք, զնորին հետ երթիցուք, զի այնմ հասանիցեմք, որ արդարև լուսաւորուի և պայծառութեի է. մեկնեսցուք յերկրաւոր իրացս, և դացուք ընդ նոր և աղօրմութեի՝ ի Այն՝ ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբ փառք, իշխանութեի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՊՆՈՒՆ պատարագ մատուցողք և մեք. զի այնք մեծութեամբ և գոյաւորաց էն, և սոքա կամաց և առաքինութեամբ. նոքա արտաքինք, և սոքա ներքինք. զնոսա ո՛ և պէտ իսկ ոք կարէ մատուցանել, և զսոսա սակաւք։ Այլ քան զոչխար լաւ է մարդ, նոյնպէս քան զսա այն պատարագն. զի աստ զանձն քո մատուցանիցես պատարագ։ Այլ այլ և այլ հաճոյ և սերտ պատարագք էն մարտիրոսացն մարմինքն. զի անդ ոգիքն և մարմինքն միանգամայն մատչին. և անտի բուրէ հոտ անուշոյն։ Արթի և քեզ, եթէ կամիս, այսպիսի պատարագ մատուցանել. և եթէ ՚ի հուր չկրիցես զմարմինդ, այլ այլով հրով մարթ էր այրել։ յորժամ կամաս զաղքատութեի և զնեղութեի յանձին ունիցիս։ Օ՜ որ համարձակ է ՚ի փափկութեի և ՚ի պէսպէս խորտիկս անցուցանել, յորժամ կամք ՚ի վիշտս և ՚ի տառապանս արկանիցես, և զմարմինդ սպանանիցես, ոչ ապաքէն պատարագ իցէ։

Պատն զմարմինդ, ՚ի խաչ հան, և առնուցուս և դու զմարտիրոսութեի պահն. զի զոր ինչ անդ սուբն գործիցէ, աստ կամացն յօժարութեին գործիցէ։ Արի ՚ի հուր այրիցի, և մի ընչիցն ցանկութեքն բորբոքեսցի. այլ այրեսցի և շիջցի հրով հոգւոյն, կոտորեսցի նոքին սրով. այնպիսի պատարագ է հաճոյ, որ չէ կաթսայ քահանայիւ, այլ նուաւ որ մատուցանիցէն. այնպիսի պատարագ է հաճոյ, որ ՚ի խոնարհ մատուցանի, և ՚ի վեր ընդունելի լինի։

Ո՛չ ապաքէն զարմանամք՝ զի զառաջին ժամանակն հուր իջանէր և ծախէր զամենայն պատարագն. և այժմ մարթի իջանել հրոյ, որ և զարմանալի և սաստիկ է քան զայն հուր, և ծախել զոր ինչ առաջի դնիցի։ Արդ անուանդ թէ ոչ ծախել, այլ օրհել և յերե կինս հանել. ոչ եթէ մխիթ առնել, այլ պատարագ մատուցանել։ Այսպիսի իսկ էին Աւուռնելի պատասխանքն. " Ազօթք քո, ասէ, և ողորմութիք ելին յիշատակաւ առաջի ՚ի " ։ Յեսայեայ զգեղեցիկ հաւանեալ

ընկերսն, զաղօթս և զողորմութիւնս. յայնժամ լսելի լինիմք, յորժամ ասք զաղքատացն մատուցեցէք։ Ոչ խնամ զանանց իւր չլսել աղքատին, և նա բա խնդրուածոյն ոչ լսի. ած։ "Արդանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա տէր"։ Նա որ ինչ օրն չար։ Ամ օրն դատաստանի առնի չար՝ մեղաւորաց։ Օ ինչ իցէ՝ երանի որ խորհի։ Որ խնամայցէ զաղքատն և զտնանկն, որ գնեղուն անանկն ի միտ առնուցու և զվիշտն ուսանիցէ, ապա և ողորմել փութացցէ։

Յորժամ զաղքատն տեսանես[1], մի զանց առնիցես, այլ վաղվաղակի զմտաւ ածցես, զի եթէ դու էիր՝ զի գործէիր, զինչ կամիիր. ոչ ապաքէն զի ամենեքին քեզ ողորմիցին։ "Որ ի միտ առնուցուն", ասէ։ "Ի միտ առնուս և դու, եթէ իբրև զքեզ ա զատ է, նորին ազգականութիւնն հաղորդ և ամենևին քեզ հաւասար. և դու թերևս և շանց ընկէր չառնիցես. զի նոքա յապին, և նա թերևս բազում անգամ քաղցեալ ննջիցէ. քան զծառայսն քո ևս յանարգուն ազատն։ Ամ նոքա զքո պետն վէմարիցեն։ Օ որպիսի ինչ պետս։ Օ ի ծառայիցենն քեզ Ամարիտք է. եթէ ցուցից քեզ և զնա, զի ևս աւելի վէմարիցէ քան զնոսա զքո պետն. հասանէ ի թիկունս քո յաւուրն դատաստանի և վերծուցանիցէ զքեզ ի տրոյն. և զինչ ինչ այսպիսի առնիցեն քնաւ ծառայքն քո։ Ցաբիթա յորժամ վախճանեցաւ՝ ո յարոյց զնա. մի՛թէ ծառայքն որ չուրջն կային. ոչ ապաքէն աղքատքն. և դու ծառայիցն անգամ չառնես հաւասար զաղքատն։

Յորժամ կարի ցուրտն տիրիցէ, և անկեալ կապերտօքն տառապեալն կիսամահ դնիցի, և զատամունն կափկափիցէ, և երեսքն և կերպարանքն բաւական են ածել զքեզ ի զուլ. և դու ի ջերմոյ և լեալ և արբեալ, տեսանես և զանց առնես. և զիա՞րդ ազատես զնա՝ յորժամ քեզ վիշտք ինչ ի վերայ հասանիցեն, փրկել զքեզ ի վշտացն։ Ամ թերևս բազում անգամ ասիցես, զի թէ ես իշխան էի, և յան-

[1] Յորինակին պակասէ բեռանէս։

ցանէր ոք ինչ, վաղվաղակի Թողուէ առնել, և ՚ած ոչ Թողուցու ՚ի ասէր զայդ· որոյ չիցն ինչ քեզ մեղուցեալ, և կարող ես ապրեցուցանել՝ անառես առնիցես, և քեզ զիարդ Թողուցու որ ՚ի նոյն մեզանչիցես· Այս արդ չիցէ այն գեհենին արժանի· և ընդ այն գինչ զարմանք իցեն· զմարմին մեռեալ անզգայ՝ որ ոչ այնուհետև զգայցէ ինչ պատուոյ, բազում անգամ պէսպէս ոսկեհուռ հանդերձիւք զարդարես· և զողջն որ պաղատիցէ և կոծիցի և տանջիցի և Տալիցի և մաշիցի ՚ի սովոյ և ՚ի ցրտոյ, անառես առնիցես· Այս բա զում ինչ մեսապարծուէ ՚ընդՀ, և ոչ երկիւղին· Այս երանի Թէ այսչափ միայն· այլ վաղվաղակի չարախօսուԹիք և բամբասանք յառաջ մատչին զմերոցն· ընդէր չդործիցես, ասեն, և ընդէր դատարկ հայ ուտիցես·

Ա՛ղէ՛ ասա, դու ՚ի գործոյ ունիս զինչ ունիսդ· ոչ աղաքէն զՀայրենի ժառանգուԹիւն առեր· իսկ եԹէ դի գործեան՝ վասն այնորիկ զայլս նախատիցես, չըմբռնես Պաւղոսի՝ որ ասէրն, զի յետ ասելոյն "Այ ԹէՀ որ ոչն գործիցէ, և կերիցէ մի՚", ասէ· "Այոյց դուք զբաւ գործել մի՚ ձանձրանայք"· Այ՚ւ խաբեբայ է, ասեն· զինչ խօսիս, այր դու· վասն պատառի միոջ Հացի և կապերաի միոջ ձորձոյ խաբեբայ կոչես Այ՚ւ տանի, ասէ, և իսկ և իսկ վաՀառէ· և դու զամ ինչս քո ՚ի բարի պէտս ծախես· և կամ Թէ ամենեքեան ՚ի վատուԹենէ աղքատանայցեն· ոչ ՚ի նաւաբեկուԹենէ ոք, և ոչ ՚ի գատափետ լինելոյ, և ոչ ՚ի գողուԹէ, և ոչ ՚ի զուր դատաստանաց, և ոչ ՚ի ցաւոց, և ոչ յայլ ինչ վշտաց· Իսկ եԹէ լսիցեմք զկատաւղ ուրուք՝ յորժամ զղողոք բառնայցէ, և զաչս ընդ երկինս ամբառնայցէ, և ՚ի բերդպեղ շրջեսցի, և ցնցոտիս պատեալ, անգէն վաղվաղակի խաբեբայ և գողԹիչ և կեղծաւոր կոչիցես· Ամաչէս, ոՀ կեղծաւոր կոչիցես· մի՚ տար ինչ ուժեք, և մի՚ չար զուսիքեղ խօսիր·

Ա՛յլ գոյաւոր է, ասեն, և կեղծաւոր է· Այս այն քո չարախօսուԹե՛ մեղ է, և ոչ նորա ինչ· գիտեմ՝ եԹէ ՚ի գաղանայ դէմս Հասանիցէ երԹալ, և ոչ ՚ի մարգոյ· եԹէ կարի ողջմբ խօսեսցի, և յեղուկս անբ

կանիցի, և չգտանիցէ ինչ խնամս. վասն այնորիկ հարկ լինի զողորմ կերպարանս փոխել, զի գեթ այնու փոքր ի շատ սիրտդ ձմլեցուցանիցէ։ Եթէ տեսանիցէ ոք զոք աղաւի կերպարանօք ի մուրացանս, խա բեբայ է, ասէ, զի կարծեցուցանիցէ զանձն՝ եթէ աղնուական ինչ ոք իցէ, և այնու պատճառանօք յա ձախ առնուցու զմոյն. և եթէ ի գնուճ կերպա րանս, և գայն ևս ի բիծ տանիցին. և այնուհետև զինչ գործիցեն տառապեալք։ Ո՛ անագորոյն միտք, և անգութ և անխնամ աղիք։

Ընդէր, ասեն, զխեղ ինչ անդամն մերկացու ցանիցեն։ Ա՛ յան քո. եթէ դու ողորմած էիր, նո քա այնպիսի հնարս ոչ հնարէին. եթէ յառաջ նուն տայիր և արձակէիր, նոքա այնպիսի մեքենայս ոչ խառնէին։ Ո՛վ ոք կայցէ այսպէս թշուառական, որ կամաւ այնչափ գործ գործիցէ, և անձամբ զանձն ծանակ առնիցէ, և ընդ հրապարակս գոլեալ չրջել մերկ խայտառակ կնաւ և որդւովք հանդերձ, Տո՛ւ ի գլուխս և մխիր զգրկօք շրջեսցի։ Օ՛ինչ ինչ չար կայցէ քան զայնպիսի աղքատութի։ Ա՛յլ յայնչափ թշուառութէ վերայ ոչ միայն ողորմելի չգտանէն, այլ և բամբասին ևս ի մէնջ։ Այս ինք տակաւին ըզ չարիսն՝ եթէ ընդէր յորժամ յայ ինդրեմք՝ վաղվա ղակի չլսիցէ. տակաւին տրտմիմք՝ եթէ ընդէր յոր ժամ աղաչեմք, չհաձեմք զնձ. և ոչ դադայցեմք և և զահի հարկանիցիմք, սիրելիք։

Ա՛յլ բազում անգամ, ասէ, եառ։ Այս նա չու տիցէ հանապազ. և զորդիսն քո, յորժամ յաձախ ինդրիցեն, միթէ ի քայ մերժեսցես. ո՛ անհնարին անամեթուե։ Օ՛ աղքատն անամեթ կոչես, և դու յորժամ զայլոյ չափչտակիցես՝ չիցես անամեթ. նա յորժամ վասն պատառի միոջ հայի ժոխիչ, անամեթ է։ Ոգիսիցես որչափ հարկք որովայնին են, որ զնմ ինչ վասն նորին հնարիցիս. ոչ ապաքէն զհոգևորացն վասն նոցին անփոյթ առնես. ոչ ապաքէն երկինք ա ռաջի կայցեն և երկնից արքայութէին, և դու յորո վայնիդ բռնութէդ երկուցեալ, զնմ իսկ անուղղայս ախորժելով գործես, և զարքայութէին ևս անդամ արհամարհես. այն իսկ է անամեթութէն։ Ասեսանեն

զծերս ՚ի խեղուլեն և ՚ի հաշմուլեն։ ՚Ա.ՀԼ ՚ի շատ՝ սուլեին հատանիս. այսը անուան այսպէս դահեկանք ՚ի վարձու կան, և այսը անուան և աւելի, և նա մուրանայ։ Օ մանկտոյ զրոյց խօսիք ու զշղփատ-փուլեիս. քանզի և նոքա միշտ առասպելոյց դայեկայն անսան։

Ղառնում յանձն, չհաւատամ, քաւ լիցի. փոխ ոք տայցէ, և ՚ի բարուլեն իցէ, և մուրանայցէ։ Ո՚ր վասն, ասէ՝ ասա. զինչ ինչ քան զմուրանալ գործ ծանակաց կայցէ. լաւ է մեռանել քան զմուրանալ։ Ո՚ինչև յերբ անագորոյնք կայցեմք. մինեք ամենեքեան փոխս տայցեն, և ամենեքեան խաբեբայք իցեն. և չգուցէ բնաւ ստոյգ աղքատ։ Ո՚յո, ասէն, բազումք են։ Ո՚ւ նոցա ընդէր չտայցես, որով-հետև զամենեցուն զկերպարանս հաւաստեաւ քննես. այլ պատճառք և բարուլքն են այն ՚ամ։ Ո՚մինայն ուսիք, ասէ, " Որ խնդրեսցէ ՚ի քէն, տացջ՚ի։ և որ կամի փոխ առնուլ ՚ի քէն, մի դարձուցաներ զերեսս քո "։ Ձդեա զձեռն քո, և մի լիցի կարկամեալ. չիա-ցոյց ոք զքեզ կենացդ ուրուք քննիչ. ապա թէ ոչ՝ և ոչ ումեք ողորմիլք։

Ո՚նդէր յորժամ զնճ աղաչիցեմք, ասես՝ մի յիշեր զմեղս մեր։ Ա՚ստիպատ և կարի ոք իցէ աղքատն մեզաւոր, նոյնպէս և զնմանէ ածկիր զմեր, և մի յիշեսցես զյանցանս նորա. քանզի մարդասիրուլեն ժամանակ է ժամանակս, և ոչ հաւաստի քննուլեն. ողորմուլեն, և ոչ պէսպէս խորհրդոց։ Փարաւաղել դարմանել կամի. եթէ կամիս, տուր. և եթէ ոչ կամիս, բարեաւ յուղարկէ, և մի յայլոց յաչաց հանիցես։ Ո՚նդէր այնչափ հեք և թշուառական իցես, զի ոչ դու ողորմիս, և զայլս ևս որ կամիցէն ողորմել, խրատուցանես։ Ձյորժամ լսիցէ ոք ՚ի քէն՝ թէ սա խաբեբայ է, և նա կեղծաւոր, և միւսն այլոց ևս փոխ տայ, ապա այնուհետև ոչ նոցա տայցէն և ոչ սոցա, և զամենեսին իսկ նոյնպիսիս համարիցին։ Ո՚վ-տէր իսկ, զի զչար ինչ կարծիս դիւբաւ առնուլքն, և զբարւոյն ոչ նոյնպէս վաղվաղակի։

Ո՚ղիյաւք ողորմածք, ոչ վայրապար, այլ իբրև զՀայրն երկնաւոր. զի նա զշունս և զոչոխիկս և ըզ-

կախարդս կերակրէ, և զինչ ասացից, այլ և զամենեսին իսկ՝ որ զնաւ չարուձիէն իսկ զկերպարանս ուներկին յանձին։ Վասզի ի մէջ այսչափ բազմութեան հարկ է՝ եթէ բազումք են այսպիսիք. սակայն զամենեսին կերակրէ, զամենեսին զդեցուցանէ. և չիք որ երբեք՝ որ ի սովոյ մեռաւ, բայց թէ կամաւ առ վճռանդի ինչ։ Զայսպիս եղիսոյք զիաձք, զի թէպէտ և ինչ լինիցին, և ի վիշտս իսկ, օգնական լինիցիք։ Այլ մեք յայնպիսի անհանձարութեի հասեալ, որպէս ոչ միայն աղքատացն չլինիցիմք ձեռնկալու, որք ընդ մեզ փղոցան յածեալ շրջիցին առ վշտի, այլ և զարս և առաքինիս վանականս բամբասեմք. և թէ այս անուն խաբեբայ է, այս անուն չէ բարի որ։ Ո՞չ յառաջագոյն իսկ ասացի, եթէ ամենեցուն անխտիր տայցեմք, միշտ ողորմածք գտանիցիմք. ապա և թէ քննել սկսանիցիմք, ոչ երբեք ողորմիմք։

Օ՜ինչ խօսիս, վասն պատասխոյ հայի ի խաբեբայից կերպարանս լինիցի. զի եթէ բազում ինչ ոսկւոյ բանք ելիս կամ արծաթոյ կամ պէսպէս հանգերձից կամ ծառայից և աղախնոց, կամ այլ իրիք ինչ այսպիսեացս, յիրաւի որ ասէր զայսպիսին խաբեբայ և կեղծաւոր. իսկ եթէ ոչ վասն այնպիսի ինչ իրաց, այլ վասն պատասխոյ միոջ հայցի, և խղկան միոջ ուր զգլուխն դնիցէ, կարի անմտութեի բանք են. և նա իսկ է խաբեբայ՝ որ զայնպիսի վշտացեալն խաբեբայ համարի։

Դադարեցուք յանպատեհ քննութենէ, ի սատանայական վնասակարութենէն. բայց եթէ զանձն քո հանայ որ առնիցէ կամ երից կամ սարկաւագ առնուանեսցէ, անդ հարկ է քննել. քանզի չէ անպատիժ անխտիր հաղորդութենէն. վասն այնպիսի ինչ մեծամեծ իրաց կայ տագնապ ի վերայ քննել. քանզի ոչ եթէ տաս ինչ, այլ առնուս. այլ թէ կերակրով կամ պախրեիս կարօտ իցէ, բնաւ ինչ մի քննիցես։ Եթէ կամիս՝ զայն քննեա, զիարդ Քրիստոս զօտարսիրութենէն առ ամենեսին՝ որ գային առ նա՝ ցուցանէր. զի եթէ քննիչ որ ինչ և խուզարկ լիներ ամենեցուն՝ որք առ նա մտանէին, չլինէր երբեք արժանի ընդունել զհրեշտակս։ Այլապար քննե-

լոյնը Թերևս զայնպիսի գեղեցիկ հիւբասիրութիւն կո-
րուսանեը. այլ քանզի զամենեսին ընդունելը, ընկա-
լաւ զՀրեշտակն։

Ալիթէ վասն վարուց այնոցիկ որ առնուցունն
տայցէ քեզ ՚ած զվարձան, այլ վասն բարի կամացն և
բազում առատութեան և մարդասիրութեան և բարու-
թեան։ Ո այս այսպէս առնիջիք, և ՚ամ իսկ բարուեցն
հասանիջիք. որոց լեցի ամենեցուն մեզ հասանել
հնարհօք և մարդասիրութ՚ն ՚ան մերոյ ՚Յսի ՚Քի, ո-
րում փառք յաւիտեանս. ամէն։

Յորժամ զհարիւր ամ կեցցէ՝, և գործ ինչ բարի ոչ ցուցանիցէ, բայց զայն միայն զի մեզս ինչ ընդ իւր ոչ առնիցէ. և զայն ոչ եթէ անձամբ[2] ինչ առբար, այլ միայն ընդհօքն փրկեցաւ. և զայլս պատկեալս և լուսաւորեալս և փառաւորեալս առեսանիցէ. Թէպէտ և՝ ի գեհենին չանկանիցի, զիա՞րդ կարիցէ ժուժալ տրտմութեն։

Այս զի օրինակաւ և յայտ արարիչ զիրան, գրեաց՝ Քի՛ր եթէ երկու ղինուորք էին. և միոն գողանայէ, զրկիցէ, ագահիցէ. և միւսն չգործիցէ այնպիսի գործ ինչ յոռի, այլ ժրանայէ, առաքինի լինիցի, նահատակութեա՛ ինչ ցուցանիցէ, ՚ի պատերազմի նշան յաղթութե՛ կանգնիցէ. և ապա իբրև գայցէ հասանիցէ ժամանակ պարգևացն, և նա չայնմ պատուոյ՝ յոր և գողն էր, յանկարծակի յաթոռ թագաւորութե՛ն հասանիցէ, և ՚ի ծիրանեացն և զգենուցու. լինել լինիցի և միւսն վասն մարդասիրութե՛ն միայն չարքունին, և դատ ինչ չտայցէ ընդ գործոցն, զոր գործեացն. և՚ի տրուպ տեղւոջ կայցէ, բայց իցէ չարքունեացն համարոյ, միթէ կարիցէ ժայժ ունել ՚ի տրտմուէն։ Յորժամ տեսանիցէ զայն՝ որ ընդ իւրն էր՝ չայնպիսի պատիւ հասեալ և այնչափ փառաւորութե՛ փառաւորեալ, զի աշխարհի և հրամատար լինիցի, և զանձն այնչափ ՚ի վատթարուէ տեսեալ, և չմտանէն իսկ ՚ի տանջանսն՝ անարգութե՛ ունիցի. քանզի և այն նման ՚ի չնորհացն և ՚ի մարդասիրութե՛ն թագաւորին եղև։ Թէպէտ և թագաւորն թողութե՛ն պատժոցն առնիցէ, սակայն ցանկ ամօթով կացցէ, և չդնիցէ աք նման մեծարանս։

Այս արդ չայնպիսի ինչ թողութե՛ն ոչ ընդ նոսա որք առնուցուն զպարգևսն, այլ ընդ նոցա որ տան՝ զարմանամբ. և ոչչափ զմեծամեծ պարգևս տայցեն,

1 Յօրինակին Յուդա ՚ր
ուրեմն կեցցէ։

2 Յօրինակին ՚ւ եւ ան-
չեմ։

և քան զևս առաւել ամաչէն՝ որք առնուցունն. և եթէ մեծ մեղք և իցէն, որովք աչօք նայել կարիցեն. յորժամ տեսանիցեն յարքունիսն զրազումս և ազգի ազգի քրտունս ի մէջ բերիցեն, և զվերս ցուցանիցեն, և նոցա չգուշէ ցուցանել. այլ և զայլ բերսն և միայն յայ մարգասիրուէն ունիցեն: Օ որ օրինակ եթէ որ զմահապարտ և զդող և զշուն ի մահ տանիցի, և հրաման տայցէ թագաւորն դառնացուցանել զնա անդրէն ի դրունս արքունեացն, չկալցի ընդ որ նայել այնուհետև, թէպետ և ի պատժոցն ազատեցաւ. սոյնպէս և այսպիսին:

Այժ արդ, մի վասն զի արքայութեի ասի, համարիցիք եթէ ամենեքեան ի պատուի իցեն. զի և աստ հազարապետք իցեն, և սպարապետք, և ըստ նոցանէն գործակալք և իշխանք յարքունիս. և այլք ևս քան զնոսա խոնարհագոյնք, և որք զկարի զվերջնի տեղին ունեն, արտաքին սպասաւորքն՝ յարքունի համարի են. թէպետ և կարի իսկ մեծ խոտր իցէ ի միջի հազարապետացն և արքունի սպասաւորացն, սակայն և նոքա յարքունեացն համարի են:

Այժ զայս ոչ եթէ զիմ ինչ ասեմ, այլ Պաւղոսի, որ զայնպիսի առաւելուն ի միջի դնէ, սկսեալ յաբեգահէ մինչև ցլուսին և յաստեղս և ցևս փոքրիկ աստղն. նոյնպիսի ինչ են իւրաքանչիւր պատիւ յարքայէն: Օ ի բազում առաւելուն, ընդ հազարապետն և ընդ արտաքին սպասաւորն, ընդ արեգակն և ընդ փոքրիկ աստղն ի միջի կայ. և այս ամենեցուն իսկ յայտ է: Օ ի արեգակն զնմ իսկ տիեզերս լուսաւորէ. իսկ լուսին և զաստեղս ևս բազումս ծածկէ. և է ինչ աստղ՝ որ բնաւ իսկ չերևի, և զի մութ ևս իցէ. քանզի բազում աստեղք են՝ զոր և տեսանեմք իսկ ոչ: Իսկ յորժամ զայլ տեսանիցեմք արեգակունս, և մեք զաստեղացն զփոքունսն զկարգ ունիցեմք, որ և չերևեսցին ևս, բայց եթէ դոյզն ինչ ընդ աղքատս, որպիսի՞ ինչ միխիթարութիւնն կայցէ մեզ անդ:

Այլ որդեակք, աղաչեմ, մի վատք, մի ծոյլք, մի զփրկութեին այ վաճառեմք ծուլութիք, այլ ջանասցուք ի բազում շահս և ի տոհմականս ածել. թէ-

պէտ և երթայ ոք իցէ, սակայն զՔ՚ի գիտէ, այլ զՀաւատն Յանեաւ, այլ զՅանձեղէն բանսն լսէ, այլ ՚ի գիտութենէն չէ ինչ հեռի, գիտէ զկամս նոր իւրոյ։ Ընդէր յապաղիցէք, ընդէր հեղգայցէք. չէք ինչ լաւ քան զարս բարիս և աստ և անդ։ Ուր լուսաւորեալս և երթայսս զինչ Յանէք իցեն հրամանքն։ Կին կալ, ասէ, և ՚ի ցանկութենէ կացչիր. և այն դժուարին ինչ իցէ։ Օ իմոյդ. ուր և բազում իսկ առանց կանանց ցանուն. ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք։ Որով յառաջագէմ լինի հեթանոսն յաղագս մաս պարծուէն, դու ընդէր ոչ զնոյն պահիցես յաղագս այ երկիւղին։

Ցնէր, ասէ, աղքատաց յընչից՝ զոր ունիս. և Յանոր ինչ իցէ։ Ա՚կա ևս այնու իսկ կշտամբեն զմեզ հեթանոսք. զի բնաւ իսկ զարարսն Քաւիչն տան վասն մնապարծութենէ։ Այ՚ի, ասէ, ՚ի խեղկատակու-թիս հատանիցիս. և այն դժուարին ինչ իցէ. և թէ չէր իսկ պատուիրեալ, չէր պարտ Յամ գնել լեզուի, զի մի անառակ երևիցիմք. և զի խեղկատա-կուին դժուարին է, յայտ յամօթոյն և պատկառա-նացն է. զի յորժամ այնպիսի ոք ինչ խօսեսցի, իսկ և իսկ ձաղ լինիցի. և նա խեղկատակիցէ իսկ ոչ, եթէ չիցէ արբեալ։ Ընդէր յորժամ ՚ի հրապարակի մէջ նստիցիս, և կամ ՚ի տան՝ ընկերաց առաջի չխօսիցիս այնպիսի ինչ. ոչ ապաքէն ՚ի մերձաւորացն ակն ածիցես։ Այլ գնով առաջն ոչ վայրապար շաղշափիցես. զի մի գնա թշնամանիցես, չառնես ինչ այնպիսի. և զնոճ թշնամանիցես, և չակնածիցես, որ յամ տեղիս մատ է, և զամ ինչ լսէ։

Այ՚ի արբենար, ասէ. և այն գործքն իսկ տանջանք են։ Ջասաց եթէ Յալեաւ զմարմնդ, այլ թէ մի այն չափ ընկողնեցուցաներ՝ մինչև զգուշոյն իշխանութենին ՚ի միջոյ բառնալ։ Այ՚արմնոյ խնամ մի տանիր ՚ի ցանկութենի. մի յափշտակեր. որ ոչ քո իցէ մի պահեր. մի առաւ երգնուր. և այս աշխատութենէն ինչ իցի կամ քրտունք։ Այ՚ի բամբասեր, ասէ. մի զուր զումարք խօսիր, և դու յանձին ևս եղեւան կաս։ Յորժամ զումարք խօսեսցիս, ՚ի վտանգի հասանիցէ կալ, ՚ի կարծիս անկանել, ՚ի հոգս մնանել, թէ գուցէ լսիցէ

զորմէ չարն խօսեցաւ, եթէ մեծ ոք իցէ և եթէ փոքր· ի մեծէն իսկ արդեամբք վաղվաղակի պատժիցիս· և ի փոքունէն որչափ ինչ ձեռնհաս իցէ· և ոք ևս դժնդակն է, զի մեծամեծս և անպատաս զքէն խօսեսցի։

Զնոյն ինչ ծանր, չէն ինչ խիստ հրամանքն զոր առաք, եթէ կամիցիմք· ապա թէ ոչ կամիցիմք, և թևեթևն մեզ ծանր թուիցի, և դիւրինն դժուարին։ Ո՛րչափ դիւրին քան զուտեղն կայցէ· այլ բազումք առ զմայլութեամբ և ընդ ուտեղն տաղտկան· քանզի ի բազմաց լսեմ, թէ ուտեղն աշխատութիւն է, Զիք ուրեք աշխատութիւն եթէ կամիցիս· զի ամ ինչ ընդ կամելոյն կայ, յետ վերին չնորհացն։ Զոր արդ կատեսցուք զբարիս, զի և յաւիտենից բարութեանցն հասանիցեմք ի Քէ ի տր մեր· ընդ որում վայել միանգամայն և հոգւոյն սրբ փառք և զօրութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

ՈՒՐՑՈՒՔ այսուհետեւ և մեք, մոռասցուք զաւրինս մեր. ոչ զմեղաց մերոց ասեմ. քանզի զմեղացն ասէ, Թէ նախ դու յիշեա և ապա ես ոչ յիշեցից։ Այսպիսի ինչ է զոր ասեմն. մի յիշեսցուք յափշտակել այլ յիշեսցուք զյափշտակումէն, և անդէն ի տեառս դարձուսցուք. և մոռանալ զարիւնն այն է, յորժամ ի բաց մերժիցեմք ի մտացն զխորհուրդսն յափշտակիչս, և մի երբեք անդէն ընդունիցիմք. այլ և զմաղուց գյանցանսն ի բաց մերժիցեմք։

Այս ուսոյ լինիցի մեզ մոռացումն չարեացն։ Ի բարուքեցն յիշատակաց, յոյ երկիւղէն. զի եթէ ցանկ զայծ յիշեմք, չախորժիցեմք զարիւնս յիշել ըստ այնմ, Թէ " Ցիշեցից զքեզ յանկողնի իմում. և ընդ առաւօտս կանխեալ խորհեի ընդ քեզ "։ Այնչա իսկ և ցանկ. բայց առաւել յայնժամ պարտ է յիշել զայծ՝ յորժամ յապահով իցէն միտքն, յորժամ այնպիսի յիշատակաւ գատախազ անձինն կալցիցէ լինել, յորժամ նահանջել զինքն մարթիցէ յիշատակաւն։ Ի՞նդ ի տուէ Թէպէտ և յիշեմք, մնանեն այլ հոգք և զբօսանք, և հանեն զյիշատակն ի մտաց. իսկ զցայգն միշտ գիւրաւ է ածել զմտաւ. յորժամ ի հանդարտութենն հանդուցեալ են միտքն, յորժամ ի նաւահանգիստն հասանիցէ, յորժամ յանքոյթ ի հոգմոյն անկանիցի։

" Օ՜որ լինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջ ջացարուք ". պարտ է, ասէ, և զցերեկն զնոյն յիշատակ ուսել ի մտի. բայց զի ի հոգս և ի պատրանս աշխարհիս զբօսեալ էք, ասէ, գԼեթ ի քնոյն ժամն յիշեցէք զայծ։ Այս ընդ առաւօտս զնոյն ածցուք զմտաւ. զի եթէ ընդ առաւօտս զնոյն խորհիցիմք, ի բազում դգուշութենէ պահեմք զիրս մեր. նախ Թէ զայծ հաշտ առնիցեմք աղօթիւք և խնդրուածովք, ոտն ոտն յառաջ մատուցեալ բնաւ չունիցիմք իսկ զոք Թշնամի. Թէպէտ և ունիմք զոք, քամնհեաղիք, յորժամ զայծ ընդ քեզ հաշտ առնիցես։

Պատերազմ է՝ ի հրապարակս. կռիւք են՝ ի ցեղեկուլեէ իրս. ծովածփանք և ձմերուկք, վասն այնորիկ զինուց պէտք են. և մեծ զէն աղօթքն են։ Հոր-ժամ ուղիղ հողմովքն յառաջ խաղայցէ, և մեզ պատ է իմանալ զամենայն, որպէս զերկարաւուն տունջեանն առանց նաւակոծուէ վնաբեալ և առանց վէրս ինչ յանձն առնելոյ. զի բազում խուժք պատահին հանապազ, և բազում անգամ բաղխին նաւք և ընկղմին։ Վասն այնորիկ և աղօթից պէտք են, մանաւանդ առաւօտին աղօթից և ցայգուլեայ՝։

Օ ըմբշամարտն բազմաց՝ ի ձէնջ բազում անգամ տեսեալ է. և ոչ միայն տեսեալ այլ և յորդորիչք և զարմացօղք կռուոյն լիեալք, և ոմն՝ ի տոքա կոյս և ոմն՝ ի նորա։ Պետեք զիմիրդ զաւուրքդն մարտից՝ զդիշերն ամ ողջոյն շրջի քարոզն և ազդառնէ. ոչ զայլ ինչ հոգայ, այլ զայն և եթէ ազդ առնէ, զի մի եկեալ ծանակ ինչ կայցէ՝ որ՝ ի մարտն մտանելոյ իցէ. և որ շուրջն դեգերեալ նստիցին, պատրիրէն փոզարին՝ մի վայրապար ընդ ուժք խօսել, և մի զիսուքն և զոգին ծախել, և ծաղր և ծանակ կալ՝ ի ժամուն։

Լսակ որ մարդկէղէն կռուան պատրաստելոց իցէ՝ այնչափ հոգաբարձուեէ պէտք են, որչափ և առաւել մեզ պարտ է փոյթ յանձին ունել և հոգալ. զի ամ աւուրք մեր պատերազմաց են։ Լաւ արդ ամ լսակ զիշերք հակառակն լինիցին մեզ, և միշտ հոգ անձին ունիցիմք՝ եթէ զիմիրդ զօրն՝ ի գլուխ հանիցեմք, զի մի ծաղր ինչ և ծանակ կայցեմք։ Լաւ երանի թէ ծաղր միայն. նա աւանիկ նստի ընդ աջմէ հօր յաղթարիչ պատերազմացն, և լսէ հաւաստեաւ, զի մի ինչ անդէպս խօսիցիմք, մի ինչ արտաքոյ քան ըզնաւագան. զի ոչ միայն արդեանց, այլ և բանից է քննիչ։

Վկեսցուք, սիրելիք, քանզի և մեք ունիմք յորդորիչք, եթէ կամիցիմք. քանզի իւրաքանչիւր հրեշտակք նստին չուրջանակի, և մեք խորդամք զցայգն ամ. և երանի թէ զայն միայն առնէաք. այլ բա-

1 Յորինակին ՚ռնւ-ՆՆ։

զուարք և աղտեղուհիս և բազում գործեն, ի գետ-
նախշտիան փուքացեալ ընթանան. և այլք զիւ-
բեանց տունս պոռնկոցս առնեն, և զբոզս և ի վանս
ածեն. և կաթի իակ անպատեհս. քանզի ոչ բարիոք
հոգան զպատերազմիս. և այլք արբենան և բարբա-
ջեն. և այլք աղաղմաղակեն. և ոմանք ի չարիս
սկեն, և զայնցանէ՝ որք ննջիցեն՝ նիւթեն նենգու-
թիս. և կէսքն զվաշիս և զտոկոսիս հաւաքին. և այլք
յայլ հոգս հեղձեալք. և ամենևին զամ ինչ համա-
րին, բայց միայն ի պատերազմիս պատշաճից յետ-
նեալք գտանին։

Վ ասն որոյ աղաչեմ, զամ թողեալ ի մէն միայն
հայեցուք, զի զյաղթուքին առնուցուք և պսա-
կացն հասանիցեմք. և զամ ինչ արասցուք, որով
կարօղ լինիցիմք խոստացելոց բարութեցն հասանել.
որոց լեցի ամենեցուն մեզ հասանել՝ ի Քն ի տր
մեր. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ
փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։

Այ արդ մի ոք որ մեռելոտի գործս ունիցի՝ մտա-
նիցէ այսր։ Ո՛ր որ ՚ի մեռեալ մարմինն մերձենայր՝
չէշխեր մտանել ՚ի սրբութիւն, որչափ և առաւել որ
զմեռելոտի գործսն ունիցին՝ անշնարին պղծութիւն։
Մեռելոտի գործս են, որ ամենևին չունին գկին-
դանութիւն, հոտ չար են։ Ո՛ր օրինակ և մեռեալն
է իմիք պիտանացու, և ամենևին ոչ զգայ, այլ և
տրտմեցուցանէ և զայրոսիկ, որք մերձենայեն ՚ի
նա. նոյնպէս և մեղք վիրաւորեն զիսորհուրդս, և
չտան Հոգւոյ մտացն խաղաղել, այլ խռովեն և ապա-
կանեն։

Այսչ և ախտ ինչ ժանտ, որ ՚ի միում տեղւոջ
մարմնոյն ծնանիցի, և զամ մարմինն ապականէ.
այսպիսի են մեղաւորք, և չեն ինչ ընդհատ ՚ի ժանտ
ախտին. և ոչ նախ զոգս ապականեն, և ապա զմար-
մինն, այլ վաղվաղակի զոգիսն բորբոքեն։ Չտեսա-
նիցես որ զժանտ ախտն ունիցի, զիարդ այտուցեալ
տորոմեալ չրջին, և չար հոտով ընուն գվայրս. զիարդ
երեսքն դեղնեալ, գոյնն եղծեալ, և ամենևին չա-
բատեալ. զի ոչ մտ ոք կարիցէ երթալ։ Ո՛չնպիսիք
են մեղաւորք, թէպէտ և ինքեանք զանձինս ոչ տե-
սանիցեն։

Այ արդ աղէ՝ ասաս, քան զամ ջերմկալ չիցէ և
չար՝ որ ՚ի յանկուրթիս մարմնոյն հարեալ իցէ. չիցէ
քան զամ պիղծս չար աղտեղի՝ որ զամենագործս ծա-
նակաց առնիցէ և յանձին կրիցէ։ Ո՞ ոք քան զըն-
չաւէտն աղտեղի իցէ. զոր ինչ բոզն ՚ի պոռնկոցս
չգանդաղին գործել, նոյնպէս և ոչ նա. մանաւանդ
թէ նոքա գանդաղիցին ինչ, և նա ոչ։ Ո՛ ծառայի
բարոյս յանձին կալեալ, ստկ որոց չիցէ պարտ ստը-
կել և գարձեալ խանդարեալ, որ ոչն վայել իցէ. ամ-
ուրեք ոչ զկշիռն գնալ։ Վերևս և մարդոյ չարաց և
ծերոց աղշատելոց, որ կարի խակ քան զնա աղքատա-
գոյն իցէ, նատեալ ատկիցէ, և զառաքինիս և զպի-
տանիս թշնամանէ։ Ցեսանես՝ զիարդ ծանակ իցէ

յերկուցունց կողմանց, զի և վատթար անչափ է և ամբարտաւան։

Ի՛ՍԼ անցեալ կան 'ի բազանոյն պռունիկքն. և այն իսկ են անհնարին պատիժք՝ զի զմարմինս ընդ ընչիցն վաճառեն։ Ի՛ՍԼ և աղքատութիւն է, ասեն, և քաղցի վտանգ։ Ա)նչափ և այն իսկ չիցէ բաւական՝ հաձել 'ի հաւանեցուցանել. զի մարթի եր նոցա գործ գործել և զիւրեանց հաց ուտել։

Այլ քան զայն ևս չար այն է, յորժամ ագահն ոչ 'ի պռունկոցի խցին, այլ 'ի քաղաքամիջի կայցէ, և զոգիսն մատնեսցէ սատանայի, զի մանիկ առ նա իբրև առ բոզ, և զնմ ցանկութիւնն իւր կատար իցէ, ելանիցէ. և տեսանիցէ նմ քաղաքն, ոչ երկու արք կամ երեք։ Այլ բոզիցն այն առանձինն գործ է, զի որ զօսկին տայցէն, նմա ևեթ երթան. եթէ ծառայ ոք իցէ և եթէ խաչմարար ոք, և զինչ և իցէ ոք, զկապէնս ' խոստանայցէ, յանձն առնուն. և ա֊զատաց՝ թէպէտ և կարի ոք աղնուականք իցեն՝ ա֊ռանց արծաթոյ չհաւանին։ Այսպէս և ագահքն, 'ի մարդս ուղիղս՝ որք արծաթ չունիցին, չհաւին. և 'ի պիղծս և 'ի գազանամարտս մտանին վասն ոսկւոյ. և գրէ եթէ ընդ նոսին ծանակին, և եղծանեն զգեղ֊ոգւոյն։ Որպէս բոզքն գունատք և երիվացեալք և գեղջուկք և սոնքացեալք և յարուցեալք՝ զարիս ևեթ ծնանին, և ամենևին չարատեսք, խմոտք և երևոյթք. և որպէս բոզքն զի ոչ ձառաւ և սրն֊կուրաւ զարտաքին տգեղութիւնն կարեն ծածկել, նոյնպէս և ոչ ագահք կեղծաւորութիւնն զչարիս։ Որ֊պէս յորժամ հոտ ինչ չար բուրիցի, թէպէտ և բեւր ազգի ազգի ոք ինչ հնարս հնարիցէ՝ չկարիցէ ցածու֊ցանել։

Այլ զի անամեթ բարքն ածէն 'ի պռունկուէ, լուա֊րուք մարգարէին որ ասէ. "Ի պրծեցար անամեթե֊ցար առ ամենեսեան, և երեսք կնոջ պռունկի եղեն քո"։ Ո՞այս և առ ագահն 'ի դէպ է ասել, եթէ լպրծեցայք անամեթեցայք ոչ առ սոսա կամ առ նո֊սա, այլ առ ամենեսին իսկ։ Ցե՛ս զիարդ ոչ 'ի հօրէ

1 Յօրինակին կոտոր։

կամ յորդւոյ, և ոչ ի կնոջէ և ոչ ի բարեկամէ և ոչ յերախտաւորէ և ոչ յումեքէ բնաւ ակն ածիցէ այն պիսին։ Եւ զինչ ասիցեմ եթէ ի բարեկամէ և յեղբօրէ և ի հօրէ, ուր և յայլ իսկ չակնածէ. և զամ ինչ առասպելս և ծաղր համարի. քանզի ի բազում ցանկութիւն և ի լսելիսն անդամ չհանդարտէ ընդունել զօգտակարսն։

Այլ վայ անպատեհութիւնն. որպիսի՞ բանս խօսին։ Այ քեզ, ասեն, մանկայ, և որ զքեզ չունիցին. և ընդ այն իսկ ե կարի ցաւալին մտմտալ։ Եւ վայ այնոցիկ՝ որ զայնն ասիցեն, թէպէտ և ընդ խաղ ասիցեն. այնպիսի սպառնալիս սպառնացաւ Յոբ. " Իմչ կարէք, ասէ, երկուց տերանց ծառայել ". և դու լսես զանհնս զսպառնալին։ Իսչ կռապաշտութիւն կոչեաց զագահութիւնն Պաւղոս, և զագահն կռապարիշտ. և դու մատուցեալ կաս առ խառնիճնոյ՝ կանայս, և ընդ ծաղր արկեալ խօսիս զանօգուտս ի բոզանոցս և ի մէջ գուսանաց. և այն իսկ ե՝ որ զայմ եղծ ապա կանեաց։

Ծաղր կացին մեր իրք և զրոյք. յայսմ և ի կա տակաստ եղաք ամենեքին. և չիք ինչ ուղղութիւն և ոչ համեստութիւն և ցածութիւն։ Եւ զայս ոչ առ աշխարհականս միայն ասեմ, այլ գիտեն զորոց ասեմն։ Ծաղու լցաւ եկեղեցի. եթէ յանկարծ ոք ընդ խաղ և կամ բարի ինչ բանս խօսեսցի, վաղվաղակի ամենեքին զբերքիչ բառնան. և այն իսկ են կարի աղէտք, զի անգէն յաղօթիցն ժամն չդադարեն կարի ինն ծաղուն։ Իմ ուրեք գտանէ մուտ սատանայ. անարգեցաւ քամհարեցաւ Իմ, յոլինչ համարեցաւ եկեղեցի։ Ասես Պաւղոսի, որ ասէն, եթէ " Իմ անառակութիւն և լկտութիւն և խեղկատակութիւն բարձի ի ձէնջ ". և դու զայն լսես, և ի խեղկատակութիւն հատեալ ես. և բանս մերոյս և անօգուտս խօսիս, ծիծաղիս և այլազունես զերեսս։

Այ անականդ՝ որ ի սուգդ ես և ի խաչ ելեալ, ծիծաղիս և խնդաս. աղէ ասա, Իմ այնպիսի ինչ ոք արար. լուար երբէք յումեքէ։ Այ տրտմեցաւ

1 Ցօրինակին առ ընտ խառնիճոյ։

բազում անգամ. զի յորժամ ընդ Աբրուսաղէմ նայեցայ՝ տրտմեցայ. և յորժամ զմանչէն ած զմեռաւ՝ խռովեցայ. և յորժամ զԱ ազարն կամիր յարուցանել՝ արտասուեաց. և դու ծիծաղիս և ան համիս։

Որ վասն այլոց մեղաց չտրտմիցի, պատժոց արժանի է. իսկ և որ ոչ վասն իւրոց մեղացն չհոգայցէ ինչ, որպիսի՛ ինչ Թողութեանն արժանի լինիցի։ Ետ սգոյ ժամանակ է և նեղութեան և ձնշելոյ զմարմնդ, և հնազանդեցուցանելոյ, և պատերազմաց և քրտանց, և դու ծիծաղիս և լկտանաս. չտեսանես զիարդ պատուհասեցան Առաւ. չսիցես զինչ ասաց Աւետ. "Ա՛ւ, ասէ, որ ծիծաղիցիդ այժմ, զի նորա լացցեն,, ։ Ի սաղմոսին հանապազ զայդ ասիցես. միթէ ասիցես՝ թէ ծիծաղեցայ. և ոչ երբէք. այլ եթէ "Ա՛ստահեցայ ես ի հեծութեանէ իմէ,,։

Այլ թերևս ոմանք այնպէս լսիցէք և անխորատք իցեն, զի և աստէն իսկ ի պատուհասիս ծիծաղեսցին, մինչ դեռ զծաղուէն խօսիցիմք. զի այնպէս անսաստ է յանդգնութեանն, մինչև զպատուհասն անգամ չառնու ի միտ։ Այլ քահանայն ով և զամենեցուն աղօթս մատուցանէ, և դու ծիծաղիս և չերկնչիս. նա զհարեալ և վասն քո աղօթս մատուցանէ, և դու արհամարհես։ Լսիցես զրոց. "Ա՛ւ արհամարհողաց,, և դու չզարհուրիս, և չդնես փոքր ի համանձին։ Յորժամ յարքունիսն հասանիցէ մտանել կերպարանօք և հայեցուածովք և գնացիւք և ամենայն իրօք զարդարեաս զանձն, և ասա՝ ուր բուն իսկ արքունիք են, և այնչափ՝ զի ամ իսկ երկնաւոր է, ծիծաղիս և խօլանաս։ Այլ ոչ վասն զի դու ինչ չեռանաս. բայց սակայն լուր, զի հրեշտակք շրջին ընդ ամենայն տեղիս, և մանաւանդ ի տանս այ շուրջ բակ առեալ զթագաւորսն. և ամենայն տեղիք լի են անմարմնական զօրութիւք։

Ա՛յս բանս և առ կանայս ասասցուք, որք առանց առաջի չիշխեն լկտանալ, և ոչ միշտ քթուել, այլ յորժամ հանգստեան ինչ ժամանակ լինիցի. և աստ ցանգ սքօղարկեալ՝ զգլուխ ծածկեալ քրքջին։ Ա՛ւ կին դու, որ նստեալ կարկաջիցես, յեկեղեցի

Եկիր զմեզս խոստովան լինել, առաջի ՚ի անկանել, աղօրմուելի խնդրել, պաղատանս վասն յանցանացն ինչ զոր յանցեր՝ պաղատել, և դու ՚ի ծաղր հա-տեալ ես. և զիա՞րդ կարիցես հաշտեցուցանել ընդ քեզ զնա։

Եւ ծաղրն չար ինչ իցէ, ասեն, Ո՛չ եթէ ծաղրն չար ինչ իցէ, այլ անժամն և անչափն. յայն սակս անկեալ է ՚ի մեզ ծաղրն, զի յորժամ զբարեկամս տեսանիցեմք, ուրախ լինիցիմք, և յանկարծ ուրեք զբօսնուցումբ. և կամ յորժամ զարտասուալն և տրխ-րեալս, մխիթարիցեմք ժպտելով. և ոչ զբբբիլ բառ-նայցեմք, և հանապազ ՚ի ծաղր հատանիցիմք։ Յայն սակս անկեալ է ծաղրն ՚ի սրտին, զի զբօսանք սրտին լինիցին, և ոչ զի այլապէսի։ Ա՛յս և ցանկութիւն մարմնոյ անկեալ է ՚ի մեզ, և ոչ վասն զի անկեալ է՝ հարկ ինչ ՚ի վերայ կայցէ միշտ ՚ի կիր արկանել և կամ զանչափն. այլ նահանջիմք, և չասեմք՝ վասն զի կայր ՚ի մեզ՝ պարտ էր ՚ի կիր արկանել։ Ա՛յս-սուօք ծաղայեսցես ՚ա՛յ, զի կարիցես լուանալ ՚ընդ մեզն։

Վիտեմք զի բազումք ունէաք իսկ առնեն մեզ, յոր-ժամ վասն արտասուաց ինչ ձաւիցեմք. վասն այսո-րիկ ժամանակ է արտասուաց։ Վիտեմ զի խաբէն զանձինս ոմանք և ասեն. "Ա՛երիցուք արբցուք, քանզի վաղիւն մեռանիցիմք։ Ա՛նոտի մնոտեաց, ամենայն ինչ մնոտի է ,,. և զայս ոչ եթէ ես ասեմ, այլ նա որ զնա՛մ իւրաց զփորձ գիտէր. "Ը՛նեկի, ասէ, ինձ ա-պաթանս, և մնկեցի այգիս. աւազանս ջրոց կազմե-ցի, արարի ինձ տակառապետս արս և կանայս ,,. և զինչ չէտ այնր ամենայնի. "մնոտի մնոտեաց, ա՛մ ինչ մնոտի է ,,։

Ա՛ուգ առցուք և մեք, սիրելիք, սուգ առցուք, զի սերտիւ ծիծաղիցիմք, և արդարև ուրախ լինիցիմք ՚ի ժամանակի ձչմարիտ խնդութենէն։ Ո՛ի ընդ այս խնդութիւնս ապաքէն և տրամութիւն խառն իցէ, և չիք երբեք զսա սո՛ր գտանել. իսկ այն սերտ և աներ-կեան է, և չիք ինչ ՚ի նմա նենգութի խառն. ընդ այս

1 Յօրինակին լուանել։

ուրախութիւն ընկրկեացուք։ Ոչ պղտղդ ևս. չէ հնար այնմ հասանել, եթէ ոչ յորժամ ախորժեմքն և ցանգ յօգուտն յօժարագոյն լինիցիմք. և սակաւիկ մի ընդ նեղութեի եկեալ կամօք և գոհանալով, ամ վշտաց տանիցիմք. ոչ այնպէս կարասցուք և արքայութեանն երկնից հասանել. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել՝ ի Քն Յն ի տր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այ մեք առ վհատեալն զնոյնս ասացուք, եթէ արդարև լինելոց են տանջանքն, արդարև գալոց է, և առ դուրս կան այսուհետև իրք յարութենն։ Այլ ուստի՞ յայտ իցէ, ասէն։ Ցասեմ ՚ի գրոց, չասեմ ՚ի մարգարէից. քանզի ոչ եթէ ընդ քրիստոնեայս միայն են լինձ առ այժմ բանքս, այլ թէ և հեթանոս ոք իցէ՝ կարի վստահիմ ցուցանել օրինակս և ուսուցանել։ Օ՛խ՚րդ, ասէն, և ուստի՞։ Խաղում լինչ յառաջագոյն ասաց Պլա՞տ. և եթէ չէլ այն ամենայն ՚ի գլուխ, մի՛ հաւատայցես այլոցն ևս բանից. և եթէ էլիս ՚ի գլուխ և կատարեցան, ընդէր երկմտիցես ՚ի միացելոցն. թէպէտ և կարի անհաւանուն էր, թէ չէին կատարեալ առաջինքն, այլոց հաւատալ. քան՝ զի յորժամ ՚ամ կատարեցաւ, այլոցն որ չև են լեալ՝ հաւատալ. մանաւանդ զի օրինակաւ ևս յայտ արարից զիրսն։

Այսց պլա՞տ եթէ Խրուսաղէմ առցի, և այսպիսի աւերածով աւերեսցի. և էլ ՚ի գլուխ կանխասացութենէն։ Այսց՝ եթէ եղկցի նեղութիւն մեծ, և էլև։ Այսց՝ թէ որպէս մանանեխս սերմանի, այնպէս՝ տառածեսցի քարոզութենէն, և զնոյն տեսանելեմք հանապազ ընդ ՚ամ աչխարհ ընթացեալ։ Այսց՝ եթէ որք թողուցուն զկայր կամ զմայր կամ զեղբարս կամ զքրոջս, ունիցեն հարս և մայրս. և զայն արգեամբք իսկ տեսանելեմք կատարեալք։ Այսց՝ եթէ յաչխարհն աստ նեղութիւն հասանիցէ ձեզ, այլ քաջալերեցարուք, ես յաղթեցի աչխարհն. այս ինքն է՝ թէ ոչ ոք իցէ որ ձեզ յաղթիցէ. և զայս արգեամբք իսկ տեսանելեմք ելեալ ՚ի գլուխ։ Այսց՝ եթէ դրունք դժոխոց ոչ յաղթահարիցեն զեկեղեցի, և այն զի ՚ի հալածանս կայցէ, և ոչ ոք իցէ որ չինջուցանիցէ զքարոզութենէն. վկայեաց և այսմ կանխասացութենէն փորձ իսկ իրաց. թէպէտ և կարի առանց հաւանուելոյ էր, յորժամ զայս ասէր։ Ընդէր. զի ամենայն բանք էին, և չև ևս հանդիպ ցուցանէր բանիցն. որպէս զի

կարի իսկ հաւատալի եղև այժմ։ Այսց՝ եթէ յոր-
ժամ քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն հեթա-
նոսս, ապա եկեսցէ կատարած. ահաւասիկ այսու-
հետեւ մնա՛ ի վախճան եկաք հասաք. քանզի՛ ի մեծ
մասն աշխարհիս քարոզեցաւ աւետարանն. այսու-
հետեւ եկն եհաս կատարած. երկիւղած սիրելիք։

Այլ աղէ՛ ասա, զի՞ հոգայցես վասն կատարածի.
Թէպէտ և մնա իսկ է. զի իւրաքանչիւր կեանք կարճ
էն և մնա՛ ի վախճան։ "Այո՛ւրք, ասէ, ամաց մերոց
՛ի նոսա եօթանասուն ամ, և եթէ ևս քա՛զ ուժգուն
ամ"։ Ուրեմն է օրն դատաստանի, երկիւղած զար-
հուրեսցուք։ "Այդպայր ոչ փրկէ և ոչ փրկեսցէ
մարդ"։ բազում անգամ զղջանայցեմք անդ. այլ
՛ի մահու ոչ ոք է՝ որ խոստովան լինիցի նմա։ Ա՛ման
այնորիկ ասէ, "Այանխեսցուք քան զերեսս նորա խոս-
տովանութե՛ամբ", այսինքն է քան զդալուստ նորա։ Այստ
զինչ և առնիցեմք, ուրի զօրուԹի՛. իսկ անդ՝ ոչ ևս
այնուհետեւ։ ԱյԹէ՛ ի հնոց ջեռուցեալ արկանէր ոք
զմեզ վայր մի, ոչ ապաքէն զնո՛ւմ ինչ խոստանայաք
տալ վասն ապրելոյ, եԹէ զինչս վաճառել, և ՛ի ծա-
ռայութիւն մատանել։ Այանզի որ ՛ի կաւս անհնա-
րինս անկանիցին, զնո՛ւմ ինչ խոստանան տալ՝ եԹէ
հնար ինչ լինիցի ՛ի կաւոցն ապրել։ Այւ եԹէ ժա-
մանակեան կաւքն այնպէս ՛ի տագնապի[1] կացուցա-
նեն զմեզ, անդ զինչ գործեսցուք, յորժամ ոչ ինչ
օգնիցէ մեզ, բայց միայն զեղջն և ապաշաւն տանջի
ցի զմեզ։

Արբասի չարեօք լի եմք, և ոչ զգամք. զմիմեանս
խածանեմք, զմիմեանս ուտեմք, մեղանչեմք, ամբաս-
տանեմք, բամբասեմք, ընդ ընկերաց փառս խան-
դամք։ Այւ տես զանհնարին չարիսն, յորժամ կա-
միմք զընկերացն մեծարանս ձագել. այլ այլս լիմն,
ասէ, խօսիմ զայսմ անուանէ. ա՛ծ Թող ինձ, մի՛
մեղս համարիր. սուտքս լուանա։ Այւ ընդէր բնաւ խօ-
սեցիս զոր ոչն գիտիցես։ ԱյԹէ չհաւատան՝ զորմէ
խօսիցիմն, զի՞ հաւատալի առնես զլուրն շատախօսու-
Թի՛. ընդէր տարածանես զբանն՝ որ ոչ ևն ձշմա-

[1] Βορβόρῳ πηλοῦ κατέχωσε։

բիա · դու չհաւատաս , և զնոճ աղաչես զի մի մեղս հա-
մարիցի · մի իսկ խօսիր , այլ լուռ լեր , և յամենայն
երկիւղէ ազատ լինիցիս։ Ա՛յլ էիտեմ՝ ուստի ախտս
այս եմուտ ի մարդիկ ։

Ի շահաւասութեն հատաք , ի ցոփութեն և ի շաղ-
փաղիւթեն , չպահեմք զանձս ի մտի · լուր խնամա-
նոյն՝ որ խրատեւ և ասէ ։ « Ի ուսոյ ինչ բան , մեռցի
ի քեզ · վստահ լեր , ոչ եթէ ծակէ գքեզ և ելա-
նէ ,, · և գարձեալ եթէ լուաւ ինչ բան մարթս , և
երկնեաց , որպէս՝ յերեսաց մանկան ծննդականն ։
Ի չարախօսութեն պատրաստ եմք , ի գատապարտու-
թեն կազմ գտանիմք , թէպէտ և այլ ինչ չարիս չէր
գործեալ մեր , այն իսկ բաւական էր կորուսանել
զմեզ և տանել ի գեհենն · նոյն իսկ արկանել ընդ
բազում չարեօք ։ Ի՛ զի ստոյգ ուսուցանիցիս՝ լուր
մարգարէին · « Ա՛ստեիր , ասէ , զեղբօրէ քումմէ չա-
րախօսիր ,, ։

Ո՛չ ինչ խօսիմ , ասէ , այլ այլք խօսին ։ Ա՛յս դու
իսկ խօսիս · եթէ քո չէր ասացեալ , թերևս միւսն ոչ
լսէր · և եթէ լսելոց ևս էր , դու մեղացն չէիր պար-
տական ։ Վէզ արժան էր թաքուցանել և ծածկել
զյանցանս ընկերին , դու աշաւադիկ ձաղես և զվայ-
րօք ածես , պատճառանօք՝ թէ վասն արդարութեա
առնիցես · չլինիցիս ամբաստան , այլ շաղփաղփ և
ցոփ և փքբրոգի գտանիս , մարթոանաս և չիմանաս ։
Ո՛ չարիք , և անհնարին աղէտք · զքեզ ընդ նմին
յամենի առնես , և չառնուս ի միտ ։

Տէս զրչափ չարիք անտի ծնանին · բարկացուցա-
նես զնոճ , գայթակղեցուցանես զմարդիկ · Ըսկի-
ցես զինչ ասէրն Պաւղոս զայրեացն կանանց · « Ո՛չ
միայն գատարկք ուսանին , այլ և շոգմոգ և քննողք
և շրջողք տանէ ի տուն , և խօսին զոր ոչ է պարտ ,, ։
Որպէս զի ստոյգ իցեն բանքն՝ որ ասացին զեղբօրէն ,
սակայն պէսպէս չէ պարտ խօսել , մաղ թէ յորժամ
տուտ ևս իցեն ։ Ի՛մնասն ուրեք անձին և եթէ զգոյշ
լինիցիք · երկնիցիս՝ եթէ գուցէ պատժիցիս յայ-
սպա երկիր՝ եթէ գուցէ վասն շատախօսութեն պատ-

1 Յօրինակին պակասէր «դէ»։

ժիցիս ։ Օ՛ի անդ չիք ասել եթէ ինձ մի՛ մեղս համա-
րիցիս ածՙ. քանզի շատխօսեցար և անձամբ անձին
կուտեցեր մեղս ։ Օ՛ի ձաղես, զմի՛ ածցես զվայրօք,
ընդէր այդչափ աձեցուցանես զսակաւ բանսն. գի-
տասջիր զի այնպիսի չարիք կորուսանելոց են զքեզ ։
Ա՛ան այնորիկ ասէ Վ՛ՀՀ. " Ա՛ի դատիք, զի մի՛ դա-
տիցիք ". և չէ ումիք ինչ փոյթ. և ոչ փարիսեցւոյն
գործքն խրատեն զմեզ. նա ասէր ստոյգ ինչ իր, թէ
չեմ իբրև զմաքսաւորս զայս. և թէպէտ և չլուաւ
զձիրսն, սակայն դատապարտեցաւ ։ Ա՛թէ որ զըս-
տոյգ բանսն խօսեցաւ և ոչ ոք լուաւ, այսպէս դա-
տապարտեցաւ, որք սուտ ինչՙ որք չիցեն ի վերայ
Հասեալՙ ընդ վայր տարածանեն իբրև զհանայս շատա-
խօսս, որպիսի ինչ պատիժս ոչ կրիցեն. զիարդ իցէ,
չունիցի՛ն արդեւք զժոյժ ։

Ա՛ւցուք այսուհետև պահապան բերանոյ, և աղիս
և փականս լեզուի. քանզի բազում չարիք ի՛ շատ-
խօսութէ ծնան, տունք կործանեցան, բարեկամու-
թիք քակեցան, և այլ ևս բիւրապատիկ անհնարին
չարիք գործեցան ։ Ա՛ի քնեք զընկերին, ով մարդ ։
Ա՛այլ շատ խօսիցիս, և չունիս ժոյժ. սակայն զինչ և
իցէ յանցանս ունիցիս և դու, զքո՛յն խօսեաց առա-
ջի՛ այ. և ոչ ևս այսուհետև լինիցին յանցանքն յան-
ցանք, այլ յաղթութէի ։ Խօսեաջիր զյանցանս քո ա-
ռաջի բարեկամաց՝ որ ստոյգ բարեկամք իցեն և ար-
դարք, յորս կարի վատահիցես, զի աղօթս արասցեն
առ Ա՛ած վասն մեղացն քոց ։ Ա՛պա թէ զայլոց ասէ-
ցես, և զքո՛ ոչ, չօգտիս ինչ, և ոչ շահիս, այլ և կորըն-
չիս ևս. իսկ եթէ զքո՛յն պատմեսցես նոքա, բազում
վարձս ընդունիցիս ։ " Ա՛սացի, ասէ, թէ պատմեցից
զինեն զանօրէնութիւնս իմ նոքա, և դու Թողեր զնա՛
ամբարշտութի՛ս մեղաց իմոց "։

Ա՛ամին դատել. զքո՛յն դատեաց, և չիք որ որ
քեզ մեղադիր լինիցի ։ Ա՛ի՛ անձամբ զանձն դատա-
պարտիցես, չայնժամ չդատապարտիցիս, չայնժամ
չպատուհասիցիս. չայնժամ պատուհասիս, եթէ
չդատապարտիցես և չյանդիմանիցիս զանձն, եթէ
չցաւիցի՛ք քեզ վասն քո ։ Ա՛թէ տեսանիցես զոք բա-
կացեալ զպրացեալ, այլ ինչ յոռութի՛ս գործեալ,

զմտաւս աճղիը՝ վաղվաղակի և դու զքո զյանցանսն, և այնպէս ոչ կարի զնա դատապարտես, և դու ա-զատես զքեզ՝ ի բեռանց մեղացն։ Եթէ այնպէս ուղ-ղեսցեմք զմեր վարս, եթէ այնպէս լինիցիմք վաճառա-կանք և շահիցեմք զկեանս մեր, գտանիցեմք զոգիս։ Եթէ զանձինս դատապարտիցեմք, ոչ անկանիմք՝ ի բազում մեղս, այլ Թերևս իսկ և բազում բարիս գոր-ծեմք, յորժամ հեզք և խոնարհք լինիցիմք, և վայե-լեսցեմք յամ բարուեթեան խոստացեալ սիրելեացն ՚ի։ որոց լիցի ամենեցուն մեզ հասանել ընդ հօր և մարդասիրութե՛ն տեառն մերոյ Յիսի Քրիստոսի, ընդ որում հօր և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութի՛ն և պատիւ այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՃԼՒՒ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

Որ յերկնից անկանիցի և յանտի բարութեցն, պսպիսի արտասուօք պարտիցի արտասուել։ Վասն զի արտասուեալ այն՝ որ չարչարիցի ոք, և ինքն չիցէ պատճառ չարչարանացն. յորժամ կամիք ոք անկանիցի ընդ չարեօք, ոչ եթէ արտասուաց, այլ ողոց արժանի է. մանաւանդ թէ և անդ և սգալ արժանի է։ Վասնզի տէրն մեր Յս Վս զկրուսաղէմ, թէպէտ և ամբարիշտ էր, սգացաւ և արտասուեաց։

Աղքատաւ իսկ բազում աշխարանաց արժանի եմք, բազում ողոց. եթէ ամենայն աշխարհս ձայն առնուցուն, զողբս հարկանիցէ, և քարինք և փայտք և ծառք և երկք և թռչունք և ձկունք և ամենևին ամ սիեզերք համօրէն ի ձայն ազի և ողբոմ աշխարանաց աշխարիցեն, ոչ ինչ արժանի աշխարհելոյն աշխարիցեն։ Պսպիսի բան յանդիման կարիցէ կացուցանել, որպիսի սիրտք՝ զայսպիսի երանութեի և զբարութեիս. զայսպիսի ցանկութեի և զփառս և զբարխաւեի և զյաւուրս յաւուրս։ " Օ՜ որ ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ ". չասաց եթէ անցանէ և եւթ զմեզ, այլ եթէ և ոչ իմանալ ոք երբեք կարաց, " Օ՜ որ պատրաստեաց ամ սիրելեաց իւրոց "։

Որոց պատրաստիչ և կազմիչ ամ է բարութեցն, որպիսի ինչ իցեն։ Օ՜ի թէ արար զմեզ վաղվաղակի, և ոչ ինչ ի մենջ կայր մեզ կազմն յառաջագոյն, այնչափ ինչ ընտրհեաց մեզ։ Օ՜ինչ. զգրախտն, ընդ իւր և ս խօսելոյ արժանի առնել, կենդանութեի, անմահութեի խոստացաւ, կեանս երանելիս, ազատս ի հոգոց։ Յոկ որք վասն նորա այնչափ աշխատեցան և ձգնեցան և համբերին չարչարանաց, զի՞նչ ինչ ոչ ընտրհիցէ։ Ի միածինն ոչ խնայեաց վասն մեր, և զորդին սիրելի ետ ի մահ վասն մեր մինչ թշնամիքն էաք, իմ իմիք չառնիցէ արժանի՝ մինչ սիրելիքս եղեաք. իւ իւիք չհծծարիցէ՝ մինչ հաշտեցոյց

ընդ իւր։ Ա՝ենճատուն է, և կարի այնչափ մեծատուն, և ցանկայ և փութայ զմեզ սիրելիս առնել. մեք ոչ այնպես փութամք, որպէս նայն վասն մեր փութայ. և զինչ ասեմ եթէ ոչ փութամք, նա և կամիմք իսկ ոչ այնպէս բարուքեցն հասանել՝ որպէս և նայն կամի. և զի և առաւել կամի, որով արարն և էոյոյ։

Ա՝նք վասն մեր անձանց սակաւ ոսկի չարհամարհեմք, և նա վասն մեր զորդին իւր երետ։ Ա՝րկայութ յօգուտ ի կիր զսէրն այ, և վայելեսցուք բարեկամուքեցուցս։ "Ա՝ւաք, ասէ, բարեկամք իմ էք, եթէ առնիցէք զոր ասեմ ձեզ"։ Ա՝տրէ, զքեզնամին՝ որ այնչափ հեռի էին ի նմանէ, քան զորս առանց զուգական առաւելուքեն առաւել է, բարեկամն իւր առբար, և բարեկամն կոչէ։ Օ՝իարդ չիցէ ցանկանալի ի վերայ այնպիսի բարեկամուքեն չարչարել։ Ա՝ան մարդկան բարուե բազում անգամ ի ձգունս մնաս նեմք, և վասն այ բարեկամուքեն և ոչ ինչ կամիք ծախել. և արդարև սգոյ արժանին գործք և գնայք մեր, սգոյ և արտասուաց, լալոյ և աշխարանաց և կոծոյ մեծի։

Ի յուսոյ մերմ անկաք, և ի բարձրուքեն խոնարհեցաք, չգտաք արժանի պատուոյն այ, ապախտատուորք և ապաշնորհք եղեալք յետ երախտեացն։ Ա՝երկացոյց զմեզ սատանայ յամ բարուեցն։ Ա՝րք արժանին եղեալ վինել որդիք՝ ոչ ինչ ընդհատ եղեալ ի թշնամեացն, որ թշնամանեցն զնա։ Օ՝ինչ ինչ այսուհետև կայցէ մեզ վախճարուքեն նա զմեզ յերկինս կոչեաց, և մեք մեղեալք զանձինս ի գհենին։ "Ա՝նէծք և սուտքիք և գողուքիք և շնուքիք հեղեալ են յերկրի". կէաք արիւն ընդ արիւն խառնեն, և այլք այսպիսի ինչ գործս գործեն՝ որ և չար քան զարիւնն է. բազում ի զրկելոց՝ և ի նեղելոց՝ բիւրապատիկ մաշն ըղձանան, քան թէ այնպես տառապեսցին. և եթէ ոչ այ երկիւղ առաջի աչաց կայցէ, թերևս և անձանց իսկ առնէին. զի այնպես ցանգ մեռանին։ Ա՝յլ արդ չիցէ այն չար քան զարիւնն։

"Ա՝յ ինձ, ասէ, անձն իմ, զի կորեաւ երկիւղած յերկրի, և չիք ոք որ ուղղիցէ ի մէջ մարդկան". և մեք այժմ զբողոք բարձցուք վասն մեր. այլ եղե-

բուք ողբոցս ձայնակիցք։ Այլ Թերևս ոմանք հնազ-
նիցին և ծաղր առնիցեն. վասն այնորիկ իսկ պարտ
է յերկարել զողբս. զի այնպէս մելիմք և կտղիմք,
զի ոչ Թէ մելիցիմք՝ իմանամք. այլ ընդ որոց հեծելն
պարտ էր՝ ծաղր առնեմք։ Յայտնելոց է, ով մարդ,
բարկութիւն այ յերկինից՝ ի վերայ ամբարշտութեանդ և
անիրաւութեանդ մարդկան. և "Ա՛ծ, ասէ, մեր յայտնա-
պէս եկեսցէ, և հուր առաջի նորա գնասցէ և շուրջ
զնովաւ մրրիկ յոյժ։ Հուր առաջի նորա վառեսցի,
և բորբոքեսցի շուրջ զՅեհնամեաւք նորա ". և "Ո՛ր ան
իբրև զՀնոց բորբոքեալ ". և չածէ որ զմտաւ, այլ
քան զառաստել և չար արհամարհէն։

Ա՛յսպիսի ահագինք. և որ լսիցէ չկռ. և ծաղր ա-
նենքին առնեն։ Ո՛ւր է շահ կայցէ մեզ, ուստի՞
գտանիցեմք փրկութիւն. կորեաք սպառեցաք, ծաղր
կացաք Թշնամեաց մերոց, կատականք եղեաք հեթա-
նոսաց, խաղալիք դիւաց։ Պարծի սատանայ, Հօրան
լինի, ուրախ լինի. յամենի եղեն հրեշտակք, որ զմեզ
յաւուրդ առին, ամենքին ի արտմութիւն են։ Զինք
որ դառնայ, ի զուր ծախեցան վասն մեր ծախքն. և
մեք ձեզ իբրև առանցեալք Թուիմք։

Ի դէպ ժամանակի է և այժմ կոչել զերկինս ի
վկայութիւն, եթէ չկռ որ որ լսէ. վկայ լերուք արա-
րածք. "Լո՛ւր երկինք և ունկն դիր երկիր զի տէր
խօսեցաւ ,, ։ ԶՈՒն տուք որ չեղէ՛ք գլորեալ՝ գլորե-
լոց. որ կայքդ՝ կորուսեալոցն. ողջքդ՝ հիւանդացելոց.
զուարթիք՝ մելեկանացն և գանդատելոցն ։ Ի՞նչ որ ա-
պաւէմ զարբեկամ քան զՀնոր փրկութիւնն մեծարոյ
համարեսցի. մի որ զանձին ևեթ զօգուտ խնդրեսցէ։
Յորժամ ջերմ սաստիկ ի վերայ հասանիցէ, և ծա-
ռայք տիրոն տերանց. յորժամ նորա ոգին պապա-
կեսցի ի տենդոյն, դաստակք ծառայիցն Թեպետ և
շուրջ կայցեն, ոչ ինչ գրեն և չՀանաչեն զօրինս տե-
րունականս, մինչ դեռ տէրն ի տագնապի իցէ։

Ո՛ղողվեսցուք զանձինս, ազաւեմ. պատերազմունք
Հանապազորդ ի վերայ յարուցեալք. գետաւեռք,
ջրաբաժք, ծովակուլ կորուստք. շուրջ աղէտք, յա-

1 Յօրինակին պակասէր դոյզ էր։

մինայն կողմանց վարանք. աստի անտի բարկութիւն ոչ պաշարեալ. և մեք իբրև գՀաճոյս այսպէս եմք յանհոգութիւն։ Մինչեքեան գձեռս յագահութեան պատրաստեմք. չիք ոք որ յօգնականութիւն զրկելոյն իշանիցէ. ամենեքին զաչս՝ի յափշտակութիւն արձակեալ, չիք ոք որ յօժարիցէ՝ի պաշտպանութիւն. իւրաքանչիւր ոք ձեռի և քան զևս յաղխադրել զինչս. չիք ոք որ օգնեսցէ կարօտելոց. իւրաքանչիւր թէ զիարդ առնիցէ յաւելուած չինչս, յօժար զբօսեալ են զկարասեաւ. չիք ոք որ ածէ զմտաւ թէ զիարդ ապրեցուսցէ զիւր ոգին։ Մի՝ի կասկած ունի զամենեսին, թէ գուցէ յաղքատութիւն անկանիցիմք. թէ գուցէ՝ի գեհէն երթայցեմք՝ ընդ այն ոչ ոք կասկած ծիցէ և ոչ դողայցէ։

Այս արդ չիցէ այս ողոց և բամբասանաց արժանի։ Ողկամէի զայս ասել, այլ նեղիմ, չուենիմ ժայժ՝ի ցաւոյն. արգահատեցէք, առատանիմ՝ի սգոյ, բազում ինչ զոր և չկամիմ, ասել։ Այս չար տեսանեմ զայն՝ի հարուածս, առանց միխիթարութիւն են չարիքն՝ որ զմեզ պատին. մեծամեծ քան զսիսիւթեանն հասին՝ի վերայ կարիք, կորեաք սպառեցաք։ « Ո՛ տայր գլխոյ իմ ջուր, և աչաց իմոց աղբեւրս արտասուաց, զի նստեի և լայի զանհնարին զբեկումնս մեր »։

Ացցուք, սիրելիք, լացցուք հեծեծեացուք գառնապէս։ Ամերևս իցէն ասա ումանք՝ որ ասիցեն, Համակ զողոց խօսի, Համակ զարտասուաց։ Ողկամէի՝ հաւատացէք՝ չկամէի. այլ Համակ ընդ գովուիս և ընդ յարգանս անցանել. այլ չէ այժմ այնր ժամանակ։ Ո՛չ թէ ողբալն ինչ չար է, սիրելիք, այլ ողոց արժանի գործ գործել։ Ո՛չ թէ լալն ինչ ձանձիր է, այլ լալոյն արժանի իրս վճարել։ Ո՛՞ի տանջիր, և չմտանեմ՝ի սուգ. մի՛ մեռանիր՝ և չլամ։ Ո՛չ թէ մեռեալ կայցէ առաջի, աղաչես այնմ վշտակից լինել. և անապօրոյնս համարիս զայնասիկ՝ որք ոչ ընդ քեզ սգայցեն. և ոգիքն կորնչին, և ասես, մի մտաներ՝ի սուգ։ Ողունիմ ժայժ, քանզի հայր եմ, արտասուաց. հայր զթած եմ, և չկարեմ տեսանել մեռեալ, և չլամ։

Ուարձաք այսպիսի գոչիւն գոչեր Պաւղոս. « Ուր

դեակք իմ զորս դարձեալ վերստին երկնեմ »։ Որ մայր մատաղածին այսպիսի ձայն արկանիցէ՝ որպէս և նայն։ Հրամի թէ երբ հնար բանալ և տեսանել զիա-րսյկ մնացս, և ապա խմանայիր՝ թէ քան զամենայն կանանց և աղջկանց տարաժամ հասեալ յայրուքեի, զայրացեալ ես և խռովեալ, և ոչ այրիմ և ապանձ նիմ։ Իւ այսպէս կին մատաղ զայր ամուսին սգայ, և ոչ հայր զորդի, որպէս ես զայսչափ բազմուհի, յոր-ժամ ոչ տեսանելիս յառաջադէնն մատուցեալ։ Օ՜ա մինեսեան 'ի չարախօսուհէ և 'ի բամբասանաս տեսա-նեմ. չէք որ որ գործ առնէ հաճոյ լինել ՚այ, այլ զայսմ անուանի, ասէ, և զայնմ անուանէ չարախօ-սեացուք. այս անուն չէ արժանի քահանայութեան, և միւսն չկայ պարկեշտութեա։

Պարտեաք զմեր չարիս սգալ և ոչ զայլս դատել. Թէպէտ և որք իսկ էաք, չպարտեաք այնպիսի գործս գործել։ " Ո՞ քննեսցէ զքեզ, ասէ։ Օ՜ինչ ունիս՝ զոր ոչ առեր. և եթէ առեր, դի պարծիս իբրև զչա-ռեալ »։ Դու դի դատես զեղբայր քո, որ բիւրապատ-ուիկ չարեօք լի ես։ Յորժամ ասիցես, եթէ այս ա-նուն չար է և ժանտ և յոռի, զմոաւ ած և զքո անձնդ, և քննեսջիր զքոյն, և ապա գիտասջիր վի զղջանայ-ցես զանան։

Ահ ինչ և չէք իսկ այնպիսի յորդորուհն յառաքի-նութեի, որպէս զմեղայն յիշատակն միշտ կիրճ 'ի մտի ունել։ Եթէ զայս երկուս իրս յարդարեսցուք, կարեմք հասանել խոստացելոց բարութեանցն. կարեմք սրբել զանձինս և ջնջել 'ի մեղաց, միայն թէ զմտաւ ածիցեմք։ Ա՜րք առնուցուք զՀոգ իրացն յանձինս սիրելիք. վշտասցուք աստ մտօք, զի մի վշտանայցեմք անդ տանջանօք, այլ զի վայելեսցուք 'ի յաւիտենից բարութիան, ուստի չալածական լինին ցաւք և տրըտ-մութիք և հեծութիք. զի հասանիցեմք՝ բարութեանցն՝ որ անցանիցեն ըստ միտս մարդկան՝ 'ի Ա՜ա 'ի Տէր մեր. զի նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՈՒՆՉԻՆ առաքինութեի, և գլխաւոր քան զամենայն առաքինութեիս՝ օտար և պանտուխտ լինել յաշխարհիս, և ոչ ինչ հաղորդել ընդ աստի իրս, այլ իբրև յօտարոտեաց հրաժարել, զոր օրինակ երանելիքն, զորոց ասէ, եթէ " Ընկեցան լաչկ մաշկօք և մորթօք այծենօք, նեղեալք և տառապեալք և կաթսեալք, զորս ոչ արժէ աշխարհս ",

Այդպա օտարք համարէին զանձինս յաշխարհի. իսկ Պաւղոս ևս աւելի ինն ասէ. ոչ օտար կոչէ զանձն, այլ մեռեալ աշխարհի, և զաշխարհս իւր մեռեալ. " Ինձ, ասէ, աշխարհ ի խաչ ելեալ է և ես աշխարհի ". և մեք քաղաքակից եւք աշխարհի, և յոյժ փութամբ լինել քաղաքակից երկրի. այնպէս ինն զամ աստէն կամիմք շահել. Այլ որպէս էին արդարքն օտարք և մեռեալք աշխարհիս, նոյնպէս և մեք օտարք և մեռեալք երկնից. և զոր օրինակ էին նոքա կենդանիք և քաղաքակիցք երկնից, նոյնպէս և մեք աշխարհիս. Այսան այնորիկ մեռաք, զի ի ձըշմարիտն կենացն հրաժարեցաք. յայն սակս բարկացուցաք զնա, զի մեզ երկնից արքայութիքն առաջի կան, և մեք յերկրաւոր իրացս չկամիմք հեռանալ, այլ իբրև զորդունս ինչ՝ յերկիրէ յերկիր և ի սմանէ ի սոյն գեռամք. և բնաւ ևս ոչ սակաւ ինչ հաձիմք բառնալ զաչս ի վեր, և ոչ մերժել զանձինս կամիմք յիրաց մարմնաւորաց, այլ իբրև ի Թմբրութէ և ի քնոյ և յաբեգութէ ընկղմեալք՝ աստէն զսուլիմք զգաղեալ դանդաչեմք. Այլ զոր օրինակ քաղցրաներչ ինչ քնով պաշարեալք ոչ միայն զցայգն, այլ և յառաւօտուն ծագեալ և ի տուընջեանն՝ չերանին ի մահճին և չամաչեն. Այսպիսիքն իբրև զնիրս ինչ չնորհեն ցանկութեանն. և գործոյն և գիպոյեցոյն ժամանակն՝ քնոյ և պղերգութէ ժամանակ առնեն,

Այնպէս և մեք ի մեզնեալ տուընջեանն՝ ի մերժել գիչերոյն՝ մանաւանդ թէ տուընջեանն իսկ, « Վաղորձեցէք, ասէ, մինչ գեռ աւուր կայ », զգիչե-

բոյն գործս գործեմք. Համակ ի քուն կամք, միշտ երազս տեսանեմք, սահիմք յածիւք և ուրախ լինիմք։ Պատրեցեալ են աչք մեր և մարմնոյ մերոց, բարբաջեմք, զայլ այլս խօսիմք. Եթէ ի խոր ոք խոցիցէ չզգամք, և եթէ զինչս աւար Հարկանիցէ և տանց Հուր տայցէ։ Անաւանդ եթէ ոչ ինամք այլոց զայն առնել, այլ մերկն անձամբ անձանց առնեմք. Հապաղ խոցեմք և ծակատեմք զանձինս. խայտառակ կիմք և ծանակ կամք, մերկացեալք յամ վայելչաց եմք և ի պատուոյ և ի փառաց. զծանակաց գործմն մեր ոչ մեք Թագուցանեմք, և ոչ այլոց պատուիրեմք զգուշանալ. այլ ի մէջ անցեալ կամք խայտառակ կուեմք առաջի տեսողաց և անցաւորաց ի ծաղր և ի կատականս և ի գսրամանս։

Ով չգիտիցէք, և ինքեանք իսկ չարքն նորին գործոյ գործակիցք՝ ծաղր առնեն զգործակիցն և ըստ գտանեն։ Անպղի Հաստատեաց ի մեզ ամ առեան ընտրուեր առանց ալառանալոյ, որ ոչ երբեք անցանէ. Թէպէտ և յատակ իսկ չարեացն Հասանիցեմք, սակայն ըստգտանեն միտքն զգործմն յոռուեմ. վասն այնորիկ և չարքն գատապարտեն զանձինս. և եթէ կոչիցէ ոք զնոսա զայն ինչ որ ենն, ամաչեն, բարկանան, Թշնամանս Համարին։ Այս այսպէս Թէպէտ և ոչ գործովք, այլ բանիւք ըստգտանեն զոր ինչ գործենն՝ նեղեալք ի խղձէ. մանաւանդ Թէ գործովքն իսկ ըստգտանեն զանձինս. Անպղի գաղտ և ի ծածուկ գործեն, մեծ օրինակ ցուցանեն զկամացն՝ որպէս զիարդ ընդ իրսն Հայիցին։ Ո՛ի այնպէս յայտնի են չարքն՝ եթէ չարիք են, որպէս զի Թէ ամենեքին իսկ գատախազեն զնոցանէ, և որք գործեն զայրիսն։ Այս այնպէս լաւուեմ է առաքինուեմն, զի և ի նոցանէ իսկ՝ որ չլինիցին նախանձաւորք նորա՝ զարմանալի երևիցին։

Անպղի և պոռնիկն գովէ զցածուեմ, և ագահն ըստգտանէ զանիրաւուեմ, և բարկացողն զարմանայ ընդ անոխակալուեիւնն և զկարճամտուեին պարսաւէ, և աղտեղին զաղտեղուին։ Այս ընդէր, ասիցեն, գործիցեն զայն։ Այո բազում ծուլուեմբ. և ոչ զի չընտրեն զլաւն՝ եթէ լաւ իցէ. ապա Թէ ոչ, ամենի

չհամարէը զիրեան, և ոչ ուրանայը յորժամ ամբաս-
տան ոք լինէը զնմանէ։ Խաղաղ կամեսցի անկեալ
ի չարիս, ոչ կարացին հանդարտել ամենեքին և խեղ-
դեցան. զի այնպէս բարւոյ իմն և լաւի անկեալ է ի
մէզ վկայութիւն. այնպէս քան զարեգակին ևս լուսա-
ւորագոյնք են բարիքն, և քան զամենայն ինչ չորա-
գոյնք նոցին հակառակքն։

Օտարք և պանդուխտք էին երբեմն։ Ուր և որովք օ-
բինակաւ. երբ խոստովան եղև Աբրահամ՝ եթէ օ-
տար և պանդուխտ եմ։ Ովերևս և նա. բայց Ադա-
մէթ խոստովան իսկ եղև, եթէ "Օտար և պան-
դուխտ եմ որպէս զամենայն հարս իմ"։ Որք վըր-
նջօք բնակէին և արծաթոյ գերեզմանս գնէին, յայտ
է թէ օտարքն էին, որք և ոչ զմեռեալսն անգամ ու-
րեք ունէին թաղել։ Իսկ արդ գիտիդ. ի պատճառս
նացուոյ երկրէն ինչ ասէին օտար զանձինս։ Այլ ոչ
երբեք. այլ յայմ իսկ միեզերայ. քանզի ոչ ինչ
տեսանէին աստ յայնցանէ՝ զորս կամէինն, այլ զայմ
ինչ օտար և այլոյ։ Որքա զառաքինութիւն կամէին
գալ, և աստ բաղում չարիք էն. օտար համարեալ
էին նոցա իրքն, չունէին զոր բարեկամ, չունէին զոք
ընտանի, բայց ի սակաւուց։

Օ՛խդ էին օտարք։ Օ՛ի ոչ գային զաստի ինչ
իրօք. և զայս ոչ բանիւք, այլ և արդեամբք իսկ ցու-
ցանէին։ Որպիսի ինչ օրինակաւ։ Աբա ցԱբրա-
համ, Թող զերկիրդ որ քոյդ կարծի, և ել քոյդ
երկիր. և չառ ակն իւրոյն. որպէս զօտար ինչ երկիր
Թողուցաւ, այնպէս անգութ եթող և գնաց։ Աբա
ցնա մատ զորդիդ պատարագ. և որպէս թէ չունէ-
ցի որդի, այնպէս մատոյց. որպէս թէ չիցէ զգեցեալ
զմարդկեղէնն բնութիւն, այնպէս յօժարութիւն եհան
ի սեզանն։ Օ՛ինչն զոր ունէր՝ հաստարակաց էր, իւր
և ամ անցաւորաց. չհամարէր ինչ զիրս աշխարհիս.
զերեզմանէն այլոց մտադիւր մնաց տայր. ի վիշտս
նախ զանձն մխէր. ազգի ազգի լկանս տեսանէր. ոչ
ապարանս գեղեցիկս շինէր, ոչ ըստ անձին դիւրին չոր-
ջէր, և ոչ ի փափկութիւնս հատանէր, ոչ զանձամբ
գայր, և ոչ հանդերձս յարգէր։ Վիտեր եթէ ամ
աստ և աստէն ինաչոց է. այլ ամենևին հնարէր զի

այնմ քաղաքի քաղաքակից լեցի։ Օ օտարսիրութիւն ցուցանէր, զեղչայրսիրուհի և զողորմածուհի, զանոսակալուհի և զընչից անփոյթուհի, և զաշխարհիս փառաց և զայլոց ևս ամ իրաց այնպիսեաց։

Այս նորին որդի նոյնպիսի էր, ի հալածանս և ի պատերազմունս կայր. կայր հակառակ, այլ տայր տեղի, որպէս զի յօտարութիւնէ իցէ. զի օտարք որչափ և լինին համբերեն. քանզի չէն յիւրեանց աշխարհին, (ա)հեպէտ և կինն հանաւ ի նմանէ, սակայն և այնմ ևս համբերէր իբրև զօտար մի յօտարութիւնէ. վերին գինուքն վառեալ էր՝ ցածուքն և պարկեշտութիւնէ։ Յետ որդւոցն լինելոյ՝ ոչ ևս մերձեցաւ ի կինն. և յետ աստեացն մանկութիւնէ անցանելոյ՝ ապա առ կինն. յայտ արարեալ թէ ոչ վասն ցանկութեան ինչ կարեաց, այլ սպասաւոր լինէր այ աւետեացն։ Ոսկ Յակովբ զինչ. ոչ հաց միայն խնդրէր և հանդերձ. որ արդարև օտարաց հայցուածք են՝ որ կարի յաղթասուրհի հասեալ են. ոչ ապաքէն հալածական լեալ փախչէր իբրև զօտարական. ոչ ապաքէն վարձկան եմուտ, և աղդի աղդի վշտօք վշտանայր իբրև զօտար ամ ուրեք։

" Որք զայս ասեն, ասէ, յայտ առնեն թէ զիւրեանց գաւառն խնդրեն „։ Ոչ. քանի այլ և այլ կերպարանք են ի միջի. նոքա ցանկ երկնէին, և զերծանել կամէին աստի և յիւրեանց աշխարհն դառնալ. և մեք զնոցին հակառակն։ Այնմ սակաւ ինչ ջերմն ի վերայ հասանիցէ, զնմ ինչ թողեալ, իբրև զմանր մանկտոյ զլալ հարկանիմք։ Երկնչիմք գողամբ ի մահուանէ, և յիրաւի իսկ այնպիսի անցք անցանեն ընդ մեզ. քանզի ոչ իբրև զօտար շրջիմք աստ, և ոչ իբրև ի մեր աշխարհ փութամբ անդ, այլ որպէս թէ ի տանջանս երթալոց եմք։ Ոմն այնորիկ տըրտմիմք, զի ոչ վարեցաք ի գէպ իւրաք, այլ եղաք կործանեցաք զկարդն։ Յորժամ ուրախն պարտ էր լինել, աշխարեմք, և զարհուրիմք իբրև զսպանողս և զաւազակապետս՝ որք յատեան դատաւորաց երթալոց են, և զամենայն զոր ինչ և գործեալ իցեն զմիւսաւ ածիցեն, յահի և յերկիւղի կացցեն։

Ոչ այնպիսի ինչ և երանելիքն, այլ փութային և

Ձեպելին. Պաւղոս հեծեծը իսկ, « Վ՚ինչ, ասէ, որ ընդ յարկաւս եմք՝ հեծեծիմք ծանրացեալք ». այսպիսի էին և աբրահամեանքն, օտարք էին յամ աշխարհէս, և այլ իմն աշխարհ ինդրէին։ Օ՚ր. միթէ զոր թողին. և ո՛չ էրբէք։ Օ՚ի՞նչ արգելոյր զնոսա, եթէ կամեցեալ էր, անդրէն դառնալ միւսանգամ՝ ի նոյն քաղաք. այլ զերկնաւորն ինդրէին, յայն Ճանապարհ փութայինն. և այնպէս եղեն հաձոյ Աստ։

« Վ՚ասն այնորիկ ո՛չ ամօթ համարի Աստ կոչել Նոյա Աած ». Վ՚ասէ, որպիսի՞ ինչ պատիւս առին, զի արժանի արար կոչել Նոյա Աած։ Օ՚ի՞նչ խօսիսդ. Աած երկրի կոչի և Աած երկնի, և դու իբրև զմե՛ծ իմն դնես զայն, եթէ չհամարի ամօթ կոչել ի վերայ Նոյա Աած։ Վ՚ասէ արդարև իսկ մե՛ծ և բազում երանութեն նշանակ։ Օ՚ի՞նչ. զի երկինի և երկրի կոչի այնպէս Աած, որպէս և Հեթանոսաց աստուածի, վասն զի արարչն և հաստատեաց զնոսա. իսկ որոց ո՛չ այնպէս, այլ իբրև զառաքեալսն մեզրիմ։

Վ՚ասէ զի օրինակաւ և յայտ արարից զնոյն. զոր օրինակ ի տունս մեծամեծս յորժամ առաքինանայցեն ոմանք ի տանն սպասաւորաց, և կարի իսկ առաքինիք գտանիցին, և զամ իրս նոքա վձարիցեն, և բազում համարձակուի առ տեառս ունիցին, ի նոցանէնէն կոչին տեաւրքն, այսր անուան, ասէ, տեաւրք էն. և զբազում ոք գտանէ այսպիսի անուամբ կոչեցեալս։ Վ՚ասէ արդ զի՞նչ ասիցեմ. որպէս կոչեր Աած ո՛չ ազգաց միայն, այլ ամ իսկ տիեզերաց. նոյնպէս իսկ կոչեր Աած Վ՚բրահամու։ Վ՚ասէ չգիտեք որչափ ինչ իցէ պատիւն. քանզի և չեմք իսկ հասեալ յայն պատիւ։ Օ՚ր օրինակ այժմ ոք ամ քրիստոնէից ասի, և սակայն անցանէ ի վեր քան զմեր պատիւ անուանն. եթէ միում կոչեսցի Աած, ի միտ առ որչափ ինչ աւագութեն իցէ, յորժամ ամ աշխարհսդն Աած՝ չհամարիցի ամօթ երից կոչել Աած։ Վ՚ասէ յերեսաւ իսկ, զի ո՛չ միայն աշխարհիս, այլ և բիւրուց և այսպիսի աշխարհաց էն հանդիման Արքն։ « Վ՚աւ է, ասէ, մի որ առնէ զկամս Աայ, քան զերեւր անօրէն »։

Օ՚ի այսպէս զանձինս օտարս կոչեին՝ յայտ իսկ է.

և գրեսջիր թէ նոքա վասն օտարութեանն կուէին զանձինս։ Իսկ Պաւղոս ընդէր · ոչ թագաւոր էր և մարդ դարէ , ոչ յիւրում իսկ աշխարհի բնակեալ էր , ընդէր ասէր եթէ օտար և պանդուխտ ։ Օ իմոյդ ի ցես օտար ։ Իրրև զՀարան իմ , ասէ ։ Ցեսանես զի և նոքա օտարք էին , և նա ։ Անհնիք , ասէ , աշխարհ , այլ ոչ զտոյգ աշխարհն ։ Օ իմոյդ իցես դու օտար ։ Հերիւրէ · թէ այնպիսի իցէ՝ և նոքա օտար էին յերկրէ · որպէս նոքա ասին՝ նոյնպէս ես , և որպէս ես՝ նոյնպէս և նոքա։

ՑՈՐԴՈՐԱԿ

Այլեցուք այժմ և մեք օտարք · զի մի ամեն Համարեսցի Աստ կոչել մեզ ։ Ամեն է նմա , յորժամ մարդոյ չարաց կոյր ։ , և յամեն առնէ զնոսա և նա · զոր օրինակ և փառաւորի՝ յորժամ բարեաց և պիտանեաց և առաքինութեա՛ վառելոյ ։ Օ՛ի եթէ մեք հրաժարեմք կոչել տեարք ծառայից չարաց , և Թոյլ տամք և ընդվայր հարկանեմք , եթէ մատուցեալ ոք ասիցէ՝ եթէ այն անուն բեւր չարիս գործէ՝ մի՛ եթէ քո ծառայ իցէ , ըմբռոստանամք վաղվաղակի՝ եթէ ոչ , քաւ լիցի · ի բաց Թօթափեմք զնախատինս ։ Վասնզի աղերս ի միմի կայ ընդ ծառայն և ընդ տէրն , և ի նա հասանէն կարծիք նոքա ։

Այլ նոքա այնպէս լուսաւորք էին և այնպէս Համբարձակք , որպէս զի ոչ միայն ի նոցանէ չՀամարէր ամեն՝ կոչել ։ , այլ և ինքն իսկ կոչէր ։ « Աս եմ , ասէ , ։ Աբրահամու , ։ Սահակայ և ։ Յակովբայ » ։ Այլեւս այսուհետև և մեք օտարք , զի մի՛ ամեն Համարեսցի կոչել մեզ ։ զի մի՛ ամեն Համարեսցի և արկանիցէ զմեզ ի գեհեն ։ Անսխալիկք էին որ ասէին · « Ոչ ոչ ի քո յանուն մարգարէացաք և ի քո յանուն զօրութիս բազումս արարաք »· այլ տեսէք զինչ ասէին Աւ. « Անչ գիտեմ զձեզ , ասէ » · որպէս առնեն տեարք առ ծառայս չարս , յորժամ ապաւինել կամիցին ի նոսա , և զնախատինս ի բաց մերժիցեն · չգիտեմք , ասէ , զձեզ · այս ինքն եթէ ուրանամք և հրաժարեմք ի ձէնջ ։

Ա՛յլ մի լիցի մեզ զայնպիսի կորուսիչ և զահագին բաբառս լսել· զի ևթե որ զդևս հանիչին և մարգարէ եղիս, քանզի վարս միաբան գործոյն չունիցին, յու բաստ եղիցի 'ի նոցանէ, որչափ ևս առաւել 'ի մէնջ ։ Այլ զիարդ, ասէն, 'ի դէպ եր 'ի նոցանէ որ մարգա բէանային և նշանս առնիչին և զդևս հանիչին՝ յուբաստ լինել։ Ցուսի լինձ՝ ևթէ յետոյ զարձան և եղիցին լաւք· զի ոչ լինչ շահեցան յառաջնին առաքինութենէն· քանզի ոչ եթէ սկիզբն միայն պիտոյ է պայծառագործն, այլ և կատարածն ևս առելի լուսաւորագոյն ։

Այլ արդ ազէ՝ ասա· Ձարտարախօսն ոչ զվերջինն բանն փութայ առաւել յօրինել, զի գովեալ գրուա տեալ մեկնիցի· և սպասաւորն վերջինն նուագաց կա րի պատկառ կայ, զի մի պարսաւ լիցի· և նահատակն եթէ ոչ զվերջինն մարտն առաքինագոյն յուցանիցէ, ոչ ապաքէն ևս աշխատութենէն անօգուտ է· և նա ւավարն եթէ յամ ծովուն զգուշանայցէ, և մօտ 'ի նաւահանգիստն խրիցէ զնաւն կամ բախիցէ, ոչ ա պաքէն զառաջինն վաստակն կորոյս· և բժիշկն եթէ թեթևացուցանիցէ զցաւ հիւանդին, և յորժամ մօտ 'ի կատարեալ առողջութեն ածիցէ, յայնժամ զեղծ ցի, ոչ ապաքէն զնմա՛ Ջանն կորոյս ։ Այսպէս և որ զառաքինութեան կատարումն ընդ սկզբանն ոչ միաբանեն, եղծանեն և կորուսանեն զնա՛ ։ Այդ և 'ի կառամարտիկն, որք 'ի գլխոց ասպարիսայն պրն դակազմ զերիվարսն աբձակեն, և յետոյ մեղկիցին ինչ և ծուլանայցեն, ոչ պարգևացն Հասանեն և ոչ 'ի տերանցն Ձանաչին ։

Ա՛ուիցուք զայս՝ որ ընդից ցանկացողք եմք· զի մեծ անօրէնութենէն այն է, և " Ա՛ւրմատ, ասէ, նա՛ չարաց արձաթասիրութենէ է ,, ։ Ա՛ուիցուք որք կամիմք և ա ռաւել զմեծութենէն ստուարացուցանել· լուիցուք և դադարեսցուք յապահովութենէ, զի մի լուիցուք զոր նո քայն լուան ։ Ա՛յժմ լուիցուք և զգուշացուցք, զի մի յայնժամ լսիցեմք և տանջիցիմք· այժմ լուիցուք երկիւղիւ, զի մի յայնժամ լուիցուք սաստիւ, " Ա՛ւ բայց կացէք յինէն, ոչ երբէք Ձանաչելի գձեզ ,, և ոչ յայնժամ, ասէ, մինչև մարգարէանայիքն իսկ, և զդևս հանէիք ։ Ա՛ւ դէպ է, և այլ ևս անկարելի, ևթէ

յայնժամ չար վարս ունելին անդէն ի սկզբանն, և անարժանօք գործելին զօրութիւն Հոգւոյն։ Օ՛ի եթէ Առաքեալքն եղեալ ինչ գործ, որչափ և առաւել անարժանօքն, վասն նոցա՝ որ նոքօքն շահելոցն էին, Օ՛ի եթէ նշանք և արուեստ չկարացին ապրեցուցանել ի պատժոյ, որչափ և առաւել՝ որ ի քահանայութիւնն պատուի իցէ, թէպէտ և ի վերինն իսկ պատիւ հասեալ իցէ, և ի ձեռնադրութիւն զօրութիւն ազդիցէն նմա Հոգւոյն, և զայն ամ վասն նոցա որք վերակացութիւն կարօտ են, լուիցէ և նա, թէ ոչ երբէք Հանապէի զքեզ, և ոչ յայնժամ մինչ Հոգւոյն քև գործ գործելին։

Առաքեալ որչափ պարկեշտութիւն վարուց խնդիրք են անդ։ զիարդ ինքն առանձին բաւական է տանել ըզմեզ յարքայութիւնն, և թէ չիցէ մօտ, մահանել ի կրուստ, թէպէտ և բեւր նշանս և սքանչելիս ցուցանիցեմք։ Ոչ ինչ այսպէս ուրախ առնէ զՅԾ՝ որպէս և վարք առաքինիք. թէ սիրէք զիս, ասէ. ոչ ասաց՝ թէ նշանս արասջիք. և գարձեալ՝ թէ զձեզ բարեկամս կոչեմ, ոչ զի զգիս Հանիցէք, այլ զի զբանս իմ պահիցէք. զի այն այ պարգեւացն է, և այս այ պարգեւացն և մերոյ փութոյ։ Վաւերասցուք լինել բարեկամք այ, զի մի կայցեմք ցանկ Թշնամիք։ Օ այս առեմք և միշտ զսոյն յիշեցուցանեմք և մեզ և ձեզ, և աւելի ինչ ոչ լինի. վասն որոյ երկնչիմ և կամիմ լռել, զի մի և քան զևս տանջանք միւերիցին մեզ. զի բազում անգամ լսեն և չառնեն՝ բարկացուցանեն զնոն։ Այլ գարձեալ երկնչիմ ի միտս առնացն, որ վասն լռութեան գայցեն ի վերայ, եթէ ի բանս սպասաւորութեան կարգեալ և լուռ լինիցիմ։

Այս արդ զինչ արասցուք՝ զի ապրիցիմք։ Ակնկալեն արացուք առաքինութեան, մինչ դեռ ժամանակս ի ձեռս է. բաժանեսցուք մեզ զառաքինութեան, իբրև մշակ զգործս Հոգւագործութեան. յայսմ ամենայն յաղթեսցուք բամբասանաց և Թշնամանաց և զուր բարկութեան։ Պիտուք անձանց օրինակ և ասասցուք՝ եթէ այս օր զայս ինչ ուղղեսցուք, և վաղիւն զայն. և ի միւսում ամենայն վասն ոխակալութեան խրատեսցուք զանձինս, և ի միւսումն վասն այլ ինչ առաքինութեան.

և յորժամ ի գլուխ հանիցեմք զայն առաքինութիւն, և ապա ի միւսն և եկեսցուք. զոր օրինակ աշակերտք յորժամ ուսանին ինչ, այնմ զգուշանան, և այլ ևս առնուն։

Այլ անտի եկեսցուք յընչիցն անփոյթութիւնէ. նախ կարձեսցուք զձեռս յապահովութէ, և ապա արասցուք ողորմութիւն։ Ի վայրապար զնամ ընդ միմեանս խառնեսցուք. թէ ձեռուք՝ որով սպանանեմք, նովին գոգցես և ողորմութիւնս առնիցեմք։ Այլ յետ այնը յայլ առաքինութէ՝, և յայտնանէ ի միւս զօրուն. և "Անաք յիմարութէ և խեղկատակութէ մի ևս անառնեսցի ի մեզ»։

Այլ այժմ ուղղեսցուք. չէն պէտք Թորչակի, և ոչ վաստակոց և ոչ քրտանց. կամէլն միայն բաւական է, և ամ ինչ դիւրաւ վճարի. չէն ինչ պէտք ի հեռի ձանապարհ երթալ, և ոչ ընդ ծով համատարած հասանել անցանել. այլ փոյթ յանձին ունել և սանձս դնել լեզուի, և զթշնամանս և զվայրապար ցաւսին, և զանպատշաճ ցանկութէնս և զպիսիկութէնսն և զպէսպէս խորտակաց յաձախութէնս, զընչից ցանկութէնս, զսուտ երդնուլ, զստէպ երդնուլ ի բաց մերժեցուք յանձանց մերոց։ Այթէ այսպէս գործեսցուք զանձինս, եթէ զառաջին փուշն ի բաց խզեսցուք, և զերկնաւոր սերմունն ի ներքս արկցուք, կարեմք հասանել խոստացելոց բարութէնցն։ Այկեսցէ մշակն և ամբարեսցէ զմեզ յիշատեմարանն, և վայելեսցուք ի բարեխն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել չնորհօք և մարդասիրութէ՝ նոն մերոյ Յիսի Քրիստի, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Ցօբինակին առաւօխն։

ՕՂՈՐ օրինակ վարդապետ այր ախորժիցէ, և ըզգիրն քան տղայական բարբառոյն գրիցէ, չասեմ Թէ չգիտէ. և յորժամ հարցանիցէ՝ Եթէ ուր է այս նիշ գիր, գիտեա Թէ չէ անտեղեակ, այլ զաշակերտին կամի յորդորել. նոյնպէս և ՚ի ուղ առ կաթուածէ ինչ կայր յաղօթս, այլ զքեզ կամէր յորդորել, զի միշտ հպատակ կայցես յաղօթս, և անդադար կրթուիցէ և բազում զուարթութիւն արձանաց կալ։ Ոչ զդիչերին աղօթելն միայն ասեմ, այլ և ցերեկն արթուն լինել յաղօթս. զի արթուն այնպիսին կոչի։ Վասնզի մարթի զցայգ յաղօթս կալ և նիրհել մնոք. և զցերեկ յաղօթս չկալ և հանգել, յորժամ միտքն առ ՚ած կայցէն, յորժամ ՚ի միտ առնուցու եթէ ընդ ումի խօսիցի, և կամ ընդ ումի բանք իցէն։ Յորժամ զմտաւ ածիցէ, եթէ հրեշտակք կան առաջի ահիւ և դողութ, և ինքն մատուցեալ յորանդիցէ և քաշքռտիցէ և ձկտիցի, որում օգտի ակն ունիցի յաղօթիցն։

Ահ զկնի են աղօթք, եթէ պատշաճ մտոք կացցէ յաղօթս. և զի ուսանիցիս եթէ որչափ զօրութիւնս ունի աղօթք, անամօթութե և անիրաւութե և անպատրոյն մտաց յաղթեցին ստէպ ստէպ պաղատանաւքն։ "Ուսարուք, ասէ, զինչ ասաց դատաւորն անիրաւութեան ։ Այս և ՚ի դանդաղանաց ևս հերքեցին աղօթքն. և զոր ինչ չարաբար բարեկամութիւնն, զայն արար ժառանգին։ "Եթէ ոչ վասն բարեկամութե, ասէ, տացէ նմա, այլ վասն ժառանգին յարիցէ և տայ նմա ։ Ո՞ւ զանարժան կինն արժանի արար ստէպ անդ լրթութիւնն. "Ընկ բարիոք, ասէ, առնուլ զՏէր մանկանդ և արկանել չանդ ։ և նա առ այն զինչ. "Այո՛ ՚որ, ասէ, և շունք կերակրին ՚ի սեղանոյ մանկանց տեառնն ։

Ո՛չ այլ լերուք աղօթից. մեծ զկնի են եթէ սրտի մտոք լինիցին, եթէ առանց մտապարծութե, եթէ միամիտ սրտիւ։ Աղօթք զպատերազմունս մղեցին. զաղգ մի ողջոյն և զանիրաւ ապրեցուցին և երախ-

տաւոր եղեն . « Լուայ , ասէ, հեծուծեմ նոցա և իջի փրկել զնոսա ,, : Պետք բժշկութեան են աղօթքն , արգել մեզայ , բժշկարան յանցանաց : Զօթից պատկառ կայր այրին լոկ միայնացեալ , և եղև հաձոյ :

Լեմ խանարհութիւն կացցեմք յաղօթս , եթէ ըզկուրծս ծեծիցեմք իբրև զմաքսաւորն , եթէ զնոյն բանս խօսիցեմք զոր նայն ասաց՝ եթէ հաշտեաց ընդ մեզաւորիս , ամենայնի հասանեմք : Լեմ մաքսաւորք չիցեմք , այլ այլ ինչ ջար ևս քան զնորայն մեղս ունիմք . և զայն մի ասէր՝ եթէ սակաւ են յանցանք քո . ի նմին արմատոյ են իրքն : Ո՞ր օրինակ նայնպէս ասի սպանօղն մարդասպան , և որ զմանկունն սպանանիցէ . նոյնպէս և ագահն ի մեծին և ի փոքուն՝ ագահ է . և ոխակալութիւն՝ ոչ սակաւ , այլ և մեծ իսկ մեղք են . « Զանապարհ ոխակալացն , ասէ , ի մահ ,, . և « Որ բարկանայ , ասէ , եղբօր իւրում զուր , պարտաւոր է , ասէ , ի գեհենի ,, . և որ կոչէ զեղբայր իւր մորթ և անմիտ , և բազում ևս այլ ինչ :

Ո՞ւ հաղորդիմք ևս անարժանութիւն ահաւասիկ խորհրդոյն , նախանձիմք , բամբասեմք . բազումք ի մէնջ և արբենան բազում անգամ . և յայնպիսի գործոցն իւրաքանչիւր իսկ մի բաւական է հանել յարքայութիւն , թէպէտ և յորժամ ամենայնն ի մի վայր ժողովեսցին . զինչ ինչ այնուհետև միխիթարութիւն կացցէ մեզ զղջանալ : Բազում աղօթից պէտք լինիցէն , բազում ժուժկալութիւն , բազում պարապութեան , զի կարիցեմք հասանել խոստացելոց բարութեանցն :

Ասացաք և մեք եթէ հաշտեաց ընդ մեզաւորիս , մանաւանդ զի մի ասիցեմք և եթէ , այլ զի և զնոյնն խորհիցիմք : Ա՛ եթէ այլ ոք կոչեսցէ զքեզ անուամբ , մի բարկասցաք . քանզի լուաւ և նա , եթէ չեմ իբրև զմաքսաւորս զայս , և ոչ բարկացաւ . այլ՝ ի խոր խոցեցաւ , զղջմամբ ընկալաւ զնախատինս . նա ասաց զվէրն , և սա խնդրեաց զդեղն : Ասացաք և մեք , հաշտեաց ընդ մեզաւորիս . բայց թէ և այլ ոք կոչիցէ մեզաւոր , մի բարկասցաք : Ա՛պա եթէ մեք խօսիցիմք զանձանց բեւր զչարիս , և յորժամ յայլոց լսիցեմք՝ դժկամակիցկ լինիցիմք , չէ այնուհետև խանարհուի , այլ ցոյցք և մեսապարծութիւնք :

Ցմշցա ինչ առեալ իցէ զանձն մեղաւոր կոչել ։ Ա. Յո. խոնարհութեամբ կարծիս առնուսմք . զարմանան , գովչին զմեզ . և եթէ զնորին հակառակն ասիցեմք զանձանց , արհամարհիցիմք , որպէս զի և զայն փա- ռաց վասն առնիցեմք ։ Իսկ որ իցէ խոնարհութիւն ։ Յորժամ այլ ոք նախատիցէ , և յանձին ունիցիմք , հրաժարիցեմք ի մեզայն , տանիցիմք բամբասանաց ։ Այս և այն չէ և այս խոնարհութեամբ նշանակ է , այլ բա- րեբարութեամբ ։ Այս աւասիկ մեք զանձինս կուգեմք մե- զաւորս , անարժանս և պիղծս . և եթէ ոք մի ինչ յայսցանէ նախատիցէ , զչարիմք , զայրանամք ։ Ցե- սանեմ , չէ խոստովանութեամբ , և ոչ բարեբարուի ։ Այ- չեցեր զանձն այսպիսի , մի ցասնուր թէ և[1] յայլոց լսիցես , մի ըմբռստանայցես . զի այսպէս և մեզքն[2] թեթևասցին ի քէն . յորժամ այլք նախատիցեն՝ անձանց ծանրութիւն դնեն ի վերայ , քայց զքեզ ի սգաստութիւն ածիցեն ։ Ա՛ր զինչ ասեր երանելին Պաւղոս , յորժամ անիծաներ զնա Այեմէ . « Լծոյր տուք , ասէ , ձեր հրամայեաց դմա . որպէս զի հայեսցի ի խոնարհութիւնս իմ , և հատուսցէ ինձ ձեր բարիս փոխանակ անիծից դորա այսմ աւուր »։ Այս քե- զէն մեծամեծ չարիս խօսիս , և եթէ ոչ զաւակաց աս- դարոց զգովութիւնս լուիցես , գազանանաս , զայրա- նաս ։ Ցեսանես զի խաղ առնես զվաղոյն ։

Այս զգովութեան իսկ՝ այլոց գովութեց ցանկութիւ- ն ի քաց մերժեմք . զի և մեծամեծաց գրուատեաց հա- ճանիցեմք , զի և առաւել զարմանալի լինիցիմք . որ- պէս զի թէ ընդունիցիմք զգովութի և եթէ ոչ , և քան զևս առնեցուցանեմք . վասն այնորիկ զայն այ- պէս առնեմք , և ամ ինչ կարծեօք լինի , և ոչ ձնմար- տութիւն . վասն այնորիկ ամ ինչ ընդունայն է , ամ ինչ անպտուղ ։ Ա՛ն որոյ ազատեմ , գնանեա յայսմ հետ հրաժարեալ ի մօրէն չարեաց՝ ի մնապարծուհի, և կեալ ըստ այ կամացն ։ Օ և հանդերձելոց բա- րեացն հասանիցեմք ի Քրիստոս ի ձեր մեր , ընդ որում ձեր միանգամայն և հոգւոյն սրբ փառք , իշխանութիւն . և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

1 Յօրինակին խանդարեալ էր եե և ։ 2 Յօրինակին ձգ...ր։

Ո՛ւԱՏՆ ՝ամ ածցուք զմտաւ, սիրելիք. զայն ՝ամ կալցուք յուշ, և չվհատիմք այնուհետեւ և չլքանիմք, Թեպէտ և զրկիցիմք և չարիշտակիցիմք և բիւրապատիկ վիշտս վշտանայցեմք։ Ցերկինս լեցի մեզ քաջալերիւն և յերկնից առաքինութիւնս, և ՝ամ ինչ դիւրաւ վաստրի մեզ։ Ընդը գործս ինչ բարիս ամբարել, և մի աստ իմիք առնել փոյթ, քանզի աստուեր է այս ՝ամ և երազ զինչ և իցէ՝ առ յաւետ լեօքն՝ որում աչն ունիմք. և չիք ինչ որ բնաւին է և ոչ ժամանակաւ. եթէ բարիք իցեն՝ բարիք չեն, և եթէ կարիք՝ ոչ ինչ այնպէս անհնարինք։ Ու և եթէ կամիս համեմատեցուք զայս վիշտս ընդ այնց տանջանաց. զինչ ինչ զուգական անչէջ հրոյն կայցէ, և կամ զինչ կշիռ անվախձանելի որդանն, և կամ զինչ ոք հաւասարուիլեն կրնելոյ առատանցն՝ որ անդ լինիցի՝ կար է ասել, կապանացն, արտաքին խաւարին, բարկութեն, նեղութեն, անձկութեանն. կամ զինչ համեմատ ժամանակացն կայցէ. և եթէ բեւր ամս ասիցես, զինչ իցէ առ այնչափ անչափ և անվախձան յաւիտեանս, ոչ ապաքէն որչափ կաթ մի ջրոյն առ ծով անչափ։

Ոչ բարուքեցն զինչ համեմատ կայցէ. այլ այն կարի իսկ մեծ առաւելուքեն, զոր աչն ոչ հետս և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. և այն յանչափ և յանպակաս յաւիտեանս։ Ու արդ վասն այնը չէր պարտ բիւրապատիկ պատառ պատառ կոտորել, յանկ սպանանել, այրել, բազում մահուց համբերել, և զայդ զինչ և ինչ իցեն չարչարանք կրել և բանիւք և արդեամբք. և եթէ կենդանւոյն Տրոյ այրել իսկ հասանէր, չէր պարտ այրել վասն հասանելոյ խոստացելոց բարուքեցն։ Այլ զի խօսիցիմ, և առանցեաւ համարիցիմ, ընդ այնպիսի ո՛բեւոյ՝ որք ոչ զինչս արհամարհել յանձն առնուն. այնպէս համարիմ թէ իբրև զանմանս ինչ ունիցին. և եթէ սակաւ ինչ ի բազմայ տայցեն, այնպէս հա-

շուին՝ եթէ զնա վճարիցեն։ Ոչն այն տուրբ, չէ ո՛
զորմանաւէն. տուրբ այն էին, որպէս կրնան այլոյ արկ
ի գանձանակն. գնեմ զաւելորդն տուր, և զաւա-
կանն կալ, և մի՛ զաւելորդն. այլ չէք ոք՝ որ գտնեա
զաւելորդն տայցէ։ Ո՛ինչ ծառայս բազում ունիցի
և հանդերձս կերպասեղէն, զաւելորդն ունիս.
և եթէ ոչ զկարևորսն և զպիտոյն, և առանց որոց
չմարթիցեմքն կալ, աւելորդք են այն ամ՛, և արտա-
քոյ քան զպէտսն կան ընդ վայր։

Այլ եթէ զինչ իցեն՝ առանց որոց չկարիցեմքն
կալ, թէ կամիք տեսցուք։ Այթէ երկուս ծառայս ու-
նիցիմք, կարեմք կալ. ուր զի ոմանք առանց ծա-
ռայից իսկ կեան. և մեք որպիսի ինչ պատասխանի
ունիմք տալ, թէ և զերկուս և զերիս բաւական չհա-
մարիցիմք։ Ո՛արթիմք և յաղիւսայս տունս կեալ.
և երկու և երեք տուն բաւական են մեզ. միթէ չի-
ցեն բազումք՝ որ կնաւ և որդւովք ի մի տուն կեան։
Ո՛ւնիցիս երկուս և երիս ծառայս, Օ խոնդ մարթի-
ցի, ասեն, կնոջ աղատի երկու և երիւք ծառայիւք
միայն արտաքս ելանել։ Ո՛ւր այն իսկ է ամէն՝ զի
բազմեքս արտաքս ելանիցէ. Թերևս ծաղր առնիցեք
զոր լսիցեքս. Հաւատացէք, զի այն իսկ կարի ամէն
է. իբրև զոչխարավաճառս և զմարդագիսս, զայն իմն
մեծարանս համարիք, բազմեքն արտաքս ելանել.
Հպարտութի՛ է այն և մնասալարծուե՛ի. և միւսն ըզ-
գաստութի՛ և պարկեշտութի՛։

Օ աղատ կին ոչ բազում սպասաւորք երևելի առ-
նել պարտին, այլ ցածութի՛ն։ Օ ինչ քաջութիւն
իցէ բազում սպասաւորս առնել. չէ ինչ այն ոգւոյ
գործ. որ ինչ ոգւոյ գործ չէ, և ոչ աղատութի՛ ինչ
ցուցանէ։ Ոչորժամ զսակաւս բաւական համարիւ-
ցի, յայնժամ ստոյգ աղատ. իսկ յորժամ բազմացն
կարօտանայցէ, աղախին է, և ևս չար քան զգեր-
դաստանիկսն։ Ո՛րդ աղէ ասա, հրեշտակք ոչ սպաս-
քէն միայն շրջին ընդ տիեզերս, և չեն կարօտ սպա-
սաւորաց. միթէ վասն այսորիկ ի վայր ինչ քան
զմեզ իցեն, որք կարօտանամքս, նոքա որք չկարօ-
տանանն. և եթէ չկարօտանան սպասաւորաց հրեշ-
տակական վարքք են, ո՞ մեծ իցէ՛ ի հրեշտակաց կեանս,

որ բազմանց կարօտ իցէ՝ թէ որ զսակաւսն բաւական համարիցի ։ Ընդ այն ամենայն . այլ ամենայն այն է՝ եթէ յոյժ ուրախ ոք ինչ գործիցէ ։

Ասէ՝ ասա, ո՞ դարձուցանէ զգուեհիկս, որ բազում սպասաւորսն ունիցի, եթէ որ սակաւս. որ զսակաւսն ունիցի՝ ի նա ոչ այնչափ հնչակս հարկանի ։ Ցեսա՛ նեա՛ զի այն է ամենայնաց, որ բազում սպասաւորսն ունի ընդ իւր ։ Ո՞չ շատ հայել ընդ ինքն կամառարդացն, որ զանձին հանդերձս ունիցի, եթէ որ զդոյզն հանդերձիկն և զառանց պաճուճանաց . ո՞ դարձեալ միապիղ առնէ զբազումն . որ գահաւորակաւն և լկտուք և ջրոմլք կրի , և զոսկեհնա՛ն նուաբտանսն զբազմատառամբն տարածէ , եթէ որ համոյնն և պարկեշտութեն գնայ ։ Ո՞չ այնպիսին թէպէտ և տեսանիցեմք , միապիղ ինչ չառնեմք . և զմիւսն տեսանել ջանան բազումք . այլ և հարցանեն՝ թէ ո՞վ իցէ և ուստի ։ Այս զայն թոյլ տամ ։ ասել , թէ որչափ նա խանձ անտի ծնանի ։

Ասդ ասէ՝ ասա. ո՞ր յոյժ լիուն իցէ , անկանիլ յահն եթէ չանկանել . որ ամենայն չար իցէ , յոյժամ ամենեքեան ընդ նա՛ հայիցին , եթէ յոյժամ և ոչ ոք . յոյժամ ի քնի՛ն անկանիցին վասն նորա , եթէ յոյժամ չառնիցեն ինչ փոյթ ։ Ցեսանե՛ս , զի ոչ վասն ամենայն , այլ վասն մնապարծութեան առնելոյ զայն ։ Ասացեալ սակայն քանզի յայտնեալ մեզ չէ հնար ի բաց կալ , շատ է այն առ այժմ , զի ուսայքդ՝ եթէ այն չէ ամենի , այլ մեղքն են ամենի , զոր չհամարի ոք ամենի՝ եթէ իցէ բնաւ , այլ զայդ ինչ ամենի համարին և ոչ զմեղսն ։

Հանդերձք այնչափ ինչ լինիցին , որչափ զպէտսն վճարիցեն , և մի աւելորդք ։ Ասացեալ զի մի կարի յանձուկ արկանիցեմք զձեզ , զայն և եթէ պատուիրեմ , մի յոսկւոյ ինչ զարդ առնել , և մի՛ ի բարակ կտաւոյ . և զայն ոչ եթէ ես ինչ ասեմ , և զի ոչ են իմ բանքս , լուր երանելոյն Պաւղոսի , որ պատուիրէ կանանց զարդարել զանձինս « Ա՛յլ ի հեւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով , և ի հանդերձս

1 Ցօրինակին գայ ։

պաՀուՀեալս ,, ։ Այլ որպիսի՞ Հանդերձս կամիցիս , ով՛ Պաւղոս ։ Այլ Թերևս ասիցէն ոմանք , եթէ ոա կեՀուՀքն միայն պաՀուՀեալք իցեն , և կերպասեղէնքն չիցեն պաՀուՀեալք ։ Զդդ աղէ՛ ասա Պաւղոս , որպիսի՞ Հանդերձս կամիցիս ։ “ Ընտիքս , ասէ , կերակուր և Հանդերձս , և այնու շատասցուք ,, ։ այն չափ ինչ լիցին Հանդերձք , որչափ զգեցուցանէին միայն . քանզի վասն այնորիկ ետ մեզ ՚ած զՀանդերձսն զի զմերկութիւնն զգեցուցանիցեմք ։ և զայն զինչ և իցէ Հանդերձ մարթէ ՚ վՀարել , սակաւ ինչ գնոց գնեալ ։

Ամենևս ծաղր առնիցէք , կանայք , որ Համակ ՚ի կերպաս և եթէ լինիք ։ և արդարև իսկ ծաղու զրոյցք են , եթէ զինչ Պաւղոս Հրամայեաց , և զինչ դուք գործէք ։ Այ միայն ընդ կանայս են բանքս իմ՛ , այլ և ընդ արս ։ Ո՛ այլն ՚ամ՛ զոր և ունիք աւելորդք են . բայց միայն աղքատքն չունին աւելորդս ։ Այլ Թերևս և նոքա առ վտանգի չունիցին աւելորդս . որպէս զի Թէ Հնար ինչ էր՝ և ոչ նոքա յայնմանէ Հեռանայիցեն . բայց սակայն եթէ բարբրանօք և եթէ ՚ձմարտութ՚ի , նոքա չունին աւելորդս ։

Ա՛յնպիսի ինչ Հանդերձ զգեցցուք , որ զպէտսն և եթէ վՀարեն ։ Ո՛ ինչ օգուտ իցէ բազում ոսկի յանձին կրել . յաՀեռաւանդան վայելել այնպիսի Հանդերձս , ՚ի պոռնկացս և ՚ի գուսանաց վանս . բազից են պաՀուՀանքն՝ որ յայն և եթէ կամին անկանել ։ Ա՛յսպիսին պաՀուՀեացի՝ որ ՚ի բազանացն չերանին , որ ՚ի վարձկանաց ելանիցէ , և ՚ի կաբասն մտաբերիցէ . քանզի զամենեսեան կամ առ ինքն ամփոփել , ՚ի պատիրս արկանել , զուշ և զուրուշ մոգել ։

Իսկ Կնոջ որոյ զ՚ծպաշտութիւն յանձն առեալ իցէ , մի՛ այնպիսի զարդուբք պՀնել , այլ այլազգ ։ Ընտիս և դու բազում և գեղեցիկ զարդ քան զնոբայն . ունիս և դու Թեատրոն լաւ քան զնորայն , անդր զարդաբեաց , անդր անկիր յանկ . զայն զարդ պաՀուՀեա՛ զանձամբ ։ Ո՛ւր իցէ և կամ որպիսի՞ ինչ քո Թատրն ։ Այրկինք , հրեշտակայն գունդքն , հրեշ-

1 Յորինակին պակասէր մնդն ։

տակապետացն գրոհք[1]· չասեմ զայս առ կուսանսն միայն, այլ և առ աշխարհական կանայս որ ի Քրիստոս լցեն հաւատացեալ· յայն Թատր զարդարեսցին, ընդ այն հանդէս ելանիցեն, անդ նազիցին, անդ յօրանայցեն· Օ այն բանս խօսիցին զոր այնպիսի տեսօղք ախորժիցեն, այնպիսի քառամանեակս արկանիցեն, դիւդս, մատանիս, և կշտամբանակս, որ զնոսա ուրախ առնիցեն·

Արդ աղէ՝ ասաւ, եթէ վարձակ ոք ի բաց հանիցէ յանձնէ զոսկին, զհանդերձս պաճուճանացն, զծաղկեն Թողուցու, զպչրանսն, զաչացն զներդմնեղանս, զբանսն պատրելիս, զխաղալն, զկատակելն, և հանդերձս գձուձս ագանիցի և զայմ պաճուճանս ի բաց մերկանայցէ, և մատուցեալ զծծպաշտուԹիւնն բանս խօսեցի, և վասն ցածուԹիւնն Քառիցէ, և ոչ ինչ խեղկատակուԹիւն բանս խօսիցի, ոչ ամենեքեան յառնիցեն և ի բաց գնասցեն, և լինի գրաւ Թատերն, և կամ գնա իսկ ի բաց հրամայիցեն հանել, զի ոչ մարդ Թաց վիտս գուՄարելոց հանդիսատեսացն հանել· և օտարոտի համարիցին ի Թատերգն օրինաց, ի սատանայական գործոցանցն, ի դիւաստուր խաղցն· Արդ այսպէս և դու եթէ գնացս պաճուճանսն պաճուճեսցես, և յերկնից Թատրն մնանիցես, հանիցեն ի բաց գքեզ հանդիսատեսքն· քանզի անդ չէն պէտք ոսկեհուռ հանդերձից, Քամկաւորն դիւցական, այլ այլոց ինչ հանդերձից· Ալլսիսաց· զոր մարգարէն ասէ, եթէ " Ի քղանցսաւորս յոսկեհուռս զարդաբեալ և պաճուճեալ,, Ալ չզմարմին համակել ի սպիտակ, այլ զոգին զարդարել ի սպիտակս· քանզի նա է այնր մարտի պատերազմող նահատակ մատուցեալ ի մարտ· " Ալ փառք դստեր Թագաւորի, ասէ, ի ներքոյ ,, · այնպիսի զարդուք զարդարեաց, այնպիսի քառամանեակս արկանիցես ընդ պարանոցս, այնպիսի պաճուճանդեօք և լանջագեղ կամարօք զսպիծիս սնդակաղին, և այնպես յամ չարեաց զերծուցանիցես զանձն, զայրն ի հոգոց և զքեզ ի կասկածանաց·

1 Յօրինակին գրոհ·

Ա՛ղա և առնն այնպիսի իսկ ընդ միտ մտանիցես, յորժամ ոչ ինչ կարի խիք Թախանձիցիս։ Վասնզի սովորութիւն իսկ է ամ արանց ըմբռնոտանալ ընդ այն, յորժամ կինն զանպատրաստ ինչ հանդերձս խնդրիցէ. և յորժամ գիտէ, Թէ ոչ ինչ կարի պահանջիցէ, հանդարտէ, յանկչէ. գիտէ՝ Թէ ըստ նմա է, և չափով խօսի և չափով գնայ։ Այլ յորժամ տեսանիցէ այլն, եԹէ ոչ ինչ կարօտ այնր լինիցի նմա իւիք, և ոչ այնչափ նայի ընդ տուրս և ընդ բերս, Թէպետ և կարի ոք մեծամիտ իցէ կարէ կինն ընդ միտ մտանել. և ոչ յայնժամ մինչ ոսկւոյն զարդարիցի. և չառնիցէ և այնուհետև իրրու զաղախին։ Վասնզի ուստի առնու ոք շատ, հարկ է նմա այնուհետև Ի հնազանդութեան մտանել. և եԹէ ոչ զոք Թախանձիցէ, ոչ այնչափ պարտական գտանի. այլ գիտէ՝ Թէ վասն այ երկիւղին հնազանդ լինիցի նմա, և ոչ վասն նորա ինչ տրոց։ Իսկ յորժամ գեր Ի վերոյ իմն լինիցի, քանզի գիտէ Թէ շատ ետ, և բազում պատիւ պահանջէ. իսկ յորժամ սակաւ ինչ տայցէ, չվարկանի, չնախատէ, և ոչ ինքն բռնադատի վասն քո զրկել զանձն։

Օ ինչ քան զայն անմտութիւն կայցէ, յորժամ նըստեալ ոսկի կռիցէ՝ զի զանձամբ արկանիցէ, Ի բազանիս տանիցի, Ի հրապարակս. այլ Թերևս Ի բազանին և Ի հրապարակին ոչ այնչափ ինչ պարսաւանք իցեն. բայց ոսկւով զարդարել և յեկեղեցի երԹալ, ամենևին ծաղռ գործ է։ Վնդիր ընտ մտանիցէ այսր որ ոսկւով զարդարեալ իցէ. զինչ կամիցիս լսել, ոչ ասպաքէն զայն՝ եԹէ "Օ արդարել զանձինս մի Ի հեւս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, և Ի հանդերձս պաճուճեալս"։ Զիմ մտանիցես այսր, ով կին դու։ Այլ եԹէ ընդ հակառակս եղեալ Ի կռիւ ինչ եկեալ կայցես Պաւղոսի, և յայտ առնիցես՝ Թէպետ և նա բազում ասիցէ, և դու բազում անգամ լսես, և ոչ դառնաս. Թէ ըզմեզ զվարդապետս խանդ ինչ առնել կամիցիս և յանդիմանել, Թէ զոր խօսիքս Ի զուր խօսիմք։

Ա՛ղէ՝ ասա, եԹէ ոք այր հեԹանոս անհաւատ լսէր զընԹերցուած տեղւոյն այնորիկ՝ ուր երանելին Պաւղոս չհրամայեաց զարդարել կանայս, և ունէր կին

Հաւատացեալ , և տեսանէր եթէ կարի քաջ գոյ զղաղդու , զոսկեօք մատանեօք , և զմարգրտեայ գնդօք , զպարանոցանօք , զբեռնեմինակօք , զինչ հա- մարեր զպատուէր Պաւղոսի՝ որ ասէ , եթէ " ՚Ի ՚ի հեւս ոսկեմանս ընդելուզեալ մարգարտով , և մի ՚ի հանդերձս պաճուճեալս զարդարել զանձինս ,, ։ Ձա- սէր արդեւք ընդ միտս յորժամ տեսանէր զկինն ՚ի անեկի պաճուճեալ , զարդարեալ , եթէ զի այնչափ յամիցէ ՚ի ներքս , զինչ գործիցէ , ընդէր զայնչափ ոսկի զարդ դնիցէ , յո՞ երթիցէ , միթէ յեկեղեցի . ընդէր . զի երթայցէ՝ լսիցէ " ՚Ի ՚ի հեւս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով , և մի ՚ի հանդերձս պա- ճուճեալս ,, . ոչ ապաքէն ծաղր առնիցէ , քրքիջ բառնայցէ , խաղ ինչ և խաբեուէլ զմեր ոգւս համա- րեսցի ։

Ա՚ման որոյ աղաչեմ զոսկին ՚ի բաց թողուցուք զրք գուեհկիկք իցեն և զվայրօք յածին , որք ՚ի բողա- նոցան կայցեն և վարձակայն համարի , և կամ ՚ի վաճառան և ՚ի խանութս . որք ընդ գին ելանիցեն և զպետս ինչ վճարիցեն ։ Ա՚յլ ՚ով պատկերն մի այնպէս սի զարդուք զարդարեսցի . ազատակինն ազատուբեն զարդարեսցի . ազատ կինն զանպերձն զանհպարան զանպարծն զարդ ունիցի յանձին . և եթէ փառաց ինչ ցանկանայցէ , այնպէս վաղ հասանէ ։ Ա՚նդ կը- նող առն մեծատան ոչ յայնժամ զարմանամք՝ յոր- ժամ ոսկի զարդ դնիցէ , կերպասս ագանիցի . զի այն ՚ամ՚ և այլոց կանանց մեծատանց հասարակաց է . այլ յորժամ լոկ հանդերձս ասուիս ագանիցի , ընդ այն զարմանան ամենեքին , զայն գովեն . զի այնպիսի հան- դերձից զբազումն ունի զարդակիցս . եթէ զմիոյնն առ ցանկ , միւսն յաղթէ . և եթէ զամենեքուքն անցա- նէ , սակայն Թագաւորին կին յաղթէ . բայց միւսով ամենեցունց յաղթէ , և Թագաւորին իսկ կնոջ . զի նա միայն ՚ի մեծատանց՝ ախորժեաց զաղքատացն հան- դերձս . որպէս զի Թէ և փառաց ցանկանայցեմք , անտի ծնանին մեծամեծ փառք ։

Ա՚յս զայս ոչ առ այրեան միայն ասեմ և առ մեծա- տուն կանայս , քանզի այնպէս Թուի՝ եթէ այրեացն միայն հարկ ինչ էցէ զայն առնել , այլ և առ առ-

նականայս ։ Աչալ կարեմ, ասէ, հաձոյ լինել առնն, թէ ի գնուձս լինիցիմ ։ Իչ եթէ առնն կամիցիս հաձոյ լինել, այլ բաղնաց ։ և զաղբատաց կանանց ըզսիրտ հանել, հաչել, հառաչել, այրել, խռովել, և և այ չար քան զաղբատուհին հասուցանել ի վերայ ։ Ընդափ հայհոյութիւք վասն քո լինիցին ։ Ի լեցի, ասէն, բնաւ աղքատուհի ։ Ոչ առեալ ուրեմն զաղքատս, չսիրէ զտառապեալս ։ Ոչ ևս ոչ առնն կամիս հաձոյ լինել զի այնպիսին զարդարիս, զոր դուխակ առնես՝ անտի յայտ լինիցի ամենեցուն. յորժամ մնանես ի հրապարակի ի սենեակ, վաղվաղակի մերկանաս զշնդեղձն, հանես զոսկին և զմարգարիտն ։ Եթէ վասն առնն ինչ առնելիր, ի տանն պարտ էր արկանել և ոչ արտաքոյ. և եթէ ստոյգ առնն կամիս հաձոյ լինել՝ ցածուխիք, հեզութեամբ, պարկեշտուխք զարդարեաց, և այնպէս հաձոյ լինիս ։

Նաւատայ լինած, կին դու, թէպէտ և կարի ոք մեծամիտ իցէ այրն, այնու վազ պատրի՝ յորժամ հեզութիւն պարկեշտութի ցուցանես, և յորժամ չսիզայցես, չնազիցես, չինդրես աւելի պաձուձանս, այլ զհամայն և զչափուն ։ Ասայց զանխտիրն և զանառակն թէպէտ և բեւր պաձուձանօք պաձուձեսցիս, չկարիցես ածել զբև ։ Եւ գիտեն բազումք՝ որ այնպիսի արանց դիպեցան. որչափ և պաձուձեսցես զանձն, նա քանզի զեղխ է՝ առ այլս երթայ ։ Ասկ յածոյն և զդաստին ոչ պաձուձանօք հաձոյ լինիս, այլ նոցին հակառակօքն ։ Ասիրաս և ի սրտմտութի առնես զնա. քանզի զկարծիս զարդասիրաց առնուս յանձն. թէպէտ և առ ակնածել, քանզի հեզ է այրն, չասիցէ ինչ, այլ ի մտի ըստգանիցէ զքեզ. և ի նախանձուէ չլինիցիս ազատ ։ Իչ ապաքէն զաւետ վնասն յանկուխն այնուհետև մերժիցես ի քաց, և ի նախանձ դրդուես զայրն ընդ քեզ ։

Ասերևս կիսմիկք լսել զանպիսի բանս, և յանուշացուք, և ասիցէք եթէ զարս գրդուէ ընդ կանայս ։ Իչ եթէ զարս գրդուելոյ վասն ասեմ զայս. այլ կաւ միմ եթէ դուք ձերով իսկ կամօք առնիցէք զայս ։ Ա ասն ձեր՝ և ոչ վասն նոցա. ոչ զի զնոսա ազատեցից ի նախանձուէ, այլ զի զձեզ ազատեցից յանօ-

գուտ պաՀուՃանաց ։ Կամիս գեղեցիկ երևել, այլ գեղ խնդրէ Հաճ, այլուսի գեղոյ ցանկայ Թագաւորն։ Օ ինչ կամիցիս, զնաճ սիրելի առնել՝ Թէ զմարդ Հոմանիս ։ Եթէ այնու գեղով գեղեցկանայցես, Հաճ ցանկասցի գեղոյ քոյ. և եթէ առանց այնր գեղոյ լինիցիս, նա գարշեսցի ի քէն, և արք սիրտք լինիցին քո Հոմանիք. քանզի առնահկնոջ ոչ աղնիւ այլ ոք ցանկանայ, այլ ժանդ ոք ։

Օ այս և առ արտաքին գեղն ածջիք զմտաւ. զի այն գեղ՝ զոգւոյն ասեմ՝ զնաճ պատրէ, և այս՝ զարս սիրտս։ Տեսանես զի ձեզ զգուշանամ, զձինջ Հոգամ, զի գեղեցիկք լինիջիք՝ և ստոյգ գեղեցիկք, և փառաւորք՝ և ստոյգ փառաւորք. զի փոխանակ արանց պղծոյց Հոմանեաց՝ ունիցիջիք զամենեցունցն Հաճ սիրելի ։ Այս որ զնա սիրելի ունիցի, ոչամ նմանող իցէ։ Ընդ հրեշտակապետս բերկրիցի, և ընդ հրեշտակս ցնծասցէ ։ Օ ի եթէ որ ի Թագաւորէն սիրեսցի քան զամենեսին երանելի է, որ չայն սիրեսցի սերտ սէր՝ իմ իմիք արժանի լինիցի ։ Եթէ զնամ աշխարՀս միանգամայն ընդ նմա կշռիցես, չարժէ զայն գեղ ։

Յայն գեղ փութասցուք, այնու զարդու զարդասցուք, զի երկնից արժանի լինիցիմք, Հոգևոր առաքաստացն, անմահ Հարսանեացն ։ Վանզի այս գեղ չամ իմիքէ եղծանի. և Թէ բարիոք իսկ պահիցի, ոչ ի ցաւոց վտտիցի և ոչ ի Հոգոց ծնկիցի, որոմ չէն Հնար լինել, չքաւէ չտևէ մինչև ցքսան ամ։ Իսկ այն փթթի, ցանկ ծաղկի, չար Հասանէ. չէք անդ երկնչել ի փոփոխմանց, Թէ գուցէ պառաւուն գայցէ, և խորշք ի չայս անկանիցին, և կամ Թէ ցաւք Հասանիցեն և չանգոյ Հանիցեն և զգոյն ժժգոյնիցեն և զգեղն եղծանիցեն, և կամ տրտմուէ Հոգք Հասանիցեն և զմոյն տմոյն առնիցեն. այլ չայամ աՀմենայնէ ազատ է։ Իսկ այս գեղ մինչ չէ երևեալ խափՀու, նա և մինչև երևին՝ չէ ինչ բազմոց զարմանալի. զի ցածուցնք ոչ ինչ զարմանան, և որք զարմանան՝ կշտամբութիք զարմանան ։

Չուրդ մի զայամ Հարկանիցիմք, այլ զայնու գոյգեմք, զի մեծապայծառ լապտերօք երթայցեմք յաւագասան. քանզի ոչ եթէ կուսանաց միայն տուեալ

է զայն, այլ և՝ մեր ոգւոց որ ի չարեաց կուսանք ի-
ցեն։ Եթէ կուսանաց և եթ էր, ապա և ոչ հնդիկն
ընդդէմ փակէր. ամենեցուն է առագաստն՝ որ ոգ-
ւովքն կուսանք են, որ ի մարմնաւոր պաճուճանաց
ազատեալք են. քանզի ապականեն զեղ ոգւոցն
այնպիսի պաճուճանք։ Եթէ անարատք մնայցեմք,
տանիցին զմեզ անդր և տայցեն Թագաւորին. " Ահա
սեցայ, ասէ, զձեզ առն միոջ իբրև զկոյս մի մե-
ծի դիմեն առնել Քրիստի "։

Օ այս ոչ առ կուսանսն և եթ ասաց, այլ և առ մեզ
իսկ լուսաւն բնաւին եկեղեցւոյ։ Օ ի անարատ ոգին
Թէպէտ և առն լինիցի՝ կոյս կայ ստոյգ կուսութիւ՝
զարմանալեաւն աբանչելեաւն. զի մարմնոյ կուսութիւն
զայրս կուսութիւ չՀետ երթայ իբրև զնորին ստուեր.
իսկ Հոգմարիտ կուսութիւն այն է. այնու զարդարեա-
ցուք, և այնպէս կարիցեմք զուարթ երեսօք տեսա-
նել զիեսայն. վառելովք լապտերօք մտանիցեմք յա-
ռագասն. եթէ զեւզն ևս անպակաս ունիցիմք ընդ
մեզ, եթէ զոսկին ձուլիցեմք և եւզ գործիցեմք, այն
է որ մեծապայծառ լուսաւորէ զլապտերն. քանզի
եւզն այն մարգասիրուն է։ Եթէ այլոց բաշխեսցուք
զինչս, եթէ զոր ինչ ունիցիմք՝ Համակ եւզ գործի-
ցեմք, անդ օգնեսցէ, յայժմ չայեկան լինիցի մեզ.
և չասիցեմք զոր ի ժամանակին յայմմիկ, եթէ " Տուք
մեզ եւզ, զի ահա շիջանին լապտերքս մեր "։ չկարօ-
տիցիմք այլոց, չերթայցեմք առ վաճառականն, և
չփակիցի դուռն Հարսանեացն և մնայցեմք արտա-
քոյ։ չլսիցեմք զահագին և զսոսկալի բարբառն, յոր-
ժամ զդուրսն բախիցեմք, թէ " Ողիտեմ զձեզ "։
այլ Հանապէ զմեզ, և ընդ փեսային իսկ մնանիցեմք
յառագաստ Հոգևոր, և վայելեսցուք յանչափ բա-
րութիւն։

Օ ի թէ աստ այնչափ վայելուչ են Հարսանիք,
մեծապայծառ առագաստք, որպէս զի չյագիցեմք իսկ
նայելով, որչափ ևս առաւել ուր երկինք են սենեակ,
և երկնից առագաստքն ամենալիցք։ Ընդ մեռուք,
անդր փութասցուք. զի թէ առագաստն այնչափ գե-
ղեցիկ է. ապա ուրեմն փեսայն անչափ գեղեցիկ։
Եւ զինչ ասացից թէ զոսկին Թօթափեսցուք և տա-

ցուք կարօտելոց, թէ զանձինս եւս հասանել վաստակել, և թէ հնար ինչ էր ընդ այնմ բնակել, յայսպիսի գեղ վայելել, զնորա միայն զերեսն տեսանել, չէր պարտ բազում յօժարութիւ զայմ ինչ յանձին ունել։ Ո թագաւոր ոք երկրաւոր թէ տեսանիցեմք՝ զարմանամք, իսկ յորժամ զթագաւորն և զփեսայն միանգամայն տեսանիցեմք, չիցէ պարտ վասն այսպիսի բարուքեանց զայմ ինչ յանձն առնուլ, արդարև այս ստուեր, և այն ճշմարտութիւն. թագաւորն և փեսայն յերկինս է. և պարտ է փութալ արժանի լինել, և քան զայմ ինչ զայն լաւ համարել. զի կարասցուք ելանել նմա ընդառաջ լապտերօք. մերձ ձեռնալ և միշտ ընդ նմին բնակել։

Ընդ ածեալ զայնպիսի բարուքեան զմտաւ, զինչ չիցէ պարտ առնել, որպիսի հնարս հնարել, զոր չարչարանս չհամբերել. վասն որոյ աղաչեմ, արիացուք գութ ընդ այնպիսի բարուքեի, փափագեսցուք փեսային, եղիցուք կուսանք ճշմարտութեն։ Վասնզի զոգւոցն կուսութիւն խնդրէ ճշն. նովին հանդերձ մոցուք յերկինս. զի մի ունիցիմք սպի և մի խորշ ինչ և կարկամութի, և մի այլ ինչ այնպիսի. զի և խոստացելոց բարուքեցն հասանիցեմք. որոց լիցի ամենեցունն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութիւ ճշն մերոյ Յի Վի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ՕԳՈՑԸ լերուք մի գլորիցիմք զառանց բժշկուե գլորուե՛ն։ Այլեկ ցկալուլեի միայն իցեն իրքն, գոյ հնար հաստատելոյ. ասլա եթէ քնաւ իսկ կործանիք ցիմք, զի՛նչ ինչ այնուհետեւ հնարք լինիցին։ Ինդ որս չիցեն քնաւ գլորեալ՝ այսպէս խօսի, զի ահիւն պինդ պահիցէ զնոսա. չիք, ասէ, հնար գլորելոյն հաստանել մինեթարուե՛ն։ իսկ առ գլորեալսն զի մի անյոյս լիք նիցին, զնորին հակառակն ասէ, թէ "Արդեակք, զորս դարձեալ երկնեմ, մինչև նկարեսցի Քն՛ի ձեզ"։ և դարձեալ՝ եթէ "Որ օրինօքն արդարանայիք, անկայք ի հնորհացն"։ ահաւասիկ վկայէ՝ եթէ անկան։ Օի որ կանգուն կայ՝ յորժամ լսիցէ թէ գլորելոյն չէ հնար հաստանել թողուլեէ, սնդի և ըզգուշագոյն լինիցի, և աս քան զևս հաստատուն կայ. ապա եթէ և առ գլորեալսն զնոյն սաստկուլեի՛ կիր արկանէր, չկանգներ զբ երբեք։

Որպիսի՞ ինչ յուսով յուցանել պարտ իցէ զդարձն։ Ո՛չ միայն, ասէ, արտասուեաց, այլ և խնդրեաց. չհանէ՛ի բաց զապաշխարուե՛ն, այլ և զնոսա զգուշացուցանիցէ չգլորել։ Որը չհաւատայցեն գհնինին, զայն յիշեսցեն. որը առանց պատժոյ զմեզն համարեսցին, զայն ածցեն զմտաւ, եթէ Քնաւ ընդէր չէ հաս թողուէ զի ոչ ապաշխարեաց՝ որպ արժանն էր։

Կամիս տեսանել զատոյգ ապաշխարուե՛իւնն. լուր զՊետրոսի ապաշխարուե՛ին յետ ուրանալոյն. տես զիարգ պատմ զիրս նորա աւետարանիչն. "Երե, ասէ, արտաքս և ելաց դառնապէս"։ վասն այնորիկ և Թողան նմա այնպիսի մեղք, զի ապաշխարեաց որպէս՛ի դէպ էր ապաշխարել, Թէպէտ և չէ էր զնուազն զնեալ և ոչ պատարագ մատուցեալ, չէ և ևս էր բարձեալ մեղացն, այլ տակաւին բռնացեալ։ Երե զի ըստանելիցիս՝ եթէ ոչ այնչափ առ ծուլուե՛էր ուրացուե՛ին, որչափ յայ Թողացուցանելոյ առ՛ի խրատել զնա Հանապէղ զչափ մարդկեղէն, և չհակառա-

1 Ցօրինակին ընդ բառիւն։

կել ընդ բանս վարդապետին, և մի մեծամեծս ինչ քան զայլս խորհել, այլ՝ի միտ առնուլ՝ եթէ չիք ինչ հնար բարւոյ իմիք առանց այլ լինել. և " Եթէ ոչ որ չինէ զտուն՝ ընդունայն վաստակին շինօղք նորա ", ի ման այսորիկ և առ նա միայն ասաց Քրիստոս, եթէ " Ընդդեաց սատանայ մտղել զքեզ իբրև զցորեան. և չեթողում՝ի ձեռաց, զի մի պակասիցեն հաւատքդ ". Քանզի դէպ էր նմա մեծամտել, զի դիտէր զնձին՝ եթէ նախ քան զամենեսին նա քաջ սիրէր զՔրիստոս, վասն այնորիկ ելաց դառնապէս. և զայլ ևս զգործան յետոյ նման լալոյ գործեաց։ Օ՜ի՜նչ ինչ արար։ Ի բեւեր ձգուն արկ զանձն յետ այնորիկ, և բազում իրօք ցուցանէր արուեստ, և զգուշոյն առաքինութեան։

Պաշխարեաց և Յուդաս, այլ չարեալ իւրում և չարաչար, զի խեղդն արկ և մեռաւ։ Պաշխարեաց՝ որպէս ասացին իսկ Քրիստոս. մանաւանդ՝ եթէ չապաշխաբեացն իսկ. քանզի արտասուքն ոչ եթէ ապաշխարուեթէ էին, այլ ինասակարուեթէ և ցաւսման. և յայտ՝ի գործոցն է՝ զոր առ յոյսս գործեաց։ Պաշխարեաց և երանելին Պաւլոս, և ասէր այսպէս. " Ուացիոյ զՔրիստոս զհաչին իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից ". և զվաղուց զգործեալ զմեղսն յետ այնչափ ամաց և ազգաց իբրև զնոսր ինչ սգայր։

Պաշխարողին ոչ է պարտ բարկանալ, այլ սրբտաբեկ սրտառուչ շրջել՝ ըստգիւտ և պարսաւ, և առանց համարձակուեթ իբրև զպատժապարտ, և որպէս թէ ողորմուեթ միայն պարտի կեալ. իբրև զապաւիտաւորն առ երախտաւորն երևել. իբրև զապաշխորհ և զանպիտան, որպէս թէ բազում տանջանաց արժանի։ Եթէ այսոքիսի միտս ունիցի, չբարկանայ իբրեք, չցասնու, այլ՝ի սուգ շրջի. լայ, հեծէ, յոգւոց հանէ, աշխարէ զցայգ և ցերեկ։ Պաշխարողին չէ պարտ մոռանալ իբրեք զմեղսն. այլ զնոյն առաջել՝ մի յիշել զմեղսն, և իւր մի իբրեք մոռանալ։ Եթէ մեք յիշեցեմք զմեղսն, նոյն մոռանայ. ապա եթէ մեք չյիշեմք, և ոչ նոյն մոռանայ. անձամբ անձանց պատիժս արասցուք, անձամբ զանձանց ամբաստան լեցուք, և այնպիսս հաշտեսցուք զդատաւորն։

Ա՛եղբ որ խոստովանին, նուաղագոյն լինին. և որ ոչն խոստովանին, ևս քան զևս Թանձրանան։ Յորժամ առնուցուն յաւելուած զանամեթութիւնն, զիարդ մարթիցի այնուհետև զգուշանալ դարձեալ միւսոյն չանկանել, որ յառաջագոյնն չիմացաւ եթէ մեղանչիցէ։ Ա՛ի ժխտեսցուք աղաւեմ և յուրասց լինցուք, և մի ակամայ կրիցեմք պատիժս։ Ա՛ուաւ և Այսին յայ, եթէ "Ա՛ւր է Ա՛բէլ եղբայր քո", և ասէ. "Ոչ գիտեմ. միթէ պահապանն ինչ եմ ես եղբօրն իմոյ"։ Ցեսանեն զի և ևս քան զևս Թանձրացոյց զմեղսն։ Ւսկ Հայրն ոչ այնպիսի ինչ. այլ զինչ։ Յորժամ լուաւն եթէ "Ա՛ւր ես Ա՛դամ. Ա՛ուայ, ասէ. զձայն քո և երկեայ, քանզի մերկ էի և թաքեայ"։

Ա՛նճ բարուեաւ է՛ի միտ առնուլ զմեղսն, և յիշել հանապազ. չի՛ք ինչ որ այնպէս բժշկեսցէ զյանցանս իբրև զհանապազորդն յիշատակս. չի՛ ինչ որ այնպէս դանդաղկոտ առնէ զմարդն՝ի չարիս։ Վի՛տեմ՝ զի սոսկայ և աւելոյց ելանէ ոգին, և չունի յանձին տանջել՝ի խղճէն՝ յորժամ զչարիսն յիշեսցէ. այլ դու սանձեա և դիր վարելիս՝ի բերան. քանզի իբրև զձի տրմուղ անիմաստ է, և չկամի գալ՝ի հաւան եթէ մեղայ։ Այս այն ամենևին իսկ սատանայական գործ է. այլ մեք հաւանեսցուք եթէ մեղաք՝ զի ապաշխարիցէ և ապրեսցէ՝ի տանջանաց։

Ա՛րդ աղէ՝ ասա, զիարդ աղաչիցես ողորմութեան հասանել, որ չեղեր երբէք խոստովան զմեղսն։ Ա՛յ ապաքէն որ մեղանն՝ իցէ ողորմութիւն և մարդասիրութիւն արժանի. դու զի ոչ երբէք առեր յանձն՝ եթէ մեղաւոր էի, զիարդ աղաչիցես ողորմութիւն գտանել. չէր վերայ այնչափ անամեթեալ ժխտիցես։ Հաւանեսցուք զանձինս՝ եթէ մեղաք. մի լեզուաւ միայն ասիցեմք, այլ և մտօք. մի մեղաւոր միայն կոչեսցուք զանձինս, այլ և զմեղսն մի ըստ միոջէ զնտանածցուք, ի համար արկցուք, այլ և խնդիր արասցուք։

Ոասեմ եթէ ձաղէ զանձնդ առաջի բազմաց, և ոչ եթէ այլոց առաջի ամբաստան լինիցիս զքէն. այլ հաւանեա մարդարէին որ ասէ, եթէ "Յայտնեա առաջի

ՙնն զՀանապարհս քո ,, ։ Ա՛յ խոստովան լեր զմեղն , դատաւորին յայտնեա գյանցանսն , յորժամ յաղօթս կայցես . Թէ և լեզուաւ ոչ , սակայն յիշատակաւ . և այսպէս արժանի լիցիս ողորմութեան գտանել ։ Ապէ ունիցիս զմեղն Հանապազ յաչի , ապա ոչ երբէք ընկերին ոխս պահիցես ։ Ցասեմ եթէ ստուգել իակ զանձնէ Թէ մեղաւոր իցես , ոչ այնպէս կարէ խոնարհ հեցուցանել զանձն , որպէս ինքեանք ինքեանք իւ բարձունիւբ կերպարանաքն մեղքն զմիմեանս պահանջիցեն ։ Ա՛յնուհետև ոչ ոխս ընդ ուժմբ ունիցիս , յորժամ զայս զմտաւ ածիցես . ոչ բարկանայցես , ոչ բամբասիցես , ոչ մեծամտիցես , և ոչ ՚ի նոյն միւս անգամ անկանիցիս , այլ միտեալ ՚ի բարուքեիս յաժարիցիս ։

Ցեսանես , ո՛րչափ ՚ի յիշատակաց մեղացն ծնանիցին բարուքիքն ։ Ապրեսցուք զնոսա ՚ի ներքս ՚ի միտս մեր . գիտեմք եթէ սոսկան ոգիքն յայտնիսի դառն յիշատակէ . այլ բռնաբարեսցուք , հարկ ՚ի վերայ գիցուք՝ ստեպ կակծեցուցանել յիշատակատն . մերթ պատժոցն ժամանակաւ , մերթ յիշատակելով մատուցանելով զմեղն ՚ած , և խնդրուածս առնել , զի վաղ վաղակի ջնջեսցէ զնոսա ։ Ապա եթէ ոչ , այժմ մռանայցես , անգ յիշեսցես և ակամայ առաջի ՚ամ տիեզերաց ձաղիցես . առաջի բարեկամաց և Թշնամեաց և հրեշտակաց ։ Ապանզի ոչ առ Աւուրն միայն ասացաւ , եթէ " Աւու արարեր ՚ի ծածուկ , ես արարից ամենեցունց յայտնի ,, ։ Ամենևս երկեար ՚ի մարդկանէ և ամաչեցեր առաւել քան յԱ՛ , և զԱ՛ տեսանել ոչ ինչ համարեցար , այլ ՚ի մարդկանէ պատկառեցեր ։ Ա՛ռ ականէ մարդկան է , ասէ , երկիւղ նոցա . վասն այնորիկ այնու տայցես վրէժս ։ Յանդիմանեցից , ասէ , զքեզ առաջի ամենեցունց , կարգեցից կացուցից առաջի քո զմեղն . զի ՀՀմարիտ է այն՝ Թէ յայնմ աւուր յանդիմանին մեղքն , Թէ ոչ ստէպ յիշատակաւ եղծանիցեմք ։

Ա՛ռ զիարդ ձաղի մարդուէին և անողորմութեին . " Ապաղեայ , ասէ , և ոչ եառաք լինձ ուտել ,, ։ երբ ասիցի այս . միԹէ յանկճան ուրեք կամ ՚ի ստօրնա՝ ։

1 Յօրինակին ՚ի ՚ուրէ ։

և ոչ ուրեք ։ Ա՛յլ երբ ։ Յորժամ գայցէ որդի՝ այ փա-
ռաւք իւրովք, և ժողովեսցէ զազգ ՚ամ, և մեկնեսցէ ՚ի
միմեանց զոսոա և զնոսա, յայնժամ լու ՚ի լու ամենե-
ցուն ասիցէ ։ յորժամ կացուցանիցէ զոմանս յաջմէ
և զոմանս յահեկէ, թէ « Ա՛ղաղեալ էի և ոչ եատուք
ինձ ուտել ։ »

Տէս զարձեալ և ՚ի կինգ կուսանան որք առաջի ա-
մենեցուն լսիցեն, եթէ ոչ գիտեմ զձեզ ՚ի կինգն ։ և
հինգք ոչ այնչափ միայն թէ յայտ առնեն ՚ի կինգից ։
զայժմ չարս և զանողորմս և զմարդի կուսանս, և զայ-
նոսիկ՝ որ չեղեն նոյնպիսիք, հնգիւքն ակնարկէ ։
Այնպէս և որ զմի տաղանդն առ և թաքոյց, և լուաւ
որ ինչ պարտ էր լսել ։ և որ ՚ի կինգն և ՚ի ձերկուսն
առն՝ առաջի ամենեցուն յարգին, և նա խոտի ։
« Ո՛չառաչ չար, ասէ, և վատ ։ » և զայն ոչ եթէ բա-
նիւք միայն, այլ և արդեամբք իսկ յայնժամ յանդի-
մանէ, որպ աւետարանագիրն ասէ, թէ « Տեսցեն զոր
խոցեցինն ։ » Ի՛նանգամայն իսկ յարուն ամենեցուն
լինի արդարոց և մեղաւորաց ։ Ի՛նանգամայն իսկ ա-
մենեցուն դատաւորն գայցէ ։ Ո՛ւ միտ առ օրպիսիք որ
յայնժամ լինիցին, որք յայնպիսի տրտմութիս և ՚ի
ցաւս մատնեացին ։ որք ՚ի հուր ձգեսցին ՚ի ժամանա-
կի այլոց պատկերոց ։ « Ո՛կայք, ասէ, օրհնեալք հօր
իմոյ ժառանգեցէք զարքայութիւնն, որ պատրաստեալ
է ձեզ ՚ի սկզբանէ աշխարհի ։ » և զարձեալ՝ եթէ
« Ո՛րթայք յինէն ՚ի հուրն, որ պատրաստեալ է սա-
տանայի և հրեշտակաց նորա ։

Ի՛ վայրապար զբանն լուիցուք, այլ այնպէս
հաստատուսցուք, թէ այօք տեսանիցեմք ։ և համա-
բեսցուք եթէ այժմ իսկ եկեալ խօսեսցի ընդ մեզ և
հրամայեսցէ երթալ ՚ի հուրն ։ Ի՞րպիսի ոգի ունիցիմք
յայնժամ, զի՞նչ միխթարուիմք, զի՞նչ գործեսցուք
յորժամ ընդ մեզ հրամայիցիմք կորել ։ և զի գոր-
ծիցեմք, յորժամ վանն յափշտակուիմք պատուհա-
սիցիմք ։ զի՞նչ պատճառս դնիցեմք, զոր բարբառս յօ-
դիցեմք, և հաձել կարիցեմք ։ Ո՛չիցէ ինչ և չգտանիմք
ցի ինչ, այլ հարկ լիցի ՚ի կապանս մնանել, դէմարո-
կել, զերկիր նչմարել, ձգել ՚ի բերանս հնոցացն, ՚ի
գետ հրեղէն, ՚ի խաւարն արտաքին, և չգտանել ու-

րեք պատասխանի, զի չէ իսկ հնար առ միմեանս անցանել. "Պանդի վիհ մեծ է աստ ընդ մեզ և ընդ ձեզ". և ոչ՝ եթէ կամիցի ոք՝ է հնար անցանել և ձեռն տալ, այլ հարկ լինիցի ցանկ այրել, միշտ խորովել, և չիցէ ոք՝ որ օգնական լինիցի, թէպէտ և հայր իցէ կամ մայր, կամ որ ոք իցէ, և բազում համարձակութիւն ունի առ Ած: "Այղպայր, ասէ, ոչ փրկէ, և ոչ փըրկիցի մարդ".

Այս արդ զի չիք յայլ ոք վստահ լինել վասն անձանց փրկութեան, բայց միայն յանձինս յետ այ մաքդասիրութեան, աղաչեմ ամենևին զամ հնարս հնարել, զի վարս պարկեշտս ունիցիմք և բարիոք առաքինութեամբ: Այս բնաւ յառաջնումն տիս մի առնուլ աղտ ինչ յանձին. եթէ ոչ՝ գէթ յետ առնելոյն մի ննջեսցուք, այլ ցանկ ստէպ կացցուք լուանալով զաղտն ապաշխարութեամբ, արտասուօք, աղօթիւք, ողորմածութեամբ. և եթէ ոչ հասանիցէ ձեռն, ասէ, առնել ողորմութի, այլ բաժակ մի ցուրտ ջուր ձեռն հաս ես տալ. թէ և կարի աղքատ իցես, և երկուս խե բևեչս պղնձիս ունիս. թէպէտ և կարի՛ տնանկութեամբ իցես, և զայն ևս ոչ ունիցիս, սակայն ուտ ունիցիս՛ի տես երթալ հիւանդաց և՛ի բանդ մտանել և զկապեալսն միխիթարել. սակայն յարկ ունիս՝ որ օտարին վանս տայցես:

Օ՛ի չէ, և չէ իսկ նեղել այնմ՝ որ չառնիցէ ողորմութեամբ: Օ՛այս ստէպ ասեմ առ ձեզ, զի գոնեա՛ի ստէպ ասելոյն վճարեսցուք. զայս ասեմք՝ ոչ զի նոցա ինչ աւելի խնամ ունիցիմք որոց բարիս առնիցեք, քան ձեզ. զի նոցա աստ տայք, և դուք յերկինս առնուք փոխարէն: Այլոց լիցի ամենեցուն մեզ հասանել՛ի Քրիստոս Յիսուս տիս մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Վասնզի այսպիսի իսկ են այքն, յաւէժ կենդա-
նականք և ի վեր քան զանենայն փոփոխմունս և
զվախճան, Վասնզի չլինին փառք արտաքոյ, այլ ի
ներքոյ. որպիսի ինչ իցէ զոր ասեմ. զի ոչ եթէ ի
պէսպէս հանդերձից կամ ի բազում սպասաւորացն
լինիցին փառքն, այլ առանց այնր ամենայնի՝ ինքն իսկ
մարդն զգեցեալ լինիցի փառօք: Իսկ աստ եթէ ա-
ռանց այնր լիցի, մերկ գտանիցի ի փառաց, որպէս
ի բաղանիս զի տեսանեմք մերկ և խայտառակ զմե-
ծատունս. և ի հրապարակս զբարգոյծս. և բա-
զումք առ վշտից և յորդւոց իւրեանց լոկ մնացին:
Այլ անդ հանապազ ընդ իւր ամ ուրեք ունիցի
զփառն. որպէս և հրեշտակք՝ ուր երևեսցին՝ ընդ
իւրեանս ունիցին զփառն, նոյնպէս և մեք. մանա-
ւանդ եթէ իբրև զարեգակն իսկ՝ որ չէն կարօտ հան-
դերձից և ոչ այլ իմիք. այլ միանգամայն՝ իբրև երևի՝
զփառս ընդ իւր ծագէ. նոյնպէս և յարիժամ լի-
նիցի:

Եւ արդ երթիցուք զհետ այնպիսի փառաց՝ քան
զոր ոչ գտանիցի այլ ինչ հեշտական, և թողցուք
զայս՝ քան զոր չիք ինչ վատթարագոյն: "Գանե-
լեօք, ասէ, հանդերձից մի պարծեսցիս". և այս պա-
տուիրան անդուստ իսկ ի վերուստ պատուիրէը տը-
ղայոց: Վասնզի կաքաւիչք և պոռնիկք և գազանա-
մարտք ևս առաւել գեղեցիկ և պաճուճանաց՝ քան
զքոյդ՝ հանդերձս զգենուն. և առանց այնր իսկ՝
այնպիսի ինչ իրօք պարծիցիս՝ զոր ցեցն հարկանէ, և
զկիցիս իսկ ի վայելելոյ: Տեսանես զի չէն հաստա-
տուն իրք և փառք աշխարհիս. զայնպիսի ինչ իրաց
պարծիցիս, զոր որդունք ծնանին, և կորնչիցի և ա-
պականիցի. քանզի, ասեն, եթէ ի հնդկիս որդունք
ծնանին զմետաքս կերպասացն:

Եթէ կամիս հանդերձս ստանալ, զայն ստացիր
որ ի վեր ի բարձունս ագանիցի, աքանչելի և լուսա-
ւոր արկանելին, զոսկեհուռ պատմուճանն. և ար-

դարձ՝ այն իսկ է ոսկի, որ ոչ ի հողոյ ելանիցէ՝ զոր անիրաւացն ձեռք փորեցին, այլ զոր առաքինութիւնն ծնանիցի։ Օ գեցցուք զայնպիսի պատուհաս, զոր ոչ մարգք աղքատք և ծառայք անկանեն, այլ ինքնին տէրն։

Այս Թերևս ասիցես, Թէ ոսկեհուռ հանդերձս ա զանիցիմք։ Այս այն զի՞նչ առնիցէ. քանզի ընդ ոս տայնանկին զարմանան ամենեքին, և ոչ ընդ այն որ զգենուցուն։ Այս ընդ նա իսկ է զարմանք. որպէս ի լոկ հանդերձան ոչ ընդ փայտս իւրէ զարմանալ ուր պարզիցեն, այլ ընդ Թափիչն որ այնպէս յօրինեաց ցե, Թէպէտ և փայտն զգեցեալ իցէ. զոր օրինակ և փայտս՝ ոչ վասն պիտոյից ինչ զգենուցու, նոյնպէս և ոչ որ զոսկեհուռ զգենուցու՝ պիտոյից ինչ վասն. այլ հանդերձիցն ի պէտս, բայց այլ ևս՝ պաճուճանք աւելորդք։ Այդ գիարդ չիցէ վերջին անմտութեան՝ վասն ոչընչին այնպէս փոյթ յանձին ունել, և անձանց փրկութէ մտան Թշնամւոյ լինել. զգեհենն արհամարհել, և զայծ Թշնամանել. զԱյս քաղցեալ տեսանել և զանց առնել։

Այ՞ր որ կարիցէ բաւական լինել հաւարել զխունկն խառնուածոյն, զՀնդիկն, զարաբացին, զպարսիկն, զցամաքն, զմանուն, զեղջն անուշունս, զխունկն աղացիկս, վասն որոյ ընդ վայր և անօգուտ ծախս ծախեսցեն։ Օ՛ի՛ նկուղս զմարմնդ, ով կին դու, որ ի ներքոյ լի՛ ես պղծութէ։ Այդ՝ վասն չար հոտոյն այդպէս ծախս ծախեսցես. որպէս զգայարիս որ եւղս անոյշս ցանիցէ, և զԹուրջ աղխասով զբաղասամփին աղնուական։ Այ՞Թէ կամիս՝ գոյ և այլ ինչ կարի առնոյշ, որով կարես զգիսդ անուշացուցանել. ոչ յաբաթացոց և յեԹովպացոց և ի Հնդկաց և՛ի պարսից, այլ անդուստ ի վերուստ յերկինից եկեալ։ Այ՛ ընդ ոսկւոյ վաճառի, այլ ընդ կամաց հաճոյից և ընդ անկեղծիկ հաւատոց։ Օ այսպիսի եւղ գնեօքը, որոյ հոտն բաւական է լնուլ զսիեզերս. որ յառաքելոցն բուրեր։ "Հոտ անոյշ եմք ի Քրիստ, ասէ, իցեն որոց ի մահ՝ և իցեն որոց ի կեանս"։ Իսկ այն զի՞նչ առնէ, զի և զխոզէ ասեն՝ եԹէ հեղնու յանոյշ հոտոյ։ Բայց յառաքելոցն ոչ միայն ի մարմնոյն, այլ և ի

հանդերձիցն բուրեր հոգևոր անուշութեին . այնպիս սի գեղեցիկ բուրեր հոտ անուշուեին ՚ի հանդերձիցն Պաւղոսի , մինչև զգեա հալածել . ՚Ի տերև , ո՛ր կա սի , ո՛ր ստահին , ո՛ր զմուռա . չէ ուրեք , չիք ուրեք այն պիսի հոտոյ անուշութեի ազնիւ և օգտակար . զի եթէ զգեա հալածեր , և զինչ ևս այլ ինչ ուշ գործեր :

Օ այն եւղ կազմեացուք՝ առաւել յարգի քան զա մենայն խնկաղացաց՝ որ յողորմութէն և ՚ի հոգևոր շնորհացն կազմի . զի յորժամ անդ երթիցեմք , բուրեսցէ ՚ի մեզ : Օ որ օրինակ աստ է ինչ՝ որ փախչիցի յանոյշ հոտոյ , և բաղուածք ուրախ առնին՝ եթէ ՚ի բաղանիս իցեն և եթէ յեկեղեցւոջ , և ուր բազմութէի ուրեք մարդկան իցեն և բուրիցէ հոտ ինչ այնպիսի , ամենեքեին անուշանան , նոյնպէս և յայնմ աշխարհի՝ յոգւոց բուրիցէ հոգևոր անուշութեին , կէսք փախչին և տեղի տայցեն , և այլք մերձենայցեն և ուղղախ լինիցին : Ո՛չ աստ դևք հալածին և ամ չարիք չիչքեն մերձենալ , և չկարեն հանդարտել , քանզի հեղձնուն : Ո՛յնու իւղով անուշանայցեմք և զնոյն կրիցեմք յանձին . զի այս դատարկութէ կարծ զգեցայեալ մեզ , և այն քաշուեթէ և զարմանալեաց , և բազում համարձակուի տայ : Օ ի զայնպիսի ըզխուենկս ուշ երիկը բուսցեցանէ , այլ առաքինութէին ծնանի . չեռառամի , չխամրի , այլ միշտ ծաղկի և պատուականս առնէ զայնոսիկ որք ունիցինն : Ո՛յնու օծանիմք յորժամ մկրտեցաքն , գեղեցիկ իմն բուրել հոտ հոգևոր անուշութէն , և ևս յառաջ բուրեցուցանել՝ մերոյ փութոյ գործ լինիցի :

Ա ման այնորիկ առաքինքն զայն՝ որ ՚ի քահանայութէն մատչելոց էր՝ իւղով օծանէին , զի անուշութէի բուրեսցէ ՚ի քահանայէն ՚ի նշանակ գործոյ բարութէ : Օ՞րիք ինչ չարահոտ քան զմեղս , զոր և մարգարէն մանուշս գրոչմէ : “ Ո՛վ եբեւեցան , ասէ , փտեցան վէրք իմ ,, և արդարև ևս չար քան զնեխուն և զփրտութէիւն չարահոտ են մեղքն : Օ՞ինչ ինչ չարահոտութէի քան զպոռնկութէի կայցէ , ո՛չ ՚ի պատահելն , այլ յետ մեղայն գործելոց : Ա՞յո՛ դիր , բազ համանիդ , և ասա ՚ի միտ առնուցուս զչարահոտն՝ որ անտի ծնանիցի , զչարատն , զպղծութէին և զաղտեղու-

Թիւնն : Վասնզի այնպիսի են մեղքն . մինչ չէ գործեալ իցէ՝ ցանկալի իմն Թուիցի , և յորժամ կատարեցին , ապա քաղցրութիւնն ցածնու և դադարէ , և սրամտութիւնն մտանէ և խռովեցուցանէ : Ուր արդարութիւն հակառակ իմն նմին , զառաջինն աշխատութիւնն իմն Թուի . և որչափ յամիցի՝ ևս քան զևս քաղցրանայ և հանդիստ ծնանի : Ուր այն ցանկութիւն՝ Թուել Թուի ցանկութիւն , այլ ամենայն և պատժոց ակն ունի . և յայսմ՝ կալ կայ աշխատութիւնն , այլ յոյս հատուցմանն առնէ Թեթև զաշխատութիւնն :

Արդ աղէ ասա , զինչ ցանկութիւն իցէ արբեցութիւն . ոչ ապաքէն ըմբռնելն . նա և այն չէ հեշտական ցանկութիւն ինչ : Յորժամ յանգգայ լինիցի , և զոք ի մերձաւորացն ոչ Ձանայիցէ , այլ քան զմելիս ևս չար մնիցի , ուր է զի ցանկութիւն իցէ : Այս և պռունկութիւն չէ ինչ ախորժական ցանկութիւն , յորժամ յախտէն ըմբռնեալ ոգիքն զդատաստանաւն արհամարհիցեն , և յետոյ խեղճ մնայն զոսկերսն ուտիցէ , զինչ ինչ այն ցանկութիւն իցէ . եթէ այն ցանկութիւն իցէ , ապա և քոս ցանկութիւն իցէ :

Այլ ես Ձմարիտ ցանկութիւն զայն ասեմ , յորժամ ոգիքն ի կարիս ինչ ոչ ըմբռնեսցին , և ոչ մարմնոյն հանդերձ ծիւրեսցին և ծակեսցին : Զինչ ինչ այն ցանկութիւն իցէ՝ ուր զատամնտնն կրձիցեն , և զայն գունակ գունակ յեղուցուն , և զարևն իբրև զձիւնս տեսանիցեն , մոլիցին , կատղիցին , և աւելի քան զգէհեն ջեռնուցուն : Այ ինչ այն ցանկութիւն , յորմէ վազվազակի զերծանել փութայցեն , և յորժամ զերծանին՝ խիղճն զմիտսն ուտիցէ : Եթէ հեշտական ինչ ցանկութիւն իցէ , ընդէր վազվազակի զերծանել կամիցիս . տեսանես զի անուշն միայն է ցանկութիւն :

Ուր մերս ոչ այնպիսի ինչ , այլ արդարև հեշտական է . ուր ոչ բոց ինչ յանգգնութեամբ բորբոքի , այլ արդարութեամբ վառեալ ի միտսն՝ յատակէ և ուրախ առնէ : Այնպիսի էր Պաւղոսի ցանկութիւնն՝ որ ասէրն . « Այս ընդ այս ուրախ եմ , այլև ուրախ ևս եղէց » . և « Ուրախ լերուք ի Տէր յամ ժամ » :

Իսկ այն ամօթով և պարսաւանաց է, և գաղտ գոր-
ծի, և լի բազում դժնդակութիւք. իսկ սա ազատ և
անարատ յամենայնէ է, և լի ամ քաղցրութեամբ.
Օ այս խնդրեսցուք, և զսորին գՀետ երթիցուք, զի
և ի հանդերձեալ բարութիւնսն վայելեսցուք չսոր-
հօք և մարդասիրութիւք Տեառն մերոյ Յիսի Քրիս-
որում հօր միանգամայն և հոգւոյն սքանչ փառք, իշխա-
նութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս.
ամէն.

Այ արդ զայս լուեալ՝ մի՛ ինչ գարշելացուք յաւգացն խրատուց, թէպէտ և վարդապետ իցեմք. թէպէտ իբրև Տիմոթէոսն չիցեմք ամենեքին, որ ընդունելոք զպատուէրսն և ուսուցանելոք. և այն զի և՝ի վարդապետաց ևս կարգի էր. որչափ ևս առաւել մեք։ «Ո՛ր ոմանք, ասէ, մերժեցին և նաւաբեկ եղեն՝ի հաւատոն»։ Յիրաւի իսկ. յորժամ վարք ուրուք պարսաւ իցեն, և այլազգի կրօնս ծնանի. նա և այժմ իսկ զգաստանալ է տեսանել, զի յայնսկիսի մտաց ընկերցմն՝ի խորս չարեաց, և՝ի հեթանոսութե՛ն կործանմն։ Ո՛վ մի՛ ահիւ հանդերձեալ դատաստանին տանջիցին, փութացան տալ մխիթար մտաց, եթէ սուտ է այդ ինչ որ՝ի մէնջս պատմեցաւ. և՝ի հաւատոց այնոքիկ կործանմն, որ զմտացն ևեթ խնդիրս յաձախեն. քանզի այնպիսի խորհուրդք գործեն զնաւաբեկութի՛ն։

Որպէս զնաւ ինչ ամուր զգուշալի են հաւատք. և որ անտի վրիպիցեն՝ հարկ է զի ընկղմին. և զայս յայտ յօրինակէն իսկ առնէ, «Որոց սակի են, ասէ, Հիմինաս և Ա՛լէքսանդրոս»։ և նոքօք զմեզ ցածուցանէ։ Յեսանէք զի յայնմ ժամանակի իսկ էին՝ որք զաւելիսն ուսուցանէին, որք քննելիս և՝ի հաւատոցն հեռանային, որք զիւրեանց մտաց զբարքաշ հաստատեել կամէին։

Որ նաւաբեկն լինի՝ մերկ և կողոպուտ մնայ. և որ՝ի հաւատոցն անկանիցի, չունի ինչ այնուհետև, չգըտանիցէ տեղի կալոյ, և ոչ զորմէ բուռն հարկանիցէ։ Ովեպէտ և վարս ինչ ունիցի, չգտանէ ինչ անտի օգուտ. զի յորժամ գլուխն ապականիցի, զի՞նչ ինչ շահ յայլոց անդամոցն գործիցի։ Ո՛վ թէ հաւատքն առանց վարուց չիցեն պիտանացու, որչափ ևս առաւել զնորին հակառակն։ Ովք զիւրեան արհամարհիցեն վասն մեր ՝ասէ, որչափ ևս առաւել մեզ պարտ իցէ վասն նորա զմերս արհամարհել. քանզի այնպէս է, յորժամ ոք՝ի հաւատոցն անկանիցի՝ չկարէ կալ յայ կաստանի, այլ կոծի, ծփի, մինչև ընկղմեսցի։

" Օ որս մատնեցի , ասէ , սատանայի , զի խրատիչ եին մի՛ ինչ հայհոյել ,» : Տեսանե՞ս զի հայհոյութիւն է մտօք քննել զայն . և յիրաւի իսկ . քանզի զինչ հաղորդութիւն ունին միտք մարդկեղինք ընդ այնպիսի անձառս : Այլ զիա՞րդ խրատեսցի զնոսա սատանայ՝ զի մի՛ հայհոյեսցեն . եթէ զայլս խրատիցէ չհայհոյել , որչափ և առաւել պարտ իցէ զանձն խրատել . իսկ եթէ զանձն մինչև ցայժմ չկարիցէ խրատել , ապա և ո՛չ զայլս [1] : Զասաց՝ եթէ զի խրատիչէ զնոսա սատանայ չհայհոյել , այլ զի՝ թէ խրատեցին չհայհոյել : Ո՛չ եթէ սատանայ ինչ զայն գործիցէ , այլ ի՝ նորա ի խրատելոյն այսպիսի ինչ լինիցի . որպէս և այլուր վասն պռոնկացելոյն է ասացեալ , թէ " Ի՞ատնեցէք զայնպիսին սատանայի ի՛ սատակումն մարմնոյ , զի ապրեցուսցէ զոգին »: Այս անյայտ խին է :

Այլ զիա՞րդ իցէ զի այս այսպէս լինիցի : Օ՞ր օրէ նակ դահիճք թէպետ և ինքեանք բեւր չարեօք լի են , սակայն զայլսն խրատեն . նոյնպէս դևն չար : Այլ ընդ՞ը , ասեն , դու քեզէն չտանջիցես՝ որպէս զի՝ արի յեսուն . կամ որպէս կ՝ասա զի՝ նախ , այլ սատանայի մատնիցես : Ո՛չ զի տանջիցին , ասէ , այլ զի խրատիցին : Կ՝ասէ և ինքն իսկ կարօղ եր խրատել , որպէս զի ասիցէ . " Այլ զիա՞րդ կամիք , զի գաւազան՝ նո՛ւ եկից առ ձեզ՝ թէ սիրով » . և դարձեալ՝ " Ո՛չ զի մեք ընտիր երևեսցուք , այլ զի դուք զբարիս գործիցէք »· և դարձեալ՝ եթէ " Ո՛չ ի՝ քակել այլ ի՝ շինել »: Այս արդ ընդ՞ը զսատանայ կոչիցես ի պատժել : Օ՞ի հանդերձ սատանայիւն և տանջանօքն՝ և Թշնամանքն ևս սատիկ լինիցին ,

Այլ այլազգ ևս . զանհաւատսն ինքեանք խրատէին , և զԹիւբեալն սատանայի մատնէին : Այս ընդ՞ը արդեւք զանհաւատսն ինքեանք խրատէին . զի Կ՝նախ անհաւատ էր , քանզի դեռ տակաւին փորձէր . և զի ուսանիցին անհաւատք , եթէ չվրիպէ ինչ յառաքելոցն , վասն այնորիկ ինքեանք պատժէին զնոսա : Իսկ զնոսա որք ուսեալք և տեղեկացեալք էին , և յետոյ խոտորէին , սատանայի մատնէին . զի յայտ առնիցեն՝

[1] Ցբրինակին պակասէ ապա և ո՛չ զայլս :

եթէ ոչ անձին ինչ զօրութիւն ժողովէին և յաղթէին, որք յետոյ ի հպարտութիւն մատնեցան։ Օ՜ որ օրի- նակ յարքունիսն՝ զթշնամին իւրեանց ձեռաք իսկ կո- տորեն. և որք ընդ իւրեամբքն իցեն և յանցաւոր գտանիցին, դահճաց մատնիցեն։ Օ՜ ի յայտ լինիցի եթէ յայժամ առաքելոյն պահպանութիւն պահէին։ Այլ այլազգ և. նա և այն իսկ չէին սակաւ իրք, այնչափ զօրուն ունել՝ մինչև սատանայի և հրեշտակ տալ. և այնու և յայտ լինէր եթէ ի ծառայութիւն և ի հնազանդութիւն կայ ակամայ առաքելոյն սատանայ։

Այս եթէ զիարդ մատնիցէ, լուր. «Յողովել ձեզ, ասէ, ի մի վայր, և իմոյ հոգւոյս ընդ ձեզ՝ զօրութիւն հանդերձ ոտն ներոյ Ջեռ Աչեռ, մատնեցէք զայնպիսին սատանայի ի սատակումն»։ Այլանէր ի հասարակաց ժողովրդենէն, քակէր ի հօտէն, լինէր թափուր և մերկ ի ընորհացն, մատնէր ի ձեռս գայլոցն։ Օ՜ որ օրինակ ամէն զբանակն երբայեցւոց, նոյնպէս և հո- գին զեկեղեցի Ջանաչէր. և որ արտաքոյ գտանէր՝ ի հուր մատնէր, և տարագիր լինէր ի համարոյ առա- քելոցն։ Այնպէս և ոչն մատնեաց զՅուդա սատա- նայի. «Ա՛ղվաղակի, ասէ, ընդ պատառոյն եմուտ ի նա»։

Լայդ է և այլ ինչ ասել. զորս յուղղութիւն կա- ռնին ածել, ոչ ինքեանք տանջէին. և զորոց գիտէին թէ չեն գալոց յուղղուի՝ ինքեանք պատժէին. և ե- թէ ոչ յայսպիսի ինչ միտս, ապա յայժամ առա- ւել ահագինք երևին, յորժամ այլոցն մատնէին։ Այնպէս և Յովք մատնեցաւ սատանայի, ոչ վասն մեղաց ինչ, այլ վասն առաւել ընտրութեան։

Լաղում և այժմ լինիցի այնպիսի ինչ. քանզի չգի- տեն քահանայքն զնշաւորս, որք չիցեն արժանի խորհրդոցն և հաղորդեսցին, ած բազում ինչ առ- նէ այսպիսի ինչ, և մատնէ զնոսա սատանայի. իցէ յորժամ ցաւք ինչ ի վերայ հասանիցեն, և իցէ եր- բեք նեղութիւնք կամ սուգ կամ վիշտք, և այլ ինչ զինչ և իցէ չարչարանք։ Այս զայս Պաւղոս իսկ յայտ արարեալ ասէ, եթէ «Ա՛ման այնորիկ են ի ձեզ բազում հիւանդք և անտաժետք, և շատ ննջեցեալք իսկ»։

Այլ զի՞նդ, ասէ. Թէ մի անգամ՝ ի տարւոջ մերձենայցեն, և այն մեղք իցեն։ Այն իսկ իցեն կարի ադէտք, զի ոչ մոռք, այլ ժամանակին երկայնութիւն սահմանեցին զարժանն մատչելոյ, և լաւութեի՛ւն համարին զոչ ստէպն մերձենալ։ Ո՛ի եթէ մի անգամ անարժանութի՛ւն մատչիս, վնաս անձին առնես. և արժանաւորութի՛ւն՝ Թէպէտ և բազում անգամ, կեղծաւորութի՛ւն ցուցանէ զոգիսդ։ Ո՛չ ինչ յանդգնութիւն բազում անգամ մերձենալն, այլ անարժանութի՛ւն մատչել. Թէպէտ մի անգամ յայտ ժամանակս կենայ իւրոյ մերձենայցեն։

Իսկ այնչափ յանմոռնիս և ի Քրիստոսութի՛ւն հաստեալ եմք, զի բազում չարիս գործեմք ի միում տարւոջ, և չունիմք փոյթ յանձին զմի ի նոցանէ սրբել. և չմերձենալն ստէպ և Քրիստմանեցն զմարմինն Քրիստի բաւական համարիմք ի միխիթարութի՛ւն. և զայն չառնումք ի միտ, եթէ որ զԱ՛ն ի խաչ հանին՝ միանգամ խաչեցին. միթէ սակաւ մեղք իցեն. նա և որ մատնեացն զԱ՛ն, միանգամ մատնեաց. միթէ այնու կարէր ասլրել։ Այլ մեք ընդէր օրինօք կատաղեմք զիրսն, ոչ ապաքէն զի այնպէս վայել է. ժամանակ մերձենալոյ՝ զոր միտն համարեացուք. չէ ինչ աւելի չաւութ չարչարանացն խորհուրդն, քան զայս որ այժմ կատարիւի. մի և նոյն խորհուրդ է, և նոյն հոգւոյն ընորհք. միշտ զատիկ է, հանապազ տօն։

Այլ որ հմուտ էք խորհրդոցն՝ գիտէք զինչ ասեմն, զի յաւրբաթու և ի շաբաթու և ի կիւրակէի և ի մարտիրոսաց յիշատակս նոյն զենումն զենու, նոյն խորհուրդ կատարի. "Կանիցս անգամ՝ ասէ, ուտիցէք զՀացս զայս և ըմպիցէք զբաժակս, զմահ տեն պատմիցէք„. և չտեսանեմք եթէ ընդ ժամանակօք ինչ փակեաց զպատարագն։ Այլ զի՞նդ, ասեն, յայնժամ ասացան չարչարանքն. քանզի յայնժամ չարչարեցաւ վասն մեր Քրիստոս։ Այլ արդ մի որ յայնժամ այլազգ և այժմ այլազգ մատչիցի. մի զօրութի՛ւն է, մի պատիւ, մի ընորհք, մի և նոյն մարմին։ Այլ այն քան զայս՝ որ է, և ոչ այս քան զայն նուազագոյն. և զայս դուք իսկ Հարտաւ գիտէք, զի ոչ ինչ աւելի տեսանէք, բայց միայն զարտաքին զղարդն և զբազում

ժողովրդոց պայծառութեի։ Այլ ունին ինչ աւելի աւուրքն. զի անտի եղև սկիզբն աւուրն փրկութեան մերոյ, և զի յայն աւուր զենաւ Ինձ. քայց յայլ խորհուրդսն և ոչ մի ինչ առաւելութեի ունին։

Այլ արդ յորժամ հաց կամիցիս ուտել, զձեռս լուանասա, զբերան սրբեա. և յորժամ ի հոգևոր հացն կամիցիս մերձենալ, ընդեր չլուանայցես զոգիդ, ընդեր չսրբիցես զմիտդ, այլ լի պղծութեբ և յանդգնեալ մատչիցիս։ Այլ չիցեն, ասեն, բաւական քահանայութեայ պահքն զծանր ծանր բեռինս փարատել։ Այլ արդ աղէ ասա, զի նչ շահ իցէ, յորժամ եւղ ինչ անոյշ կամիցի ոք թափել, և զտունն սրբիցէ յաղբոյն, և վայր մի դադարիցէ՝ և դարձեալ աղտոմ ընուցու, ոչ ապաքէն վաղվաղակի ամիոփիցէ հոտն անոյշ. այնպիսի ինչ և առ մեզ դիպիցի. արժանի է զաք մերձենալ ըստ մերում կարի, և դարձեալ աղտեղանայցեմք։

Այլ զայս ևս առ այնոսիկ ասեմք, որ կարօղ են սրբել զոգիսն քահանայութեայ ժամանակաւն, զի ևս քան զևս հաստատուն լինիցին. մի ինչ հեղգացեալ գոցուք ի փրկութենէն մերմէ, ապաչեմ. զի մարդ որ դառնայցէ ի մեղայ, և միւսանգամ անդրէն շրջիցի, շան նման է որ անդրէն յիւր փոխածն դառնայցէ։ Պինդ կացցուք, զի մի ընդ վայր ինչ լինիցի վաստակն մեր. զի այնպէս կարիցեմք պարգևացն արժանի լինել։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ Տեն մերոյ Յիսի Քրիստոսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սքանչ փառք, իշխանութեի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այլ վասն այնորիկ ի կանանց աւելի ցածութիւնս պահանջէ Պաւղոս։ Այլ որ ինչ այն իցէ ։ " Ի զարդ, ասէ, խոնարհութեամբ ցածութ և պարկեշտութեամբ զարդարել զանձինս. մի՛ ի հիւսս ոսկեհուռս ընդելուզեալ մարգարտով, և մի՛ ի հանդերձս պատուականս։" Զարդ խոնարհութե զոր կոչեցէ։ Յորժամ ի քարշելոյն և յօձտելոյն զիւրև ամբոխիցէ համեստութե, զգաստութե, և մի ընդողնելով, զի այն զարդ է, և միւսն չզարդ։

Զ ինչ գործես. մատուցեալ այ աղօթս մատուցանես, և շուրջանակի կուռ յոսկի համակիս, ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով. միթէ ի կաքաւ իջանես, ի պար անցանիցես, միթէ ի հարսանեաս խնճոյսցես, միթէ ի գեղջն ։ յառնիցես և ի ցմայ շոյարիցես. անդ պիտոյ է ոսկին և մարգարիտն ընդելուզեալ, անդ հանդերձքն պատուականք, անդ զարդուցն ոայք և ժամանակ մնելոյ, անդ սեթևեթել և անդէն պերևեթել. աստ չէ այնմ ժամանակ, և ոչ պէաք ինչ այնպիսիք։

Պաղատել եկիր, խնդրուածս մատուցանել, աղերս վասն մեղաց արկանել, ընդ յանցանացն եղձանալ, ի հաշտութիւն ածել զքէն. զի զարդարիցես զանձնդ. չէն այդպիսի կերպարանք խնդրուածոց։ Զ իմրդ կարիցես հեծել. կամ որպէս յոգւոց հանել և արտասուս արկանել. զիմրդ հաչելով հառաչելով զաղօթն մատուցանիցես ։ Յորժամ այդպիսի կերպարանս ունիցես և արտասուիցես, ծակը կայցես բազմաց և կատականք տեսցեղ ։ Ընմարթի յոգի համակեալ և արտասուս արկանել. խաբէութիւն գործես, կեղծաւորութիւն ցուցանես։ Յորժամ ի նոյն մնաց՝ ուստի այնչափ պատուականք և զարդարանք ծնանին, և արտասուք ևս վիժիցեն, չէ ի դէպ, չէ հաւատալի ։ Ի բայց առ զայն կեղծաւորութիւն,

1 Յօրինակին փեղ։ 2 Յօրինակին ՀՀՆՈՆաց։

քանզի չկարես զՅոճ խաբել· վարձակայն և կաքաւ-
չայն են այնպիսի կերպարանք, որք 'ի բոզանոցն և
'ի գուսանայ վանսն ջերանիցին· կնոջ ցանկայ չվայե-
լէ ինչ այնպիսի լկտուԹի, այլ ցածուԹի, ասէ, և
պարկեշտուԹի, և ոչ յարատուԹեամբ և լկտու-
Թեամբ։

Այլ լինիցիս նմանող բոզիցն, որ այնպիսի կերպա-
րանօք հնարին կուտել բազում հմանխիս, և անտի
ծնանին ազգի ազգի կարծիք։ Խաղումբ բազում ան-
գամ և չօգտեցան ինչ յայնպիսի զարդուց· և այլք
ինասեցան և յայնպիսի կարծեաց։ Օ որ օրինակ և
պոռնիկ Թեպէտ և կամիցի ցանծացն նմանել, չօգտի
ինչ 'ի սուտ կարծիսն ցուցանելոյ, յորժամ գաղտնիք
մտացն դատախաղ լինիցին և զնա 'ի մէջ բերիցեն·
նոյնպէս և ցածուն Թէպէտ և անկանիցի 'ի կարծիս
հնուԹե, չինասի ինչ 'ի կարծեացն։

Այլ ինձ զի փոյԹ իցէ, ասէ, Թէ այլք զինէն զինչ
կամիցին կարծիցեն։ Պոռ քեզինն տաս զկարծիսն
կերպարանօք, և այօքդ յեղյեղոյսվք, նագելով և
ձեռնէով· և վասն այնորիկ յաձախագոյն իմն մեղա-
դիր լինիցի Պաւղոս պաձուձանացն, և կարի յարգե
զցածուԹեին, զի ոչ մեծուԹե ինչ նշանակ է այնչափ
զարդ յանձին կապեալ, այլ ընդդիմնելոյ և պչրանաց։
Այլ ոչ միայն զարդն, այլ և մագոյնն և ծարիրն, և
ոտիցն ձեռնէիք, և հնչիւնք բարբառոյն, այացն մեղ-
մեղանք, արտևանացն սահիլ սահիլ քԹԹելիք, ամ
ինչ հանգոյնք պոռնկաց։ ՊամիրատուԹեն արձա-
կեալք, պարեգօտք լայնեալք, գօտիքն սեմևե-
Թեալք, գօշիկք պճնեալք· զայս ամ միանգամայն
և միով բանիւ ակնարկեաց "։ Պ զարդ խոնարհու-
Թեան, ասէ, ցածուԹե և պարկեշտուԹե"։ զի այն
ամ անհամուԹե է և անվեդեդ կերպարանք։

Պնասցիք, աղաչեմ, զի մերկացից բանիւք զյան-
դիմանուԹին· ոչ զի տրտմեցուցանիցեմ և ոչ զի 'ի
խոր խոցիցեմ, այլ զի զօտարոտին հանից վարեցից
'ի հանդիսէս· եԹէ արամբիք իցեն և Թէ բարեկե-
ցիկք, եԹէ մեծատունք, ամենեցուն իսկ վՀիռ տամ
Հրաժարել յայնպիսի պաձուձանաց, և առաւել որ
զկուսուԹե յանձն առեալ իցէ։

Ի՞մէն է կայսն ոսկւով, ասէն, զարդարեսցի, կամ հիւսածոյս և ընդելուզեալս մարգարտով զգենուցու։ Ի՞նչափ ինչ են լոկ պաճուճանքն, որպէս զի ոսկեհուռքն ոչ ինչ են այնմ համեմատ։ Վասն զի մարթի և լոկ հանդերձիւքն ընդոծղնել, յորժամ զնաամ փորձն կամի սեւացուցանել, և գօտեւածն հանգուցն իմն խորշաքաղ զպարեգօտան 'ի կուրծսն ժողովեսցէ ըստ նմանութեանն վարձկանացն՝ որ 'ի կաքաւն կաղիցեն, զի մի կարի յոյր թուիցին, և մի կարի նուրբ, այլ կշիռ հաստարակ· և առ գոգովքն [1] այլազգ իմն խորշ քաղիցէ· քան որպիսի կերպարանօք չիցէ բաւական և աւելի այնպիսի պաճուճանօք պատրել։ Յորժամ զկօշիկսն 'ի թոյրս սեւուէ քաջաթոյրսն ներկանիցէ, սրակտուցս, նեղագաբշատրս, և 'ի կրունս սեւացեալս զսպիտակ առաջնոյ խառնիցէ· յորժամ առ թաթիւքն խորշք քաղիցին, և գարշապարքն 'ի գետին չհասանիցեն։ Ա՞ր մանաւանդ և կերեսոյս և պէսպէս աճառօք լուանայցէ, և պճնիցի զարդարիցի մեծամեծ զգուշութեամբ· զձակատն 'ի վեր պարզիցէ, և զկլափն 'ի խտաբոյ ձգիցէ· և և սա աեւ լի քան զերեսոյն սպիտակութիւն 'ի գլուխն կապիցէ· և 'ի վերայ սպիտակ սուդարին զթուխս նամիոցան յօրինեսցէ, առ 'ի բարւոք իմն վայելել, և գեղեցիկ երեւել։

Ա՞ր արդ զիաղդ ոք կարիցէ զչափ աչացն առնուլ, յորժամ այսր անդր սահել իբրև զշնչանն շրջիցին, և զծուխս գօտոյն մերթ բանայցէ և մերթ ծածկիցէ, մերթ 'ի կուրծսն ածիցէ, և մերթ զդաւակաւն ածիցէ, և այսր անդր շրջոկիցէ· բայխփիկ նափորտամբն խաղայցէ, զի զՀաւաստիս գօտւոյն իցէ [2] բազմացուցանել։ Ա՞ր հանգոյն արուեստականացն զթեզաւնիսն ընդ ձեռանն կարեալ պնդիցէ· զի այնպէս պըղնդով ագանիցի, որպէս թէ հանդերձանն ընդ մարմնին կարեալ։ Ասկ զոտիցն տոհորակելոյ ոմ իցէ որ զչափ առնուլ կարիցէ· և զայլ ազգի ազգի պաճուճանքն, որ քան զնմ զարդ ոսկեհուռս՝ բաւական են կորզել [3] զտեսօղսն։

1 Յօրինակին ωωωնէն։ 3 Յօրինակին գուժն։
2 Յօրինակին գօգնէ։

Երկիցս՝ սիրելիք, գուցէ և մեք լսիցեմք այսպիսի ինչ, որպէս և մարգարէն զՀերբայեցւոցն կասկածան վասն արտաքին զարդուցն պատուհասեր՝ թէ փոխանակ կամարին՝ չուան գօտի, և փոխանակ զարդուցն գլխոյ՝ հնդուէմ։ Օի քան զոսկեհուռն և զսար պաճուճանքն և լոկ հանդերձիցն կարեն պատրել զտեսողսն, և գերել զմիտս անմիջաց։ Ոչն սակաւ մեղք, այլ անհնարինք. բաւական է բարկացուցանել զնա և կորուսանել զվաստակս կուսութեանն։

Օ՝ զի ունիս փեսայ, զի՞ ջանաս առնել զմարգիկ հոմանիս. ընդ ընտրելն համարի զայն քեզ։ Ընդէր չզարդարիս այնպիսի զարդուք որ նմայն հաճոյ իցէ, զոր նայն սիրեսցէ. ջացուրեթի, զպարկեշտութիւնն և զպաստուրեթին, զանփոփ հանդերձիին։ Այդպիսի կերպարանք պոռնկաց են և ոչ կուսանաց. և չհանաս չեմք այսուհետև զբոզս և զկուսանս։ Չեսանեն որպիսի ծանակուրեթիս առին յանձինս. առանց պաճուճանաց պարտի լինել կուսանն, ընդ աղջ և ընդ խաղջ գալ։ Օի արտաքին զարդն չտան ներքինն զարդուն պայծառանալ. որ զվերնովն գայցէ՝ զներքինն արհամարհիցէ. զոր օրինակ որ զվերինն արհամարհիցէ՝ ընդ ներքնոյն փոյթ յանձին ունիցի։

Ո՞ւ մի ասիցես, թէ չեմ եղուկ՝ զի այնպիսի հանդերձս լեզի ագահիցիմ՝ կօշիկս յոռիս, գլխոյ հանդերձ անպիտան. և այս զինչ զարդ իցէ։ Այի խաբեր զանձն. մարթի և այսպիսի հանդերձիւք ընդոդնել և սար քան զդնուօք. քանզի մաշիք հանդերձքն քաջիկ իմն ցածնուն՝ ի մարմինն և բարւոք յայգին, մանաւանդ թէ թափեաց և ողորկեալ՝ փայլեցեն։ Ահա զայդ ասես, ոյ զինչ պատասխանի տայցես, որ զմիտն գիտիցէ՝ թէ վասն էր այնպես հնարիցիս։ Այլ թերևս ասիցես, ոչ ինչ վասն պոռնկութեան պաճուճիմ։ Ահա վասն զարմանալի ինչ երևելոյ չաՄտիցես, չակնածիցես. զի այնու երևելի կամիս երևել։ Ո՞ւ ընդ վայր, ասէ, վայրապար ագահիմ. ոչ յայնպիսի ինչ միտս։ Այլ ոճ գիտէ զոր ինչ ընդ մեզ խօսիս. մի ինձ ինչ համարս տալոց իցես, այլ նմա որ այժմ մօտ է՝ի գործս, և ասյա պահանջէ իսկ. որում ամ մերկապարանոց է առաջի։ Այսան

այնորիկ այժմ այսպէս խօսիմք, զի յայնպիսի պատ-
ժոց զքեզ ազատել կարասցուք։

" Այլ ոտիւք իւրեանց, ասէ, կաքաւէին ". Մի այն-
պիսի ինչ, այլ պատերազմ կալայք յանձինս՝ ուր
նահատակուիքս են և ոչ զարդարանք. առաքինու-
թիւք և ոչ անձնդիւրութիւք։ Ցտեսանիցես զայնոսիկ
որ ի կռիւս և յըմբշամարտսն մրցիցին. միթէ զձե-
մելոյ ինչ փոյթ առնիցեն, և զկերպարանաց և զպա-
ճուճանաց. և ոչ երբեք. այլ զայմ ինչ թողեալ,
հանդերձ ընդ եւղ և ընդ փոշի եկեալ զգենուն. և
միուսին և եթե ուշ ունիցին, կամ յաղթելոյ կամ ի պար-
տուելի մտանելոյ։ Այլ ի դիմի հարկանել կայ սա-
տանայ. զատամունս կրձէ, ոտս ի վերայ տորովիլ,
պէսպէս հնարս հնարի՝ զի զքեզ գլորել կարիցէ. և
դու յատահով կաս, և զհանդերձս պճնես, զսատա-
նայական գործս։

Օ ձայնիցին ինչ ոչ ասացից, զի կէսք և այնու իմն
կարի պատրեն. կամ զիւղոյն և զնկոյն և զայլոյն
ևս խոստանաց։ Ոմն այնորիկ ծաղր առնեն զմեզ
աշխարհականք. կորնեաւ պարկեշտասի կուսութեն.
չիք ոք որ պատուէ զկուսանսն՝ որպէս և պարտ է պա-
տուել. անձամբ զանձինս ածաք յանարգանս։ Օհ
պարտ՝ որպէս թէ յերկինից իցեն իջեալ երևել յե-
կեղեցւոջ ՚այ. և այժմ վասն նոցա իսկ արհամար-
հեալ է եկեղեցի, ոչ վասն խնաստնոցն։ Յորժամ
տեսանիցէ զքեզ, որում պարտ էր իբրև զհաւեալ
երևել, արամբին՝ որ տան և որդեկաց հոգայցէ և
զաշխարհս զբաղեալ իցէ, զիարդ չարհամարհիցէ,
զիարդ չառնիցէ ծաղր։

Տես քանի ինչ փոյթ յանձին ունիս. Ձեպիս ջանաս
հնարիս լոկ հանդերձիւքն յաղթել այնմ՝ որ զպէս-
պէս հանդերձս ագանիցի։ Որ վայելէն քեզ՝ զայն
չհնդրես, և որ չվայելէ՝ զայդու յաձախես. պարտ
եր քեզ ի գործս բարիս փոյթ գտանել։ Ոմն այ-
նորիկ քան զաշխարհականս անարգ են կուսանք, զի
ոչ արժանի գործս խոստանանն՝ զոր խոստացան՝ ցու-
ցանել։

Օայս ասացաք ոչ առ ամենեսեան, մանաւանդ
թէ առ ամենեսին իսկ. զի որ այնպիսիքն իցեն՝

ցածնուցուն, և որ չիցեն այնպիսիք, զկախին ցածուցանել Աստուածէ՝ զիարդ ի գործ ածիցէք զխրատս Աստուծոյ տրամեցուցանիցեմք զձեզ ասացաք զայս, այլ զի յուղղութիւն ածիցեմք, և պարծիմք ձեւք։ Այլիցի մեզ ամենեցուն զկամն այդ առնել, և ի փառս նորա կեալ, և աւետեաց նորա հասանել ընդ հոգիս մեր դասիրութեն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

ՈՒՐՈՒ զայս Հարք և Մարք. զի չէն ընդու-
նայն վաստակք ձեր յորժամ զորդիս բարիոք մուս-
ցանէք, այլ առնուցուք մեծաց վարձուց Հատուցումն:
Ու զայս ևս յառաջագոյն մատուցեալ ասէ, եթէ 'ի
գործս բարիս վկայեալ իցէ. և զայս ընդ այլ ևս բա-
րութիւնս համարիցի: Վասն զի և չէ սակաւ ուղղութիւն
զայ պարգևեալ որդիսն միւսանգամ այ նուիրել. զի
եթէ զՀիմն և զհաստատութիւնն բարիոք դնիցէ, մե-
ծաց վարձուց հատուցման արժանի լինիցի. զոր օրի-
նակ և որ անիսյթն առնիցէն՝ տանջանաց: Այս և
Հեղի վասն որդւոցն կորեաւ. պարտ էր նմա խրա-
տել զնոսա: Այայց և խրատեր իսկ, այլ ոչ որպէս
պարտ էր. և զի ոչ կամէր տրտմեցուցանել զնոսա, և
զնոսա և զանձն առ հասարակ կորոյս:

Ուարժուք զայս Հարք, և խրատեցէք զորդիս ձեր
'ի խրատ և 'ի վարդապետութիւն տէն. քանզի խակ և
ամեհի է մանկութիւն, և բազում վարդապետաց կա-
րօտ, դաստիարակաց, սպասաց, դաւեկաց. քանզի
պիտոյ է այնպիսի վարժուք վարել: Որպէս ձի ամե-
հի միշտ 'ի վարժոցս կայցէ, և գազան վայրենի 'ի
հրահանգս, մինչև 'ի համբոյր գայցէ, այնպիսի է ման-
կութիւն: Ընդսոյն իսկ յառաջինն տիոցն պարտիմք
սահմանս և կարգս բարիս հաստատել նմա. և ոչ ևս
առ յատպա մեծամեծ աշխատութիւնս կարօտանայցեմք.
այլ սովորութիւնն իսկ օրէնք լինիցին:

Ի'ի տացուք նոցա Թայլ ըստ մտաց դիւրութեան
գնալ, յորժամ գինասակարան ախտրժականս համա-
րիցին. և մի իբրև մանկտոյ ներիցեմք նոցա. այլ 'ի
ցածութիւն պահեցցուք. զի այն՝ քան զամ ինչ վնա-
սակար է մանկութիւն: Այս մեք նմին կարի պատկառ
կայցեմք, վաղ և արագ կանայս ածիցեմք, զի սուրբ
և անարատ պահեցին 'ի պղծուէ 'ի հասանել առ ա-
մուսնութիւն: Օ ի այն սէր սերտ է յորժամ ցածուն
յամուսնութիւն հասանիցեն. և որ յառաջ քան զՀար-
սանիսն էր՝ ևս առաւել յետ հարսանեացն: Այս որ

յառաջ քան զամուսնութիւնն ի պոռնկութիւն խանձիցի, նա և յետ ամուսնութեանն չդադարէ անտի, "Արդեօ, ասէ, պոռնկի ամ հայ քաղցր է,, Ա մանաւանդ այնորիկ դնին պակաք ի գլուխ, զի յաղթութիւն նշանակ է, թէ չմատնեցան ի պարտութիւն, և ապա հասին ի տէր անկողինն. չվատթարեցան ի ցանկութիւն. և եթէ ըմբռնեսցին ի ցանկութիւն ի բոզաց ձեռս մատնի, և ապա ընդէր իսկ առնուցու զպատկին ի գլուխ յաղթեալն և ի պարտութիւն մատնեալն: Յապիսի իրաւ տացուք, ուսուցանիցեմք, մերթ այսպէս՝ մերթ այնպէս հնարեսցուք. քանզի մեծ աւանդ զայ ունիմք զմանկտի. հոգացուք և ազգի ազգի հնարս հնարեսցուք, զի մի չարն յափըշտակեսցէ զաւանդն ի մէնջ.

Եւ արդ ամ ինչ անուղղայ գործք առ մեզ գործին: Օ՛ի յորժամ գեղ ինչ բարի ստանայցեմք, ազգի ազգի հնարս հնարայցեմք, զի զհաւատարիմ ոք և զիմաստուն գաւառապետ կացուցանեմք. իսկ որ քան զամ պատուական է, յորժամ որդեակ լինիցի, չընիմք փոյթ յանձին՝ եթէ առն իմաստոյ որ կարօղ իցէ զնա ի ցածուէ պահել՝ յանձն արասցուք: Վ՛եպէտ և քան զամ ստացուածս նա պատուական իցէ. և զամ ինչ վասն նորա ստացուածոյն խնամ ունիմք, և զնա ոչինչ տածեմք. տես զանհանձարութիւն:

Այսպէս զմիտս մանկանն յարդարեա, և այնուհետև ամ ինչ նորա է: Եթէ միտքն չյարդարիցին, զինչ օգուտ նմա լրնչիցի լինիցի. և եթէ միտքն վարժիցին, ոչ ինչ նմա յաղքատութենէն լինիցի: Վամիցիս զնա մեծատուն թողուլ, ուսուցանիցիջիր նմա պիտանութիւն, զի այնպէս զարարսն ունել կարիցէ. և եթէ չունիցի ինչ, ոչ ինչ քան զգոյատուրսն ի վայր գտանիցի: Վ՛եպէտ և բազում ինչս թողուցուս, յորժամ պահապանն չիցէ ուղիղ, և քան զկարի վատթար աղքատութ ապաժամն գտանիցին. Օ՛ի ստահակ և ստամբակ որդւոցն լաւ իցէ աղքատութիւն քան զմեծութիւն. զի աղքատութիւնն և ակամայ իսկ ածէ յառաքինութիւն. իսկ մեծութիւն և որոց զգաստանալն կամին՝ խափան լինիցին և յուլացուցանէ և կորուսանէ, և ի պէսպէս չարիս տայ մտաբերել:

Ա՛ստը խրատեցէք զդաստեր՝ զցաւուԹի՛ն և զդաստուԹիւն սիրել. և զայն պահապան համարիջի՛ք՝ անարատս լինել, երկիւղածս։ Ա՛ի յայլոց լինչս այս արձակել, և մի պՀ՛նողս, մի զարդարկուս. և այսպէս հաստացանիցեք անարատս յամենայնուԹի՛ն. ապա ո՛չ զնոսա միայն, այլ և զաբեն որոց տացէք՝ ասելեցուցանիցէք. ո՛չ միայն զարմն, այլ և զորդիսն, այլև զԹոռուննն։ Հոգ ժամ արմատն բարիոք իցէ, և շառաւիղքն ևս լաւագոյնք արձակիցին։ Լո՛ւ ընդ ամենայնի՛ն ընդ այսորիկ առնուցուածք վարձս. զի ո՛չ զմի ոգին և՛ւԹ շահիցեմք, այլ զաղաւնւոն միոՂ. այսպէս ինչ գործ գործիցին։

Ի՛. մնպէս բարգաւաՀ՛ ելեալ ՚ի հայրենի տանէն հարսանիքն, իբրև զնահատակ մի ՚ի մարտ բարի մարտիկ գրուատեալ. զի զնմ՛ հաւաստեաց Հնարս գիտիցէ, իբրև զմոր զնմ՛ զանգուածն հասուցանել ածել յիւրոյն ամնուականուԹի՛ն պայման։ Լո՛ւ մանկունքն նոյնպէս ցածք և ակնածողք լինիցին ՚ի նորա հաւաստուԹի՛ն և ՚ի զգաստուԹի՛ն. զի ՚ի մարգկանէ և յայլ բազում գրուատիս և գովուԹիս առնուցուք։ Ասանիցին յաղԹել որկորատուԹի՛, խորշել յանչափ խորակաց. խնամոք և գարմանիչք լինիցին. զի վարել զիշխանուԹի՛ն՝ որչափ ՚ի ձեռն իցէ՝ բաւական լինիցին. զի այնպէս կարիցեն լինել առաԹճնողացն վարուց, և նմ՛ ինչ ՚ի փառս այ լինիցի, և ՚ի մեր փրկուԹի՛. զի արժանի լինիցիմք խոստացելոց բարուԹե՛ն. յորս լեցի ամենեցուն մեզ հասանել շնորհք և մարդասիրուԹի՛ն տեր մերոյ Հ՚ի Ո՛յեսի, ընդ որում հո՛ր միանգամայն և հոգւոյն սրբ փառք, իշխանուԹի՛ և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՐՈՒ՝ անցաւորս իբրև ձանձալարհորդս ընկալաւ Աբրահամ. չհրամայեաց ծառային սպաս ունել, այլ ինքնին ընթացաւ յանդեայն, և կնոջն հրամայեաց հայս թրել. թէպէտ և երեքարիւր և ութեհատասն ընդծինս ունէր, և թերևս նոյնպէս և աղախնայս և, այլ ինքն կամեցաւ առնուլ վարձս ամենևին հանդերձ, ոչ ընդ ծախիցն միայն, այլ և ընդ սպասաւորութեն։

Ոչհայիսի օտարասիրութեի պարտ է և մեզ ցուցանել. անձամբ կալ՚ի սպասու, զի մեք իսկ սրբիցիմք, զի մերոյն իսկ ձեռաւքս օրհնեսցին. թէպէտ և ուրիկ տայցես, քոյով իսկ ձեռաւքդ տաջիր, և մի գարշեսջիր քեզէն պաշտել. քանզի ոչ եթէ աղքատին տայցես, այլ Քրիստոսի՝ որ այնչափ թշուառական կայցէ, որ և՛ի Քրիստ անգամ ձեռն ձգել գաբշիս։ Այս է օտարսիրութիւնն, և այն է արդարև՝ որ վասն այ գործ գործի. ապա եթէ ամբարտաւանութիւ հրամայես, թէպէտ և բազում ինչ առաջի կուտիցես, չէ օտարսիրութեան նշանակ։ Խաղում գարմանք պիտոյ են հիւբոյն, և կարի այն իսկ՝ զի ոչ ինչ յամօթ լինիցին. քանզի այնպիսի բարք են իրացն. որ յերախտիս ուրուք վայելիցէ, հարկ է պատկառել։ Այս պարտ է հիւրասիրին և զամենն՚ի բաց քերել, և արդեամբք զբօսուցանել, զի ոչ եթէ առնիցէ երախտիս, այլ առնուս. և ինքն գտանէ բարի՝ յորժամ զբարիսն առնիցէ. և ևս յառաւելութեի գայ՚ի բարիսք կամացն։ Օ՞ր օրինակ որ ինասն համարիցի՝ զնմ կորուսանիցէ, և որ երախտիսն համարիցի՝ զննաւ վաստէ. նոյնպէս և որ համարիցի եթէ իւր լինիցին երախտիքն, բազմապատիկք առնու։ “Օ՞տուբս, ասէ, զուարթառատս սիրէ Աստ”։

Ընդ նոյնս պարտ է համարել աղքատին՝ յորժամ առնուցու. զի եթէ աղքատք չէին, ապա ոչ ևս կարեկիր կարել զասատիկ վերս մերազ. բժիշկք վիրաց են իմանանոց, դեղս մատուցանեն քեզ ձեռաւքն՝ յոր-

ժամ ձգիցեն. ոչ այնպէս բժիշկ ձգէ զձեռն և մատուցանէ դեղս տալ բժշկութեանէ, որպէս աղքատն ձգէ ձեռն և առնու ի քէն · դաստառակ մեղաց քոց են աղքատք · եռաւր արծաթի, հաներ ընդ նմին և ըզմեղս ։

Օ՜նոյն գործ գործէն քահանայք ։ " Օ մեղս ժողովրդեան իմոյ, ասէ, կերիցեն ,, · որպէս զի մեծ են զոր առնուս քան զոր տայցես · երախտիս առնուս քան թէ զերախտիս առնիցես ։ Ո՜չ փոխ տաս և ոչ մարգկան · աձեցուցանիցես զմեծութենէն, և ոչ կասեցուցանես · կասեցուցանես թէ խնայես, թէ չտայցես ։ " Ո՜չթէ զհիւրս, ասէ, ընկալեալ իցէ և զսրբոց ոտս լուացեալ ,, · զորպիսի՞ սրբոց · զնեղելոցն, և ոչ եթէ զվայրապար սրբոց ։ Վ՜ասղի են ասք որ բազում պատիւս առնուն յամենեցունց · մի զայսպիսի սրբոց և եթէ զհետ երթալ՝ որ ի լիութենէն իցեն · այլ նեղելոցն պատկառ կալ, որոց չգուցեն ծանօթք և չիցեն առ ամենեսին երևելիք ։ " Ա՜ր արար, ասէ, միւսմ՝ ի փոքրկանսս Հաւատացելոցն, ինձ արար ,, ։

Ա՜ի տայցես առաքնորդաց եկեղեցւոյն բաշխել, այլ դու քեզէն պաշտեսջիր · զի մի միայն ընդ ծախիցն, այլ և ընդ պաշտելոյն առնուցուս վարձս · քոյնէն ձեռաքդ տուր, դու քեզէն սերմանեա յակօս · չիք անդ արօր, չիք մաճ ունել և ոչ եզինս հարկեաց լծել, և ոչ ժամանակի մնալ, և ոչ զկորդ ձգել, և ընդ ցուրտ կռուիլ · յամենայնէ յայնպիսեաց ազատեալ սերմին · քանզի յերկինս սերմանես, ուր ոչ ցուրտն և ոչ ձմեռն և ոչ այլ ինչ վթաստակար · յոգիս սերմանես, ուստի ոչ օք ինչ կարիցէ առնուլ, այլ ակնդ ունին, և զեմեղ պահեն բազում հաւատաւոք և մեծամեծ փութով ։

Սերմանես, ընդէր զրկիցիս յայնպիսի վարձուց, ուր բաւական են և զայլս կերակրել · զի ոչ տուրքն միայն վարձք են, այլ և բարիոք մատակարարել զտուրսն · ընդէր դու քեզէն չառնուցուս զվարձան ։ Օ՜ի անձամբն ևս պաշտելոյ վարձք են, լուր · կացուցեալն, ասէ, առաքեալքն զտանփանսեանք յայրեացն մատակարարուել, Վ՜եզէն լեր քոյոյն մատակարար ։ Ա՜ռ ո՞վ իցէ որ քեզ ձեռնադրութենէ տայցէ ։ Ա՜ր-

դասիրուհին և ՚այ երկիւղն, որ հեռին է ՚ի մնապար-
ծուհէ, որ զոգիսն հանգուցանէ, որ զձեռն սրբէ,
որ զհպարտուհին ցածուցանէ, որ զսպաստուհին ու-
սուցանէ, որ յօժարագոյնն առնէ, որ զօրհնուհին տայ
քեզ առնուլ, յորժամ երթեալ խոնարհիցիս և յայ-
բեացն առնուցուս օրհնուհի։

Յորդորեաց յաղօթս, շուրջանակի ՚ի խոյզ ար-
դեալ խնդրեաջիր զարս ՚ձրս որ արդարև ՚ձրքն իցեն,
ո՞ յանապատն իցեն, որք չկարիցենն մուբանալ, որք
ընդ ՚այ ևեթ նայիցեն. երթիցես հեռի ձանապարհ,
և ՚ի ձեն իսկ տաբջիր. քանզի բազում շահ ի՝ յոր-
ժամ անձամբ իսկ բաշխիցես։ Ընդ տեսանիցես տա-
ղաւար և գետնափոս, փոխանակ տանջարաց և ա-
պարանոց. զանապատն տեսանիցես, զմնուհին նըշ-
մարիցես։ Ու թերևս մինչ դեռ զուարթն տայցես,
և զանձն ՚ա գրաւիցես՝ անկանիցիս ՚ի բարիսք կա-
փուէն, և լինիցիս նոցին գերեվարիչ, և ընդ նոսին օ-
տարանայցես յաշխարհէ։

Ձեծ գործ է և զաղքատն կերակրել։ “Ձա-
րիսք է, ասէ, երթալ ՚ի տուն սգոյ քան ՚ի տուն ծա-
ղու։” Ընդ ըմբռնիցին միտք, և թէ դու ևս նոյն-
պէս ծաղկու իցես՝ ևս աւելի զրգիցիս ՚ի լիտուէն.
և եթէ չիցես այնպիսի ոչ՝ տրտմելոյ զդաժնուցուս։
Ձակ ՚ի լալիւնս ոչ այնպիսի ինչ. այլ թէ չհասանիցէ
զբօնուել, չտրտմիս. և եթէ լիտուէն ինչ ունիս՝ ցա-
ծուցանես։

Ձրդարև տուն սգոյ է վանորայն, ուր խորհն՞և
մխիթն է, ուր մենուհին է, ուր չիք ծաղր, և ոչ մաք-
սաւոր ինչ իբաց թախանձուելի. ուր պահքն են և
գետնատարած խշտիք. ամենևին սուրբ ՚ի ձենձերոյ,
սուրբ յարեւնէ, յատակ ՚ի խռովմէ և յաղմկէ, ՚ի
բազմաթախանձ զբօսանաց, անիսոյթ նաւահանգիստ,
խաղաղ ՚ի հողմոյ և ՚ի մրրկաց։ Ձապտերք հաստա-
տեալք ՚ի բարձունս, ամենեցուն որ անդր դիմեսցեն՝
բաց ՚ի բաց երևին. յապահովի և զայլն յիւրեանց
նաւահանգիստն ձգեսցեն. չտան հողմակոծել նաւաց
որ ՚ի նոսա դիմեսցեն. չտան ՚ի խաւարի չքմել որ
անդր հայիցեն։ Ընդր երթիչքդ, անդր ցուցանիցիքդ
զօտարսերուհիսն. մնատուցեալ բուռն հարկանիցիքդ

զՔրջն ոտից, զի 'ի նոցա ոտն լաւ իցէ երթալ քան զայլոց զգլուխս հարթուրել։ Լինի զպատերազմ ոտից յորժամ բուռն հարկանիցեն յանցաւորքն՝ որք յանուն Թագաւորացն հաստատեալ կայցեն, հասանեն օձանդ, իսկ դու զայն որ զԱնկարեալ ունիցի յանձին՝ հարկանես բուռն զոտիցն, ոչ տպաքէն առաւել գտանիցես զիրկուքն։ Իսկ պզծոյն և ոչ գլուխն պատուական է. բայց Քրջն ոտքն բազում զօրուխս ցուցանեն. քանզի և տանջել կարօղ են՝ յորժամ զիրշն ոտիցն 'ի վերայ Թօթափիցեն։ Յորժամ Քրջն մծտ են առ մեզ, մի՛ ինչ ամօթ զնոցա տկսրուքիցն համարիցիս։ Այք են ամենեքին որք զուղիղ հաւատան հանդերձ վարուք ունիցին. զի թէպէտ և նշանս չառնիցեն և գևս չհանիցեն, այլ Քրջ են. " Լինի զՔրջ, ասէ, զոտս լուացեալ իցէ "։

Որպէս յերկրէ յերկինս՝ համարիմքդ 'ի Քրջ վանս փախստական լինել. չտեսանիցես ինչ այնպիսի զոր 'ի տունս ամենեցուն տեսանես. զի այն բնակուքիւն և լռուքիւն և պարկեշտուքիւն է. չէք անդ սա իմ, սա քո։ Լինի մի օր լինիցիս կամ երկուս, և քան զևս կարի լինի զդաս ցանկուքիւն։ Յորժամ հաւ զառաջինն խօսիցի, ոչ որպէս աստ՝ 'ի տունս խորդան ծառայք, դուրք փակեալ, և ամենեքին նման մեռելոց կան ծանրաքունք. և պահացոյցքն միայն զղանգակն զանգաչեցուցանեն [1]. չէք անդ այսպիսի ինչ. այլ վաղվաղակի ամենեքին միանգամայն երկիւղիւ զքունն Թօթափեալ յառնեն կան առ հասարակ։ Յորժամ գլխաւորն ազդ կամ ոտամբ կամ ձայնիւ առնիցէ, 'ի զգաստական պարսն յօրինեալք, գունդ առ գունդ կացուցեալք, ամենեցուն առ հասարակ զձեռս յերկինս համբարձեալ՝ զնուիրական օրհնուքիւնն երգեն միաձայնուք։ Ոչ մեզ նմանեալք բազում ժամուց կարօտանան, մինչ զքունն յաչսց Թօթափիցեն, և զգլխացաւ Թմբրուքիւն։

Այս մեք յորժամ զարթնուցումք, բազում ժամն ընդ քորեն և ընդ քշքշուն և ընդ Թառամանէն և ընդ Թանչէն հանեմք. ապա ուրեմն լըջացեալք

[1] Ասէ օրինակ ծանրաքունք. և պահապանքն . . . գանչեցուցանեն։

զկարևւոր պետն վճարեմք · ապա զձեռս լուանամք ,
օդ և ձորձս խնդրեմք , և բազում ժամս ծախեմք ։
Լսել անդ չիք որ այնպիսի · չիք որ որ զպատանիս կո-
չեցէ , և ոչ որ ծառայի հրամանն տացէ · իւրաքան-
չիւր անձանց բաւական են կալ ի սպասու ։ Ի՛չ բա-
զում հանդերձից կարօտանան , և ոչ միոյ քունն յա-
չաց թօթափիցի · այլ անդէնն միոյ զայնն բանայ-
ցեն՝ քան զվաղուց արթնանն և արթնութ գտանին ։
Չորժամ սիրտն չիցէ ծանրացեալ ի պէսպէս կերա-
կրոցն , ոչ ի վայր հակիցէ , և ոչ ի խոնարհ միտիցէ ,
և ոչ բազում ժամուց կարօտանայցէ՝ միոյ ուշաբե-
րեալ զուարթանայցէ ։ Զեռք սրբ յաղտեղութենէ ·
քունն անոյշ և հեշտական · չկան ոք անդ զձայն խոր-
դալոյ և ոչ զշնչալոյ ՝ և զմռնչելոյ , և ոչ զձգտելոյ և
զորանչելոյ ։ Ա՛յս և ընդ քունն չհերկանան · այլ և
զգաստացեալ քան ի լրջէ՝ ի քունն գտանին · և այն
ամ յօրինուածք ի լուսաւորութէ ոգւոյն յարդա-
բին ։

Արդարև՝ սրբ և պարկեշտք , և ի միջ մարդկան
հրեշտակք · քանզի բազում երկիւղն այ չտայ ի խորք
քունն ընկղմել մտացն · այլ ծանծաղագոյնս յարու-
սաբուձնս միայն զքաղցր ցանկութէն քննոյն ևեթ կա-
տարեն ։ Ա՛յնպիսի ինչ նոցա և երազքն , ոչ սահանք
և ոչ ծփանք , և ոչ ցնորք առ աչօք · այլ որպէս վէ-
րագոյնն ասացի՝ յորժամ զառաջինն հաւ խօսիցի , և
կամ թէ և ս վաղագոյն յարուցեալ վարդապետն ,
և եթէ միանգամ միայն գոփիցէ ոտամբ՝ ընդոս-
տուցանէ զամենեսին և յարուցանէ · քանզի և ոչ
մերկ ննջել ումեք իշխանութէն է · ապա յարուցեալ
միանգամայն և միահառաչ երգեն զմարգարէական
օրհնութէնս դեղգեղեալ ձայնիւք , և յօրինեալ բար-
բառովք , ազգի ազգի կցորդիւք · որում ոչ ձայն
քնարի , և ոչ գուխն սրնգի նման է , և ոչ բազմա-
խառն [2] փողք տաւղայ այնպիսի ինչ ձայնս յօրինեն ·
զի այնպես հեշտականս և քաղցունս բարբառին ։ Յա-
մուրս անապատին , ի խոր խաղաղութէն երգեն զերգս

1 Ցաւելոյք ըստ այլում օրինակ։ 2 Ա.Յ.Լ օրինակ բազմախառն։

սքոյն, որ կարի ինձ վայելուչք և պատշաճ են մերձեցուցանել ի սէրն Յս. «Ի գիշերի, ասէ, համբարձեք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՅս.». և «Ի գիշերոյ կանխէ հոգի իմ առ քեզ Ած, զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի». և զսաղմոսն դաւթական, որ բազում աղերսիւբս արտասուաց յորդորէն, յորժամ նուագեալ երգիցէ, եթէ «Ա՛ստուածդ ես ի հեծութէ իմմէ. լուացից զՅս. զիշեր զմահճակ իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից». և դարձեալ՝ «Ո՞վ տիխիր որպէս զՅոյ կերայ, և զըմպելիս իմ արտասուօք խառնեցի». և դարձեալ՝ և եթէ «Ո՞վ ինչ է մարդ՝ զի յիշես դու զնա». և «Ա՛րդ նանրութեա՛ն նմանեաց, և աւուրք մեր իբրև զստուեր անցին». և դարձեալ՝ եթէ «Ա՛ի երկնիցէր, յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա». և դարձեալ՝ «Կտակեցուցանէ զմիա՛ կրօնս ի տան». և եթէ «Կ՛ելէն անգամ յաւուր օրհնեցից զքեզ». և դարձեալ՝ «Ի՛ մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ». և եթէ «Ը՛ծ փրկեսցէ զանձն իմ ի ձեռաց գժոխոց». և դարձեալ՝ «Ա՛հա պէտ գնացից ես ի մէջ ի սառուերաց մահու, ոչ երկեայց ես չարէ, զի դու տէր ընդ իս ես». և դարձեալ՝ եթէ «Ա՛յլ երկեայց ես յերկիւղէ գիշերի և ոչ ի նետէ որ թռչի ի տուէ. յիրէ որ գնայ ի խաւարի, ի գայթագղութէ գիւրն ի հասարակ աւուր». և «Համարեցաք իբրև զոչխար ի սպանումն». և յորժամ ընդ հրեշտակս և օրհնեն, քանզի և հրեշտակք երգեն յայնժամ ընդ նոսա. եթէ «Օրհնեցէք զՅր ամենայն հրեշտակք նորա. եթէ Օրհնեցէք զՅս ամենայն զօրք նորա». և մեք յորանչիցեմք, ձգտիցիմք, քաշքիցեմք, քաշքոտիցեմք, հնչիցեմք, խորդայցեմք, այսր անդր յեղեղկիմք, և յորսայս խայտայցեմք, և ազգի ազգի խոպտանս զմտաւ ածիցեմք, մինչ նոքա զգիշերն ամենայն ընդ օրհնութեան հանիցեն։

Կ՛ելն յորժամ այգ լինիցի, հանգչին փոքր մի. և յորժամ ընդ գործ խառնիցիմք, նոքա խուն քնոյն յագեցեալք և հանգուցեալք, դարձեալ միւսանգամ յօրհնութեան կազմիցին։ Ոչ մեք չև այգ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք համարս պահանջեալ.

և կէսք ընդ հրապարակս ձեմ առեալ շրջայցեմք. այլք առ իշխանս կանխեալք յահի և ի դողման կայցեն՝ եթէ զիարդ ի պատուհասից ապրեսցին. այլք ի բազանոցս, և այլք յիւրաքանչիւր պէտս։ Իսկ նոքա՝ դարձեալ իբրև զառաւօտին զաղօթման և զօրհնութիւնս կատարեն, ապա յընթերցուածս գրոց շրջին. ոմանք իսկ զձարտարութիւն գրչութեանց ուսեալ, իւրաքանչիւր առանձինն սենեկիկ առեալ, կամ բնաւ միայն կամ միով ընկերով, մինչ սկիզբ ցածութիւն՝ ոչ շատ խօսել, ոչ շաղակրատել, և ոչ զանօգուտս բարբառել։ Օ երեք ժամն, զհասարակ օր, զինն ժամն, զերեկորին աղօթման ցանկ անխափան կատարեն. ի չորս բաժինս բաժանեալ զօրն՝ ըստ իւրաքանչիւր մանանցն սաղմոսիւք և օրհնութիւք պատուեն զձայն։

Այնչ մեք ամենեքին ձաշկեմք, խաղայցեմք, ծիծաղիցեմք, ուռուցանիցեմք զորովայնս, որկրաստութիւք շուայտացեալք, մնալիցեմք, նոքա օրհնութիւքն զմայլելոցին։ Զիք ժամ սեղանոյ և ոչ խորտակաց յառաջ բերելոց. և դարձեալ յետ ձաշոյ ի նոյն ոճ մնանիցեն, կան պատկառ օրհնութեանցն։ Իշխարհականք և ցերեկին ննջելն, նոքա ցանկ արթնութ և պատրաստք ի պաշտաման։ արդարև՝ որդիք լուսոյ են և որդիք տուընջեան։ Այս քանզի աշխարհականք ի բազում ժամս ի քուն յամին, յարուցեալ դանդաչեն քան։ զխեւլագարս. իսկ նոքա տակաւին սկիզբ, անսուաղ առանց հացի. և միայն օրհնութեանցն ուշ ունիցին։

Այսպէս իբրև երեկոյ լինիցի, կէսք ի բազանիս և ի հանգիստ ձեպին. իսկ նոքա վայելեալք ցերեկութեանն վաստակօք, ի չորաբեկ սեղանն մնալին։ Ոչ զբազմութեանն ծառայից յարուցանեն, ոչ զառուն զրզորգեն, ոչ խռովին, ոչ աղմկին, ոչ խորխիկք յօրինեալք առաջի մնանեն, ոչ հոտ ձենձերոյ, և ոչ համադամք կերակրոց. այլ ոմն հայիկ և աղիկ, և ոմանք եւղիկ և յաւելուն. և որ և տկարագոյնք իցեն՝ բանջարիկ և խառնեն, և դեղահունդս և ոսպնեայս։ Զնա նստեալ՝ և անդրէն և յօրհնութիւնն

1 Յօրինակին պակասէ գծ։

յորդորեն։ Եւ յորժամ հանդչէլ կամիցին, ի խո-
տեղին խշտեկին հանդչիցեն. ոչ փափկութիւն, ոչ
զբօսութիւն. ոչ ահ իշխանաց, ոչ սաստ տէրանց, ոչ
երկիւղ ծառայից, և ոչ աղմուկ կանաց, և ոչ մանկը-
տաց խռովութիւն, ոչ սպասք բազմամբոխք, և ոչ փո-
խանակ հանդերձից, ոչ ոսկի, և ոչ արծաթ, և ոչ
պահպանութիւնք ներքնոց և արտաքնոց, ոչ շահա-
բանք և մառանք, և ոչ այլ ինչ նոյնպիսի. այլ ա-
մենևին լի աղօթիւք և օրհնութիւք, ամենևին ամ
հոգևոր անուշութիւնք, չիք անդ մարմնաւոր. ոչ կաս-
կած ի գողոց և ոչ երկիւղ յաւազակաց, չիք ինչ
որով վհասիցին, քանզի չիք ինչք և կարասի. մարմին
միայն և ոգի. և եթէ գայն ոք հանիցէ, չիշատին ինչ,
այլ օգտին. ըստ այսմ՝ թէ "Ինձ կեանք Քրիստոս է, և
մեռանել շահ", ի կապոյ արձակին, ի բանդէ ելա-
նեն։

Արդարև անդ է տեսանել "Զայն ցնծութիւն և
ուրախութիւն յարիս արդարոց". չիք անդ լսել ձայն
ողոց և ոչ զՁիւն և զզուժիւն. քանզի նոքա են յարիք
նոցա յայնպիսի յաղիկ, և յաւտակ և պարզ յայնա-
պիսի աղաղակէ։ Եւ զի մեռանին և նոքա, քանզի
չունին անմահ մարմին, այլ չգիտեն զմահ. քանզի
օրհնութիւք յուզարկեն զդնացեալն։ Ողբ զարկութիւն
կոչեն, և ոչ գիահանութիւն. և յորժամ ասիցեն թէ
այս անուն վախճանեցաւ, բազում ուրախութիւն
լինի, առաւել ցնծութիւն. մանաւանդ զի չիշեսի ոք
ասել թէ այս անուն վախճանեցաւ, այլ թէ կատա-
րեցաւ։ Ընդ առնին գոհութիւք և փառք և բազում
բերկրութիւք. իբրաքանչիւր աղօթս մատուցանեն
այսպիսի վախճանի արժանի լինել, նոյնպես ելանել
ի պատերազմ, հանդչել ի վաստակս և ի ձգմանս,
տեսանել զՔ. և յորժամ խօթանայցէ ոք, ոչ
արտասուք, ոչ ողբք, այլ դարձեալ աղօթք. ոչ
բժշկաց ձեռք, այլ հաւատք միայն բազում անգամ
յախտէն զերծուցանեն։ Եւ եթէ բժշկաց պէտք լի-
նիցին, սակայն և անդ բազում զրաստութիւն է, բա-
զում ժուժկալութիւն. ոչ կին հերձակ առ մարդն,
և ոչ որդիք՝ որ չև ևս գիտիցեն զչափ որբութեան
լալ առատանալ. ոչ ծառայք որ աղաչիցեն զյանդ

յոգիսն իցէ, եթէ ուր յանձն առնիցէ զնոսա զգուշանալ· այլ յամենայնէ յայնմանէ ազատ են ոգիք արդեն, և միայն վախճանի չնչոյն ակն ունիցեն, եթէ արդեւս երթայցեն առ Ած։

Ովեպետ և լինիցին ցաւք՝ ոչ՝ի չատկերութենէ և ոչ՝ի գլխագարն արբեցութենէ, այլ և պատճառք ցաւոյն լինի գրուատեօք· չիք պարսաւանաց պատճառք՝ի միջի· այլ թէ՝ի հակմանէ, և կամ թէ՝ի ստէպ պահոց, կամ յայլ ինչ այսպիսեաց մտին ցաւքն· ուստի և դիւրապատրաստ արագագործք լինիցին։ Օի շատ է վաստակաւորին՝ի միխիթարութէ, եթէ ոչ իցէ այնուհետեւ ձեռնհաս՝ի վաստակել զերծանել չամ կարեաց։

Եթէ զսրբոց ոտս լուացեալ իցէ ասէ· գոյ և յեկեղեցւոջ այսպիսի գտանել· մի, վասն զի զնոցա վարսն պատմեցաք, զոտս որ յեկեղեցւոյն իցեն՝ արհամարհեսցուք։ Եհազում անգամ այսպիսիք և յեկեղեցւոջ գտանին, այլ՝ի ծածուկ· մի, վասն զի՝ի տունս մտանեն և ընդ հրապարակս շրջիցեն· մի, վասն զի գլխաւորք կայցեն, արհամարհիցեմք զնոսա· քանզի և զայն ասաց Հրամայեաց· «Եհատ, ասէ, արարիք սրբոյն, և տուք իրաւունս այրւոյն»։

Եհազում Հանապարհք են առաքինութէ, որպէս և մարգարտին բազում այլ և այլ կերպարանք են, թէպետ և ամ իսկ մարգարիտ ասիցի· այլ զի՞ և չամ կողմանց բոլորակի, և այլ է՝ որ ոչ ունիցի զնոյն գեղեցկութիւն, այլ այլաձև գոգ երկայն ինչ գործուածոյ, անկիւն անկիւնս ընտրեալ իբրև Հաթարակաւ· և քան զսկիտակն և այլ ինչ վայելուչ կայ· և կանաչն քան զամենայն դալարիս ևս գեղեցկագոյն· և այլ ինչ քան զծով ևս կապուտակ· և է ինչ որ քան զծիրանիս ևս վայելուչ· բազում ծաղիկք արևու իսկ նման են։ Եյնպէս և սրբք կէսք զանձինս ևեթ զարդարեն, կէսք զեկեղեցի։

« Ով զսրբոց, ասէ, զոտս լուացեալ իցէ, և նեղելոց բաւական լեալ իցէ»։ Փութասցուք և մեք՝ի նոյն գործ· զի և մեք պարծիցիմք անդ, թէ և մեք զսրբոց ոտս լուացաք։ Եւ եթէ սրբոց ոտս պարտ իցէ լուանալ, որչափ ևս առաւել ձեռնտու լինել

պախրէիւ ։ « Ա՛ի , ասէ , գիտասցէ ձախ քո՝ զինչ գործեսցէ աջ քո ։» Ընդէր առնուցուս ընդ քեզ բազում վկայս . մի և ծառային իմանալ՝ եթէ հնար ինչ իցէ . մի կին , մի որդիք . քանզի բազում գայ Թագաւորութիւնք են նենգաւորին . թերևս որ ոչն երբեք խափանեացն , յայնժամ խափանիցէ կամ՝ ի մնապարծութենէ կամ յայլոց պատճառանաց ։

Ա՛ա և Ա՛բրահամու Թէպէտ և զարմանալի էր կինն , յորժամ կամէր զորդին պատարագ մատուցանել՝ Թաքոյց ի նմանէ , Թէպէտ և չգիտէր զինչ ինչ պատահելոց իցէ . այլ այնպէս հաստատեալ էր՝ Թէ արդարև՛ իսկ սպանել հասանիցէ ։ Ա՛Թէ իմացեալ էր , զինչ ինչ ասէր արդեւք կամ նա կամ այլ որ ի բազմանն ։ Ցասէր Թէ զինչ որ է սա , զի զայսպիսի գործս գործիցէ . ոչ սպաքէն անագորոյն միտս հաստատէր և վայրենութենէ , Թէ և տեսանելոյ զիս չարաչար արժանի , և ոչ զչեմին բարբառն լսել , և ոչ զձեռս և զոտս ածել տեսանել , այլ իբրև զգեղի մի և զայլոյ չանկարծակի վարատեաց ։ Ա՛ւլ չածէր այսպիսի ինչ զմտաւ արգարն . քանզի արբեալ սիրով արարչին , և չտեսանէր այլ ինչ , բայց միայն զմիոյն հրամանն՝ Թէ զիա՛րդ վաղվաղակի կատարիցէ . էր մեծ ծառայ և ոչ կին . մանաւանդ և ոչ ինքն իսկ գիտէր Թէ զինչ գործք գործիցին . այնպէս ջանայր ամենևին զի զպատարագն մատուցանել , զի մի ոք արատաւս արկանիցէ՝ և մի գժկամակութիւն պղծիցէ ։ Ա՛ւ ասէ ցնա Իսահակ ։« Ա՛հա հուր և ահա փայտ , ուր է գառն պատարագ ։» Իսկ հայրն զինչ արդեւք . « Ա՛ստ , ասէ , տեսցէ իւր գառն պատարագ որդեակ ։» Ա՛ւ վայրապար ինչ , այլ մարգարէութիւն ասէր . եթէ զորդին իւր տեսցէ գառն պատարագ . միանգամայն անդէն իրքն կատարէին ։

Ա՛ւ ի դմանէ զի Թագուցանիցես , ասէ Թէ պատարագելոց ես ։ Ա՛յո , ասէ . այլ երկինքս գուցէ զանգիտիցէ , կասկածեմ Թէ չլինիցի արժանի ։ Ցեւ սէր զի բազում հաւատովք գործեր գնամ , որպէս և գիրքն իսկ ասէն , Թէ « Ա՛ի գիտիցէ ձախ քո , զինչ գործիցէ աջ քո ։» այս ինքն Թէ և իբրև անդամ ի յանգամանց համարիմք ընտանին , մի վաղվաղակի

յայտնեացուք. բայց եթէ կարի լինի հարկ ի վերայ կայցէ։ Վանդի բազում դժնդակութիւնք անտի իսկ գործին, եթէ մնասարծուհիւն լինի ոք ախտանայցէ, և խափան լինիցի։ Ոչ ասն այնորիկ թէ հնար լինի իցէ՝ և յանձանց թաքուսցուք. զի հասանիցեմք խուսացելոց բարուքեցն չնարհօք և մարգասիրութեամբ ՚ռն մերոյ Յ՚ի Վ՚ի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն ՚ռչ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

«Այնուհետև, ասէ, առաքինորդաց ձերոց և հնազանդ լերուք. զիտասջիք զի նորա սկիզն փոխանակ օգուց ձերոց, քանզի պատասխանի տալոց են ընդ ձեր»։ Այս արդ աղէ՝ ասա, նա այնպէս պատժոց պատժապարտ է վասն քո, և դու և անսալ չկամիցիս նմա, և այն զի քո ևս յօգուտ։ Վասն քոյում բարիոք խնամ տանիցես. զի մինչ քոյն բարիոք ոչ կարգիցի, ի կասկածի կաս. կրկին կրելոց ես պատիժս։ Ի միտ առ, որպէս զիւրաքանչիւրք ոք ի ժողովրդոցն կամի զի քննիցի և կասկածագոյն լինիցի։ Որպէս ինչ պատիւ և ողջոյնս վարդապետին հրամայեաց մատուցանել։ Ասա համեմատութեամբ ձգանցն զոր յանձին կրիցէ։ Այլ չէ ևս ասեմ զկնիսն. քանզի և զանձն ևս դնէ վասն քո. Թէպէտ և ոչ աստ, յորժամ ժամանակն կոչիցէ՝ անդ կորուսանէ վասն քո։ Այս դու բանիւք անգամ չկամիցիս հնազանդ լինել. և ամ չարեաց պատճառք անտի են, զի իշխանացն սաստ կորեաւ. չիք մեծարանք, չիք պատիւ, և ոչ երկիւղ։ «Այսուհետև, ասէ, առաքինորդաց ձերոց և հնազանդ լերուք»։ և աստ առասիկ ամենայն կարգք եղծեալք և չքմեղեալք[1]։ Այս չասեմ ինչ վասն առաքինորդացն զայս։ Օ ինչ ինչ օգուտ իցեն ի ձերմէ պատուոյն, եթէ ոչ՝ միայն զի զձեզ տեսանիցեն հպատակս բանին։ Այլ վասն ձերոյ օգտի պատուիրեմ. նորա թէպէտ և պատուիցին, չօգտիցին ինչ յայնմ աշխարհի. այլ և դատաստանք և մեծ են ընդ այնր անդ. և եթէ թշնամանիցին, չընասին ինչ յայնմ աշխարհի, այլ բազում պատճառք լինիցին պատասխանի տալոյ։

Օ ամենայն ինչ վասն ձեր կամիմ. յորժամ իշխանքն՝ յայնցանէ օրոց իշխեանն՝ պատուիցին, և այն ևս նորա ծանր լինիցի. որպես ցՀելէնն ասէր, եթէ «Ահ էբէղ ի տանէ հօր քո»։ և յորժամ թշնա-

[1] Ցպրիանէն չիմանաց։

մանիցին, որպէս և յՅամուէլէ ասէր, Թէ " Ո՛չ զքեզ անարգեցին, այլ զիս ,, · որպէս զի Թշնամանքն շահ են նոցա, և պատիւն ծանրութի · Ո՛չ այսուհետև վասն նոցա ինչ ասեմ, այլ վասն ձեր · որ պատուեայ զքահանայն՝ զիա պատուեայ · և որ սովորի արհամարհել զքահանայն, ասն ասն յառաջ մատուցեալ զիա Թշնամանէ · " Որ զձեզ ընդունի, ասէ, զիս ընդունի ,, · և " Ո քահանայս նորա, ասէ, մեծարեսջիք ,, · Նման իսկ ուսան զիա արհամարհել հրեայքն, զի զՈվսէեան արհամարհեցին, զի զնա քարկոծն առնէին ·

Յորժամ ի քահանայէն ոք ակն ածիցէ, և չայ երկնչիցէ · Թէպէտ և յոռի ոք իցէ քահանայն, այլ ունի տեսանել՝ զի վասն նորա պատուոյ և զանարժանն պատուեա, և նա հատուցանէ քեզ զփոխարէնն · Ո ի Թէ " Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ ,, · չայս է Թէ որ քահանային հպատակ լինիցի, այ հնազանդ լինիցի · Զոր յորժամ վասն օտարսիրութեան բանք իցեն և զոր ոչն ձանաչիցես ի տուն տանիս, այնչափ վարձս առնուցուս · իսկ եթէ որում հրամայէն հնազանդ լինել՝ հնազանդիցիս, ոչչափ ևս առաւել պարգևս առնուցուս · " Յաթոռն Ովսեսի նստան գպիրքն և փարիսեցիք, զայ՝ զոր ինչ ասիցեն ձեզ՝ արասջիք, բայց ըստ գործոց նոցա մի գործիցէք ,,

Ագիտեն զի հրեշտակ ասն է քահանայն · մի Թէ ի զոլբ ինչ խօսիցի · Թէ արհամարհիցես, ոչ զնա արհամարհիցես, այլ զայ՝ որ նմա զձեռնադրութիւնն իւր ետ · ԼԹէ այսպիսի ինչ կարծիս ունիցիս, ապա յոյն քո մնասի է · եթէ չգործէ ինչ նուաւս ածծ, ոչ կինքն քո կինք է, և ոչ խորհրդոյն հաղորդ լինիցիս, և ոչ յօրհնութեան վայելես, նա և քրիստոնեայ իսկ չես · Իսկ զիաւրդ, ասէն, զամենեսեան ածծ օծանիցէ և զարժանիս և զանարժանս · Ո ամենեսին ածծ չօծանէ, բայց ամենեքուքիք ինքն գործս գործէ[1]· Թէպէտ և նոքա չիցեն արժանի, վասն փրկութեան ժողովրդեանն չարդելոյ զչնորհն · Ո ի Թէ իշոյն, և

1 Յօրինակին պակասէր գոլնէ ·

Խաղաղաւետ՝ արամբ միով պղծով, խօսեցաւ վասն ժո-
ղովրդեանն, որչափ և առաւել քահանայիւն։
Օ ինչ ինչ ոչ առնիցէ ած վասն մերոյ փրկութեան.
զինչ ինչ լսօսիցի, որպիսի ինչ մարգովք չազդիցէ
զշնորհն. զի թէ Հրեայիւ ազդեաց, և մարգա-
րէիւքն գործ գործեաց, ըղրոց ասէ, "Ոչ գիտեմ
զձեզ, ի բաց կացէք յինէն որք գործէք զանօրէնու-
թիւն". և այլք դեւս հանէին, որչափ և առաւել
քահանայիւքն ազդիցէ և գործ կատարիցէ։

Օ թէ զվարս առաքինորդացն պարտէաք ինչ
քննել, ապա և զձեռնադրուիւն մեք պարտեաք տալ
վարդապետացն, և ամ ինչ վեր ի վայր կործանէը.
ոտքն ի վեր՝ և գլուխն ի վայր։ Ուր Պաւղոսի որ
ասէ. "Ինձ և այն անարգանք են՝ եթէ ի ձեռն դա-
տեցայց, և կամ քնաւ ամենևին ի մարդկանէ". և
դարձեալ. "Ոչու զի դատիս զեղբայր քո". եթէ
զեղբայրն չիցէ պարտ դատել, որչափ և առաւել
զվարդապետն. եթէ այ էր այնպէս հրամայեալ, քա-
րիսք առնէիր, նա և մեզանչէիր և՝ թէ չառնէիր.
իսկ եթէ զնորին հակառակն հրամայեաց ած, մի ինչ
խոր յանդգնել, և մի զգործեանն կրկին գործեր։

Յանհարուստի վերայ յետ զորձին ձուլելոյ յարեան
Կորխ և Դաթան և Աբիրոնի. չատակեցան ար-
դեւք։ Խրաբանչիւր ոք զիւր հոգս հոգասցի. բայց
եթէ կրօնս ինչ թիւրս ուսուցանիւ, թէ և հրեշտակ
իցէ՝ մի անսայցես. ապա թէ ուղիղ ուսուցանիցէ
մի ընդ վարսն նայիցիս, այլ ընդ բանսն։ Ունիս
զՊաւղոս՝ որ կարօղ է բանիւք կարգել զքեզ ի լաւ
անգր։

Ողորմի, ասեն. չատ ինչ աղքատաց, չմատակա-
բարէ բարիոք։ Այս ոչ ասեմ իցէ քեզ յայտ. մինչ
չէ ի վերայ հասեալ իցես՝ մի բամբասեր. երկիր ի
պատժոց. Թերևս կարծիք իցէն. նմանեա քումբ ոնն,
զոր զինչ ասէր. "Ինձեալ տեսից թէ ըստ աղաղա-
կին իւրեանց վճարիցեն ինչ. ապա թէ ոչ՝ զի և ես
ինչ գիտացից"։ Իսկ եթէ ի վերայ և հասեր և
քննեցեր և տեսեր, գատաւորին ինա, մի յառաջա-
դոյն յափշտակիցես զԻնձի աթոռն. նորա է քննել
զայն ած, և ոչ քո. դու ծառայ յետին ես, և ոչ

առեր · ոչխար ես, մի՛ քններ զՀովիւն · մի՛ որով գնայս բամբասիցես՝ պատժապարտ գտանիցիս · Այս ինձ գիա՛րդ ասիցէն, ասէ, զի ինքն չառնի · Այլ եթէ նա ինչ ասէ · Թէ նմա՛ հաւանիցիս, ապա չառնուս իսկ վարձս · Ինձ է որ խրատէ · և զի՛նչ ասիցեմ, նա և Պաւղոսի իսկ չէ պարտ հաւանել՝ եթէ գիւր ինչ խոսիցի, եթէ մարգկօրէն ինչ ուսուցանիցէ, եթէ ոչ զառաքելոյ՝ յորում Ինչն խոսէր · Այլ քննեացուք զմիմեանս, այլ իւրաքանչիւր զբո՛ զանձն · զբո՛ վարսն քննեաջիր ·

Այլ նմա՛, ասէ, պարտ է լաւ լինել քան զիս · Ընդէր · Այն զի քահանայ է · Այս զի՛նչ աւելի ունիցի քան զքեզ · ոչ ապաքէն զաշխատութիւնն, ոչ ապաքէն զկամակաձն և զտառապանսն · չպարտի ինչ լաւագոյն քան զքեզ լինել · Այս արդ զի չիցէ քան զքեզ լաւ, յայն սակս ինչ պարտիցիս զբո՛ անձ նըդ կորուսանել · ամբարտաւանս խոսիս · ուստի գիտիցես, ով մարդ · ընդէր քարավէժ գարաշոս անւ ձամբ զանձն առնիցես · Այթէ ասիցէ ոք՝ առ այսմ անուան ծիրանիք և թագ արքունի կայ, թէպէտ և գիտիցես՝ չիշխես զանանց՛ի վեր հանել · և եթէ յանգիմանել ևս կարող իցես, փաղչիցիս · փոխեւապատաճառ լինիս թէ բնաւ չգիտիցես իսկ, և չկամիցիս աւելի վտանգս յանձն առնուլ · իսկ անդ զիա՛րդ իցէ զի զաւելի վտանգն ախորժելով յանձն առնուցուս · չլՀաբրն առանց պատժոյ այսպիսի բանք · Այ ուր և Ինչի իսկ · " Այսեմ ձեզ, ասէ, եթէ ընդ ամ՛ դատարկ բանից զոր խոսիցին մարդիկ՝ դատ տայցեն յաւուրն դատաստանի ,, ·

Այնաւ ամենևին իշխես զմնաւ ածել եթէ զան զոք լաւ իցես · և չհնծիցես և չհանիցես յոգւոց, չկոծիցե՛ս զկուրծսդ, չհայիցիս՛ի վայր և նմանիցես մաքսաւորին · ապա ուրեմն կորուսեր զանձն · Այթէ այն չափ առ լաւս իշխեացես ունել զքեզ, լաւ լեր, հանդարտ կաց, զի կայցես միայցես լաւագոյն · ապա եթէ չաղփաղփիցես, զբնաւն իսկ՛ի բաց թօթափեցեր · եթէ պանծանայցես յանձն, ոչ ունիցիս · և եթէ չպանծանայցես, բազում յաւելուցուս · Օ՛ի թէ ոք էրն իսկ մեզաւոր և յանձին կալաւ զմեղն, ել

արդարացեալ ՚ի տաճարէ, և որ չէրն կարի մեղաւոր՝ էջ դատապարտեալ, զու զի՞նչ շահեցոց իցես յապիրատն քննելոյ։ Ո՛մանձն քո քննեա, զքոյին վարսն որոնեա։

Ողորմայցես, այլ բռնաբարես. և բազում ինչ և այլ նոյնպիսի ասպիրատուիս ցուցանիցես։ Ո՛այս ասեմ, ոչ եթէ զգողուածին ինչ գովիցեմ, ճն անդր, այլ կարի իսկ պարսաւեմ և արտասուս արկանեմ, և չհատատամ թէ բնաւ և իցէ ոք իսկ այնպիսի։ Այլ չափ ինչ չարիք տաճարակողոպուտն լինել իցէ, զայն և ասել իսկ ոք չէ բաւական. այլ ՚ի ձեզ խնայեմ. չիամիմ թէ ձեր վաստակքն ընդունայն լինիցի այսու զի զընկերացն ամբաստան լինիցիմք։

Այլ արդ աղէ՝ ասա, ո՞ ոք քան զմաքսաւորն ինաւսակար կայցէ. արդարև՝ իսկ մաքսաւոր և մեղաւոր էր, և բազում չարեաց պարտական. և միայն զի աւսոց փարիսեցին՝ թէ չեմ իբրև զմաքսաւորս զայս, զնա և զընաւ կորոյս. և դու զքահանային իսկ ասես՝ թէ չեմ իբրև զսա տաճարակողոպուտ. և չելաս նիւցես սին ՚ի բնաւէ։

Ո այս ամ ասեմ ՚ի հարկէ, և գամ ստէպ զբանիւքն, ոչ եթէ նոցա ինչ ջատագով լինիցիմ, այլ վասն ձեր կասկածեմ, թէ գուցէ ընդունայն առնիցէք զձեր վաստակն և զառաքինութեն այդպիսի ինչ պարծանօք և դատապարտութեամբ։ Այր սմին իսկ Պաւղոսի “ Ո՛զարծ անձին իւրոյ քննեսցէ, ասէ, իւրաքանչիւր ոք, և յանձին միայն կալցի զպարծանս, և մի առ ընկերասն ,,։

Այս արդ աղէ՝ ասա, եթէ ՚ի բժշկանոց երթայիր, և վէրս ինչ կամ ցաւս ունէիր, թողուիր դեղ խմըդրել և ՚ի վերայ վէրին դնել, և մատուցեալ զբժիշկն որոնէիր, եթէ սա ունիցի վէրս՝ եթէ չունիցի. և եթէ ունէր վէրս, կարէիր արդեւք դարման տանել ինչ. և կամ զի նա զվէրսն ունէր, դու զքո անձնդ ոչ բժշկէիր. և ասէիր, պարտ սմանակս զանձն բժշկել· որովհետև բժիշկս չէ ողջ, թողից և ես զիմ վէրսս և չբժշկեցայց. մինեթ քահանային վէրքն քոյոյ մեղացն միեթաբուսթիւն ինչ իցեն. և ոչ երբէք։ Այլ և նա կրեսցէ պատիժս՝ որպէս ինչ նմա պարտ իցէ, և դու

տայցես վրէժս՝ որպէս և քեզ վայելեսցէ· քանզի վար-
դապետն զկարդ վարդապետուէն միայն ընու, և չպար-
տի ինչ աւելի քան զքեզ արդարուի, բայց թէ ան-
ձամբ փոյթ լինիցի վասն իւրոյ օգտի· " Հղկիցին ա-
մենեքին, ասէ, ուսեալք յայ· և մի ոք ասիցէ ցընա-
կերն՝ եթէ ծանիր զինք " · Հա թէ 'ի քահանային վե-
րայ միայն հարկ կայցէ· Հա ընդէր, ասեն, կայ-
ցէն գվնասուոր՝ և նստիցին 'ի վեր· Օ ի գկարգն կա-
տարիցէ, և ընդ քեզ և ընդ ինձ միջնորդ լինիցի·

Մի խօսեցուք չար զվարդապետաց· զի մի զան-
ձանց իսկ չար խօսիցիմք· եթէ զանձինս քննեսցուք
չխօսիցիմք երբէք զուսերէ չար· ակնածեսցուք յերե-
կորոյն յորում լուսաւորեաց զմեզ քահանայն· Հայր
որուք իցէ, և թէ կամիցես լինչ՝ անօրէն գործս գոր-
ծիցէ, քանայ որդին զընաւ ծածկել· " Մի փառա-
սուրիր, ասէ, ընդ անարդասս հօր քո, զի չէն քեզ
փառք նախատինք նորա " · Ա.Հպիսի և ամենևին իսկ
անկեալ իցես 'ի հանձարոյ, ներեաւ, անսա· և մանա-
ւանդ զՀոգևաւոր հարցն ևս առաւել պատշաճագոյն է
ասել այսպիսի ինչ· Մինծաճեա պատկառեա, զի հա-
նապազ 'ի քում սպասաւորութեն կայ· վասն քո ցանկ
զտաձարն զարդարէ, գիրս հրամայէ ընթեռնուլ,
վասն քո սկէ, վասն քո խնդրուածս մատուցանէ,
վասն քո մատուցեալ զինծ աղաչէ, վասն քո է մա-
ղան և վաստակք նորա· ակնածեաւ պատկառեաւ գո-
նեա յայնմ ամենայնէ· Օ այս ամ ածիցես զմտաս,
և մատուցեալ երկիւղիւ մեծարիցես և առնուցուս
օրհնութիւն·

Հա արդ աղէ՝ ասաս, ընդէր խրտչիցիս· յոռի ինչ
իցէ և վասն այնորիկ խորշիցիս· քեզ զի փոյթ իցէ·
որ չէն յոռի՝ քեզ նա պարգևեսցէ զամ բարութիս·
չէ ինչ քեզ վնաս 'ի նորա յոռութենէն· զի ըստ քո հա-
ւատոցն վճարիցի քեզ ամ յայ· նա և ոչ յարգարոյն
օգուտ իցէ քեզ առանց քոց հաւատոցդ· Հրբեմն
երկնաւէն գործեաց գործ ինձ յորժամ զտապանակն
բարձեալ բերելին յայլազգեացն· քանզի այնպէս կա-
մեցաւ փրկել զժողովուրդն·

Մի թէ վաթքն ինչ կամ առաքինութիւնք քահա-
նային այնպիսի ինչ մեծամեծս կատարիցեն· ամ է որ

ընորհէ զնա, ոչ ինչ այնպէս քահանայութեան, որպէս վասն առաքինութեան վկայել կամ. հոգւոյն ընորհացդ գործ է. քահանային զբերանն ևեթ բանալ, և զնա ինչ ասծ գործել. նա նշանակ ևեթ կայ ի միջի, և գկարգն կատարել։ Ո մտաւ ասծ որպէս ինչ էր ընդ մէջ Յովհաննու և Քրիստոսի. և լուաւ ևս ի Յովհաննէ, թէ "Ես կարօտ եմ ի քէն մկրտել". և "Եմ արժանի լուծանել զկրաց մի կօշկացդ"։ Այլ սակայն, թէպէտ և այնպէս ինչ ի միջի էր, և հոգին էջ հանգեաւ՝ զոր ոչ ունէր Յովհաննէս. քանզի ասէ՝ թէ "Ի լուութենէ նորա մեզ աւետեաց". սակայն մինչև մկրտեալ էր՝ չէջ հոգին իբրև ի մկրտութենին։ Այլ և ոչ Յովհաննու ինչ բանիւ էջ, այլ օրինակ ինչ կատարէ, զի ուսանիցիս եթէ այնը նշանակ է քահանայն, և զնոյն խորհուրդ կատարէ. չիք որ ի մարդկանէ որ այնպէս ընդհատ է ի մարգոյ, որպէս Յովհաննէս ի Քրիստոս. քանզի նա տէր է և նա ծառայ. բայց սակայն էջ հոգին, զի ուսանիցիս թէ զնա ևս գործել և զնոյնս կատարել։

Վասիմ և նոր ինչ ասել, այլ մի ինչ կարի զարմանայիք կամ խռովիցիք։ Այս զինչ իցէ։ Պատարագն նոյն է եթէ չափ և գոյզն որ մատուցանիցէ, և եթէ պաղտս և պետրոս գլխովին, սակայն նոյն է. զոր և Քրիստոս ետ աշակերտացն, զնոյն այժմ քահանայքս կատարեն, և չէ ինչ ընդհատ յայնմանէ։ Այս էր վասն արգելք։ Քանզի ոչ եթէ մարդիկ գործեն, այլ նոյն որ զսկզբանց. զոր օրինակ և բանքն նոյն են զոր յայնժամ Քրիստոս խօսեցաւ և այժմ քահանայքս խօսի. նոյնպէս և պատարագն նոյն է զոր ետն. նոյնպէս և ևս ինչ հաւատովք կատարի։ Վասն այսորիկ վաղվաղակի ի վերայ կուռնելի հոգին, քանզի յառաջագոյն զիւր փոյթն եցոյց և զհաւատսն մատոյց ընծայ։ Արդ այս մարմին է և այն. որ համարիցի զայս փոքր քան զայն, չդիտեմ թէ այժմ Քրիստոս է, և այժմ ազդէ և կատարէ։

Այս արդ զայս ևս ի միտ առեալ. քանզի ոչ եթէ վայրապար ինչ ասացաւ, այլ զի ուղղիցեմք զձեր միտս, և զգուշագոյն ևս յառաջ առնիցեմք, բայց զի և զբանիցս պահպանութիւն ցուցանիցեմք։ Այլ

եթէ յանգ լսիցեմք, և ոչ երբէք առնիցեմք, ոչ ինչ օգուտ մեզ ՚ի բանից գործիցի։ Այժմ դիցուք հաւաստեաւ, փոյթ յանձին ունիցիմք գրել ՚ի միտս և ՚ի սիրտս. մարտիցուք ընդ խնդալ մեռացն, զի քերեսցուք ՚ի բաց. և այնպէս հանապազ փառաւորեսցուք զՏայր և զորդի և զՀոգին Ս֊ն։

Արկածնամուտ լինի ՚ած , զի զմեզ յապաշխարու-
թիւն ածիցէ . ապա եթէ անդրէն ՚ի մեղս յամիցեմք ,
« Ասա խստութեամբ քումմ և ըստ անղէղջ սրտի գան-
ձեա քեզ բարկութեամբ » : Այլ արդ եթէ արդար է , ա-
պա ըստ իւրաքանչիւր արժանեաց հատուցանէ . և
ոչ թողու առանց պատժոց զչարագործս , և չառնէ
անտես զղջկեալն յիրաւանց : Այլ եթէ հզօր է , և
յետ մահու հատուցանիցէ . քանզի և այն է զօրուէն
գործ՝ և ՚ի չարութեանն պահանջել : Այլ երկայնա-
միտ է , ասէ : Եթէ երկայնամիտ է , ապա չպարա-
տիմք խռովել և ասել , թէ ընդէր արդեւք աստէն
չհատուցանիցէ . զի թէ անդէն առ ոտս և առաջամայն
հանէր , վաղուց իսկ կորուսեալ էր աղգ մարդկան .
եթէ ցանդ վրէժս պահանջէր ՚ի մէնջ որ միշտ ընդ
նմա կռուիմք՝ և չժամանեաք իսկ և ոչ ՚ի քսաներորդ-
ամ հասանել . և եթէ չէր բազում երկայնմտութեն
գործ ներելն , և բազում բարերարութեան նորա , որ
շնորհէ մեզ զկեանն ապաշխարութեամբ թօթափել ՚ի մէնջ
զյանցանսն :

Այլ արդ իւրաքանչիւր որ ՚ի մէնջ մեղայ ուղիղ կա-
մաք յիւրաքանչիւր միտս , և քննեսցէ զգործս , և զա-
մենայն զվարս ՚ի մէջ բերեալ հանդէս առնիցէ . և
եթէ ոչ բնութապատիկ տանջանաց և պատժոց արժա-
նի իցէ : Այլ յորժամ մեղադիր լինիցի , եթէ այս ա-
նուն այսչափ չարիս գործէ , և պատիժս չկրէ , իմաս-
յի զկնի , և գադարեսցէ ՚ի մեղադրութեէ : Ո՛վ յոր-
ժամ զկնի քննեսցէ , թերևս և մեծամեծս չարիս
գտանէ . մեծամեծացն մեծամեծ մեղք երևիցին , քան-
զի յայտնի գործեն : Այլ յափշտակիչն և ագահ-
նոյն է , եթէ ոսկի և արծաթ ագահիցէ , և եթէ այլ
ինչ . ՚ի միոջէ մտաց ծնանին երկոքին վշաքն . և որ
սակաւն զրկիցէ , և ՚ի մեծամեծ զրկելոյն չակնածէ
ցէ . և եթէ չգայցէ ՚ի բուռն , ոչ եթէ ՚ինմանէ ինչ
կայր , այլ յիւրացն որ չեկին ՚ի բուռն : Աղքատն յոր-
ժամ զվիւան՝ որ և չար աղքատ քան զնա է՝ զըր-

կիցէ , Թէ և մեծատուն ի բուռն գայը , չածէը աչն ի զրկելոյ . և այնուհետև ի տկարութենէն և ոչ ի նո բա ինչ կամացն գործին իրքն ։

Այս անուն , ասեն , իշխան է , և յափշտակէ . և դու չյափշտակիցես ։ Այս զայն մի ինչ ասիցես՝ Թէ նա բազում լաւքս ոսկւոյ յափշտակեաց՝ և դու տասն լումայ . քանզի և յողորմածութեն ոմանք ոմանք ոսկի արկանէին ի գանձանակն , և այրին երկուս խեղևեչս պղնձոյ , և ոչ ինչ սակաւ քան զնոսա արկ ի գանձանակն ։ Ընդէը ։ Վասզի կամքն քննին և ոչ տուրքն ։

Այս արդ յողորմածութենէն ազատեաս զանձ զի այսպէս համարիցի , և մի ինչ նուազագոյն զտուրս ազքատութեանն հաշուիցի . եթէ զերկուս խեղևեչն արկանիցես , կամիս Թէ ընդ այնս որ զբազում ոսկին արկանիցեն՝ գրեսցէ . և յագահութենէն ոչ ինչ այնպէս . և զիա՞րդ ի դէպ իցէ ։ Օ որ օրինակ որ զերկուս խեղևեչն արկ ի բարիոք կամացն , ոչ ինչ սակաւ քան զայլոցն եղև նպաստ . նոյնպէս և դու յորժամ երկուս դանկս զայլոց յափշտակիցես՝ ոչ ինչ լաւագոյն քան զայնոսիկ ես՝ որ զբազում արարս զայլոց յափշտակեսցէ ։

Այս եթէ պարտ իցէ զկարի իսկ զզարմանալին ասել , ևս չար քան զնոսա ագահագոյնս գտանիցիս ։ Օ որ օրինակ որ ընդ Թագաւորի որ կնոջ չնայցէ և որ ընդ աղքատին և ընդ ծառայի , ընդ մի չնութենւն համարի . քանզի ոչ եթէ ըստ երեսաց մեղքն համարին , այլ ըստ չար կամացն յանդգնելոց . նոյնպէս և յագահութենէն ։ Այլ ես կարի շուն զայն համարիմ , որ ընդ գոյն ոք կնոջ չնայցէ , քան եթէ ընդ տիկնոջ ուխք . զի անդ մեծութենէն և գեղն և բազում ինչ է որ պատրէ . իսկ ի միւսումն և ոչ ինչ . որպէս զի այն իսկ կարի շուն է , որ ընդ գոյն կնոջ ոք չնայցէ ։ Դարձեալ և կարի աբրեցօղ զայն ասեմ , որ ոք յոուի գնոնէն զգլխիցէ ։ Այնպէս և կարի ագահն այն է՝ որ զմանուանն չարհամարհիցէ . զի որ զմեծամեծն յափշտակիցէ , Թերևս և զմանուանն արհամարհիցէ իսկ . բայց որ զմանուանն հատանիցէ , զմեծամեծն և ոչ երբեք արհամարհիցէ . որպէս զի կա-

բի գող մանրակծծին իսկ է. որ զարծաթի չարհամարհիցէ, նա և յոսկւոյ չածէ ակն։ Այլ այնպէս յորժամ զնչխանն բամբասիցեմք, և զմեր գլանայանս զմտաւ ածիցեմք, և գտանեմք զանձինս գոլս և ագահս և աւար քան զնոսա. և թէպէտ և ոչ արգեամբք, այլ կամօք. այսպէս համարեացուք, քանզի և յերբաւի իսկ է այսպէս հաշուեալ։

Այլ արդ աղէ՝ ասաց, եթէ ոք յօժարիցէ զանանձս կինն հատանել, և միւսն զմեծատանն, ոչ ապաքէն ըզնոյն պատիժս պատժիցին երկոքին։ Այլ սպանօղն չիցէ նոյնպէս սպանող որ զհարմ և զաղքատ սպանանիցէ, և որ զմեծատունն և զողջանդամ։ Այլ արդ յորժամ ասիցեմք՝ թէ այս անուն զայս անուն գեօղ յափշտակեաց, զմտաւ ածցուք և զանձանց միասս, և այնպէս ոչ զայլս գատապարտիցեմք, և ընդ այ երկայնմտութեին զարմանայցեմք, և չլինիցիմք մոգադիր՝ թէ ընդէր չգայցէն ի վերայ մեղաւորաց պատիժք. և մեք ցածնուցուամբ ի չարիս գործելոյ։ Յորժամ տեսանիցեմք և զանձինս նոցա պատժապարտս, և այնուհետև և ոչ ինչ լինիմք գժկամակք. այլ հեռանայցեմք ի մեղաց, և հասանիցեմք խոստացելոց բարութեանցն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Որ ասէն, այս անուն գողացաւ, և այս անուն ըզգողնսն յայտնեաց, չէ Ճշմարիտ, այլ սուտ և ծաղր զրոյցք. քանզի չգիտեն ինչ։ Այնէ գիտեին, նախ զիւրեանց պարտ էին գուշակել. զի բազում անգամ կուռքն ձօնիք ի գողութէ չոգան. ոչըսիտ ոչ կի ձուլեցաւ՝ ընդէր չգուշակեցին յառաջագոյն քըրմացն իւրեանց. և յայտ է թէ չգիտեն ինչ, այլ վասն կարասոյ հայհոյեն ընդ վայր, և չկարեն ինչ ստոյգ ասել։ Յորժամ մեհեանք իսկ կռոցն այրեսցին, և բազումք անդէն ի նեբքս սատակեսցին, ընդէր չբնխայիցեն և զգուշանայցեն փրկուել նոցա. այլ յանկարծադէպ ինչ երբեք իրք պատահեցին, եթէ յանկարծ ուրեք զոր ինչ ասիցեն լինիցի. որպէս կուրացք զի յանկարծ ինչ առ խաբխաւի ընդ ոտն հարկանիցէ։ Այն առ մեզ մարգարէք, որոց ոչ երբեք վրիպեցան բանք. ոչ եթէ զայս ասեն և զմիւս ոտն, այլ ամ ինչ Ճշմարիտ ասեն, այն է հաւաստեաւ կանխասաց գիտութիւն։

Պատգարեցէք յայնպիսի մոլորուէ, աղաչեմ, եթէ Ուրի հաւատայք. ապա եթէ չհաւատայցէք, զի զանձինս խաբէք, մինչև յերբ յերկուս ոտս կաղայցէք։ Ա՛ման էր մատուցեալ հարցանես. ոչ գիտես թէ յորժամ մատչիցես հարցանել, զանձն ընդ ծառայութիւն արկանես։ Հաւատայցես իրացն զի հարցանես։ Այ, ասէ. չհաւատամ եթէ արդար խօսիցի, այլ փորձեմ։ Այս և փորձէն իսկ՝ եթէ արդար խօսիցի՝ չէ հաւատացեալ մտաց. չհաւատայ թէ արդարև սուտ խօսիցի, այլ տակաւին յերկմիտ խորհուրդս կայ։ Ընդէր հարցանես թէ զինչ լինիցի. զի թէ ասիցէ՝ թէ այս ինչ լինելոց իցէ, բայց դու զայս ինչ արա և ապրիս, նա և այնպէս իսկ չէ պարտ քեզ ի կռապաշտութիւնն դառնալ. քանզի անմտութիւն է այն, և չլինիցի զինչ ասէն։

Իսկ եթէ ասիցէ ևս, և հնարս ինչ ոչ ցուցանիցէ,

զինչ շահ լինիցի այնմ՝ որ խմանայցէ զերծն. բայց միայն տրտմութիւն աւելորդ, որք ի գլուխ չելանիցեն, այլ տրտմութիւնն միայն զմիտան հաշիւկ։ Եթէ յօգուտ ինչ էր այն, ընտանձէր ած յայտնել մեզ. զերկնաւորսն ասաց և ընտանձեցաւ։ " Օ ամենայն ինչ, ասէ, զոր լուայ ի հօրէ իմմէ պատմեցի ձեզ ". և " Այլեւս զձեզ ծառայս, այլ բարեկամս. բարեկամք իմ էք " ասէ։ Եւ ընդէր յայտնեաց մեզ զայն։ Վասնզի այնպէս կամի եթէ լուսիցիմք մեք հոգւք զանձանց, այլ զնմ ինչ ի նա ապաստան առցուք։ Եւ զի ոչ նախանձի, այնու յայտ է, զի առաքեսցն զնմ ինչ ասէր. և վասն իշոց անգամ կորստեան, և այլ ինչ նոյնպիսի իրաց, քանզի տղայք էին. իսկ զմեզ ոչ կամիցի եթէ յայնպիսի ինչ իրս անկանիցիմք, և մեզէն զանձանց ջնաս ծածկելոյ ինչ հոգայցեմք։

Այլ ինչ զինչ։ Օ՛ի ուսուցանիցիմք զոր ինչ նոքա չուսանին։ Այսպէս ամենևին իսկ կարի մանուկք էին, և մերս բնաւին մեծամեծք։ Օ՛ որ մերքն են, այս ինչ է. զի յառնելոց եմք և անմահկանացու լինելոց, անեղծք և առանց ապականութեան. և Եթէ չէք վախճան կենացն մերոց, և Եթէ ամ ինչ անցաք նելոց իցէ, և Եթէ ընդ ամսոց յափշտակելոց իցեմք, և Եթէ չարագործք պատիժս կրելոց են. և այլ եւս բազում ինչ նման սոցին. և չէք ինչ որ սուտ իցէ. և չէ՛ լաւ զայս ամ գիտել, քան զինչ միով կորուսեալ լոյ զգիւտ ձանապէզ։ Կոտոր զէշն, զինչ աւելի շահ շահեցար. ո՛չ ապաքէն դարձեալ կորուսանելոց ես զնա այլով օրինակաւ. Թէպէտ և նա զբեզ չթողուցու, սակայն դու Թողուս զնա ի քում վախճանին. իսկ զորոց իրաց ես ձառեցի՝ Եթէ ունել կամիցիմք՝ Հանապազ իսկ ունիմք։

Եւ արդ զայնր զհետ երթիցուք, զայնմանէ ըզբուռն Հարցուք, որ միշտ կայ Հաստատուն. մի նայեսցուք ընդ գիւթս, և մի ընդ խղճս, որք չգիտիցեն ինչ և խոստայցեն, և մի ընդ Հստահարցն մտախաբս. այլ ընդ ած՝ որ զամենայն ինչ ձարտար գիտէ, և զամենեցունցն գիտութիւն ունիցի ի բուռն. և այնպէս զամենայն ինչ ձանաչիցեմք՝ զոր պարտ է ձանաչ-

չէլ. և ամենայն բարութեանց հասանիցեմք ընդհանուր և մարդասիրութեամբն նոյն մերոյ Տեառն Ա՛ստուծոյ, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այ դու տէս, վասն որոյ աշակերտացն և այլոց բազմաց աղօթս առնէ, զնոյն և վարդապետին ըղձանայ։ Այսպէս և նա, ասէ, կարօտ է աղօթիւք. նա և առաւել քան զնոսա, որչափ զի բազում թըշնամութիւնս և ձգտունս ունի քան զնոսա, որք և այ իսկ հակառակ կայցեն։ Որչափ և պատիւն մեծ է, նոյնպէս և ձգտունքն մեծամեծք, որ 'ի քահանայութեն աշտիճանին իցէ։

Կատարեալ է և մի ինչ ուղղութիւն եպիսկոպոսութիւն հանել զնա յերկինս, և մի ինչ մեղք արկանէն 'ի դէհենն։ Այլ զայն ամ 'ի բաց Թողից, բայց որ ինչ հանապազն լինիցի, թէ դէպ լինիցի ումեք կամ վասն բարեկամութեն երբեք, կամ վասն այլ իրիք պատճառանաց զանարժան ոք յեպիսկոպոսութիւն ածել, և քաղաքի միոյ մեծի զիշխանութիւնն հաւատալ, տես որպիսի հրոյ առնէ զանձն պատժապարտ. ոչ միայն ոգւոյն կորուսանելոց, քանզի կորուսանէ զբազմաց ոգիս՝ որ անարժան և աներկիւղ իցէ. այլ ընդ ամ իսկ մեզայց, զոր նորա գործեալ իցէ, որ արարն զնա՝ նա տացէ պատիժս։ Որ մինչ դեռ 'ի հասարակաց աշխատանին էր, չեցոյց ինչ ուղղութեի, որչափ և առաւել յորժամ յիշխանութեն հասանիցէ։

Այս և երկիւղածին այնպէս լաւ իցէ, եթէ յորում կարգի էր՝ 'ի նմին կայցէ, Թող Թէ աներկիւղն. զի յորժամ յիշխանուն հասանիցէ այնպիսին՝ 'ի հպարտութեն հատանի, մնապարծ և փառասէր լինի, ընչից ցանկացօղ, խիստ և ամբարտաւան. բռնութիւք վարէ զիշխանութիւնն. և անդ կացցէն այնուհետեւ կռիւք և թշնամութիւնք և բամբասանք և ազգի ազգի չարիք մեծամեծք։ Այթէ մինչ յաշտիճանն չէր հասեալ՝ աներկիւղ էր, որչափ և առաւել յորժամ զիշխանութեին առնուցու և քան զևս աներկիւղ լիներ։

Այ արդ որ զայնպիսին իշխան կացուցանէ, ամենայնի նորա մեղացն՝ և բնաւ ժողովրդոցն՝ որ էս

այնպիսւոյն զիշխանութիւն, պատժապարտ գտանիցի։ Լ[1]ե՛ որ զի ոգի գայթակղեցուցանիցէ՝ լաւ էր նմա եթէ արկեալ էր երկան իշոյ ընդ պարանոցն, և ընկղմէր ի խորս ծովու, որ այնչափ ոգիս գայթակղեցուցանիցէ՝ զողջոյն իսկ զքաղաքն և զժողովուրդն, զբեւրս բիւրուց ոգիս, զարս և զկանայս և զմանկունս, և զքաղաքացիս և զշինականս, որ՝ի քաղաքին իցեն, և որ յայլ քաղաքս ընդ այնու քաղաքաւն, որպիսի՛ ինչ պատժոյ չլինիցի արժանի։ Լ[1]ւ ո՛րչափ ինչ ասիցես՝ չկարես բովանդակել. զի այնչափ կարի ընդ տանջանաւք և ընդ պատժոք է. և է առաւել կարօտ շնորհացն այ և խաղաղութեան։ Լ[1]ւ եթէ ո՛չ այնիւ ուղղեսցի նա՝ի ժողովրդեանն, ա՛մ ընկղմեալ կորըն չիցէ՝ յորժամ սամիքն ուղղիչ[1] նաւին չիցեն՝ի միջի. Թէպէտ և հմուտ և իւր նաւավարութեն, եթէ ո՛չ զսամիսն ուղղեն որ շրջըրջիցէ՝ ունի՝ի ձեռինն, չէ հնար եթէ կարիցէ զնաւն՝ի նաւահանգիստն հասուցանել, այս ինքն է զշնորհն և զխաղաղութիւնն ա՛յ. և եթէ այն չիցէ, ընկղմեալ կորնչիցի նաւն հանդերձ ամենեքեան՛ք որ՝ի նաւին իցեն։

Լ[1]ւ կարի իսկ զարմանալի՛ ընդ այնոսիկ՝ որ այնպիսի ծանրութեն ցանկանայցեն։ Հեքդ և թշուառականդ, որպիսո՛ւմ կրակի ցանկանայցես. եթէ միայն և անծանօթ և աննշանաւոր իցես, և բեւր մեղս գործիցես, ընդ մի ոգւոյ տայցես համարս և ընդ անձինդ և եթէ պատժիցիս. յորժամ յայնպիսի իշխանութիւն հասանիցես, ի միա՛ւ ընդ ո՛րչափ ոգւոց հասանիցէ համարս տալ. և լո՛ւր Պաւղոսի իսկ՝ որ ասէ. " Լ[1]ս-սայո՛ւք իշխանայ ձերոց և հանազանդ լերուք, քանզի նոքա սկեն ընդ ոգւոց ձերոց, որպէս զի և համարս եւս տալոց են ընդ ձեր ,, ։ Լ[1]ւ պատուոյ ինչ և իշխանութեա՛ն ցանկանայցես. և զինչ տանջանք իցեն այնպիսի պատուոյ. քանզի և զայն չհամարիմ պատիւ. քանզի չէ՛ հնար իշխանին՝ որ ստոյգ իշխանն է՝ թէ չիցէ ընդ իշխանութե՛ն այնոցիկ, որոց իշխիցէն. և եթէ ստոյգ ոք քննեսցէ, ո՛չ յիշխանութե՛ն գայ այնպէս սին, այլ՝ի ժառանգութէ բազում աւերանց. զի կէսքն

1 Յօրինակին յորժամ ձիւոդ ի ուշիւ։

ցանկանան տեսանել և հէաբն հակառակ կան. և յոր-
ժամ խօսիցի, զոր մին գովէ՝ և միւսն պարսաւէ. և
զոր ասյս աղաղակէ, ընդ այն ընկերն զարմանայ։ Այս
արդ ո՛ւմ լսիցէ, զո՞ր միտս հաձիցէ. չէ մարթ չէ
հնար եթէ զամենեցուն միտս հաձել կարիցէ։ Այս
որ արձաթագո՛ւին իցէ, յորժամ խօսիցի՝ և զանան
աչերն ընդ բերան վարիցէ, չիշխէ ընդդէմ դառնալ
և եթէ խիստ ինչ հրամանս տայցէ, հարկով յանձն
առնու. իսկ դու եթէ հրամանաց այնպէս տերանց
ընդդէմ դառնայցես, չկայցես յոր յաւրի, նա և ընդ
այն զի այնպէս բերան բանաս՝ դատ տայցես։ Այս
արդ այն պատո՛ւ ինչ իցէ կամ իշխանութի՛ւն կամ
ձոխութի՛ւն։

Հրաման տայցէ եպիսկոպոսն թէ բերէք ինչ կե-
դեցի. և թէ չկամիցի ոք, ո՛չ միայն չբերիցէ, այլ
զի մի՛ կարծիցի՝ թէ առ վատութե՛ն չբերիցէ, ի բամ
բասանս հատանի. գողանայ, ասէ, և յափշտակէ զոր-
ոց և զայրեաց ի մարդկանէ։ Վաղարեա՛ւ ի բամ-
բասանաց. մինչև ցերը զայդ ևեթ խօսիցես. չկամիս
ինչ բերել, չկայ հարկ ի վերայ. չեք ոք որ պատժէ.
ընդէ՞ր բամբասիցես զխորատիչն։ Այս եթէ պէտք
ինչ ուիք իցեն, և չլինիցի ձեռնտու՝ քանզի չիցէ
բաւական, և կամ թէ յայլ ինչ պէտս զբօսեա՛լ չպա-
րսիցէ, չէ այնուհետև բնաւ ներել, և ո՛չ անսալ և
հանգարտել. այլ դարձեալ բամբասանք, տրտունջք
և քրթմնջիւն, հեծեծել և շընջել։ Այս արդ այն իշ-
խանութի՛ւն ինչ իցէ։ Այս զվրէժ թշնամեացն չկա-
րիցէ խնդրել, քանզի իւր աղիք են ամենեքին. և որ-
պէս և աղեացն՝ թէպէտ և գիտեմք եթէ ցաւս բաշ
ինն ի գլուխն և յամ մարմինն, չիշխեմք միաս ինչ
առնել, և ո՛չ վրէժ խնդրել, և ո՛չ սուր առնուլ և
կատորել. նոյնպէս և որոց իշխեցեմք. թէպէտ և աշ-
խատուի ի վերայ հասանիցէ և տրտմուիս ի բամ-
բասանացն, չիշխեմք ընդ անարգանացն վրէժս պա-
հանջել. քանզի հեռի է այն ի հայրենի գիտից. այլ
հարկ է համբերել ցաւոցն, մինչև քաջ աղջանայցէ
այսպիսին։

Արձաթագո՛ւին ծառայն ունիցի ինչ գործ՝ որ հրա-
մայեցաւ նմա, և եթէ զայն վճարիցէ, այնուհետև

անհոգ է . իսկ սա ամենայն ուրեք զառաւելն և աւելի քան զկարն պահանջի : Եթէ խօսել չգիտէ , բառդում և այնպէս տրտունջ կայցէ . և եթէ խօսել գիտիցէ , դարձեալ այլ բամբասանք . հպարտ է , ասէ , և ամբարտաւան : Եթէ ոչ զլեռեալսս յարուցանես, չէ , ասէն , արժանի . այս անուն երկիւղած , ասեն , և դա չէ երկիւղած : Եթէ չափով լինչ կերակուր ուտիցէ , դարձեալ բամբասանք . պարտ էր նմա , ասէն, միշտ պատկառ կալ : Եւ եթէ ի բաղանիս ոք տեսանիցէ , զարձեալ անհնարին չարախօսութիւք . բնաւ , ասէն , և զարև արժան էր դմա տեսանել :

Եթէ զոր եան գործեցի , լուանայցէ , և ուտիցէ , և ըմպիցէ , և հանդերձս զգենուցու , և զծառայից հոգայցէ , և ընդէր կոչի առաքինորդ , վասն էր առնուանի գվաւսոր : Այլ և ծառայս ևս ունիցի , ասեն , և սպասաւորս , և յէշ նստի . ընդէր բառնայցէ զիմ հոգս , վասն էր կոչեսցի իմ առաքինորդ : Եւ արդ աղէ՛ ասա , ընդէր չպարտիցի առնուլ սպասաւոր , այլ ինքն անձամբ կրակ դնիցէ , ջուր բերիցէ և փայտ կոտրիցէ , և ի վաճառել զպէտսն վճարիցէ . և չէ քեզ իսկ այն ամօթ : Իսկ աւանիկ տեսանեմք զարս՝ որ զառաքեալս , զի որ բանին պատկառ կայցէ՝ չկամին զայսպիսին այրեացն սպասաւորութիւն արժանի համարել . դու աւադիկ ծառայիցն քոց ի սպասաւորութիւն ձգես զառաքինորդն : Եւ քանզի այնպէս ձարտար հրամատար ես , ընդէր իսկ չերթայցես քեզն և վճարիցես զնորա պէտսն . ոչ տպաքէն մեծամեծ սպասաւորութիւն հարկանէ քեզ՝ քան թէ դու նմա զմարմնաւորսն . և կամ զծառայս քո ընդէր ոչ յղիցես և հրամայիցես սպասաւորել . Ինչ ինքնին լուաց զոտս աշակերտացն , դու թէ սակաւ ինչ դարմանն տանիցիս վարդապետին՝ մեծ ինչ գործիցես . այլ ոչ դու կամիս ունել խնամ , և զնա ևս արգելուս : Եւ արդ զնաց . յերկինից ինչ պարտ իցէ նմա կեալ . այլ ոչ կամիցի այնպէս ասե :

Առաքեալքն , ասեն , ծառայս ունէին . ծառայս չունէին , այլ զաշատն իբրև զծառայս վարէին : Այս մին և զայն ևս լսել , թէ զնացդ առաքեալքն գնային՝ յորժամ յօտար տեղիս ուրեք երթային . ազգ ազատ

և կանայք ամենաւաչկանք փոխանակ նոցա Հանգստեան՝ զանձինս և զգլուխս դնելին . վասն որոյ և սոյն իսկ երանելիս պատուիրէր, ձէ՞ " Օ այսպիսիսն ի պատուէ ունիցիք : Օ ի վասն գործոյն ոմն մինչև ի մահ մերձ եղեաւ , յանդգնեալ ետ զանձն ի մէջ, զի զձեր Թըշուառութիւն լցեալ առ իմով պաշտամանն „ : Տեսանեն զինչ ասէն , և դու բանս անգամ չծախես վասն հօր քո , Թող Թէ Ձգուես ինչ յանձն առնուլ :

Ի՛ւր ի բաղանիս մտանել և լուանալ չէ պարտ ասեն : Ի՛նդէր . չէ ինչ արգել և այնմ , քանզի ոչ եթէ աղտն բարւոք ինչ իցէ . նա և ոչ գտանեմք ուրեք՝ եթէ այնմ արգել ինչ իցէ, և ոչ զարմանալի ինչ գործ չմտանեն . այլ պատուէրս պատուիրեաց եպիսկոպոսին , անարատ լինել , ցածուն , պարկեշտս , հիւրասէր , ուսուցիչ . զայս պահանջէ առաքեալ , և դու զսոյն խնդրես յիշխանէն . մի աւելիս ինչ . չես քան զՊաւղոս Ձչմարտագոյն :

Ո՛հ հարկանող իցէ կամ Թշնամանող , անօրէն ինչ և անողորմ , յայսպիսի իրս արժանի է բամբասանաց եպիսկոպոսն . եթէ կարի ինչ փափկանայցէ և անբամբաս ինայ , արժանի է . ապա եթէ զմարմինն չաՓով դարմանէ՝ զի քեզ սպասաւոր լինիցի , և Համով խնամ ունիցի՝ զի քեզ պիտանացու լինիցի , վասն այնորիկ չէ պարտ բամբասել : Ո՛հ չգիտիցես զի մարմնոյ տկարութիւն չէ ինչ ընդհատ յոգւոց տկարութիւն . և մեզ ինասխ և եկեղեցւոյն : Ո՛ակ Պաւղոս ընդհէր յարդարիցէ զայսպիսի ինչ իրս , յորժամ գրեաց առ Տիմոթէոս , Թէ " Ի՛յսուհետև մի միայն ջուր ըմպիցես , այլ սակաւիկ մի և գինեակ խառնեալջիր վասն ստամոքսի և պիղծս հիւանդութեանցդ „ :

Ի՛թէ ոչաւղքն միայն զառաքինութիւնն կարէաք վՀարել , ապա չէր պարտ մարմնոյ խնամ ունել . և եթէ այսպես ինչ էր , բնաւ և լինելոյ մարմնոյ զի՛նչ պէտք էին : Ո՛ակ եթէ բազում ինչ լաւութիս կատարէք ընդ ոչսոյն , զի՞արդ չիցէ անհնարին անմոռութիւն անփոյթ առնել և չունել խնամ : Ո՛չ հանդերձքիք եթէ իցէ ոք եպիսկոպոս պատուական , և զհատարտակաց եկեղեցւոյն հաւատացեալ զվերակացութիւնս , և այլովք ՝ամ իւիք առաքինի իցէ , որպէս և քահա-

նայի իսկ պատշաճ իցէ և զնմա ինչ յանձին ցուցանել, և ցանկ 'ի մահիճս կայցէ 'ի բաղում հիւանդութեանէ, կարիցէ այնպիսին օգուտ ինչ գործել· զոր ձանաչարհ հարկանիցէ, զիարդ 'ի հիւանդաց տես երթայցէ, ուր սաստիցէ, զո խրատել կարիցէ, զրպիսի ինչ պէտս վճարել։

Ո՞յս ասացի զի ուսուցանիցիք չգամբասել վայրապար, այլ խնամ տանել առաչնորդաց, և հնազանդ և հպատակ լինել· և զի մի ոք ցանկայցէ իշխանութեանէ, յորժամ հայիցի յայնպիսի բուք բամբասանացն· 'ի բաց մերժիցէ զցանկութին զայնպիսի գործոց· և արդարև իսկ կարի վտանգք են այ հնօրհացն, և խաղաղութեանէ պէտք։ Ա՝ ամն որոյ աղօթս առնիցէք 'ի վերայ մեր, և մեք եւս յաձախագոյն վասն ձեր, զի երկոքինն կազմանք ցուցցուք զուղղութիւնս առաքինութեանն, և այնպէս կարիցեմք խոստացելոց բարութեացն հասանել· որոց լիցի ամենեցուն մեզ հասանել հնօրհօք և մարդասիրութիւն ամն մերոյ Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

Ա. ՑԻ. Լուարձաք յետ այնր զինչ ասէ Ներ. «Ոչ քաղաք կամ ի գեղ մտանիցէք, յորժամ մտանիցէք, ասէ, ի տունն, ողջոյն տացէք. և եթէ տունն արժանի իցէ՝ եկեսցէ ողջոյն ձեր ի վերայ նորա. և եթէ չիցէ արժանի՝ ողջոյնն առ ձեզ դարձցի»։ Այսոքիկ այնորիկ վիմանամբ, զի բանից օրինակ համարիմք զայն, և չմիաբանեմք մտօք։ Այլ թէ ես տայցեմ զողջոյնն. Ոչ է՝ որ մեւքն բաբառի արժանի առնել. Թէպետ և զայլ ժամանակին լուկ ի ընդհատն իցեմք, այլ ոչ եթէ և այժմ որ խօսիմք։ Այնթէ լինի և ի դիւթն աղաչելն ոչ ընդհատն վասն տեսլեան թէ ինչ և վասն խորհելացուցն օգտի, կարի իսկ քաջ յայտ է՝ թէ և ոչ ի մէնջ հրաժարեն աղաչել, այլ անսայ վասն ձեր։

Այս արդ մի ոք ասիցէ՝ անարգ և տառապեալ և ոչ իմիք արժանի լինես, և չանսայցէ։ Այմ իսկ այնպէս, այլ սովոր է ած վասն բազմաց և յայսպիսին խոնարհել. այլ զի ուսանիցիք, և ընդ այնենի ոչ դարձեցայս խօսել վասն Հաբելի, և ընդ սատանայի վասն Յովբայ, և ընդ Փարաւոնի վասն Յովսէփու, և ընդ Նաբուքոդոնոսորայ վասն Դանիէլի, և ընդ Նաղտասարայ վասն նորին. և մեզքն յայտնուԹեան արժանի եղեն, և Այրիափա, Թէպետ և տիրասպանու և անարժան էր, մարգարէացաւ վասն քահանայապետին և պատուոյ. և Կհարոնն, ասեն, յայն սակս չզրոսեցաւ։ Այս եթէ վասն այնորիկ ոչ, աղէ՝ ասա, յո՞ր սակս. զի երկոքին բամբասեցին, և քոյրն միայն պատժեցաւ. և ընդ այն մի ինչ գործմանար, Վանզի և յայտաբին պատիւն՝ Թէպետ և բազում չափաւսութիւնք լինիցին, չմտանէ յատեան՝ Թէ ոչ նախ յիշխանութիւն մերկանայցէ, զի մի և պատիւն ընդ նմին Թշնամանեսցի. ո՞րչափ և առաւել՝ ի հոգևոր իշխանութիւն, մինչ դեռ իշխանութիւն ունիցի, ո և ոք իցէ, աղաչեն ընդհատն ած. ապա եթէ ոչ միանգամայն կորնչին։ Յորժամ յիշխանութիւն մերկանայցէ՝ կամ

անդր երթեալ կամ աստէն իսկ, յայնժամ զանձնասպանն պատիժն կրիցէ։

Այլ մի համարիցիք եթէ ի մտաց ինչ ասիցեմ, թէ ընդհակառակն այդ և անարժանաւորն գործ գործեն՝ ոչ վանականք, այլ վանականք ձեր. լուարուք այսուհետև Աստի. "Իսկ եթէ իցէ, ասէ, տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա"։ Օ՛խրդ լինիցի արժանի, "Եթէ ընդունիցին զձեզ" ասէ. և եթէ չընդունիցին զձեզ, և ոչ բանիցէ ձերոց լուիցեն, "Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագին լիցի երկրին սոդոմացւոց և գոմորացւոց յաւուրն դատաստանի քան քաղաքին այնմիկ"։

Օ՛ինչ օգուտ իցէ ընդունելն զմեզ, եթէ բանիցն զոր խօսիցիմք՝ ոչ լուիցէք. զինչ իցէ՝ եթէ զմեզ հանգուցանիցէք, և խօսիցն չանսայցէք. այն է մեզ պատիւ, այն է մեզ հանգիստ զարմանալի, որ և մեզ յօգուտ է և ձեզ։ Այլ լուր Պաւղոսի. "Ողիտէի, ասէ, եղբարք եթէ քահանայապետ իցէ"։ Ոչ ուր և Աստի. "Օ՛շամ, ասէ, զոր ասիցեն ձեզ պահել՝ պահեսջիք և արասջիք"։ Այլ զիս արհամարհես, այլ զքահանայութիւնն. եթէ տեսանիցես մերկ յամենայնի, յայնժամ արհամարհեսջիր. յայնժամ ես չըժտիմ հրաման տալ։ Այնչ դէտ յաճուռ նստիմք՝ և զպահերիցութիւնս ունիմք, և զպատիւ և զզօրութիւն ունիմք, թէպէտ և անարժան իցեմք։ Եթէ Աստուածսի աճուռն այնպէս մեծարոյ էր, որպէս եթէ նմա լուիցեն, ոչ՛ափ ևս առաւել Աստի աճուռն. քանզի և այն ի մեզ կարգեցաւ. անտի խօսիմք, ուստի և Աստ զմեզ եղ ի սպասաւորութիւն հաշտութեան։

Հրեշտակք զինչ ոք և իցեն, վանն հրեշտակութեն պատուոյ՝ ի բազում մեծարանս վայելէն։ Ցես զի ոք ի բարբարոսաց երկրի կեան՝ ի մէջ քաղաք պատերազմաց, և զի առաւել զօրագոյնք են հրեշտակութեանն օրէնք, յորժամ գայցեն՝ ամենեքին պատուեն, ամենեքին ի նոսա հայեն, ամենեքին սիրով յուզարկեն։ Այլ մեք զհրեշտակութեն պատգամաւորութեի լուաք և առաք յոյ, քանզի այն է եպիսկոպոսութեն պատիւ. եկեալ եմք առ ձեզ պատգամաւորել, աղաչել ցածուցանել զպատերազմ. չխոս-

տանամք ուժեք քաղաքս տալ, և ոչ ոՀՃիկ այսչափ
ինչ և կամ այնչափ. ոչ ծառայս և աղախնեայս, ոչ
ոսկի և արծաթ, այլ զարքայուէն երկնից, զկեանն
յաւիտենից, ընդ Քրիստի գնդակից լինել և զայլ բա-
րութիւնն, զոր և ասել չէ հնար՝ մինչ դեռ ի մարմնիս
իցեմք և յաշխարհի։ Պատգամաւորեմք և աղաչեմք.
կամիմք զի ի պատիւն վայելիցեմք, ոչ վասն մեր ինչ,
քաւ լիցի, զի այն մեղ ի վատթարութիւն է. այլ վասն
ձեր, զի դուք զմեր բանիս փութով լսիցէք և օգտի-
ցիք. զի մի ծուլութիւք և յոյսութեամբ հայիցիք ընդ
խօսսն։

Ողեսանիցէք զՀրեշտակս, զիարդ ամենեքեան կու-
տին զնոքօք. և մեք ոյ հրեշտակք եմք առ մարդիկ։
Այթէ ձեզ ինչ այն վայրապար թուեսցի, այլ ոչ եթէ
մեզ. ոչ եթէ ոմն եպիսկոպոս է, այլ գործ եպիսկո-
պոսուէ. մի օք համարեսցի ինձ լսել, այլ պատուոյն։
Ոյսուհետև զամ ինչ արասցուք ըստ ոյ կամացն,
զի ի փառս ոյ կեցցուք, և խոստացելոց բարու-
թեանցն սիրելեացն նորա արժանի լիցուք հասանել
Քրիստոսէ և մարդասիրութեամբ ոն մերոյ Ցիսի Քրիս,
ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք,
իշխանութիւնն և պատիւ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Աթէ մանուկ ուրուք՝ի հիւանդութէ իցէն և նա գոհանայցէ զայ, այդ պակաս է նմա[1]։ Վասն զորոյհ-սի տանջանս չէցէ չար, քան զոր քերան տրամուէին, և չհանիցէ բան հայհոյութէ ընդ բերան. և թէ մեռանիցի և ս, և զնահն գոհութէ ընդունիցէ մայրն, եղև դուստր Աբրահամու։ Վասն և ոչ իւրովք ձեռօքն եսպան, այլ զի ընդ պատարագն ուրախ եղև, այնմ զոյհ է, նմին հաւասար. զի չեղև դժկամակ ընդ առնուլ պատարագին։ Վասն եալ հիւանդն է[2] թէ չգայցէ զբժժանօք, ընդ մարտիրոսութէ համա-բեալ է և այն. քանզի մեռօքն պատարագ մատոյց զորդին։ Վասն և չօգնիցէ ինչ այն, այլ պատիրք և խաբկանք են, և բազումք էին որ ստիպէին թէ օգնէ. և յանձին կալեալ՝ թէ լաւ է մեռեալ տեսա-նել զորդին, և ոչ կատարեալ թէ անսալ։ Արդեօք այս՝ի մարտիրոսութէ համար է, եթէ վասն անձին կամ վասն որդւոյ կամ վասն առն կամ վասն ջերմ ուրուք սիրելոյ առնիցէ, նոյնպէս և միւսն՝ի կատա-պաշտութէ. յայտ է թէ մատուցանէր իսկ պատա-րագ, թէ պէտ լեալ էր մատուցանել, մանաւանդ մէկ գործեաց իսկ զգործ պատարագի։ Վասնզի վասն բժժանացն թէ հազար ոք Ճարտարախօսիցէ յայս-յանէ՝ որք այնմ պահակիցեն, և ասիցէ թէ զայծ կարդամբ, և չառնեմք աւելի. նա քրիստոնեայ պա-տառն և հաւատացեալ, սակայն կատարեալ թերն իրք են։

Հաւատացեալ ես, կնքեա՛, զնաչին միայն նշան դրոշմեա. զայն միայն դիտեմ զկնի, զնոյն դեղ, և այլ ինչ ոչ։ Կղէ՝ ասա, եթէ մատուցեալ բժիշկ՝ թո-ղուցու զբժշկութէն դեղս, և յուռութս ասիցէ, զայնպիսին բժիշկ համարիցիմք. և ոչ երբէք. քան-

1 Յօրինակին պակասէր այդ խօսքս։ 2 Յօրինակին Դարձեալ ե՛ն նմա.

զի չտեսանեմք ինչ դէզս բժշկութիւն. նոյնպէս և ած ի միւսում գլխատանելոյն ինչ կարգս։ Այլք և դեռոյ անուանս՝ դէզ ինն հատանեն, և քաղեալ այլ ինչ իբս այնպիսի յանդգնին։ Հաւասիկ ասեմ և վկայուի դնեմ յառաջագոյն, թէ դարձեալ ի նմին ոք գտանիցի, ած խնայեմ. եթէ դէզ հատանել, և եթէ յուռութս յուռթել, և եթէ այլ ինչ վասն նոցին արուեստի։

Ասէ զինչ առնեմք, ասեն. եթէ մեռանիցի մանուկն։ Այլ եթէ այնու կեցցէ, յայնժամ մեռանի. և եթէ այնպէս մեռանիցի, յայնժամ կեայ։ Զու առաքիկ եթէ տեսանիցես եթէ զբոցիւք գայ, աղօթս առնես, եթէ յանկարծ սատակէը, և չհամարիս ինչ օգուտ զկեանսն. և վասն ոգւոյն փրկութե՛ի տագնապի տեսանես, և չկամիս թէ կեցցէ։ Ընկեցեա՛ց ած։ "Ար կորուսանի, ասէ, զանձն իւր՝ գտցէ զնա, և որ գտանէ՝ կորուսցէ"։ Հաւատաս բանիցն, եթէ առասպելք թուիցին։ Ղէ՝ ասա, եթէ ասէը ոք ցքեզ, թէ տար ի կուռն, առնուիը յանձն։ Ա՛յ, ասէ։ Ընդէր։ Օ՛ի ի կռապաշտութիւն ստիպէը. այն չէր կռապաշտութիւն, այլ դիպն յուռութք։ Այն իսկ են սատանայական միտք և բանսարկուին մեքենայք, ծածկել զմոլորութիւնն յորժամ կամիցի զսպանող դէզն տալ. քանզի գիտէ թէ ընդ այն չհաւանիս, ընդ միւս չանսպարշն գայ, աստիճանօք և պառաւանց առասպելօք խաբել. խայն անարգեալ է, և աստղանիքն պատուական. Ա՛ն արտաքս ընկեցեալ, և պառաւն մնեալ՝ թուէ առասպելս, և կատարէ զխորհուրդ խաբեութեն. Ձմարտութիւնն առոյն հարեալ, և մոլորութիւն բանսարկուին մնեալ կաբաւէ։

Ընդէր ած, ասեն, յանդիմանեսցէ՞ ած զառ յայն պիսեացն օգնականութե՛ի։ Ազաղում անգամ յանդիմանեաց և չեկիւն ի հաւան, այսուհետև և նա թոյլ տայ մոլորութեանն ի քեզ. մանուկդ զնոսա ած ի միտս անփորձս. զայն և ած հեթանոսք՝ որոյ միտք իցեն՝ յանձին ունին։ Ա՛ջն՝ թէ զօրավարի ուրեմն Ա՛թենաս քաղաքի՝ եռեա փիլիսոփոս մի նորին վարդապետ՝ դէզ բժժանայ ընդ անձն արկեալ, անգոմանեայ

նախատեաց, հեգնեաց, կսկծեցոյց։ Յայնչափ թը-
չուառութիւս հասաք, մինչ զի և այնմ ևս հաւատալ։
Ընդէր ոչ ոք այժմ յարուցանէ մեռեալ և բժշկու-
թիւս կատարիցէ։ ԵՒս յաւեմ թէ ընդէր ոչ այն լինի
ցի, այլ թէ ընդէր չիք ոք այժմ որ զկեանս աշխար-
հիս արհամարհիցէ. վարձուք ծառայիք այ։ Մինչ
դեռ տկարութիւք զգածեալ էր բնութիւն մարդկան,
մինչ դեռ հաւատոյն պարտ էր անկել, և այսպէս
սիք բազումք. իսկ այժմ չկամին նշանօք կատարել
զմեզ, այլ պատրաստ ի մահ գտանել։

Ընդէր այսչափ զանցաւոր կենաց կաթոգին. զմի
ի հանդերձեալն չհայիցիս. վասն այնր և սակաւ ինչ
որտմուքիւ չկամիցիս ունել յանձին։ Յայն սակս իսկ
չէն այժմ այսպիսիք, զի անարդ համարեցան մեզ
կեանքն, և վասն այնր չդանդաղիմք և վշտաց ևս
համբերել։

Եւ դարձեալ միւս ևս ծաղր. մոխիր և աճուն և
աղ առեալ պատաւոր և անցեալ ի մէջ գետին, ար-
դարև ծաղր իսկ է և ամօթ, ակնհար է[1], ասէ, մա-
նուկդ. Ո՛րչափ ցերբ սատանայական սովորութիւնն.
չհաւատացին, և արդ չառնիցեն զայն ծաղր հեթա-
նոսք, չհեգնիցեն։ Յորժամ ցնսոտս ասիցեմք՝ թէ
մեծ է զօրութիւն խաչին, զիարդ հաւանեսցին, յոր-
ժամ տեսանիցեն զմեզ այնմ կաթօտս, զոր նոքայն
ծաղր առնեն։

Ա՛յսն այսորիկ ետ ած բժիշկս և դեղս։ Եթէ նո-
քա չբժշկիցեն, ասեն, զի՛նչ գործեացուք. թերի տայ-
ցեմք զի երթիցէ մանուկն։ Յոլ երթիցէ, աղէ՛ ա-
սա, հեզդ և թշուառականդ. մի թէ առ դմա երթ-
թայցէ կամ առ նոցա բռնաւոր իշխանն. ոչ ապաքէն
առ իւր տէրն երթայ։ Ընդէր տրտմիս, վասն ինր
լայես, զի մտանես ի սուգ. մի թէ քան զնէրն քո
դու քաջ սիրիցես զմանուկդ. ոչ ապաքէն նովաս
ունիս զնա. ընդէր իցես անշնորհակալ և զպարգևն
աւելի քան զպարգևիչն սիրիցես։ Ա՛յլ տկար եմ,
ասէ, և չունիմ ժոյժ, և աղիքս խորովին։ Ա՛յլ ընդ-
դիմ կայս այնմ զերկիւղն այ. եթէ ի մարմնաւոր

[1] Յօրինակին -ին-ով է։

վիշտն մեծն զփոքրն ծածկէ, ոչխարի ևս առաւել յոգւոցն՝ պարտ իցէ երկիւղէ զերկիւղն մերժել, և տրտմութիւնն զտրտմութիւն։

(Ա)երևս ասիցես, բարիոք էր մանուկն։ Ա՛յլ ոչինչ դեղեցկագոյն քան զԱհաւակ։ (Ա)երևս միամոր իցէ և ծերութիւնէ մանուկն։ Ա՛յլ և նա միամոր էր և ծերութիւնէ օրդեակ։ (Ա)երևս շոյտ իցէ։ Ա՛յլ ոչ այնչափ շոյտ և գեղեցկագոյն քան զԱ՝ովսէս, որ և զբարբառոս երեսս կնոջն եգիպտացոյն ստիպեաց ածՙի գութ, և այն յայնպիսի հասակի, ուր չէ և գեղն իսկ երևէր. բայց սակայն այնչափ սիրուն էր, և նա գետընկէզ կայր իբրև զամայն՝ Ի խաղ Ջուրց. իսկ գութ և մինչ հիւանդն էՙ տեսանես, և յօրժամ մեռանիցի՝ պատես և թաղես. բայց նոքա և զայն չգիտեն՝ թէ ձկանց կերակուր իցէ թէ շանց, և կամ այլ ինչ գազանաց՝ որ և զգետոնին շրջէին. և զայն յայնժամ առնէին, մինչդեռ ոչ զարքայութիւնէ ձառս գիտեին և ոչ զայսոսիկ։

ասել, այլ զանցելոցն և ի գլուխ ելելոցն ոչ ևս ։
Ուսարուք զջրհեղեղէն. մի թէ այն վասն սպառնա-
լեաց ինչ ասացաւ. և չեղև և չէ ի գլուխ. և նոքա
բազում ինչ այդպիսիս ասէին. և զհարիւր ամ ի
հանդերձել տապանին, և ի կթել փայտին, և ի բո-
զոքել արդարոյն՝ չէր ոք որ հաւատայր. և չհաւատա-
յին բանիցն սպառնալեաց, կրեցին արդեամբք պա-
տիժս. զնոյն և մեք կրելոց եմք, եթէ չհաւատայցեմք,
Այնմ իրի իսկ զգալոսան իւր՝ Այլ աւուրցն նմանե-
ցուցանէ. քանզի որպէս այնմ ջրհեղեղն չհաւատա-
յիցն ոմանք, նոյնպէս և ոչ այժմ գհնձնին ջրհեղեղին։
Ի թէ այն սպառնալիքն էին. ոչ ապաքէն արդիւնք
իսկ եղեն. որ յայնժամ գյանկարծակի պատիժս ած
ի վերայ, ոչ առաւել և այժմ ածիցէ. քանզի ոչ ինչ
նուազագոյն գործ քան զայն՝ այժմ ասա գործին. որ-
պէս զի յայնժամ ասէ. " Որոյն արդիւնքն այ առ
դատաստս մարդկան ,,. և ի խառնակութիւնս միայն էին
անօրէնութիւնք. իսկ այժմ ահաւասիկ ամ կէրպարանք
չարեաց են, որ ամենևին յանդգնութիւն է ։

Հաւատայցէք արդեւք՝ եթէ եղև ջրհեղեղ, եթէ

առանցելով ինչ քանք Թուխցին ձեզ. ուր և լերինքն յորս տապանն գադարեաց՝ վկայեն. զՅայոց լերանցին ասեմ։ Ա՛յլ ևս յաձախութեամբ՝ և յայլ ևս քան ՚ի նոյն՝ յայտնագոյն ածիցէ բանս. երթեալ ուրուք ի՞նչ ձեր ՚ի պաղեստինացւոց աշխարհն. այսուհետև ոչ ևս բանս, այլ արդիւնս իսկ ասեմ. Թէպէտ առաջինքն քան զարդիւնքն յայտնագոյնք էն. զի զոր գիրք ասեն՝ և քան զայլոց տեսիլ հաւատարմագոյնք էն, Ա՛րթեալ ուրուք ի՞նչ ձեր ՚ի պաղեստինացւոց աշխարհն. զի՞նչ որ ՚ի ձէնջ վկայեսցէ ինձ, որոց զաեղիսն իսկ տեսեալ իցէ. քան զԱ՛սկաղոնէ և քան զԱ՛զա ՚ի վերոյ, անդ իսկ ՚ի սպառուածի Յորդանան գետոյ՝ վայրքն ինչ բազում էն և ամենալիցք. մանաւանդ Թէ էին, քանզի այժմ ոչ է նոյնպէս, որ երբեմն իբրև զդրախտն ՚ի՞ր էին։ "Ա՛տես, ասէ, Ղ ոմն զամենայն կողմանս Յորդանանու՝ զի էին յուռթի իբրև զդրախտն ՚ի՞ր ,, . և արդ որ այնպէս ծաղկալից և ամենաշատ վայրքն էին, հակառակեալ ընդ ամենայն աշխարհի, և ժամանէին լիուռթիք դրախտին ՚ի՞ր, քան զայժմ անապատ անապատագոյն է այժմ։ Կան ծառք, և պտուղ ունին, և պտուղն բարկուռթեն ՚ի՞ր յիշատակիչ է. կան նռնենիք, և զփայտին իսկ ասացից, և պտուղն գեղեցիկ իսկ երևի ՚ի վերոյ, և զանտեղեակսն բազում յուսով լի առնէ. իսկ յորժամ ՚ի ձեռն առեալ հատանիցէ, պտուղ ամենևին ինչ ոչ է, բայց մխիր և փոշի շատ ցուցանէ ՚ի ներքս ամբարեալ. այնպիսի է և երկիրն ՚ի՞ր։ Ա՛րթեալ քար տեսանիցես, մխրճեալ գտանես. և զի՞նչ զբարէ և զփայտէ և զՀողոց, ուր զի և օդքն և ջուրքն զնոյն հարուածս կրեցին։ Ամենայն մարմնոյ ինչ այրեցելոյ զկերպարանսն և զնշանաւորանսն տեսանիցեն ՚ի հուր, և զհասակն և գչափն, և զօրուռթի ինչ ոչ. նոյնպէս և անդ զերկիրն է տեսանել. բայց ջունին ինչ զերկրի, այլ ամենևին մխիր. ծառս և պտուղս, այլ ոչ ինչ զծառոյ և զպտղոյ. օդս և ջուրս, այլ ոչ ինչ զՀոյ և զօդոյ. քանզի և այն աշխունացեալ։ Ա՛ղէպէտ և զի՞նչդ իսկ երբեք այրեացին օդքն կամ զի՞նչդ ջուրքն, և ջուրն ՚ի՞նայցէ. փայտի և քարի մարթի այրել, բայց օդոյ և Ջրոյ չէ երբեք հնար։ Ա՛ղէ չէ հնար, այլ ապարչին

հնարաւոր է։ Վասն հետեւ ոչ այլ ինչ է, թէ ոչ հնոց՝ օդն, և հնոց՝ ջուրն. ամ անպտուղ, քնաւ անծին, բոլոր ի պատիժս պատուհասից. կանուխ բարկութեն պատկերք, հանդերձելոց նշանակք. մի թէ և այն բաներից սպառնալիք իցեն. մի թէ և այն խօսիլ ինչ վճռով իցեն։

Ոչ ձեռն առաջինքն անհաւատք իցեն. այլ նոյնպէս ըստ երեւելեացն և աներեւոյթքն հաւատարիմք. նա և անհաւատիցն բաւական են այսպիսի գործք տալ հաւատս։ Ամէն չհաւատայցէ որ գիշնին, զի ոգոմ գնաւոր ածիցէ, զկոտոր յիշեսցէ, զանցեալ պատիժս, որ և արդէն իսկ են. և այն մշտնջենաւոր լիներոյ տանջանացն նշանակ է։ Վասն ինչ են բանքս. և այնք չիցէն ահագին յորժամ ասիցես, թէ չէք գիշին, այլ թէ վայրապար սպառնացաւ ձեզ։ Յորժամ զձեռս ժողովրդեանն լքանիցես, դու ստիպես զիս աւել՝ որ ոչ հաւատասդ. դու ածեր զիս յայսպիսի բանս. եթէ քո՝ բանիցն վճռի հաւատացեալ եր, ոչ լիներ ինձ հարկ յարդեանցն կուտել հաւատս. և զի յայնմանէ փախեար, կամաւ իսկ և ակամայ հաւանեաս իս[1]։ Վասն հետեւ զինչ կայ քո ասել զսոդոմացւոցն։

Ամէն և զպատճառսն ուսանել վասն որոյ եղև երբեմն այն ամ։ Վասն մեղք անհնարինք և անիծից, բայց ընդ մանկան չամչէին, և վասն այնորիկ եաուն զանհնարին վրէժն, Իսկ այժմ բազում ինչ հանգոյն այնմիկ, և եւս անհնարինս քան զնոյն լինին ի սոսա մեղք։ Որ վասն միոյ մեղաց այնչափ եհեղ ըզբարկութեն, մինչև ոչ Վրհամեռ աղաչանացն առնել երեսս, և ոչ Կոտոյ՝ որ ընդ նոսա կեայր, և վասն պատուելոյ զծառայս նորա՝ զգաստերս իւր տայր պարթաչխի ի թշնամանս, ուր այսչափ մեղս գործիցի, խնայիցէ։ Այլազուշ իսկ բանք են արդարեւ առաքելոց, և մելրուքեան և խաբէութեն և սատանայական։

Ամէն, զի միւս եւս օրինակ ի մէջ բերից։ Ուեաղ իցէ զհարաւոյնէ զեգիպտացւոց Թագաւորէն. Թէ

1 Յօրինակին սխալ հարցանէ։

այնպէս իցէ, գիտես զվրէժն զոր ետ. զհաղդ զնոսա կառաջ և երիւարօք հանդերձ ամ զօրօքն ընկղմեաց ի ծով կարմիր։ Ասմիս և այլ ինչ ուսանել. Թերևս նա ամբարիշտ էր, մանաւանդ Թէ ոչ Թերևս, այլ արդարև իսկ ամբարիշտ. կամիս և ի Հաւատացելոց և այ ունկնդրաց՝ որոյ վարք չէին ուղիղ տեսանել պատժեալս. լուր Պաւղոսի. "Ոչ պոռնկեսցուք, ասէ, որպէս ոմանք ի նոցանէ պոռնկեցան, և անկան ի միում աւուր քսան և չորք Հազարք. և մի տրտնջեսցուք, որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին, և կորեան ի սատակչէն. և մի փորձեսցուք զՔ, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին, և յօձից անտի սատակեցան"։

Այժմ պոռնկութիւն այնչափ աղէտս գործեաց և տրտունջ, իսկ մեր չարիքս որպիսի՞ ինչ գործս ոչ գործեցին։ Այլ եթէ չտայցեն այժմէն վրէժս, ընդ այն ինչ մի զարմանար. զի նոքա ոչ գիտէին [1] զգեհէն, վասն այնորիկ անդէն առ ոտս ընդունէին զպատիժս. դու ոչափ և չանցանիցես, Թէպէտ և ընդ միոյ իրիք չտայցես վրէժս, ընդ ամենայնի տուժելոց ես անդ։ Օ տը զայաբարոյն՝ ոչք ոչ այնչափ ինչ չանցանս չանցեան՝ այնպիսի տանջեաց, և՛ ի մեզ խնայիցէ՞. այլ չէ ինչ՝ ի դէպ այս. Թէպէտ և զնոյն մեզս զնոցայն մեղանչեմք, մեծամեծ տանջանաց քան զնոսա արժանի եմք։ Այնդէր. զի՛ ի բազում չնորհս իսկ վայելեալ [2], յորժամ աւելի ևս և մեծամեծ քան զնոսայն չանցանիցեմք, որպիսի՞ ինչ պատիժս ոչ կրիցեմք։

Այլ մի ոք զիս համարիցի՝ Թէ մեծարանս ինչ զնեղուով և ներբևոյով նոցա՝ ասիցեմ զայս. քաւ լեցի. յորժամ ձեզ պատժիցէ, որ հակառակ այնմ բերիցէք վըճիռ՝ ի սատանայական մտաց առնիցէ զայն՝ Այլ սուտհետև գովելով ինչ զնոսա կամ նեբելով ասեմ զայս, այլ հայեցեալ ի մեր չարիսս. նոքա Թէպէտ և տրտնջեցին, այլ ընդ անապատն չրջէին. իսկ մեք ի մերում աշխարհի եմք և ի մեր տունս, և տրտնջեմք. նոքա Թէպէտ և պոռնկեցան, այլ յեգիպտական չա-

1 Յօրինակին պակասէ գէ-տէն։ 2 Յօրինակին պակասէ վեր-ևոյ։

բեացն այն ինչ հեռացեալ էին, և գրե՛թէ չև և էր լուեալ այսպիսի օրէնս. իսկ մեք ՚ի նախնեացն զիրըկուեմք վարդապետութիւնն ընկալաք. ապա ուրեմն մեծաց պատուոյ պատուապարտ եմք։

Կամիս և այլ և այս ինչ լսել. որչափ ինչ վիշտս ՚ի պաղեստինացւոց աչխարհին կրեցին. սով, սուր, պատերազմունս, գերութիւն ՚ի բաբելացւոցն, յաստրեւս տանեացն, ՚ի մակեդոնիացւոց, անհնարին չարիս ՚ի Հայբիսանոսէ, ՚ի Վեսպիանոսէ։ Կամիմ քեզ, սիրելի, և այլ և այս ինչ պատմել. այլ մի՛ ինչ սոսկացեալ ՚ի բաց մերժեսցես. մանաւանդ թէ յառաջ քան զայս այլ ինչ ասացից։ Սով եղև երբեմն ՚ի քաղաքի, և Թագաւորն ելեալ շրջէր ՚ի վերայ պարսպացն. և մատուցեալ կին մի՝ այսպիսի ինչ բանս խանդաղատանաց խօսէր. "Տէր, ասէ. կինս այս ասաց ցիս, թէ խոովեսցուք այսօր զքո որդիդ և կերիցուք, և վաղն զիւն զիմս. խորովեցաք և կերաք, և զիւրն ոչ կամեցաւ տալ։ զինչ քան զայս վիշտ անհնարին կայր։ Պարձեալ այլբուր մարգարէն ասէ, եթէ "Ձեռք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց"։ Հրեայքն այնչափ վրէժս էառուն, և մեք առաւել ևս ոչ տայցեմք։ Կամիս և զայլոյ ևս չարեաց նոցա ուսանել՝ ընդ Յովսեփայ գերսն անց, և անտի ուսանիս զնոմ աղէտս նոցա։

Զո արդ հաւանեցուցանք արդեւք զձեզ յայսմ ա՞ մենայնի՝ զոյ գիհէն։ Օ մնաւ ած, զի թէ նոքա տանջեցան, մեք ընդեր չտաժիւիմք, կամ զինարդ չիցէ ՚ի դէպ մեզ պատժել որ սաստիկ քան զնոցա յանցանս յանցանեմք. եթէ յայտ իսկ չէ, վասն զի պահեալ կան մեզ պատիժքն. և եթէ կամիս՝ և իւրաքանչիւր ևս ՚ի դէմս տարեալ զքանս՝ ասացից, թէ զինարդ տանջեցան։

Պան զերազայրն Կային. անհնարին մեղք էին. և սակայն ետ վրէժս, և անհնարին վրէժս, և արժանի բազում մնհուց. վասն որոյ բազում անգամ յանձին ունէր մեռանել։ Ադր նմին իսկ. "Թէ հանիցես զնս, ասէ, յերկրէ, և յերեսաց քոց Թագեայց, եղիցի ամենայն որ գտանիցէ զնս սպանանիցէ"։ Զո արդ աղէ՝ ասա՛, ո՞ զնոյն իսկ գործս զնորայն գոր-

ձեն և այժմ ևս բաղումք · յորժամ ոչ զմարթեաւոր՝ այլ զՀոգևոր եղբարս սպանանիցես , ոչ ապաքէն ըզնոյն գործ գործեցեր ։ Այլ այն զի առնէ՝ եթէ ոչ սրով , այլ այլովք օրինակօք· յորժամ կարող ես փաւատեալ զսուին , և անտես առնիցես ։ Իսկ չնախանձէ՛ ցաւ ոք այժմ ընդ եղբօր, և չարկ ոք զընկերն ի վիշտս· այլ չետուն ասէն վրէժս , սակայն տալոց են անդ ։ Որ ոչ օրինաց ինչ դրոց լուաւ՝ և ոչ մարգաբէից , որ ոչ նչանս ինչ ետես մեծամեծս , այնչափ կրեաց պատիժս· որ յետոյ զնոյն գործեաց , և ոչ այնպիսի օրինակօք զգաստացաւ , առանց պատժոյ լինիցի · և ոչ իցէ այ իրաւունքն, և կամ ոչ բարութիւնքն ։

Վարձեալ փայտ ոմն քաղեաց ի շաբաթու, և քարկոծեցաւ · Թէպէտ և փոքր ինչ պատուիրան էր , և քան զԹվփատուին յոռեգոյն · որ զփայտն քաղեաց ի շաբաթու, և քարկոծեցաւ · որք բազում չարիս բազում անգամ գործեցին՝ առանց պատժոյ երթայցեն ։ Այթէ գեհէն չիցէ , ոչ արդարութիւն իցէ , ոչ անաչառութիւն ։[1] Թէպէտ և բազում ինչ այսպիսի մեղադիր լինի նոցա , թէ շաբաթս ոչ պահեին ։ Վարձեալ այլ ոմն Այքար՝ մի անուն՝ գողացաւ ի նզովից , և ամ ապգաւն հանդերձ քարկոծեցաւ · և արդ զիարդ · չեղև տաճարակողոպուտ յայնմ հետէ ։ Վարձեալ Աւուդ խնայեաց՝ այ կամացն արտաքոյ , այնչափ պատիժս կրեաց · իսկ այլ ոք ոչ խնայեաց արդեւք յայնմ հետէ ։ Այրանի թէ այն միայն էր · ոչ ապաքէն քան զդազանս՝ զիմիանաս առաւել ուտեմք արտաքոյ այ կամացն , և չանկաւ ոք ի պատերս զմի ։

Վարձեալ որդիքն Հեղեայ , զի յառաջ քան զպատարագն մատուցանել՝ ուտէին ի պատարագէն, և անչնարին վրէժս ետուն հանդերձ հարքն · իսկ չեղև՞ ոք ծոյլ, ոչ հայր առ որդիս , և ոչ որդիք անչնազանդք · այլ չետուն վրէժս · և արդ էր տայցեն՝ թէ գեհէն չիցէ ։ Վարձեալ և այլ ևս ինչ բազում գտանէ ոք ասել · Այնախա և Այսիրա՝ քանզի գողացան յորոց նուիրեցինն, առ ժամուն պատժեցան · ոչ ոք արդեւք յայնմ հետէ զնոյն գործ գործեցին · ընդէր ոչ ետուն զնոյն վրէժ ։

1 Յօրինակին անաչառութիւն։

Հաւանեցուցանք արդեւք զքեզ՝ եթէ գոյ գեհենն, թէ բազում և այլ ևս օրինակաց պէտք իցեն. թէ այսպէս իցի՝ յանգիր եկեսցուք, որ այժմ իսկ յաշխարհս լինին. զի հարկ է մեզ յամ կողմանց զսոյն միտս ժողովել, զի մի՝ ի զուր ինչ անձանց չնորհել՝ առնիցեմք մեսս անձանց։ Ցտեսանիցես զազգսն՝ ի վիշտս՝ հաշմ մարմնով բազում վիշտս կրեալ, և զայլս՝ ի գիւրութեէ. ընդէր ոմանք ընդ սպանուելեց ետուն վրէժս, և ոմանք չետուն. լուր Պաւղոսի՝ որ ասէ, թէ " Ոմանց մեղքն յառաջագոյն երթան, և ոմանց զկնի ". ոչխափ սպանօղք զերծան, քանի՞ գեբեզմանակրկիտք. այլ՝ ի բաց Թողցուք զայն ամ։ Օ քանի՞ տեսանիցես տանջեալս անհնարին տանջանօք. ոմանք երկայն ցաւօք մատնեցան, ոմանք հանապազորդ տանջեցան, և ոմանք բազում այլոց ինչ տանջանաց։ Արդ յորժամ զքեզ տեսանիցես ժպրհեալ, և թերևս՝ ի բազում ինչ ոչ կրեալս, ոչ ապաքէն և ակամայ իսկ ակն ունիցիս գեհենին։

Օ մտաւ ած զնոսա՝ որ աստէն յանհնարին տանջանսն տանջեցան, և ծանիցես թէ ած ակնառու չէ. և զի դու բազում չարիս գործեցեր՝ և այսպէս ինչ ոչ կրեցեր, ունիցիս՝ ի մտի զգեհենին. զի այսպէս սերմանեաց՝ ի մեզ գնա ած, որպէս զի ոչ ումեք անգէտ լինել. քանզի և վիպագիրքն, և փիլիսոփայք, և որ զառաւսպէլսն գրեցին, և ամ իսկ մարդիկ առ հասարակ՝ վասն անտի հատուցմանցն Ճարտարախոսեցին, և յաղագս՝ ի գժոխս պատժելոց բազմաց Ճառեցին. և եթէ այն առասպելք իցեն, այլ ոչ եթէ որ՝ ի միջի մերում իրքս պատմեցան։ Այս զայն ոչ եթէ վայրապար առ ահ ինչ արկանելոյ՝ կամեցան ասել, և ոչ ծանրատաղտուկ բեռինս՝ ի վերայ մերոյ ոգւոցս կուտել յօժարեցին, այլ առ՝ ի ցածուցանել և թեթևագոյնս յարդարել։

Այս և ես իսկ յանձնապատս ընդ այն կամիմ՝ թէ չէին տանջանք. և մանաւանդ առաւել քան զամենեսին ես։ Ընդէր՝ Օ ի՝ ձէնջ վասն իւրաքանչիւր ոգւոյ ոք միայն կասկածիմ, և ես ընդ ամենեցուն

1 Ցօրինակին առ անի ըստ ինքեան։

վերակացուԹՅ՝ համարս տալոց եմ· որպէս զի առա-
ւել քան զամենեցունց՝ և ինձ անհնարին է զերծանել
՚ի պատժոց· այլ չէ հնար Թէ չիցեն տանջանք կամ
Թէ չգուցէ գեհենն· Այլ արդ զինչ գործեցից՝ զայն
ոչ գիտեմ· Ա՛ռր իցէ, ասեն, այ մարդասիրուԹիւն·
Յաւմ ժամ ասեմ, այլ առաւել ՚ի միւմ ժամա-
նակի խօսեցայց վասն սորին իրաց· զի ընդ միմեանս
խառնեցից զՀառս գեհենին· Ասայց առ այժմ զոր
շահեցաք՝ մի վրիպեսցի ՚ի մէնջ· քանզի մեծ շահ է
հաւանել Թէ գոյ գեհեն· այսպիսի բանից յիշատակ՝
իբրև զաստիկ ինչ դեղ զնամ ախտոն փարատէ· ասէպ
ունել ՚ի միտս մեր· արկցուք ՚ի կիր զնա, զի որ սիրտ
ունիցիմք· և այնպէս արժանի եղիցուք տեսանել
« Օ՜ր աչն ոչ եռես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ,,· որոց լիցի ամենեցունն մեզ հա-
սանել Հնորհօք և մարդասիրուԹեամն մերոյ Յիսի Ա՛ղի,
ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն որ փառք,
իշխանուԹի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից· ամէն·

Ա ԱՍՆ որոյ ազաչեմ զամենայն հնարս հնարեա-
ցուք առ մի ինչ երբեք նիրհելոյ ։ Ջտեսանիցէք ըզ-
պահապանն . յորժամ սակաւիկ ինչ զանձինս քնոյ
տայցեն , չօգտին ինչ ի բազում պահպանութիւնն .
քանզի ի սակաւ ժամուն զամենայնն կորուսին . զի
բազում համարձակութիւն ետուն գողոյն ։ Ո՛ր օրէ-
նակ որպէս մեք զգողն չտեսանիցեմք՝ և նոքա զմեզ
տեսանեն , նոյնպէս և սատանա առաւել քան զամե-
նեսին ի վերայ յարուցեալ գարանակալ լինի , և կրձե
զատամունս ։

Ա՛ի այսուհետև ննջեսցուք , և մի ասասցուք՝ եթէ
այս ինչ բանք են , և այն ինչ . զի ուստի ակն չկայ՝
գող բազում անգամ ական հատանէ . նոյնպէս և ի
չարիսն , որում ակն չկայցէ՝ այնու կորնչիմք . ամե-
նայնի հաւաստեաւ գէտ ակն կալցուք ։ Ա՛ի արբեա-
ցուք՝ չնիրհեմք , մի փափկասցուք՝ և չննջեմք , մի մա-
ղրեսցուք արտաքնոյն իրօք՝ և արձնուեմք կատա-
րիմք . յարդարեսցուք զանձինս ամ ուստեք . որպէս
որ [1] ի ձգելոց չուանացն վերայ գնայցէն , չէ հնար
սակաւիկ շուշել , և եթէ փոքր մի հեղգայցեն՝ մեծա-
մեծ չարիք գործին . վրիպեալ վաղվաղակի անկանիք
ցի ի խոնարհ և սատակիցի . նոյնպէս և մեզ չէ հնար
ծուլանալ . քանզի ընդ անձուկ ճանապարհն գնամք ,
քարավեճ վնասիցիմք յերկուցունց կողմանց սպառնա-
լեաց , որ զերկոսին ոտս միանգամայն չընդունի ։

Տես արչափ հաւաստեաց պէտք են մեզ . տեսանիք
ցես , որք ընդ այսպիսի ճանապարհ գնայցեն՝ ոչ
միայն ոտիւքն զգուշանան , այլ և աչօք . և եթէ կա-
միցի այլ ուրեք նայել , թէպէտ և ոտքն ի հաստի կայ-
ցեն , ցնորեալ աչքն ի խորոցն՝ ամենևին ի վայր զա-
ռածեալ անկանիցի . այլ այսպէս պարտի զգուշանալ
գնայիցն . քանզի ասէ իսկ ։ " Ա՛ի յաջ մի յահեակ " ։
Յաղագս անդունդք են լսեեացն , մեծամեծ քար-

1 Յօբինակին պակասէր ։ ։

անձաւք, բազում խաւար ի ներքոյ անձուկ Ճանապարհին. զգուշասցուք, արհիւ գնասցուք և դողութիւք. ոչ ոք յայն Ճանապարհ անգեալ և մեղկի անկանի ի ծաղուկ, և ոչ ծանրանայ արբեցութիւք. զուարթութիւք և անօթի գնայ ընդ այն Ճանապարհն։

Ո՛չ ոք յուղի անկեալ և բառնայ ինչ ընդ իւր յաւելորդացն. պարտ և պատշաճ է այնպակասիլն լինել, զի կարող լինիցին ընթանալ անցանել։ Ո՛չ ոք պարաւանդէ զիւր ոտս, այլ արձակս ժողովի գնալ. և բազում հոգւովք կապեմք զանձինս, և բիւրապատիկ բեռինս երկրաւոր բարձեալ կրեմք, մեղկեալք լքեալք, և զիարդ ակն ունիցիմք ընդ անձուկ Ճանապարհ գնալ։ Ո՛չ վայրապար ինչ ասաց՝ Թէ անձուկ է, այլ զարմանալով. " Վասն ի անձուկ է, ասէ, Ճանապարհն „. այս ինքն է՝ յոյժ անձուկ, զի և մեք ընդ կարի ինչ զարմանալիս գնոյն ասեմք։ " Վասն է, ասէ, Ճանապարհն որ տանի ի կեանսն „. և բարիոք ասաց. յոյժամ ընդ բանից և ընդ խորհրդոց և ընդ գործոց և ընդ ամենայնի պարտիցիմք պատիժս կրել, արդարև անձուկ է. և առաւել անձկագոյն զնա մեզ գործեմք, յոյժամ լայնիցեմք զանձինս և ընդարձակիցեմք, և զոտս աստ անդ մեծամեծս ընկենուցանեմք։ Անձուկն ամենայնի դժուարին է, բայց առաւել զիւրացելոյն և սովացելոյն. որպէս զի որ զանձն մաշեցեալ՝ ոչ ինչ սգայ զանձկութիւնն, և որ սովորն իցէ նեղութեանն չտաղտկայ ինչ ընդ անդնելն։

Վասն որ այսուհետև հանգստեսցեմք ակն ունիցի զերկինս տեսանել, քանզի չէ հնար. մի ոք հանդերձ փափկութիւք վաստակ լինիցի ընդ անձուկ Ճանապարհն գնալ, քանզի չէ մարթ. մի ոք ընդարձակասուն ունիցի ակն կենաց. յոյժամ տեսանիցես բազանիս, սեղան ամենալից, սպասաւորս, և յայլ ևս բազմապատիկ փափկութիւնս զոր, մի եղուկ զանձն համարիցիս՝ Թէ չվայելիցես յայնպիսի ինչ, այլ յոգւոց հանջիր ընդ նորա, զի ընդ կորստական Ճանապարհն գնայ։ Օ՛ ինչ շահ յայնմ Ճանապարհէ իցէ, յոյժամ ի նեղութիւն վախճանիցէ. որ ինքս յանձկոյս, յոյժամ ի հանգիստն տանիցին։

Այլ աղէ՛ եկ ասա դու ցիս, Թէ յարբունիս ոք

կոչեցեալ էր ընդ նեղ և ընդ խորաձոր երթալ, և միան ի մահ ձգեալ ընդ մէջ հրապարակաց, ուժ և բանի տայաք, կամ վանն ոչ ոք յոգւոց հանեաք. ոչ ասպաքէն վանն այնորիկ որ ընդ արձակն գնայր. նոյնպէս և այժմ մի բարեկեցացն երանի տացուք, այլ վշտահանացն. զի սոքա յերկինս փուճան, և նոքա ի գետն։ Ամենևս բաղումք ի նոցանէ և ծաղր և առնիցեն զբանսն. և ես վանն այնորիկ առաւել և աշխարեմ և ողբամ զնոսա, զի չգիտեն ընդ որ ծիկ ծաղել պարտ իցէ, և վանն որոյ սուգ առնուլ. այլ զնմ ընդ միմեանս խառնեալ խռովեն և աղմկեն. վանն այնորիկ իսկ աշխարեմ զնոսա։

Օ՛ի՛նչ խօսիս, այր դու. յառնելոց ես և համարս տալոց ընդ ամենայն գործոց զոր գործեցեր, և անհնարին վրէժս հատուցանիցես. ընդ այնր չունիս ինչ փոյթ յանձին, այլ չուայտաբար ևեթ և զարբենալ ածես զմտաւ, և առ այն մեծաձայն ծիծաղիս։ Այլ ես զքեզ ողբամ. զի զչարիսն որ պահիցին քեզ՝ կիսաեմ, և զպատիժսն որ ընդունիցիսն. և վանն այգոբիկ առաւել աշխարեմ։ Օ՛ի՛ ծիծաղիս, սուգ առ հանդերձ լինի, և աշխարհ ընդ իս զքո չարիսն։

Այլ աղէ՝ եկ ասա, թէ յընտանեացդ որ քոց կորընչեր, ոչ ապաքէն զայնոսիկ՝ որ ծիծաղէինն ի վշտին՝ ատելիր և թշնամի համարէիր. և որք արտասուէինն և վշտակից լինէին՝ բարեկամս։ Դարձեալ թէ և կինն մեռեալ առաջի կայր, զայն՝ որ ծիծաղէրն՝ ատելիր. ոդիմ մեռեալ կայ առաջի, և զիս՝ որ արտասուեմն՝ թշնամի համարիս, և դու ծիծաղիս։ Չեսանես զկարդ արար զմեզ միմեանց թշնամիս և պատերազմող սատանայ։

Ամաչեսցուք գեթ երբեք, շուրջ զանձամբ հայեսցուք, արհնչունք եղիցուք և բուռն հարցուք զկենացն յաւիտենից. զմանրամասն քունն ի բաց թօթափեսցուք. գոն գատաստանք, կան տանջանք, և առնի յաւուրն ահին և խնդիրք ամ գործոց։ Ջրն գալոց է ամենօք. հուր առաջի նորա բորբոքեսցի և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ. գետ հրեղէն գնասցէ առաջի նորա, որդն անվախճան, հուրն անշէջ, խաւար արտաքին, կրճտումն ատամանց։ Ամէնքեան և բաղումք ան-

գամ զսբրիցիկը ընդ այս , ես առ՝ի զսոյն ասելոյ երբ-
քէք ոչ գադարեցից ։

Ով մարգարէքդն քարկոծէին՝ և չլռէին , ոչ՛ըստ և առաւել լաւ իցէ մեզ Թշնամութիւնք , և մի՛ ի ձէրս ինչ և՝ի հնարս խօսել · զի մի յորժամ զձեզ խաբեցեն՝ մեք ընդ մէջ կարիցիմք ։ Յանձնանքն անմահ են անդ , առանց մխիթարութեա՛ , և չէք որ որ վերակացու լինիցի ։ “ Ո՛վ , ասէ , ողորմեսցի Թաւչի օձահարի ,, · յորժամ մեք անձանց չողորմիցիմք , ով է որ մեզ ողորմեսցի ։ Եթէ տեսանիցես զոք սուր առեալ և անձին առնիցէ , արգահատել երբէք կարիցես այնպիսոյն · և ոչ ուրեք · ոչ՛ըստ և առաւել , յորժամ մարթի ուղղել և չուղղեցեմք՝ ով իցէ որ մեզ արգահատիցէ , և ոչ ոք ։

Ողորմեսցուք անձանց · յորժամ յաղօթս կայցեմք՝ առ՝ ած , ասեմք , ողորմեաց մեզ տէր · ասասցուք և ցանձինս , ողորմեա՛ մեզ ։ Ո՛ւր եմք տեառը ողորմութի՛ գտանելոյ մեզ՝ի տուն · նա՛ի մեզ հնարհաց զսյն · Թէ արժանի ողորմուե՛ գործս գործեսցուք , եԹէ արժանի նորա մարգասիրուե՛ն , ողորմի մեզ ած ։ Ով անձանց չողորմեսցուք , ով իցէ որ մեզ արգահատիցէ ։

Ողորմեաց ընկերքդն , և գտանիցես ողորմութիւն յայ՝ ։ Ո՛ըստ հանապազ մատուցեալ ասեն , ողորմեաց մեզ , և չգառնաս՝ի ձայն · քանի՛ մերկք , ո՛ըստ հաշուք· և չգԹամք , այլ չլուելոյն առնեմք զպաղատանս նոցա· և զի՞րդ լինիցիս արժանի ողորմութի՛ գտանելոյ , որ չառնեսդ երբէք ինչ արժանի ողորմութի՛ ։ Աղիցուք գԹածք , լիցուք ողորմածք , զի այնպիսի լիցուք հաձոյք այ՝ , և հանդերձելոց բարեացն սիրելեաց նորա հասցուք հնարհօք և մարգասիրութի՛ տեն մերոյ Յի՛ի Ա՛ի , ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն պատ փառք , իշխանութի՛ և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Այս արդ մի վասն մեռելոց ինչ սուգ ունիցիմք վայրապար, և մի ընդ կենդանեացս ուրախ լինիցիմք յամուռն։ Այլ զինչ։ Այուգ առցուք զմեռելս բաց, ոչ միայն յորժամ մեռանիցեն, այլ յորժամ կենդանիք իցեն։ Ուրախ լիցուք ի վերայ արդարոցն, մի և եթէ յորժամ կենդանի իցեն, այլ իբրև վախճանիցեն։ Ո՛ի նոքա կենդանւոյն իսկ մեռեալք են. և սոքա՝ Թէպէտ և մեռեալք՝ կենդանիք են. նոքա՝ մինչ աստ իսկ իցեն, ամ՛ ումեք ողորմելիք են, քանզի այ ընդդէմ դարձան. և սոքա՝ Թէպէտ և անդր փոխեցան՝ երանելիք են, քանզի առ Ա՛ստ չոգան. մեռելոքը ուր և իցեն՝ հեռի եղեն ի Թագաւորէն, և վասն այնորիկ արտասուաց արժանի են. իսկ արդարքն՝ Թէ աստ իցեն և եթէ անդ, ընդ Թագաւորին իցեն. մանաւանդ իսկ մեռելոքը ոչ կարծեաք և ոչ հաւատալք, այլ դէմ յանդիման։

Այս արդ մի վայրապար զգնացեալսն լայցեմք, այլ զնոսա՝ որ մեղաւքն երթեալ իցեն. նոքա են ողոյց արժանի, և նոքին կոծոյ և արտասուաց։ Ո՛ինչ յայս կայցէ, աղէ՝ ասա՛, այնպիսեացն որ մեղաւք երթեալ իցեն անդր, ուր չիք հնար մերկանալ զմեղն. մինչ աստ էին, Թերևս գոյր ակնկալութիւն բարւոյ, Թէ երբ և դառնալոց իցեն և պիտանիք լինելոց. եթէ երբ Թայցեն ի դժոխս՝ ուր չիք ինչ հնար օգտիլ յապաշխարութենէ, զի գործիցեն. “ Ի դժոխս ո՞ խոստովանեսցի առ քեզ ,,. զիարդ չիցեն ողոյց արժանի։

Ո՛ այնպիսիցն լացցուք, չարգելում, լացցո՛ւք. այլ մի՛ անկարգութ, մի՛ զՀերս փետել, մի՛ զձամս խզել, մի՛ զերիգս մերկանալ[1], մի՛ զայտս ցտել, մի՛ Թափս հանկել. այլ միզմով ընդ միտս և առ ծունր լալ, ողորդանալ, դառն արտասուս արկանել. մարթի և առանց այնպիսի ինչ նշանակուե լալ դառնապէս. ողո-

1 Ցօրինակին ծերանալ։

բալ՝ի ձայն աղի և ողորմ աչխարհանաց, և ոչ խաղ և ծաղր առնել։

Արդարև չէ ինչ ընդհատ՝ի խաղոյ՝ զոր ոմանք անհեդեդս աստուածս իմն աչխարհին. և զի ոչ վշտա կցուածէն են այնպիսի կարծիքն, զորս՝ի հրապարակս կոծկին, այլ՝ի ցոյցս և առ մարդկան ականել և վեր՝ի վերոյ։ Վասն և բազում կանայք արուեստա կանք՝ այնր արուեստի եղծմանքն և ձախարկուք, որ արուեստին կրճուէ է, և ոչ՝ի սրտէն և՝ի մտաց վշտակից լինելոյ զայնպիսի ինչ գործեն։ Այլ թէ լաս, լաց դառնապէս, հեծեծ, հառաչեա, ծմրեաց, սգացիր առ անկն, առ ծունր. մի առ մարդկան ակա նէ, զի այն չէ վշտակից լինելոյ։ Այլ այս քեզ ևս օգ նեսցէ, և նման չիցէ սակաւ միաթարուածն. զի որ զայ լոց մեղս սգայցէ, և ինքն փութայ չանկանել ընդ նո վին յանցանօքն. ահագին համարեա զմեղս, դառն և անչնարին։

Այլ արդ լացցես զանհաւատսն, և զայնոսիկ՝ որ ա ռանց հնքոյ մեռանիցին. որք չիցեն լուսով աւազա նին լուսաւորեալք, այնպիսիքն սգոյ և լալոյ արժա նի. որք արտաքոյ քան զարքունական գտանիցին, ընդ չարագործսն և ընդ պատժապարտսն։ "Այնմ ասեմ ձեզ, ասէ, եթէ ոչ ոք ծնցի՝ի ջրոյ և՝ի հոգւոյ, ոչ մտանէ յարքայութիւն երկնից"։ Ո այնպիսիսն լացցես՝ որ՝ի մեծութիւն վախճանեալ լիցին, և ոչ մի ինչ հնարս՝ի մեծութիւնն իւրեանց ոգւոյն հնարեալ. և զայնոսիկ՝ որոց առեալ իշխանութիւն լուանալ զմեղս իւրեանց, և չիցեն կամեցեալ. զայնպիսիսն լացցուք և առանձինն և հասարակ ամենեքին։ Այլ օրինօք և կարգօք և պարկեշտութիւ. մի անառակս և ան համան. զայնպիսիսն լացցուք մի մի օր միայն, այլ և զերկուս, այլ և զյամ աւուրս կենաց մերոց. չէ ան հանձար սգոյ այնպիսի արտօսր, այլ կթոյ և խնա մոյ. և միւսն անհանձար սգոյ է, վասն այնորիկ վաղ վաղակի խափնու. յորժամ վասն այ երկիւղին լինիցի, միշտ հաստատուն կայ։

Լացցուք զայնպիսիսն, օգնականն լինելոյ. արչափ և կար իցէ՝ հնարեսցուք նոցա օգնականութիւ, թէ պէտ և սակաւ ինչ, բայց սակայն օգնեսցուք։ Ո յիշող

և որով օրինակաւ ։ Ի զօթիս արասցուք , և զայլս ա-
զատեսցուք առնել աղօթս վասն նոցա . աղքատաց
տացուք ստէպ յաղագս նոցա ։ Կոյ միթերաւելիւն
ինչ և հնարք , և լուր այ իսկ ։ " Ի երկացու եղէց
քաղաքիս այսմիկ վասն իմ և վասն Կաւելի ծառայի
իմոյ " · զի եթէ յիշատակ միոյ արդարոյն այնչափ զո-
րութիւն գործեաց , յորժամ արդեամբք ևս ինչ վասն
մեռելոյն լինիցի , քանիսն ևս օգուտ գործիցէ ։

Ի՛ւ վայրապար ինչ եղան օրինքս այս յառաքելոցն,
յահագին խորհուրդն յիշել զնայեալսն · գիտէին
թէ բազում շահ լինիցի նոցա , յաձախ և յոյժ օ-
գուտ ։ Յորժամ ամենայն ժողովուրդն բովանդակ
կայցէ ձեռս ի վեր համբարձեալ , միահամուռ քա-
հանայութիւն , և ահագին զինուինն առաջի կայցէ՝
մարմին և արիւնն Քի , զնարդ ոչ ածիցեմք ի հա-
ւան գնծ՝ մատուցանելոյն աղօթս վասն նոցա ։ Ի՛ւր
զայն վասն նոցա՝ որք հաւատովքն երթեալ իցեն ։
Կայց երախայքն և ոչ այժմ միթերաւելիւ լինիցին
արժանիք · քանզի զրկեալ են յայսպիսի օգնականու-
թենէ · այլ միւմ միայն՝ որում մարթի , վասն նո-
ցա տալ աղքատաց , և լինիցի նոցա այն ի հնարս
ինչ օգնականութենէ ։ Կանգի այնպէս կամի ած , զի
միմեանց օգնիցեմք , յիրերաց յօգուտ գտանիցիմք ։

Ի՛նդէր վասն խաղաղութենէ և շինութենէ ամենայն
աշխարհի հրամայեաց առնել աղօթս · զի վասն ամ
մարդկան , թէպէտ և բազումք յամենեսին գողք և
աւազակք , շունք և գերեզմանակրկիտք իցեն , և այլք
բազումք յայլ և այլ ինչ չարիս , բայց սակայն վասն
ամենեցուն աղօթս առնեմք · զի թերևս լինիցի ինչ
նոցա հնարս գարձի ։ Ո՛ր օրինակ վասն կենդա-
նեացն աղօթս առնեմք՝ որ չիցեն ընդհատ ի մեռելոց ,
նոյնպէս և վասն նոցա պարտ է աղօթս առնել ։

Յովը վասն որդւոցն պատարագս մատուցանէր , և
քաւեր զնոսա ի մեղաց · " Կուցէ , ասէ , չարութիւն
ինչ գնիցեն ի սիրտս իւրեանց " ։ Ի՛նպէս պարտ է
խնամ ունել որդւոցն ։ Ղասեր որպէս և այժմ բա-
զումք ասեն , Թողից ինչ , և որդեկաց կենաց խոր-
հեցայց · չասաց՝ Թէ ի փառս հանից , պատիւ և իշ-
խանութիւն գնեցից , գեօղս և ագարակս շինեցից · այլ

զինչ ։ « Գնացէք , ասէ , թէ եդին ինչ ի մոլի չարու-
թեն ։ » Ո՞ւնչ օգուտ է յայնմ ամենայնէ . ասէն
ինալոց է . զթագաւորն ամենեցուն , ասէ , արարիչ
ընդ նոսա հաշտ , և չլինիցի ինչ նոցա պակաս ։
« Ես , ասէ՝ հովուեսցէ զիս , և ինձ ինչ ոչ պակա-
սեսցէ » ։

Այն մեծութեն յաձախ է . այն գանձ մեծ . եթէ
զերկիւղն այ ունիցիմք , չեմք՝ իւիք կարօտ . և եթէ
զայն չունիցիմք , թէպետ և ի թագաւորութեան իչ
ցեմք , քան զամենայն աղքատագոյն գտանիցիմք ։
Ձիք ոք զդգ այնմ՝ որ ի նմանե երկնչիցի ։ « Երկիւղ
ասն , ասէ , անց զամենայնիս » . զայն ստացուք , նորին
փոխանակ զամենայն ինչս արասցուք . եթէ զոգիս և
հասանիցե ի վերայ դնել , մի խնայեսցուք , և եթէ
զմարմինս պատառ պատառ կոտորել , զայմ հնարս
հնարեսցուք , զի այնմ երկիւղի հասանիցեմք , և
ապա լինիցիմք քան զամենեսեան ընչաւետք , և հան-
դերձելոց բարութեցն հասանիցեմք ի Քն ՅՀ ի
տի մեր , ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբ
փառք , իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն ։

ՅԱՒԱՏԱՑՈՒՄՔ այսուհետեւ ՚ի նորա փառս. ապա թէ ոչ՝ չիք ինչ օգուտ յերկոցունց։ Որպէս զի յորժամ փառաւորիցեմք բարիոք, և չունիցիմք բաբիոք վարս, յայնժամ առաւել ՚ի նմանիմեմք. զի առնուամք ՚ի գլուխ այնպիսի սէր և վարդապետ, և արհամարհեմք և չերկնչիմք յահագին յերկիւղէն։ Օ ի հեթանոսաց անսուրբ վարս վարել չէ զարմանալի, և ոչ այնչափ ըստգտանաց արժանի. բայց քրիստոնէից, որ յայնչափ խորհուրդս վայելեցին, և յայնպիսի փառս, և անսուրբ վարս վարիցեն, այն իսկ էն քան զամ ինչ անհնարին ազէտք։

Ի՛նչ՝ ասկ, հնազանդեցաւ զվերջինն հնազանդութեան, վասն այնորիկ առ զվերինն պատիւն. զոր ունկնէրն ըստ ՚ոճութեան, զնոյն առ և ըստ մարդկութեան։ Ո՛հաւ եղև, վասն այնորիկ սէր է ամենեցուն և հրեշտակաց և այլոցն բոլորեցուցանց։ Ո՛չ վարձս ինչ ընդ հնազանդութեանն առ զայն, քանզի էր ՚ի սկզբանէ սէր ամենայնի. այլ զի մեզ հաստատեսցէ զնիցէ օրինակս առաջի, որպէս զի մի համարիցիմք ՚ի պատուոյ անկանել, յորժամ զանձինս խոնարհեցուցանիցեմք. յայնժամ է առաւել բարձրանալ, յայնժամ ՚ի դէպ է զարմանալի լինել։ Այս զի բարձրն խոնարհ է, և խոնարհն բարձրագոյն, բաւական է Ա՛ստի իսկ վճիռն հաւատարիմ առնել. բայց և մեք քրիստոնեացուք զիրսն։

Օ՛ինչ իցէ խոնարհեալն. ոչ ապաքէն պարապուն լինել, և բամբասել, և ՚ի չարախօսութեն անկանել։ Օ՛ինչ իցէ բարձրանալն. պատուելն, գովելն, փառաւոր լինել։ Տեսցուք թէ զիարդ այն լինիցի։ Հրեշտակ էր սատանա, բարձրացոյց զանձն. և արդ զիարդ. ոչ ապաքէն ևս առաւել քան զամենեսեան խոնարհեցաւ. ոչ ապաքէն զերկիրս ունիցի ՚ի բնակութեն. ոչ ապաքէն յամենեցունց բամբասի և դրսովի։ Ա՛րդ էր Պաւղոս, և խոնարհեցոյց զանձն, և արդ չիցէ աբանչելի և գովելի, չքրուաւիչ, չի-

ցի բարեկամ Աշխ. չգործեաց և մեծամեծս քան զոր Աշն գործեաց. ոչ իբրև սարկի միւսմ բաղում անգամ սաստեր սատանայի, ոչ իբրև զդեւհիկ մի արտահալած խուճապեր. ոչ իբրև հաւու՝ խաղայր նուաւս. ոչ ապաքէն ջախջախեալ ունէր զգլուխ վիշապին ընդ ոտիւք. ոչ ապաքէն և այլոց ազօթս առնէր, զի բազում համարձակութիւն զնոյն առնիցեն. և այլ զինչ և ասացից։

Ո՞վ երացոյց զանձն Քեսոդոմ, խնամարհեցոյց Գոմորեայ. ո՞ բարձրագոյն եղև, ոմ որ փառաւոր։ Ո՞ւ ինչ ինչ քան զայն բանս խնամարհութիւն կայր՝ զոր առ Ի՞մ խօսեցաւ երանելին Գաւիթ և թագաւոր և մարգարէ։ "Ով՞ տուք դմա, ասէ, անիծանել. որ հրամայեաց դմա զայդ"։ Ո՞ւ հաւաստեաւ իսկ քրնեսցուք զերան, թէ կամիցիմք. խնամարհեցոյց զանձն մաքսաւորն, թէպէտ և ոչ խոնարհութիւն իրքն էին, այլ միամիտ բարեբարութիւն խօսեր. և տես զիարդ արդարացաւ. բարձրացոյց զանձն փարիսեցին։ Ո՞ւայց և այլազգ ևս քննեսցուք զերան. զրեաջիր եմ իցեն աղք երկու, և երկոքին մեծատունք և՛ի բազում փառաւորութիւն և յիմնաստուն և՛ի հարստութիւն, և յայլ ինչ յաշխարհականս յոլովագոյնք. և ապա մին յամենեցունց պատիւ խնդրեսցէ. և եթէ չառնու՝ բարկանայցէ, և առնէլն ինչ քան զդէպն խնդրեսցէ, և առաւագս ունիցի զանձն. և միւսն չհամարիցի ինչ զերան. և ոչ գժկամակ լինիցի ընդ քամահանս ուրուք, այլ թէպէտ պատիւ ոք առնիցէ, զայն ի բաց մերժիցէ, ոմ որ յերկոցունց գովելի լինիցի. ոչ ապաքէն որ չիցէ զհետ փառացն։

Ոմարթի այլազգ հասանել փառաց՝ եթէ ոչ փախչելոյն ի փառաց. մինչ մեք զնորա հետ երթայցեմք, փաղչիցի ի մէնջ. և յորժամ թողուցուք, զհետ լինիցի և հասանէ. և եթէ կամիցիս փառաւոր լինել, մի ցանկար փառաց. և եթէ կամիս բարձրագոյն լինել, մի ունիր առ աւագս զանձն։ Ո՞ւ այլազգ ևս. որ զպատիւ չխնդրիցէ, զնա ամենեքին պատուեն. և որ խնդրիցէն՝ յամենեցունց արհամարհիցի. քանզի այնպէս իւն է ազգ մարդկան վէս և ընդ հակառակս։ Ո՞ւ արդ արհամարհեսցուք զփառս, զի այն

պէս կարիցեմք լինել խոնարհք , մանաւանդ թէ բարձրագոյնք իսկ ։

Եւ ի ունելը զանձն առ լաւս, զի յայլոց մեծարիցես. որ անձամբ զանձն վերացուցանէ, յայլոց չվերանայ. և որ անձամբ զանձն խոնարհեցուցանէ, յայլոց վերանայ ։ Եւ եհ չարութիւն է հպարտութիւն . լաւ է մանրասանալ քան հպարտանալ . զի անդ՝ մերկասութիւնն միայն է յանմտութենէ , և աստ՝ և այ չար մերկասութիւն ։ Ընդհան անձին և՛ի չար է. հպարտն և ընկերաց ապականանէ . անմտութիւն յայնմ՝ ախտէ ծնանի . չիք հնար առն մեծամտի լինել իմաստուն , այլ հարկ է անմիտ լինել հպարտացելոյն ։ Այս զի այս այսպէս , յայտ իսկ է . քանաւ կարծեն թէ իցէ ինչ , չիցէ անմտութենէ . և հպարտին միշտ այնպիսի միտք են ։ Այս և իմաստնոյն . " Տեսի , ասէ, զայր մի պանծացեալ յանձն թէ իմաստուն իցէ , բայց առաւել յայս գոյր յանմտին՝ քան ի նմա ,, ։

Տեսանես , զի ոչ վայրապար ասացի՝ թէ և այ չար քան զմերկասութին է այնպիսի չարութենէ : " Առաւել յայս գոյ , ասէ , յանմիտն՝ քան ի նմա ,, ։ Եւ ան այնորիկ և Պաւղոս ասէ . " Եհ լինիք իմաստուն յանձինս ձեր ,, ։ Ողջ՝ ասա , և ի մարմնին իսկ զնո՛ ասեցեմք առաղջս . զյոյրսն [1] և զուռուցեալսն և զջրապղծեալսն , եթէ զնըքաւարարսն և զկազմնն , և զձաղսն , որոց և ամիսոի իցէ տարբն ։ Այն այնպէս իցէ , և յոգիս՝ ուռուցեալն և այ չար յախտի է քան զջրագողեալսն . և հեղն ազատ յայմ՝ ախտէ ։

Ընդալ ինչ բարութենէն ծնանիցի մեզ խոնարհութենն . զինչ կամիցես . ոխս չունել , անցասութիւն լինել , մարդասիրութենէն , արձնութենէն , մտադիւրութենէն . այս ամ՝ բարիք ի խոնարհութենէն են . և սոյնն հակառակք ի հպարտութենէ : Հարկ է այնպիսոյն Թըշնամանիչ լինել , հարկանօղ և բարկացօղ և դառն և անհամբոյրս , դաժան մանաւանդ և ոչ մարդ ։ Այժ զին իցես , և յայն սակս մեծամտիցես . թէ այսպէս իցէ , և վասն այնորիկ առաւել պարտիս խոնարհել ։ Օ՛ն [2] ընդ իրօք մեծամտիցես . քանզի և առաւել

1 Յօրինակին ՅՈՅՐՍՆ ։ 2 Յօրինակին ՕՆ ։

գազանագոյն քան զքեզ է և վարազ ուժգնագոյն, և գու իբրև զմիխ մի ես առ նոքօք. և աւազակք, և գերեզմանակրկիտք, և ի վեր եկեալքն, և ծառայքն իսկ քո, և Թերևս որ կարին իսկ անազատք և չարաբարուոյք իցեն՝ զօրագոյն քան զքեզ իցեն. և այն գովուԹէ ինչ արժանի իցեն, և չկայցես ինչ ծանակ այնպիսի ինչ իրօք մեծամուել։

Ա.ՀԼ Թերևս գեղեցիկ և բարենշան որ իցես. և այն աղջկանց նշանք են. բայց սակայն քան զսիրամարդ գեղեցիկ չիցես, և ոչ այնպես ծաղկալից հասապայծառ Թևս ունիցիս իբրև զայն Թռչուն, որ վարսիւքն և գիսակօքն, որ խրճայեալ կարակնեալ բազմաձեմուկ տանջին՝ յաղԹէ քեզ գեղեցկուԹիւն։ Ա՝ և փոքն կարի իսկ գեղեցիկ է, և այլք ևս բազումք ի Թռչնոց, ընդ որս Թէ կամիցես անցանել ի հանդիսի՝ ոչ ինչ ամենևին տեսանիցես զանձն։ Ա՝ա զուտ անգամ և մատաղ մանկտի, և աղջկուՆք՝ անփոյթ յամուսնուԹէ, և պոռնիկ կանայք, և արք կա՝ նայիք իգայեալք նազեցան այնպիսի պարծանօք. և արդ այն պարծանայ ինչ արժանի իցէ կամ մեծամուԹէ։

Ա՝ու Թերևս զի մեծատուն իցես՝ հպարտանայցես. ուստի՞ իցէ զոր ունիցիսն, և կամ զինչ ունիցիս. ոսկի, արծաԹ, ականս պատուականս. այն և աւազակաց և սպանողաց պարծանք են, և ոսկեհանոց, և որք ի քրէական մեռադան խուզիցեն։ Ա՝ևերևս զարդուք ինչ և պաՃուՃանօք հպարտանայցես. զայն և՝ ձիսն է տեսանել. պարսիկք և զշառաւուՆսն նկուբեն և պաՃուՃեն. այլ՝ի մարդկան միջի՝ի բոզանոցս ևԹէ վայելեն այնպիսի պաՃուՃանք, ուր պատիրքն և որոգայԹքն են։ Ա՝ամանչես, Թերջիս այնպիսի իրօք հպարտանալ, որովք և անասունք հանգոյն քեզ լինիցեն, և ծառայք և սպանողք և կանայք և աւազակք և գերեզմանակրկիտք։

Ա՝ԱՀ՝ի տունս ինչ գեղեցիկս պարծիցիս. բազում Թռչունք ևս՝ի գեղեցիկ տունս բնակեն. մանաւանդ Ձայք ևս առաւել պայծառագոյն քան զքո տունսն ունին բնակուԹիս։ Ա՝ԱՀ Թերևս Ձայնիւ ինչ հպարտանայցես. քան զփորն և զսոխակ և զստպուՃակ չիցես ինչ

ձայնիւ երբեք քաղցր և հեշտական մրմնջել։ Այլ Թերևս պէսպէս արուեստիւք. և ով ոք յայնմ ըզմեղուօքն զձարտարագոյնսն [1] անցանիցէ. որ դրօշոյ, որ նկարիչ, որ գեանաւիոր գտանիցի քան զնոսա ի մաստուն, որ կարիցէ ձարտարութեամբ մեղուաց նմանել։ Այլ Թերևս բարակ ինչ հանդերձիւք. այնու սարդք իսկ անցանեն զնոցանեն զբե։ Այլ Թերևս ոտիւք արագութեամբ. և այնու և անասունք գլեն. մանր նաւանդ նազանոտակք և այծեամունք, և այլ ևս անասունք՝ որ արագ իցեն ոտիւք։ Այլ Թերևս ի տար աշխարհ ինչ երթալով. և այնու թռչունքն անցանեն զբե. մանաւանդ խորդք և ծիծառունքն, որ դիւրաս հարկանեն զտարաշխարհական ձանապարհս. ոչ պաշար բառնան, և ոչ զրաստու կարօտանան, այլ ընդ ամենայնի բաւական են նոցա Թևքն. նովին և նաւ, և զրաստ ինչ, և կառք, և հողմք, և ամենայն զինչ և իցէ՝ արագագոյնք են քան զբեզ։ Այլ Թերևս քաջատեսութեամբ ինչ հպարտանայցես. այլ ոչ ինչ նման ես այծեամն և արծուոյ։ Գուերևս զի աբաղ լսիցես. այլ չիցես սուր ականջօք քան զեզ։ Այլ Թերևս հոտ քաջ առնուցուս. այլ չկարես անցանել զշամբ։ Այլ Թերևս զի զործօնեայ և համբերող ես. այլ չես ձեռնհաս լինել անդադար իբրև զմիջնէն։ Այլ Թերևս զի ոսկի բազում յանձին ունիցիս. այլ ոչ որպես զՆոդիկ մրջունն։

Իսկ առողջութեամբ յոյժ իսկ առաւել են քան զմեզ անասունք. և անհոգութեամբ ինչ չերկնչին յաշքատաւէթ, չկասկածեն ի կարօտաւէթ։ "Հայեցարուք, ասէ, ի թռչունս երկնից, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն յիշատեմարանս"։ Գնե այսպէս իցեն, քան զմեզ՝ զանասունս լաւագոյն արար Ած։ Տեսանեմ ոչնախ ինչ միաս իցէ չքննելն. տեսանեմ ոչնախ ինչ շնորհէ մեզ իբացն քննութիւնն. որ քան զայմ մարդիկ առաւել մեծամտեք, գտաւ և քան զանասունս և խոնարհագոյն. այլ խնայեացուք ի նա և չմանեսցուք նմա։ Այ՛ի, զի քան զբնութիս առաւել մեծամտեաց, իջուցանեմք զնա յանասնոց աշխարհն. այլ կանգնեսցուք զնա անտի, ոչ վասն

1 Ցօրինակին վերջում և մարգարէից։

նորա , այլ վասն հասարակաց պատուոյ . զի նա առ-
ժամուն էր այնպիսի ինչ կրեալ ։

Այլ զի ով մարդասիրութենէն ի մեզ ցուցցէ զպա-
տիւն, և է ինչ բաղձումք՝ որովք ոչ հաղորդէն ընդ մեզ
անապատնէն ։ Օ ինչ իցէ . ածպաշտութիք և վարիւք
առաքինութենէ . և ասա չունիս ինչ ասել զպոռնկաց,
և ոչ զպաշտողաց . զատեալ մնիցեալ եմք ի նոցա-
նէ ։ Այո . զի զայծ գիտեմք , և զինամ նորա ի միտ
առնումք , և վասն անմահութենէն ձարտարասանեմք ։
Ցեղի տայցեն մեզ ասա անապատնէն , և չես ինչ երկ
միտ յայսցանէ . զգաստանամք , և այնմ չէն ինչ նո-
քա հաղորդք ամենևին . քան զնոսա անաւագ եմք ,
և տիրեմք նոցա . և այնու է մեծ իշխանութիւն , զի
չեմք հզօր քան զնոսա և տիրեմք նոցա . զի ուսանիմ-
ցիս զի ոչ գու ես այնմ պատճառք , այլ որ արարն
զքեզ ՝ած , և որ զքանն ընդրհեաց քեզ ։ Պարծիս և
Թակարդս ձգեմք նոցա , և այնու ըմբռնեմք , հան-
գուցանեմք , ի համբոյր ածեմք ։

Յաժանութի առ մեզ , հեղութի , հանդարտութի ,
ընդից անտեսութ ։ Այլ գու քանզի հպարտացեալդ
ոմն ես , և չունիս ինչ այնպիսի , յիրաւի կամ զմարգ-
կան մեծ համարիս , կամ զանանցոյն խոնարհագոյն .
քանզի այնպէս է անմոռութենէն և յանդգնութիւնն .
կամ հպարտանայ աւելի քան զչափն , և կամ խո-
նարհի դարձեալ նոյնպէս . և չպահէ ուրեք զկշռու-
չափոյն ։

Հրեշտակաց զուգականք եմք այնու , զի զարք-
քայութենէն խոստացեալ է մեզ , և ընդ Քնի բնակու-
թենէն և ցածութի ։ Մարդ տանջի և չզանգիտէ ինչ .
մարդ զմահ արհամարհեայ , և չերկնչի և չդողայ .
չցանկանայ աւելի խիք . որպէս զի որք չիցեն այսպէս
սիք , և ս չար են քան զանապատնս . յորժամ ի մար-
մնաւոր ինչ իրս յոլովիցես , և հոգևորացն ոչ գլխ-
ցես , զիարդ չիցես ի վայր քան զանապատնս ։ Օ՜ն
առեալ ածցուք ի մէջ զոք յայսցանէ՝ որք ի չարին
կեցցեն , և յանհանձարից զոք՝ որ միշտ ի փափկու-
թիք իցեն և զադահութիք զկեա . և ցուցանեմք թէ
և ս քաջ պատերազմող է ձի քան զնա , և վարազ և ս
զօրագոյն , և նաստաստակ առաւել և ս արագագոյն ,

և սիրամարգ կարի ևս գեղագոյն, և փոր բնաւ խակ քաջաձայն, և փիղ յոյժ յաղթանդամ, և արծուի քաջատես, և ՚ամ՛ խակ թռչունք ևս առաւել մեծաառունք են քան զնա։

Այս արդ զիարդ իցէ արժանի տիրել ՚անասնոցն։ Բանիւն և խօսողութիւ. այլ չէ մարթ, չէ հնար, յորժամ ոչ ՚ի լաւ անդր ՚ի կիր արկանիցէ զխօսողութիւն. ևս ՚ի վայր գտանի քան զնոսա, յորժամ խօսող իցէ, և անասնագոյն և անխօսնագոյն քան զնոսա իցէ. լաւ էր եթէ բնաւ ամենևին չէր լեալ խօսող. քանզի չէ ընդ մի համար՝ առնուլ զիչխանութիւն և մատն լինել, և չառնուլ խակ բնաւ զառաջինն։ Վասն որ քան զսպասաւորն վատթարագոյն է. լաւ էր նմա բնաւ չառնուլ խակ զթագ ՚ի գլուխ. նոյնպէս և աստ։

Այս արդ խմացեալ զի և քան զանասունս ևս վատթարագոյնք եմք առանց առաքինութե, ՚ի նա կրթեսցուք, ՚ի նոյն թևաւոխեսցուք, զի լինիցիմք մարդիկ. մանաւանդ թէ հրեշտակք խակ, զի և յայլ բարուէն վայելիցեմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել չնորհօք և մարդասիրութե ՚ին մերոյ Յի՛ս Ի՛ս, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն ՚ըզյ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վ[ԱՆՁԻ և պարտս իսկ պարտիմք ՚ձգել, և ոչ
ելիցէ ձիրս և չնորհս առնելոյ։ Օ՚ որ օրինակ զօրա-
կանացն՝ որք զպատերազմունս հարկանէին, ՚ի նոցա-
նէ՝ որք խաղային նստիցին՝ հարկք երթան, քանզի
վասն նոցա ձգնին, նոյնպէս և աստ. զի թէ չէր ու-
սուցեալ յայնժամ Պաւղոսի, ոչ ոք արկանէր զնա
՚ի բանդ. որպէս զի սպասաւորութիւն իսկ պարտ է
հարկանել ՚ձգել։ Լ՚ւ զնաւրդ չիցեն անպատեհ իրք.
զօրականի երկրաւոր Թագաւորիս զնմ՚ ինչ տալ, և
հանդերձս և զկերակուր, և ոչ միայն չնորհաւ, այլ
և ՚ի հարկէ, և զօրականի երկնաւոր Թագաւորին,
յանհնարին պատերազմունս յանկ պատերազմողին՝,
և ոչ զկարևւոր զակտս չնորհել։ “ Ձէ, ասէ, մեզ
կռիւ ընդ արեան և ընդ մարմնով ”։

Վ՚ըշտի ապախտաւորութիւն, քանիցն ապաշնոր-
հութիւն, որպիսի զօշաբաղութիւն։ Լ՚ւյլ որպէս երևի՚
մարդկան երկիւղն իմն կարի գլէ առ մեզ, քան զե-
հենի և հանդերձելոյ պատժոյն. և վասն այսորիկ ա-
մենայն ինչ իսկ եղծեալ կործանեալ է. զի քաղաքաց
իրք բազում փութով հանապազ վՀարին, և չիք ինչ
որ ոչ վաղվաղակի կատարիցի. և հոգևորացն և ոչ
ոք երբէք ունի փոյթ յանձին. այլ զայն ՚ի հարկէ և
զանիւթ պահանջիւք, և իբրև ծառայից կամաւ և
ակամայ՝ վՀարի բազում մտադիւրութեամբ. և այս
՚ի կամաց և յաղատաց խոփանի. չասեմ զամենե-
ցունց, այլ զայնպիսեաց՝ որ յայսպիսեաց հարկաց
անպտուղ առնիցեն զանձինս։ Վ՚ինել չկարեր ՚ած
բռնի իսկ առնել զայն. այլ չկամիցի. զի ՚ի ձեզ
քաջ խնայիցէ՝ քան ՚ի նոսա, որ կերակրեսցինն։
Վ՚ասն այսորիկ չկամի ՚ի հարկէ պահանջել. քանզի
և ընդ այնր և վարձք իսկ չկր. և բազումք ՚ի մէնջ
և քան զՀրեայս և ապաժամանք են։ Օ՚ մնաւ ած
ոչչափ ինչ տային Հրեայքն. տասանորդս և պտուղս,

՚ Յօրինակին դոդնէսին։

դարձեալ և այլ տասանորդս, դարձեալ միւս և տասանորդս. երիս տասանորդս, և զսիկղն. սիկղն կշռի ինչ արծաթոյ է. և չասէր ոք՝ եթէ կարի շատ ուտեն քահանայք։

Ո՛րչափ նոքա շատ առնուցուն, և›ս քան զևս յաճախեն ձեզ վարձք. չասէին՝ թէ կարի շատ առնուն, որք վայնասպարելք են. որպէս և այժմ լսեմք ի բազմոց։ Նոքա ասպարանս չինեն, և գեօղս և ագարակս գնեն, և չհամարին թէ ունին ինչ. և եթէ ոք ի քահանայից հանդերձիկ ինչ բարեբղխկ արկանիցէ, և ի կարևոր կերակուրսն գոյաւոր իցէ, կամ թէ սպասաւոր ղոք ունիցի, զի մի՛ հարկ լինիցի զանձին շուք արկանել, մեծուքիւն զիրսն հաշուին. և արդարև իսկ մեծատունք են այնու, և նոքա ակամայ իսկ խոստանան։

Ո՛ւք թէպէտ և սակաւ ինչ ունիմք, մեծանամք. և նոքա թէպէտ և զամ ինչ աղհասղխցեն, աղքատանան։ Ո՛ինչև կերբք անմիտք լցեմք. չկշեն բանական միւք իսկ գործքն մեզ ի տանջանս. այլ և ի բամբասանացն յաւելումք մեզ վնաս։ Ո՛թէ քո իսկ տուեալ իցէ զոր ունիս, զվարձս տրոցն կորուսանես բամբասանօքն. և եթէ դու իսկ ետուր, քնաւ ընդէր բամբասիցես. նախ քեզէն իսկ վկայիւր, թէ զոր ունէր աղքատաց ետ, և արդ քեզ՝ն բամբասես։ Ընդ պարտ տալ, եթէ գիտէիր և բամբասելոց էիր։ Ո՛րկ եթէ այլոց և›ս տուեալ իցէ, և դու զայդ ասիցես, և›ս անհնարին աղէտք են. զի չետուր ինչ, և բամբասես զայն ինչ՝ որ այլք բարի արարին։

Ո՛րչափ ինչ կարծիցես նոցա վարձս որք այդպիսի բանս ի քէն լսիցեն[1], և վասն ՚այ տանիցին վշտացն։ Օ խաբող և որո՛վ օրինակաւ։ Ո՛արթ էր և նոցա ի գիւ նեվաճառս հատանել, ի գնողս հարկանել, թէպէտ և ի նախնեացն ինչ չունէին։ Ո՛անզի և լսեմ իսկ ի բազմոց, զայն ասեն յանդգնութ. յորժամ ասիցեմք եթէ այս անուն աղքատ է, ասեն՝ կարէր մեծանալ թէ կամէր. դարձեալ թէնամանօք, եթէ նախնիքն նոքա հաւն և հայրն զի՛նչ էին, զի նա այսպիսի հանդերձս արկանի։ Ո՛ւրդ աղէ՝ ասա, մե՛րկ տայիր ղոքեզ

1 Յօրինակին պակասէր մնին։

դու՝ որ այնչափ հաւատիս պահանջես. զգոյշ լեր՝ զուցէ թէ զանձնէ չարախօսիցես. այլ լուր խրատուն Քրիստի, " Ի դատիլք, ասէ, ղմի դատիցիք ,, . մարթէ երկնոցա ի վաճառս հատանել և ի շահս հարկանել, և չլինելին չքաւորք : Այս արդ, ասէ, չշահի ինչ շահս : Օ՞ր շահս . հանդերձս կերպասեղինս, թէ սպասաւորաց բազմութեան՝ որ այսր անդր զառաքիւն ի հրապարակին խոլիցեն . և թէ ձիով պերճանայցէ, և ի շինուածս հատանիցէ : Օ՞ այսպիսին և ես բամբասեմ և չխնայեմ ինչ . այլ և չհամարիմ իսկ բնաւ արժանի քահանայութեան : Օ՞ խորդ կարիցէ այսպիսին զայլս խրատուել, զբաղեալ յաւելորդսն, որ զիւր անձն չկարիցէ խրատել :

Իսկ եթէ ի կարևոր պիտս կերակրոյն գոյաւոր է, այն զինչ ինաս իցէ . մի՛թէ զվայրօք ինչ գալ և մուրանալ պարտ իցէ . և չիցէ իսկ այն քեզ աշակերտիդ ամենայնիւք : Այլ թէ մարմնաւոր հայր զայն առնէր, առնէր համարելիր զիրսն . իսկ եթէ հոգևորն յայն գայցէ, չամաչիցես, չկորանայցես : " Ընդդիմանք հօր, ասէ, նախատինք են որդւոյ ,, : Այլ եթէ ի սովոյ ինչ պարտ իցէ մեռանել . այլ չէ այն ածապաշտ մարդկան, և ոչ ածի ընդ այն կամի :

Այլ վաղվաղակի ի ձարտարել հատանին Պրեալ է, ասէ, թէ " Ի ստանայք ոսկի, և մի արծաթ, և մի երկուս պարեգօտս, և մի պղինձ ի գօտիս ձեր, և մի գաւազան ,, . և դեռ երիս և չորս հանդերձս ունին, և մանիձն զարդարեալս : Այս ընդ այն իսկ է դառնապէս յոգւոյ հանել . և եթէ չպատկառի՝ զլալ իսկ հարկանէ : Ընդէր . զի վասն այլոց շիւղոյ ստոյգ պահանջողք են, և զիւրեանց գերանն բնաւ ամենևին չտգան :

Զի՝ ասա՛, քեզ ընդէր չասիցես զայդ : Օ՞ի վարդապետաց միայն, ասէ, կարգեալ են այսպիսի հրամանք : Իսկ յորժամ Պաւղոս ասիցէ . " Ընտրեցէք բակուր և հանդերձս և այնու շատասցուք ,, , առ վարդապետսն միայն ասիցէ : Այս ոչ ուրեք . այլ առ ամ՛ մարդիկ . և յայտ ի վերագոյն բանիցն է . զինչ ասիցէ . " Շ ահ մեծ ածապաշտուի է, բաւականութեն հանդերձ . զի ոչ ինչ բերաք յաշխարհս , յայտ է՝ թէ

և ոչ տանել ինչ կարեւք ։ · և վաղվաղակի ՚ի նոյն յարել, թէ " Ահաւասիկ հանդերձս և կերակուրս, և այնու շտապացուք· իսկ որք կամին մեծանալ, անկանեն ՚ի փորձութիւնս և յորոգայթս և ՚ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս "։

Տեսանես, զի և առ ամենեսին ե ասացեալ բանն։ Ոմանք արդ յորժամ ասիցէ, թէ " Աղաւնոյ խնամ մի տանիք ՚ի ցանկութիւնս "· ոչ ապաքէն ընդ ամենեսին առ հասարակ խօսի· կամ յորժամ ասիցէ, " Կերակուր պորոյ, և ապրատ կերակրոյ, այլ ՚ած զնա և զսա խափանեացէ "· կամ յորժամ ասիցէ, թէ " Վիրգն կենդանւոյն մեռեալ է "՝ յորժամ զայրեացն խօսիցէ· մի թէ և այրին վարդապետ իցէ· ոչ ինքն իսկ ասաց, թէ " Ընդ մարդոյ չհրամայեմ ուսուցանել, և ոչ Հոխաբան լինել քան զայր մարդ "· զի այրին ասելով զտիս և զպատասխանին յայտ առնէ ։ ՚Ի ծերութեն բազում պէտք են դարմանոց, և մանաւանդ այնմ բնութեան· զի կանանց ազգ բազում հանգստեան կարօտ է, քանզի տկարագոյն է· և եթէ ուր տիքն և բնութիւն անսւագ են, չտայ Թոյլ գրգռել և փափկանալ, այլ ասէ՝ Թէ մեռեալ է· և ոչ վայրապար ասէ գրգռելն, այլ Թէ որ գիրգն՝ կենդանւոյն մեռեալ է, և հատանէ ՚ի բաց ընկենուլ զայն պիսին, քանզի որ մեռանին՝ հատանի և ՚ի բաց անկանի, զոր ներուիս Թողութեան ունիցի այրն, որ զայն առնիցէ՝ որով և կինն պատաւ պատժիցի· այլ զայս բնաւ և զնոսաւ որ չածիցէ, և ոչ քննել կամիցի ։

Այս ինձ այժմ հարկ եղև ասել, ոչ զի զքահանայսն ազատել ՚ի բամբասանաց կամիցիմ, այլ ՚ի ձեզ խնայեմ· ՚Այսքա Թէ արդարութիւն և առանց պատճառանաց զայն լսիցեն, որպէս Հաւքաւեալք իբրև զընչաւէրս, չքնաւեն ինչ ՚ի ձէնջ ։ ՚Այլ Թէ ասիցէք և Թէ չասիցէք [1], անդ դատաւորին տալոց են հաշիւս· և չքնաւեն ինչ նոցա ձեր բանքն ։ ՚Այս եԹէ սուտ իցեն ձեր բանքն, նոցա և օգուտ ՚ի զրպարտութէն լինիցի· և դուք անձանց չքաս առնիցէք չարա-

1 Յորինակին պակասէր Ե Թէ չասիցէք։

խօսութիւն ։ Այլ ոչ այնու միայն վճարիցի . այլ եթէ արդար իցէ և եթէ սուտ՝ որով բամբասիցիմք, ձեզ ընտրս իցէ ։ Ընդէր . այլ թէպէտ և արդար իցէ, դուք՝ պատժէ չասիրիք, զի զվարդապետսն դատիր, զկարգն եղծանէք . զի թէ զեղբայր չիցէ պարտ դատել, որչափ ևս առաւել զվարդապետ . ապա թէ սուտ ևս իցէ, այնուհետև անհնարին տանջանք և պատիժք են . քանզի ընդ ամ դատարկ բանից պատասխանի տալոց են ։ Արդեօք զի ամենևին վասն ձեր ջանայմք և հնարիմք, քանզի և զայն իսկ ասացի՝ թէ չիք որ քննէ, և չիք որ ընդդրէ, և ոչ որ ածիցէ զմտաւ զայսպիսի ինչ իրս ։

Կամիմք զի և այլ ինչ յաւելից ։ « Եթէ ոչ որք հրաժարէ յամ ընչից իւրոց՝ չիցէ ինձ արժանի » . իսկ զիարդ յորժամ ասիցէ՝ թէ « Ժառաւ է մեծատանց մտանել յարքայութիւն երկնից » . և կամ յորժամ ասիցէ՝ թէ « Ա՛յ ձեզ մեծատանդ, զի ստէն ընկալայք զմխիթարութիւն ձեր » . և զայն որ ոչ քննէ և ոչ զմտաւ ածէ . ոչ անձամբ ընդ անձին վճռի, այլ յայլոց իրսն են անստոյգ, և յիւրեանց՝ բարեմարդիկք . և այս իւրեանց բամբասանացն հաղորդս կուտելոյ նշանակ է ։ Օ՛ի յայնմանէ որոյ պարտապան զքահանայսն առնէք, ազատ արարիցէ վասն ձեր, լուարուք . զի հաստատեալն դնել ՚ի մէն՝ թէ արդարև անցանեն զայ օրինաքն, բազում յոլովութիւն է ՚ի չարիս ։

Ասացէ ՚ի միջ այսուհետև զայն ևս քննեսցուք ։ Ա՛սաց Տէր՝ թէ « Ա՛ի ստանայք ոսկի և մի արծաթ, մի երկուս պարեգօտս, մի կօշիկս, մի գօտի, մի ցուպ » . արդ աղէ՝ ասա, Պետրոս անց ինչ զՀրամանաւքն . Թուի ինձ թէ չանց . զգօտին ածէր և հանդերձ ադանէր և օդ յոտն ։ Ա՛ւր հրեշտակին որ ասէր ցնա . « Ա՛ծ զգօտիդ ընդ միջ, և արկ զհողաթափս յոտս քո » . Թէպէտ և ոչ այնչափ միայն պէտք էին օդոյ ոտից, քանզի և յամիմ ժամանակի մարթի և բոկ շրջել, և կարևոր պէտք օդոյ՝ ձմերայնի են, սակայն ունէր ։ Իսկ Պաւղոս յորժամ առ Տիմոթէոս գրեաց, թէ փութասջիր յառաջ քան զձմեռն գալ առ իս, և պատուիրէ՝ թէ « Օ՛փիլոփին՝ զոր Թողի

առ Կարապոսի, յորժամ գայցես՝ բերջիր և զգիրսն՝ մանաւանդ զմատեանսն։ ասէ. ահաւասիկ փիլոն ասէ. և չկարէ ոք ասել՝ թէ այլ չունէր, զոր արկանիցէ. և եթէ բնաւ չարկանէր փիլոն, աւելորդ էր հրաման տալ՝ թէ բերջիր. և թէ չէր մարթի՝ թէ չարկանէր, յայտ է՝ թէ և այլ գոյր։ Իսկ յորժամ զերծ կեացի ողջոյն իւրով վարձու կալաս վանս, մի՛ թէ անտատեաց ինչ Կիպրի անօթն ընտիր, որ ասէր՝ թէ "Կենդանի եմ ոչ այսուհետև ևս ես, այլ կենդանի է յիս Քրիստոս։ որում՝ վկայէր՝ թէ "Նօթի ընտիր է ինձ սա"։

Պարտ էր զայս խնդիր ձեզ իսկ թողուլ, և չառնել ինչ լուծումն. և ընդ այնր առնուլ՝ ի ձէնջ վրէժս, զի գրոց ընթերցուածոց ծայր էք, և այս առ մեծայն անտի ծնանի. և վասն այսորիկ յայլոց մեզս աղետաբար տեառրք եմք և գառն գահիճք, և վասն մերոյն չունիմք ինչ փոյթ յանձինս. և այն անտի է՝ զի զգիրս ոչ գիտեմք, և ածելէն օրինօք չխրատիմք. և արդ պարտ էր զայնր վրէժ առնուլ՝ ի ձէնջ։ Քէ զինչ գործեցիք՝ ոչ գիտեմ. քանզի յոյժ և աւելի քան զատաշէն հնորհեն հարք որդւոց, յորժամ գուշեքն հոգևորք խաղայցեն. և յորժամ տեսանիցեն տրտում տխուր զմանկունսն, ինքեանք ևս չարխոռովին և չգադարեն՝ մինչև զպատճառս արտմանէն՝ ի միջոյ բառնայցեն։ Այլ սակայն թէ և այնպէս լինի, և չորտմիցիք ընդ չառնուլն, քանամբք զի առնուցուք, և բարիոք առնուցուք։

Իսկ եթէ ընդ հակառակ ինչ ելիցեն, քաւ լիցի. այլ կարի իսկ յոյժ երթայիցեն զհետ պատուիրանացն Քրիստի. զի այն պատուիրքք առ ժամանակ մի են և ոչ հանապազորդք։ Քէ զայս ոչ՝ ի կարծեաց ինչ ասեմ, այլ յածելէն գրոց։ Ովհաննէս։ Ղուկաս ասէ՝ թէ ասաց ա՛ր ցաշակերտան. "Յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի և մախաղի և գօտւոյ և կօշկաց, մի՛ թէ պակասեաց ինչ ձեզ. ասեն, ոչ։ Քէ ցնոսա՝ այսուհետև ստացարուք"։ Այսպա թէ ոչ զինչ օգուտ էր մի միայն պարեգօտ ունել. և եթէ զայն լուա-

1 Յօրինակին պակասէր որոմ։

նալ պարտ էր, մերկ ինչ պարտ էր նստեալ, կամ մերկ
ջրջել, եթէ այնպէս ինչ պէտք ոչ էին. որպիսի ոք
էր Պաւղոս, վասն յոլովուելոյ՝ արբեալ աշ-
խարհս հատանէր անցանէր, վասն հանդերձի կարօ-
տութեանն ի տան ինչ պարտ էր նստել և յայնպիսի
շահից խափանել։ Իսկ եթէ պարզ ուրեք այնդէր
կամ բուքը և անձրևածք, բրատանալ ինչ պարտ էր,
կամ թէ մերկ դատարկ ի տան նստել. թէ ցուրտն
մեռ [1] զմարմինն, խարշել, մաշել ինչ պարտ էր, և
չխօսել։ Այլ զի ոչ անդամանդեալ մարմինս ինչ
կազմեաց նոցա, լուր սին՝ զինչ գրէ առ Տիմոթէոս.
"Այլ և սակաւիկ մի գինեակ խառնեալքիր, ասէ,
վասն ստամոքսիդ և պէսպէս հիւանդութեց". զար-
ձեալ և զմիսոյ և ս ասէր, թէ "Կարևոր համարեցայ
արձակել առ ձեզ զառաքեալն ձեր և զպաշտօնեայ
պիտոյից իմոց, քանզի խօթացաւ մերձ ի մահ. այլ
ողորմեցաւ նմա տէր. ոչ նմա միայն, այլ և ինձ", որ-
պէս զի մի ըմբռնելիք յամենայնի լինիցի կարեաքն։
Այս արդ զիարդ. նստել և մեռանել ինչ պարտ էր։
Այս ոչ ուրեք։ Իսկ էր վասն յայնժամ զայն հրա-
մայեաց։ Օ զօրուն իւր կամեցաւ ցուցանել այլ չա-
բար։ Իսկ ընդէր չարար. զի սոքա և առաւել քան
զիսրայէլացիսն էին զարմանալիք, որոց ոչ կօշիկքն
մաշեցան և ոչ հանդերձքն լեղկեցան, ուր և ջերմա-
գոյն տապացուցանէին Հառագայթք արեգականն, և
գքարինս և փխրել կարէին. և զայն էր վասն ա-
բար. քո աղագաւ. քանզի չէիր ողջանալոյ, այլ և
քան զևս վիրաւորելիր, զդեղոյն պատճառս շնոր-
հեաց քեզ։ Այս այս անտի յայտ է. մի թէ չկարէր
ինքն իսկ կերակրել. որ քեզ դիմադարձիդ եւ, ոչ
ապաքէն և առաւել Պաւղոսի տայր. որ խրայե-
լացւոց եւ տրանջողաց, պռունկաց, կռապաշտից, ոչ
ապաքէն Պետրոսի տայր, որ զՅաի վատնեաց, զընտ
վասն նորա եղեալ. որ ժանտից մարդոց եւ ունել
ինչս, ոչ ապաքէն և առաւել Յովհաննու շնորհէր,
որ զՀայրն և վասն նորա եղեալ. բայց չկամեցաւ.
այլ և կերակրէ զնոսա, զի դու սրբեսցիս։

[1] Յօրինակին մեռ։

Այլ տես զանչափ մարդասիրութիւնն. ախորժեաց զիւր առաքեալսն չքաւորս առնել, զի դու փորր մի ոգի առնուցուս. զի թէ զնոսա չէր արարեալ կարօտս, յոյժ զարմանալիք լինէին, առաւել փառաւորագոյնք, այլ քո փրկութիւն վրիպէր ի քէն։ Ողկաճեցաւ առնել զնոսա զարմանալիս, զի դու ապրեսցիս. այլ թոյլ ետ նուաղել նոցա, զի դու փրկութիւն հասանիցես. զի ոչ այնպէս մեծարանաց լինչ է վարդապետին առնուլ յաշակերտէն և չառնուլ. այլ այն պատուի՝ որ չառնուցու. բայց աշակերտն լինչ ոչ օգտիցէ, այլ ի դերև ելանէ ի պտղոյն։

Տեսանես զիմաստութեն մարդասիրին այ. զոր օրէն նակ լինքն ոչ միայն զիւր զփառսն չխնդրեաց, և ոչ զանձին լինչ գիտաց, այլ որ ի փառսն էր, յանձին կալաւ անարգել վասն քո. նոյնպէս և զվարդապետս՝ որոց մարթէր մեծարոյ լինել, ախորժեաց վասն քո առնել զքամահելիս, զի դու շահեսցիս, զի դու մեծանայցես, և գոյաւոր հոգևորքն լինիցիս։ Ա՛ն այնորիկ նա չքաւորի մարինաւորքս, զի դու լինիցիս գոյաւոր հոգևորքն. կարօղ էր զնոսա առնել անկաւրօտս. եղոյզ եթէ վասն քո թոյլ ետ նոցա կարօտանալ, և այս ևս դարձեալ յայտնի է։

Ո՛չայս ամ խմացեալ՝ մի՛ ի բամբասանս, այլ ի բարերարութեիս դարձցուք. մի՛ զայլոց չարիս քննեցուք, այլ զմեր մեղսն ածցուք զմտաւ. և այնպէս հաճոյ լիցուք այ։ Ո՛վ որ զայլոց մեղս որոնիցէ և զիւր ուղղութիւնս, կրկինս ինաստեցէ. և անտի՛ ի հպարտութէն յօժարէ, և ի հպարտութէ՛ ի ծուլութեն հատանիցի։ Ո՛վ յորժամ զմտաւ ածիցէ թէ ոմն մեղաւ, և ինքն գիւրաւ մեղանչէ. յորժամ ի մտի դնիցէ՝ թէ ինքն ուղղութիւն լինչ արար, վաղվաղակի հպարտանայ։ Այսպէս որ զիւր ուղղութիւնն մոռացաւ, սա առնիցէ, և զմեղսն առաջի աչաց դնիցէ, և զայլոց մեղսն չքննիցէ, այլ ընդ ուղղութիւնս միայն նայիցէ, բազում շահս շահի։ Ո՛չխդ. յորժամ տեսանիցէ՝ թէ ոք ուղղութիւն լինչ արար, ընդ այն հայեցեալ ի նախանձ յորդորիցէ. և յորժամ իմանայցէ թէ ինքն մեղաւ, խոնարհի և ի չափս ուշի զանձն։ Այս եթէ այսպէս առնիցեմք, կարեմք

հաստանել խոստացեալոց բարութեցն . որոց լիցի ամենեցուն մեզ հաստանել ի Քրիստոս Յիսուս , ի սմա մեր , ընդ որում հօր՝ միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք , իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Այն ապաքէն բազում մեծաց է աւելորդն։ Այլ ինչ աւելի նպաստ լինի ի համարս պիտոյիցն և վայելեցոյ, բայց միայն բազում ոսկւոյ կորուստ։ Դու մի ծատուընդ՝ հարիւր դահեկանի՝ և թերևս և աւելոյ՝ մի ինչ գլխաւոր հանդերձ գնես, և աղքատն սակաւ արծաթոյ։ Տեսեր զմեծաս. այլ չտայ հպարտութիւնն տեսանել,

Կամիս, զոսկին որ ի ձիոց զարդս՝ և ի կանանց ծախեն, քննեսցուք։ Հանդերձ այլովքն և անմիտս և առնէ մեծանալն. զի նովին՝ որով զկանայսն գըրգռեն՝ և զձին պատուեն. և յերկոցունց կամին պայծառագոյնք երևել, որով զկառն զարդարեն և ըզմարթս դեսպակացն օծանեն, յորում նստինն և քքքուին։ Այս զի՞նչ շահ իցէ զբորիս ոսկւով զարդարել, կամ կնոջ մարդոյ այնչափ ոսկի զանձամբ արկանել և նաղել, և ականս ինչ ընդ ոսկին ընդելուզանել։ Այլ չմարմ այնպէս ոսկին, ասես։ Այնաւանդ թէ այլք զայն իսկ ասեն, թէ ի բաղանիսն և ի կիրն արկանելոյ ականք և ոսկին մաշի և չլինին յարգոյ։ Այս գրեալքը եթէ չլինասին ինչ. զի՞նչ շահ իցէ, որ օգուտ. և եթէ անկանիցի և կորնչիցի, չէ՞ք ինաս. և եթէ ի նահանձ ինչ գրգռիցէ և նեղիցէ, չիցէ՞ ինաս։ Ցորժամ յօգուտ ինչ արկանելոյն չէ, և զանկն նահանձորդաց հանիցէ, և զգողոց գրգռիցէ, չլինիցի առաւել ինաս։ Օ՞ր ինչ օգուտ իցէ. մարթ եր առնն զայն յարգել և շահել. և վասն կնոջն հպատանոյ չկարէ ինչ այնպիսի շահս շահել. այլ թերևս բազում անգամ սուաբեկ և և վշտակեաց լինիցի, և զկինն տեսանիցէ զի ոսկւով հպարտիցի, չիցէ՞ այն ինաս։

Կարասի վասն այնորիկ ասի, զի ի կիր ոք արկանիցէ, և զի ի պետս ոք ծախիցէ. և ո՛չ որպէս յոսկերչացն խանութս կարգեալ յօրինեսցէ, այլ զի բարիս ինչ գործիցեմք այնու։ Ցորժամ ոսկւոյն գումարք յայնպէսի ինչ պետս չտայցէ ծախել, ո՛չ ապաքէն ինաս է։

և ոչ յօգուտ։ Ընդ նոյն համար է ասէ, յորժամ չիշխեսցէ որ այնու վայելել, որպէս թէ այլոց ինչ ի միջ չիշխեսցէ. և այն չէն պէտք, այլ ինասս։ Կամ յա պարանս մեծամեծս և ի տունս գեղեցիկս, ի սիւնս կձեայս, և յորմս մարմարապատս, ի փողոցս և ի սրահս, և ի պէսպէս շրջանակս ծախել զոսկին չիցէ ինաս. ի կուռս և ի պատկերս կանգնել ի փողոցս և ի հրապարակս։ Ազատքն և այնու զդեսս իսկ ինուերս կոչէն. բայց այժմ ոչ ինչ է ժամանակ քննելոյ։ Օ ինչ կամիցի որ ոսկեզօծ ձեղունս սենեկացն դրուա տէն. զինչ աւելի քան զայն գտանիցէ որ ի չափ և ի պայման ի տունս բնակիցէ։ Կայ ական հեշտ Թուիցի, ասէն, և երեսաց բաղում վայելուչութիւն։ Ցերբ. առ օր մի, և առ վաղիւն, Թերևս քաջ զե բիս աւուրս. և այնուհետև ոչ ինչ այսպիսի. քանզի յապի ակն և չհամարի ինչ. զի Թէ արեգակն ոչ ինչ զարմացուցանէ զմեզ, քանզի ընդելեալ եմք յանդն հայելով, որչափ ևս առաւել Ճարտարութիւն ինչ արուեստ. այլ այնպէս Թուի եԹէ յայլուսեայ տունս բնակեալ եմք։

Ընդ՝ ասա, ի պէտ բնակութիւն սիւնքն բազում և խոյակքն, ախաւեղագէսք և ազգի ազգի դիմակք պատկերացն, և ոսկի խառնեալ ընդ նկարս որմոյն, և այլ ևս համապայծառ գունակ գունակք երանգոյն, և ազգի ազգի դեղքն ընդ միմեանս ի Ճամուկան մտեալ՝ զինչ օգուտ իցէ. այլ հայարտութիւնէ և պարձանաց և յօբանալոյ պատՃառք են, և աւելորդ անմտուք։ Ի՞նչ որք կարևորաց պէտք են՝ որով կարօտ իցեմք, և զպէտսն վՃարիցեմք։

Տեսանես զի ինաս է և ոչ օգուտ, և աւելորդ և անշահ. զի Թէ աւելի պէտս ինչ չտայցէ, և ոչ վայել չուԹիւն երեսաց։ Կանգի յորժամ ժամանակ ի վե բայ անցանիցէ, յապի ակն, և չԹուի ինչ վայելուչ. և յայտ է Թէ չէ ինչ, բայց ինաս միայն. այլ չտայ զայն խմանալ մնալարծուԹիւնն։ Պաւղոս և զոր շայն կարծէր՝ զայն ինաս համարէր վասն Ջէի։ Ի՞նչէ ցերբ ընդ երկիր բևեռիմք, մինչև ցերբ չնայիցիմք ընդ երկինս։ Ջտեսանիցիք զՅերացեալն. զնարդ և ոչ զմիոյ ինչ զախորժելոյն յիշեն. չտեսա

նիցէք զվախճանեալսն՝ զոմանս ի ծերուէ զոմանս ի մանկուէ. չտեսանիցէք զազգումն իսկ կենդանւոյն զրկեալս յընչիցն. զի այնչափ ծնդիցիմբ ընդ չկայսս և չնաւիս. ընդէր այդչափ կապեալ իցեմբ ընդ ինաստակարսս. մինչև ցէրբ ոչ հարկանիցեմբ բուռն զկայիցն և զնացիցն։

Օ ինչ ինչ ոչ տային ծերքն մեծատուքն՝ թէ հնար ինչ քերել ի բաց ծերուէնէն։ Օ խորդ չէին անմտուէք իրք, եթէ հնար ինչ էր անդրէն ի մանկուէն գառնալ՝ չտալ զնմ ինչ և միանգամ մանկանալ, և առնել տունս և արարս քաջ գառաջինն։ Այլ աստ աւասիկ գոյ հնար մանկանալ ծերոց և լինել մատաղօրեայս, շահել գանձս հոգևորս և մեծուէնէս անանցաւորս, և չկամիմբ ի գոյից [1] սակաւ ինչ տալ՝ և այնպիսի կեանս գտանել, այլ բուռն հաբեալ վակճոյժ լինել զկնդ պահէք զայն ինչ՝ որ չէ օգուտ. ոչ ի մահուանէ փրկել կարօղ է, և ոչ յախտէ զերծացանել, և ոչ զծերուէնի մանկացուցանել, և ոչ այլ ինչ ի կարևորացն շահել, և ոչ օրինաց բնուէնէն հնարս գտանել. և տակաւին ժուժել ունէք։ Ա՛հ ասա, զինչ շահ, զինչ օգուտ իցէ արբեցուէնէն, որովայնասպարարուէնէն, անպատեհ ցանկուէնէն, պէսպէս դժնդակ տէրուէնէն, որ ևս քան զևս հաշէն մաշէն զմեզ. այս միայն շահ է ի մեծուէնէն, և այլ ոչ ինչ, քանզի մեք զայն կամիմբ. ապա եթէ ցանկանայաք, և զերկինս ևս կարող էաք ժառանգել։

Ա՛հ այդպէս իցէ, ասէն, ապա ուրեմն բարիոք մեծուէի։ Այ եթէ մեծուէնին առնէ զայն, այլ կամք ստացողին. և զի կամք առնէն զայն, անտի յայտ է՝ զի և աղքատին մարթի ժառանգել զերկինս. զոր բազում անգամ ասացի, թէ ոչ ընդ չափ արոցն հայի ձեռ, այլ ընդ կամ տալոցն. և մարթի աղքատին ի սակաւն գնմ տալ. քանզի ըստ կարին պահանջէ ձեռ։ Այ մեծուէնին երկինք առիթ լինի, և ոչ աղքատուէնին՝ գհեղինի. այլ երկոցունց՝ կամքն բարիք և չարք։ Օ կամն ուղղեսցուք, զնոյն վերստին շա-

1 Յօրինակին գոյ-ոյն. հաւք ըստ լաս։

հեացուք, յօրինեսցուք, յարդարեսցուք, և ամ[1] ինչ մեզ դիւրաւ վնաբի։ Արդեսն ձարտարապետին եթէ երկաթի և եթէ ոսկի ուրագ տայցես, զնոյն գործ գործել. մանաւանդ եթէ երկաթեայն դիւրեաւ[2] իակ գործիցէ զգործ փայտին. նոյնպես և աղքատութեշն առաւել ուղղութիւն գործիցէ առաքինութին։ Ո մեծութիէն այսպես ասէ, թէ "Վիրէն է մալ խոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատանն յարքայութիւն երկնից"։ իսկ աղքատութիէն չետ ինչ այնպես վնիւ, այլ զնորին հակառակն, թէ "Ալ ձաձռեայ զինչս քո և տուր աղքատաց, և եկ զկնի իմ"։ որպես եթէ 'ի վաձառելոյն իսկ է երթալ զկետնորա։

Այս արդ մի փախիցուք յաղքատութենէ իբրև 'ի չար ինչ իրաց. քանզի արքայութենէն լինի մեզ առիթ. և մի երթիցեմք կարի զկետ մեծութենէ իբրև զբարի ինչ իրաց, զի որք ոչ զգուշանայցեն կորնչին նովաւ. այլ ամ ուրեք զաւս ընդ երկինս ամբարձցուք. զայն՝ զինչ առաքն 'ի նմանէ՝ 'ի լաւն և յօգուտ արկցուք 'ի կիր, զմարմնոյ զօրութենէ, և զընչից մեծութիւն, և զայն ամ. քանզի կարի իսկ անպատեհ է, թէ որ ինչ 'ի նմանէն եղև՝ այնմ առնիցեմք գործի, և ոչ արարչին։ Այս քեզ ասէ, նմին տուր, որ 'ի պիտանացուս, և մի սատանայի։ Ո իարդ տայցես նմա։ Զործամ նայիցես ընդ արարածս, զարմանայցես, և օրհնեսցես և փառաւորեսցես զարարիչն, և դարձուսցես 'ի տեսլենէ կանանց։ Այս քեզ և ձեռս, նմա գործի արա, և մի սատանայի՝ յափշտակութենէ և յագահութենէ, այլ 'ի տուրս և յողորմածութիւն առնել, և համբառնալ տարածանել յաղօթս. զլըբեցելոց տալ ձեռն, և զզայթագղեալսն հաստատել։ Այս քեզ ած և ականջս, և զայն նմին գործի առնիցես, և մի քաղցրածայն բարբառոյ և մի աղտեղի ինչ զրուցայ. այլ "Ի՞նչ պատմութենէք քո լինին յօրինս բարձրելոյն։ Ի մէջ բազում ծերոց բնակես, ջիր, ասէ, և որ խմաստունն իցէ՝ 'ի նա յարեսջիր"։ Այս քեզ և բերան, մի զայն ինչ հանիցես ընդ բերան որ չիցէ այ հաձոյ, այլ սաղմոս և օրհնութիւնս

[1] Յօրինակին պակասէր դիւրաւ։

և երգս հոգևորս. « Օ՛ի տայէ, ասէ, ընդրկս լսողաց
՛ի շինուածին, և մի՛ ի կործանումն. և՛ի բանս բա-
բիս, և մի՛ ի բամբասանս ,, . մի՛ ի նենգուածին, այլ
՛ի նոցին հակառակն։ Լա՛տ քեզ ՃԾ և ոտս, ուչ՛ ի
չարիս ընթանալ, այլ ի բարիս փութալ։ Լա՛տ քեզ
ՃԾ և որովայն, ուչ զի երգիծուցանիցես, այլ սգաս
տացուցանիցես։ Կնկեաց՛ ի քեզ և ցանկութի՛ վանս
որդւոց լինելոյ, և ուչ՛ ի պոռնկութի՛ և՛ ի շնութի՛։
Լա՛տ քեզ և միտս, ուչ զի զնա հայհոյիցես, և կամ՛ զի
նենգաւ առ ընկերն լինիցիս, այլ զի ընկերին չգրժի-
ցես, և զնա միամիտ պաշտիցես։ Լա՛տ քեզ և ինչս՝
զի յօգուտ ծախիցես, և այժ՛ զի՛ ի լաւն վարիցես.
ետ քեզ և Ճարտարութի՛, զի կեանք աշխարհիս հաս-
տատիցին, և ուչ զի՛ ի հոգևորայն զրկիցիս. ուչ զի ընդ-
պաՃուճանս ինչ հանիցեմք, այլ զի կարևորքն մի-
մեանց ձեռնտու լինիցիմք. և ուչ զի զմիմեանս նենգես
ցուք։

Լա՛տ քեզ և յարկս, զի՛ ի ցօղոյ և՛ ի ցրտոյ պահի-
ցէ, ուչ զի գու ոսկւով զարդարիցես, և աղքատն՛ ի
սովոյ մեռանիցի։ Լա՛տ քեզ հանդերձս՛ ի զգեստ, և
ուչ՛ ի ցոյց ինչ և՛ ի պարծանս. ուչ զի հանդերձքն ոս-
կեհուռ գործիցին, և Վա՛յ՛ ի ցրտոյ մեռանիցի։ Լա՛տ
քեզ տուն[1], ուչ զի միայն բնակիցես, այլ զի և այլոց
վանատու լինիցիս։ Լա՛տ քեզ անդս, ուչ զի՛ ի պէտս
պոռնկաց և կաքաւչաց և գուսանաց և փողարաց և
ջարաւորաց գործիցես, և ծախիցես զայ բարուէին,
այլ՛ ի քաղցելոց և՛ ի ծարաւելոց պէտս։ Լա՛տ քեզ
ծով, զի նաւարկեալ չորհիցիս, և չխոնջիցես աշխա-
տութի՛ երկայն Ճանապարհաց. ուչ զի զանգունդս
քննիցես վասն ականց և մարգարտաց, և այլոց և
այնպիսեաց՝ զոր անտի հանիցես։

Լակ ընդէր բնաւ իցեն ականք պատուականք, ա-
սեն։ Լ՛ղէ՝ գու ասա, ընդէր այսպիսիք իցեն՝ որ այս-
չափ պիտանիքս իցեն. և այն այնչափ պիտանիք. որ
չեն ինչ բնաւ պիտանիք։ Այլա գեՃ՛ի շինուածս մտա-
նեն, և նոքա չեն ինչ ուժք պիտանիք. և սոքա և
կարծուինք քան զնոսա։ Լ՛ԱՀ նոքա, ասեն, գիղեց-

1 Յօրինակին պակասէր էր տէ տ՚ո՚ն։

կութիւն յօրինեն. վայելչութի՛ն են երեսաց. տեսիլ բարիւք ասաց։ Ոչ վասն, յորո պէտս, յորո օգուտս. կարծիք միայն են. կարի իսկ սպիտակ իցեն, այլ չեն քան զկուժ՝ որ բուն սպիտակ իցէ՝ սպիտակագոյնք. և ոչ հասարակ նմին իսկ կարծուածք ինչ իցեն. այլ և ոչ զայն ոք ինչ ունի ասել, այլ պիտանիք ինչ իցեն կամ մեծք, այլ և ոչ այն ինչ իցէ. և ուստի եղեն այսպիսի զարմանալիք, թէ ոչ միայն ի կարծեաց։ Իսկ եթէ ոչ գեղեցկագոյնք ինչ իցեն, զի գտանեմք քան զնոսա ազնուագոյնս և սպիտակս, և ոչ ի պէտս ինչ պիտանացուք, և ոչ կարծուածք քան զայլս, ուստի եղեն այնչափ զարմանալիք, եթէ ոչ ի կարծեաց։

Իսկ ընդէր, ասեն, ետ զնոսա, Ո՛չ եթէ նա ետ, այլ դու կարծեցեր, թէ պատուականք ինչ իցեն։ Ո՛չ գիրք, ասեն, ընդէր զարմանալիս ասեն զնոսա։ Ոստ քում կարծեացն խօսին այսուհետև. Նա և վերադապետն ըստ մանկանն խօսի, զնորայն զարմանալիս կարծեցուցանել նմա, զի այնու ածիցէ զնա զուրբ՝, և հանգուցանիցէ։ Օ՛ի խնդրեսցես զդեղեցիկ հանդերձն՝ զոր չետ քեզ ի պէտս՝ արկանել, այլ զշապիւղ զհանդերձն և զոգիցն. զայն միայն բաւական համարեսջիր, և մի զայն՝ որ ինչ չիցէ ի դէպ։ "Յանկալի է, ասէ, քան զոսկի և քան զականս պատուականս դատաստանք քո՝ որ,, ։ Զնոյն ինչ առքա պիտանացուք. Թէ պիտանացուք ինչ էին, չհրամայէր արհամարհել. այլ ըստ մերում կարծեացս խօսին ածեն զնոսա գիրք. և այն՝ այ մարդասիրութի՛ն է։

Իսկ վասն էր ետ զծիրանին և զայլսն նոյնպիսի՝։ Այ պարգևք են գործք ինչ այնպիսիք. քանզի և այնպիսեաք կամեցաւ ցուցանել զօրութի՛ն իւր, զի զարմանայցեալք և փառաւորս առնիցեմք զնա. և ոչ կապիցիմք ընդ այսմ և բևեռիցիմք. նա և զպօրեանն ետ ածծ միայն. դու ազգի ազգի ինչ հնարս հնարես անտի. զնաչիհ և զիսրակ և զգեբանին, զծաղն [2] և զկտաւսն և զխոխընդեայս, զքաքաւսն և զառխազուան, և զայլն ամ ազգի ազգի խորտիկսն, որպէս

1 Յօրինակին ՚ի խր։ 2 Յօրինակին ՚ի ծաղն։

զի ազգի ազգի համադամն՝ ի քիմն ծնուցանիցեն. և զայն՝ ցանկութիւք և ախորժանք և մտապատճուէն գոն. և ապա այնուհետև զպաճուճանսն քան զբնունն լաւ համարեցար։ Այս թէ ոչ, իցէ զի գտաներ ոք զքեզ՝ ի մշակացն՝ զնամդ և զանտեղեակդ երկրի, զի կայիր զարմանայիր ընդ անդաստանս, չասեր արդեաք թէ զի՞ զարմանայես, զինչ կամիցիս տեսանել՝ զնոր ինչ զոր չիցէ ուրուք տեսեալ. ո՛չ ապաքէն ըստ խամուճին է զարմանալն։

Վադարեսցուք այսուհետև յանօգուտ կարծեաց, և բուռն հարցուք զարդարև զՀնչմարտից. զի այս չէ ինչ, այլ ընդ վայր զայս ևեթ խաղտէ, և գետին պէս սահի անցանէ և ոչ դադարէայ։ Ա՛ան որոյ աղաչեմ, հաստատեսցուք զանձինս ի վերայ վիմին, զի և հանդերձելոց բարուքեցն հասանիցեմք ընդ Քրիստոս և մարդասիրութիւն նորա մեզ[1] Հայր Վհայր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն Ըստ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Ցօրինակին համառօտեալ։

Այ արդ չիցէ այս ողբոց արժանի, չիցէ արտասուաց գործ։ Յո՞ փախչիցիս հէքդ և թշուառական, յո՞ փախչիցիս ի կենաց և ի քումմէ փրկուածէ. եթէ չայ փախչիցիս, զո՞ ապաստան առնիցես. եթէ ի լուսոյ փախչիցիս, ի՞ւ տեսանիցես. եթէ ի կենաց սրանայցես, ի՞ւ լինիցիս կենդանի։ Փախիցուք ի թշնամւոյ փրկուածէնս մերոյ։

Յորժամ մեղանչեմք, փախչիմք չայ, յօտար երկիր փախստեայ հատուած[1] գնամք՝ իբրև զորդին, որ վատնեաց զինչն հայրենիս և սովամահ լինէր. և գնաց յօտար երկիր և ծախեաց զնմ արարած հայրենիսն։ Ականիմք և մեք ինչս հայրենիս. զոր. զերծոյց զմեզ ի մեզաց և չնորհեաց ոյժ և զօրութիւն ի գործս առաքինութեան. պարգեւեաց մեզ զյաժարութեան, զհամբերութիւնն ետ մեզ, յաւազանն զՔրիստն տուր. եթէ զայն առ ծախիցեմք, սովամահ լինիցիմք։ Զոր օրինակ ախտացեալքս մինչ դեռ ջերմանալն և մաղձիւք լկիցին, ոչ յառնել կարեն և ոչ գործ ինչ գործել զօրեն. իսկ եթէ փարատիցէ ոք ի նոցանէն զայն, և յառողջութեի ածիցէ, և չկարկանիցեն բուռն զգործոց, յանձանց ծուլութեի լինիցի նոցա կատարումն։ Նոյնպէս և առ մեզ. քանզի չարաչար ախտիւ և սաստիկ ջերմութեամբ անկեալ դնիմք, ոչ ի մտիւ և սաստիկ ջերմութեամբ անկեալ դնիմք, ոչ ի մտիւ, այլ ի մեզս, և իբրև յաղբիւ անկեալ կամք ի չարութեանն կեղտ խառնեալք, նենգեալք, հոտեալք, երիվացեալք, խառուեալք, ծնկեալք, ծիւրեալք, պատկերի նմանեալք և ոչ մարգկան. չուրջ զմեզ պաշարեալ այսոց չարաց. և իշխան աշխարհիս եկեալ հասեալ ծաղր առնէ, զոտս ի վերայ տրոփէ։

Այլն այ միածինն, առաքեաց զՀառագայթս իւրոյ գալստեանն, և զմուրճն մածեալ՝ արար յանկարծ հալածականս։ Այլն Թագաւորն որ յաՀոռն հայրե-

1 Յօրինակին հատուած։

նի նստէը , եթող զաթոռն հայրենի ։ Յորժամ ա֊
սեմ եթէ եթող զաթոռն հայրենի , մի փոփոխու֊մն
ինչ նմա կարծիցես , որ զերկինս և զերկիր առ հա֊
սարակ ընծ· այլ ըստ տեսչութեն ասեմ ։ Այն՝ զի
աստ մարմնով պատեալ էր , և անդ առ հայրն նրա֊
տէր · լիով ի խոնարհ , լիով ի վեր , լիով ի մարմնի ,
լիով յամենայնի · քանզի չէք ուրեք ասել զայ՝ եթէ
մասամբ ուրեք լինիցի · եկն առ իս առ թշնամիս , որ
աստէի ես գնա և փախչէի , որ և տեսանել անգամ
չկամէի , որ ցանկ հայհոյէի , միշտ թշնամանէի · եւտես
զի յաղթիս ընկեցեալ կայի՝ որդնալից տրորեալ ,
ախտաբեկ , սովաբեկ , ամ ցաւօք վարկանեալ · ոչ
եթէ ջերմամբ ինչ լկեալ , այլ չար ցանկութիքն ·
նա և այտուցեալ տրոմեալ էի , այս ինքն հպարտու֊
թիւն , և սովոյին և՝ սրոյն սրայի , այս ինքն ագահու֊
թիւն , և հարեալ տրորեալ էի մեղայն վիրօք , և ա֊
չայն կուրութի զկատապաշտութիւն , և խլութի և համ
բութի , զի քարանց և փայտից երկիր պագանէի , և
յանհնարին ցաւս ի կարող կայի , և բարբանջէի ·
զպիայան ամծ կոչէի , և զքարն նոյնպէս համարէի ։

Այտես զնա յայնչափ չարիս՝ և չգարշեցաւ և չխոր֊
շեցաւ և չսոսկացաւ և չատեաց · քանզի ամր է , և
զիւր զտեղծուածն ոչ մերժեաց · այլ գործէ իբրև
բժիշկ ինչ հնարագէտ · կազմեաց դեղ ինչ բազմա֊
գին , և նախ ինքն ճաշակեաց · քանզի ընդ առաքինու֊
թիւն նախ ինքն անց , և ապա մեզ ետ ։ Այնախ իբրև
զանդեղեալ ետ զաւազանն , և ապա փախեցաք զամ
ժանգս , և ամ ինչ փախստական եղև յանկարծակի ·
և այտուն իջանէր , և ջերմն ցածեաւ , և փուան խա֊
րեցաւ · ամ ինչ՝ որ ինչ յագահութիէ և ի ցասմա֊
նէ և յայլոց չարեաց լինէին ախտքն , Թափեցան
հոգւոյն · լուսաւորեցան աչքն , բացան ականջքն ,
խօսեցաւ լեզու զօրհնութիէ բարբառս , առ զօրու֊
թիէ ոգի · գեղեցկացաւ մարմին այնպիսի ինչ գեղեց֊
կութիէ , զի և որդիս ամ արժանիս ասար կոչել · գե֊
ղեկացեալ ոգւոյն հնորհօք , իբրև զնորածին ինչ որ֊
դի Թագաւորի ի ծիրանիս և ի փափկութիէ մեծալ ։

1 Յօրինակին Ն ։

Ալ այ ինձ, վայ ինձ. արդեաւք ինչ աղնուականութեի՛ շնորհեաց մեզ։ Ընդ՝ նաք, մնաք, զարգացաք. արդ ընդ՝ երթ փախչիցիմք՝ի բարերարէն՝ որ զայն ամենայն արար։ Օ օրուէ նոյնպէս տայ։ Ընդ՝ երթ հնար այնչափ ցաւօք ծնկեալ, և զոյժն ունել, եթէ նորա չէր տուեալ մեզ զօրութի՛ և մեղայ Թողութի՛։ Կերպաւ ծախեցաք զայ՛ որ ինչ էտ մեզ. վատնեցաք զզօրութիւնն զոր պարգեւեաց, չիջուցաք զընծրէն։ Օ խաղդ ծախեցաք, զի ոչ՝ ի լաւութի՛ ինչ՝ ի կիր արկաք, և ոչ՝ ի պէտս ինչ բարիս վայելեցաք. և այն իսկ եղև մեզ կորուստ. և որ քան զայ՛ դժնդակագոյն է, յօտա՛ րուէ եմք և յեղջերւոյն կերակուր եղեաք ապաստան. և ցօժարեմք դառնալ առ Հայրն, և ասել Թէ մեղաք յերկինս և առաջի քո, ուր այնպիսի Հայր խնամակալ կայ, և յոյժ ցանկացեալ է զարձին մերոյ. միայն դարձցուք, և չունիցի՝ ի դիպահոյ վասն առաջին յանցանացն։ Ասանկ, աղաչէ, միայն Թէ՝ ի չարեացն Հեռանայցեմք. բաւական աղերսէ զդարձն ևեթ. ոչ ինքն միայն չպատուհասէ, այլ Թէ և այլ ոք պատուհասիցէ, ըմբերանիցէ. Թէպէտ և կարի ոք յառաքինեաց իցէ։

Դարձցուք անդրէն և խնամցուք զանարգանս յո՛ րում էաք. մինչև ցերթը Հեռանայցեմք և չառնուցուք՝ի միտ զնուազուին. խողս առնիցեն զմեզ չարիքն, սուսամնա առնիցեն զոգիս։ Ընծարծեսցուք, նորո՛ գեսցուք զանձինս, սեթափեսցուք, դարձցուք յառաջին աղնուականութենն, զի և հանդերձեալոց բարութեցն հասանիցեմք՝ի Ա՛ր Ո՛ր՝ի տէր մեր, ընդ որում հօր և տէր հոգւոյն փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆԱՒՈՐ պատկերք կան ի գիրս առաքինի կնոջ վարուց. զոր կամիցիս նկարեալ յանձին քումմ. և յետ վարդապետին ընդրկին աշակերտին. զի ոմն ջամանալով կնոջ՝ պայծառացաւ, և ոմն ընդխիւք՝ ի՝ զիա ջամանալով կնոջս, և Աբրահամ ընդխիւք. զոր Թեթև և քեզ պատշաճ համարիցիս, ընդ այն գնասջիր։ Վարձեալ մին ամուսնութիւ, և միւսն կուսութիւ։ Աբրահամ ընդ ամուսնութենն, և նա ընդ կուսութեանն. և դու ընդ որ ձանապարհ կամիս գնալ գնասջիր. երկոքին զքեզ յերկինս հանիցեն։ Ի՝ զարձեալ ոմն պահօք, և ոմն առանց պահոց։ Յոլ հաննէս պահօք, և Յոլք կնոջն և տան և ուստերաց և դստերաց հոգայր, և բազում մեծութիւն ունէր. և նա չունէր ինչ բայց տաւեղին հանդերձիկս։ Ո՞ինչ ասիցեմ տուն և մեծութիւն և ինչս, ուր և՝ ի թագաւորութենն կարէ ոք առնուլ յանձն զառաքինութիւնն։ Վկան ջեզ տունս չինականաց առաւել մեծագոյս գտանիցես զտունս թագաւորաց. և Վասւիթ՝ ի թագաւորութենն պայծառացաւ, և չխափա նեցին ինչ զնա ծիրանիքն և թագն։ Նոկ միւսումն բազմամբոխ բանակի ընկերահաշտից հաւատացաւ վերակացուին, զի՞ոլսկահ ասեմ, որ կարի դժուարութի է զիշխանութենն վարել։

Չեսեր մեծատունս և առաքինիս. տեսեր աղքատս և նահատակս, և յամուսնութե և՝ ի կուսութեան. տեսեր զնոցին հակառակն յամուսնութե և՝ ի կուսութե. յամուսնութե բազումք՝ ի մարդկանէ կոթեան, որպէս և Վամփոնի. բայց ոչ եթէ յամուսնութե ինչ, այլ յիւրեանց կամացն. և՝ ի կուսութե, որպէս Հինգ կուսանքն. և՝ ի մեծութե՝ որպէս մեծատունն որզի աղքուն անդ անտես առնէր. և յաղքատութե՝ որպէս և այժմ բազումք կորնչին. նա և՝ ի թագաւորութե և յընկերահաշտեաց զօրավարութենն զբազում կարեմ ցուցանել կորուսեալս։ Վամին առ

սանել ՚ի զինուորութե՛ զբաղումն ապրեալս , որպէս Կուռնելիոս և նոյնպիսիք . և ՚ի գործակալութեանց տանց , որպէս ներքինին եթովպացւոյն . և այսպէս յիմ կողմանց, եթէ ՚ի լաւ արկանիցեմք ՚ի կիր զմեծութե՛ն , չլինիցի ինչ մեզ վնասակար . և եթէ չծախիցեմք ՚ի լաւ , կորուսանէ ։ Կա և Թագաւորութե՛ն և աղքատուե՛ և մեծութե՛ արհամոյն չկարէ ինչ վնասել . ուր գիտութե՛ն իսկ չէղև վնասակար , և ո՛չ աղքատութե՛ն և ո՛չ վաճառականութ լինել ։

Օ մնաւ ած զՅուսէփ . ծառայ եղև , և զառաքինութե՛ն ողջ պահեաց . զմնաւ ած զՅովսէփ և զերիս մանկունսն . գերիք եղեն , և զիարդ պայծառացոյնք եղեն . ամ ուրեք առաքինութե՛ն պայծառանայ . և չկարէ որ գամագիւտ լինել , և չիցէ որ զնա խափանել կարիցէ ։ Այս զի՛նչ ասեմ աղքատութե՛ն , և գերուե՛ , և ծառայուե՛ , և սով , և կեղ , և չարչարանս . քան զծառայութե՛ն ևս չար են ցաւք ինչ չարաչարք , որով Պ ազար և Յոբ տանջեցան . ցաւած էր և Տիմոթէոս՝ որ բազում ցաւօք լկեր ։ Տեսանեն , զի չիք ինչ որ առաքինութե՛ գեր ՚ի վերոյ լինիցի . ո՛չ իշխանութե՛ , ո՛չ գործակալութիւն , ո՛չ ցաւք , և ո՛չ անարգանք , ո՛չ ՚ի պատուոյ անկանել , այլ զայն ամ ՚ի վայր յերկրի թողեալ փութայ յերկինս վերանալ . միայն թէ ոգին առաքինի իցէ , և չիք ինչ արգել լինելոյ ընտիր ։

Յորժամ մեղկն առողջ իցէ , չիք ինչ արտաքուստ որ կարիցէ նմա խափան լինել . որպէս ՚ի Ճարտարացն արուեստս յորժամ Ճարտարապետն հմուտ և մտաքիւր գործոյն իցէ , թէպէտ և ցաւք ինչ հասանիցեն , և աղքատութե՛ն ՚ի վերայ հասանիցէ , թէպէտ և զգործն ևս այլոց յանօթ տայցէ , թէ գործիցէ և թէ չգործիցէ , ընտրագի ինչ . քանզի և արուեստն ՚ի միտսն նկարեալ կայ . նոյնպէս և առաքինին՝ որ ընդ այ միամիտ իցէ , թէ ՚ի մեծութիւն հասանէ , ցուցաց նէ զարուեստն . և եթէ չաղքատութիւն իջանէ , նոյնպէս է . և եթէ ՚ի ցաւ իցէ և եթէ յանարգանս և եթէ ՚ի փառս ։ Ո՛չ յամենայնի

1 Յորինակին պակասէր ՚ի վեր տերէրէ ԲՈՂՈՔ ՔՈՒՈՅ ։

զնոյն գործ գործէին առաքեալքն. "Վասն օր, ասէ, և անարգութ, հայհոյութիք և գողութիք". այն իսկ է գործ նահատակութեան։

Այեմ ասիցես, չկարեմ բաղմաց վերակացու լինել, մինանալ պարտիմ, թէնամանես զառաքինութիւն. զի նա յամենայնի կարող է՝ ի կիր արկանել և պայծառանալ. միայն անկեսցի և եթէ յոգիս։ Այեմ սուլ իցէ և եթէ լուսթի, նա զնոյն զօրութի ցուցանէ. որպէս և Պաւղոս ասէր, թէ "Վիտեմ առաւելուլ, և գիտեմ նուազել". և ուր գործել պարտէր՝ չամաչէր, այլ զերկեամ զիւրոյ ձեռաց վաստակս ետ տանն վարձ՝ յորում էին. և եթէ քաղցնուլ պարտ էր, չէքանէր և չերկմտէր. յամենայնի միտս առաքինէիս, զաղնիս արուեստն ցուցանէր։ Այմին նա խանձաւորք լիցուք, և չառնի ինչ մեզ տրտմութեան պատճառք։ Այդէ՝ ասա, զինչ ինչ ի տրտմութենէ կարիցէ զայսպիսին կասեցուցանել, մինչև զյաժարութին ոք ի նմանէ չհանիցէ. չիք ոք ի մարդկանէ քան զնա կարևոր. երանի ասա և անդ։

Վրեսկիր եթէ ոք առաքինի՝ որ կին և որդիս ունիցի ի փառս և ի մեծութի, և հանիցէ ոք ի նմանէ, նա նոյնպէս առաքինի մնայ. և եթէ Թողուցու ոք և չհանիցէ, նա նոյնպուհնակ առաքինի։ Այէ ի նէ զութեան կասի, և ոչ ի դիւրութի յուլանայ. այլ իբրև զվէմ մի որ կոծիցի յալեաց ծովու, և յորժամ խաղաղիցէ և չկոծիցի՝ նոյնպէս կայ. ոչ ի կոծելոյն ինչ միասի, և ոչ ի խաղաղելոյն արատիցի, նոյնպէս և հաստատուն ոգի ի խաղաղութեան, և յորժամ ալիք ինչ շարժեսցին, հաստատուն կայ։ Այս զոր օրինակ մանկտի՝ յորժամ ի նաւ իցեն, տագնապին, պահնուն, և նաւավարն աներկիւղ նստիցի և ծաղր առնիցէ, և զբօսանս ևս համարեսցի զզարհուրելն նոցա, նոյնպէս և ոգի սգաստասէր՝ յորժամ ամենեքին խուճապեսցին և վայրապար ինչ աղմկիցին՝ յամենայն իրաց ինչ փոփոխմունս, նա ոչ եթէ նոյնպիսի գտանիցի, այլ իբրև զնաւապետ ոք վրստահ՝ յուղղիչ և ի սամս նաւին առաքինութեան նստեալ հաստատեալ յանհոգս, ծաղր առնիցէ զայլոց վայրապար ինչ խռովութիս։

Ա՛ղէ՛ասաւ, մի՛ թէ մա՛հ ինչ կարիցէ խոտո՛վեցուցա-
նել զոգիս երկիւղածին. այլ այն ապուշական կե-
նաց է սկիզբն: Ախ աղքատութի՛ւն ինչ. այլ այն
գործակից է նմա յաւաքիւնութի՛ւն: Ախ ցա՛ւք. այլ
չհամարի ինչ, չգրէ ինչ զհանգիստ: Ախ նեղութի՛ւն.
այլ ինքն նախ նեղեալ զանձն: Ա՛յլ թէ անարգա՛նք.
այլ անձամբ իսկ արար զանձն արհամարհեալ: Ա՛յլ
աշխարհ. այլ ի խաչ ելեալ է աշխարհիս: Ա՛յլ
թէ յորդւո՛յ անկանել. այլ ելերկնի՛լ, քանզի չէ երկ-
միտ ի յարութի՛ւն: Ա՛յլ զինչ իցէ որ զնա ըմբռնել
կարիցէ. չէ՛ք ինչ: Ա՛յլ թէ մեծութի՛ւն հպարտացու-
ցանիցէ. և ո՛չ երբէք, քանզի գիտէ թէ ո՛չ ինչ է
մեծուի՛: Ա՛յլ թէ փառա՛ք. այլ ուսեալ է՝ թէ «Ա՛մե-
նայն փառա՛ք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ է»: Ա՛յլ թէ
փափկութի՛ւն, այլ լուա՛ւ ի Պաւղոսէ՝ թէ «Կիրգն
կենդանւոյն մեռեալ է»: Յորժամ ո՛չ այսոցդ իցէ
և ո՛չ ներգեալ, զինչ ինչ այնը առողջութե՛ զոյզ
կայցէ:

Ա՛յլ ո՛չ այլ ոգիք այնպիսի ինչ. որ քան զծոլն և
զգետնառի՛ւծն և՛ս չար շրջչրջի՛ն: Օ՛ ինչ քան զայն
ծաղր կայցէ՛ յորժամ տեսանիցես զնոյն զմին մերթ
թէ ծիծաղելի, մերթ լացել, մերթ հոգայել, մերթ
աւելի քան զչափն յուզանայել: Ա՛ն այնորիկ ասէ.
«Ա՛ի կերպարանի՛ք կերպարանօք աշխարհիս»:
Յերկինս նահատակի՛ք՝ ուր չիքն փոփոխումն. անդ
խոստացեալ են հատուցմունք պարգեւացն անեղծ,
անփոխականք. բա՛ս նմին ցուցցուք վարս, աս-
տէն յառաջագոյն ընկալցուք բարութի՛ւն: Ի՛նդէր ի՛
պատրաս արկանիցեմք զանձինս, ի՛ մրրիկս և ի՛ նա-
ւակոծութի՛ւն. յանբոյժ նաւաշխանդիսան դիմեացուք,
որ չէ՛ ի մեծութի՛ւ և յայքառութի՛ւ, ո՛չ ի փառաց
և ո՛չ յանարգութի՛ւնէ, ո՛չ ի ցաւոց և ո՛չ յառողջու-
թի՛ւ, այլ ի մերոց ի հաստատուն ոգւոց:

Որ բարիւք խրատեալ իցէ յարուեստ առաքի-
նութե՛անն, աննայն ինչ նմա դիւրաւ լիցի. և աս-
տէն իսկ առնուցու զձաշակս հանգստեան՛ն, և իբրև
ի խաղաղ նաւահանգստեան՛ն յատպհովս կացցէ. և
անդր երթեալ բաղմապատիկ վայելեսցէ ի բարու-
թի՛ւնն, որոց լիցի ամենեցուն մեզ արժանի լինել

հնորհօք և մարդասիրութիւնէ նոյն Քրիստոսի. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սքանչելի փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ասէ դիք, եթէ որդի առն Թագաւորի երթեալ ուրեք պատերազմ հարկանիցէ, անուանի և առաքինի ՚ի ձակատուն դառնայցէ, զօրօք բազմօք, մեծաւ յաղթուբ, կառօք և երիւարօք, և աղգի աղգի դասիւք զօրականաց, ոսկեզօծ վահանօք, դունդ դունդ ասպարակրօք՝ որ շուրջ զնովաւ աստի և անտի յօրինեալ մանուիցեն, և ամենևին քաղաքն պակեալ պայծառացեալ նման ընդ առաջ ելանիցեն. իշխանքն ամ իսառնիձաղանձ ռամկաւն հանդերձ, այլազգօք և օտարալեզուօք, կալանաւորօքն և կապելօք, բազմապայծառ զարդիւքն, գունակ գունակ հանդերձիւքն յառաջ մատչիցին, և նա գիրկս արկանիցէ, յաչս և ՚ի բերանս համբուրեսցէ, զձեռանէ ունիցի, և մօտ առ իւր ունիցի, և առաջի ամենեցուն իբրև ընդ բարեկամի խօսիցի, և պատմեսցէ՝ թէ զայն ամենայն ձանապարհն վասն ձեր հարի. և յարքունիս տանիցի, և ընդ նմին վայելեսցեն յարքունիսն. և այլքն թէպէտ և չպատժիցին, այլ չեն արժանի այնպիսի պատուոյ, քան զորպիսի՞ տանջանս չիցէ նոցա այն անհնարին։ Օ՛ի թէ՝ ՚ի մարդկան միջն դառն իցէ յայնպիսի փառաց անկանել, որչափ և առաւել առաջի ՚ի, յորժամ ամենայն զօրութիւնքն ՚ի մի վայր հասեալ գումարեալ կայցեն հանդերձ թագաւորաւն. յորժամ դևք կապիցին, և գլխարկեալ կոբացեալ զգետին նշմարիցեն. և զօրագլուխն նոցա զատանայ կապեալ տանիցին, և ամ գունդքն դիմակաց հակառակորդին ընդ նմին ՚ի տանջանս ձգիցին. յորժամ զօրութիւք երկնից դղրդիցին, և ինքն ամպօք երևեսցի։ Հաւատացէք, առ ահի միտք ընդ բանս չիմարեսցան, և չկարեմ զձառս ՚ի գլուխ հանել։

Ա՚ի միտ առէք, յորպիսի փառաց անկաք, ուստի մարթ էր չվրիպել. և անհնարին աղէտք այն են, զի իշխան եմք չանկանել յայնպիսի աղէտս, և անկանիցիմք։ Յորժամ զոմանս ընդունիցի և առ հայր

տանիցի յերկինս, և զամենա թողուցու, և առնուցուն հրեշտակք ինչ և ձգիցեն ականջ, թէպէտ և կարի յոյժ զարտասուս հարկանիցեն, գլխիվայր կոտացեալ տանիցեն ի հուր գեհենին. և նախ առակ և նշանակ առաջի ամենայն աշխարհաց առնիցեն. որպիսի՞ ինչ համարիցիս զայնպիսի ցաւս։ Վտեթասցուք մինչ դեռ ժամանակս ի ձեռս իցէ, և բազում հոգս զվերոյ փրկութենէն կալցուք յանձինս. քանզի չունէք ցիմք այնպիսի ասել՝ զոր մեծատունն ասէր. եթէ Ով զոյր ոք այժմ զմեզ գտանիցէ և մեք հնարս անձանց. այլ չթողու ոք։ Այս զի ասելոց եմք, ի նմանէ իսկ յայտ է. նա և յայլոց բազմաց։ Այս զի ուսանիցիս եթէ քանի են յորոց վերայ ջերմ ինչ սաստիկ եհաս, և ասեն՝ թէ զերծանել կարասցուք, ոչ և արիցուք զանձինս յայնպիսի վտանգս։

Բազում ինչ և մեք ասասցուք այսպիսի, այլ լսեցուք՝ զոր մեծատունն լուաւ, թէ "Ով ինչ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ». զի աստէն ընկալաք զաւրիսն։ Հե՛ծեսցուք գառնապէս, աղաչեմ. մի միայն հեծեսցուք, այլ և յառաքինուն միսեսցուք. սուգ առցուք այժմ վասն փրկուե՛ն, զի մի յայնժամ առնուցումք սուգ զուր. լացցուք այժմ, զի մի յայնժամ լացցեմք ի չարին. այս լալումն առաքինութե՛ է, և այն անօգուտ մնաց։ Վշեսցուք այժմ զանձինս, զի մի նեղիցիմք յայնժամ. չէ ընդ մի համար այս նեղութե՛ն և այն. աստ սակաւ ինչ ժամանակ նեղիս, մանաւանդ թէ և չըզգամք իսկ զնեղութե՛ն, քանզի գիտես՝ թէ վասն բարեացս նեղիս. անդ է գառն նեղութե՛ն, քանզի չկայ ակն յուսոյ՝ եթէ զրաւ լինիցի նեղութե՛ն, այլ ցանկ և հանապազորդ. յորմէ լիցի ամենեցուն մեզ զերծանել և հասանել հանգստեանն։

Այլ աղօթս արասցուք և փութասցուք հանգրտեանն. փութասցուք, աղաչեմ. եթէ փութամք և աղօթս առնեմք, վաստրեմք. և եթէ սրտի մտօք խընդրեմք, տայ ած. իսկ եթէ չխնդրիցեմք ի նմանէ, և չլինիցիմք նպաստ, զիարդ կարէ զի վաստրիցի ինչ երբեք՝ յորժամ ի քուն ոք կացցէ։ Այրանի՛ յորժամ ընթանայաք՝ հասանել կարէաք, և կերպարանակից լինեաք մանու նորա, որպէս և Պաւղոս ասէ, եթէ

հասանել կարացից, Թերևս պատահիցեմ։ Պաւղոս Թերևս ասէր, իսկ մեք զինչ ասիցեմք. Թող Թէ՛ի քուն իսկ կամք։

Որ՛ի քուն կացցէ և ոչ զաշխարհական ինչ իրս վճարել կարիցէ, Թող Թէ զվարուց ինչ պէտս։ Որ՛ի քուն կայցէ և՛ի բարեկամէ անգամ չառնուցու, Թող Թէ յայ։ Որ՛ի քուն կայցէ զնա հայր և մայր չպատուեն, Թող Թէ ած։ Որ՛ի քուն կայցէ նմա և ծառայք չանսան, Թող Թէ ած։ Սակաւ մի աշխատեացուք, զի ցանկ՛ի հանգստեան վայելեացեմք. նէ՛ղել պարտ է, Թէ աստ ոչ՝ սակայն անդ։ Ընդ՛որ չկամիցիմք աստէն առնուլ զնեղուն յանձն, զի անդ հանգչիցիմք, և հասանիցեմք անձառ բարութեացն՛ի Քրիստոս Յիսուս՛ի Տեր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

« Յորժամ ելլի ես ի կողմանս մակեդոնիայեցոց , և ոչ ոք ի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առնլոյ , բայց միայն դուք : »

Ո՛րչափ իցէ առնլոցն , զի՛նչ իցէ հաղորդեացն : Ընդէր չասաց, եթէ ոչ ոք եկեղեցի ետ ինչ ինձ , այլ յաղագս տալոյ և առնլոյ : Այս արդարև հաղորդութեան իսկ են իրքն . « Ահա ունք , ասէ , ի ձեզ զհոգևորսն սերմանեցաք , մի՞ն ինչ իցէ՝ եթէ ունք ի ձենջ զմարմնաւորսդ հնձիցեմք » . զարձեալ՝ եթէ « Ձեր առաւելութի ի նոցա կարօտութիւն » : Յեանեա զիարդ հաղորդեցան , յաղագս տալոյ զմարմնաւորսն և առնլոյ զհոգևորսն : Ո՞ր օրինակ որ վաճառիցէնն և գնիցէնն , հաղորդ իցեն միմեանց , զմիմեանցն իրեարց տալոյ . քանզի այն իսկ է հաղորդութի , նոյնպես և աստ . զի չէք և չէք իսկ քան զայն վաճառ և շահ շահաւէտ , որ յերկրի գործին և յերկինս : Ո՞ր որք գնան տայցեն՝ յերկրի կան և գին հատանեն , և գնեն զերկինաւորսն . երկրաւոր գինս տան , և զերկինաւոր վաճառն շահին :

Այլ մի՝ ինչ ուրեք՝ պարսաւել . ոչ եթէ ընդ ընչիցս գնելի են երկինաւորքն , նա և գնին իսկ ոչ ընդ ընչից , այլ ընդ կամացն այնոցիկ՝ որ զինչսն արկանիցէ . քանզի զգաստութիւն ի վեր է քան զմարմնաւոր իրսս , մարդասիրութիւն և ողորմութիւն : Իսկ եթէ ընդ արծաթոյ գներ , այրին որ զերկու դանկան էարկ , ոչ ինչ վնաբեր . բայց քանզի ոչ արծաթն , այլ կամքն յաղթեցին , զամենայն կամն յօժարութի ցուցանել , զի զընաւ առնուցու :

Այս արդ մի ասասցուք , եթէ ընչիւք գնելի իցէ աւ քայուին . ոչ ընչիւք , այլ կամօք՝ որ ընչիւքն ցուցանիցին : Եթէ այդպէս իցէ , ահա ընչիւք իցէ : Ոչ ընչիւք , այլ կամք է . եթէ կամքն յօժարիցին , և երկու դանկօքն կարեն գնել զերկինս . և եթէ այն չիցէ , և

ոչ ընդ բազում կշռոյ արծաթոյ . և ընդ այն համա-
րիցի , եթէ երկուս դանկս ծախեցեր : Ընդէր . յոր-
ժամ բազում ունիցիս և սակաւ ինչ արկանիցես ,
առնել արարեր ողորմութիւն , այլ ոչ այնչափ սրչափ
կինն այրի . քանզի ոչ եթէ յօժարութիւ արկեր որպէս
նայն , զի յամենայնէ զրկեաց զանձն . մանաւանդ թէ
չզրկեաց , այլ զամենայն ընդհակեաց : Ոչ ընդ բաժա-
կի միոյ հովոյ ջրոյ խոստացաւ ՅԾ զարքայութիւնն
երկինից , այլ ընդ կամաց և ընդ յօժարութիւն . նա և
ոչ ընդ մեծու , այլ ընդ կամաց . քանզի և չէ իսկ
ինչ մեծ : Օ ինչ մեծ իցէ մի ոգի տալ , մի մարդ
մատուցանել . մի մարդ քանի ինչ արժանի իցէ :

" Օ՛ի և՛ի Աստաղնիկէ , ասէ , մի անգամ և երբ
կիցս առաքեցէք ,, . դարձեալ յարդի և զովի . զի
եթէ միոջ՝ ի մայր քաղաքաց նստեր , ի փոքուէ քա-
ղաքի կեցակերը , զինչ և զայլ ժամանակաց որ ա-
սիցէ : Այս տես զի մի ցանկ զանձն ի սիրոյին ի
քաց ձգիցէ , որպէս կանխագոյնն ասացի , և և՛ ծու-
լագոյնս առնիցէ զնոսա , այնչափ բանիւք եցոյց եթէ
չկարօտի . և զմին միայն եցոյց և եթէ ի պէտս , և չա-
տաց թէ չիմ ինչ պէտս , այլ լոկ պարկեշտութեամբ
ասէ՝ ի պէտն . և ոչ այսչափ միայն , այլ և յաջոր-
դաւն , քանզի պիտէր՝ թէ յոյժ խնայարշադոյն է ,
դարձեալ ուղղութիւն ինչ հնարս կազմէ . " Իբրև ոչ ,
ասէ , եթէ խնդրեմ զտուրսն ,, : Վ երնադոյնն ասէ ,
թէ ոչ ըստ կարօտութեն ինչ ասեմ , այլ քան զայս
մեծ է . քանզի այլ է կարօտն լինել և խնդրել , և
այլ է ի կարօտութէ լինել և չհամարել ինչ զկարօ-
տութեն . զի ոչ եթէ խնդրեմ զտուրսն , այլ զպատուհն՝
որ յաձախէ ի ձեր համար , և ոչ չիմ ինչ :

Ցեսուսեան զի նոցա ճշմարիտի պատուէն . վասն ձերոյ
փրկութեն ասեմ , ասէ , զայս , և ոչ վասն իմոյ ինչ
անձին . ես ոչ ինչ շահիմ առնելով . տալեացդ են
ընդհարքն . տալեացն անդ պահին փոխարինքն , և առ-
նելեացն աստէն ծախին տուրքն : Դարձեալ դովութէ
հանդերձ և վշտակից լինելով , և թէ որպէս նմա իսկ
պէտք իցեն . և քանզի ասաց՝ թէ ոչ խնդրեմ , ոչ զի
ծուլագոյն առնիցէ զնոսա , ասէ . " Իմ ընկալեալ զա-
մենայն և առաւելեալ եմ ,, . այն իսկ է՝ թէ այնու

տրօք և որ ինչ Թերին էր լցէք · որ մանաւանդ յօ-
ժարագոյս իսկ առնէր վնասս : Օ՛ի սրբափ և իցէն
աղնուագոյնք՝ որ զտուրսն տայցեն , այլ ակն ունին
հնօրհ ունելոյ յայնցանէ՝ որոց զբարիսն առնիցեն :
Ո՛չ միայն , ասէ , լցէք զԹերութեի՛ անցեալ ժամանա-
կին , այլ և առաւել անցուցանէք զապին :

Օ՛ի մի՛ կարծիցի Թէ այնու ինչ մեղագիր լինիցի ,
տե՛ս զի՛արդ կնքէ գնոյնն : Այլ քանզի ասաց Թէ ո՛չ
խնդրեմ՛ զտուրսն , և զի՛արդ և էր զուարձացարուք ,
և եցոյց եԹէ պարտք են իրքն · և այն իսկ է ասել՝
Թէ իմ՛ ընկալեալ · դարձեալ ցուցանէ եԹէ առա-
ւել և և քան զպարտսն վճարեալ են : Ո՛չ վայրապար
և ո՛չ առ գումի՛ ինչ ասեմ՛ զայս · այլ զի՛նչ · " Ի՛նչ
կալայ , ասէ , ի՛ ձեռն Այսպիրոդիտայ զառ՛ի ձէնջն
հոտ անոյշ պատարագ ընդունելի հաճոյ ՚ա՛յ ,,:

Ա՛նաբէ, ուր տարաւ եՀան զպատարագն նոցա : Ո՛չ,
ասէ , ես առի , այլ ՚ա՛ծ ինև . որպէս զի Թէ ինձ ինչ չի-
ցէն պէտք , ընդ այն ինչ ձեզ փոյԹ մի՛ լիցի . ապա Թէ
ո՛չ՝ և ՚ա՛յ ինչ չէ պէտք , և ընդունելի : Այլ վասն այ-
նորիկ և ո՛չ ՚ա՛ծեղէն գիրք էՀրաժարեն ասել . որպէս
յորժամ՛ ասիցէ՝ Թէ " Հոտոտեցաւ ՚ա՛ծ՛ի հոտ անու-
շից ,,. որ ուրախ առնելոյ է :

Վ՛իտէք, եղբարք , գիտէք իսկ՝ զի՛արդ զուարձա-
նան ոգիք ընդ հոտ անոյշ , որպէս ուրախ լինին , իբր
բերկրին . և արդ ո՛չ Հրաժարեցին ՚ա՛ծեղէն գիրք
մարդկօրէն և խոնարհագոյն ինչ բանս ասել զնո՛յ , զի
ցուցանիցեն մարդկան եԹէ հաճոյ եղև պատարագն
նոցա : Ո՛չ եԹէ ՚ա՛ՀՀն՚ա՛ն և ծուխն ՝ հաճոյ ինչ առ-
նելին , այլ կամքն՝ որ մատուցանէին . ապա եԹէ այն
ինչ եր , և որ ՚ի Այսինք մատուցաւ ընդունելի լի-
նէր . Ն՚աւանիկ տեսանելո՛ք՝ Թէ չէղև ընդունելի :

Լսէ Թէ ուրախ լինի . և զի՛արդ լինիցի ուրախ :
Վ՛ասզի ո՛չ եԹէ այլազգ կարելին խմանալ մարդիկ
եԹէ ընդունելի լինիցին պատարագ նոցա , որ չէին կա-
րօտ , ասէ՝ ուրախ լինիմ՛ . զի մի՛ վասն անկարօտուԹեն
ծուլագոյնք լինիցին . և զի մի՛ յայն ապաստան՝ Հեղ-

1 Յօրինակին ծախ :

գայցեն ինչ յառաքինութեան։ Տէս զարձեալ՝ զիարդ ուղղէ զնոսա. «Ո՛չ ուտեմ, ասէ, զմիս զուարակաց քոց»։ Զինդրեմ, ասէ Պաւղոս, զտուրըն։ «Ո՛չ ՚ի՛ ՚ձ, ասէ, լի արասցէ զնա պէտս ձեր ըստ իւրում մեծութեան, փառաւք ՚ի ՚Ք՚ս ՚Ց»։

Տէս զիարդ և աղօթս առնէ ՚ի վերայ նոցա, աղքատաց պէս՝ որք յորժամ տուրս առնուցուն օրհնեսցեն։ Յաւելէ Պաւղոս առնէր նոցա՝ որ զտուրըն տային, որչափ և առաւել մեր՝ յորժամ առնուցուք՝ չպարտիմք ամենի համարել աղօթս առնել։ Որք զառնուլն չհամարին ամենի, զառնուլն զիարդ համարին ամենի. մի որպէս ՚ի մեր ինչ պէտս առնուցուք. մի վասն մեր ինչ խնդասցուք ընդ առնուլ. այլ վասն նոցա որ տային։ Եւ այնպէս մեզ որ առնուցուքն՝ լինիցի վարձք։ Որ ցամուցուքն վասն մեր ընդ չտալն, այլ մանաւանդ վասն նոցա տրտմեցուք, և թէ ընդ՚ էր չեղէն արժանի տալ՝ և այնպէս յօժարագոյս առնիցէ զնոսա, յորժամ ուսուցանիցեմք, ոչ վասն մեր ինչ յորդորեմք զնոսա, այլ վասն նոցա օգտի։

«Յաւ ՚ձ իմ, ասէ, լի արասցէ զպէտս ձեր». զա մենայն հնարհն ասէ. մի միայն զողորմածութիւնն, այլ զամ խոկ ուղղութիւն յաջողեսցէ. և եթէ զամենայն զհնարհն, որպէս և ինձ թուի՝ թէ զայն ասիցէ, ապա և զտրցոյն և։ Որանգի ասաց՝ թէ չէիք գոյաւորք, յարէ ՚ի նոյն և ասա՝ զոր առ կորընթացիսն գրէ. թէ «Որ հնարհէն սերմն սերմանողի, և հաց ՚ի կերակուր, հնարհեսցէ և լցուսցէ զսերմինն ձեր, և աճեցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ»։ Զողութիւն առնէ նոցա՝ զի լինիցին ՚ի լուսէ, և լի իցեն ՚ի բանութեան։ ոչ դոյզն ինչ աղօթս առնէ, այլ զի բաց զամ լինիցին ՚ի լուսէն։ «Ըստ իւրում մեծութեան» ասէ. և զայս զիջանելովն ըստ նոցա։ Օ՛ի թէ էին զգաստասէրք և ՚ի խաչ ելեալ իբրև զնա, ոչ այնպիսի ինչ աղօթս առնէր. բայց քանզի որք ձեռակերտք աղքատք էին, զկանայս և զորդիս տեսանէին, տան և կանանց հոգային, և ՚ի սակաւ ընչիկանէն պտուղ հանէին յօժարութեան, վասն այնորիկ զաստի ինչ յաջողութիւն աղօթս առնէ նոցա՝ զիջա-

նելով · զի այնպիսեացն չէ անպատեհ աղօթս առնել՝ զբաւականութիւնն և զլիութիւնն ունել ։

Այլ դուս տես զինչ ասէ · չասաց՝ եթէ արասցէ զձեզ մեծատունս և ընչաւէտս · այլ զինչ · թէ լցուսցէ զնա՞մ պէտս ձեր · որպէս զի չլինիցին ինչ ի կաթսուածս , այլ զպէտսն բաւական ունիցին ։ Այս և ՚ի սահման աղօթից եդ՝ զՀայն մշտնջենաւոր խընդրել ։

" Ի՞ստ իւրում մեծութեն ,, ասէ · ըստ պարզևացն · զի դիւրին է նմա վաղվաղակի առնել և կատարել · զի զպէտսն ասացի՝ ասէ , մի՛ կարծիցէք եթէ յանձուկ ինչ արկից զձեզ ։ Ա՛յ ասն այսորիկ յարէ ՚ի նոյն · " Ի՞ստ իւրում մեծութեանն փառաց ՚ի ՚Ի՞նչ ,, · այսպէս յաւելուած յամենայնի արասցէ ձեզ · զի ՚ի փառս նորա ունիցիք ՚ զինչ ունիցիք , և կամ թէ զի մի իւիք կարօտ լինիցիք ։ " Այս ընդհանուր մեծամեծք էին , ասէ , ՚ի վերայ ամենեցուն նոցա , և չէր ոք իւիք կարօտ ՚ի նոցանէ ,, ։ Ա՛մէն եթէ ՚ի փառս այ առնել զամենայն , զի զամենայն՝ ինչ ունիցին , ՚ի փառս այ ծախեսցեն ։

1 Ցօրինակին ասէիւ ։

ԼՈՒՐ Դաւթի. " Խարի է ինձ զի խնամարհ առ բարեր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո ". և միւսում մարգարէին. " Խարի է, ասէ, մարդոյ յորժամ առնուցու զլուծ ի մանկութենէ իւրմէ ". և դարձեալ. " Լերանի է մարդոյ զոր խրատես դու նո ". և միւսում ումեմն, թէ " Ի՞նչ ինչ հեղգար ի խրատ նոն ". և միւսումն, թէ " Կերակրեսցես ծառայել նոն, պատրաստեա զանձն քո փորձութիւն ". և Պօղոս առաքեալ. եթէ " Յաչխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք ". և դարձեալ, եթէ " Լայցէք և սգայցէք դուք, և աշխարհս խնդասցէ ". և դարձեալ. " Լուրբ և նեղ է ճանապարհն ": Ցեսանեմք զի մեր ուրեք նեղութիւնն գովի, և նոյն մեզ կարևոր պիտոյ: Օ՛ի յարտաքին մարտսն առանց նորա որ ոչ պահպի, եթէ ոչ յաչխատութէ կայցէ, և ի վնասակար կերակրոց հրաժարեսցէ, և ըստ օրինաց զանձն կրթիցէ, և տքնութիւք և այլ ինչ բազում իրօք ամրաւ նայցէ. որչափ և առաւել աստ:

Օ՞ որ ի Թագաւորաց ասիցես՝ եթէ անհոգ կեանս եկեաց, և ոչ բազում հոգւով և տառապանօք աշխատեցաւ. մի՛ ի Թագն ինչ նայիցես, այլ՝ի հոգն ուստի նման տագնապն ծնանիցի. մի՛ ի ծիրանին, այլ՝ի միտն որ ևս չար սեաւականն քան զծիրանին է. ոչ այնպէս սնդէ պատկն զգլուխն, որպէս հոգն կապէն զմիտն. մի ընդ բազմութեն տպաստաւորացն նայիցես, այլ՝ի յանձախուութեն տրտմութեցն: Ձիր այնպէս հոգս ի շինականաց տունս գտանել որպէս յարքունիսն. մանր հանապազորդք առաջի աչաց նկարին, նախ քան զսեղան կասկածանք. և անդէն ի բազմականին ակն և երկիւղ փետէն. զարիւնն անձինն միշտ աչօքն տեսանէ նախ քան ընդ դինիսն խառնել, և անդէն ի խրախուութենէն զդատաղաւ ատիւն նկատէ:

Ուրախ զցայգուութենէ հոգոյն քնաւ ասել ոք չէ ձեռն

հաս· որչափ ընդոստ ընդոստ խաղայ, այսր անդր ստէպ շրջէրթի՝ ի գահոյսն, և եթէ կամ մի քուն հաս անել տեսանել, և զայն ցնորական և յածախան երազովք հանդերձ· և այն՝ ի խաղաղութեան: Այսպէս եթէ պատերազմ ուստեք շարժիցի, զի՞նչ քան զայն ողորմելի կայցէ· երկիւղ յընտանեաց, կասկած յարտաքսից, անգէն՝ ի նոցանէն՝ որոց իշխեսցէն, և յաղգականաց և ի ջերմից և ի մօտաւորաց· նա և յատակքն արքունեաց արեամբ ազգականացն ցանկ ներկանին: Այս եթէ կամիք, պատմեցից ինչ պատմութիւն, զոր և դուք գիտիցէք, և հին ինչ՝ որում չիցէք տեղեակ, բայց միայն համառաւ:

Եմն, ասէ, Թագաւոր՝ ընութեան կարծեաց գիւրմէ հնոջէն, և մերկ կապեաց զվայրենի ինչ գազանաց, և արձակեաց ընդ լերինս· որ մայր ևս լեալ էր այլոց Թագաւորաց: Այս արդ որպիսի ինչ կեանս կարծիցէք զԹագաւորէն, և եթէ չէր կարի նեղեալ յահաւէն, ո՛չ յայնպիսի ինչ չարիս մտաբերեր· և նոյն և զորդին իւր ևս եսպան· և եղբայր նորին՝ նոյնպէս· և որդիք նոցա՝ ամենք զանձինս սպանին, և ոմանք յայլոց բռնաւորաց կոտորեցան: Այս եմն գիւր եղբայրորդի՝ զոր իւր իսկ արարեալ էր Թագաւոր· և զկին իւր՝ որ՝ ի պարսից ծանակեցաւ՝ և յղի էր, որովհետև չէ յինէն որդի՝ և նա մի կեցցէ, դեղս հրամայեաց տալ և սպանանել զնա: Այս, ասէն, և զեղբայրն իւր սպան դեղօք, և բաժանէն նմա այնուհետև ո՛չ էր ըմբելի, այլ մահ: Այս որդի նորա զմիւսոյ զաչս փորեաց առ աչի, թէ գուցէ կասկած ինչ լինիցի նմա յետոյ· որոյ ո՛չ էր ինչ՝ ի մտի ինամ: Այս զայլոցն ևս կեանս ասէ յմարթի, թէ զիարդ կեցին, և զիարդ չտառապանս մնային վճարեցան: Այսպէս կինդանւոյն իսկ այրեցաւ երիւարօք և կազմածօք հանդերձ· և կինն այրի՝ ողորմ և եղուկ ինաց· և զայլ ևս տրտմեթինն զոր՝ ի կեանն կրեաց՝ և ասել չմարթի· զի հանապազ յապտամբէն՝ որ յարեաւ ընդդէմ՝ նեղէր· և յորմէ հետէ զԹագն իսկ առ, ունէր և չունէր· զի հանապազ՝ ի վիշտս՝ ի տառապանս և՝ ի կասկած կեայր:

Ո՛չ այնպիսի ինչ և երինից արքայութիւնն· այլ

յետ առնլոյն՝ խաղաղութիւն, կեանք և ուրախութիւն են։ Ա՛յլ որպէս և ասացին՝ եթէ չիք աստ կեանք առանց տառապանաց. եթէ յարքունիսն որ յաձախ են վիշտքն, ի մէջ ոամկին և շինականացն որպիսի՞ վիշտս կարծիցես։ Այս առասպելք ամ անտի իսկ յօդեցան. քանզի բազում ինչ յառասպելացն նախն եղեալ է, և ապա անկաւ յառասպելս. և մանաւանդ զոր ախորժելովին իսկ լսեն՝ զվիպեստեայ առասպելսն՝ ի ձաշ և յընթրիսն. եթէ այս նիշ տուն յայսպիսի ինչ նենգութիւն կործանեցաւ, և այն նիշ՝ յայնպիսի։

Ա՛յլ զայս յարտաքնոյն կցկցանաց գտանեմք. թէ կամիք և ի գրոց ևս ասացուք։ Այաւուղ նախ թագաւորեաց, այլ գիտէք եթէ յետ նորա և Վաւիթ. և կորեաւ Այաւուղ յետ զփորձ առնլոյ բազում վշտաց. նոյնպէս և Այաղովմն և Ա՛բիա և Ա՛զեկիա և Յովսիա. և չէ հնար առանց նեղութեան և տրտմութեան ելանել յաչխարհէս։

Ա՛յլ ասէ տրտմեացուք, մի վասն այնպիսի ինչ իրաց՝ որով թագաւորք տրտմին, այլ վասն այնպիսեացն՝ որովք շահս մեծամեծս շահիցեմք։ "Որ ըստ այ տըրտմութիւն, ասէ, ապաշխարութիւն առանց զղջանալոյ գործէ"։ վասն այնպիսեացն պարտ է տրտմել. քանզի և Պաւղոս վասն յանցաւորացն տրտմէր և արտասուէր. "Ի բազում, ասէ, նեղութենէ և ի վշտաց սրտի գրեցի զայս առ ձեզ բազում արտասուօք"։ Վասնզի ընդ իւր մեղս չգոյր նորա տրտմել, ընդ այլոց տըրտմէր. մանաւանդ և զայն ևս իւր սուգ համարեր։ Վասնզի այլք գայթագղեին՝ և նա ջերմանայր, և այլք տկարանային՝ և նա հիւանդանայր. քան զամենայն աշխարհական ուրախութիւ համարիմ զայնպիսի սուգ։

Այա և ինքն իսկ Տէրն երանէ զայնպիսիսն՝ որ վշտաց կիցն գտանիցին լինել. և ես ոչ գիտեմ, որ ի վիշտս ինչ վասն այ կայցեն, գուցէ քան զնոսա՝ որ վասն այլոց մեղաց սուգ առնուցուն. զի այս չքնծասէր և դժած ոգւոց լինիցի, զոր ՎՀան խնդրէ, և յերջայրական վշտակցութենէ և ի հայրենի խնամոյ. մանաւանդ զի թէ քան զերկոսին մեծ իցի՝ այնպիսի զը-

թաչն և արտասուել։ Ա՛յսպիսի արտասուք բազում ուրախութիւք լի են· այնպիսի սուգ յաձախ խնդութիւն պատճառք են։ Ով և նոցա ինչ օգուտ չգործէ ցեմք՝ զոր սգացքն, այլ անձանց շահս յոլովեմք։ Որ ընդ այլոց մեղս զչարիցի, որչափ և առաւել վանս իւրոցն վշտանայցէ· որ զայլոցն արտասուէ, զիւր յանցանս չանցուցանէ երբէք առանց արտասուաց· մանաւանդ թէ և չմեղանչէ իսկ վաղվաղակի։

Ա՛յլ անհնարին աղէտք այն են, զի հրամանն առաք զայլոց մեղս սգալ, և մեք և ո՛չ ի մեր յանցանս ցուցանեմք ապաշխարուի· այլ մեղանչեմք և չտխաւիմք· և զա՛մ ինչ զմուտս ածեմք բայց ի մերոց մեղաց· վասն այնորիկ ուրախ առնիմք զանօգուտ ուրախութիւն աշխարհիս՝ որ վաղվաղակի շիջանի, և բազում տրտմութիւնս ծնանի։ Չրտմեսցուք տրտմութիւն՝ որ մշտոյն է խնդութիւն, և մի՛ բերկրեսցուք ընդ ուրախութիւն՝ որ զտրտմութիւն ծնանի· հոսեսցո՛ւք արտասուս՝ որ բազում ցանկութիւն սերմանեն, և մի՛ ծիծաղեսցուք ծաղր՝ որ կրծել առաջին ծնանիցի· նեղեսցուք նեղութիւն, ուստի հանգիստ բղխէ· և մի՛ խընդրեսցուք փափկութիւն, ուստի բազում նեղութիւնս և ցաւք ծնանին· աշխատեսցուք սակաւիկ մի յերկրի, զի փափկանայցեմք յերկինս· ի՛ ժամանակաւոր նեղութիւնս նեղեսցուք, զի յանբաւան հասանիցեմք հանգստեան։ Ա՛յլ ծուլասցուք ի վայրկեանս, զի մի՛ հեծիցեմք յանեղականն։

Ջտեսանիցի՞ք ոչխափ բազումք և աստ վանս երկրաւոր իրաց նեղին· և դու թէ նեղիցիս ինչ այնպիսի նեղութիւն, յոյս հանդերձելոյն առաջի կայ· չես լաւ քան զՊաւղոս, և ո՛չ աշխատական քան զՊետրոս, որք ո՛չ երբէք վայելեցին ի բարիս աշխարհիս, այլ հանապազ ի քաղց և ի ծարաւ և ի մերկութիւն· և կամիցիս նոցա բարութեացն հասանել, ընդ երս ընդ բիւն հակառակ ճանապարհն գնայցես· եթէ ի նոյն քաղաք՝ յոր նոքայն արժանի եղեն հասանել՝ կամիցիս երթալ, ընդ այն ճանապարհ գնա՝ որ անդ տանիցի։ Հանգստեան ճանապարհն չտանի անդ, այլ նեղութիւնն· այն ընդարձակ է, և այս անձուկ· ընդ անձուկն գնասցուք, զի և հանդերձելոյ յաւիտենից

կենացն հասանիցեմք ի Քն ի տէր մեր, ընդ ո- րում հօր միանգամայն և հոգւոյն սրբ փառք, իշխա- նութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յա- ւիտենից. ամէն:

ՎԱԽՃԱՆ



Tip. ed Edit. i Padri Armeni Mechitaristi di S. Lazzaro in Venezia.

